Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅԱՍ
ԱԿԱԴԵՄԻԱ

9(47.925)
32

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Б. А. УЛУБАБЯН

КНЯЖЕСТВО ХАЧЕНА
В X–XVI ВЕКАХ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
X–XVI ԴԱՐԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975

9 (С 43) 1
Ու 38

Մենագրությունը նվիրված է հայ ժողովրդի պատմության միջնադարյան շրջանի համարյա չուսումնասիրված պրոբլեմներից մեկին՝ Խաչենի իշխանության պատմությանը։ Մատենագրական, վիմագրական ու ձեռագիր նյութերի քննությամբ ներկայացված է Խաչենի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային վիճակը X—XVI դարերում։



113 598

ԵՊՀ Գրադարան

SU0185185

Ու $\frac{10601}{703(02)-75}$ 27—75

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Խաչենի իշխանությունը միջնադարյան Հայաստանի վարչա-եղեռնական խոշոր կազմավորումներից էր և իր նշանակալից դերն է ունեցել ինչպես հայ ժողովրդի պատմության մեջ, այնպես էլ նրա մշակույթի զարգացման գործում։ Բավական է հիշել, որ ուշ միջնադարի հայ իրականության մեջ Խաչենն այն միակ մարզն էր, ուր դեռևս պահպանվում էին ազգային-պետական կազմավորումները, որոնք պայքարում էին եկվոր ասպատակիչների ու բռնակալների դեմ։ Խաչենն էր, որ հարևան Սյունիքի հետ միասին հանդիսացավ XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժումների օրրանը։

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով նրա այս դերը, մեր պատմաբանները ցայսօր հանգամանալից քննության չեն ենթարկել հիշյալ իշխանության պատմությունը, հստակ պատկերացում չկա նրա գոյացման հանգամանքների, գոյատևման դարձդարձումների և այլ կարևոր հարցերի մասին։ Եղած փորձերը (Մակար եպ. Բարխուտարյանցի և Կարապետ եպ. Տեր-Մկրտչյանի գրքերը), առաջինները լինելով, չեն ընդգրկում իշխանության մասին եղած աղբյուրագիտական ամբողջ նյութը և հեռու են այսօրվա պատմագիտության պահանջները բավարարելուց։

Ձեռնարկելով Խաչենի իշխանության ուսումնասիրությանը՝ մեր առաջ նպատակ ենք դրել ի մի հավաքել Խաչենի տվյալ ժամանակաշրջանի կյանքին վերաբերող նյութերը և նրանց հիմքի վրա շարադրել երկրամասի իրական պատմությունը։

Խաչենի իշխանության պատմությունը հայ ժողովրդի ամբողջական պատմության կարևորագույն օղակներից մեկն է։ Այդ իշխանության դերը մեծ է առավելապես նրանով, որ այն հանդիսանում է Հայոց արևելից կողմանց Առանշահիկ նախարարական-թագավորական հարստության անմիջական, բառացիորեն՝ շրջմիջ-

ված ժառանգն ու հետնորդը իր ավանդական հողի վրա: Իսկ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ ուշ-միջնադարյան Հայաստանում, թաթար-մոնղոլական զավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար հարվածների տակ, ոչնչացել էին հայկական իշխանությունները, և Խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոք էին մնում հայոց քաղաքական ազատության կայծերը, ապա լիովին պարզ կդառնա Խաչենի դերը համահայկական պատմության համար: Հենց այս գիտակցությամբ էլ մենք ջանացել ենք ցույց տալ հայ պետականության, հայոց քաղաքական անկախության մի հատվածի իրական-պատմական կենսագրությունը, որ լի է ազգային ինքնության պահպանման, հայրենի քաղաքական, մշակութային կյանքի վերելքի ու առաջընթացի համար մղված պայքարի դրվագներով: Հենց սոցիալ-քաղաքական այս նախադրյալներն էլ հիմք հանդիսացան հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման համար: Հեռանկարային մի կողմնորոշում, որն սկզբնավորվելով Սյունիք-Արցախյան լեռնաշխարհում՝ XVIII դարում ազատագրական շարժումների փայլուն դրսևորումներ ունեցավ և, միաձուլվելով համաանդրկովկասյան բոնկումների հետ, XIX դարի սկզբներին հանգեցրեց Անդրկովկասի, այդ թվում և Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին:

ՀԵՂԻՆԱԿ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ԱԿՆԱՐԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

«Խաչեն» անունով դարեր շարունակ կոչվել է հին Արցախ նահանգի նախալեռնային ու լեռնային այն տարածքը, որն ընդգրկում է Հայկական ՍՍՀ Սևանա լճի արևելյան ափերը, Ադրբեջանական ՍՍՀ կազմի մեջ մտնող Մարտակերտի, Լաչինի, Քելբաջարի, Շուշվա, Ստեփանակերտի, Մարտունու, Աղդամի, Շահումյանի շրջանները: Այս տարածքի վրա միջնադարում (X—XVI դդ.) անընդմեջ տիրություն արած իշխանության և նրա ճյուղերի պատմությունը շարադրելու համար օգտվել ենք հետևյալ աղբյուրներից. ա) Պատմիչների ու ժամանակագիրների ստեղծագործությունները, բ) Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, գ) Վիմական արձանագրությունները: Օգտվել ենք նաև օժանդակ այլ նյութերից. ինչպիսիք են՝ նյութական մշակույթի հուշարձանները, պատմական վավերագրերը, պատմագիտական, բանասիրական և զանազան այնպիսի ուսումնասիրությունները, որոնք անմիջապես կամ հարևանցիորեն վերաբերում են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմությանը, հոգևոր ու նյութական մշակույթի պատմության այս կամ այն հարցին:

Պատմիչների ու ժամանակագիրների երկերից անգնահատելի նշանակություն ունեն հատկապես այն ստեղծագործությունները, որոնք գրվել են Հյուսիս-արևելյան Հայաստանում ծնված ու ապրած հեղինակների ձեռքով: Նրանք ժամանակակցի և ականատեսի քաջատեղյակությամբ ներկայացնում են երկրամասի վարչա-քաղաքական վիճակը, պատմական դեպքերի ու դեմքերի մասին հաղորդում են ստուգապատում տեղեկություններ: Այդպիսի

հեղինակներից են Մովսես Դասխուրանցին[1], Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Վարդապետ Արևելցին, Գրիգոր Պատմիչը, Մխիթար Այրիվանեցին և Ստեփաննոս Օրբելյանը։

Պատմական դեպքերի ու իրողությունների մանրամասները պարզելու համար կարևոր նշանակություն ունեն ժամանակագրական բնույթի, սովորաբար ոչ ծավալուն այն աշխատությունները, որոնց հեղինակները ևս նկարագրվող դեպքերի ժամանակակիցներ են[2]։ Նրանցից կցանկանայինք առանձնապես հիշատակել Մխիթար Գոշի գրչին պատկանող մի ստեղծագործություն, որը հրատարակվել է «Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու» վերտառությամբ[3]։ Այս աշխատության՝ բանասիրությանը հայտնի երկու ձեռագիր-ընդօրինակություններ կան, մեկը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում (ձեռ. № 1237), մյուսը՝ Զմմառի Սուրբ Աստվածածին վանքի գրադարանում (ձեռ. № 8)։ Ղ. Ալիշանը առաջինը հիմք ընդունելով՝ այն հրատարակել է և հաղորդել, որ «Հեղինակն իր Դատաստանագրոց վերջաբան հիշատակարանին կցած է այս գրվածս»[4]։ Հավանաբար հետագայում այն ընդունվել է որպես մի սովորական հիշատակարան և չի արժանացել գիտական քննության։ Եվ, ի պատիվ Հ. Մանանդյանի, պետք է ասել, որ առաջին անգամ նա է իր «Քննական տեսության...» մեջ լայնորեն օգտագործել Գոշի այդ ժամանակագրությունը՝ համոզված, որ միայն նրանում են պահպանվել XII դարի Խաչենի, Վրաց թագավորության և Գանձակի ամիրայության վերաբերող «կարևոր ու մանրամասն տեղեկություններ, որ հայտնի չեն այլ աղբյուրներից»[5]։

Արժանահավատ աղբյուր են նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիշատակարանները[6], որոնցում արտահայտություն են գտել XII—XIII դարերի Խաչենին վերաբերող մի շարք կարևոր փաստեր։

Ուսումնասիրության մեջ օգտագործել ենք նաև օտար աղբյուրների հաղորդած տեղեկությունները։ Այդպիսիք են՝ Համդալլահ Ղազվինիի, Իբն ալ-Ասիրի, Միքայել Ասորու, Աբուլ-Ֆարաջ Գրիգորի (Բար Հեբրայոս) և այլոց երկերը, ինչպես նաև վրաց «Քարթլիս ցխովրեբան» ու այլ ժամանակագրություններ։ XV—XVI դդ. Խաչենին վերաբերող նյութերի շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Պարսից արքունիքի հրովարտակները, որոնք պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում։ Նրանց վրա միշտ էլ ուշադրություն են դարձրել հայագետները՝ սկսած Սարգիս Ջալալյանցից մինչև մեր օրերի հետազոտողները, առանձնապես Հակոբ Փափազյանը[7]։

Ձեռագրաց հիշատակարանները, հիրավի, վստահելի ու հարուստ աղբյուրներ են անցյալի պատմական իրականությունն ամբողջապես հանգամանորեն քննելու համար։ Հիշատակարանների գնահատականը միանգամայն ճիշտ է տվել նրանց լավագույն գիտակ Գարեգին Հովսեփյանը։ Նրա պատկերավոր խոսքով՝ «...ն փոք-

1 «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը հայտնի է որպես Մովսես Կաղանկատվացու ստեղծագործություն։ Սակայն նկատի առնելով, որ «Պատմության» ու իր հեղինակի մասին ստույգ տեղեկություններ հաղորդող մեր միջնադարյան աղբյուրները երկի հեղինակ կամ վերջնական շարահարող են համարում Մովսես Դասխուրանցուն (տե՛ս Մխիթար Գոշ, Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու. Ղ. վ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 384, Վանական վարդապետն իր «Պատմական համառօտ գիտելեաց»-ի մեջ. «Հայապատում», Ա, էջ 274, հարցի հանգամանալից քննությունը՝ նեռսես վ. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր Պատմություն Աղվանից, Վիեննա, 1970, էջ 21—49), մենք հարմար ենք գտնում «Պատմության» վերջնական բնագրի հեղինակ համարել Մովսես Դասխուրանցուն (բացի այն դեպքերից, երբ պետք է վկայակոչենք Կաղանկատվացու անունով հրապարակված տարբերակը)։

2 Ժամանակագրությունները հրատարակված են Վ. Ա. Հակոբյանի կողմից. տե՛ս «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Ա, Երևան, 1951 (այսուհետև՝ «ՄԺ, Ա»), հատ. Բ, Երևան, 1956 (այսուհետև՝ «ՄԺ, Բ»)։

3 Տե՛ս Ղ. վ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 361—362, 384—392, անգլերեն թարգմանությամբ՝ J. P. Dausett, The Albanian Chronicle of Mchitar Goš BSOAS, XXI, 13. 1958, էջ 472—490, ռուսերեն՝ Мхитар Гош, Албанская хроника, предисловие, перевод и комментарии З. И. Буниатова, Баку, 1960. Սույն երկը Վիանա Դավլիանիձեի թարգմանությամբ, առաջաբանով, ծանոթագրություններով լույս է տեսել նաև վրացերեն («Վրաց աղբյուրագիտություն», Թբիլիսի, 1968, էջ 27—49), որի հանգամանքների հետ ծանոթանալու համար մեզ օգնել է Պատմության ինստիտուտի աշխատակից Հ. Մկրտումյանը։

4 Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 384։

5 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 99։

6 Տե՛ս նաև Մ. Գոշի «Ժամանակագրությունը», որը մենք թարգմանել ենք աշխարհաբար և գրել հանգամանալից ծանոթագրություններ (ձեռագիր)։

7 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, «Հրովարտակներ», պրակ Ա (ԺԵ—ԺԶ դդ.), կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, պրակ Բ (160?—1650), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, Բ, «Կալվածագրեր», պրակ Գ, կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968։

գրիկ հիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկություններով մոզաիկի գույնզգույն քարեր են, որոնցից արվեստագետը ի մի բերելով և օգտագործելով հարկավորը յուր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի և գեղարվեստական պատկեր։ Այդ աղբյուրները առանձին արժեք ունեն, որովհետև նրանցից շատերը նույնիսկ սկզբնական, այսինքն՝ ականատես կամ ականջալուր մարդկանց հաղորդագրություններ են, որոնք պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն»[8]։

Խաչենի իշխանության մեջ մտնող գավառներում ընդօրինակված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններ տպագրվել են Գարեգին կաթողիկոսի կազմած ժողովածուի Ա հատորում (որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև XIII դարի կեսը) և Լ. Ս. Խաչիկյանի կազմած ժողովածուներում, որոնք ընդգրկում են XIV—XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները[9]։

Գարեգին կաթողիկոսի ժողովածուն, որը միայն առաջին գիրքն է նախատեսված բազմահատորյակի, կազմված է առաջարկվող նյութի բազմակողմանի քննությամբ և օժտված է այն առավելությամբ, որ ընթերցողը հնարավորություն ունի ծանոթանալու յուրաքանչյուր հիշատակարանի (նաև ձեռագրի) ու նրա հաղորդած նյութի բոլոր մանրամասներին, տեղեկանալու լրացուցիչ անհրաժեշտ աղբյուրներին ու գիտական գրականությանը։ Իսկ Լ. Ս. Խաչիկյանի ժողովածուները, որոնք հիմնականում ներկայացնում են հիշատակարանները և երբեմն (միայն անհրաժեշտության դեպքում) ծանոթագրում այս կամ այն հանգամանքը, օժտված են մի այլ խոշոր արժանիքով։ Նրանցից յուրաքանչյուրն ունի ընդարձակ առաջաբան, որը հետազոտում է հատորի հիշատակարանների ընդգրկած ժամանակի Հայաստան աշխարհի քաղաքական վիճակն ու սոցիալ-տնտեսական կյանքը։ Առաջաբանում ժամանակաշրջանի կարևորագույն անցուդարձերը քննվում են ոչ միայն ներկայացվող հիշատակարանների պարունակած տվյալներով, այլև հարակից նյութերի, հրապարակի վրա եղած այլևայլ աղբյուրների ու պատմաքննական հետազոտությունների լայն օգտագործմամբ։ Եվ ավելորդ է ասել, որ այսքանից հետո արդեն անհամեմատ հեշտանում է հիշատակարանների հաղորդած նյութի անսխալ ընկալումը։

Օգտվել ենք նաև ուրիշների հրատարակած ձեռագրաց ցուցակներից, ինչպես նաև Սարգիս Ջալալյանցի, Ղևոնդ Ալիշանի, Մակար Բարխուտարյանցի, Համազասպ Ոսկյանի և այլոց աշխատություններում հրապարակված հիշատակարաններից[10], ինչպես նաև Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից։ Վերջիններից օգտվել ենք՝ երբեմն նաև համառոտակի նկարագրելով ձեռագրերը, եթե, իհարկե, նրանց մասին առաջին անգամ է խոսվում հրապարակով։

Վիմական արձանագրություններն առհասարակ ամեն մի պատմության, մասնավորապես ներկա աշխատության քննության առարկա շրջանի պատմության համար բացառիկ նշանակություն ունեն՝ որպես գրչական աղավաղումների ու եղծումների չենթարկված ամենահավաստի աղբյուրներ։ Հայտնի է, որ հայկական վիմագիր արձանագրություններն արժանահավատ հսկայական նյութ են տվել մեր պատմահայր Խորենացուն, Կիրակոս Գանձակեցուն, Ստեփաննոս Օրբելյանին և հետագա դարերի մեր մի շարք պատմիչներին ու ժամանակագիրներին։ Կիրակոսի Պատմության մեջ իրենց անփոփոխ բովանդակությամբ, սակայն մատենագրական խմբագրության ենթարկված՝ տեղ են գտել Խաչենի հոգևոր երկու կենտրոնների՝ Դադի վանքի ու Գանձասարի կաթուղիկե տաճարների կառուցումներին վերաբերող արձանագրությունները, ինչպես նաև Գոշավանքի շինարարության հանգամանքները պատմող վիմագիրը, որը հիմնականում արձանագրում է Վերին Խաչենի կամ Հաթերքի իշխանազունների օժանդակությունը վանքի կառուցման գործին։

Դժբախտաբար ո՛չ բոլոր վիմագիր արձանագրություններն են մեզ հասել։ Նրանց մի մասը, բաց երկնքի տակ, ենթակա արևի ու մթնոլորտային տեղումների ավերիչ ուժին, քայքայվել է, ջնջվել։ Շատերը ոչնչացվել կամ անհետացել են։

Խաչենի տարածքի վիմագիր արձանագրությունները մինչև այժմ գիտական պատշաճ հետազոտության չեն ենթարկվել։ Հարկ ենք համարում այստեղ ավելի հանգամանորեն խոսել ինչպես այդ

8 Դարեգին Ա կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, Հառաջաբան, էջ ԺԴ։

9 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950 (այսուհետև՝ «ԺԴ»), ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն I (1401—1450), Երևան, 1955 (այսուհետև՝ «ԺԵ, Ա»), մասն II (1451—1480), Երևան, 1958 (այսուհետև՝ «ԺԵ, Բ»), մասն III (1481—1500), Երևան, 1967 (այսուհետև՝ «ԺԵ, Գ»)։

10 Նշել ենք բոլոր այն աղբյուրները, որոնցից օգտվել ենք։

նյութի, այնպես էլ նրա հավաքողների հետազոտական փորձերի մասին։

Խաչենի տարածքում գտնվող վանքերի ու խաչքարերի արձանագրությունները հավաքելու գործին առաջին անգամ ձեռնարկել է Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցը։ Նրա 1718 թ. ընդօրինակած արձանագրությունները հիմնականում Գանձասարից, Խաթրավանքից ու Դադի վանքից են, Խաչենի իշխանության հոգևոր այդ երեք կենտրոններից և անմիջապես նրանց շրջակայքից[11]։ Հավաքածուի վերջում Եսայի կաթողիկոսը հենց իր իսկ ընդօրինակած արձանագրությունների հիման վրա փորձել է տալ Ծարա ճյուղի (Խաթրավանքի տերերի) տոհմաբանությունը՝ սկսած Դոփ իշխանուհուց (XII դ. վերջը—XIII դ. սկիզբը) մինչև XV դարը, երբ Ծարա ճյուղն իր հերթին բաժանվում է երեք նոր ճյուղի[12]։ Հետագայում ցույց կտանք, թե լրացուցիչ տվյալների բացակայության պատճառով ինչպիսի թյուրիմացություն է սպրդել Եսայի կաթողիկոսի գծած տոհմաբանության մեջ, որը և կրկնել են հետագա ուսումնասիրողները։ Սակայն մեզ հասած տետրակի ընդօրինակությունների համեմատությունը առկա բնագրերի հետ՝

11 Եսայի կաթողիկոսի ձեռագրի մասին խոսում են հետազոտողներից ու բանասերներից ոմանք՝ Սարգիս Ջալալյանցը (Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա. Տփխիս, 1848, էջ 200), Հ. Շահխաթունյանցը (Շահխաթունեանց Յովհաննէս եպիսկոպոս, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 356—358), Խ. վ. Դադյանը (Թոփճեան Հ., Յուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան, մասն Ա, Վ-պատ, 1898, էջ 89), Կարապետ եպիսկոպոսը (Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք. Նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, էջմիածին, 1914, էջ 48)։ Սակայն հայտնի չէ, թե այժմ այն որտեղ է գտնվում։ Նրանից կատարված երկու ընդօրինակություններ պահվում են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ մեկը 9923 թվահամարի տակ՝ արտագրված Հովհաննես Ղրիմեցու ձեռքով, մյուսը՝ 7821 թվահամարի տակ, որի արտագրողը հայտնի չէ։ Առաջինը, ամենայն հավանականությամբ, բնագրի լրիվ ընդօրինակությունն է, ինչպես պետք է ենթադրել արտագրողի հիշատակարանից, որի մասին կխոսենք քիչ հետո։

№ 7821 ձեռագիր-ընդօրինակությունը, որը ևս համարյա լրիվ ընդգրկում է Եսայի կաթողիկոսի տետրակի բոլոր արձանագրությունները, անմիջապես կատարված է բնագրից, որովհետև ընդօրինակողը առաջին էջի վերևում նկարել է կաթողիկոսական կնիքը՝ նշելով, որ բնագրում կնիքը հենց այստեղ էլ գտնվել է։ Այս ձեռագիրը, Պ. Հ. Հակոբյանի կարծիքով, ընդօրինակված է «Շահխաթունյանցի համար 1830-ական թթ.» (Պ. Հ. Հակոբյան, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը. «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 45)։

12 Ձեռագիր № 7821, էջ 2 ա, բ։

ցույց է տալիս, թե հոգևոր ու քաղաքական նշանավոր գործիչը որքան ճիշտ ու անթերի է արտագրել արձանագրությունները, որոնք և հիմնականում անփոփոխ մտել են վիմագրագետներ Հովհ. վարդապետ Շահխաթունյանցի, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի և այլոց գրքերը[13]։

1821—22 թթ. ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմը, նախկին գահակալ, իսկ այդ ժամանակ արդեն վիրահայոց թեմի արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու, ինչպես նաև ուրիշ հոգևորականների ուղեկցությամբ, շրջագայում էր Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգները[14]։ 1822 թ. հունիսին թափորը ժամանում է Գանձասար[15] և, հավանաբար, կաթողիկոսի կարգադրությամբ, թափորի մասնակից ու վեհարանի գրագիր Հովհաննես Ղրիմեցին ամենայն բարեխղճությամբ արտագրում է Եսայի կաթողիկոսի տետրակը։ Ահա թե այդ առթիվ ի՞նչ է գրել Հ. Ղրիմեցին մեզ հասած իր ընդօրինակության հիշատակարանում. «Յամի տեառն 1822 յամսեանն յուլիսի մեկին ընդ սրբազան Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան հայոց ՌՃԿԷ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ։ Խ. ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմն գրագիր սրբոյ էջմիածնի»[16]։

Խաչենի վիմական արձանագրությունների հաջորդ արտագրությունը բնագրից պետք է կատարած լիներ Եփրեմ կաթողիկոսի շքախմբի մյուս մասնակիցը՝ Մեսրոպը սարկավագ Թաղիադյանցը, որն իր ճամփորդությունների գրքում, խոսելով արցախյան շրջագայության մասին, հաղորդում է հետևյալ աներկբայելի տեղե-

13 Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. Բ, էջ 356—382։ Սարգիս արքեպ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, էջ 183—195, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 222—234 և հտգ. (Բ հատորի հրապարակումներն իր հավաքածն են)։

14 Յովհաննէս Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1965, էջ 135—136։ Նույնը ավելի հանգամանորեն՝ Ալեքսանդր Դ. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 189—192 և հտգ.։

15 Յովհաննէս Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, էջ 135—136։

16 Մատենադարանի ձեռ. № 9923, էջ 2ա։

կությունը. «Աստանօր (Արցախ-Խաչենում—Բ. Ու.) հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս և օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչքարս և ի վէմս ապառաժից, սկսեալ ի Գանձասարայ մինչև ի Հաղբատ և ի Սանահին, զորս և մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա՝ յորք յետոյ կորեան»[17]։

Թաղիադյանցի ընդօրինակություններից ոչինչ չի մնացել[18]։

Հովհաննես Ղրիմեցուց երկու տասնամյակ հետո Խաչենի վիմական արձանագրությունները և առհասարակ նյութական մշակույթի հուշարձանները դարձան Սարգիս Ջալալյանցի բազմակողմանի ուսումնասիրության առարկան։ Հասան-Ջալալյան իշխանական տոհմի շառավիղը Արևելյան Հայաստանում կատարած իր շրջագայության ընթացքում եղել է հին Արցախի համարյա բոլոր բնակավայրերում, նկարագրել գյուղերն ու ավանները, հավաքել իր ժամանակ դեռևս պահպանվող արձանագրությունների մեծագույն մասը, ինչպես նաև վանքերում ու մասնավոր անձանց մոտ գտնվող ձեռագրերի հիշատակարաններն ու բազմաթիվ փաստաթղթեր[19]։ Ջալալյանցի արտագրությունները կատարված են բծախնդրորեն, ուղեգրական տպավորությունները գրված են ոչ միայն փաստական նյութի իմացությամբ, այլև վարակիչ այնպիսի ջերմությամբ ու հայրենասիրական խանդով, որ նրա այդ երկհատորյակն արժանացել է Խ. Աբովյանի ու Հովհ. Թումանյանի գովասանքին[20]։

Իր հավաքած այս բազմազան ու բազմապիսի նյութերի հիման վրա Սարգիս Ջալալյանցը գրել է նաև Աղվանից աշխարհի պատմություն, պատմական աշխարհագրություն[21], ինչպես նաև Խաչենի իշխանության ու նրա բնի վրա ճյուղավորված մելիքությունների պատմությունը։ Սրանք հատուկտորների ձևով նախ տփված են նրա «Ճանապարհորդության» երկու հատորներում, ապա որպես ինքնուրույն հեռագոտություն, ավելի ընդարձակ ու մանրամասն՝ ձեռագիր վիճակում պահպանվում են Մաշտոցյան մատենադարանում[22]։

Այդ ձեռագրերի հանգամանալից քննությամբ եկել ենք այն եզրակացության, որ Ս. Ջալալյանցի աշխատությունը մինչև X դարը եղած իրողությունների մասին առանձնակի նորություն չի պարունակում, այլ հանդիսանում է Մ. Դասխուրանցու և մեր մյուս մատենագիրների հաղորդած տեղեկությունների ոչ քննական շարադրանքը։ Գիտական շոշափելի արժեք չունեն նաև միջնադարյան պատմությանը վերաբերող տետրակները։ Հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ձեռագրի այն մասերը, որոնք հանգամանորեն պատմում են Ղարաբաղի մելիքությունների վերջին մեկ դարի կյանքը, թուրք ու պարսիկ զավթիչների, ապա և կովկասյան լեռնականների ասպատակություններն Արևելյան Հայաստանում և հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագները[23]։

XIX դարի 80-ական թվականներից վերսկսվում է հետաքրքրությունը Արցախի և շրջակա գավառների հայության բազմադարյան պատմության, կենցաղի և պատմա-մշակութային հուշարձանների նկատմամբ։ Գիտական ասպարեզ է իջնում մի այնպիսի նվիրյալ, ինչպիսին Մակար վարդապետ Բարխուտարյանցն էր։

Մակար վարդապետի կես-գրական, կես-պատմական առաջին ուսումնասիրությունը «Գաղտնիք Ղարաբաղի» ծավալուն գիրքն էր[24], որն իր վրա հրավիրեց ընթերցող լայն խավերի հետաքրքրասիրությունը։ Պատճառը, առաջին հերթին, թեման էր. ընթերցողին էր ներկայանում հայ ժողովրդի մի խոշոր հատվածը՝ իր ուրույն

17 Մեսրովբ Դ. Թաղիադեանց, *Ճանապարհորդութիւն ի Հայս*, հ. 1, Կալկաթա, 1847, էջ 332։

18 Ներսես Աշտարակեցու դիվանին քաջատեղյակ Պ. Հակոբյանը հայտնում է, որ «և Ն. Աշտարակեցու դիվանում, և այլուր որևէ հետք չի մնացել» այդ ընդօրինակություններից, ապա կասկածելով հնարավոր է համարում, որ թերևս Թաղիադյանցի ջանքերի արդյունքը լինի «Հովհաննես եպիսկոպոս Մշեցուն վերագրվող հավաքածուն» (Պ. Հակոբյան, հիշյալ հոդվածը, էջ 45, ծան. 1)։ Սակայն արտագրությունից և առկա նյութերից դատելով՝ պետք է կարծել, որ հավաքածուն պատկանում է Հովհաննես Ղրիմեցու գրչին։

19 Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան (այսուհետև՝ միայն «Ջալալեանց»)*, մասն Ա, Տփխիս, 1842, մասն Բ, Տփխիս, 1858։

20 Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. հոդվածը, էջ 59—63։

21 Մատենադարանի ձեռ. № 2622, սկսած թ. 204-ից։

22 Մատենադարանի ձեռ. № 8066։

23 Մատենադարան, մանրաժապավեն № 367։

24 Մ. Բարխուտարյանցի գեղարվեստական ստեղծագործությունների շարքում որոշակի արժեք են ներկայացնում «Ճրագը տարին կատարի», «Պըլը-Պուղի», «Ջոբանն ու նշանածը», «Բարոյական առածներ» գրքույկները, որոնք գրված են Ղարաբաղի բարբառով ու հետաքրքիր նյութ կարող են ընձեռել ոչ միայն բարբառագետներին, այլև ազգագրությամբ զբաղվողներին։

կյանքով և անկախության ու ազգային ինքնուրույնության համար մղած պայքարի հերոսական դրվագներով։ Պակաս դեր չէր կարող ունենալ նաև նյութի մատուցման ձևը՝ արկածային վեպերին հատուկ դեպքերի արտասովոր լուծումները, հերոսների վարքի ու գործողությունների մեջ ծայրահեղորեն ընդգծված հերոսականությունը, որ շատ հաճախ հասնում էր հնքիաթաբանության։ Իսկ շարքային ընթերցողին (այն ժամանակվա ընթերցողին՝ հատկապես) այսպիսի գրքերն ավելի են գրավում, քան կյանքի դաժան ճշմարտությունների արտացոլումը։

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն խիստ քննադատության ենթարկվեց Բաֆֆու[25] և Լեոյի[26] կողմից։ Մեր գրականության ու պատմագիտության այս երկու մեծերը, իրավացիորեն ցույց տալով Մակար վարդապետի գրքում տեղ գտած հնքիաթաբանությունները, դժբախտաբար, մերժում էին նաև նրա պատմագիտական հենքը, որի շատ հատվածներ ճշմարիտ պատմության մարզին էին վերաբերում և զարգացվելու դեպքում կարող էին հիմք դառնալ պատմական լուրջ ուսումնասիրության։

Մակար վարդապետը, իր գրքի մասին եղած այս խիստ քննադատությունը հրապարակով չընդունելով հանդերձ[27], հետագա իր գիտական գործունեության ընթացքում, այնուամենայնիվ, ասես, ամենայն բարեխղճությամբ, նկատի ունեցավ, սկսեց արմատականորեն ուսումնասիրել Հայոց արևելից կողմանց պատմությունը, ազգագրությունը, նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները։ Առաջին փայլուն արդյունքը եղավ «Աղվանից երկիր և դրացիք» աշխատությունը[28], որով դիտական շրջանառության մեջ դրվեցին (Ս. Ջալալյանցի գրքում տեղ գտած սակավաթիվ նյութերից հետո) անդրկուրյան հայաբնակ գավառներում

25 Բաֆֆին Մակար վարդապետի դեմ գրեց իր՝ մեծ աղմուկ հանած «Գաղտնիք Ղարաբաղի» ընդարձակ հոդվածը, որը տպագրվեց նախ «Արձագանք» շաբաթաթերթի 1868 թ. համարներում (տե՛ս № № 35—46), ապա 1906 թ. Վիեննայում՝ «Խամսայի մելիքությունները» և «Ղարաբաղի աստղագետը» աշխատությունների հետ միասին մի գրքում։ Հետագայում այն մտել է վիպասանի երկերի ժողովածուի հրատարակությունների մեջ (տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, 10-րդ հատ., Երևան, 1959, էջ 396—510)։

26 Լեո, Վե՞պ թե՞ պատմություն, Շուշի, 1887։

27 Մակար վարդապետը գրել է «Քննադատություն քննադատության» ծավալուն հոդվածը, ուր փորձում էր պաշտպանել իր գրքի ակնհայտ սխալները, սակայն ապարդյուն։

28 Մ. վ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893։

այդ ժամանակ դեռևս պահպանված հնագիտական նյութի փրշրանքները։ Երկրորդ և առավել բարձրարժեք հրապարակումն էր «Արցախ» հրաշալի գիրքը[29], որը լույս տեսավ 1895 թ. և դեռ այսօր էլ պահպանում է աղբյուրագիտական իր անգնահատելի նշանակությունը։ Գիրքը սոսկ անվամբ է «Արցախ», իրականում ընդգրկում է Արցախի և Ուտիքի ամբողջ տարածքի հնագիտական նյութը, վիմագրերը, եկեղեցիներում ու մասնավոր անձանց մոտ պահպանված ձեռագրերի նկարագրություններն ու հիշատակարանները, դիտողություններ ու դատողություններ այդ բոլորի մասին, որոնցից շատերն ընդունվել են մեր պատմագիտության կողմից և հիմք դարձել հիշյալ տարածքում եղած պատմական դեպքերի ճշգրտման և աշխարհագրական կետերի (տեղանունների) տեղադրման համար։

Պատմագիտական որոշակի արժեք է ներկայացնում նաև Մակար վարդապետի «Պատմություն Աղվանից» երկհատոր աշխատությունը[30]։

Մակար վարդապետի վիմագրական նյութերի հավաքածուն ամենահարուստն է իր նախորդների ընդօրինակությունների համեմատ և, ըստ էության, առավել վստահելի, բանի որ հավաքողն ավելի լավ գիտեր երկրամասի պատմությունը, որը և նրան օգնում էր համեմատաբար ստույգ կարդալու կիսախաթար վիմագրերը։

Մ. Բարխուտարյանցն անձամբ եղել է Արևելյան Անդրկովկասի համարյա բոլոր հին ու նոր բնակավայրերում՝ Երասխի ափերից մինչև Դերբենդ և Հնարակերտի ավերակներից մինչև Մուղանի դաշտը կամ հին Մուխանք գավառը։ Նա հավաքել է վիմական արձանագրություններ, արտագրել ձեռագիր հիշատակարաններ, նկարագրել համարյա բոլոր բերդերը, վանական շինությունները. բնակավայրերն ու նրանց մնացորդները և այս բոլորի հիման վրա գրել ուսումնասիրություններ, որոնք իրենց տեսակի մեջ առաջինը լինելով՝ զերծ չեն թերություններից։ Դրանք այսօր էլ իրենց շատ կողմերով պատմագիտական, հատկապես աղբյուրագիտական բարձր արժեք են ներկայացնում։

Մակար եպիսկոպոսի հավաքած նյութերն, այսպիսով, անգնահատելի նշանակություն ունեն, ամենից առաջ, իրենց հավաս-

29 Մ. վ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895։

30 Մակար եպիսկոպոս Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Ա հատոր, Վաղարշապատ, 1902, Բ հատոր, Թիֆլիս, 1907 (Բ հատորը լույս է տեսել հեղինակի մահվանից մեկ տարի հետո)։

տիությամբ, ապա և ըստ հնարավորին՝ բազմազանությամբ ու համարյա սպառիչ ամբողջականությամբ։ Եթե նախորդ ու հաջորդ հավաքող-ուսումնասիրողները (բացառությամբ Ս. Ջալալյանցի) ներկայացնում էին այս կամ այն գավառից կամ նույնիսկ տարբեր տեղերից զանազան առիթներով հավաքված կցկտուր, որևէ սիստեմի չբերված նյութեր, ապա Մ. Բարխուտարյանցը ներկայացնում էր այն ամենը, ինչ հնարավոր էր ներկայացնել իր ժամանակ։

Խաչենի իշխանության ժամանակաշրջանին ու ընդգրկած տարածքին վերաբերող նյութերի մասին պետք է ասել, որ Բարխուտարյանցի ուշադրությունից վրիպել են միայն սակավաթիվ արձանագրություններ, ձեռագիր հիշատակարաններ ու նյութական մշակույթի հուշարձաններ։ Այլ բան է, իհարկե, թե նա այս բոլորն ինչքա՜ն անաղարտ վիճակում է ներկայացրել և, հատկապես, ի՜նչ հմտությամբ է օգտագործել սեփական ուսումնասիրությունների մեջ։ Այստեղ է, որ, ինչպես արդեն նշել ենք Արցախի պատմության հարցերը քննելիս[31], Մ. Բարխուտարյանցը հաճախ առկա նյութի ընձեռած տեղեկություններին անհարիր եզրակացությունների է հանգում, փաստերին տալիս կամայական բացատրություններ և, որ ավելի խոտելի է, պատմական ընթացքի այս կամ այն օղակի մասին բացակայող նյութերի փոխարեն հրամցնում է իր երևակայածն ու ենթադրածը։ Այս իսկ պատճառով էլ բոլորովին զարմանալի չէ, որ Մ. Բարխուտարյանցի աշխատություններում միանգամայն անհամատեղելի համադրություն են կազմում, մի կողմից, Արցախի ու ետնագույն Խաչենի պատմության, պատմական աշխարհագրության, ազգագրության ու մշակույթի հիմնական շատ հարցերի ճշմարիտ ըմբռնումները և, մյուս կողմից էլ՝ բոլոր այն թյուրիմացությունները, որոնք լայն տարածում գտան հետագայում՝ անհմուտ հետազոտողների կողմից։

Մեր հին ու միջնադարյան մշակույթի (հոգևոր ու նյութական) քաջատեղյակ հետազոտողներից մեկն էր Խաչիկ վարդապետ Դադյանը, որը երկար տարիներ առանձնակի ուշադրություն է դարձրել Արցախական աշխարհի պատմությանն ու հնագիտությանը։ Բավական է ասել, որ գերմանացի Էմիլ Ռյոսլերից հետո նա առաջին մարդն էր, որը պեղումներ կատարեց այժմյան Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ հնագիտական արժեքավոր նյութեր հանելով

31 Բ. Ուլուբաբյան, *Արցախի պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը), թեկնածուական դիսերտացիա (ձեռագիր)։*

Խաչենագետի ափի Տնջրհող բլուրից, Առաջաձոր, Քոլատակ, Մաղավուզ, Կիշան գյուղերի մոտերքից և Կաչաղակաբերդից[32]։ Խաչիկ վարդապետը կատարել է «Աղվանից աշխարհի պատմության»՝ Էջմիածնի մատենադարանում պահպանված բոլոր ձեռագրերի գիտական համեմատությունը[33], հրատարակել տպագիրներից դուրս մնացած և Սահլ Սմբատյանին վերաբերող շատ կարևոր հատվածը[34]։

Խաչիկ վարդապետը հավաքել և նկարագրել է Արցախի տարածքի հոգևոր կենտրոններում գտնվող տասնյակ ձեռագրեր, հրապարակել նրանց հիշատակարանները, բազմաթիվ հրովարտակներ, կոնդակներ ու այլևայլ թղթեր[35]։ Վերջապես, առաջինը նա է հավաքել ու հրապարակել Մեծառանից Ս. Հակոբա վանքի՝ շուրջ 30 արձանագրություններ[36]։ Պատմական արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև այն արձանագրությունները, որոնք դարձյալ առաջին անգամ Խաչիկ վարդապետի ձեռքով են հավաքվել Բերդաձորի ս. Գրիգոր եկեղեցուց[37] և Առաջաձոր գյուղի մոտ գտնվող ժայռերից[38]։

Խաչենի գահերից իշխան Հասան-Ջալալի գործունեությանը վերաբերող երկու արժեքավոր հետազոտություն է գրել ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որի արխիվում պահպանվում է նաև Խաչենի տարածքի մի քանի վանքերից ու սրբատեղիներից հավաքած վիմական արձանագրությունների ժողովածուն՝ այդ նույն վայրերից քաղված հավաքածուների մեջ ամենահարուստը։ Անվանի հայագետի հետաքրքրությունը Խաչենի պատմության նկատմամբ սկիզբ է առել մի համարյա պատահական դեպքից։ 1908 թ. Կովկասյան թանգարանի դիրեկտորի տեղակալ Ռ. Գ. Շմիդտը Թիֆլիսում գտնվող պետերբուրգյան ուսանող Հովսեփ Օրբելուն ցույց

32 Հիշյալ պեղումների և ստացված արդյունքների նկարագրությունը տե՛ս Հ. Թոփճեան, *Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 63—78։*

33 *Տե՛ս* «Արարատ» *հանդես, 1895, էջ 235—238, 333—348, 388—390, 424—426, 1896, էջ 25—26, 67—71, 125—128, 176—179։*

34 «Արարատ», *1897, էջ 161—163։*

35 *Տե՛ս Հ. Թոփճեան, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, մասն Ա, Վաղարշապատ, 1898 և մասն Բ, Վաղարշապատ, 1900։*

36 *Խ. ծ. վ. Դադյան, Մեծարանց, որ և Ս. Հակոբա վանից արձանագրությունները. «Բանասէր», 1901, հատ. 3, պրակ Բ և Գ, էջ 135—147։*

37 «Արարատ», *1896, էջ 81։*

38 *Անդ, էջ 234։*

է տալիս դաշույնի (թե՞ թրի) երկու երախակալներ, որոնցից մեկը (նշված թանգարանի 851 թվահամարով) առանձնապես հետաքրքրում է երիտասարդ գիտնականին[39]։ Ուսումնասիրությունից պարզվում է, որ դաշույնը պատկանել է XIII դարի Խաչենի հայտնի տիրակալ Հասան-Ջալալ իշխանին, և հենց նրա անունն էլ կցագրով (лигатура) քանդակված է դաշույնից մնացած երախակալի վրա՝ «Հասան-Ջալալ իշխան Խաչենո»։ Մի ընդարձակ հոդվածում նկարագրելով հիշյալ նեֆրիտե երախակալը և հմտորեն բացատրելով նրա բավական բարդ կցագրերը[40], Օրբելին խոստանում է ուսումնասիրություն գրել նաև դաշույնի տիրոջ՝ Հասան-Ջալալի մասին։ Նրա ծրագիրը համեստ էր՝ «պարզել միայն այս անձնավորության (Հասան-Ջալալի—Բ. Ու.) կյանքի հիմնական հանգամանքները և այն միջավայրը, ուր նա գործել էր»[41]։ Սակայն ծանոթանալով վիմական ու մատենագրական բազմաթիվ նյութերին, Օրբելին գրում է մի գիտական աշխատանք, որն ուշագրավ երևույթ էր ոչ միայն ապագա կովկասագետի հետազոտական ողջ գործունեության, այլև ժամանակի հայագիտության մեջ[42]։ Այս երկու աշխատությունները հեղինակի կողմից 1909 թ. հունվարի 28-ին ներկայացվել են Կայսերական ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքին[43], և նրանց գիտական պատշաճ մակարդակը նկատի ունենալով էլ՝ ակադ. Ն. Յա. Մառը երիտասարդ կովկասագետին գործուղել է Խաչեն՝ հետագա գիտա-հետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով։ Մառն իր այդ հանձնարարությունը պատճառաբանել է հետևյալ հանգամանքներով. «... մի կողմից՝ նա (Հ. Օրբելին—Բ. Ու.) երեք ամսա ինձ հետ պրակտիկա էր ձեռք բերում Անիի հնագիտական աշխատանքներում և իմ ղեկավարության ներքո հաջողությամբ զբաղվում էր հայկական հին արձանագրությունների ու նոր հայտնաբերվածների վերծանմամբ, իսկ մյուս կողմից՝ նա այժմ կարող է համարվել Խաչենի իշխանության հիշյալ բոլոր արձանագրությունների լավագույն գիտակը։ Այդ իշխանության պատմությունը նա հիանալիորեն ուսումնասիրել էր՝ Խաչենի տիրակալ Հասան-Ջալալի դաշույնի նեֆրիտյա երախակալը գտնելու կապակցությամբ»[44]։

Խաչենի վիմագրական հարուստ նյութը հետազոտելու, իսկ ամենից առաջ՝ հիշյալ երախակալի տիրոջը՝ Հասան-Ջալալին անմիջապես վերաբերող նյութերը ստուգելու նպատակով, Օրբելին 1909-ի օգոստոսի սկզբին գալիս է Խաչեն։ Նա այստեղ մնում է ընդամենը 17 օր և գրի առնում շուրջ 270 արձանագրություն. 84-ը՝ Գանձասարի վանքից, 21-ը՝ Վաճառից, Խաչխութից ու Ծմակահող գյուղից, 13-ը՝ Հավապտուկից, 36-ը՝ Կոշիկ անապատից, 37-ը՝ Մեծառանից Ս. Հակոբա վանքից, 11-ը՝ Ջուխտ-խաչ ու Խանչալ-խաչ սրբավայրերից, 35-ը՝ Խաթրավանքից և 33-ը՝ Դադի-վանքից։

Այս բոլոր արձանագրությունները Հ. Օրբելին իրեն հատուկ բարեխղճությամբ ու խնամքով արտագրել է (բացառությամբ Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունների) փոքր չափսի մի ընդհանուր տետրում, որի տիտղոսաթերթին գրել է «Армянские надписи Хачена»։ Ըստ երևույթին տետրից անմիջապես պիտի շարվածք կատարվեր տպարանում, քանի որ հենց վերնագրի տակ էլ կա հեղինակի հանձնարարությունը ընտրելիք տառերի ու շարվածքի մյուս հանգամանքների մասին։

Ուշագրավ է, որ արձանագրությունների մեծագույն մասը տետրակում տեղ է գտել ոչ միայն ընթերցվածքով, այլև ճշգրտորեն այնպես, ինչպես տեղում է՝ տառաձևերի, կցագրերի ու վիմագրական այլևայլ առանձնահատկությունների պահպանմամբ։

Այս տետրը գտնվում է ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արխիվում։

Նույն արխիվում է գտնվում նաև Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունների հավաքածուն՝ արդեն տպարանային սրբագրական արտատպվածքի (оттиск) ձևով։

---

39 *И. А. Орбели*, Избранные труды, Ереван, 1963, стр. 135.

40 *И. А. Орбели*, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью. «Известия» Императорской Академии наук, 1909, VI серия, т. III, № 5, стр. 377—389; Также: *И. А. Орбели*, Избранные труды, стр 135—145.

41 *И. А. Орбели*, Избранные труды, стр. 145.

42 *И. А. Орбели*, Хасан-Джалал, князь Хаченский. Известия Императорской Академии наук, 1909, VI серия, т. III, № 6, стр. 405—436; Также: *И. А. Орбели*, Избранные труды, стр. 146—174.

43 *И. А. Орбели*, Избранные труды, стр. 135—146.

44 Гос. ист. музей Ленинградской области, ф. 14, оп. 3, № 15792, л. 9. (Ն. Յա. Մառի ինքնագիր նամակը արևելյան լեզուների ֆակուլտետին)։ Հմմտ. Կ. Ն. Յուզբաշյան, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Երևան, 1971, էջ 21։

Բ. Առաքելյանի կարծիքով՝ Հ. Օրբելու ուղևորությունը Խաչեն՝ կատարվել է հիշյալ հոդվածները գրելուց առաջ («Материалы к библиографии ученых СССР, Иосиф Абгарович Орбели», Ереван, 1957, ներածական-կենսագրական հոդվածը, էջ 11)։ Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, հոդվածները գրված-պատրաստ Ակադեմիա էին ներկայացվել 1909 թ. հունվարի 28-ին, իսկ գիտնականը Խաչեն պիտի մեկնարկվեր կես տարի հետո։

Բանն այն է, որ Օրբելին դեռևս 1909 թ. տպագրության պատրաստած առաջին տետրակի ու սույն ժողովածուի հրատարակությունը հետաձգել է տպագրական համապատասխան տառատեսակների բացակայության պատճառով և նրանց վերստին անդրադարձել է 1919-ին, որոշելով հավաքած բոլոր վիմագրերը հրատարակել առանձին փոքրիկ ժողովածուներով։ Նա այդ շարքի առաջին ժողովածուի մեջ մտցրել է Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունները։ Սակայն, դժբախտաբար, այս ժողովածուի հրատարակությունը ևս ինչ-ինչ պատճառներով գլուխ չի եկել և այն մնացել է որպես սրբագրական արտատպվածք՝ բաղկացած 42 փոքրադիր էջերից։

1917 թ. հունվարին, Խաչենի վիմական արձանագրությունները տպագրության նախապատրաստելու առթիվ, Օրբելին պատասխանատվության ու պարտքի բարձր գիտակցությամբ գրել է. «Խաչենի իմ ժողովածուի տպագրությանն եմ ձեռնարկում մի քիչ ծանր զգացումով. արձանագրությունները ես հավաքել եմ շատ վաղուց, երբ ինքս նոր միայն սկսել էի զբաղվել հայկական վիմագրությամբ, և ես առավել, քան ուրիշ որևէ մեկը, գիտակցում եմ ընթերցվածքների վրիպակները՝ նույնիսկ այնտեղ, ուր ես արձանագրությունն արտագրելիս չեմ կասկածել ընթերցումի ճշտության վրա...»[45]։

Հարկավ, ավելորդ չէր ականավոր գիտնականի տարակուսանքը։ Նույնիսկ Գանձասարի ու Հավապտուկի արձանագրությունների արտատպվածքը, որ համարյա ընթերցողի ձեռքն էր հասել, ունի վրիպակներ ու անճիշտ ընթերցվածքներ, որոնք հենց այս ընթերցվածքին վստահող ուսումնասիրողներին կարող են հանգեցնել թյուրիմացությունների։ Սակայն ամեն պարագայի Օրբելու կատարածը մի շնորհակալ աշխատանք էր՝ արժանի շարունակվելու և զարգացվելու։ Հավաքած նյութի հիման վրա Օրբելին ինքն էր ձեռնամուխ եղել բացելու Խաչենի պատմության ու հին մշակույթի ծալքերը։ Նա այս ուղղությամբ կատարեց նույնիսկ մի հետաքրքիր փորձ. գրեց «XII—XIII դարերի Խաչենի խաչքարերի կենցաղային բարձրաքանդակները» ուսանելի հոդվածը[46], ցույց տալով, թե հայկական հինավուրց այս երկրամասի քարե հուշարձաններն ու վիմական արձանագրությունները որքան հարուստ և բազմազան նյութ կարող են տալ պատմաբանին, հնագետին, ազգագրագետին ու այլևայլ մասնագետների՝ երևան հանելու մեր ժողովրդի բազմադարյան անցյալն իր բոլոր կողմերով։

Ցավոք, սույն հոդվածը մնաց միակն իր տեսակի մեջ։ Օրբելին նույնիսկ ժամանակ չունեցավ անդրադառնալու Հասան-Ջալալի մասին հրապարակած իր աշխատությանը, որպեսզի լրացներ ու շտկեր այն իր իսկ ձեռքով հավաքած վիմագրական նյութի հիման վրա[47]։

Մեծավաստակ գիտնական Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը՝ ծնունդով բնիկ խաչենցի (այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարաղա գյուղից էր)[48], բացառիկ սեր ուներ հայրենի լեռնաշխարհի նյութական և հոգևոր մշակույթի հնօրյա արժեքների հանդեպ։ Ջանասիրությամբ ու գորովանքով հավաքել է Գանձասարի շրջակայքի (Հավապտուկ, Կոշիկ անապատ, Գեռաքարի հուշարձաններ և այլն) վիմական արձանագրությունները, տարբեր առիթներով մանրակրկիտ քննության ենթարկել Խաչենի տարածքում գտնվող հնամյա ձեռագրերը և մատենագրական այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Խաչենին ու նրա տերերին։ Եվ, վերջապես, նրա գրչին է պատկանում հայ պատմագիտության ամենախորունկ հետազոտություններից մեկը՝ նվիրված Խաչենի իշխանական տոհմի խաղբակյան շառավղին, որը XIII դ. սկզբին նոր իշխանություն հաստատեց Սյունիքի Վայոց ձորում և, այդ ժամանակից սկսած, քաղաքական ու մշակութային վիթխարի դեր կատարեց հայոց պատմության մեջ։ Այս ուսումնասիրության առաջին էջերում, Խաղբակյան տոհմակունքները որոշելիս, ապա և շատ ու շատ առիթներով բազմահմուտ գիտնականը հաճախ է անդրադառնում Խաչենի պատմության ու մշակույթի հարցերին՝ ամեն անգամ էլ ցույց տալով իր քաջա-

---

45 Տե՛ս վերոհիշյալ սրբագրական արտատպվածքը՝ «Надписи Гандзасара и Гавоцптука, собрал и приготовил к печати Иосиф Орбели, Петроград, 1919, стр. III—IV.

46 *И. А. Орбели*, Бытовые рельефы на хаченских крестных камнях XII—XIII веков. «Записки Восточного отделения Императорского русского археологического общества», 1915, т. XXII, вып. III—IV, стр. 327—335; также: «Избранные труды», стр. 196—204.

47 Ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու և Խաչենի իշխանության տարածքի առնչակցություններն առավել հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և Խաչենը (փաստաթղթեր և տեղեկություններ). «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 1, էջ 197—204։

48 Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Ջագավանից ժողովր. «Շողակաթ», գիրք Ա, Վաղարշապատ, 1913. էջ 36։

տեղյակությունը Խաչենի պատմության, պարզելով հարցեր, որոնք մթագնված էին նախորդ հետազոտողների՝ Խաչենին նվիրված առանձին աշխատություններում։

Ասենք նաև, որ Գարեգին կաթողիկոսի «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» երկը մեզ համար թանկ է ոչ միայն նրանով, որ պարունակում է այսօրինակ դիտողություններ Խաչենի ու նրա մշակույթի պատմության զանազան հարցերի կապակցությամբ։ Այն դասական և ուսանելի մի օրինակ է, որն իր յուրաքանչյուր էջով ցույց է տալիս, թե ժողովրդի հին պատմության այս կամ այն հարցը քննելու առաքելությամբ դարերի խորքը գնացող գիտնականը ինչպիսի՛ բարեխղճությամբ ու արդարամտությամբ պիտի վերաբերվի իր գործին։

1960-ական թթ. սկզբին ՀՍՍՀ ԳԱ-ի հնագիտության ինստիտուտի վիմագրագետների արշավախումբը (Ս. Գ. Բարխուդարյանի ղեկավարությամբ) հավաքել է հին Արցախի տարածքում եղած ամբողջ վիմագրական նյութը։ Պետք է կարծել, որ այս անգամ արդեն աշխատանքը կատարվել է ժամանակակից գիտական պահանջներով ու բարձր մակարդակով։ Սակայն ցավալի է, որ այդ նյութը ցայսօր չի հրապարակվել։

* * *

Սկզբից ևեթ ասել էինք, որ ուսումնասիրության ընթացքում լայնորեն օգտվել ենք նաև պատմագիտական գրականությունից։ Անկասկած, այդ գրականության մեջ առաջին տեղն են բռնում հայ պատմաբանների աշխատությունները։ Հաճախ դիմել ենք նաև այնպիսի սրևելագետների աշխատություններին, ինչպիսիք են՝ Մ. Բրոսսեն, Հ. Հյուբշմանը, Յ. Մարկվարտը, Վ. Մինորսկին ու Զ. Դովսեթը, որոնց աշխատություններում[49] դիտողություններ կան մեր հետազոտության առարկա թեմայի մի շարք հարցերի վերաբերյալ։ Բարձր գնահատելով հիշյալ հեղինակների հայագիտական գործունեությունը, որն արժանի է երախտագիտության, մենք ցույց ենք տվել նաև նրանց արտահայտած այն կարծիքները, որոնք հակասում են հայկական և այլ արժանահավատ աղբյուրների տվյալներին։ Նման դեպքերում առաջնորդվել ենք մի անշեղ սկզբունքով՝ ամեն մի կարծիք ընդունելի դառնալուց առաջ պետք է ապացուցած լինի իր արդարացիությունը։

Միքայել Չամչյանից սկսած՝ հայ պատմաբաններն ու բանասերները միշտ էլ եռանդուն հետաքրքրություն են ցուցաբերել Հայոց արևելից կողմանց և հատկապես Արցախ-Խաչենի պատմության ու մշակութային զարգացման հարցերի նկատմամբ։ Հենց Չամչյանի եռահատոր Հայոց պատմության մեջ տեղ են գտել մեր թեմային վերաբերող արժեքավոր բազմաթիվ դիտողություններ։ Չամչյանի գրքի արժեքն առավելապես բարձր է նրանով, որ այնտեղ երբեմն արտացոլված են այնպիսի արժեքավոր տեղեկություններ, որոնց աղբյուրներն այժմ կորած են համարվում կամ էլ մեզ համար մատչելի չեն։

Նույնը կարելի է ասել նաև Ղ. Ինճիճյանի աշխարհագրական հմտալից աշխատությունների մասին, որոնցում Հայոց արևելից կողմանց պատմա-աշխարհագրական վիճակը, չնչին բացառությամբ, արտացոլված է ճիշտ ու համոզիչ։

Ղևոնդ Ալիշանը բազմակողմանիորեն ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, բանասիրության և այլևայլ բնագավառների մասին եղած ամենատարբեր նյութերը և տվել դարակազմիկ այնպիսի աշխատություններ, որոնց բարձր արժեքն անուրանալի է։ Ալիշանի երկերում («Հուշիկք հայրենեաց», «Սիսական», «Հայապատում», «Տեղագրութիւն Հայոց Մեծաց» և այլն), ինչպես նաև նրա հրատարակած մատենագրական աղբյուրների ծանոթագրություններում կա ճիշտ ու հստակ պատկերացում Արևելյան Անդրկովկասի և նրա վարչա-քաղաքական ու էթնիկական վիճակի մասին՝ տարբեր պատմաշրջաններում։ Այդ հստակությունն առավել ցայտուն է դրսևորված նրա «Աղվանք» աշխատության մեջ, որը վերջերս տպագրվեց «Բազմավէպ»-ում[50]։

Ալիշանի բազմահարուստ ժառանգության օգտագործումը, ցավոք, երբեմն դժվարանում է նրանով, որ նա քիչ է նշում այն աղբյուրները, որոնցից օգտվել կամ որոնցից վերցրած նյութերը

---

[49] Histoire de la Siounie par Stephanos Orbélian, Traduite de l'arménien par M. Brosset, S. Pétersbourg, t. I—II, 1864—1866; Հ. Հյուբշման, Հին հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, J. Marquart, Eranşahr nach der Géographie der Ps. Moses Xorenaci, Berlin, 1901; *В. Ф. Минорский*, История Ширвана и Дербенда, М., 1963; *C. Dowsett*, The Albanian Chronicle of Mkhitar Gos, BSOAS, XXI/3, 1958.

[50] Հ. Ղ. Ալիշան, Աղուանք. «Բազմավէպ», 1970, № 11—12, էջ 336—353. 1972, № 2—3, էջ 343—356, № 4, էջ 509—517, 1973, № 2, էջ 282—292։

պարզապես վերապատմել է։ Այս թերությունն արդեն նկատել են հետազոտողները[51]։

Ալիշանը հաճախ է աղբյուրների հաղորդած տեղեկություններին ավելացնում իր ենթադրությունները և հետագայում վերջիններս մատուցում որպես ճշմարտություն։ Այսպես, նա, խոսելով Բաղաց-Կապանի թագավորության կործանման մասին, իբր թե, վկայակոչում է Ստեփաննոս Օրբելյան պատմիչին, երբ գրում է. «Եւ ածել ի Խաչենայ իշխանացն մանուկ մի Հասան անուն (որդի Վախտանգայ Սակռեանց), ի Գետաքարեանցն, և ետ զդուստր նմա ի կնութիւն»[52]։

Փակագծերում առնված կապակցությունը չկա Օրբելյանի Պատմության մեջ և չէր էլ կարող լինել, որովհետև Գետաքարեցիք (և ո՛չ Գետաքարեցիք)[53], ճիշտ է, տոհմակից էին Խոխանաբերդի տեր Սակառյաններին, սակայն Սակառյան Վախտանգի ժամանակ բավական հեռացած էին, և Վախտանգի որդի Հասանն էլ Բաղաց-Կապանի հետ առնչություն չէր ունեցել։

Եվ, այսուհանդերձ, Ալիշանի երկերում մենք գտել ենք մեզ հետաքրքրող մի շարք սկզբունքային հարցերի պատասխանները։

Ուսումնասիրության ենթակա հարցերից շատերը տարբեր առիթներով արծարծվել են նաև սփյուռքահայ մի շարք հետազոտողների, հատկապես Ն. Ակինյանի, Արշակ Ալպոյաճյանի, Հ. Ոսկյանի, Հ. Քյուրտյանի, Միք. Հովհաննիսյանի և այլոց երկերում։ Ն. Ակինյանին ու Հ. Ոսկյանին, իհարկե, ավելի շատ հետաքրքրել են հոգևոր ու նյութական մշակույթի հուշարձանները։ Եվ անվանի երկու բանասերների հետազոտություններն, անկասկած, կարևոր են մեզ հետաքրքրող հարցերի ուսումնասիրության բնագավառում։

* * *

Վերը նշեցինք Հ. Օրբելու հոդվածը Խաչենի իշխանաց-իշխան Հասան-Ջալալի մասին։ Խաչենի իշխանությանը նվիրված երկրորդ հետազոտությունը Կարապետ եպիսկոպոսի (Կարապետ Տեր-Մկրտչյան) այն արժեքավոր գրքույկն է[54], որ քննության է առնում Ծարա ճյուղի՝ Դոփյանների տոհմաբանությունը և խոսում այս ճյուղի հիմքի վրա գոյացած մելիքական այն տան մասին, որը պատմության մեջ հայտնի է Մելիք-Շահնազարյանք անունով։ Գրքույկի ամենաարժեքավոր մասը Դոփյան ճյուղի պատմական բեմելի շրջանի ընդհանուր քննությունն է, ուր հետազոտողը ցույց է տալիս ժամանակի հայկական ու անդրկովկասյան կյանքի բնորոշ կողմերը, բացահայտում Զաքարյան զորապետների գործունեության համաանդրկովկասյան նշանակությունը և հատկապես պատմական այն հիմքերը, որոնց վրա պետք է բարձրանային Հյուսիս-արևելյան Հայաստանի մանր, սակայն չափազանց կենսունակ իշխանությունները։ Գրքույկում, ցավոք, տեղ են գտել նաև թյուրիմացություններ, որոնք վերաբերում են հատկապես Խաչենի իշխանության տարբեր ճյուղերի փոխհարաբերություններին և Ներքին Խաչենի ճյուղի XIV—XV դդ. վիճակին։

Արցախ-Խաչենի պատմության, պատմական աշխարհագրության, մշակութային կյանքի վերաբերյալ հսկայական նյութ է կուտակված մեծանուն Լեոյի «Հայոց պատմության» ստվարածավալ հատորներում և մի շարք այլ աշխատություններում[55]։ Այս լեռնաստանի ու նրա ազատասեր բնակչության դերը հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, ազատագրական շարժումները և ժողովրդի կենցաղը ցայսօր ոչ ոք այնպիսի հմտությամբ չի ներկայացրել, ինչպես Լեոն։ Եվ պարզ է, որ այսօր Արցախ-Խաչենի պատմության ոչ մի շրջանի մասին չի կարելի լիարժեք խոսք ասել՝ առանց յուրացնելու այն ամենը, որ առկա է պատմաբանի հայագիտական ժառանգության մեջ։ Այստեղ, իհարկե, մենք չենք անդրադառնա նախաքրիստոնեական Արցախի էթնիկական վիճակի մասին Լեոյի սխալ պատկերացումներին, որովհետև դրանք դուրս են մեր ուսումնասիրության շրջանակներից և ըստ էության քննության են ենթարկվել այլ առիթով[56]։

---

51 Գարեգին վարդապետ, Զագավանից ժողովը, էջ 31. «Ալիշան... յուր սովորության համեմատ առանց տեղը ցույց տալու...»։ Մ. Աբեղյանն այս թերությունը համարում է «հին վենետիկյան սովորություն» (տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», Բ, էջ 44 ծան. 3), նաև՝ Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 22։

52 Ղ. վ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 16։

53 Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 337։

54 Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք. Նյութեր հայ մելիքության մասին, Բ, Ս. Էջմիածին, 1914, էջ 233։

55 Լեո, Իմ հիշատակարանը (տեղեկություններ մեր սարերից ու ձորերից), Շուշի, 1890, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, Խոջայական կապիտալ, Երևան, 1934 և այլն։

56 «Արցախի պատմությունը» (թեկնածուական դիսերտացիա)։ «Աղբյուր-

Խաչենի քաղաքական պատմության հարցերը համազգային կյանքի ոլորտում պարզ պատկերացնելու համար մեծ մասամբ ուղեցույց ենք ունեցել նաև Հակոբ Մանանդյանի Քննական տեսության՝ մեր ուսումնասիրության շրջանին համապատասխանող գլուխները, որոնք գրված են բազմալեզու աղբյուրների ընձեռած հարուստ նյութի հիման վրա։ Բավական է ասել, որ այդ գլուխներում գիտնականը քննության է առել նաև Խաչենին վերաբերող համարյա ամբողջ այն նյութը, որ իր ժամանակ եղել է հրապարակի վրա։

Դեռևս 1920-ական թթ. սկզբին Ա. Գ. Հովհաննիսյանը տպագրել է մի ուշագրավ հոդված Գեղամա ու Ծարա մելիքական տան տոհմագրության և տոհմի վարչական կենտրոնների մասին[57]։ Հոդվածի հետ հրապարակվել էին նաև երկու ձեռագրերի հիշատակարաններ, որոնք պարունակում են հիշյալ տոհմին վերաբերող արժեքավոր տեղեկություններ[58]։ Հետագայում ևս գիտնականը բազմիցս քննության նյութ է դարձրել Արցախ-Խաչենի իշխանական տների ու սրանց ներկայացուցիչների գործունեությունը, պարզելով մի շարք կարևոր հարցեր։ Խաչենի ազատագրական շարժումներն ու ժողովրդական կյանքի մի շարք կողմեր մեծ խորությամբ մեկնաբանվել են Ա. Հովհաննիսյանի այն աշխատության մեջ, որն ընդհանրացնում է հայ ազատագրական մտքի բազմադարյան պատմությունը[59]։

Խաչենի իշխանության տարածքի ու հարակից գավառների քաղաքական կյանքին նվիրված երեք ընդարձակ հոդվածներ է տպագրել Ս. Գ. Բարխուդարյանը[60]։ Արժանին հատուցելով հանգուցյալ գիտնականի խոշոր ծառայությանը՝ հնագիտական և հատ-

---

ների և գրականության տեսություն» գլխում, նաև՝ Բ. Ուլուբաբյան, Արցախը պատմական աղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ. «Երևանի Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի ասպիրանտական գիտ. աշխ. ժողովածու», № 3, Երևան, 1969, էջ 326։

57 Աշոտ Հովհաննիսյան. Գեղամա և Ծարա մելիքական տոհմը. «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921—1922, էջ 105—113։

58 Անդ, էջ 112—113։

59 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959։

60 Սեդրակ Բարխուդարյան, Գեղաբքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի. «Բանբեր մատենադարանի», 1967, № 8, էջ 191—225, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը. «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 125—147, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX—X դարերում, ՊԲՀ, 1971, № 1, էջ 52—75։

կապես հայկական վիմագրերի հավաքման ու քննության ասպարեզում, չենք կարող չնշել, որ այս հոդվածներում տեղ են գտել մի շարք թյուրիմացություններ։ Օրինակ, Դերբենդի, այսպես կոչված, հայկական թագավորության, ապա և Արցախի, Փառիսոսի ու Շաքիի իշխանություններին նվիրված հոդվածներում ճիշտ չեն ներկայացվում Արևելյան Անդրկովկասի միջնադարյան պատմության մի շարք սկզբունքային հարցեր, մասնավորապես՝ այդ տարածքի վրա գոյատևած իշխանական տների տոհմաբանությունը, որովհետև հեղինակն իր վարկածների համար մեծ մասամբ հիմք է ընդունում պատմագիտության մեջ վաղուց արդեն մերժված տեղեկությունները, իսկ հավաստի փաստերից էլ երբեմն կատարում է անհամոզիչ եզրահանգումներ։

Հիշատակության արժանի են նաև այնպիսի ուսումնասիրություններ, ինչպես Բ. Ն. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում», Լ. Հ. Բաբայանի «Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում», Աս. Մնացականյանի «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» արժեքավոր մենագրությունները, Գ. Կիրակոսյանի հոդվածները՝ նվիրված Հասան-Ջալալյաններին և Դոփյաններին, որոնք պարունակում են ուշագրավ դիտողություններ Խաչենի իշխանության քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի և մշակույթի մասին։ Ավելորդ չենք համարում նշելու, որ առանձնահատուկ ուշադրության է արժանի Լ. Հ. Բաբայանի մենագրությունը (տպագրված հայերեն ու ռուսերեն), որը XIII—XIV դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությունը քննում է լայն պլանով, բազմալեզու աղբյուրների ընձեռած հարուստ նյութերի ու տեղեկությունների հիման վրա։

Նկատի ենք առել նաև հետազոտողներ Ի. Պ. Պետրուշևսկու, Ա. Ալիզադեի և ուրիշների՝ անմիջապես կամ անուղղակի կերպով Խաչենի իշխանությանը վերաբերող մի շարք նկատողություններ։

Մենք այստեղ կանգ առանք միայն այն հիմնական աղբյուրների ու գրականության վրա, որոնց հետ առավել շատ ենք առնչվել ուսումնասիրության ընթացքում։ Մեզ համար ուղեցույց են եղել նաև հայ ժողովրդի պատմությանը վերաբերող այլևայլ աշխատություններ, բառարաններ և հատկապես Հրաչյա Աճառյանի «Հայերեն անձնանունների բառարանը», որը հայ ժողովրդի պատմության և առհասարակ հայագիտության հարցերով զբաղվողներին հնարավորություն է ընձեռում ազատվելու ավելորդ որոնումներից։

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Խաչենի իշխանության և նրա ճյուղերի բնագավառը Խաչեն աշխարհն է եղել[1], հին Արցախի լեռնային տարածքը՝ նախալեռնային Մյուս Հաբանդի մի զգալի մասի և Մեծառանք գավառի հետ միասին։ Սակայն Սահլի և Համամի ժամանակներից սկսած և հատկապես IX—XII դարերում այդ իշխանության տիրապետությունը տարածվում էր նաև Ուտիքի հարավային ու արևմտյան գավառների վրա։ Էլ չենք խոսում այն մասին, որ Սահլի գրավումների հետևանքով Մեծ Սյունիքի հյուսիս-արևմտյան մի զգալի մասն անդարձ մնաց Խաչենի իշխանությանը և նրանից էլ՝ ժառանգական հայրենիքի ձևով, անցավ այն մելիքություններին, որոնք հետագայում գոյացել էին իբրև Խաչենի իշխանության շառավիղներն ու ժառանգորդները։

Այս տարածքի աշխարհագրական ու վարչական միավորներին, ինչպես նաև տեղանուններին վերաբերող քննական լուրջ ուսումնասիրություն չկա ցայսօր։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ ենք համարում համառոտ մի ակնարկով ներկայացնել Խաչենի իշխանության ընդգրկած տարածքի պատմա-աշխարհագրական պատկերը։ Այս դեպքում, բնականաբար, մենք չպետք է բավարարվենք «Արցախ» նահանգի «Աշխարհացույց»-յան նկարագրի բացահայտմամբ, որովհետև այդ նշանավոր աշխարհագրական երկի օրերից դարեր էին անցել, փոխվել էր երկրամասի վարչա-քաղաքական նկարագիրը, և արդեն այլ էին առանձին միավորների մասին եղած պատկերացումները։ Արցախի 12 գավառներից Խաչենի իշխանության տիրապետության տակ էին գտնվում Մյուս Հաբանդի մեծագույն մասը, Մեծառանքը, Մեծկվենքը, Փառիսոսը (Քուստ-ի Փառնես), Բերդաձորը, Ծարը (նախկին Վայկունիք) և առանձին գավառամասեր Ուտիքից ու Մեծ Սյունիքից։

Մյուս Հաբանդ.—Այս գավառն ընդգրկել է այժմյան Մարտունու և Հադրութի շրջանների տարածքը՝ Կարկառ գետի աջ ափերը մինչև Դիզափայտի լեռները և Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի արևմտյան եզերքը։

Մյուս Հաբանդի կենտրոններն են եղել Ամարասը (այժմյան Մարտունու շրջանում) և Քթիշ (կամ Գտիշ) ամրոցը, որը գտնվում էր հետագայի Դիզակի շրջանում, այժմյան Դող գյուղի մոտ։ Այս գավառում, այժմյան Տումի գյուղի մոտ էր գտնվում արաբական տիրապետության ժամանակներից հայտնի Գորոզ բերդը[2], որը եղել է նաև Դիզակի իշխանների կամ թագավորների նստավայրը։

Խաչենի իշխանությանը ենթակա էր Մյուս Հաբանդի մի զգալի մասը, այն տարածությունը, որ մտնում է այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի և մասամբ էլ Ստեփանակերտի շրջանի մեջ։

Մեծառանք (Մեծիրանք).— Աղբյուրներում կոչվում է «Մեծառանք», «Մեծարանք», «Մեծիրանք»։ Ճիշտը «Մեծառանք»-ն է, որը կազմված է «Առան» տեղանունից, սա էլ, ըստ ավանդության, Առան Սիսակյան այն առաջին իշխանի անունից է, որը Վաղարշակ թագավորի կողմից կուսակալ էր կարգված Հայաստանի հյուսիս-արևելյան գավառների (ըստ Մ. Խորենացու՝ «զարևելից հիւսիսոյ կողմանն»)[3] վրա։

Մեծառանք գավառն ընդգրկված էր Խաչենագետի վերին ավազանում[4], Կարկառից մինչև Թարթառ ու Քիրսից մինչև այժմյան Մարտակերտի դաշտաբերանը[5] և միջին դարերում կոչվում էր նաև

---

1 ենթադրվում է, որ նահանգի «Խաչեն» անունը ծագել է համանուն բերդից (Historie de la Siounie, t. II, էջ 139)։ Իսկապես, Աղվանքի ժամանակագիրը IX դարի իրողությունների առումով հիշում է «Բերդն Խաչենոյ» (Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, այսուհետև՝ «Կաղանկատուացի», էջ 388)։ Սակայն դժվար է պնդել, թե այստեղ անվան կիրառության նախնական վիճակն է արձանագրված։ Մխիթար Դոշը գիտե «կողմանք Խաչենոյ» («Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 71), Կիրակոսը՝ «կողմանք Խաչենոյ» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, այսուհետև՝ «Կիրակոս», էջ 181), «աշխարհ Խաչենոյ» (անդ, էջ 209) և այլն։

2 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 304։

3 Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 113։

4 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 66։

5 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 24։

Ներքին Խաչեն[6] կամ պարզապես Խաչեն։ Վերջին անունը տիրապետող է դառնում X—XII դարերից, հատկապես՝ Հասան-Ջալալյանների օրոք, երբ «Խաչեն» անունն արդեն փոխարինում էր «Արցախ»-ին՝ ցույց տալով հին նահանգի ամբողջ լեռնային ու նախալեռնային տարածքը, առանց Դիզակի, որն ընդգրկում էր նախկին Արցախի հարավային մասը՝ Երասխի ձախափնյակը։

Մեծկվենք (Մեծկուանք).— Կոչվել է նաև Մեծկողմանք։ Մ. Բարխուտարյանցը Մեծկվենքը նույնացնում էր ետնագույն Ջրաբերդի, Թալիշի, Գյուլիստանի հետ, հետևաբար՝ Թարթառի ստորին ավազանում, Մռավի լանջերից դեպի հարավ և դեպի արևելք. «Մռավ բարձր լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղիի (Թարթառի վտակն է—Բ. Ու.) և Թարթառի ջրերի ձախ և Կուրակ գետի աջ ափերի մեջ»[7]։

Մեծկվանքը համարյա այս սահմանների մեջ էր տեղադրում նաև Ս. Ջալալյանցը[8]։

Աղբյուրների ընձեռած տվյալների համաձայն՝ ճիշտ է Բարխուտարյանցի տեղադրումը, որովհետև Մ. Դասխուրանցին Մեծկվենից գավառը դնում է Թարթառի ափերին։ Ահա պատմիչի վկայությունը. «Եւ եկեալ (խազարները) հասանէին... ի ձորախորխում անտառայր մայրաստանիկ աշխարհն Արցախայ ի գաւառն Մեծկուենից. և ի կիրճս ճանապարհին և երկաջոկեալ գունդն երկում բաժանելով՝ նստէին գուպարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր ի հիւսիսոյ կողմանն. իսկ գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն ի հարաւական կողմանն... բնակէր»[9]։ Ուրեմն, երկու խմբերն էլ Թարթառի ափերին էին, մեկը՝ հյուսիսային, մյուսը՝ հարավային, և երկուսն էլ՝ Մեծկվենից գավառում։

Դասխուրանցին ուրիշ բազմաթիվ կոնկրետ վկայություններ ունի Մեծկվենք կամ Մեծկողմանք անուններով գավառի մասին, և բոլորն էլ այս գավառով ընդգրկում են Թարթառի ափերը՝ Մռավից հարավ ու արևելք։ Ահա այդ վկայությունները. «...ի վերնակողմ գաւառն Մեծկուենից՝ ի բարձրավանդակ լեռանն, ի տեղի մենաստանի նորա ի Գլխոյ վանս»[10]։ Իսկ Գլխո վանքը գտնվում է Թարթառի ափին, Թալիշ գյուղի թիկունքում։ «Արդ եկեալ հասեալ նոքա ի մէջ Արցախն գաւառի, գտանէին զնա ի Գլխոյ վանս իւրում մենաստանին»[11]։ Կամ «երթայր ի Մեծկուենիցն գաւառն ի Գլխոյ վանաց եկեղեցին»[12]։ Մի այլ տեղ. «Գաւառն Մեծկողմանց ի Զղախեան հովիտն յԱպարիսական դաշտակն առ ափն Տրտուական գետոյն...»[13]։

Ուրեմն, պատմիչի այս վկայություններով՝ Մեծկողմանքը (Մեծկվենք) գտնվում էր միջնարցախում, Տրտու-Թարթառ գետի ավազանում, այն սահմանների մեջ, որ մենք ցույց տվինք վերը։ Հետևապես, իրավացի չէ Ս. Երեմյանը, երբ Մեծկվենք է համարում այժմյան Իշևանի շրջանը[14], ուր հնում փոված էր Ուտիքի Կայեն գավառը։

Փառիսոս կամ Քուստ-ի Փառնես.— Ս. Երեմյանը «Քուստի» առանձին գավառ է ճանաչում և այն նույնացնում այժմյան Շամշադինի շրջանի հետ[15]։ Համարյա նույն սահմաններում էր տեղադրում Մակար Բարխուտարյանցը՝ ավելացնելով նաև Ղազախի շրջանին կից տարածք. «Գաւառն, որ ընկած է Տավուշ կամ Թովուզ գետակի հարավային Ախնջի օժանդակի (վտակի—Բ. Ու.), Աղստև գետի և Գեղամյան լեռնաշղթայի ու գետաբերանի մեջ, ուտացած է Քուստի, Քավս, այժմ Խազախ անունները (մեծ մասն՝ Շամշադին)»[16]։

Ս. Երեմյանը, Փառնեսն առանձին գավառ համարելով, տեղադրում է «Շամքոր գետի ակունքների շրջանում, որտեղ միջին դարերում գտնվում էր Փառիսոս քաղաքը (այժմ՝ Կալաքենդ)»[17]։ Մոտավորապես նույն տեղադրությունն է նաև Մ. Բարխուտարյանցի մոտ. «Շամքոր գետակի միջին օժանդակի և Գեղամա լեռնաշղթայի գագաթնագծի շարունակության ու Տավուշ գետակի հարավ-արևելյան օժանդակի (Ախնջիի) ափերի և դաշտաբերանի մեջ»[18]։

Մեզ թվում է՝ «Քուստ»-ը պետք է որ «Փառնես»-ի կամ «Փառիսոս»-ի որոշիչը լինի՝ «գավառ» իմաստով, «քուստակ»—«քրս-

6 Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862 (այսուհետև՝ «Վարդան Վարդապետ»), էջ 140։

7 «Արցախ», էջ 24։

8 Ս. Ջալալեանց, էջ 223, 239—240 և հտգ.։

9 Կաղանկատուացի, էջ 108։

10 Անդ, էջ 243։

11 Անդ, էջ 266։

12 Անդ, էջ 250։

13 Անդ, էջ 235։

14 Ս. Երեմյան, Հայաստանը..., էջ 66։

15 Անդ, էջ 90։

16 «Արցախ», էջ 25։

17 Ս. Երեմյան, Հայաստանը..., էջ 88։

18 «Արցախ», էջ 24։

տակ» բառից, ինչպես որ «Տուս-քուստակ»-ը հարևան գավառի (Տավուշ) անվան մեջ։ Եվ պատահական չէ, որ աղբյուրները հիշում են ոչ թե Քուստի և Փառնես առանձին գավառներ, այլ մեկ «քուստ-ի Փառնեայ գաւառ»։ Օրինակ, Միսայել եպիսկոպոսից (876) մի հայտնի ճառ է մնացել այս վերնագրով՝ «Միսայելի Հայոց եպիսկոպոսի Մեծի-Կողմանցն և Քուստ-ի Փառնեայ նահանգի՝ ի սուրբ խաչն Քրիստոսի»[19]։ Նույն ձեռագրի մի այլ տարբերակում՝ «Քուստիփառնեայ» է[20]։ Երկու դեպքում էլ անունն է այն գավառի, որ սահմանակցվում էր Մեծ-Կվենքի կամ Մեծ-Կողմանց հետ, որովհետև այս ժամանակ երկուսը միասին ենթակա էին մեկ եպիսկոպոսի։ Իսկ եթե սահմանակից էր Մեծ-Կողմանքին (Թարթառի միջին ավազանը, Մարդակերտի շրջանի մասը, Շահումյանի շրջանը և շրջակայքը՝ դեպի արևմուտք), ապա պետք է, որ տարածված լիներ Ղարաբաղյան լեռնաշղթայի լանջով դեպի արևմուտք, մինչև Շամքորի շրջանի սահմանները, որը և կլինի «Փառնեայ» կամ հետագայի Փառիսոսի գավառը։

Այս գավառը Փառիսոսի թագավորության օրոք ընդգրկում էր շատ ավելի մեծ տարածություն, որովհետև նրան էին կցված Ուտիքի հարավ-արևմտյան մասերը, ինչպես և Մեծկվենքի որոշ մասը։ Վերջինն առավել ևս հասկանալի է, քանի որ Փառիսոսի թագավորությունը Խաչենի իշխանության մի ճյուղն էր։

Ծար (հնում՝ Վայկունիք).— Տարածված էր Թարթառ գետի վերին ավազանում։ Արևելքում նրա սահմանն անցնում էր Դաղի-վանքի մոտով, Լևոնաբերդ կոչված սարով և Թարթառի ափն ի վեր ծրուվելով՝ ընդգրկում էր Խաթրավանքը (Վաղուհաս գյուղից արևմուտք), ապա հարավից սահմանակցվում էր Սյունիքի Վայոց ձորին՝ Ջերմուկի մոտերքում։ Արևմուտքում նրա սահմանն անցնում էր Սևանի ավազանը Թարթառի ակունքներից բաժանող Ռմբոստյան լեռնաշղթայով։ Հյուսիսում այն պիտի ընդգրկեր Մռավի հյուսիսային լանջերը՝ Քյուրակ և Շամքոր գետակների ակունքներով։

Մեր քննությանը ենթակա ժամանակաշրջանում գավառը բացառապես կոչվում էր Ծար կամ Ծարա երկիր՝ անշուշտ Ծար իշխանանիստ ավանի անունից, որը գտնվում էր «Բաղանիք արքունականք» անունով ևս հայտնի ջերմուկի ակունքում (այժմյան՝

19 Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութիւն, էջ 785։

Ղ. Ինճիճյանցը ևս ճանաչում է «Քուստ-ի Փառնեայ» մեկ գավառ (տե՛ս Ղ. Ինճիճեանց, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 309։

20 «Բազմավէպ», 1911, էջ 258—265։

Խաթիսու) առողջարանից մի քանի կիլոմետր արևելք, Թարթառ գետի ձախ ափին։

Կիրակոս պատմիչն այսպես է տեղադրում Ծար իշխանանիստը. «Գիւղ մի է ի սահմանս Գեղարքունւոյ ծովուն, ի կողմն Խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր Ջերմուկն է Ծար անուն»[21]։

Մեսրոպ երքեպիսկոպոս Սմբատյանցը համոզված էր, թե «Ծար»-ը հայերեն «ծայր» բառից է առաջացել, որովհետև այդ գավառն «է՛ ծայրն Սիւնեաց ի հիւսիսոյ, ծայրն Գանձակայ ի հարաւոյ, և ծայրն Արցախոյ յարևմտից, և ծայրն Գեղարքունւոյ յարևելից»[22]։ Հավանաբար այս կարծիքի հիմք են ծառայել աղբյուրներում գործածվող «Ծայր», «Ծայրեցի» ձևերը[23]։

Ծարա իշխանության օրերում «Ծար» կամ «Ծարա երկիր» անունով կոչվում էին Դոփյան տոհմաճյուղի տիրույթները միասին վերցրած, այսինքն՝ ինչպես հին Վայկունիք-Ծարը, այնպես էլ նրա շրջակաները, որոնք ենթակա էին այդ իշխանական տանը՝ Թարթառի ակունքներից մինչև Սևանի հարավային ու հյուսիսային ափերը։ Հարավ-արևելյան ափին նրա մեջ էր մտնում Շողվագ բնակավայրը, իսկ հյուսիսային տարածքն զբաղեցնում էր Արցախի հին Կողթ գավառը։

Բերդաձոր.— Այս գավառը ճիշտ է տեղադրված Մ. Բարխուտարյանցի կողմից. Արաքս և Աղավնո (Հաքարի) գետերի միջև ընկած տարածքը, Քիրս և Դիզափայտ լեռների հարավահայաց կողմերից սկսած՝ մինչև Սյունյաց սահմանները[24], որ կոչվել է Բերդաձոր, հետագայում նաև Ղալադարասի (թուրքերեն նույնն է, ինչ որ Բերդաձորը), որպիսի գյուղ այժմ էլ կա Քիրսի արևմտյան լանջին։ XIII դարի սկզբից մնացած մի արձանագրության մեջ, որ Խաչիկ վ. Դաղյանն է գտել Խաթրավանքի մոտ՝ Վաղուհաս գյուղից հարավ գտնվող Ս. Գրիգոր եկեղեցուց, կա. «ի Սուրբ Գրիգոր Բերդաձորա» արտահայտությունը։ Խաչիկ վարդապետն այսքանից ենթադրում էր, թե սույն կապակցության մեջ խոսքը

21 Կիրակոս, էջ 322։

22 Սմբատեանց Մեսրովբ արքեպ., Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 627։

23 Այս գավառի ժամանակագիրներն ու գրիչներն իրենց հաճախ են կոչում «Ծայրեցի». տե՛ս Թովմաս, Յուցակ ժողովածուաց, Բ, էջ 24բ, Մկրտիչ եպ. Աղուանոնի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ երկրին մէջ, Երուսաղէմ, 1931, էջ 29։

24 «Արցախ», էջ 25։

Բերդաձոր գավառի մասին է, հետևապես և այդ անունով գավառը տարածված է եղել ոչ թե Բերդաձոր (Ղալաթարասի) գյուղի շրջականներում, այլ Թարթառի աջ ափին, Վաղուհաս գյուղի շուրջը[25]։ Այս տեղադրությունը հիմնավոր համարել չի կարելի, քանի որ արձանագրության մեջ հիշատակվող Ս. Գրիգոր եկեղեցին գտնվում էր Խաթրավանքի կողքին, իսկ Խաթրավանքը Ծար գավառի հոգևոր կենտրոնն էր։ Ուրեմն Ս. Գրիգորը ևս Ծարի մեջ էր մտնում։ Արձանագրության մեջ հիշատակվող Բերդաձորը կարող է լինել գյուղանուն։ Այնտեղ Վախտանգի որդի Սակոն այգի ու այգեպան է նվիրում «ի Սուրբ Գրիգոր Բերդաձորա», ապա անիծում՝ «ով զայս խափանէ եւ Բերդաձորա սահման կամ ի վիճակն ձեռն արկանէ կամ զրկէ...» և այլն։ Բերդաձորն այստեղ գավառի իմաստ չունի։

Սոդք.— Այս գավառը տարածվում էր Սևանա լճի հարավարևելյան և արևելյան կողմերում։ Իր տարածքով գրեթե համընկնում է այժմյան Մարտունու շրջանի մի մասին և Վարդենիսի շրջանին[26]։ Մեսրոպը Սմբատյանցն իրավացիորեն Սոդքը տեղադրում էր հետևյալ սահմանների մեջ. «յԱրևմտից Սևանա ծովն, ի հարավո Վայոց-ձորո արևելյան մասն և Սյունյաց նահանգի հյուսիսային մասն, յարևելից Ռմբոստյան լերինքն և Ծարա գավառն... և ի հիւսիսո՝ Ջիվանշիր գավառն Գանձակա (Շամշադին և Գետաբակ)»[27]։

Սոդից գավառն Արցախի կազմում էր դեռևս Ծավդեից իշխանության ժամանակներում։ Ագաթանգեղոսի ու Եղիշեի ցանկերում Արցախն ու Ծավդեից իշխանությունը նույնական էին[28]։ Այդ բացատրվում է նրանով, որ Արցախի իշխանանիստը Ծաւդ-Սոդք ավանն էր, և իշխանանիստի անունից էլ իշխանությունն ստացել էր «Ծաւդէից» հորջորջումը[29]։

25 «Արարատ», 1896, էջ 81։

26 Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 215։

27 Սմբատեանց, Տեղեկագիր, էջ 543։

Այսպես էր տեղադրում նաև Ն. Ադոնցը (տե՛ս Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը. Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 136)։

28 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 404։ Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 10։ Ալիշան, Սիսական, էջ 63։

29 Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Ս. Տ. Երեմյան, Ծաւդէացւոց իշխանութիւնը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, 7—8, էջ 46—48, նույնի՝ Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 80, Բ. Ուլուբաբյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 182—186։

Արաբական տիրապետության առաջին շրջանում, հավանաբար, Սոդքը վերստին անցել էր Մեծ Սյունիքին, քանի որ այս դարերի Արցախին վերաբերող աղբյուրներում ոչ մի անգամ չի հիշատակվում Սոդից գավառը։ Իսկ Սյունիքի պատմության հետ այն սերտորեն առնչվում էր։ IX դարի առաջին կեսից սկսած Սոդքը գտնվում էր Խաչենի իշխանության սահմաններում։ Դեռ ավելին, այն ընդգրկում էր նաև Գեղարքունի գավառի արևելյան ծայրը՝ Շողվագ հայտնի ավանով հանդերձ։ Սա, ինչպես ասել ենք, պետք է բացատրել Խաչենի մեծ իշխան Սահլ Սմբատյանի բռնագրավումներով։ Այդ նա էր, որ, պատմիչի վկայությամբ, իր տիրապետությունը տարածեց նաև Սյունիքի հյուսիս-արևմտյան մասերի վրա, ընդհուպ մինչև Գեղամա գավառը[30]։ Սահլի ժառանգորդները՝ Վերին Խաչենի ու Ծարա իշխանները, իրենց տիրույթների սահմանները նշելիս, միշտ էլ հիշում էին Շողվագ ավանը[31], որը գտնվում էր Սևանի հարավային ափին, նախկին Գեղամա գավառի մեջ։ Սահլի ժամանակից սկսած՝ Սոդքն այնքան սերտորեն էր կապված Վերին Խաչենի կամ Վայկունիք-Ծարի հետ, այսինքն՝ վարչա-քաղաքական տեսակետից այնքան յուրացված էր վերջիններիս կողմից, որ հեղինակներն այլևս այն չէին ճանաչում որպես առանձին գավառ։ Օրինակ, Վարդան Վարդապետը, որ հրաշալի գիտեր իր աշխարհը, գրում էր, թե «Սոթից գավառն Ծարա երկիրն է»[32]։

Ստ. Օրբելյանը հետևյալ կերպ էր բացատրում «Սոդք» գավառանունը. իբր թե «սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ օդոցն կոչեցաւ Սոթք»[33]։ Այս բացատրության մեջ պատճառն ու հետևանքը փոխել են իրենց տեղերը։ Սոդք գավառից փչող ցուրտ քամիներն են, որ ժողովրդական լեզվով կոչվել են «սոթ»[34]։

Մեսրոպը Սմբատյանցի կարծիքով՝ Սոդքը «կարծես յուրաքանչյուր տիրող իշխանության ժամանակ մի նոր անուն է ստացել. զօ. Ռրմբոսյան գավառ, Սոդից գավառ, Արտից գավառ, Մազազ, Գեղամաբակ, Վայկունիք և այլն»[35]։ Այստեղ էլ կարծիքի հիմք

30 Կաղանկատուացի, էջ 388։

31 «Արցախ», էջ 405, 408, Շահխաթունեանց, Բ, էջ 365, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս.-Պ., 1913, էջ 130, 172 և հտգ.։

32 «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», Փարիզ, 1960, էջ 12։

33 Ստ. Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910 (այսուհետև՝ «Օրբէլեան»), էջ 12։

34 Ստ. Մալխասեանց, Հայ. բացատրական բառարան, Դ, էջ 238։

35 Սմբատեանց, Տեղեկագիր, էջ 32, 596։

են դարձել թյուրիմացությունները, որովհետև ինչպես հնագույն ժամանակներում, այնպես էլ ամբողջ միջնադարում գավառից չի պոկվել նրա Սոդք (հնում՝ Սաւդք-Ծաւդք) անունը։ Ինչ վերաբերում է թվարկված հորջորջումներին, ապա դրանք կապ չեն ունեցել բուն Սոդքի հետ։ Համենայնդեպս քաջատեղյակ աղբյուրներն այդպիսի անուններ չեն հիշում Սոդքի առնչությամբ։

* * *

Անհրաժեշտ ենք համարում երկու խոսք ասել նաև այն տեղանունների մասին, որոնք առավել գործածական էին Արցախ-Ուտիք երկրամասի համար՝ մեր քննության ենթակա ժամանակաշրջանում։ Դրանք են՝ «Արևելից կողմանք», «Աղվանից կողմանք», «Աղվանք» (վաղ շրջանի՝ X—XII դդ. համար), «Առան» (նույն շրջանում և սակավ՝ XIII—XIV դդ.) և «Ղարաբաղ» (սկսած XIV դարից)։

«Աղվանք» և «Առան».— Ուշ-մարզպանական շրջանից սկսած հայկական աղբյուրներում «Աղվանից կողմանք», «Հայոց արևելից կողմանք», սակայն ավելի շատ «Աղվանք» էր կոչվում Կուրի և Երասխի միջագետքը՝ Հնարակերտից մինչև այդ երկու մեծ գետերի միախառնման կետը։ Սա այլ բան չէր, քան Արցախ և Ուտիք նահանգների բռնած տարածքը։ Բայց ինչո՞ւ այդպես, երբ առավել հին աղբյուրներից՝ հունա-հռոմեական պատմիչների, ինչպես նաև հայ առաջին մատենագիրների երկերից, հայտնի է, որ բուն Աղվանք (Ալբանիա) էր կոչվում Կուրի ձախափնյակը[36]։ Հայտնի է, որ 428 թ. Պարսից արքունիքը իրեն հպատակ Արևելյան Հայաստանում վերացրել էր Արշակունյաց հարստությունը և ստեղծել վարչական մեկ միավոր (մարզ), որը կառավարվում էր արքունիքի դրածո մարզպանի կողմից։ Նման մի մարզ էլ ստեղծել էր բուն Աղվանք երկրից՝ նրան միացնելով հայկական Արցախ և Ուտիք նահանգները։ Այս մարզը բաղկացուցիչ, համեմատաբար մեծ միավորի անունով կոչվեց Աղվանք։ Սակայն Աղվանք մարզին կամ մարզպանությանը վիճակված չէր անխաթար պահպանել վարչական իր ամբողջությունը, քանի որ Վարդանանց 451 թ. հուժկու ապստամբությունը և հետագա պարբերական ընդվզումները հենց V դարի 80-ական թվականներին՝ Պարսկաստանին ստիպեցին որոշ ինքնուրույնություն շնորհել հպատակ մարզերին։ Ճիշտ է, Պարսկաստանը հայոց թագավորությունը չվերականգնեց, սակայն կենտրոնական Հայաստանի մարզպան կարգված Վահան Մամիկոնյանին բավական մեծ իրավունքներ շնորհեց։ Հայաստանի հյուսիս-արևելյան երկու նահանգների (Արցախ, Ուտիք) իշխանական տներն այնքան արտոնյալ էին, որ ստեղծեցին փոքրիկ թագավորություն՝ Առանշահիկ (Առանի տոհմից սերված) Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ։ Անդրկուրյան կամ բուն Աղվանքում էլ գլուխ բարձրացրին նախկին ցեղային միավորումները, և երկիրը դարձավ բազմաթիվ ցեղային-պետական միավորների մի խառնարան։ Ամեն մեկի զբաղեցրած տարածքն այդ ցեղային միավորի անվամբ էլ կոչվում էր՝ Մազքթաց աշխարհ, Բաղասական, Լփինք, Թավասպարան և այլն։ Հետագայում՝ արաբական տիրապետության շրջանում, հին Աղվանքի տարածքի վրա գոյացան Շաքիի, Շիրվանի ու Դերբենդի ամիրայությունները։ Պարզ է, որ վարչական այսօրինակ բաժանումների մեջ Կուրի ձախափնյակում այլևս համարյա թե անելիք չուներ «Աղվանք» ընդհանրական տեղանունը։ Այն կապված պիտի մնար Վաչագանի ստեղծած թագավորության տարածքին, և հետագա բոլոր դարերում «Աղվանք» անվան տակ պիտի հասկացվեր աջափնյակը։

«Աղվանք» նոր անունը, որ ոչ մի կապ չուներ երկրամասի բնակչության էթնիկական նկարագրի հետ, այնքան էր յուրացվել Ուտիք-Արցախ հայաշխարհի կողմից, որ X դարում Մովսես Դասխուրանցին (կոչված Կաղանկատվացի) գրեց այդ հայաշխարհի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև իր օրերը, և այն կոչեց «Պատմութիւն Աղուանից աշխարհի»[37]։

Ետնագույն այս Աղվանքը, որ հայաշխարհ էր և ուներ իր հայ թագավորական-իշխանական հարստությունը, աղբյուրներում ու պատմագիտության մեջ ընդունված է կոչել ոչ միայն վերը հիշված անուններով, այլև՝ Հայոց Աղվանք, նույնիսկ Փոքր Հայք[38], ավելի շատ՝ Առան, հետագայում, համարյա միայն Ղարաբաղ։

---

36 Ստրաբոն, Աշխարհագրություն, գիրք XI, գլուխ 3, § 2, Պտղոմեոս V, 11, § 3, Փավստոս Բիզանդ, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1914, էջ 314 և այլն։

«Աղվանք» («Ալբանիա»՝ ըստ հունա-հռոմեական աղբյուրների) և «Հայոց արևելից կողմանք», «Աղվանից կողմանք» տեղանունների ու սրանց տարբերակների քննական մեկնաբանությունը՝ տե՛ս Ան. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ներածություն, էջ 7—80, Բ. Ուլուբաբյան, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները, ՊԲՀ, 1971, № 3, էջ 115—126։

37 Այս մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Հազար տարեկան գիրք, որ նաև հազար հինգ հարյուր տարեկան է. «Գարուն», 1971, № 11, էջ 82—88։

38 Ղ. Ալիշան, Աղուանք. «Բազմավէպ», 1970, 11—12, էջ 341։

Առան տեղանունն ընդունված է մակաբերել երկրամասի առաջին ավանդական տեր Առանից։ Ինչպես վերն ասվեց, սկզբնապես Առան է կոչվել Խաչենագետի ու Թարթառի ստորին ավազաններն ընգգրկող տարածքը։ Այդ պատճառով է, որ այն ընդգծվել է միայն Արցախի Մեծ-Առանք և Ուտիքի Առան-ոռոտ, Առան-ձակ գավառանունների մեջ։ Սակայն հետագայում այդ անվամբ արաբ ու պարսիկ մատենագիրները երբեմն կոչել են նաև Կուրի ձախափնյակը։ Իսկ Շաքիի, Շիրվանի ու Դերբենդի ամիրայությունների ստեղծումով՝ Առան անունը կապված մնաց միայն աջափնյակին, հաճախ ցույց տալով ...ռավել փոքրիկ մի տարածք՝ Գանձակն իր շրջականներով[39]։

Ղարաբաղ.— Երկրամասը (ամբողջ Ուտիք—Արցախ հայաշխարհը) պատմագիտությանը հայտնի աղբյուրներում Ղարաբաղ է կոչվում սկսած XIV դարից։ «Ղարաբաղ» տեղանվան մի հիշատակություն կա վրաց «Քարթլիս ցխովրեբա»-ի այն հատված-ժամանակագրության մեջ, որը պատմում է Գեորգի Լաշայի թագավորությունից (XIII դ. սկիզբ) մինչև Գեորգի Պայծառի ժամանակը (XIV դ. սկիզբ) ընկած 100 տարվա դեպքերը։ Ժամանակագիրը, խոսելով Արղուն բռնավորի դեմ վրաց իշխանների կազմակերպած ապստամբության հանգամանքների մասին, հայտնում է, որ Ուլո խանը «...եկավ, հասավ իր ամառային կայան Ալատաղը... իսկ ապա գնաց Ճմուան բնակատեղի, որին արդ Ղարաբաղ ու Մուղան են կոչում»[40]։

Հետազոտողներից ոմանք վրացական այս երկի ստեղծման ժամանակ են համարում XIV դարը, իսկ բանասեր Պ. Մուրադյանը

---

39 «Առան»-ի հանգամանալից քննությունը՝ տե՛ս Բ. Ուլուբաբյան, «Այրարատ», «Աղվանք» և «Առան» տեղանունները, էջ 124—126։

40 «Վրաց ժամանակագրություն», թարգմ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 112։ Նույնը՝ Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Բ, Երևան, 1936, էջ 59։

Ալատաղ ամառանոց-քաղաքը, ըստ հայ և օտար պատմիչների միանման վկայության՝ կառուցվել է Հուլավու խանի գլխավորությամբ, Ալատաղ լեռան մոտ, Դաան կամ Դաան գաշտ կոչված վայրում, որ գտնվում էր Այրարատյան նահանգի Բասեն գավառում (Գրիգոր Պատմիչ, էջ 32, Կիրակոս, էջ 396—397, Օրբելեան, էջ 415, Վարդան Վարդապետ, էջ 151, В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой орды, II, М.—Л., 1941, էջ 74, 96, 99։

Ք. Պատկանյանը մոնղոլ նոյիններ այս ամառանոց-նստավայրը սխալմամբ տեղադրել է Ղարաբաղում, ելնելով, թե պատմիչների խոսքը վերաբերում է «Գեղարքունիք-ամառանոցին» («История монголов Инока Магакии XIII века», СПб., 1871, стр. 71—73, прим. 18)։

կոնկրետ ժամանակ է նշում 1316, 1318 թթ. և միաժամանակ գրտնում, որ այն խմբագրվել ու լրացվել է XIV դարի վերջին կամ XV-ի սկզբին[41]։

Պ. Մուրադյանը ենթադրում է, որ սույն փաստը «Ղարաբաղ»-ի առաջին հիշատակությունն է պատմագրության մեջ[42]։

Դժվար է ստույգ ասել՝ «Ղարաբաղ» անունը նախապես եղե՞լ է ժամանակագրության մեջ, թե հետագայի մուծում է, որ կարելի է ենթադրել «արդ Ղարաբաղ... են կոչում» արտահայտությունից։ Սակայն, որ XIV դարի սկզբին այդ անունն արդեն կար, հաստատվում է նույն ժամանակի պարսկական աղբյուրներում առկա հիշատակությամբ։

Անկախ այս ամենից, վրաց ժամանակագրության անանուն հեղինա՞կը, թե՞ խմբագիրը մեզ օգնում են պարզելու մի բան, որ տեղանունն առաջ գոյություն չի ունեցել և «այժմ» է, որ կա («արդ Ղարաբաղ ու Մուղան են կոչում»)։

«Ղարաբաղ»-ի գործածության հանդիպում ենք նաև Համդալլահ Ղազվինիի գրքում, որը թերևս հնարավոր լինի առաջինը համարել, քանի որ պարսիկ ժամանակագրի այս «Հավաքումն պատմության»-ը («Թարիխ-ի Հուզիդե») գրվել է XIV դարի առաջին կեսին, և հիշյալ տեղանունն էլ մտնում է 1334—1344 թթ. դեպքերը նկարագրող հատվածի մեջ։ Այստեղ Չինգիզխանի հետնորդ Ուզբեկը Դեշտ-ի Խազարից (Խազարական դաշտ) Դերբենդի անցքով արշավում է դեպի Իրան, և այս ճանապարհի վրա էր «Առանի Ղարաբաղը»[43]։ Ապա «Ղարաբաղ» տեղանվանը հանդիպում ենք XIV—XV դդ. պարսիկ այլ ժամանակագիրների երկերում[44]։ Այնուհետև խոսում է հայկական աղբյուրը՝ Թ. Մեծոփեցու պատմությունը, որի տեղեկության համաձայն՝ Վրաց թագավոր Բագարատը գնացել էր «Ընծայիւք ի հնազանդութիւն պիղծ թագաւորին (Չաղաթային—Բ. Ու). և նա լցեալ չարութեամբ սատանայի ուրացոյց ղնա եւ առեալ գնաց ի Ղարաբաղ՝ ի ձմերոցն առաջին թագաւորաց մերոց»[45]։

---

41 Տե՛ս Պ. Մուրադյանի «Առաջաբան»-ը («Վրաց ժամանակագրություն»), էջ 13—14։

42 «Վրաց ժամանակագրություն», էջ 201, ծան. 64։

43 «Из избранной истории Хамдаллаха Казвини и продолжений к ним» (Сборник материалов, относящихся к истории Золотой орды, II), էջ 90:

44 Անդ, էջ 142—143, 188 և այլն։

45 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 20։

Ըստ հնագույն հայ պատմիչ Ագաթանգեղոսի՝ հայ թագավորների ձմերոցն Ուտիքն է եղել։ Այնտեղ էր՝ «յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց», որ հանդիպեցին Պարթևն ու Խոսրովը[46]։

Ուրեմն, ըստ Թ. Մեծոփեցու, Ղարաբաղի մեջ էր մտնում Ուտիքը, համենայն դեպս՝ Կուրի աջափնյակի այն հարթավայրը, ուր հնում Խաղխաղ քաղաքն էր գտնվում։

XVI դարին վերաբերող աղբյուրներից մեկում «Ղարաբաղ»-ի փոխարեն «Սեաւ այգի» է[47]։ Չենք կարող առայժմ հայտնի այս միակ գործածության հիման վրա պնդել, թե «Սեաւ այգի»-ն առհասարակ տարածված անուն է եղել, մանավանդ, որ այս աղբյուրի հեղինակ Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակակից հիշատակագրի հեղինակը «Ղարայպաղ» ձևն է նախընտրել[48]։ Սակայն չի կարելի չնկատել, որ «Սեաւ այգին» «Ղարաբաղ»-ի բառացի թարգմանությունն է։

Հետագա ժամանակներում արդեն «Ղարաբաղ»-ը փոխարինում է Արցախ-Ուտիքին[49]։

«Ղարաբաղ» անվան բացատրության համար լեզվաբանական էքսկուրսներ կատարելու կարիք չկա, քանի որ այն պարզապես կազմված է թուրքերեն «կարա» (սև) և «բաղ» (այգի) արմատներից։ Կ. Գանը հակամետ էր «կարա» (սև)-ի տակ հասկանալ «թանձրախիտ», «մուգ կանաչ»[50]։ Իսկ Մակար Բարխուտարյանցի կարծիքով՝ գործածական է եղել «Սեաւ այգի», որ պարսիկներն ու թուրքերը դարձրել են «Ղարաբաղ»[51]։ Սրա հիմքն է Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրությունը, որը, սակայն, բավական չէ նման կարծիք հաստատելու համար։

Մեզ թվում է՝ «Ղարաբաղ»-ի «ղարա»-ի մեջ պետք է տեսնել ոչ միայն «սև» իմաստը, այլև այդ բառի երկրորդ շատ տարածված բովանդակությունը՝ «մեծ»-ը։ Թուրքական լեզուներում «ղարա-

46 Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, էջ 26։

47 *Տե՛ս* Յովհաննիսիկ Ծարեցու պատմությունը. «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վ-պատ, 1893, էջ 193, Մժ, Բ, էջ 245։

48 *Մատենադարանի ձեռ. № 4173, թ. 95ա, հմմտ. Մժ, Բ, էջ 252։*

49 Եսայի Հասան Ջալալեանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Եր-ևանաղէմ, 1868, էջ 47։

Հանգամանորեն տե՛ս К. Ган, Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909, էջ 70—71.

50 Կ. Գան, *նշված տեղում։*

51 «*Արցախ*», *էջ 2։*

դամ» նշանակում է «մեծ տուն», «գլխաստուն», «ղարա-մալ»՝ խոշոր (եղջերավոր) անասուն»։ Ծարեցի Գրիգոր մեծ իշխանը կոչվում էր Ղարա Գրիգոր (հետագա աղբյուրներում)[52]։

Գր. Ղափանցյանը գտնում էր, որ «Ղարաբաղ»-ի մեջ «ղարակարա» նշանակել է «ցեղ»։ Ուրեմն՝ «Ղարաբաղ» պիտի նշանակեր «բաղ ցեղ»։ Նա համանման բարդություններ էր համարում «Փայտակարան», «Բաղակարան» և «Դաշտակարան» տեղանունները, գտնելով, որ բոլոր այս դեպքերում «կարան» նշանակում է ցեղ-ժողովուրդ։ Հետևապես «Փայտակարան»-ը «փայտ-ժողովուրդ» է, «Դաշտակարան»՝ «դաշտի կամ հարթավայրի ժողովուրդ», «Բաղակարան»՝ «բաղ ժողովուրդ»։ Բայց ո՞րն է «փայտ» ժողովուրդը։ Չէ՞ որ Փայտակարան է կոչվել հունա-հռոմեական աղբյուրների ճանաչած «Կասպիանե» մարզը, որի բնակիչները ժամանակի բոլոր հեղինակներին հայտնի էին «կասպ» անունով (հայերեն՝ «կազբք»)։

Հավանաբար Գր. Ղափանցյանը ծանոթ չի եղել «Փայտակարան»-ը «մայրաքաղաք» բառով բացատրելու փորձին[53], որն արդարացվում է հայ մատենագրության ընձեռած բազմաթիվ օրինակներով։

«Փայտակարան»-ը «մայրաքաղաք, մեծ կամ գլխավոր քաղաք» իմաստով օգտագործում էին մեր պատմիչները։ Օրինակ, Մատթեոս Ուռհայեցին հայոց (Աղվանքի) թագավորների ու կաթողիկոսների փայտակարան-մայրաքաղաք է համարում Պարտավը՝ գրելով. «...մնաց հաստատութեամբ, հայրապետութեամբ և թագաւորութեամբ... ի քաղաքն հայոց ի Պարտաւ, որ ասի փայտակարան...»[54]։ Թովմա Մեծոփեցին՝ նախընթաց մատենագրության ու պատմության հմուտ գիտակ, փայտակարան է կոչում Տփխիսը. մոնղոլ զորապետն «ընթացեալ բազում զօրօք ի փայտակարան Տփխիս քաղաք՝ էառ զնա»[55]։ Կամ. «...անտի չուեալ գնացին ի վերայ Տփխիս փայտակարան քաղաքին...»[56]։ Անշուշտ այս բառը «մայրաքաղաք» առումով է օգտագործված նաև առավել հին մի

52 *Մատենադարան, ձեռ. № 9923, թ. 2 ա, բ։*

53 Խ. Վ. Դաղյան, *Առան երկիր կամ աշխարհ. «Արարատ», 1896, էջ 233, ծան. 1։*

54 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 230—231։*

55 Թովմա Մեծոփեցի, *էջ 19։*

Այստեղ և Ուռհայեցու ժամանակագրության տպագրի մեջ «Փայտակարան»-ը մեծատառով է սկսվում։ Հրատարակիչները թյուրիմացաբար այն հատուկ անվան տեղ են ընդունել։

56 Թ. Մեծոփեցի, *էջ 122։*

աղբյուրում՝ Ասողիկի Պատմության մեջ. «Իսկ որք զքաղկեդոնին՝ Իւերիոյ և Աղուանից կաթողիկոսն, որ էր ի փայտակարան, ի դրան արքունի... և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից...»[57]։

Խոսքը վերաբերում է VII դ. սկզբներին, երբ Պարսից մայրաքաղաքը Տիզբոնն էր[58]։ Եվ մեր հեղինակը Տիզբոնն է համարում «փայտակարան», ուր կար արքունի դուռ, այսինքն՝ այն աթոռանիստ էր։ Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ հայ հեղինակների «փայտակարանը» (նկատի չունենք Փայտակարան նահանգի ու նրա կենտրոնի անունները, որոնք ևս, հավանաբար, գոյացել են նույն իմաստից) հին պարսկական «փայտախտարանն» է, որ նշանակում է «աթոռանիստ»-«մայրաքաղաք»։

Անընդունելի է նաև Գր. Ղափանցյանի «Բաղակարան» → «Ղարաբաղ» բացատրությունը։ Իբր թե, արաբ պատմիչ Բալազորին ունի «Բաղակարան» տեղանուն, որը հետագայում «հայկական արտասանությամբ դարձել է «Ղարաբաղ» («В позднем армянском произношении... стало «Кара-баг»)[59]։ Մինչդեռ Բալազորիի «Բալակարան»—«Բաղասականը» վերաբերում է Կուրի ձախափնյակին և բուն Աղվանքի «Բաղասական»-ի աղավաղումն է[60]։

Խաչեն.— Արդեն ասվել է, որ այս անունով միջնադարում կոչվում էր այն տարածքը, որն ընդգրկում է Ղարաբաղի լեռնային ու նախալեռնային մասը (այժմյան Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի, Ստեփանակերտի ու Մարտունու շրջանները և Ադրբեջանական ՍՍՀ Շահումյանի, Քելբաջարի ու Լաչինի շրջանները)։ Եղել է նաև Խաչեն բերդ Թարթառ-Տրտուի ափին[61], որից և այնտեղի իշխանությունը կոչվել է Խաչենի իշխանություն, ինչպես վաղնջական հնում «Սաւդք» կենտրոնի անունով՝ Սավդեից (Արցախի) իշխանություն, Գարդմանք անունից՝ Գարդմանից (Ուտիքի) իշխանություն և այլն։ Այս եղանակով էլ Խաչենի իշխանության ընդգրկած տարածքն է կոչվել Խաչեն։ Իսկ երբ Խաչենի իշխանությունը ճյուղավորվեց, նրա ամեն մի ճյուղի բռնած տարածքն էլ ստացավ իր նոր անունը՝ Ներքին Խաչեն (Խոխանաբերդն իր շրջականներով), Հաթերք (Թարթառ գետի միջին ավազանը, այժմ էլ պահպանվող Հաթերք գյուղի շրջակայքը) և Վերին Խաչեն կամ Ծար (Վաղուհասից ու Ջերմուկ-Իսթիսուից վերը՝ մինչև Սևանա լճի արևելյան ափերը)։

Չի կարելի ասել, թե ամբողջ միջնադարում Խաչեն անունով կոչվել է մեկ միասնական տարածք իր անփոփոխ սահմաններով։ Ավատական կարգը և հատկապես Հայաստանի կենտրոնական թագավորության վերացումից հետո եղած արհավիրքները չէին հանդուրժի այդպիսի բան։ Սակայն, ինչպես պատմական ըեպքերի շարադրման ընթացքում կտեսնենք, իշխանությունն իր ճյուղերով հիմնականում տեղավորված էր վերը թվարկված շրջանների սահմաններում, և եթե փոփոխություններ կատարվում էին, ապա դրանք լինում էին համարյա միշտ էլ ի նպաստ Խաչենի[62]։

Հայտնի է, որ IX դ. սկզբին Խաչենի մեծ իշխան Սահլ Սմբատյանը բռնությամբ տիրացել էր Գեղամա գավառին[63]։ Դրանով իսկ Գեղամա գավառն ու շրջակայքն այնպես հաստատվել էին Խաչենի իշխանության պայազատների տնօրինության տակ, որ դարի վերջում արդեն Սահլի թոռ Գրիգոր Ատրներսեհյանը (Համամ-Գրիգոր) իրեն տեր էր համարում «Սիւնեաց և Աղուանից»[64]։

---

57 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.-Պ., 1885, էջ 96 (ընդգծումը մերն է—Բ. Ու.)։

58 Անդ, էջ 116—117, 119։

59 Гр. Капанцян, Хайаса—колыбель армян. Историко-лингвистические работы, Е., 1956, էջ 128—129:

Հիմք ընդունելով Գր. Ղափանցյանի տեսակետը՝ Ս. Տ. Երեմյանն էլ կարծում է, որ «XIV—XV դդ. տեղական հայկական «Բաղակարան»-ը իմաստավորվում է թուրքական լեզվով իբրև «Կարաբաղ»՝ այն է, «Սեաւ այգի»—«Ղարաբաղ» (Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և 7-րդ դարի հայոց «Աշխարհացոյց»-ը. «Մառը և հայագիտության հարցերը» ժողովածու, Երևան, 1968, էջ 90)։

Սակայն Գր. Ղափանցյանը չէր ասել, թե «Բաղակարանը» հայկական է, ընդհակառակը, նրա կարծիքով՝ այն հայկական արտասանությամբ է դարձել «Ղարաբաղ»։ Մյուս կողմից էլ՝ «Բաղակարան»—«բաղք—ժողովուրդն» ինչպե՞ս է իմաստավորվել իբրև «սեաւ այգի»։ Սրանք իմաստային կապ չունեն իրար հետ։

60 «Բաղասական»-ի մասով տեղադրությունների ու աղավաղումների քննությունը տե՛ս Բ. Ուլուբաբյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 178—182։

61 Կաղանկատուացի, էջ 388։

62 Պատմական աշխարհագրության հարցերով զբաղվող մեր գիտնականները ո՛չ Խաչենի իշխանության օգտին կատարված գործարք են ճանաչել XI դարի սկզբին Հայոց միասնական կաթողիկոսության կողմից Սյունյաց միտրապոլտությանը ենթակա վիճակի ընդլայնումը։ Սակայն այդ գործարքի քննությունը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում կաթողիկոսական միջամտությունը չի շոշափել իշխանության ավատական շահերը։

63 Կաղանկատուացի, էջ 388։

64 Տե՛ս Մեծ Մազրայում կանգնեցված նրա խաչքարի գիրը, որի մասին խոսք կլինի գրքի առաջին գլխում։

Եվ բնական է, որ Սյունիքի տերերը, իրենց համար քաղաքական բարեպատեհ պայմաններ ստեղծվելուն պես, պիտի ջանային վերականգնել կորցրածը, մանավանդ, որ IX դարում կրած կորուստներից հետո, X դ. կեսերին էլ կորցրել էին իրենց հոգևորնվիրապետական առանձնաշնորհների մի զգալի մասը։ Ամենայն հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին 1006 թ. մի շրջաբերականով հաստատեց Սյունյաց ամբողջ վիճակի իրավունքները՝ ընդառաջելով նահանգի թագավոր Վասակի պահանջներին։ Կաթողիկոսի շրջաբերականով Սյունյաց առաջնորդությունը դարձյալ հաստատվեց իր միտրապոլտական իրավունքների մեջ («...ձեռնադրեցաք զսա [Հովհաննիսին] ըստ առաջին աթոռակալացն միտրապոլիտ Սիւնեաց»), և նրա նվիրապետության տակ գրվեցին նահանգի գավառների 12 եպիսկոպոսությունները («և հաստատեցաք վերստին զնոյն վիճակ երկոտասան գաւառսնին յաթոռդ նախագահ»)։ Մեր խնդրո առարկայի համար կարևոր է այդ գավառների ցանկը, որ բերված է շրջաբերականի մեջ։ Ահա այն. «...եւ մեք... բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա. եւ այս իսկ են գաւառք վիճակեալք հօտի նոցա. Սիւնիք, Բաղք, Արևեաց տունն, Որդուատ, Արքուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ որքան Երասխայ գետն հատանէ, Ճահուկ, Վայոց ձոր Խաչերոյ խոռովն, Գեղարքունի Կոզաբակովն, Իրիշատ, Ջաղացաձորն և Փորակն իսկ բոլորովին, յորում բազում հակառակութիւնք լեալ էին. և մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն Հայոց։

Հատանէ և զսահման Աղվանից Լոմբի խոռն՝ Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հատանէ մինչ ի Քարավազին կամուրջն, և Հաբանդ գաւառ...»[65]։

Ուրեմն, Սյունիքի և Արցախ-Խաչենի սահմանը հարավից ընկրսած անցնում էր Աղավնո գետով, ապա Ռմբի խոռ (հավանաբար այժմյան Դալիդաղի հարավային գագաթնածիրը) գծով, որը Արցախի Ծարը բաժանում էր Սյունիքի Աղահեճ գավառից։ Ուշադրության արժանի է, որ շրջաբերականում ոչ մի խոսք չկա Սոդքի մասին։ Պարզ է, որ Սոդքը մտնում էր Արցախ-Խաչենի մեջ։ Եվ անբացատրելի է մնում, թե Ստ. Օրբելյան պատմիչն այն ինչո՞ւ է մտցրել Սյունիքի վիճակի մեջ[66], երբ այն ոչ իր ժամանակ, ոչ էլ իրենից առաջ ու հետո չի կտրվել Արցախից ու չի հեռացել Աղվանից եկեղեցու ոլորտից։ Եթե չհաշվենք էլ հին իրողությունները, որոնց մասին խոսեցինք վերը, ապա հայտնի է Գրիգոր-Համամի հուշարձանի հաստատ գիրը IX դարի երկրորդ կեսից, և անհերքայելի են Դոփյան իշխանության հիշատակները, որոնցում Սոդքն ու շրջակաները միշտ էլ հաստատվում են որպես այդ իշխանության տիրույթներ։

Պատմագիրն իր ցանկը վերնագրել է իբրև «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին»[67]։ Գուցե նա այստեղ նկատի է ունեցել ոչ թե իր ժամանակ գործող կարգը, այլ միայն ինչ որ հին ժամանակ սահմանված մի բաժանում («ըստ հին սահմանին»)[68], որն իր օրերում սոսկ հավակնություն կարող էր լինել և ոչ թե իրականություն։ Կամ թերևս ցանկը կազմել է՝ հետևելով «Աշխարհացույց»-ի տեղեկությանը, որով իսկապես Սոդք-Սօթքը հիշվում է Սյունիքի գավառների շարքում։ Ամեն պարագայի՝ միջնադարյան իրականության մեջ Սոդքը երբեք չի վերաբերել Սյունիքին, և մեր պատմաբանները զուր են նրա մեջ մտցնում՝ հետևելով միայն Ստ. Օրբելյանի վերոհիշյալ ցանկին։

Հետաքրքիր է նաև Սարգիս կաթողիկոսի շրջաբերականով Սյունյաց վիճակին վերադարձված «Գեղարքունի Կոզաբակովն»։ Ի՞նչ սահմաններ են նկատի առնվել այս Գեղարքունի գավառի համար՝ դժվար է որոշակի գծել, և որտե՞ղ էր գտնվում Կոզաբակը՝ ցարդ ոչ ոք չի պարզել։

Համենայն դեպս, Խաչենի իշխանության Ծարա ճյուղի ներկայացուցիչները X—XV դարերի ընթացքում իրենց տիրույթները թվարկելիս միշտ էլ Շողվագա բնակավայրը հիշատակում են որպես հայրենի սեփականություն։ Այսպես, XIII դարում Ծարա կամ

65 Օրբելեան, էջ 310։

Թվարկված գավառանունները (Որդուատ, Նախիջաւան են) հաստատում են, որ վերանայելի է Թ. Հակոբյանի կարծիքը, ըստ որի՝ «մի բան պարզ է, որ այդ թվերից (909—910) սկսած այլևս Նախիջևանը մեր աղբյուրներից և ոչ մեկի մեջ չի դասված Սյունիքի կազմում» (Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 37)։

66 Օրբելեան, էջ 514—515։

67 Օրբելեան, էջ 509։

68 Այս հացրի վրա ուշադրություն է դարձրել Հայկարամ Ութմազյանը, որի կարծիքով՝ «Օրբելյանի գրքում տրված հարկացուցակը, հիմնականում X դարի ցուցակ է» (Հ. Մ. Ութմազյան, Սյունիքը IX—X դարերում, Երևան, 1958, էջ 231), «որը, ստանալով օրենքի ուժ, գործել է նաև հետագա դարերում, ինչպես նաև իր՝ Օրբելյանի դարում, համեմատաբար ավելի անաղարտ ձևով» (անդ, էջ 234)։ Սակայն այս կարծիքը կարոտ է հիմնավոր փաստարկման։

Վերին Խաչենի իշխան Հասանը կոչվում էր «Հանդաբերդո, Սոթից և Շողգահո (Շաղուագայ) տէր»[69]։ Հասանի որդի Գրիգոր մեծը XIV դ. սկզբին Թարգմանչաց ավետարանի հիշատակարանում համարված է տեր «ծովակին Գեղամայ՝ Սոթից մինչև ի Շաղուագայ»[70]։ Իսկ XV դարում Դոփյան տան մի այլ պայազատ՝ Սայտին, իրեն կոչում է «տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվագայ»[71]։

Այսքանից պարզվում է, որ քննության ենթակա ժամանակներում, կամ, համենայն դեպս, XIII—XV դարերում, Վերին Խաչենի տերերին էր պատկանում Գեղամա ծովակը (Սևանա լիճը), թերևս նրա հարավային ափը, ինչպես նաև արևելյան, հյուսիս-արևելյան ու հարավ-արևելյան ափերը։ Վերջին եզրակացության համար աներկբայելի հիմք է Շողվագա-Շողգահա տեղանունը։

Որտե՞ղ էր գտնվում Շողվագան, որպիսի անունով գյուղ էլ կար, վանք էլ[72]։

Հավանաբար վանքի մասին առաջին տեղեկությունն Ասողիկինն է, որը, խոսելով Սարգիս Սևանցի կաթողիկոսի մասին (XI դ. սկիզբ), վկայում է, որ առաջ նա վանահայր է եղել Գեղամա այն վանքում, «որ յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ՝ Շողուագայ անուանի»[73]։ Միայն այսքանը։ Ստ. Օրբելյանն էլ պատմում է, որ վանքը (Պետրոս առաքյալի անվամբ) Սյունյաց տիկին (Բագրատունի Աշոտի դուստր) Մարիամն է կառուցել՝ IX դ. վերջին[74]։ Պատմիչը կոնկրետ տեղեկություն չունի։ Սակայն մի տեղ թվարկում է՝ «Իսկ ի Գեղամն մեծ մենարանն Մաքենոցն և Վանաց-վանն և միւս Վանէ վան, Շողուագայի վանք»[75]։ Սրանից կարելի է եզրակացնել, որ Շողուագը գտնվում էր Մաքենյաց վանքի մոտ։ Իսկ վերջինս տեղադրվում է Սևանի արևելյան ափին։ Սակայն, սկսած Հ. Շահխաթունյանցից, այն ընդունված է տեղադրել Սևանի հարավ-արևելյան ափին, Մարտունի շրջկենտրոնից արևմուտք, այժմյան Զորագյուղի տեղում, որը թուրքերի կողմից կոչվում էր Վալի-աղի գյուղ։ Շահխաթունյանցը կրկնում է Ասողիկի տեղեկությունը, «Շողուգայ»-ի մասին, ապա թե՝ «այժմ անուանի Վալի աղի գիւղ»[76]։ Բայց ինչի՞ հիման վրա՝ չի ասում, մանավանդ, երբ խոստովանում էլ է, որ չկարողացավ «գտանել զշիրիմ յիշեալ Մարիամայ տիկնոջ»[77]։

Ճիշտ է, կա ավելի հին աղբյուրի՝ Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռի» տեղեկությունը, որով ներկայացված են «Շողուաքայ վանից որպիսութիւնքն» և նրա վիճակի գյուղերի անունները (բոլորն էր այժմ անհայտ)[78], սակայն այս տեղեկությունն անհամոզիչ է, որովհետև վանքը ճանաչվում է իբրև «Սուրբ Գրիգոր», իսկ մենք սկզբնաղբյուրից գիտենք, որ այն կոչվել է Պետրոս առաքյալի անունով[79]։

Այսպես թե այնպես Շողվագը գտնվել է Սուքից հարավ-արևմուտք, քանի որ այն միշտ էլ հիշատակվել է որպես Դոփյանների տիրույթների ծայր-արևմտյան կետ։ Հետևապես պետք է ենթադրել, որ կամ այն իսկապես ներկայիս Զորագյուղի տեղում է եղել, կամ էլ մոտավորապես նրա մոտերքում։

Ուրեմն, Խաչենի իշխանության Մարա ճյուղի արևմտյան սահմանների մեջ ընդգրկված էին Սևանա լճի արևելյան, հյուսիս-արևելյան ու հարավ-արևելյան ափերը։

Իշխանության և նրա ճյուղերի տիրապետության սահմանները արևելքում ու հյուսիսում պարբերաբար փոփոխության էին ենթարկվում։ Այդ փոփոխությունների հանգամանքները ցույց կտրվեն գրքի համապատասխան գլուխներում։

---

69 «Արցախ», էջ 405։

70 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2743, թ. 183ա։

71 «Արցախ», էջ 408։

72 Օրբելեան, էջ 174։

73 Ասողիկ, էջ 259։

74 Օրբելեան, էջ 174։

75 Անդ, էջ 340։

76 Շահխաթունեանց, Բ, էջ 246։ Սմբատեանց, Տեղեկագիր, էջ 32, 286, 509, 578։ Ս. Ջալալյանցը ևս կրկնում է Շահխաթունյանցին («Ճանապարհորդութիւն», Բ, էջ 123, 213), սակայն թերահավատությամբ (անդ, էջ 123), Ալիշան, Սիսական, էջ 50։

77 Շահխաթունեանց, Բ, էջ 247։

78 Սիմեոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 284։

79 Օրբելեան, 174։

Վերջերս լույս տեսավ «Դիվան հայ վիմագրության» ժողովածուի Դ պրակը (Երևան, 1973)՝ կազմված Ս. Գ. Բարխուդարյանի կողմից։ Այստեղ ևս նույն տեղադրությունն է. «Զորագյուղ (նախկինում՝ Վալի աղալու, հնում՝ Շողագա կամ Շաղուագա)» (անդ, էջ 241)։ Սակայն տպագրված արձանագրություններից ոչ մեկում չկա ոչ Շողվագա անունը, ոչ էլ եկեղեցու՝ Պետրոս առաքյալի անվամբ կոչված լինելը ակնարկող որևէ բառ։

ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՀՄԱԿՈՒՆՔՆԵՐԸ

X դարի բյուզանդական կայսր և պատմիչ Կոստանդին Միրանածինը, թվարկելով Հայաստան աշխարհի պետական այն կարևորագույն միավորումները, որոնց հետ բյուզանդական արքունիքը գրագրություն ուներ, հիշատակում է նաև Խաչենի իշխանությունը։ Ըստ նույն վկայության, այնտեղ թղթեր են հղվել հետևյալ հասցեով՝ «Խաչենի իշխանին՝ Հայաստան»[1]։ Շուրջ երկու դար հետո հայ մեծ իրավագետ, գրող ու պատմիչ Մխիթար Գոշը, հանձին Խաչենի իշխանության և Կիլիկյան Հայքի թագավորության տեսնում էր հայրենի հինավուրց պետականության այն անկորնչելի բեկորները, որոնց հետ իր ժողովրդի քաղաքական միասնության վերականգնման բաղձանքներն էր զուգորդում[2]։

Որտեղի՞ց է սկիզբ առնում Խաչենի իշխանությունը, որո՞նք են նրա էթնիկական և վարչա-քաղաքական ակունքները։ Ահա մի հարց, որ մինչև այժմ շատ է արծարծվել հետազոտողների կողմից՝ ստանալով իրարից տարբեր, հաճախ իրարամերժ պատասխաններ։

Խաչենի իշխանական տան տոհմաբանությունը պարզելու՝ մինչև այսօր հայտնի առաջին փորձը պատկանում է Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսին։ Աղվանից Հայքի կաթողիկոսն առաջին անգամ Խաչենի վանքերի ու խաչքարերի արձանագրությունների բազմաթիվ արձանագրություններ հավաքելով՝ կազմել է նաև Վերին Խաչենի կամ Ծարա տերերի հաջորդական ցանկը՝ սկսած Հասան մեծի և Դոփի ընտանիքից (XII դարի վերջ—XIII դարի սկիզբ)[3]։

XIX դարում Բաղդասար միտրապոլիտ Հասան-Ջալալյանցն էլ կազմել է հիշյալ իշխանության Ներքին Խաչենի ճյուղի տոհմացանկը։ Ուշագրավ է, որ Եսայի կաթողիկոսից հետո միտրապոլիտ Բաղդասարն առաջին անգամ լայնորեն օգտվել է Խաչենի վանքերում պահպանված ժամանակագրական տեղեկություններից՝ ինչպես ձեռագիր, այնպես էլ վիմագիր։ Իր աշխատանքը նա կոչել է «Ազգաբանութիւն և ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց՝ հանեալ և հաւաքեալ ի պատմութեանցն Հայոց և Աղուանից, և ի յարձանագրեաց ի խաչքարաց և ի տապանաքարաց՝ եղելոց ի վանսն Գանձասարայ և ի շրջակայ նորին վանորայս և տեղիս՝ հանդերձ թուաբանութեամբ, զորս համառօտ շարահիւսեցի ես Բաղդասար միտրապոլիտ Աղուանից Հայոց ...Հասան-Ջալալեանց, նախկին տէրանցն երկրին Արցախոյ գաւառին Խաչենոյ...»[4]։

Սույն ցանկի հեղինակ Բաղդասար միտրապոլիտի ինքնագրերը նկարագրելիս Խաչիկ վարդապետը վկայում է, որ հեղինակը կազմած է եղել այս ցանկի երեք տարբերակներ, որոնցից մեկն է հենց Բաֆֆու հրատարակածը։ «Այս 3 ցանկերը,— գրել է Խաչիկ վարդապետը,— ըստ էության նույնն են. միայն մանրամասնություններ մեջ են տարբերվում. մեկը՝ ավելի համառոտ, մյուսը՝ ընդարձակ։ Ցանկերի նպատակն է ցույց տալ, որ միտրապոլիտի՝ Ջալալյանց տոհմը սերվում է հին Աղվանից արքայական տոհմից կամ Խորենացու լեզվով՝ Սիսակից»[5]։

Տոհմաբանական իր ցանկը կազմելիս, ինչպես Բաֆֆին է նկատել, միտրապոլիտ Բաղդասարը՝ հնագույն ժամանակներից մինչև X դարի կեսն ընկած շրջանի համար՝ սամենայն բարեխղճությամբ հետևել է Մովսես Կաղանկատվացուն[6], կրկնելով նաև նրա մի ճակատագրական սխալը. միախառնել է բուն Աղվանքի ու Հայոց Աղվանքի իշխող տոհմերը, որոնք իրականում ոչ մի առնչություն չեն ունեցել միմյանց հետ։ Կարևորը, սակայն, այն

1 Կոստանդին Միրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք Բ, գլ. 48. տե՛ս «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Միրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151։

2 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 71—73։

3 Մատենադարանի ձեռ. № 7821, թ. 2ա—2բ, № 9923, թ. 2ա։

4 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. X, Երևան, 1959, էջ 495։

5 Հ. Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 37։

6 Բաֆֆի, նույն տեղում, էջ 499, ծանոթագրություն։

է, որ Բաղդասար միտրապոլիտն իրավացի կերպով տոհմածառի արմատ էր ճանաչում Առան Սիսակյանին[7]։

Կարելի է հիշատակել նաև Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի կազմած տոհմացանկը, որի համար հետազոտողը քաղվածքներ է կատարել Մովսես Դասխուրանցու Պատմությունից, Եսայի կաթողիկոսի տետրակից և Բաղդասար միտրապոլիտի ցանկից ու իր ձեռքի տակ եղած վիմական արձանագրությունների հարուստ հավաքածուից[8]։ Սակայն ճշմարտությունը պահանջում է նշել, որ նրա ցանկը համարյա ոչինչ չի ավելացնում նախորդներին, եթե չասենք՝ երբեմն աղավաղում է տոհմանունները։ Բավական է ասել, որ Սարգիս Ջալալյանցից է սկսվում Արցախի մեծ իշխան Սահլ Սմբատյանին ու նրա հաջորդների տոհմին թյուրիմացաբար վերագրված «Բագրատունի» անունը, որը հետագայում լայնորեն տարածվեց պատմագիտական գրականության մեջ։

Մակար Բարխուտարյանցը ևս համոզված էր, որ Արցախի իշխանական հարստությունը Առանշահիկ տոհմն է, որ «Բուն Հայկազյան մեծ իշխանական Առանի տոհմից էր այս բնիկ և իշխանազն ցեղը, որ բնակվում էր Վերին Խաչենի Ծար գյուղաքաղաքում»[9]։

Ճիշտ է, Մակար վարդապետն այնքան էլ հստակ չէր պատկերացնում այս տոհմի բնագավառն ու տիրապետության սահմանները պատմական տարբեր դարաշրջաններում։ Ավելին, անվերապահորեն հավատալով Մովսես Դասխուրանցուն, հաճախ առավել

7 Ակադ. Հովսեփ Օրբելին, խոսելով Հասան-Ջալալյան տոհմի ակունքների մասին, գրել է, թե «կան նույնիսկ մանրամասն տոհմացանկեր, որոնք այդ տոհմը հասցնում են՝ մեկ Մհերան Սասանյանին (միտրապոլիտ Բաղդասար), մեկ էլ Գագիկ Սասանյանին (Ս. Ջալալյանց)։ Ի միջի այլոց Ս. Ջալալյանցը, մյուս կողմից էլ, այստեղ է մտցնում Սմբատ Բագրատունուն (իգական գծով), (տե՛ս նրա՝ Հասան-Джалал, князь Хаченский. «Избранные труды», Ереван, 1963, էջ 146)։ Գիտնականը վկայակոչում է նաև միտրապոլիտ Բաղդասարի կազմած տոհմացանկը՝ ըստ Բաֆֆու հրատարակածի (Բաֆֆի, Խամսայի մելիքությունները..., էջ 689) և Ս. Ջալալյանցի «Ճանապարհորդության» Բ հատորը։ Սակայն երկու դեպքում էլ վկայակոչված հեղինակները Արցախի իշխանության տոհմակունքն Առանին են համարում, Մհերանյանների անկումից հետո էլ՝ առաջին օղակը՝ Սահլի հայր Սմբատին։ Եթե նույնիսկ ընդունենք Ս. Ջալալյանցի մոտ առկա Սմբատի «Բագրատունի» տոհմանունը, որը, ինչպես հետո կտեսնենք, ակնհայտ սխալ է, ապա սա կլինի ոչ թե իգական գծով, այլ արական։

8 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ մասն, էջ 352—353։

9 Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Ա հատոր, էջ 135։

խորացնելով նրա թյուրիմացությունները, այս տոհմի մեջ է մտցնում նաև բուն Աղվանքի իշխողներին, խճողում տոհմաշղթան Առան նախահորից մինչև Սահլի հայր Սմբատը։ Սակայն տվյալ պարագային մեզ համար կարևորն այն է, որ Մ. Բարխուտարյանցը ճիշտ պատկերացում ուներ տոհմակունքի մասին և, հակառակ իր ժամանակի ու հետագայի բոլոր ուսումնասիրողների, համոզված էր, որ այս նույն տոհմածառի ճյուղերն են հանդիսանում Խաչենի բոլոր իշխանությունների ներկայացուցիչները[10], ինչպես նաև հետագայի Ղարաբաղյան մելիքական տները[11]։

Ակադեմիկոս Հ. Օրբելուն ևս հետաքրքրել է Խաչենի իշխանության տոհմաբանությունը։ Նրա կարծիքով՝ Խաչենի իշխանությունը բարձրացել է Սյունիքի թագավորության անկումից հետո. «XII դարի վերջում Սյունիքի փոքրիկ թագավորությունը, որ, անկախ իր փոքրությունից, բազմիցս անհամեմատ խոշոր դեր էր խաղացել Հայաստանի և նույնիսկ Վրաստանի ընդհանուր պատմության մեջ, ընկավ։ Տիրապետող դինաստիան 1166 թ. ընդհատվեց Գրիգոր

10 Անդ, էջ 137—138, 141։

11 Անդ, էջ 146—150 և հտգ., նաև՝ Ապրես Բեկնազարյանց, Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պ., 1886, էջ 190—208։ Այստեղ, իհարկե, պատմական իրականության ճշմարիտ պատկերն ու գեղարվեստական խոսքի տեղ ներկայացված հեքիաթաբանություններն այնպես են միախառնված, որ երբեմն խեղդվում է առաջինը։ Եվ, այսուհանդերձ, միանգամայն անտեղի է Բաֆֆու զայրույթը՝ գոնե Ղարաբաղի մելիքների վերոհիշյալ տոհմաբանության առթիվ։ Մեծանուն գրողն ու պատմաբանը զարմանքով հարց է տալիս, թե «Գաղտնիք»-ի հեղինակը որտեղի՞ց և ի՞նչ աղբյուրներից առել է անունների այն երկար շարքը, որոնց սկիզբը կապվում է Աղվանից ամենահին թագավորների հետ, իսկ վերջը հասնում է մինչև մեր ժամանակները»։

«Գաղտնիք»-ին նայելով, Ղարաբաղի բոլոր մելիքական տները թագավորական ծագումից են և բոլորն էլ միևնույն տոհմից» (Բաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Երկերի ժողովածու, հատ. X, էջ 492)։

Այո՛, բարեբախտաբար, այս հարցում իրավացի էր Մակար վարդապետը, որը հետագայում էլ «Պատմություն Աղվանից» երկհատոր գրքում իր ուժերի չափով աշխատեց առավել հիմնավոր ու փաստարկված ցույց տալ Խաչենի իշխանության, հետագայում էլ՝ Ղարաբաղի մելիքական տների տեղաբնիկ լինելը։ Եվ, որքան էլ ցավալի, Բաֆֆին, որ իրավացի անհանդուրժողականությամբ քննադատում էր «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի անհիմն հայտարարությունները ու հեքիաթաբանությունները, Ղարաբաղի մելիքական տների ծագումնաբանությունը ցույց տալիս ինքն էր՝ պատմական աղբյուրներով հիմնավորվող իրողությունները թողած՝ տուրք տալիս անաղբյուր պատմություններին, ամեն անգամ պնդելով, թե հիշյալ մելիքական տների առաջին ներկայացուցիչները, իբր, եկվորներ են եղել (Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. X, էջ 169, 175 և այլն)։

ու Սմբատ իշխանների մահով։ Հենց այս ժամանակ էլ սկսվում է բարձրանալ Արցախի կամ Խաչենի փոքրիկ իշխանությունը»[12]։

Մի կողմ թողնենք Վրաստանի պատմության մեջ Սյունիքի թագավորության խաղացած խոշոր դերի կասկածելիությունը և այն իրողությունը, որ Սյունիքի թագավորությունը դինաստիական չի եղել (այնտեղ իշխել են ինչպես տեղացիները՝ տոհմական տարբեր պատկանելություններով, այնպես էլ խաչենցիները, որոնք հրավիրվում էին տեղացիների կողմից, հենց որ սրանք կարիք էին ունենում մի ուժեղ ձեռքի)։ Խաչենի (նախկին Արցախի) իշխանությունն իր բազմադարյան պատմության մեջ երբեք չէր ընկել կամ դադարել, որպեսզի Սյունյաց թագավորության անկումից հետո սկսեր բարձրանալ։ Այն չէր ընկել հատկապես Սյունյաց կամ Բաղաց-Կապանի թագավորության գոյության ժամանակներում, որովհետև, եթե այս թագավորությունն ամեն անգամ Խաչենի իշխանական տոհմից էր արժանավոր իշխանազուն տանում թափուր մնացած գահի համար, ապա ավելորդ է մտածել, թե այդ իշխանական տունն ընկած կամ դադարած է եղել։ Մանավանդ, երբ նման տեղաշարժերի մասին տեղեկություն հաղորդող պատմիչն անպայման նշում է Բաղաց-Կապան գահակալ գնացողի հարազատներին, որոնք Արցախ-Խաչենում (կամ Հայոց Աղվանքում) ոչ թե հասարակ իշխաններ էին, այլ «ինքնակալ», «թագավոր», «թագաւորազն»[13]։

Սակայն անկախ այս բոլորից, եղել է իրական պատմություն։ Այն հաստատում է, որ հին Արցախի, ապա փաստորեն նրան միայն անվամբ փոխարինած Խաչենի իշխանությունը դարեր շարունակ, առանց ընդմիջման, եղել է իր երկրի տերը և խոշոր դեր է կատարել նաև հարևան հայկական նահանգների ու գավառների պատմության մեջ։

Եղել են Խաչենի իշխանության տոհմակունքի, էթնիկական պատկանելության և սրանց հետ առնչվող այլևայլ հարցեր «որոշելու» ուրիշ փորձեր ևս։ Դրանք պատկանում են հայտնի ասյնպիսի անունների, ինչպես Ա. Ե. Կրիմսկին, Վ. Ֆ. Մինորսկին, Ի. Պ. Պետրուշևսկին, Կ. Վ. Տրևերը և ուրիշներ։ Դժբախտաբար, այդ գիտնականները ճիշտ պատկերացում չունեն արևելյան Անդրկովկասի վրա տարբեր ժամանակներում տիրապետած թագավորական ու իշխանական տների մասին։ Երբեմն իրար հետ շփոթում են բուն Աղվանքի մազքուտ Արշակունյաց թագավորական տան և Հայոց Աղվանքի տեր Առանշահիկ տոհմի գործունեության ոլորտները, հաճախ էլ իրարով փոխարինում Առանշահիկներին ու VII դարի սկզբին Ուտիքի Գարդման գավառը թափանցած, պարսկական ծագում ունեցող Միհրանյաններին... Իսկ որ բոլոր դեպքերում նրանք սխալ են ներկայացնում հիշյալ տոհմերի էթնիկական պատկանելությունը, դա արդեն հիմնավոր կերպով ցույց է տրվել Ա. Մնացականյանն իր գրքում[14]։

* * *

Բաղդասար միտրապոլիտն ու նրան հետևողները չէին սխալվում, երբ կարծում էին, որ Խաչենի իշխանական տունն իր ակունքն առել է հայ ժողովրդի պատմության վաղնջական ժամանակներից։ Նրանց սխալը կայանում էր այդ ակունքին տված գնահատականի և տոհմի հետագա ծեգծեգումները պարզ չպատկերացնելու մեջ։ Բնականաբար այդ հեռավոր տոհմակունքն ու բազմադարյան տոհմընթացքը իրենց իրական-պատմական նկարագրի մեջ ցույց տալու համար մենք պետք է դիմենք այն աղբյուրներին, որոնք վկայակոչվում էին ինչպես Բաղդասար միտրապոլիտի, այնպես էլ նրան հետևողների ու չհետևողների կողմից։

Ինչպես ասվեց, Բաղդասար միտրապոլիտի կազմած տոհմացանկի առաջին մասի (հնագույն ժամանակներից մինչև X դ.) համար աղբյուր է ծառայել Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Աղվանից աշխարհի պատմությունը»։ Սակայն տրամաբանությունը պահանջում է առավել վաղ ժամանակների վերաբերյալ այս երկի տվյալներին մոտենալ քննադատաբար, այսինքն՝ այդ ասածները քննել-ստուգել այն աղբյուրների համաձայն, որոնց վրա հենվելով՝ Պատմության հեղինակը հյուսել է իր երկի առաջին մասը։ Մենք այդ քննությունը կատարել ենք և աղբյուրների արժանահավատ վկայություններով պարզել Մեծ Հայքի Ուտիք ու Արցախ նահանգների նախարարական տների ակունքն ու հոլովույթը[15]։

---

12 *И. А. Орбели*, Хасан-Джалал, князь Хаченский, стр. 146.

13 Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 318, 319, 338 և այլն։*

14 Ա. Ն. Մնացականյան, *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 77—78 և հտգ.։*

15 *Տե՛ս* Բ. Ուլուբաբյան, *Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, «Հրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 7, էջ 53—66։*

Հիշյալ քննությանը մեզ համար առաջին ու կարևոր աղբյուր է ծառայում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»։ Այստեղ Խորենացին բազմիցս անդրադառնում է Արևելյան Անդրկովկասի էթնիկական ու վարչա-քաղաքական նկարագրին։ Նա վկայում է, որ, ինչպես իր օրերում, այնպես էլ հին ժամանակներում Կուրից հյուսիս ապրում էին տարալեզու բազմաթիվ ցեղային միավորումներ[16]։ Իսկ Կուրից հարավ ընկած մարզերը դեռևս Մեծ Հայքի միասնական թագավորության ստեղծման ժամանակից սկսած՝ զբաղեցնում էր հայ բնակչություն[17]։ Մեծ Հայքի թագավորության հիմնադիր Վաղարշակը Կուրի աջափնյակի հայ բնակչության վրա կուսակալ-նախարար է կարգել Առանին, որը Հայկի ժառանգներից սերված Սիսակի զավակն էր։ Ապա պատմիչը տեղեկացնում է, թե «Ի սորա (Առանի) զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտեացւոց և Գարդմանացւոց, և Ծաւդէացւոց և Գուգարացւոց իշխանութիւնն»[18]։ Խորենացին ծագումնաբանական այս ճյուղագրությունը տալիս է՝ հաստատելու համար, որ Արցախի և Ուտիքի կամ ետնագույն Աղվանքի նախարարական տների ներկայացուցիչները ո՛չ թե եկամուտ են կամ հայ ժողովրդին հետագայում ձուլված ոչ հայկական ցեղի կառավարիչների ժառանգներ, այլ բուն հայկական են, հենց Հայկ նահապետի ժառանգներից սերված պայազատներ։ Խորենացին Առանի անունից է բխեցնում նրան ենթակա երկրամասի անունը («Աղվանք» և «Առան»)։ Եվ նրանից սկիզբ առած նախարարական տներն էլ պարսկական տիրապետության օրերում, պարսկերենի ազդեցությամբ, կոչվեցին Առանշահիկ, որ նշանակում է «Առանի շահիկ-տիրակալ»։

16 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 113, 230, 259—260, 329, իսկ ավելի կոնկրետ՝ տե՛ս Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 14 և հտգ.։

17 Վաղարշակն իր թագավորության համար արտաքին սահմաններ էր հաստատել «զեզերք հայկական խօսիցս», իսկ հյուսիս-արևելքում այդ սահմանն անցնում էր այն գետով «որ անուանի Կուր» (Մովսէս Խորենացի, էջ 112—113)։ Այսինքն՝ Կուրից հարավ ընակվող ժողովուրդը, այդ թվում՝ նաև Արցախի բնակչությունը, հայախոս էր։

18 Մովսէս Խորենացի, էջ 112—113։

«Գուգարացւոց»-ի տեղ տպագրված է «Գարգարացւոց», որը գրչագրերից եկող թյուրիմացություն է։ Այս առթիվ տե՛ս Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 193, 258, 622։ Հ. Համբարյան, Գարգարացի՞ք թե՞ Գուգարացիք. «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 241—242։ Բ. Ուլուբաբյան, Հայոց լեզվի հյուսիս-արևելյան եզրի և հարակից հարցերի մասին. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 1, էջ 55—60։

Մենք ընդունում ենք, որ Խորենացու ներկայացրած այս ծագումնաբանության հիմքում ընկած է ավանդությունը։ Դեռ ավելին. Պատմահայրը իր ժամանակի առումով համեմատաբար մոտիկ անցյալի իրողությունը ևս փորձում է բացատրել կամ հարմարեցնել նույն ավանդության տվյալներին։ Օրինակ, հայտնի է, որ մինչև V դարի սկիզբը «Առան», «Աղվանք», ինչպես նաև հունահռոմեական աղբյուրների «Ալբանիա» անունները վերաբերել են բացառապես Կուրի ձախափնյակին[19], և միայն 428 թ. Արևելյան Հայաստանում ու Աղվանքում թագավորական տների վերացումից հետո էր, որ Աղվանքից և հայկական Ուտիք, Արցախ մարզերից կազմված պարսկահպատակ մարզը պետք է կոչվեր «Աղվանք» (հայերեն) կամ «Առան» (պարսկերեն)։ Ընդամենը կես դար էր անցել այս իրողությունից։ Այդ ընթացքում տեղի էր ունեցել 451-ի հակապարսկական ապստամբությունը, և հետագայում էլ՝ Պարսից արքունիքի հիմքերը ցնցող մի շարք դեպքեր, որոնց շնորհիվ Աղվանք մարզպանության բաղկացուցիչները ձեռք էին բերել որոշակի ինքնուրույնություն. բուն Աղվանքում գլուխ էին բարձրացրել ցեղային միավորումները, որոնց անուններով էլ արդեն կոչվում էր երկիրը (Լփինք, Բաղասական, Մազքթաց աշխարհ և այլն), իսկ հայկական Ուտիքն ու Արցախն ավելի էին համախմբվել։ Նրանք դարի 80-ական թվականներին ստեղծեցին իրենց փոքրիկ թագավորությունը։ Ճիշտ է, 60-ական թվականներին Զողից (հետագայի Դերբենդ) այստեղ՝ նորակառույց Պարտավ քաղաքն էր փոխադրվել նաև մարզպանի նստոցը։ Սակայն մարզպանը միայն Պարսից արքունիքին հասնող հարկն էր հավաքում և այլևս չէր խառնվում երկրի ներքին կյանքին։ Այս բոլորի արդյունքը նաև այն էր եղել, որ Աղվանք-Առան էր կոչվում հիմնականում Կուրի ու Երասխի միջագետքը՝ Արցախի և Ուտիքի բռնած տարածքը[20]։ Երկրամասի բնակչությունն ու իշխող նախարարական տները հայկական էին, սակայն երկրամասը կոչվում էր Աղվանք-Առան։ Պատմիչը փորձում է բացատրել այս հանգամանքը և դիմում է ավանդությանը։ Եվ մեր օրերի հետազոտողը չի կարող չտեսնել Խորենացու պատմության այս հատվածի ավանդական հիմքն ու առանցքը։ Սակայն չի կարելի մոռանալ նաև անառարկելիին. Խորենացու ժամա-

19 Փաւստոս Բիւզանդ, էջ 314։ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 105։

20 Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, «Ալբանիա», «Աղվանք», «Առան» տեղանունները։

նակ ընդունված իրողություն է եղել երկրամասի նախարարական-իշխանական տների ոչ միայն բուն հայկական ծագումը, այլև նրանց տոհմակցությունը, նույն տոհմակունքից սերված լինելը։

Առանշահիկների ծագման խորենացիական մեկնաբանությունը հետագա մեր մատենագրության մեջ ընդունվում էր անվերապահորեն։ Օրինակ, Մովսես Դասխուրանցին («Աղվանից աշխարհի պատմության» վերջնական շարահարողը) Արցախի և Ուտիքի իշխանական տների նախնիներ է համարում Հայկի ժառանգից սերված Առանշահիկներին[21], իսկ Կիրակոս Գանձակեցին նրանց ճանաչում է որպես «ի զարմից Հայկայ՝ յազգականութենէն Առանայ»[22]։

Դասխուրանցու, ինչպես նաև նրա օգտագործած աղբյուրների համար հնուց ի վեր Ուտիքի ու Արցախի տեր են եղել բացառապես Առանշահիկները, և միայն հետագայում (VII դարի ընկզբին) է, որ Միհրանյանները եկել ու տիրացել են Ուտիքի Գարդման գավառին, ապա և խնամիությամբ խառնվել Հայաղվանքի բնիկ Առանշահիկ տոհմին։ Այդ հանգամանքն այսպես է ներկայացվում Աղվանքի պատմության մեջ. «Ստուգաբանութեամբ այսպէս ծանեաք.— ընդ Հայկազնեայց արանց խնամաւորիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբս այսուիկ զոյգ ունել զպետութիւն Արևելից կողմանցն Աղուանից»[23]։

Ուրեմն, հայկազուններն էին Աղվանից կողմանց (Արցախ-Ուտիք) բնիկ տերերը։ Եկան Միհրանյանները Որմիզդի որդի Խոսրովի օրոք (VI դ. վերջ—VII դ. սկիզբ) և դարձան հայկազուններ մրցակիցները նրանց ավանդական հողի վրա։ Այս դեպքը պատմող հատվածի սկզբում ևս շարահարողն զգուշացնում է, թե «ի ստոյգ և ի բուն պատմագրաց այսպէս ծանեաք»[24]։

Նույն Պատմության մյուս հավաստի և ստույգ տեղեկությունն էլ հիշյալ հայկազունների տոհմական պատկանելությանը տալիս է այսպիսի բնութագրություն՝ «զնախնական աղգս հայկազնեայց զԱռանշահիկս»[25]։

Պարզ է, ուրեմն, որ Միհրանյանների գալուց առաջ Աղվանից կողմանց հայկազուն նախարարական տոհմն է կոչվել Առանշահիկ, և մենք չենք սխալվի, եթե այդ տոհմի բոլոր ներկայացուցիչներին ևս կոչենք Առանշահիկներ։

Առանի զավակներից սերված կուսակալական-իշխանական տները միշտ իրենց ձեռքում էին պահում Ուտիքի և Արցախի ժառանգական իշխանության իրավունքները։

Դժբախտաբար պատմական աղբյուրները հականե-հանվանե քիչ Առանշահիկների են հիշում նախամարզպանական շրջանից։ Այս շրջանին վերաբերող տեղեկություններում նրանք ներկայացված են որպես Ուտիքի կամ Գարդմանի իշխան, Արցախի կամ Ծավդեից իշխան։ Եվ միայն երեք անգամ նրանք կոնկրետ անուն ունեն. մեկ՝ «իշխան Գարդմանից, որում Խուրս կոչէին», նա, որ իր նահանգում դիմավորեց Մեսրոպ Մաշտոցին «և սոպնջական եղեալ նմա աստուածասէր երկիւղածութեամբ, առաջի դնէր զանձն վարդապետին հանդերձ իշխանութեամբքն իւրով»[26]։

Երկրորդ. Գարդմանցի Խոսրով նախարարը, որն Արևելյան Հայաստանի վրա թագավոր կարգված Շապուհի (415—419) արքունիքում, կերուխումին, հենց Շապուհի աչքի առաջ, տրփածեց պալատական ջնարահարուհուն, ապա արհամարհեց թագավորին ու նրա սպասավորներին և խրոխտորեն ելավ, գնաց իր նահանգը[27]։

Եվ մեկ էլ՝ այն Բակ իշխանը, որ մասնակիցն էր Ավարայրի ճակատամարտի, ճակատամարտից հետո էլ թշնամիներից պաշարված մի բերդի մեջ ամբաստանություն կարդաց Պարսից զորագլխի դեմ, ապա իր յոթ հարյուր քաջ հեծյալների գլուխն անցած՝ հեռացավ բերդից[28], «գնաց փախստեայ... յամուրն Արցախայ... կեցեալ բարեպաշտութեամբ ու քրիստոսասէր հաւատով»[29]։

Գրավոր պատմությանը հայտնի է նաև «վեհազգի ոմն իշխան Վարազպերոժ անուն յԱռանշահիկ տոհմէ», որ նորոգեց Մեսրոպ Մաշտոցի անվան հետ կապվող հիշատակների վայրում կառուցված գմբեթավոր եկեղեցին[30]։

---

21 Կաղանկատուացի, էջ 196։

22 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 193։

23 Կաղանկատուացի, էջ 386։

24 Անդ, էջ 195։

25 Անդ, էջ 196։ Տպագրված է «զԵռանշահիկս», որ նույնն է, ինչ «զԱռանշահիկս»։

26 Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 72։

27 Խորենացի, էջ 331—332։

28 Եղիշէ, էջ 122—123։

29 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, էջ 216։ Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատարակաց ձեռագրաց, հ. Ա, էջ 881—882։ Նույնի՝ Խաղբակյանք կամ Գրոտոշյանք հայոց պատմության մեջ, էջ 343։

30 Կաղանկատուացի, էջ 106։

Քանի որ նախամարզպանական ժամանակներում Ուտիքն ու Արցախն իրենց հայ բնակչությամբ մտնում էին Մեծ Հայքի պետության մեջ՝ որպես նրա տասնհինգ նախարարություններից երկուսը, ապա նրանց տերերը կարող էին կոչվել միայն իշխաններ կամ նախարարներ, բայց ո՛չ թագավորներ, ինչպես պնդում էր Մովսես Դասխուրանցին (կամ նրա նախորդ Կաղանկատվացին), և նրան անվերապահորեն ընդունելով էլ՝ կրկնում էին Բաղդասար միտրապոլիտը, Ս. Ջալալյանցն ու նոր ժամանակների հետազոտողները։ Մինչև V դարը եղած ժամանակաշրջանի իրողությունների մասին Աղվանքի պատմության մեջ հաղորդված տեղեկություններն ստուգելով նախորդ դարերի առավել հավաստի աղբյուրներով (Փավստոս, Կորյուն, Խորենացի, Եղիշե), տեսնում ենք, որ Դասխուրանցին, պարզ պատկերացում չունենալով «Աղվանք» տեղանվան իմաստային փոփոխություններից պատմական տարբեր ժամանակաշրջաններում, բուն կամ անդրկուրյան Աղվանքի Արշակունի թագավորներին (Վաչագան Քաջ, Ուռնայր, Եսվաղեն և ուրիշներ), առանց որևէ հիմքի կամ պատճառաբանության, դրել է Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգների Առանշահիկ տոհմի իշխանների ցանկում[31]։ Մինչդեռ վերը հիշված առավել հին ու հավաստի աղբյուրներից մենք գիտենք, որ նրանք անդրկուրյան Աղվանքի կամ հունա-հռոմեական հեղինակների կողմից Ալբանիա կոչված երկրի թագավորներն են եղել, տոհմով Արշակունի (պարթև) և էթնիկական կամ վարչական ոչ մի աղերս չեն ունեցել հայ Առանշահիկների ու նրանց երկրամասի հետ[32]։

Մարզպանության շրջանի Արցախ-Ուտիքյան երկրամասում ստեղծված Առանշահիկ թագավորության՝ պատմությանը հայտնի առաջին ներկայացուցիչը Վաչագան Բարեպաշտն է։ Նրա մասին Աղվանից աշխարհի պատմության մեջ եղած ամբողջ պատումն արժանահավատ խոսք է, քանի որ գրված է եղել ժամանակակից հեղինակի ձեռքով, և Աղվանքի պատմության շարահարողն այն համարյա անփոփոխ մուծել է իր պատմության մեջ[33]։

Վաչագանի թագավորությունը հայ Արշակունյաց հարստության վերացումից հետո հայկական բնաշխարհում ստեղծված

31 Այս թյուրիմացության հանգամանքների մասին՝ տե՛ս Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը։

32 Անդ, էջ 62—64։

33 Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Հազարամյա գիրք, որ նաև 1500 տարեկան է, էջ 85—86։

առաջին լուրջ պետական միավորումն էր, «Կովկասի երբեմնի խոշոր պետության մի բեկորը»[34], որ ցայսօր, դժբախտաբար, ըստ արժանվույն չի գնահատվել հետազոտողների կողմից։ Բավական է հիշել, որ այս թագավորությունն ստեղծել էր իր ինքնահատուկ պետական կարգ ու կանոնը՝ փայլուն կերպով արտացոլված «Վաչագան Բարեպաշտի կանոններ» անունով հայտնի «Կանոնական սահմանադրության» մեջ[35]։

Վաչագանի օրոք Առանշահիկ տոհմն այնքան ազդեցիկ դիրք ուներ, որ Պարսից արքունիքը նրան էր հանձնարարել նաև Կուրի ձախափնյակի վերահսկողությունը։ Աղբյուրների կոնկրետ վկայություններով հաստատվում է, որ Վաչագան Բարեպաշտն իր վերակացուներն ուներ ձախափնյակի գավառներում։

V դարի վերջից սկսած Առանշահիկները կոչվում էին նաև թագավորական տոհմ։ Նույնիսկ նրանց երկրորդական ճյուղերի ներկայացուցիչներն Աղվանքի, ինչպես նաև համահայկական եկեղեցական ու աշխարհիկ ժողովներում հանդես են գալիս իբրև «յազգէ թագաւորաց» («Պատրիկ ի Քարոյեան ազգէ թագաւորաց», «Զարմիհր ի Վարազ-Քուրդաքեան ազգէ թագաւորաց») կամ «յարքայից զարմից» («Պատրիկ ի Քարոյեան՝ յարքայից զարմից»)[36]։

VII դարի սկզբին Պարսկաստանից գալիս է Միհրանյան տոհմի մի շառավիղը, դավով ու նենգությամբ կոտորում Ուտիքի Գարդմանք գավառի տեր Առանշահիկների տասնյակ տղամարդկանց և գրավում նրանց տիրույթները։ Շուտով Միհրանյաններն ընդունում են Հայոց կրոնը, ձուլվում տեղի հայկական միջավայրին։ Նրանց ամենաականավոր ներկայացուցիչ Ջիվանշիրը, որ տերն էր Գարդմանքի և միաժամանակ համարվում էր հայոց Աղվանքի իշխանաց-իշխանն ու սպարապետը, հովանավորում է երկրամասի հայկական դպրությունն ու մշակույթը, իր եկեղեցանպաստ գործունեությամբ դառնում Ուտիքի հայության սիրելին։

34 *С. В. Юшков*, К вопросу о границах древней Кавказской Албании. «Исторические записки Института истории АН СССР», т. I, М., 1937, стр. 137.

35 Վաչագան Բարեպաշտի թագավորության ներքին կյանքի, մշակութային գործի, նրա ընդունած «Կանոնական սահմանադրության» հանգամանալից քննությունը տե՛ս Բ. Ուլուբաբյան, Վաչագան Բարեպաշտը և Հայոց արևելից կողմանց մշակութային-լուսավորական կյանքի վերելքը. «Սովետական մանկավարժ», 1969, № 4, նույնի՝ Դարձյալ Աղվենի ժողովի գումարման տարեթվի մասին, «Լրաբեր», 1969, № 6։

36 Կաղանկատուացի, էջ 66, 67, 85։

Որ Միհրանյանների գալով և Գարդմանի տեր դառնալով՝ Առանշահիկ տոհմը չի սպառվել, այլ ապավինել է Արցախի անառիկ բերդ-ամրոցներին և ետ մղել ճակատագրի ամենաանողոք հարվածները, դա արձանագրված է գրավոր պատմության մեջ և ընդունված պատմաբանների կողմից. իրավացի էր Լեոն, երբ գրում էր, թե. «...Առանշահիկ տոհմն անհետ չկորավ, ոչ էլ մոռացավ իր պայքարն այդ եկվորների (Միհրանյանների—Բ. Ու.) դեմ, որոնք հափշտակել էին իր սեփականությունը։ Առանշահիկները Գարդմանից դուրս են մղվում հարևան լեռնային գավառները։ Երկու տոհմերի միջև հաստատվեց հին աշխարհի նվիրագործած արյան վրիժառությունը»[37]։ Այս վրիժառությունից չփրկվեց նույնիսկ Ջիվանշիր մեծ իշխանը։ Նրան սպանել էր Արցախի իշխանազուններից մեկը (անշուշտ Առանշահիկ տոհմից), որը դրանից առաջ ծառայում էր Գարդմանի նոր տիրոջը։

VIII դարի արշալույսին, երբ արդեն մարում էր Միհրանյանների՝ ընդամենը մեկ դար տևած ազդեցությունը Գարդմանքի և հարակից հայկական գավառների վրա, Արցախի Առանշահիկների մի փառավոր ներկայացուցիչ տերն էր իր ավանդական երկրամասի և քաջ պատերազմ էր մղում հյուսիսական վայրենաբարո ցեղերի դեմ։ Դա Առանշահիկ Վաչագանն էր Պատրիկյան՝ «քաջ կորովի և աջողակ աղեղնաւոր՝ հանդերձ զօրօք», որից «խազիրքն պարտեցան ի փախուստ դարձեալք»[38]։

Ջիվանշիրից հետո աստիճանաբար սպառվում է հայացած Միհրանյան տոհմը։ IX դարի սկզբին նրանց վերջին շառավիղը՝ Սպրամ անունով մի աղջիկ, իբր թե, իր տոհմի գոյությունը շարունակելու նպատակով, ամուսնանում է Հայոց Աղվանքի տեր Առանշահիկ Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհի հետ, որն իշխում էր Վերին Խաչենում։

IX դարում արաբական բռնակալության դեմ պայքարի են ելնում Արցախի Առանշահիկների երկու հզոր ճյուղերը, մեկը՝ Դիզակ գավառում, որի իշխանանիստն էր Գորոզ ամրոցը (այժմյան Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Դող և Տումի գյուղերի արանքում), մյուսը՝ Վերին Խաչեն կամ Ծար գավառում։

Առանշահիկ տոհմի Դիզակի ճյուղից պատմությանը հայտնի է արաբական բռնակալության դեմ մղված պայքարի խիզախ հերոս Եսայի Աբու-Մուսեն (Եսայի՝ հայր Մովսեսի), արաբական

37 Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1967, էջ 327։

38 Կաղանկատուացի, էջ 368։

աղբյուրներից հայտնի նաև որպես Իսա-իբն-Յուսուֆ (Եսայի՝ որդի Հովսեփի)։ Եսայու իշխանապետական բեմելը նշվում է IX դարի երկրորդ տասնամյակով։ Արաբների հետ նրա առաջին բախումը տեղի ունեցավ 831/32 թվականին[39]։ Պարզ է, որ Եսայու հայր Հովսեփն ապրած պետք է լիներ VIII դարի վերջին և IX դարի ընկզբին։ Եսային գործել է մինչև IX դ. կեսերը։ 853 թ. ամռանից մինչև հաջորդ տարվա ամառը նա՝ Գտիչ բերդում ամրացած, 28 ճակատամարտ է տվել Բուղա զորապետի 200-հազարանոց բանակի դեմ և մնացել անպարտելի։ Միայն խարդավանքով Բուղային հաջողվեց ընկճել Գտիչի հերոսին։ Հայ մյուս իշխանների հետ Եսային արաբական տաժանակրության քշվեց 855 թվականին[40]։

Եսայի իշխանի հետագաներից հայտնի են. Մովսես որդին, որը հոր աքսորվելուց հետո մնաց ու տիրություն արեց Դիզակին և շրջականերին, Մովսեսի որդիներից՝ Դիզակի Գագիկ թագավորը, իշխանադուստր Սոփին[41] և Գորոզ բերդի տեր Վաչագան իշխանը[42]։ Այս Վաչագանին ճանաչում էր նաև արաբ հեղինակը, որը նրան կոչում էր «Վաշաղիան իբն Մուսե»[43], այսինքն՝ Մովսեսի որ-

39 Կաղանկատուացի, էջ 376։

40 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 301։ Հայտնի է, որ 200 հազար զորքով Բուղան Հայաստան է եկել 852 թ.։ Այդ գիտե նաև Մ. Դասխուրանցին (էջ 380), որն այսքանին ավելացնում է «և զամս երեք կալաւ զՀայս՝ մինչև զիշխանս զոր կանամբի խաղացուցանէր ի Բաղդատ» (անդ)։ Ուրեմն, Հայոց իշխաններին, ինչպես նաև Հայոց արևելից կողմանց տերերին (որոնց հետ էր Աբու-Մուսեն) Բուղան աքսորի տարավ 855-ին։ Առհասարակ մեր բոլոր աղբյուրներն էլ հայ իշխաններին տաժանակրության քշելու տարի են համարում 855/856-ը։ Սակայն Դասխուրանցու պատմության մեջ, այս տեղեկություններից առաջ, կա մի թյուրիմացություն, որի համաձայն՝ իբր թե «Ի լնուլ երրորդ հարիւր թուոյն Հայոց (852) լցան սահմանեալ մեղացն տուգանք հաւատացեալ իշխանացն Հայոց և Աղուանից, որք յայսմ ամի կապեալ պարաւանդեալ ըմբռնեցան ի ձեռս Տաճկաց և տարագրեալք ի տանց իւրեանց՝ յոչ կամաց գնային ի Բաղդատ» (Կաղանկատուացի, էջ 379)։ Այս թյուրիմացության հիմքի վրա էլ Ս. Գ. Բարխուդարյանը Եսայի իշխանի վախճանի տարի է համարում («Եսայու անկման թիվն...»)852 թվականը (տե՛ս նրա՝ Արցախի, Շաքիի և Փառիսոսի թագավորությունները 9—10-րդ դարերում, ՊԲՀ, 1971, № 1, էջ 56), որ սխալ է։

41 Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 79։ Մակար եպիսկոպոսն իշխանադստեր արձանագրության մեջ «Սոփի» անվան փոխարեն սխալմամբ կարդացել է «Ոսկի» (այս արձանագրությունը՝ դռան ճակատակալ քարի վրա, այժմ պահվում է Լեռնային Ղարաբաղի մարզային թանգարանում)։

42 «Արարատ», 1887, էջ 144։

43 Հմմտ. Նիկ. Ադոնց, Բագրատունյաց փառքը («Պատմական ուսումնասիրություններ». Պարիս, 1948), էջ 143։ Գիտնականն այստեղ սխալվում է՝ Վաչա-

դի Վաշաղիան։ Այսպիսով, Եսայի Աբու-Մուսեի ժառանգներից գիտենք նրա որդի Մովսեսին և երեք թոռներին՝ Գագիկին, Վաչագանին ու Սոփիին»[44]։

Մեր խնդրից դուրս է Դիզակի ճյուղի հետագա ընթացքի քննությունը։ Պարզապես ուզում ենք ցույց տալ, որ այստեղ ևս տիրություն էին անում Առանշահիկ տոհմից սերված մի ճյուղի ներկայացուցիչները, և դարեր հետո Դիզակում ստեղծված մելիքության մեջ էլ պետք է անպայման տեսնել Առանշահիկ տոհմի չընդմիջված շարունակությունը։

855-ին Արաբիա քշվածների մեջ էր նաև Ուտիքի Ստեփանոս Կոնը, ինչպես նաև Գարդմանից Ներսեհ իշխանը, որ կոչվում էր նաև Կորիճ[45]։ Սրանք ևս պետք է, որ լինեին հինավուրց Առանշահիկ տոհմից։ Սակայն քանի որ Ուտիքի մի շարք գավառներ IX դարի վերջից սկսած՝ մի կողմից բաժին են դառնում Տաշիր-Զորագետում ու Հարևան շրջաններում նստած Բագրատունյաց զարմիկներին, մյուս կողմից էլ՝ Գանձակում օրըստօրե հզորացող Փադլունյաններին, ապա դժվար է վճռաբար ասել, թե Առանշահիկներից ո՞վ մնաց այստեղ, մինչև որ Զաքարյանների օրոք նահանգի տերը դարձան վերջիններիս մղած հաղթական ճակատամարտերում աչքի ընկած զորապետները։

Վերստին դառնանք Փոքր Սյունիք-Խաչենին, որի տերն էր Սահլ Սմբատյանը IX դ. առաջին կեսում, այնքան հզորացած մի իշխան, որն ըստ ժամանակագրի վկայության՝ արաբներից ստացել էր «իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից, տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»[46]։

Այսպիսով, պարզվում է, որ Առանշահիկ տոհմը դիմացել է ճակատագրի բոլոր փորձություններին, նաև հաղթել է, իր բնաշխարհը թափանցած պարսիկ Միհրանյաններին՝ կենաց ու մահու այն գոյամարտում, որ Միհրանյաններն սկսել էին դավով ու կոտորածով, և հետագայում հենց այդպիսի միջոցներով էլ տոհմովին ոչնչացան։ Միհրանյան տոհմի վերջին պայազատ Վարազ-Տրդատին ու նրա միակ արու զավակ Ստեփանոսին սպանել էր «Ներսեհ ի Փիլիպեան՝ ազգակից նորա»[47]։

Ասացինք, որ Վարազ-Տրդատի կենդանի մնացած միակ ժառանգն աղջնակ Սպրամն էր, որն ամուսնացավ Առանշահիկ Սահլի որդի Ատրներսեհի հետ։

Ուրիշ պարագայում այսպիսի ամուսնությունը ազգակցական տեսակետից ոչ մի գույն չէր կարող ավելացնել արական ներկայացուցչի տոհմին։ Սակայն Դասխուրանցին շատ է ուզում իր երկրի իշխանական տոհմին խառնած տեսնել Սասանյան հարստության համբավավոր անունը։ Այդ պատճառով էլ գրում է. «Ընդ Հայկազնեայց արանց խնամավորիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբս այսուիկ զոյգ ունել զպետութիւն Արևելից կողմանցս Աղուանից»[48]։

Եվ, այսուհանդերձ, մենք գիտենք, որ նման դեպքերում տոհմածառը գծելիս նկատի են առնում արական կողմը, իսկ իգական կողմը նշում են միայն խնամիությամբ։

Հիշենք, որ արական կողմի՝ Ատրներսեհի, հայրը Սահլ Սմբատյանն է եղել։ Չմոռանանք նաև, որ Սահլի Առանշահիկ տոհմին պատկանելը վաղուց կասկածի տակ է առնվել, եթե չասենք՝ մերժվել է։

Պատմաբաններից ու բանասերներից ոմանք Սահլին համարում են Բագրատունի[49]։ Վ. Ֆ. Մինորսկին, օրինակ, մերժում է

գանին համարելով Ուտիքի Մովսես իշխանի որդի։ Վաչագանը Գորոզ բերդի տերն էր, իսկ Գորոզը գտնվում էր Դիզակ գավառում։

44 Ս. Գ. Բարխուդարյանը վերոհիշյալ հոդվածում գծել է մի տոհմացանկ, որի մեջ Գագիկն ու Սոփին համարվում են Եսայու թոռորդիներ և Մովսեսի (Մուսե) թոռներ (անդ, էջ 57)։ Մինչդեռ արձանագրության մեջ հենց ինքն է կարդացել, թե՝ «Ի ՆԹ (1000) թվ. Հայոց և ի թագաւորութեանս տեառն Գագիկա որդոյ Մուսէի, ես Սոփի դուստր Մուսէի...» (անդ)։

Հանգուցյալ վիմագրագետի սխալը նրանից է, որ Ստ. Օրբելյանի պատմության մեջ միայն մեկ անգամ մի թղթի տակ որպես վկա հիշատակված (Օրբէլեան, էջ 234) «Եսայի Աղուանից իշխան»-ին մտցրել է իր կազմած տոհմացանկի մեջ՝ նրան համարելով Գոտիշի հերոս Եսայու թոռը՝ որպես նրա տոհմաճյուղի մի առանձին սերունդ։

Նիկ. Ադոնցն էլ կարծում էր, թե այս «Եսային՝ նշանավոր Աբու-Մուսան է» (տե՛ս «Բագրատունյաց փառքը», էջ 187, ծան. 1)։ Սակայն Օրբելյանը Եսայիի մասին խոսում է 906 թվականի առումով, իսկ մենք գիտենք, որ Եսայի Աբու-Մուսան 855-ին տաժանակրության է քշվել և այլևս չի վերադարձել։

45 Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, յԵրուսաղէմ, 1867 (այսուհետև՝ «Յովհաննէս կաթողիկոս»), էջ 162, Վարդան Վարդապետ, էջ 81։

46 «Նյութեր Աղվանից պատմության ուսումնասիրության համար» («Պատմութիւն Աղուանից աշխարհի» տպագիրներից դուրս մնացած հատվածը), «Արարատ», 1897, էջ 162։

47 Կաղանկատուացի, էջ 388։

48 Անդ, էջ 386։

49 *В. А. Абаза*, История Армении, СПб., 1888. стр. 70; *А. Н. Грек*, Династия Багратидов в Армении. ЖМНП. ч. 190, СПб., 1890, стр. 60; *В. В. Бартольд*, Место Прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, стр. 35; Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 127—130։

պատմիչի վկայությունը Սահլի Առանշահիկ (Առմիհր Առանշահիկի սերունդներից) լինելու մասին և նրան կապում Տարոնից գաղթած Բագրատունիների հետ, չնայած իր այս վարկածը հաստատելու համար չի կարողանում վկայակոչել որևէ հիմնավոր կրոնական[50]։ Հր. Աճառյանը Սահլի հայր է ճանաչում Սմբատ Բագրատունի Խոստովանողին (սպարապետ Հայոց)[51], կարծելով, թե նրա որդիներից (Աբաս, Աշոտ, Սմբատ, Շապուհ, Մուշեղ և Սահլ) կրտսերն է[52]։ Արշակ Ալպոյաճյանը չի հավատում այս վարկածին, ասում է. «Ոմանք առանց ապացույցի կնույնացնեն իր (Սահլի—Բ. Ու.) հայրը Սմբատ սպարապետին հետ և զայն Բագրատունի կհամարեն, սակայն կասկածելի է...»[53]։

Ալպոյաճյանը չի ասում, թե ինչու է կասկածելի։ Հենց միայն՝ «առանց ապացույցի...»։ Աճառյանի ենթադրությունը չի ընդունում նաև Հ. Քյուրտյանը[54]։

Կարևորն այն է, որ Սահլ Սմբատյանին Բագրատունի Սմբատ սպարապետի որդին համարելու վարկածն անհնար է ապացուցել, որովհետև, երբ Սմբատի կրտսեր որդին համարվող Սահլը պատմության մեջ 821-ին արդեն հասուն այր էր, ուներ ընտանիք ու երեխա, նրա հայրը համարված Սմբատ Բագրատունի սպարապետը 855-ին քշվեց Բաղդադ, այնտեղ չուրացավ իր կրոնը, կոչվեց Խոստովանող։ Սա ժամանակի այնպիսի անհամաձայնություն է, որ բոլորովին տեղ չի թողնում մտածելու, թե նրանք կարող էին հայր ու որդի լինել։ Մանավանդ, որ սպարապետի հետ աքսոր էր քշվել նաև Սահլը, և այս մասին խոսող պատմիչները ոչ մի անգամ չեն ակնարկում նրանց արենակցական կապը։

Աս. Մնացականյանը, խոսելով Համամի ու Սահլի մասին, գրում է. «Պատմական տեղեկությունների պակասությունը թույլ չի տալիս մեզ հստակորեն տարբերելու հայկական այդ երկու տոհմերի (Առանշահիկների ու Բագրատունիների—Բ. Ու.) պատկերն ու փոխադարձ առնչությունները։ Նիկողայոս Ադոնցը, որ զբաղվել է այդ խնդրով, նույնպես համոզիչ և որոշակի եզրակացությունների չի հանգել»[55]։

50 *V. Minorscy*, Caucasica, IV—BSOAS, XV/3, 1953, էջ 506—509։

51 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, էջ 374։

52 Անդ, էջ 545։

53 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 165։

54 Հ. Քյուրտյան, Բաբակ և Սահլ իշն Սմպատ. «Բազմավէպ», 1958, էջ 72։

55 Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 80։

Տվյալ պարագային կարևորն այն է, որ Մնացականյանը Սահլ Սմբատյանին, առանց երկմտության, չի համարում Բագրատունի»[6]։

Մենք ստիպված ենք հանգամանորեն խոսել Սահլի և նրան անհիմն կերպով կպցված Բագրատունի տոհմանվան մասին, որովհետև այս սխալի հիման վրա է, որ պատմաբաններն IX դարում փակում են Առանշահիկների հաշիվը և Արցախի իշխանությունը հանձնում Բագրատունյաց մի նոր սարքովի ճյուղի։

Ո՞վ էր Սմբատը Սահլի համար. հա՞յրը, թե՞ վաղնջական նախորդը, որի անունը նրա համար դարձել էր ազգանուն։ Չէ՞ որ պատմիչները նրան հիշում են որպես և՛ Սահլ Սմբատյան («Սահղի Սմբատեան Եռանշահիկն տէր»)[57], և՛ «Սահլ որդի Սմբատայ»[58]։ Արաբական աղբյուրները նրան ճանաչում են որպես «Սահլ իբն Սմբատ» (կամ Սանբատ, Շանբատ)։ Իսկ սա նույնն է, ինչ «Սահլ որդի Սմբատի»։ Ուրեմն, Սմբատ էր Սահլի հոր անունը։

Միքայել Ասորին Սահակ է հիշում Սահլին. Բաբեկն «անկաւ յերկիրն Հայկազնոյն Սահակայ», «և Սահակ իշխանն Հայկազուն ըմբռնեաց...»[59]։

Այսքանից պետք է ենթադրել, որ անունը՝ («Սահլ», «Սահղ») «Սահակ»-ի այլաձևությունն է, իսկ Սմբատը՝ հայրանունը։ Լրացուցիչ տվյալներ չեն մնացել հայր Սմբատի ինքնության մասին։ Հավանաբար նա ապրել է VIII դարի վերջին ու IX-ի սկզբին։

Ն. Ադոնցը չի ուզում հաշվի առնել պատմական աղբյուրների վկայությունները. «Կաղանկատվացու խոսքը, թե Սահլը Եռանշահիկ և կամ Զառմիհրական տոհմից է, արժեք չունի»,— գրում է նա։ Ըստ նրա՝ արժեք ունի այն, որ Սահլի հոր անունը Սմբատ է, և այս անունն էլ միայն Բագրատունիներին էր հատուկ։ «Ո՛չ Աղվանքի և ո՛չ Սյունյաց իշխանական տոհմերի մեջ չեն պատահում Սմբատ անունը նախքան նրանց Բագրատունիների հետ խնամություն հաստատելը»,— պնդում է գիտնականը[60]։

Այսպիսի հիմք ունեցող վարկածն ընդունել չի կարելի, որովհետև Սմբատ անունն այնքան շատ էր գործածական՝ անկախ Բագրատունյաց տոհմից, որ «Սմբատ» ունեին և՛ Մամիկոնյանները,

56 Անդ, էջ 83։ Նույնի ռուս. հրատ. մեջ (Երևան, 1969) հեղինակը գրել է. «Принадлежность Сахля Смбатяна к роду Багратуни... неверна» (стр. 61).

57 Կաղանկատուացի, էջ 374։

58 Վարդան Վարդապետ, էջ 79։

59 Միքայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1879, էջ 365։

60 Նիկ. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 128։

և՛ Արծրունիները, և՛ նույնիսկ Սասանյան պարսիկները (Սմբատ՝ որդի Բահրամ Գուրի)։ Էլ չենք խոսում այն մասին, որ Սմբատ Քարոյան (այսինքն՝ Առանշահիկ, «յազգէ թագաւորաց Վաչագանեան») կար դեռևս VII դարում[61], այսինքն՝ Բագրատունյաց ենթադրյալ Արցախ գալուց շուրջ երկու հարյուրամյակ առաջ։

Բայց գուցե իսկապե՞ս Սահլի նախնիները խնամությամբ կապված են եղել Բագրատունիների հետ, և այդ հիմքի վրա էլ Սահլի հայրը Սմբատ անունն է ստացել։ Գիտնականն այս հնարավոր չի համարում, այլ ուզում է Արցախում Բագրատունյաց ճյուղ տեսնել և այն հաշվում է Սահլից, առանց որոշակի հիմք ունենալու։

«Եռանշահիկ ասելով (պատմիչը) հասկանում է հին Հայկազնյան տունը, որ սակայն, իր իսկ վկայությամբ, տեղի տվեց Միհրական տոհմին,— գրում է Ն. Ադոնցը։— ...Ի՞նչ եղավ Զառմիհրի սերունդը, հայտնի չէ»[62]։

Սակայն պատմիչին անհանգստացնողը Սահլի հայ լինելու մասին վկայելը չէր։ Այդ առթիվ նա արդեն ասել էր, թե Ատրներսեհը որդին էր Սահլի «որ էր ի տոհմէն Հայկայ»[63]։ Պատմիչի հոգսն էր հաստատել, որ հայկազուն Առանշահիկները տեղի չտվին Միհրանյաններին, այլ ավելի կենսունակ ու հզոր գտնվեցին, դիմացան բոլոր փորձություններին և տեր մնացին իրենց հողին ու աշխարհին։ Ուստի չի կարելի ասել՝ հայտնի չէ, թե ի՞նչ եղավ Առմիհրի (և ոչ Զառմիհրի) սերունդը։ Եվ պատմիչը երեք անգամ խոսելով Սահլի ծագման մասին՝ հաստատում է նրա տեղացի ու հինավուրց Առմիհրական-Առանշահիկ տոհմին պատկանելը՝ «իւր գնախնական ազգս Հայկազնեայց» բնութագրով հանդերձ։

Ահա այդ երեք վկայությունները։ Առաջին անգամ պատմիչը մեր իշխանին ներկայացնում է որպես «Սահղի Սմբատեան Եռանշահիկ»[64]։ Երկրորդ անգամ՝ «Սահլի Սմբատեան, որ յարքայից Արմիհրական տոհմէն էր»[65], իսկ նույն պատմության նախորդ տեղեկություններից գիտենք, որ Արմիհրական տոհմը հենց նույն Առանշահիկ կամ Եռանշահիկ Վաչագանյան-Թագավորական հարբստությունն է. «Քաջ Վարդան Միհրականը... զնախնական ազգս Հայկազնեայց զԵռանշահիկս... կոչէ որպէս ի ճաշ... արար գլխատումն արանց վաթսնից, միայն թողոյր ի նոցանէ (Առանշահիկներից.—Բ. Ու.) զԱրմիհրն Եռանշահիկ»[66]։

Այս տեղեկությունից աներկբա է դառնում, որ Արմիհրը ևս Առանշահիկներից էր։ Իսկ եթե Սահլը Միհրանյանների դավից փրկված Արմիհրի հաջորդներից է, նշանակում է՝ նաև Առանշահիկ է։

Մնում է երրորդը՝ Սահլ «ի տոհմէն Հայկայ, հայր Ատրներսեհի», այն Ատրներսեհի, որն ամուսնացավ կենդանի մնացած միակ Միհրանյանի՝ Սպրամի հետ[67], իր տոհմածառին պատվաստեց մի ճյուղ Միհրանյաններից, և պատմիչն էլ սույն փաստն արձանագրեց այնպես, թե հայկազուն Առանշահիկ իշխանը խնամիացավ Միհրանյան տոհմին[68]։

Վերը տեսանք, որ Արևելից կողմանց հայկազուն թագավորական տոհմը կոչվում էր Առանշահիկ։ Եթե Միհրանյաններին փեսայացած Ատրներսեհը պատկանում էր այդ տոհմին, պարզ է, որ նրա հայրը ևս կպատկաներ ու կկոչվեր Առանշահիկ։

Այսպիսով, տեսնում ենք, որ երեք դեպքում էլ «Սահլ որդի Սմբատա»-ն Առանշահիկ է, և պատմական ամեն տեսակ հիմքից զուրկ է նրան Բագրատունի կոչելու վարկածը։

Բագրատունի տոհմանունը Սահլին և նրա նախորդներին ու հաջորդներին բոլորովին չի կպչում նաև մի այլ կարևոր պատճա-

61 Տե՛ս Աղվանքի պատմության տպագիրներից դուրս մնացած հատվածը, որ, քաղելով էջմիածնի մատենադարանի ձեռագրերից, տպագրել էր Արշակ Տեր-Միքելյանը (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286)։

62 Նիկ. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 128։

63 Տե՛ս «Աղվանից աշխարհի պատմություն» համահավաք տեքստը՝ կազմված բանասիրական գիտ. դոկտոր Վ. Առաքելյանի կողմից, բաղդատությամբ Մաշտոցյան Մատենադարանում պահպանվող բոլոր ձեռագրերի, էջ 449 (գտնվում է Մատենադարանում)։

Մինչև այժմ այս կապակցությունը գրքի հրատարակիչների կողմից թյուրիմացաբար կարդացվել էր «Սահլ ի Տոհակայ» ձևով, որի «Տոհակ»-ը ոչ մի կերպ չէր բացատրվում, քանի որ այդպիսի տեղանուն չի հիշվում մեր աղբյուրներում։

64 Կաղանկատուացի, էջ 374։

65 «Արարատ», 1897, էջ 162։

66 Կաղանկատուացի, էջ 196—197։

Այս կապակցությունից պարզ երևում է, որ իշխանազունի անունը եղել է Արմիհր և ոչ թե Զարմիհր, ինչպես կարդացել է Ադոնցը, և նրան էլ հետևել են հետազոտողներից ոմանք։

67 Հր. Աճառյանը սույն Ատրներսեհին երկուսն է դարձրել. ա) Ատրներսեհ՝ Խաչենի տեր, բ) Ատրներսեհ Սյունի, որդի Սահլի «...շինեց Հանդու բերդը» և այլն («Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 262—263)։

Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է Խաչենի տեր և Սահլի որդի Ատրներսեհին, որին կցված «Սյունի» տարբերակիչը թյուրիմացություն է։

68 Կաղանկատուացի, էջ 386։

ռով։ Ն. Ադոնցի կարծիքով՝ Արցախի Բագրատունիները (կամ Սահլի ճյուղը) սերվել է Շաքիի (կամ Աղվանքի) Բագրատունիներից, իսկ Շաքիի Բագրատունյաց սկիզբն էլ, իբր, պետք է հաշվել այն ժամանակվանից, երբ «Ատրներսեհ Կույրի երեք եղբորորդիք Տարոնից եկան Շաքի և հաստատվեցին այնտեղ»[69]։ Ինչպես հայտնի է, այս գաղթը կատարվել է VIII դարի վերջում[70]։ Բայց պատմական սկզբնաղբյուրը Սահլին համարում է ժառանգը այն Արմիհր Առանշահիկի, որն Արցախի տերն էր VII դարի սկզբին, երբ Միհրանյանները դեռևս նոր էին ոտք դրել Ուտիք։ Պարզ է, որ VIII դարի վերջին եկածը չի կարող սկիզբ լինել VII դ. և դեռ նրանից հարյուրամյակներ առաջ այս նահանգին տիրություն անող տոհմի համար։

Կա մատենագրական մի թյուրիմացություն, որի վրա էլ խարբսխված է Ադոնցի վարկածը՝ Սահլին Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ և Շաքիի իշխան համարելու մասին։ Դա Թովմա Արծրունու մի արտահայտությունն է, որով պատմիչը բնութագրում է Սահլին՝ Բուղայի կողմից Բաղդադ աքսոր քշված հայ իշխաններին թվարկելիս։ Այստեղ Սահլը համարված է «Շաքէոյ տէր»[71]։

Ադոնցը սոսկ այս անորոշ արտահայտության հիման վրա գրել է, թե. «...Սահլ միակ հայ իշխանն է, որ հիշվում է որպես Շաքիո տեր։ Ի՞նքն էր գրավել այդ երկիրը, թե՞ իր հայրը՝ Սմբատը կամ անծանոթ պապը, հայտնի չէ։ Անտարակույս, Սահլի ընտանիքը ներկայացնում է Ատրներսեհ Կույրի եղբորորդիներին, որոնք եկան Շաքի, ապա, ուրեմն, գործ ունենք Բագրատունյաց մի ճյուղի հետ, որ հաստատված է Շաքի, որ է արդի Նուխի քաղաքի շրջանը»[72]։

Տեսնենք «Շաքէոյ տէր» համարյա վերացական արտահայտությունը կարո՞ղ է հիմք դառնալ այսքան որոշակի եզրակացությունների համար, մանավանդ, երբ նկատի ունենանք, որ Սահլին վերաբերող մատենագրական տեղեկություններով հերքվում է հենց այդ արտահայտությունը։

Վերը տեսանք, որ Սահլը տոհմակցական կապ չունի Բագրատունյաց հետ։ Այս ժամանակների առումով աղբյուրներն ուրիշ Սահլի էլ չեն հիշում, որպեսզի հնարավոր լիներ մտածել, թե խոսքը վերջինիս է վերաբերում։ Սակայն տվյալ դեպքում այդպիսի ենթադրության կարիքը չկա, քանի որ Թովմա Արծրունու վերոհիշյալ արտահայտության շարունակությունն է՝ «Որ զԲաբան (Բաբեկին) կալաւ», իսկ մենք գիտենք, որ Բաբեկին բռնողը եղել է նույն Սահլ Սմբատյան Առանշահիկը[73]։ Այս Սահլի տիրույթներն էլ հավաստի աղբյուրներում ցույց են տրված Փոքր Սյունիքը (Խաչեն) և շրջակաները. Սահլը է՛ր «տէր (Փոքր) Սիւնեաց և բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[74]։ Սահլի ամբողջ գորությամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ»[74]։ Սահլի ամբողջ գորությամբ կալեալ էր միայն այս տարածքում։ Նա Ամարաստում (ներկայիս Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջկենտրոնից հարավ-արևելք) ջարդեց արաբ ասպատակիչներին[75]։ Նրա բերդամրոցն էր Շիկաքարը (ներկայիս Ստեփանակերտի շրջանի Քամրոցն էր Շիկաքարը (ներկայիս Ստեփանակերտի շրջանի Քամրոցն գյուղի տեղը, Մեծառանք գավառում)[76]։ Նրա որդի Ատրներսեհը ժառանգեց հոր իշխանությունը, և այն տարածվում էր միայն Վերին Խաչենի ու Ծարի վրա[77]։

Այսքանին էլ գումարենք արաբ մատենագրի տեղեկությունն այն մասին, որ Բաբեկը Ատրպատականից Երասխի ափով՝ Հայաստանի հողերով, փախչում էր դեպի Բյուզանդիա և Սահլի տիրույթում էլ բռնվեց. «Այն ժամանակ (Բաբեկին բռնելու տարին՝ 837-ին —Բ. Ու.) Երասխի եզերքի հողերի տերն էր Սահլ իբն Սունբաթը»,— վկայել է Աբու Խանիֆա ադ-Դինավարին[78]։

Այսքանի հետ ինչպե՞ս հաշտեցնենք «Շաքէոյ տէր»-ը, երբ Սահլը Երասխի ձախափնյակի տերն էր, իսկ Շաքին գտնվում է Կուրի ձախ ափին, Կովկասյան լեռնաշղթայի հարևանությամբ։

Ի դեպ ասենք, որ ինքը Նիկ. Ադոնցը ևս նկատել է, թե Թովմա Արծրունու այս արտահայտությունը որքան անստույգ ու անվստահելի կապակցության մեջ է դրված։ Գիտնականը գրել է. «Այս տեղեկությունն այնքան վստահելի չի երևում։ Կալանավորների թվում Թովման հիշում է «Գրիգոր Սիւնեաց տէր», որ է Սուփան, իսկ ըստ Կաղանկատվացու՝ «Սուփան վախճանեցաւ ի Վայոց ձորն ի նոյն (851) ամի։ Եւ ի միւս տարին եկն Բուղա ի Հայս»[79]։

69 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 125։
70 Անդ, էջ 98—102։
71 Թովմա Արծրունի, էջ 310։
72 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 128։

73 «Արարատ», 1897, էջ 162։
74 Կաղանկատուացի, էջ 388։
75 Անդ, էջ 374։
76 Կաղանկատուացի, էջ 374։ Տե՛ս նաև Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, էջ 365, «Արցախ», էջ 165—166։
77 Կաղանկատուացի, էջ 388—389։
78 «Краткие сообщения Института народов Азии», № 47, 1961, стр 92.
79 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 128, ծան. 2։

Բայց ինչո՞ւ նույն տեղեկության մի մասը, որ վերաբերում է Սուփանին, չի ընդունում Ադոնցը, իսկ Սահլին վերաբերող մասն ընդունում է առանց առարկության և դեռ նրա անստույգ հիմքի վրա էլ ջնջում վերոհիշյալ արժանահավատ տեղեկությունները, որոնք Սահլին կապում են Խաչենի տարածքի հետ։

Չի կարելի մոռանալ նաև, որ Թովմա Արծրունին X դարի պատմիչ է և IX դարի իրողությանը վերաբերող նրա վկայությունը մենք կարող ենք ընդունել միայն IX դարի աղբյուրներով ստուգելուց հետո։ Իսկ ստուգումից պարզվում է, որ այն թյուրիմացություն է։

Կարելի է մտածել նաև, որ Թ. Արծրունու ակնարկը վերաբերում է Մեծ Սյունիքի տարածքում գտնվող Շաքեին։ Չէ՞ որ այստեղ ևս եղել են Շաքե անվամբ բերդ, գյուղ, վանք, գետ, նույնիսկ գավառ[80]։ Սյունիքում ընդունված ձև էր «Շաքէոյ տէր»-ը։ Կա մի արձանագրություն, որով խնդրվում է հիշել ի «Քրիստոս զՀուանշէր (տէր) Շաքէոյ»[81]։

Սակայն այսպիսի ենթադրությունը ևս անընդունելի է[82], քանի որ, եթե Սահլը Սյունյաց Շաքիի (այսինքն՝ Սյունիքի) տերը եղած լիներ, ապա ժամանակագիրը չէր ասի, թե նա «բռնազբօսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ», որը Սյունիքի մասն էր հանդիսանում։

Մնում է մերժել Սահլ Սմբատյանի մասին Թովմա Արծրունու «Շաքէոյ տէր» տարբերակիչը՝ որպես Խաչենի տիրոջ անձնավորությանը վերաբերող բազմաքանակ ստույգ ու վստահելի վկայություններին հակասող միակ մատենագրական թյուրիմացությունը[83]։

80 Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 49, 392։ Նաև՝ Ստ. Օրբելեան, Ժամանակագրութիւն, Երևան, 1942, էջ 43, Ալիշան, Սիսական, էջ 209, 213 ևն։

81 «Դիվան հայ վիմագրության», Բ, էջ 88։

82 Թ. Արծրունու տեղեկության հիմքի վրա մենք հնարավոր ենք համարել այս տեղադրությունը (տե՛ս «История Арцаха» թեկնածուական դիսերտացիայի ինքնաշարադրանքը, էջ 28)։ Սակայն հետագա հետազոտությունը մեզ հանգեցրել է այն համոզման, որ դա թյուրիմացություն է։

83 Ի միջի այլոց պիտի հիշել նաև, որ հնագետ Ս. Գ. Բարխուդարյանի հրապարակած հոդվածում, ի թիվս այլ վրիպակների, Սահլը վերստին համարվում է Բագրատունի, և հենց միայն Թովմա Արծրունու սխալ տեղեկության հիմքի վրա բացառապես Կուրի ձախափնյակի հետ են կապվում ինչպես Սահլը, այնպես էլ նրա նախորդներն ու հաջորդները (Ս. Գ. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները 9—10-րդ դարերում, էջ 58—68)։ Սակայն հեղինակը նույն հոդվածում, նույն նյութերի հիման վրա, մի այլ Սահլ Սմբատյան էլ դնում

Սահլի անմիջական հաջորդներից էին նրա որդիները՝ Ատրներսեհը և Մուավիան, որոնք 854/55-ին իրենց հոր հետ միասին քշվեցին տաժանակրության։ Մուավիա, հավանաբար, միայն արաբներն էին այսպես կոչում Հովհաննեսին[84], քանի որ Մուավիա անվանը հանդիպում ենք միայն արաբ պատմիչների մոտ, իսկ հայերն այդպիսի անուն չեն հիշում։ Դրա փոխարեն կա Սահլի որդի Հովհաննես, որն, ըստ Աղվանքի պատմության, 838 թ. ասպարեզի վրա էր և հոր գերած Բաբեկին արաբների ձեռքը հանձնելու համար մեծ տիտղոսի էր արժանացել. «Ի սոյն (838) ամի տէրանց տէրն Յոհաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխար, Խոյտա, Փատգոս երիցս այսոցիք աշխարհաց»[85]։

Նույն Հովհաննեսին է վերաբերում նաև Մեծառանից Ս. Հակոբա վանքի հետևյալ արձանագրությունը. «ՅԲ (853) թուականութե(ա)ն Հայո(ց) ի ժամանակ Յոհանիսի Աղուան(ից) իշխանի ես Սողոմ(ոն) Մեծարանց եպիսկոպոս կանգնեցի...»[86]։

Մուավիա-Հովհաննեսին «Առանի պատրիկ» է համարում Իբն ալ-Ասիրը[87]։

Պետք է ուշադրություն դարձնել, որ դեռևս Սահլի իշխանապետական փառքի օրերին իշխանական տիտղոսներով միաժամանակ ասպարեզի վրա էին նաև նրա երկու որդիները՝ Հովհաննես-Մուավիան և Ատրներսեհը։ Գիտենք, որ Ատրներսեհն իշխում էր Ծարում կամ Վերին Խաչենում։ Բացառված չէ, որ Հովհաննես-

է Մեծ Սյունիքում և նրանից սերել տալիս Վերին Խաչենի տեր Ատրներսեհին ու Փառիսոսի թագավորության ներկայացուցիչներին (անդ, էջ 73—75)։

Պարզ է, որ այսքանն արվել է աղբյուրների ընձեռած անհերքելի նյութերի ճնշման տակ։ Այդ նյութերը, սակայն, ինչպես արդեն ցույց ենք տվել, Սահլին ոչ թե Մեծ Սյունիքի տեր են համարում, այլ Փոքր Սյունիքի կամ Արցախի, և Սահլի ժառանգներն ու հետագաներն էլ մնում են հիմնականում նույն Արցախի տարածքի իշխանները։

84 Ն. Ադոնցը համոզում է, որ Հովհաննեսն ու Մուավիան նույնն են (տե՛ս «Բագրատունյաց փառքը», էջ 129)։ Գիտնականի սխալն այն է, որ սրանց հետ նույնական է համարում նաև Համամ-Բարեպաշտին (անդ, էջ 129—131)։

85 «Արարատ», 1897, էջ 162—163։

86 «Արարատ», 1897, ապրիլ, Խաչիկ վ. Դաղյանի ընդօրինակությունն է։

87 Ибн-ал-Асир, Тарих-ал-Камиль, Баку, 1940, стр. 68.

«Պատրիկ»-ը հայերեն «իշխան»-ի համանիշն է։ Նույն իբն ալ-Ասիրը Բագրատունի իշխանաց-իշխան Բագրատի մասին ասում է. «Ինչ-որ պատրիկ Բագրատ անունով, Աշոտի որդի, որ կրում է «Պատրիկների պատրիկ» տիտղոս (տե՛ս նշվ. աշխ., էջ 67)։

Մուավիան էլ իշխած լիներ Մեծառանից գավառում, նստոց ունենալով այժմյան Գանձասարի տեղը, որ այն ժամանակ կոչվում էր Արդախ։ Մանավանդ, երբ աղբյուրները նրան հենց այդ վայրերի հետ էլ կապում են։ Հետևապես, կարելի է ասել, որ Մուավիա-Հովհաննեսի բնագավառն էլ Մեծառանից գավառն է եղել, Թարթառի աջափնյակն ու Խաչենագետի ավազանը։

Հովհաննեսի անմիջական ժառանգների մասին ստույգ տեղեկություններ չունենք։

Ասացինք, որ դեռևս Ն. Ադոնցն է փորձել Հովհաննես-Մուավիային նույնացնել Համամ թագավորի հետ՝ կարծելով, թե «Մուավիա» անունը արաբների կողմից աղավաղված «Համամ»-ն է[88]։ Քիչ հետո կտեսնենք, որ «Համամ»-ը արաբական անուն է, և արաբներն իրենք այն չէին աղավաղի։

Ադոնցի այս եզրակացության հիմքի վրա էլ Ս. Բարխուդարյանը հաստատված էր համարում «Համամ-Մուավիա» նույնությունը, ապա նրան ճանաչում Սահլի հաջորդ և Շաքիի թագավոր[89]։ Սակայն աղբյուրների տեղեկություններից հայտնի է, որ Մուավիա-Հովհաննեսը հոր հետ աքսոր էր քշվել, և նրա վերադառնալու մասին ոչ մի տեղեկություն չկա։ Մինչդեռ Համամն այն հայ իշխանավորներից էր, որոնց ձեռք չտվին արաբ բռնավորները[90]։ Հենց միայն այս փաստը բավական է՝ ժխտելու Համամի ու Մուավիայի նույնության վարկածը։

Ատրներսեհն ունեցել է երկու որդի՝ Գրիգոր և Ապուսեթ։

Գրիգորի արձանագրությունը, որ պահպանվել է մի հսկա խաչքարի վրա, Սոդք գավառի Մեծ Մազրա գյուղում, 881 թվականից է. «Յլ (881) թվականութեանս Հայոց ես՝ Գրիգոր Ատրներսեհեան Սիւնեաց և Աղուանից իշխան, կանգնեցի զսուրբ նշանս»[91]։ «Ատրներսեհեան» այստեղ նշանակում է «Ատրներսեհի որդի», ինչպես որ Սահլն էր կոչվում «Սահլ Սմբատեան» (նաև՝ «Սահլ որդի Սմբատայ»)։

Ժամանակագիրն այս Գրիգոր Ատրներսեհյանի մասին գրել է. «Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն, և յայն կողմ ձգէ իւրոյ իշխանութեանն»[92]։ «Յայն կողմ»-ը գիտնականների կողմից ընդունվում է իբրև Կուրի ձախափնյակը, քանի որ պատմող հեղինակը աջափնյակից է[93]։ Իսկ Կուրից այն կողմ Գրիգորը իր իշխանության տակ էր առել Հայոց արևելից կողմանց ավանդական բոլոր այն հողերը, որոնք մտնում էին Վաչագան Բարեպաշտի թագավորության մեջ։ Եվ իրավացի են պատմաբանները, երբ հանձին Գրիգոր Ատրներսեհյանի, տեսնում են Համամ Բարեպաշտին, որի անվան հետ է կապված Հայոց արևելից կողմանց կամ Հայաղվանքի թագավորության վերականգնման պատիվը։ Ժամանակագիրը վկայել է, որ «Բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւն. այսք ի միում ժամանակի գործեցան»[94]։

Համամի և Գրիգորի նույնությունը տրամաբանական է հետևյալ պատճառներով.

ա) Գրիգորի արձանագրությունը՝ գտնված Սոդքի Մեծ Մազրա գյուղից, նրան ներկայացնում է որպես «Սիւնեաց (Փոքր Սյունիքի) և Աղուանից իշխան»-ի, այսինքն՝ ամբողջ Հայոց արևելից կողմանց իշխանի։ Արձանագրությունը 881 թվականից է, Համամի թագավորության վերականգնման անմիջական նախընթացից։ Պարզ է, որ երկրամասի իշխանն էլ պետք է թագադրվեր։

բ) Աղվանքի պատմության տոհմացանկում ամեն պարագայի Համամն ու Գրիգորը փոխարինում են իրար։ Համամը համարվում է Սահլի թոռը, Ատներսեհի որդին, և իսկապես, Գրիգորն էլ Սահլի թոռն է ու Ատներսեհի որդին[95]։ Համամին համարում են նաև Հերեթ-Կամբեճանի թագավոր Իշխանակի պապը և Ատներսեհի հայրը։ Աղվանքի պատմության և հայկական ու արաբական

88 Նիկ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 130։

89 Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվածը, էջ 64—65։

90 Կաղանկատուացի, էջ 383։

91 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 189։

Այս արձանագրությունը մեծ աղավաղումներով գրի են առել նաև Ս. Ջալալյանցը (Ճանապարհորդութիւն, Բ, էջ 111), Սմբատյանցը (Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 607), Ալիշանը (Սիսական, Վենետիկ, 1893, էջ 72), Մեսրոպ Մագիստրոսը (Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղբատի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1938, էջ 102)։

Ս. Բարխուդարյանն է, որ առաջին անգամ անթերի արտագրել է արձանագրությունը։

92 Կաղանկատուացի, էջ 389։

93 *А. Е. Крымский,* Страницы из истории... Азербайджана. Шеки (Сборник «Памяти Н. Я. Марра», М.—Л., 1938), стр. 375.

94 Կաղանկատուացի, էջ 383։

95 Անդ, էջ 388—389։

ուրիշ աղբյուրների տվյալներով այս իրողությունն էլ է հաստատվում[96]։

գ) «Համամ» անունը «Գրիգոր»-ի արաբերեն թարգմանությունն է։ Իրավացի էր ակադեմիկոս Ա. Ե. Կրիմսկին, որը համոզված էր, թե «Գրիգոր» (որ նշանակում է «արթուն», «զգոն», «հոգատար») մկրտչական անունը թարգմանվել է այն ժամանակ շատ տարածված արաբերեն «Համամ»-ի, որն ունի նույն արմատը՝ լինել զգոն, հոգատար[97]։

դ) Համամի ու Գրիգորի նույնությունը հաստատող փաստ կարելի է համարել նաև Համամ թագավորի մի արձանագրությունը, որ գտնվել է Ադր. ՍՍՀ Աղդամի շրջանի Սոֆուլու գյուղից (Ստեփանակերտից մոտ 30 կմ հյուսիս-արևելք)։ Այս արձանագրության առաջին արտագրողն ու մեկնաբանողը Ս. Բարխուդարյանն է եղել։ Ադրբեջանի պատմության թանգարանում պահվող շիրմաքարի եղծված գրերը վերականգնելով՝ նա ստացել է հետևյալ քառատողը (փակագծերի մեջ ուսումնասիրողի վերականգնումներն են).

«Այս դ (իր դամբանի.... եղբայր Հ)ամամ իշխանի,
Եւ տն Փղիպէի և տն Սնպատա...զրկ-
եալ ի ճորտ հասակէ ելա յաշխարհէս դառն թ(ողի սուգ)
զգիրս զայս,
Մի՛ ոք իշխեսցէ մերձենալ ի սմա նզովեալ եղիցի Քէ այ»[98]։

Հետազոտողը ենթադրում էր, որ գերեզմանաքարը գցված է եղել Համամի ձեռքով սպանված եղբոր վրա, գիրն էլ, իբր, քանդակել են սպանվածի եղբայրները՝ Համամը, Փղիպեն ու Սմպատը[99]։

Համամի կողմից իր եղբորն սպանելու մասին ակնարկ իսկապես անում է Աղվանքի պատմության շարահարողը[100]։ Սակայն մեզ այն անհիմն է թվում, քանի որ նման ակնարկի միակ հիմքն է եղել Համամ վարդապետի հայտնի շարականը, որի մեջ իսկապես հեղինակը խոստովանում է, թե ինքը մեղսակից է եղբոր

96 Անդ, էջ 389—390։ «Արարատ», 1897, էջ 131, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ «СМОМПК»), вып. 38, Тифлис, 1908, стр. 57.

97 Ա. Ե. Կրիմսկի, նշվ. աշխ., էջ 374. «Крестное имя «Григор» (т. е. «бдительный», «заботливый») нашел себе, по-видимому, перевод на модный арабский язык «Хаммам» (с корнем одинакового значения, т. е. «быть бдительным»)».

98 Ս. Բարխուդարյան, Տապանագիր Համամ իշխանի անունով. ԳԱ-ի «Տեղեկագիր», 1964, № 1, էջ 63։

99 Անդ, էջ 62—63։

100 Կաղանկատուացի, էջ 383։

սպանությանը։ Մինչդեռ, ինչպես քիչ հետո կտեսնենք, ուշադիր քննությունից պարզվում է, որ Համամ Բարեպաշտ իշխանն ու Համամ վարդապետը միանգամայն տարբեր անձնավորություններ են եղել։

Բոլորովին վերջերս հիշյալ տապանագրին ուշադրություն է դարձրել նաև Ա. Շահինյանը, որը մեզ ցույց է տվել իր կատարած արտագրությունն ու տապանաքարի լուսանկարը։ Լուսանկարում պարզ երևում է առաջին տողի երկրորդ կեսը՝ «...դի Համամա իշխանի»։ Նշանակում է՝ պետք է վերականգնել «(որ)դի Համամա իշխանի» և ոչ թե «եղբայր», որը սոսկ ենթադրություն էր Ս. Բարխուդարյանի մոտ։

Հետևապես, տապանաքարը վերաբերել է Համամ-Գրիգորի որդուն։ Այս ճիշտ ընթերցանությունը հաստատվում է նաև Աղվանքի պատմության մի այլ կարևոր տեղեկությամբ, որի համաձայն Գրիգոր-Համամի ավագ որդին՝ Ապուլին սպանվել էր իր իսկ եղբայր Սմբատի ձեռքով (Գրիգորի «երեց որդին Ապուլի սպանանի յազգակցէն Սմբատայ»)[101]։ Նախորդ տեղեկությունից հայտնի է, որ սպանությունը կատարվել է Համամ-Գրիգորի կողմից Գևորգ կաթողիկոսին արաբական գերությունից փրկագնով ազատելուց (893/894 թ.) չորս տարի անց[102]։

Արձանագրության ու մատենագրական զույգ տեղեկության բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ երեք դեպքերում էլ խոսքը նույն փաստի մասին է. Գրիգոր-Համամի երեց որդին է սպանվել իր եղբոր (հարազատի) կողմից։

Աղվանքում կամ Հայոց արևելից կողմանքում ո՞վ է եղել 897 թվականի մեծ իշխանը կամ թագավորը, որի հայկազուն իշխան որդի Ապուլին սպանվել է իր եղբոր կողմից։ Համամը, որն ըստ Աղվանքի պատմության ժամանակագրության՝ 880-ական թթ. վերականգնել էր Հայաղվանքի թագավորությունը։

Այսպիսով, կարելի է հաստատված համարել, որ Համամ Բարեպաշտը նույն Գրիգոր Ատրներսեհյանն է՝ Փոքր Սյունիքի կամ Խաչենի տերն ու Առանշահիկ տոհմի ներկայացուցիչը[103]։

101 Անդ, էջ 389։

102 Անդ, էջ 383։

103 Ս. Գ. Բարխուդարյանը վերոհիշյալ իր հաղորդման մեջ գրել է. «Համամի տոհմի կենտրոնավայրը եղել է ներկայիս Աղդամի շրջանը՝ Պարտավ-Բերդա և Տիգրանակերտ ավանը կամ քաղաքը» (տե՛ս նշված հաղորդումը, էջ 63)։

Նշված կետերն, իհարկե, այդ ժամանակ մտնում էին Առանշահիկների տիրույթների մեջ, սակայն դրանք կենտրոնավայր չէին։

Գիտնականը, սակայն, վերոհիշյալ իր վերջին հոդվածում էլ Համամին ու նրա

Ուրեմն, Համամ-Գրիգորի տիրույթներն արևմուտքում ընդգրկում էին Սևանի արևելյան ափերը՝ Մեծ Մազրա, Շողվագ կետերով, իսկ արևելքում հասնում էին մինչև Պարտավի մատույցները, քանի որ Պարտավից դեպի հարավ-արևմուտք, այժմյան Աղդամի մոտ է գտնվել Համամի մյուս արձանագրությունը։ Նրա կառուցած ամրոցը Հավքախաղացն էր Գանձասարի մոտ։ Ամենայն հավանականությամբ՝ այն եղել է նաև աթոռանիստը։

Հետազոտողներից ոմանք Համամին ևս համարում են Բագրատունի՝ պատճառաբանելով, թե, իբր, նրա պապ Սահլը եղել է Բագրատունյաց տոհմից, մեկ էլ՝ որովհետև Մխիթար Այրիվանեցին ասում է՝ «Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի»[104]։

Վերը տեսանք, որ Համամի պապ Սահլն Առանշահիկ տոհմից է եղել։ Ինչ վերաբերում է Այրիվանեցու տեղեկությանը, ապա այն գրվել է Համամից 400 տարի հետո և, բնականաբար, պետք է քաղված լիներ Համամին ժամանակակից աղբյուրներից՝ Աղվանքի ժամանակագրությունից ու Հովհաննես կաթողիկոսի պատմությունից, որոնք Համամին Բագրատունի չեն կոչում։ Վերջիններս իրար կողքի հիշում են Համամ Բարեպաշտին[105] կամ Արևելից մեծ իշխան Համամին և անմիջապես էլ՝ Աշոտ և Սմբատ Բագրատունիներին[106]։

տոհմակիցներին կապում էր միայն ու միայն Կուրի ձախափնյակի հետ, պնդելով, թե «այդ արքայատոհմի կենտրոնն սկզբից ևեթ եղել է Շաքի-Նուխին» (տե՛ս հիշյալ հոդվածը, էջ 71)։

Բարխուդարյանն իր վարկածը հաստատող ոչ մի վկայություն չի հիշում, բացի այն տեղեկություններից, որոնք վերաբերում են Համամի թոռ և Շաքի-Կամբեճանի թագավոր Իշխանակին, սակայն չեն կարող պապին ևս դարձնել միայն Շաքիի թագավոր։ Բարխուդարյանի բերած միակ, իբր թե, որոշակի տեղեկությունը, որ պիտի Համամին կապեր Շաքիի հետ, հետևյալն է. «Իբն Հաուկալը Շաքին տեղադրում է Կուրի և Շիրվանի արանքում և երկրի տեր է անվանում Համամին» (անդ, էջ 60)։ Սակայն Հաուկալի տեղեկությունն այդպիսի բովանդակություն չունի։ Այն վերաբերում է ոչ թե Համամին, այլ նրա որդի Ատրներսեհին, որն իսկապես Շաքիում թագավոր էր դարձել X դ. սկզբին (տե՛ս Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 130)։ Նույն տեղեկությունը հաղորդում է նաև Մասուդին «Շաքեցիների թագավորը... Ադրներսե իբն Համամն է», այսինքն՝ Համամի որդի Ատրներսեհը (տե՛ս СМОМІІК, вып. 38, էջ 57)։

Մասուդիի երկի թարգմանիչ-ծանոթագրողը գրել է, թե. «Այստեղ շաքեցիների թագավոր Ատրներսեհ իբն-Համամը Վրաց թագավոր Ատրներսեհ Բ-ն է (881—928 թթ.)» (անդ, էջ 75)։ Սա ակնհայտ թյուրիմացություն է, քանի որ, ինչպես վերը կատարված քննությունից պարզվեց, Համամը Հայաղվանքի տերն է եղել և ոչ մի առնչություն չի ունեցել Վրաց արքունիքի հետ։

104 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 55։

105 Կաղանկատուացի, էջ 383։

106 Յոհաննէս կաթողիկոս, էջ 214։

Դասխուրանցուց և Հովհաննես կաթողիկոսից իր տեղեկությունը քաղող Այրիվանեցին կա՛մ մեխանիկորեն Աշոտ և Սմբատ Բագրատունիների տոհմանունը վերագրել է նաև Համամին, կա՛մ էլ, որ առավել հավանական է, նրա խոսքը չի վերաբերում Համամ Բարեպաշտ իշխանին։ Վերջին պարագայի առկայությամբ պետք է մտածել արդեն, որ իշխան Համամի ժամանակներում ապրել ու ստեղծագործել է նաև մի Համամ Վարդապետ Բագրատունյաց տոհմից։

Պատմագիտության մեջ լուրջ վեճեր է հարուցել այս հարցը։ Պատմաբանները և հատկապես բանասերները փորձում էին պարզել, թե, վերջապես, ո՞վ է եղել Համամ-Գրիգոր Արևելցին՝ միայն Արևելից աշխարհի իշխա՞ն, որին վերագրվում է նաև, այսպես կոչված, Աղվանից թագավորության վերականգնման պատիվը, թե՞ նաև պատմիչ, մեկնաբան, որին հետագա մեր պատմիչներից մեկը՝ Մխիթար Այրիվանեցին, կոչում է նաև Հովհաննես Բագրատունի։

Կ. Կոստանյանցը հատուկ ուսումնասիրություն է նվիրել Համամ Արևելցուն՝ ցույց տալով, որ երկու Համամներն էլ մեկ անձ են[107]։ Իր ուսումնասիրության մեջ այս տեսակետն է պաշտպանել նաև Աս. Մնացականյանը, որը լայն քննության է ենթարկել Համամ իշխանին և Համամ պատմիչ-մեկնաբանին վերաբերող տեղեկությունները[108]։

Սակայն, ըստ երևույթին, չի կարելի անուշադրության մատնել մի կարևոր հանգամանք, որից զգուշացնում էր Հր. Աճառյանը։ Բանն այն է, որ Համամ Արևելցի իշխանի մասին կոնկրետ տեղեկություն հաղորդող միակ ժամանակակից և նրան մոտիկից ծանոթ Հովհաննես Դրասխանակերտցին, իշխանի գործունեությունը ներկայացնելիս, ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե նա գրական-գիտական գործով ևս զբաղվել է[109], մի հանգամանք, որի առկայությունը ոչ մի պարագայում լռության չէր մատնվի։

Նույն պատկերն է նաև Համամ վարդապետի մասին խոսող աղբյուրներում. այստեղ էլ հեռավոր հիշեցում անգամ չկա Վարդապետ Համամի քաղաքական իշխանապետության մասին[110]։

107 Կ. Կոստանյանց, Համամ Արևելցի, Վաղարշապատ, 1896։

108 Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 181—204։

109 Յոհաննէս կաթողիկոս, գլ. ԼԳ, Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 24—25։

110 Ասողիկ, էջ 158—159, Վարդան Վարդապետ, էջ 86։

Բայց այս բոլորից անկախ, կա և փաստերի մի խումբ, որը թույլ չի տալիս մտածելու, թե Համամ Արևելից իշխանը և Համամ մեկնաբան-քերականը նույն անձն են եղել։ Համամ իշխանը ապրեզի վրա էր 880—90-ական թվականներին, ուխտունականներին նա վերականգնեց Աղվանից թագավորությունը (Աշոտ Բագրատունու հետ միաժամանակ), 894 թ. արաբական գերությունից փրկագնով ազատեց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին։

Իսկ Համամ վարդապետի մասին տեղեկություն ունենք 887 թվականից հետևյալ հիշատակարանի մեջ. «Հայ թուականն ՅԼԶ (887) էր։ Ի սմա աւուրս Իսահակ և Համամ վարդապետք, որ զառակսն և զողբսն և զաւրհնութիւնսն, որ ի գլուխ կանոնացն է, և զամբիծսն, գիրք մի, և զքերական գրեցին հոգւոյն սրբոյ տեսչութենէ»[111]։

Այստեղ հիշատակված Համամ վարդապետը՝ աստվածաբան և քերական, եթե միևնույն ժամանակ հանդիսանար նաև Հայաղվանքի իշխան, թագավորության վերականգնող, հիշատակագրողն անպայման կնշեր, նույնիսկ կընդգծեր։ Մինչդեռ այդպիսի բան չկա։

Մի այլ կարևոր հանգամանք. Համամ վարդապետին Բագրատունի Հովհաննես է կոչում Մխիթար Այրիվանեցին։ Նրան կրկնում են և ուրիշները՝ «Ո՞վ է Համամն» հարցին տալով այսպիսի պատասխան.—«Բագրատունեաց իմաստասէր աբեղա Յովհաննէս անուն», ապա թվարկում են միայն ու միայն Համամ վարդապետի կատարած մեկնություններն ու գիտական այլ գործերը[112]։

Նախ, «ո՞վ է Համամը» հարցին պատասխանողները կարո՞ղ էին թաքցնել նրա իշխանության զորավոր փաստը։ Բնա՜վ։

Եվ ապա, չէ՞ որ նրան Բագրատունի Հովհաննես կոչողները հայտնում են նաև, որ այդ Բագրատունի Համամ-Հովհաննեսը եղել է «իմաստասէր աբեղա»։ Աբեղա էլ նշանակում է կուսակրոն։ Իսկ Համամ իշխանը կուսակրոն չի եղել. նրա որդիների ու թոռների մասին, ինչպես վերը տեսանք, անհերքելի տեղեկություններ կան հայ և օտար աղբյուրներում։

Աղբյուրագիտական այս անառարկելի փաստերից առայժմ կարելի է հանգել մեկ եզրակացության. Համամ Արևելցի իշխանը և Համամ վարդապետ Բագրատունին տարբեր անձեր են եղել։

111 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 87։
112 Մխիթար Այրիվանեցի, էջ 55։

Զույգ Համամների հետ կապված մյուս հարցերը, կարծում ենք, հնարավոր կլինի պարզել ավելի հանգամանալից քննությամբ, որի կարիքը շատ է զգացվում։

Գրիգոր-Համամն ունեցել է հինգ որդիներ, որոնցից ավագը, ինչպես տեսանք, սպանվել էր իր եղբայր Սմբատի կողմից. «Եւ միւս որդին Սահակ, որ և Սեւադայ կոչեցաւ, այր քաջ ու յաջող, սա առ հասարակ տիրեաց Գարդմանայ և Քոսայ և Փառնայ (կարդալ՝ քուստ-ի Փառնեայ, այսինքն Փառիսոս գավառին—Բ. Ու.) գաւառաց, այլ և ավազակապետաց Զորոյգետոյն բովանդակ եղև իշխան, և խնդրող իսկ գրագիտութեան»[113]։

Այսքանը հաղորդում է Աղվանքի ժամանակագիրը, որը Գրիգոր-Համամի երկու որդիների անունները չի տալիս։ Այդ երկուսի անուններն իմանում ենք Բաղդասար միտրապոլիտի ցանկից, որը կազմված է «ի պատմութեանց Հայոց և Աղուանից և ի յարձանագրեաց ի խաչաքարաց և ի տապանաքարաց»։ Ատրներսեհ էր Գրիգորի մեկ որդու անունը և Վասակ՝ մյուսինը։ Ատրներսեհը հաստատվում է և ուրիշ աղբյուրների տեղեկություններով, քանի որ վերջինների համաձայն, ինչպես վերը տեսանք, այս Ատրներսեհն է եղել Համամի որդին և Կամբեճանի թագավոր Իշխանակի հայրը։ Նա Հերեթ-Կամբեճանի թագավոր է դարձել 910 թ.[114]։ Վերջին այս թվականն էլ մոտավորապես հաստատվում է Մասուդիի տեղեկությամբ։ Արաբ մատենագիրը, որ իր երկը գրել է X դարի առաջին կեսին, հաղորդում է, թե «Մեր այս գիրքը հյուսելիս շաքեցիների թագավորն էր Ատրներսեհ իբն Համամը»[115]», այսինքն՝ Համամի որդի Ատրներսեհը։

Անանիա Մոկացին, Արցախ գալով 958 թ., ծանոթացավ տեղի իշխանավորների հետ և Կամբեճան-Հերեթի մասին գրեց. «Ունէր զաթոռ թագաւորութեան յայնժամ Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, թոռն երանելւոյն Համամայ Բարեպաշտի թագավորին Աղուանից»[116]։

Որ Համամի որդի Ատրներսեհն էր Հերեթ-Կամբեճանի կամ անդրկուրյան Հայքի X դարի թագավորը, վկայում է նաև ականատես Հովհաննես կաթողիկոսը, որի տեղեկության մեջ կոնկրետ խոսք կա նաև Ատրներսեհի եղբայր մեծ իշխան Սահակ Սեւադայի

113 Կաղանկատուացի, էջ 389։
114 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. X, էջ 498։
115 СМОМПК, вып. 38, էջ 57։
116 «Արարատ», 1897, մարտ։

մասին. «Եւ ես ըստ տէրունական հրամանի հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արեւելեաց Աղուանից, առ մեծ իշխանն Սահակ երթեալ, և թագաւորն նոցունց Ատրներսեհ՝ որ ըստ արեւելից հիւսիսոյ Կովկասու»[117]։

Հովհաննես կաթողիկոսն իր հալածական կյանքում նախ եղել է «ի կողմանս արեւելեաց Աղուանից» (Հայոց Աղվանք), ուր իշխան էր Համամ-Գրիգորի որդի հայտնի Սահակ Սևադան, ապա անցել է Կուրի ձախափնյակը՝ Հերեթ-Կամբեճանը («որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու») «առ թագաւորն նոցունց Ատրներսեհ»։

Ի մի բերելով Սահլի որդիների ու թոռների անունները՝ կըստանանք հետևյալ տոհմապատկերը.

Սմբատ Առանշահիկ
↓
Սահլ Սմբատյան (821—854)
↓
Հովհաննես (Մուավիա—837—854)+Ատրներսեհ (մինչև IX դ. վերջը)
↓
Գրիգոր (Համամ)+Աբուսեթ
↓
Ապուլի+Ատրներսեհ Բ (մինչև X դ. կեսը)+Վասակ+Սմբատ+Սահակ Սևադա (մինչև X դ. կեսը)
(† 897/898) ↓
Իշխանակ (958—X դ. վերջ)։

Ուրեմն, Համամ-Գրիգորի ժառանգներից ավագն սպանվել էր, և մնացին մյուս չորսը՝ Ատրներսեհը, Սահակ-Սևադան, Վասակն ու Սմբատը։

Ուշադրությամբ հետևելով հետագա իրադարձություններին, տեսնում ենք, որ հանձին Գրիգոր-Համամի այս չորս զավակների, Առանշահիկ տոհմը չորս նոր ոստ է արձակում, որոնցից յուրաքանչյուրն ստանում է իր հայրենի տիրույթը և զբաղեցնում որոշակի բնագավառ։

Ատրներսեհը նստում է հոր վերանվաճած Կամբեճան-Շաքիում, ստեղծում իր փոքրիկ թագավորությունը, ըստ Բաղդասար միտրապոլիտի ցանկի՝ 910 թվականին։ Նա թագավոր մնաց մինչև X դարի կեսը։

Սահակ Սևադան իշխանանիստ է դարձնում Փառիսոսը և իր տիրապետության տակ առնում հարևան Ուտիքի դավառներից Գարդմանքն ու Զորագետի կողմերը։

117 Յովհաննէս կաթողիկոս, էջ 273։

Սմբատն ու Վասակը մնում են բուն Խաչենում, մեկը՝ Գանձասարի շրջանների տեր, մյուսը՝ Վերին Խաչենի (որի մեջ մտնում էր և Ծարը)։

Նկատի առնելով Խաչենում և առհասարակ Հայաստանում տիրապետող մի սովորություն, որի համաձայն թոռը կոչվում էր պապի անունով, պետք է կարծել, որ այս Սմբատի հաջորդներից էր այն Սմբատը, որն սպանվեց իր տոհմակից Դեսումի որդի Հասանի ձեռքով XII դարի կեսին[118]։

Գրիգոր-Համամի որդի Սմբատը, ըստ նույն տոհմական ավանդույթի, իր որդուն պիտի կոչեր Գրիգոր։ Եվ իսկապես հենց այդպես էլ կար։ X դարի կեսին (958) Գանձասարում Անանիա կաթողիկոսին դիմավորում է Խաչենի գահերեց իշխան Գրիգորը, որն այն ժամանակ արդեն տարեց մարդ էր[119]։

Անանիա Մոկացին Խաչեն էր եկել Աղվանքի եկեղեցին սողոսկած հերձվածական խլրտումները վերացնելու համար։ Իջևանեց Գրիգոր մեծ իշխանի տիրույթում՝ ժողովի հավաքելով Ուտիքի և Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերին։ Անանիա Մոկացու թղթում տեղ են գտել հետևյալ նշանավոր իշխանապետների անունները. «Թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսեհի, և Սենեքերիմ Աղուանից իշխանաց իշխան, Սենեքերիմ՝ որդի Գրիգորի Խաչեան իշխանի... Վաչագան Գորոզուաց իշխան, Գուրգեն Արևելեաց իշխան»[120]։

Ասացինք, որ Գրիգորը Ներքին Խաչենի տերն էր։ Կաթողիկոսին ընդունել էր իր մոտ, աղբյուրներից էլ գիտենք, որ իջևանը եղել է Գանձասարի վանքը՝ Արդախ կոչված վայրում[121]։

«Վաչագան Գորոզուաց իշխան»-ը ինչպես վերը տեսանք, Դիզակի տերն էր, որ նստում էր Գտիչ-Գորոզում և թոռն էր Եսայի Աբու-Մուսեի, որդին Մովսես իշխանի»[122]։

118 Մ. Գոշ, Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու, էջ 387։

119 Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից. «Արարատ», 1897, էջ 143։

120 Անդ, էջ 144։

121 Ստեփանոս Օրբէլեան, էջ 279։

122 Նիկ. Ադոնցը սխալմամբ այս Վաչագանին համարում էր Ուտիքի այն Մովսես իշխանի որդին, որի մասին հանգամանորեն խոսում է Հովհաննես կաթողիկոսը (տե՛ս Բագրատունյաց փառքը, էջ 143)։ Սակայն իր իսկ վկայակոչած արաբ մատենագրի «Վաշաղիա իբն Մուսի» հորջորջումն ասում է, որ Վաչագանի հայրն է Մուսեն, որը Եսայու անվան հետ էր միշտ (Եսայի Աբու-Մուսեն, որ նշանակում

Իշխանակը ժառանգն էր Համամի որդի Ատրներսեհ թագավորի, որը 956-ին դեռևս տիրում էր Շաքիում[123]։ Իշխանակը հաջորդեց նրան և իր մայր (վրաց իշխանաց իշխան Գուրգենի քույր) Դինարի հորդորներին տեղի տալով՝ Շաքի-Կամբեճանի հայությանը դավանափոխ արեց, դարձրեց քաղկեդոնական ու մեկընդմիշտ կտրեց հայկական միջավայրից[124]։

Անանիա Մոկացու հիշած Սենեքերիմների մասին Նիկ. Ադոնցը գրել է. «Սենեքերիմ իշխանաց իշխան» տարբեր անձ է համանուն իշխանից, որ Խաչենի Գրիգորի որդին էր։ Իշխանակը թագավոր էր, ուստի իշխանաց իշխան Սենեքերիմ կարող էր լինել նրա որդին և գահաժառանգը»[125]։

Սա թյուրիմացություն է, որովհետև, եթե մի Սենեքերիմը Գրիգոր մեծ իշխանի որդին էր՝ ըստ Անանիա կաթողիկոսի վկայության, ապա մյուսն էլ (իշխանաց-իշխանը) նույն Գրիգորի եղբայրն էր՝ ըստ Ասողիկի։ Վերջինս վկայում է, որ Գրիգորն ու իր եղբայր Սենեքերիմը միաժամանակ իշխում էին Արցախում։ Սրանց քույրը Կարսի Մուշեղ թագավորի (962—984) կինն էր, Աբասի մայրը[126]։ Աղվանքի ժամանակագրի տեղեկության համաձայն՝ այս Սենեքերիմը (կոչված նաև Հովհաննես) այն իշխանաց-իշխանն էր, որ Փառիսոսում թագավորություն ստեղծեց, և նրա թագավորությունն էլ սիրով ընդունեցին պարսից արքունիքն ու բյուզանդական կայսեր ներկայացուցիչ Դավիթ Մագիստրոսը[127]։

Ասողիկի կարծիքով՝ Գրիգորի ու Սենեքերիմի մահվամբ (1003 թ.) սպառվել է Փառիսոսի թագավորությունը։ Սակայն տեղացի, իրողությանն ի մոտո ծանոթ մի աղբյուր՝ Վարդան Արևելցու պատմությունը, հաղորդում է, որ երկու եղբայրների մահից

է Եսայի՝ Մուսեի հայր)։ Արաբական սովորության հետևելով՝ մեր Եսային անվան կցորդ էր դարձրել ավագ որդու անունը։ Ադոնցի սխալի հիմքը Գորոզի տեղը չիմանալն է (անդ, էջ 144. «Գորոզուքի դիրքը ևս ծանոթ չէ»)։ Պատմաբանը չի հիշում Թ. Արծրունու հայտնի տեղադրությունը. «...ի Գորոզու մերձ ի լեառն Քթիշ» (Թովմա Արծրունի, էջ 304)։

123 Մասուդի. տե՛ս СМОМПК, вып. 38, էջ 57։

124 Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Н. Я. Марр, Аркаун, монгольское название христиан, СПб, էջ 36, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934, էջ 203, Ա. Մնացականյան, նշվ. գիրքը, էջ 206—207 և հտգ.։

125 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 133։

126 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս.—Պ., 1885, էջ 198։

127 Կաղանկատուացի, էջ 390։

հետո էլ Փառիսոսում թագավոր էր Գրիգորի որդի Փիլիպեն, որի թագավորությունը կործանվեց XI դարի կեսերին՝ Գանձակում բուն դրած քուրդ Փադլունյան ամիրայության հարվածներից[128]։

Բաղդասար միտրապոլիտի ցանկում այս Փիլիպեի որդի Գրիգորից ծնված Վախտանգ-Սակառից է, որ սերվում են Հաթերքի Վախտանգյանները և Գանձասարի կամ Խոխանաբերդի Վախտանգ-Սակառյանները[129]։

Առանձահիկ տոհմի Վերին Խաչենի ճյուղը XII դ. ներկայացնում էր հետևյալ պատկերը։ Վախտանգ-Սակառից երկու նոր ոստեր էին առաջացել. մեկը տարածվել էր Հաթերքում ու շրջականերում։ Նրա հոգևոր կենտրոնն էր հին Դադի կամ Խութա վանքը Թարթառ-Տրտու գետի ձախ ափին, իսկ մյուսն՝ ընդգրկում էր Արցախի արևմտյան մասը՝ Ծարն ու Գեղամա գավառը, և նրա հոգևոր աթոռանիստն ու տոհմական տապանատունն էր Խադավանքը, որը գտնվում է Թարթառ-Տրտու գետի աջ ափին, այժմյան Վաղուհաս գյուղից 6—7 կմ հարավ-արևմուտք։

Խոխանաբերդի կամ Գանձասարի իշխան Գրիգորի ճյուղը XII դարի սկզբից մինչև XIII դ. սկիզբը հիմնականում հետևյալ պատկերն է ներկայացնում.

Վախտանգ Մեծ (կինը՝ Թագուհի, դուստր Բաղաց թագավորի)
↓
Հասան Մեծ (կինը՝ Մամքան—XII դ. IIկես)+Սմբատ
↓ ↓
Վախտանգ—Տանգիկ (կինը՝ Խորիշահ) XII դ-ի վերջ—1214) Գրիգոր+Հեջուբ 1198—1247)
↓
Վախտանգ—Տանգիկ (կինը՝ Խորիշահ)
↓
Հասան-Ջալալ+Զաքարե+Իվանե+Նասր-Դավլա+Մարինա։

Այս ճյուղը տվել է նաև այլ ոստեր, որոնցից պատմությանը հայտնի են Գեռաքարեցի կոչված իշխանազունները, Դեսումյանները, Դլենյանները և, վերջապես, Խաղբակյանները։ Վերջին ոստի ներկայացուցիչ Վասակը թուրք-սելջուկյան հրոսակների դեմ մղած ճակատամարտերում նշանավոր զորապետ էր և մեծամեծ սխրա-

---

128 Վարդան Վարդապետ, էջ 200։

129 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 499։ Վարդան Վարդապետ, էջ 140։

գործությունների համար Զաքարյան տիրակալներից նոր տիրություններ ստացավ Սյունիքում ու Այրարատյան նահանգում՝ «Ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ» և սկիզբ դրեց այն հզոր իշխանության, որը շատ լուսավոր էջեր պիտի գրեր Հյուսիս-արևելյան Հայաստանի պատմության մեջ ու հայտնի դառնար Խաղբակյանք կամ Պռոշյանք նոր տոհմանունով։

Հասան-Ջալալ իշխանի անունից էլ Հասան-Ջալալյանք կոչված իշխանական տունը, որ տերն էր Ներքին Խաչենի, դարձավ միջնադարյան Հայաստանի վարչական ամենանշանավոր միավորներից մեկը։ Այն դիմացավ թաթար-մոնղոլների ու նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի հարվածներին, ապա հայրենի Խաչենում կազմավորված մելիքական տոհմերի վերափոխվելով, գոյատևեց մինչև XIX դ. սկիզբը։ Այս տոհմի պայազատներն էին, որոնք XVIII դարում հաջողությամբ գլխավորում էին Ղարաբաղի ու շրջակա հայկական գավառների ազատագրական շարժումներն ընդդեմ օտար բռնակալների։

Եվ, այսպես, պատմական աղբյուրների ընձեռած տեղեկությունների հիման վրա դիտարկելով Խաչենի իշխանական տան պատմական հոլովույթը, տեսանք, որ այն իր ակունքն առնում է Մեծ Հայքի միասնական պետության կազմավորման ժամանակից։ Արմատում ունենալով ավանդական Հայկից սերված Առան Սիսակյանին՝ այս նախարարական տոհմը կոչվել է Առանշահիկ։ Մարզպանության շրջանում Առանշահիկները ոչ միայն իշխանության տեր էին, այլև V դարի վերջում ստեղծեցին իրենց թագավորությունը՝ սրանից հետո կոչվելով թագավորական տոհմ։ VII դարի սկզբին Ուտիքի արևմտյան մասը՝ Գարդմանք կենտրոնով՝ անցավ պարսկական ծագում ունեցող Միհրանյաններին, որոնք այստեղ իշխանությունն իրենց ձեռքում պահեցին շուրջ երկու դար և IX դարի սկզբին սպառվեցին՝ տեղի տալով Առանշահիկներին։

Դժվար էր Ուտիքի Առանշահիկների վիճակը։ Սելջուկ-թուրքերի տիրապետության օրերում նրանք արդեն կորցրել էին իրենց վարչական ու տնտեսական հենարանները և կամ հայրենի հողի վրա ապրում էին եկվոր իշխողների լծի ներքո, կամ էլ բախտ էին որոնում օտար ափերում։

Արցախի Առանշահիկները, որոնց տոհմաշղթան ոչ մի ժամանակ և ոչ մի օղակում չընդհատվեց հայրենի հողի վրա, դեռևս արաբական տիրապետության վերջին շրջանում Գանձակի ամիրայությանը զիջեցին նահանգի արևելյան ծայրամասերը, հատկապես Մուխանք բարեբեր գավառը, և ապավինեցին նահանգի **լեռնային ու նախալեռնային գավառներին**, որոնք մի ընդհանուր անունով կոչվում էին Խաչեն։ Այստեղից էլ երկրամասի վարչական անունը դարձավ Խաչենի իշխանություն։

XII դարի վերջին Խաչենի տարածքի վրա արդեն նկատելի է նույն Առանշահիկ տոհմի երեք ճյուղերի առկայությունը։ Այս ժամանակից էլ նրանք՝ օտար բռնակալների ստեղծած բազմադարյան մղձավանջի մեջ՝ մերթ անկախ ու մերթ կիսանկախ վիճակում, գոյատևեցին ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը՝ հանդիսանալով ամենաերկարակյաց նախարարական տունը հայ հողի վրա։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽԱՉԵՆԸ X—XII ԴԱՐԵՐՈՒՄ

Բագրատունյաց թագավորությունն իր տիրապետության տակ էր առել Արտաշիսյան հարստության ժամանակների Հայաստանի մեծագույն մասը։ Նրա պետական սահմանները համարյա համապատասխանում էին հայ ժողովրդի էթնիկական սահմաններին և, հասկանալի է, որ ընդգրկում էին նաև Արցախ աշխարհը։ Ճիշտ է, Առանշահիկ տոհմի պատմիչը փորձում է Արցախի իր սիրած իշխան Համամին ներկայացնել որպես Աշոտ Բագրատունու թագավորության կողքին ստեղծված մի նոր ու անկախ թագավորության ներկայացուցչի[1], սակայն մենք ժամանակի ուրիշ աղբյուրներից գիտենք, որ Համամի երկիրը (Արցախը և Ուտիքի մեծ մասը) գտնվում էր Աշոտ Բագրատունու թագավորության սահմաններում, և Համամն ընդունում էր Աշոտի գերագահությունը[2]։

Արաբական տիրապետության տևական մղձավանջից հետո Բագրատունյաց թագավորության շրջանը քաղաքական ու մշակութային վերելքի լայն հեռանկարներ կարող էր բացել հայ ժողովրդի համար։ Սակայն Արցախի (կամ այս ժամանակներում տարածված անունով՝ Խաչենի) և հարևան հայկական շրջանների համար այդ հեռանկարները մեծ մասամբ միայն հեռանկարներ էլ պիտի մնային, որովհետև, նախ, Աշոտ Բագրատունու հաջորդներին չհաջողվեց ստեղծված թագավորությունն օրըստօրե հզորացնել ու դարձնել օտարների ոտնձգությունների և գալիք արհավիրքների դեմ անսասան մի պատվար։ Ապա՝ հիշյալ շրջանները, Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանապահները լինելով, միշտ էլ ենթակա էին Ատրպատականի, Գանձակի ու մյուս մահմեդական պետական կազմավորումների պարբերական հարվածներին։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Բագրատունյաց՝ արդեն տրոհվող պետության պայմաններում, ավատական կենտրոնախույս տրամադրությունների շնորհիվ, Խաչենը ևս թողնվել էր իր բախտին, և նույնիսկ այս փոքրիկ իշխանությունն ինքը ցույց էր տալիս ավելի մանրանալու միտումներ։ Այս ամենի հետևանքը եղավ Ներքին Խաչենի իշխանության հիմքի վրա ստեղծված Փառիսոսի թագավորությունը։

Փառիսոսի թագավորությունը.— Աղբյուրները նվազ ու կրճատուր տեղեկություններ են հաղորդում Հայոց արևելից կողմանց վրա X դարում առաջացած և իր գոյությունը կարճ ժամանակ պահած այս փոքրիկ վարչա-քաղաքական միավորի մասին։ Ասողիկը, Կարսի Աբաս թագավորի մասին խոսելիս, հիշատակում է, որ նրա մայրն էր «բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր թագաւորացն Փառիսոսոյ Սենեքերիմայ և Գրիգորի...»[3]։ Նշանակում է՝ կար Փառիսոսի թագավորություն, և գահակալի դուստրը կամ, համենայն դեպս, թագավորներ Սենեքերիմի ու Գրիգորի քույրը դարձել էր Կարուց թագուհին՝ Մուշեղ թագավորի (962—984) կինը և Աբասի մայրը։

990 թ. Անիում գահ բարձրացած Գագիկ Բագրատունին, ըստ նույն Ասողիկի, տիրեց «յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ...»[4]։ Այսքանը պարզապես պետք է նշանակեր, որ Բագրատունի պայազատը վերստին համահայկական թագավորության հովանու տակ էր առել հիշյալ գավառները, որոնք ժամանակ առ ժամանակ անկախ դիրք էին բռնում, ջանալով տարածել իրենց տիրապետությունը հարևան հայկական հողերի վրա։

Բայց ի՞նչ էր իրենից ներկայացնում Փառիսոսի թագավորությունը, ե՞րբ ստեղծվեց, ինչո՞վ նշանավորեց իր գոյությունը և ե՞րբ վերացավ։ Անունն իսկ ասում է, որ այն բնագավառ է ունեցել Արցախի Փառնես կամ Փառիսոս գավառը, որը տարածված է եղել Շամքոր գետակի վերին ավազանում, Ղարաբաղյան լեռնաշղթայի լանջերով դեպի հյուսիս և արևմուտք, մինչև Շամքոր։

1 Կաղանկատուացի, էջ 383։

2 Յովհաննէս կաթողիկոս, գ. ԼԳ, Բ. Խալաթյան, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 25, СМОМПК, вып 29, էջ 33, 93—94, вып. 38, էջ 93։

3 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 198։

4 Անդ, էջ 256։

Փառիսոս էր կոչվում նաև իշխանանիստ-թագավորանիստը, ժամանակի նշանավոր բնակավայրերից մեկը, որը միշտ էլ հանդիսացել է նաև հոգևոր թեմի առաջնորդի նստավայրը[5]։ Վրաց մի ժամանակագիր 700-ական թվականներին վերաբերող դեպքերի կապակցությամբ մատնանշում է Փառիսոսը՝ որպես կարևոր աշխարհագրական կետ. վրաց զորքերը «ելին ընդ դուռն Փառիսոսոյ և փութով անցին ընդ Կուր գետ»[6]։ Անկասկած, այստեղ խոսքը ոչ թե Քուստ-ի Փառնես գավառի, այլ նրա կենտրոն Փառիսոսի մասին է։ Ընդունված է Փառիսոս քաղաքը տեղադրել այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Շամքոր գետակի վրա, Կալաքենդ գյուղի մոտ և նրա շրջակայքում[7]։

Աղվանից աշխարհի պատմությունը հավաստում է, որ Համամ-Գրիգորի թոռնորդի Հովհաննես-Սենեքերիմը թագավորություն է հիմնում Փառիսոսում՝ իր տիրապետության տակ ունենալով նաև Գարդմանքը և ուրիշ հողեր Ուտիքի գավառներից։ Պատմիչը Սենեքերիմի պապ Սահակ Սևադայի նվաճումներն այսպես է բնութագրում. «սա (Սահակ Սևադան—Բ. Ու.) առ հասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ (կարդալ՝ քուստ-ի Փառնեայ.— Բ. Ու.) գաւառաց, այլ և ավազակապետաց Զորոյգետոյն բովանդակ եղև իշխան»[8]։

Հովհաննես-Սենեքերիմի թագավորությունը սիրով ընդունում են Պարսից արքունիքը և բյուզանդական կայսեր ներկայացուցիչ Դավիթ Մագիստրոսը. «Թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք պատուէ և տայ նմա զթագ հօր իւրոյ և զնորին երիվարն»։ Իսկ կայսեր ներկայացուցիչը, որ «Յունացն էր Մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան և ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ և ի գովեստ աստուծայաջող առն այնորիկ...»[9]։ Նիկ. Ադոնցի քննությամբ պարզված է, որ «Հունաց Մագիստրոս չի նշանակում հույն մագիստրոս, այլ հունաց կողմից մագիստրոսության տիտղոս ստացած անձ։ Դավիթը վրական Բագրատունի-

5 Կաղանկատուացի, էջ 395—396։

6 «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Երևան, 1934, էջ 155։

7 «Արցախ», էջ 306—307, Երվանդ Լալայան, Գանձակի գավառ. «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 325, Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 88 ևն։

8 Կաղանկատուացի, էջ 389։

9 Կաղանկատուացի, էջ 390։

ներից է։ Մեր նյութին նայող ժամանակամիջոցում միայն մի Դավիթ կա մագիստրոսական տիտղոսով։ Ատրներսեհ թագավորի († 923) թոռնորդին... Դավիթ, որ հաջորդեց եղբորը 966(-ին)... սկզբում որպես մագիստրոս, հետագայում նաև կյուրապաղատ»[10]։

Պատմիչի մեծարանքը, որքան չափազանցված լինի, իր մեջ պարունակում է մի պարզ ճշմարտություն, որ Առանշահիկ Հովհաննես-Սենեքերիմը թագ է կրել՝ հիմք դնելով Փառիսոսի թագավորությանը։

Թագավորության ժամանակի հարցը կարելի է մոտավորապես պարզել Աղվանքի պատմության և Անանիա Մոկացի կաթողիկոսի հայտնի Թղթի պարունակած տեղեկությունների օգնությամբ։

958-ին Անանիա կաթողիկոսը Խաչեն եկավ և, ինչպես վերը տեսանք, նրան դիմավորողների մեջ էին Խաչենի Գրիգոր իշխանը, ինչպես նաև Սենեքերիմ իշխանաց-իշխանը։

Ասողիկի տեղեկությամբ՝ Անանիա Մոկացու ճանաչած Գրիգորն ու Սենեքերիմը եղբայրներ են եղել։ Ժամանակով նրանք համապատասխանում են Ասողիկի հիշատակած իրողությանը. Անանիա կաթողիկոսը Գրիգորին ու Սենեքերիմին տեսել է 958-ին։ Ըստ Ասողիկի՝ նրանց քույրն ամուսնացած էր Կարսի Մուշեղ թագավորի հետ, որը գահակալել է 962—984 թթ.։ Նրանց որդի Աբասը 984-ին ժառանգեց հոր գահը որպես հասուն մարդ ու պետական գործիչ։ Պետք է ճշգրտել Սենեքերիմի ու Գրիգորի իշխանապետական ոլորտները։ Երկու եղբայրներ չէին կարող միաժամանակ թագավորել Փառիսոսում։ Անհնար է, որ Ասողիկը երկու եղբայրների մասին խոսելիս չտար նրանց մի տիրույթի՝ Խաչենի անունը, ինչպես որ Անանիա կաթողիկոսն է Գրիգորին համարում Խաչենի իշխան, մյուսներին և հատկապես Սենեքերիմին հիշելով միայն տիտղոսներով, առանց նշելու նրանց իշխանության տակ գտնվող երկրամասերը։

Այսպես թե այնպես, Սենեքերիմը Փառիսոսի թագավորն էր X դարի կեսին։ Թագավորությունն ստեղծված էր, մնում էր այն պահելը, որ ամենադժվարն էր՝ X դարի երկրորդ կեսից սկսած։ Ճիշտ է, Փառիսոսի ու Խաչենի միասնությունը և նրանց տերերի ամենասերտ տոհմակցությունը պարբերաբար Բաղաց-Կապանում նստող թագավորների հետ՝ որոշակի ուժ կարող էին ներկայացնել հարևան ու ոչ հարևան նվաճողների դեմ, սակայն արևմուտքում

10 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 139—140։

մանը պետական միավորներ էին գոյացել, որոնք անվերջ ձգտում էին ընդլայնել իրենց տիրապետությունը Փառիսոսի տիրույթների հաշվին։ Հզորացող Վրաց թագավորությունը և հատկապես Անիի Բագրատունյաց իշխանները Փառիսոսին նայում էին ոչ բարեկամաբար ու առիթը բաց չէին թողնում նրա հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Այն վերացնելու նպատակով նրանք չէին խորշում օգտվել նույնիսկ Գանձակի օրբստօրե հզորացող մահմեդական ամիրայության ծառայությունից։ Ասողիկի հաղորդած տեղեկությամբ՝ Անիի թագավոր Գագիկ Բագրատունին և Գանձակի նորընծա ամիրա Փադլունն իրենց մեջ բաժանում են Փառիսոսը։ Այդ, իբր, տեղի է ունենում Սենեքերիմ և Գրիգոր եղբայրների մահվանից հետո. «Ի ՆՄԲ (1003) թուականին իշխանքն Փառիսոսոյ որ ի Հայկազեան ազանց՝ բաւեալ մինչև ցՍենեքերիմ և ցԳրիգոր՝ ըստ առեցան մահուամբ։ Ջորոց զաշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փատլուն ամիրայն Գանձակայ»[11]։

Վրաց ժամանակագրի տեղեկության համաձայն՝ Փադլունը հարկատու էր Հայոց ու Վրաց թագավորներին. իբր թե, Փադլունի զորացումի առաջն առնելու համար «առաքեաց Բագարատ՝ թագաւոր Ափխազաց, առ Գագիկ թագաւորն Հայոց՝ երթալ ընդ նմա ի վերայ Փատլայ ամիրային։ Եւ չոքան երկոքեան ի Գանձակ, և արարեալ ընդ հարկաւ՝ դարձան աւարաւ»[12]։

Հարկավ Սենեքերիմի ու Գրիգորի մահվամբ անմիջապես չբաժանվեց Փառիսոսի թագավորությունը։ Ասողիկը հավանաբար շփոթում է, և ավելի ճիշտ է տեղացի հեղինակը՝ Վարդան Արևելցին, որի հանգամանալից տեղեկություններով՝ Փառիսոսի անկումը տեղի ունեցավ Գրիգորի որդի Փիլիպեի օրոք և Փատլունի ձեռքով։

Վարդան Վարդապետը պատմում է, որ Գրիգորի մահից հետո նրա որդի Փիլիպեն բարեկամական այցով («սիրոյ աղագաւ») գնում է Փադլունի մոտ։ Սա բռնում, կալանավորում է Փիլիպեին «և առնու զնմանէ զՇաշուաղ և զՇօթս»[13]։ «Շաշուաղ»-ը, հավանաբար, Շողակն է կամ Շողուագը, իսկ «Շօթք»-ը՝ Սոդքը։ Ըստ Վարդանի՝ այս դեպքերը պետք է կատարված լինեին 1044 թվականից հետո[14]։

Նիկ. Ադոնցը պատմիչի հետ համաձայն չէ այս ժամանակի հարցում։ Գիտնականը գտնում է, որ սա «շփոթության տեղիք է տալիս», և ահա թե ինչու. «Փատլունը զորանալով, ըստ պատմագրի, «զոռ դնէր ընդ Գագիկա թագաւորին Ջորագետոյ և ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց»։— Վարդան Վարդապետի այս տեղեկությունը կրկնելուց հետո Ադոնցը հարց է տալիս՝ «Ովքե՞ր են այս անձերը։ Վրաց տեղեկությամբ (Բրոսե, Ա, 299) Փատլուն ույժ առնելով սկսեց ապատակել Հերեթ և Կախեթ։ Բագարատ Գ թագավորը (980—1014) բարկացավ և առաջարկեց Գագիկ Շահնշահին (989—1021) գնալ միասին սանձելու հանդուգն իշխանին։ Գնացին և պաշարեցին Շամքոր, և Փատլուն ստիպված խնդրեց խաղաղություն։ Այստեղից հետևում է, որ Վարդանի հիշած Բագարատ և Գագիկ Ջորագետցին Բագրատ Գ և Գագիկ Շահնշահն են։ Կյուրիկեն հավանորեն Կախեթի իշխան մեծ Կյուրիկեն է (1010—1039)։ Անցքը պետք է տեղի ունեցած լինի, ուրեմն, 1010—1014 թվին և ոչ մի կերպ 1048-ից հետո, երբ Փատլուն մեռած էր շատոնց։ Բագարատ Դ (1027—1072) ևս ընդհարում ունեցավ Փատլունի հետ մեծ Կյուրիկեի մահից անմիջապես հետո և դաշնակցությամբ Դավիթ Անհողինի որդու՝ Գագիկի հետ (Բրոսսե, Ա, 317)։ Սակայն այստեղ հիշված Փատլուն չի կարող վերոհիշյալ անձը լինել, որ մեռել էր 1039, և որովհետև Կախեթի մեծ Կյուրիկեն ևս մեռել էր 1039-ին, ուրեմն անցքը վերաբերում է 1039—1040 թվականներին։ Վարդան, հավանորեն, ձուլած է Փատլունի և նրա հաջորդի օրով կատարված միանման պատերազմական գործողությունները»[15]։

Նույն տեղում Ն. Ադոնցն առաջարկում է Վարդան Վարդապետի պատմության ՇԶ դրվագը, որ պատմում է վերոհիշյալ անցքը, կարդալ որպես ՇԲ դրվագի շարունակություն։ Փորձեցինք, սակայն ոչինչ չստացվեց, որովհետև ՇԲ-ում Աբխազաց և Վրաց թագավորը Գորգի է[16], իսկ Գագիկ Հայոց թագավորը 1020-ին մեռնում է՝ «տուեալ թագաւորութիւնն երից որդւոց իւրոց՝ Յովանէսի, Աբասայ և Աշոտոյ»[17]։

---

11 Ասողիկ, էջ 283։

12 «Վրաց աղբյուրները», Ա, էջ 203—204։

Մելիքսեթ-Բեկի թարգմանության մեջ (անդ, էջ 203—204) «արարեալ ընդ հարկաւ դարձան աւարաւ»-ի համանիշ նախադասությունը չկա։ Հնարավոր է, որ նախորդ թարգմանիչն է ավելացրել, մանավանդ, որ այս պարագան չի հաստատվում հայկական աղբյուրներով։

13 Վարդան Վարդապետ, էջ 100։

14 Վարդան Վարդապետ, էջ 100։

15 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 138, ծան. № 4։

16 Վարդան Վարդապետ, էջ 92—93։

17 Անդ, էջ 92։

Հնարավոր է, որ պատմիչը 1030 թ. մեռած Փադլունին նույնացրել է նրա հաջորդի հետ՝ նկատի առնելով, որ Գանձակում հաստատված այս տոհմն արդեն կոչվում էր Փադլունյան, սերված իրանական-քրդական Շեդդադյաններից[18]։ Սակայն ժամանակի առումով նրա տված տեղեկությունը չի կարելի սխալ համարել, քանի որ խոսում է 1044-ից հետո կատարված դեպքի մասին և այս տարիներին իսկապես Վրաց թագավորն էր Բագարատ Դ, որ գահակալել է 1027—1072 թթ., իսկ Կախեթում Դավիթ Անհողինին գահի վրա հաջորդել էր նրա որդի Գագիկը[19], Զորագետում էլ թագավոր էր Դավիթ Անհողինի ավագ որդի Կյուրիկեն[20]։

Նիկ. Ադոնցի վարկածի դեմ խոսող մի վկայություն ևս. Փադլունյան ամիրայության անանուն արաբ ժամանակագիրը Աբխազաց թագավորի (ուրեմն՝ նաև Անիի Բագրատունի թագավորի) կողմից Շամքորի պաշարումը դնում է 1026 թվականի տակ[21]։ Հետևապես 1010—1014 թթ. մասին խոսք լինել չի կարող, և Վարդան Վարդապետի խոսքը չէր կարող վերաբերել ո՛չ Վրաց Բագրատ Գ թագավորին, որ մահացել է 1014 թ., ո՛չ էլ Հայոց շահնշահ Գագիկին, որի մահվան տարին 1020 թվականն է։

Երբ այս բոլոր տվյալներով ստուգվում է Վարդան պատմիչի տեղեկությունը, պարզ է, որ հարկ չկա այն վերագրել նախընթաց որևէ տասնամյակի (1010—1014), մանավանդ, որ այս վարկածի համաձայն, պետք է, իբր թե, Փադլունի լծի տակ լիներ Գագիկ շահնշահը (Գագիկ Ա Բագրատունի՝ գահակալած Անիում 990—1020 թթ.), մինչդեռ Վարդանի խոսքը շատ կոնկրետ հասցե ունի՝ «գոռ դնէ Գագկա թագաւորին Զորագետոյ»։ Այս Գագիկ Զորագետ-

18 Անդ, էջ 106, հմմտ. նաև՝ Е. А. Пахомов, Арабские и Иранские феодалы в Азербайджане X—XI вв. СПб., «Памяти Н. Я. Марра», стр. 418—419. Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-Բաշիի 11—12-րդ դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին. «Բանբեր մատենադարանի», № 6, 1962, էջ 479—480։

19 Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Ա, էջ 250։

20 Ուռհայեցի, էջ 145։ Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 58։

21 Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-Բաշիի 11—12-րդ դդ. անանուն աղբյուրը, էջ 480—481

Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ Մունաջջիմ-Բաշիի անանուն աղբյուրի ու Վարդան Վարդապետի տեղեկությունները Գանձակի Փադլունյանների մասին՝ համապատասխանում են իրար։ Ուրեմն և նրանց հավաստիությունը դառնում է առավել աներկբայելի (Ա. Տեր-Ղևոնդյան, նույն տեղում, էջ 472)։

ցին էլ, ինչպես վերն ասացինք, գահի վրա էր իր հոր՝ Դավիթ Անհողինի մահից (1048) հետո[22], գահակից լինելով ավագ եղբայր Կյուրիկեին և թագավորելով 1048—1058 թթ.[23]։

Պարզ է, որ այս բոլոր փաստերը խոսում են Վարդան Վարդապետի տեղեկության իսկության օգտին, հետևապես, Գանձակի ամիրա Փադլունը, Արցախի հյուսիսային գավառները նվաճելուց հետո, Զորագետի թագավոր Գագիկի, նրա ավագ եղբայր Կյուրիկեի ու Վրաց Բագարատ Դ թագավորի վրա հարձակվել ու նրանց հարկատու է դարձրել 1048 թ. հետո, որովհետև ըստ պատմիչի՝ Փադլունը հարկատու էր դարձրել Զորագետի Գագիկ թագավորին, որի գահակալության սկիզբն է 1048, և ոչ ուշ, քան 1072, որովհետև սա էլ դեպքերի մասնակից Վրաց թագավոր Բագարատ Դ-ի մահվան տարին է։

Ուրեմն, Փառիսոսի թագավորությունը, գոյատևելով շուրջ մեկ դար, խորտակվեց 1048 և 1072 թվականների միջև։

Վարդան Վարդապետը, որ սկզբում Գանձակի առաջին Փադլունյանների գալուստը միամտորեն նկարագրել էր որպես խեղճ ու անճար մի գերդաստանի գաղթ, հետագայում ցավով պատմում է Հայոց արևելից կողմանց տարածքի վրա հայտնված այս նոր տիրակալի բռնագրավումները և հայոց երկրին հասցրած չարիքները։ Փադլունյան հարստությունը զորանալով, Փառիսոսից բացի, տիրել էր համարյա ամբողջ Հյուսիս-արևելյան Հայաստանին, Դվինին ու շրջականերին (ինչպես նաև Վրաստանին) և «եդ հարկս ի վերայ Հայոց երեքհարիւր հազար դրամ»[24]։

Փադլունյան տոհմի Գանձակի ճյուղն առաջին մահմեդական վարչական ինքնուրույն միավորն էր, որ հաստատվելով Ուտիքի կենտրոնում, սեպի պես խրվեց Հայոց արևելից կողմանց միասնության մեջ և դարձավ տեղական հինավուրց իշխանությունների ախոյանն ու նրանց մի մասի ոչնչացման պատճառը։

Փադլունյան տոհմի, ինչպես և նրանից հետո եկած մահմեդական տիրակալների առաջին խնդիրն էր Գանձակն ու շրջակայքը վերջնականապես խլել բնիկ տերերից, որոնք Առանշահիկ հարբստության ներկայացուցիչներն էին։ Եվ եթե առաջին շրջանում Առանշահիկներն այստեղ հպատակություն էին հայտնել՝ իրենց

22 Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Ա, էջ 205։

23 Անդ։ Հմմտ. Մովսեսյան, Լոռի Կյուրիկյան թագավորությունը, էջ 57, 65։

24 Վարդան Վարդապետ, էջ 100—101։

վրա առնելով եկվոր բռնակալների իշխանությունը, ապա վերջիններս, հիմնավորվելով Գանձակում, հետագայում նրանց չէին հանդուրժում նույնիսկ որպես իրենց ենթակա իշխանավորների։ Եվ Առանշահիկներն ստիպված էին լինում հեռանալ իրենց տիրույթներից, ապավինել Արցախին ու Սյունիքին, Ուտիքի լեռնային գավառներին ու Հայաստանի մյուս ապահով նահանգներին։ Նրանցից շատերը, իրենց գույքն ու գերդաստանն առած, բախտ էին որոնում օտար ափերում։ Այդպիսիներից էր, օրինակ, Ուտիքի Առանշահիկ տոհմի ներկայացուցիչ Օշինը, որը հեռանալով հայրենի Ուտիքից՝ դարձավ Կիլիկյան հայկական իշխանության հիմնադիրներից մեկը[25]։

Օշինի հաջորդներից էր Հեթում Ա-ը, որի անունից էլ նրանց տոհմը կոչվում էր Հեթումյան[26]։

Օշին իշխանի ժառանգական հայրենիքն է եղել Մայրեաց ջուրքը՝ «հանդէպ Գանձակայ»։ Իսկ Գանձակը շրջակայքի հետ միասին՝ Ուտիքի Շակաշեն կամ Արշակաշեն գավառն էր[27]։ Հավանաբար XI—XII դարերում Փագլունյաններն անընդմեջ նեղում էին գավառի հայերին, որոնք այլ ելք չգտնելով՝ մեկը մյուսի ետևից թողնում էին հայրենի գավառը։ Բաղաց Կապանի Վահանավանքում 1084 թ. թաղվել է Մարեջրեցի Սողոմոնը[28]։ Մի երրորդ Մարեջրեցու տապանագիր էլ, հայտնաբերված դարձյալ Վահանավանքից, վերջերս հրապարակել է հնագետ Գր. Գրիգորյանը. «Հայոց թ. ՇԻԸ (1076) զԲուրդիկ Մարեջրեցի յաղաւթս յիշեցէք աղաչեմք»[29]։

25 Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 117։

Պատմագիտության մեջ ընդունված մի թյուրիմացությամբ ցարդ Օշինին համարում են Արցախի տեր (Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, Գ, էջ 995, Ալիշան, Նետողք ի Հայս. Յուշիկք հայրենեաց Հայոց, Բ, Վենետիկ, 1870, էջ 431. Г. Сукиасян, История Киликийского армянского государства и права, Е., 1969, էջ 21։ Ս. Պողոսյանը մեկ նրան համարում է «Արցախի իշխաններից» (Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Բ, էջ 112), մեկ էլ՝ «Գանձակից եկած իշխան» (անդ, էջ 113)։ Այստեղ պատմաբան-հետազոտողը մոտավորապես կրկնել է Ալիշանի սխալ կարծիքը Օշինի՝ Գանձակից ելնելու տարեթվի մասին. իբր թե, այդ կատարվել է 1073 թ. (անդ, էջ 112, Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 46-ում՝ 1071 թ.), մինչդեռ Սամուել Անեցին՝ այս առթիվ տեղեկություն հաղորդող միակ աղբյուրը, տարեթիվ է համարում ՇՀԲ (1123)-ը։

26 Ալիշան, Սիսուան, էջ 71։

27 Կաղանկատուացի, էջ 378, «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 109։

28 «Դիվան հայ վիմագրության», Բ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 139։

29 Գր. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները. «Լրաբեր», 1970, № 10, էջ 89։

Մոտավորապես նույն շրջանին է վերաբերում նաև Աղվանից կաթողիկոս Ստեփանոսի անթվական տապանագիրը՝ Վահանավանքում պահպանվող մի շիրմաքարի վրա. «Ես տր Ստեփանոս՝ Աղվանից կաթողիկոս, նեղեալ ի տաճկաց եկա հանգեալ ածասէր թագուհեայ Շահանդխտին եւ Կատսին շինած եկեղեցոյս դաւթիս...»[30]։

XI—XII դարերում Աղվանից կաթողիկոսական աթոռին բազմել են երեք Ստեփաննոսներ, որոնցից երկուսի գահակալության տարիները հայտնի են. մեկը՝ 1122—1131, մյուսը՝ 1155—1195 թթ.[31]։ Տապանագրի տիրոջ ժամանակը պիտի պարզել այլ հաշվումներով։

Շահանդուխտն ու Կատան հիշյալ եկեղեցին կառուցել են 1086 թ., Շահանդուխտի եղբայր Խաչենցի Սենեքերիմի թագավորության օրերում։ Սենեքերիմը զոհվել է 1096 թվականին։ Ստ. Օրբելյանը, խոսելով այս երեքի մասին, նշում է նաև, թե նրանց «յաւուրս ... եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից տէր Ստեփաննոս և անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանդեաւ ի տեղւոջն, և եդաւ ի նըման սրբարանի»[32]։ Նշանակում է՝ Ստեփաննոսը, «նեղեալ ի տաճկաց», Բաղաց Կապան է փոխադրվել 1086—1096 թթ. միջև, ապա այնտեղ «բնակեալ աւուրս ինչ», մահացել[33]։

Եվ այսպես, Գանձակի նոր տիրակալներից նեղվում էին ոչ միայն աշխարհիկ հայ իշխանավորները, այլև երկրամասի հոգևոր իշխանությունը, որը, ինչպես հետո կտեսնենք, ենթարկվում է հալածանքի, ծաղրուծանակի և ի վերջո ստիպված է լինում բնավորվել Արցախում։

Կրկին դառնալով Փառիսոսի թագավորության անկման հարցին, փորձենք պարզել այդ թագավորության կարճակեցության բուն պատճառը։ Ո՞րն էր այն։ Հարկա՛վ նրա տկարությունը։ Ի՞նչ կարող էր անել մի փոքրիկ գավառապետություն,— թեկուզ և զարդարված թագավորության շքեղ տիտղոսով, —ավատական-նվաճողական տրամադրություններով վառվող մեծ ու փոքր տերությունների ճամփաբաժանի վրա, մի այնպիսի անպաշտպան դիր-

30 «Դիվան հայ վիմագրության», Բ, էջ օգ։

31 Տե՛ս գրքի վերջում զետեղված կաթողիկոսաշար ցանկը։

32 Օրբէլեան, էջ 241։

33 Նշանակում է՝ սխալ է Աղվանքի կաթողիկոսաշարի հրապարակված տարբերակը, որի համաձայն՝ Ստեփաննոսը պետք է գահակալած լինի մինչև 1079 թ., այսինքն՝ Վահանավանքի կառուցումից (1086) առաջ։

քում, ինչպիսին երեք կողմերից բաց ու անարգել Փառիսոս դարվառն էր։

Լեոն այսպես է գնահատել Փառիսոսի և առհասարակ համանման վարչական կազմավորումների դերը. «Այս բոլոր մանրիկ պետությունները մի առանձին աչքի ընկնող դեր չէին կատարում և չէին էլ կարող կատարել։ Նրանք բոլորն արդյունք էին այն ընդհանուր անիշխանական դրության, որ տարածել էր արևմտյան Ասիայում թուլացած, անվանապես միայն գոյություն ունեցող խալիֆաթը։ Այդ թագավորությունները մեծ մասամբ միմիայն անուններ են թողել իրենցից հետո, այն էլ ոչ թե պատմության էջերում, այլ հաճախ միմիայն գերեզմանաքարերի վրա և վիմական արձանագրությունների մեջ»[34]։

Մեզ թվում է՝ Փառիսոսի թագավորության մասին խիստ է ասված։

Նախ, այս թագավորությունը ո՛չ ինքնաբուս վարչական կազմավորում էր, ո՛չ էլ անհետ կորավ՝ իր անունը թողնելով «միմիայն գերեզմանաքարերի վրա»[35]։ Այն Խաչենի հզոր իշխանության մի ոստն էր՝ վերընձյուղած հայրենի հողի վրա։ Ճիշտ է, եկվոր տիրակալի բռնությամբ և ո՛չ առանց հարևան ազգակից իշխանավորների օժանդակության, վերացավ այդ թագավորությունը, սակայն նրա բունը մնաց ավանդական Խաչենում և երբեք տեղի չտվեց ոչ մի ուժի առաջ։

Մյուս կողմից էլ, անարդար կլինի անտեսել մշակութային այն եռուն կյանքը, որ ստեղծվեց որպես անմիջական արտահայտություն Փառիսոսի քաղաքական վերելքի և չմարեց թագավորության կործանման հետ։ Սահակ Սևադայի մշակութային ու լուսավորական գործունեության մասին մեծ գովեստով էր խոսում Աղվանքի պատմիչը։ Այդ Սևադա իշխանն էր, որ մեծապես հովանավորում էր գրականությունը և ուսումնական գործը։

Պատահական չէ, որ հետազոտողները հենց Սահակ Սևադայի բորբոքած մշակութային կյանքի արդասիք են համարում հայ բազմադարյան մատենագրության ամենաարժեքավոր գոհարներից մեկը՝ Մովսես Դասխուրանցու «Աղվանից աշխարհի պատմությունը»։ Հայագիտության մեջ նույնիսկ այն կարծիքն է հայտնվել, թե «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը Սևադայի պալատական պատմիչն է եղել կամ, ամեն պարագայի, այս գրասեր իշխանի հովանավորած մտավորականներից մեկը[36]։ Իսկ Ներսես Ակինյանը ենթադրում էր, թե Աղվանքի պատմության հեղինակը նույն այդ պատմության ներկայացրած կաթողիկոսաշարի վերջին անունն է՝ «Տէր Մովսէս... յառաջնորդութենէն Փառիսոսոյ վանաց»[37]։

«Անշուշտ, պատահական զուգադիպություն մը չէ, որ վերջին կաթողիկոսը և պատմության հեղինակը Մովսես կկոչվին։ Այս Մովսես նախ եղած է Փառիսոսի վանքին վանական և ապա արժանացած է կաթողիկոսության աթոռի վրա բազմել, ուստի վաստակավոր մին էր, շատերու մեջեն ընտրյալ մը։ Իբրև այդպիսի կարող էր աշխատասիրել «Աղվանից պատմությունը»[38]։

Սևադայի փառիսոսյան ավանդները չմեռան նրա հետ, այլ արմատավորվեցին ու տարածվեցին, ինչպես բուն Փառիսոսում, այնպես էլ բոլոր այն վայրերում, ուր բախտի բերումով գործում էին այդ մեծ իշխանի ժառանգները։ Հիշենք նրա դուստր Շահանդուխտի որդի Սենեքերիմի և վերջինիս զավակների գործունեությունը Բաղաց Կապանում։

---

34 Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 613։

35 Մեծ գիտնականը մի տեղ էլ այսպես է գրել Փառիսոսի թագավորության մասին. «1003 թվականին բացվում էր Փառիսոսի ժառանգության հարցը։ Մեռան Սենեքերիմ և Գրիգոր թագավորները, և, այսպիսով, սպառվում էր հին հայկական իշխանությունը» («Հայոց պատմություն», հատ. Բ, էջ 617)։

36 Ն. Ադոնց, Խորենացիական հարցն ու հ. Վարդան Հացունի. «Անահիտ», 1938, № 1—3, էջ 87։

37 Ըստ Աղվանքի պատմության կաթողիկոսաշարի տվյալների՝ Մովսեսը գահակալել է 992—998 թվականներին։ Սակայն Ն. Ակինյանը նրան գահակալած է համարում ավելի ուշ (1002—1008), Այդ ժամանակագրությանը հարմարեցնելու համար Ներսես Ակինյանը Հովհաննես Սենեքերիմին էլ թագավոր է պսակել տալիս 1004/5-ին (Ն. Ակինյան, Մովսէս Դասխուրանցի, էջ 50)։ Մինչդեռ վերը մենք տեսանք, որ Հովհաննես Սենեքերիմը Փառիսոսի թագավոր էր արդեն X դ. կեսին, և Ստեփանոս Ասողիկն էլ, որ իր երկն ավարտել է 1004-ին (Ստեփանոս Ասողիկ, Պատմություն տիեզերական, էջ 285։ Համեմատիր՝ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա, էջ 508), Կարսի Աբաս թագավորի մասին (գահակալել է 984-ից) խոսելիս հիշում է, որ նա Փառիսոսի Սենեքերիմ թագավորի քեռորդին էր։ Հետևաբար, Սենեքերիմը թագավորած պետք է լինի այս բոլորից առաջ։

Այսքանը չի խանգարում, որպեսզի մասամբ ընդունելի համարվի Ն. Ակինյանի կարծիքը Մովսես Դասխուրանցու և Փառիսոսի Մովսես կաթողիկոսի նույնության մասին։ Ցնայած գիտենք, որ Աղվանքի պատմության շարադրանքը հիմնականում ավարտված է եղել Անանիա Մոկացու Արցախ այցելած տարին (958-ին)։ Ամենից հավանականն այն է, որ Մովսես կաթողիկոսը միայն կարող էր խմբագրած լինել Աղվանքի պատմությունը և հավելած կաթողիկոսաշարին ու իշխանության ներկայացուցիչներին վերաբերող վերջին տեղեկությունները։

38 Ն. Ակինյան, Մովսէս Դասխուրանցի, էջ 49։

Փառիսոսի թագավորության շրջանի գրական ու լուսավորական կյանքի բարձր մակարդակը լավ պատկերացնելու համար չենք կարող չհիշել Հովհաննես Սարկավագին ու նրա միջավայրը։ Փառիսոսում է ծնվել մեծ փիլիսոփա, պատմիչ ու մեկնաբան Հովհաննես Իմաստասերը։ Նրա ծնունդը, որ տեղի է ունեցել մոտավորապես 1045—1050 թթ. միջում, համընկել է հայրենի թագավորության վախճանի հետ։ Սակայն մանկության օրերին էլ Հովհաննեսը բախտ ունեցավ կրթվելու և դաստիարակվելու մի բարեկիրթ միջավայրում, որի մասին ինքը հետագայում գրել է երախտագիտությամբ ու հպարտությամբ. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ առնել քան ըստ բնութեան տածիւք խնամս յառ մանկունս, որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան»[39]։

Վարդան Վարդապետը լավ է բնութագրել Հովհաննես Սարկավագի միջոցով Փառիսոսից բխած լուսո այն հաղորդումը, որի ճառագայթները չպետք է մարեին երկար ժամանակ. «Յովհաննէս որ և Սարկաւագ ի գաւառէն Փառիսոսոյ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչև ցարդ ի բանս իւր...»[40]։

X դ. սկզբի Խաչենի իշխանության տոհմացանկի մի հարցի շուրջը։ Սահակ Սևադայի իշխանության և Թագրատունյաց թագավորության փոխհարաբերությունը։ Սևադայի ժառանգները.— Վերը տեսանք, որ Խաչենի իշխանության ընի վրա X դարում գոյացած վարչական միավորներից մեկն էլ Սահակ Սևադայի իշխանությունն էր քուստ-ի Փառնեսում և հարակից Զորոգետ ու Գարդմանք գավառներում։ Անհրաժեշտ ենք համարում քննել նաև այս իշխանության հետ կապված հարցերը, քանի որ մեր պատմագիտության մեջ նրանք հաճախ միակողմանի բացատրության են արժանանում։

Գրիգոր-Համամի որդի Սահակ Սևադայի մասին պահպանվել են մատենագրական բավական տեղեկություններ, որոնք չեն հակասում իրար և Սևադային ներկայացնում են որպես քաջ ու բարեպաշտ իշխանի, որը, հորից ժառանգելով քուստ-ի Փառնեսի (Փառիսոսի) իշխանությունը, իր տիրապետությունն է տարածում նաև Խաչեն-Արցախի հարևան Ուտիք նահանգի Գարդման ու Զորոգետ գավառների վրա[41]։

Մ. Դասխուրանցին Համամ-Գրիգորի որդի Սահակ Սևադայի ժառանգներին թվարկում է հետևյալ կարգով. «Սևադայ ծնանի զերկուս որդիս՝ զԳրիգոր և զԴաւիթ. Գրիգոր ծնանի զՍևադայ, որոյ զերկուս որդիս՝ զԳրիգոր և զԱտրներսեհ։ Իշխան անուն ծնանի որդիս չորս՝ զՅովհաննէս, զԳրիգոր, զԱտրներսեհ, զՓիլիպպէ»[42]։

Այս ամբողջ շարքը չի հաստատվում արժանահավատ աղբյուրներով։ Մենք կարծում ենք՝ կամ շարահարողը, ձեռքի տակ ունենալով սոսկ մատենագրական կցկտուր տեղեկություններ, աղավաղել է Առանշահիկների տոհմաշղթայի այս հատվածը, կամ էլ նրա գրածը հետագա գրչական աղավաղումների է ենթարկվել։

Ճշմարտությունը վերականգնելու միակ հիմքը Հովհաննես կաթողիկոսի պատմությունն է՝ գրված ժամանակակից մի հեղինակի ձեռքով, որը սերտ առնչություն է ունեցել Արցախ-Խաչենի տերերի ու նրանց ճյուղերի հետ։ Հովհաննես կաթողիկոսը պատմում է, որ IX դ. վերջում Համամ Արևելից իշխանը (Գրիգոր) փրկագին վճարելով ազատել է Գևորգ Բ կաթողիկոսին[43]։ Համամ-Գրիգորն ունեցել է հինգ որդի, որոնցից մեկն էր և Սահակ Սևադան՝ Քուստ-ի Փառնեսի ու Զորոգետի տերը։

Վերը տեսանք, որ Հովհաննես կաթողիկոսը, երբ արաբներից հալածական էր, ապաստան գտավ հենց այս Սահակ Սևադայի և նրա եղբայր Ատրներսեհի մոտ. «Եւ վասն զի չարացն գերչաց չար հէնք դեռևս սաստկապէս մածեալ ունէր զաշխարհս մեր, սակայնորիկ և ես ըստ տէրունական հրամանի հալածեալ շրջեցայ ի քաղաքէ ի քաղաք ի կողմանս արևելեաց Աղուանից, առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ՝ որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու, զի և նոքա ի ժողովրդենէ մերմէ և խաշն տրոտի մերոյ էին. և ի նոցանէն ոչինչ սակաւ ծախս ոռնկաց ըստ իրա-

39 Տե՛ս «Բազմավէպ», 1847, էջ 215։ Ղևոնդ Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, Բ, Վենետիկ, 1869, էջ 284։

40 Վարդան Վարդապետ, էջ 121։

Հովհաննես Սարկավագի կյանքի և հարուստ մատենագրական ժառանգության մասին ընդարձակ տե՛ս Ղ. Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, Բ, էջ 279—305, Հ. Ոսկյան, Հովհաննես Սարկավագ. Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 1—64, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, էջ 43—61, Աշ. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956 և այլն։

41 Կաղանկատուացի, էջ 389։

42 Կաղանկատուացի, Բ, Փարիզ, էջ 70, ռուս. հրատ., СПб., 1861, էջ 279. Վ. Առաքելյանի կազմած բնագիրը, էջ 485։ 1912 թ. հրատարակության մեջ (էջ 390) Սևադա Իշխանի երկու որդին են հիշված։

43 Յովհաննէս կաթողիկոս, էջ 214։

քանչիւրումն սակի կարգէր մեզ պարտապանաբար՝ վճարելով զպէտս ամենեցունց»[44]։

Սա արդեն X դ. սկիզբն էր, Հովհաննեսի կաթողիկոսական գավազան ստանալուց հետո[45]։

Հովհաննես կաթողիկոսի մոտ Սահակ Սևադան ու Ատրներսեհն են եղբայրներ, իսկ Մ. Դասխուրանցու ցանկում՝ Սահակ Սևադայի թոռ (Գրիգորի որդի) Սևադա Իշխանն ու Ատրներսեհը։ Արդյոք Դասխուրանցին երկու սերունդ ավելի՞ չի գրել տոհմաշղթայի մեջ, որից և ստացվել են ավելորդ օղակներ, որոնց մասին աղբյուրները չեն ասում ոչինչ։ Կարծում ենք՝ «Գրիգոր, Դավիթ, Գրիգորի որդի Սևադա Իշխան...» մասն ավելորդ չէ։ Ուրեմն, Սահակ Սևադա ու Սևադա Իշխան անունները տարբեր են։ Այն ժամանակ տոհմաբանությունը կհամապատասխանի Հովհաննես կաթողիկոսի տեղեկություններին։ Սահակ Սևադայի եղբայրն է, անշուշտ, Ատրներսեհ թագավորը և հետագա պատմական իրողությունները կհարմարվեն տոհմացանկին Սևադան կունենա Գրիգոր, Հովհաննես (Սենեքերիմ), Ատրներսեհ և Փիլիպպե անուններով որդիներ, որոնք իսկապես հիշվում են X դ. կեսի իրադարձությունների առթիվ[46]։ Այստեղ միակ հակասող հանգամանքը Գրիգորի պարագան է։ Հովհաննես կաթողիկոսի տեղեկությամբ՝ նա կուրացվել է Աշոտ Երկաթի կողմից[47]։ Մինչդեռ Անանիա Մոկացուն 948 թ. (առաջին այցին) նա Խաչենում դիմավորում էր որպես երկրամասի ծերացած տերը։ Եթե Անանիա Մոկացու լուությունը նրա կույր լինելու մասին՝ համարենք քաղաքավարական պատշաճավորություն, կարգարացվի և այս պարագան։ Մանավանդ, որ դրան օժանդակում են մնացած մանրամասները։ Տոհմացանկում Գրիգոր մեծ իշխանի եղբայրն է Հովհաննեսը, «որ և Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց ուշն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն»։ Թագավորություն է հիմնում, արժանանալով Պարսից արքայի ու բյուզանդական մագիստրոսության հովանավորությանը[48]։ Համարյա համանման տեղեկություններ է հաղորդում և Անանիա Մոկացին.

44 Յովհաննէս կաթողիկոս, էջ 273—274։

45 Նրա կաթողիկոսության սկիզբն է 897 թ.։ Մահացել է 925 և 930 թթ. մեջ (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ 435)։

46 Տե՛ս «Արարատ», 1897, էջ 133։

47 Յովհաննէս կաթողիկոս, էջ 392։

48 Կաղանկատուացի, էջ 390։

«...մի ոմն յիշխանացն Աղուանից՝ Սենեքերիմ անուն... որ զենթ սուղ ինչ ժամանակի եղև պատճառ լուսաւորութեան աշխարհին Աղուանից և քարոզ ճշմարտութեան...»[49]։ Անանիա Մոկացին Արցախ էր եկել կենտրոնախույս տրամադրությունները վերացնելու, այդ պատճառով էլ տեղական թագավորություն չի ճանաչում Բագրատունյաց կողքին։ Նա Սենեքերիմին հիշում է իշխանաց իշխանի տիտղոսով («...Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի»)[50]։

* * *

Սահակ Սևադան հորից ժառանգել էր մի անհանգիստ սեր կրթության և առհասարակ դպրության նկատմամբ. նա գրի ու գրագիտության կարկանության հովանավոր էր «և դպրապետս ի տան իւրում կարգեաց»[51]։ Պատահական չէ, որ Բագրատունյաց միասնական պետության դեմ Սևադայի կենտրոնախույս ձգտումները չխրախուսող Հովհաննես կաթողիկոսն անգամ նրա մասին խոսում է մեծ պատկառանքով, նրան կոչում «հոյակապ իշխան մեծ Սահակ», որ ուներ «զիմաստութիւնն իւր մեծ»[52]։ Այս հիացմունքը բաժանում է նաև Ստեփաննոս Օրբելյանը, երբ հիշում է Սահակ Սևադայի դուստր Շահանդուխտի գործունեությունը Սյունիքում։

Խաչենի Գրիգոր մեծ իշխանի երկու որդիների իշխանությունն այն ժամանակ տարածված էր Ուտիքի ու նրա անմիջական հարևանվան Հերեթ-Կամբեճանի վրա։ Վերջինիս սահմանը հյուսիսում հասնում էր մինչև Կովկասյան լեռնաշղթան, և, ինչպես արդեն նշվել է մեր բանասիրության մեջ[53], ոչ միայն այս իշխանության տերերն էին հայ, այլև բնակչությունը. «նոքա ի ժողովրդենէ մերմէ և խաշն արօտի մերոյ էին», այսինքն՝ մեր ժողովրդից և մեր հոտից էին, մեր ազգին ու դավանանքին էին պատկանում։

Ուշագրավ է, որ Սահակ Սևադայի մասին ամենաընդարձակ տեղեկություններ հաղորդող Հովհաննես կաթողիկոսը Սևադային չի ներկայացնում որպես հայկական թագավորական միասնության մի սովորական հակառակորդի։ Նրա պատմությունից մեր առաջ հառնում է բարդ հոգեբանության տեր մի մարդ, որի մեջ պետա-

49 «Արարատ», 1897, էջ 133։

50 Անդ, էջ 144։

51 Կաղանկատուացի, էջ 389։

52 Յովհաննէս կաթողիկոս, էջ 383։

53 Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 58։

կան մտածողությունը բախվում է ազգային ավանդների, մարդկայնության առողջ նորմերի հետ, և դրանից տուժում է առաջինը։

Խաչենի և Ուտիքի իշխանն իր դստերերին կնության էր տվել ժամանակի հայկական կյանքում վեհորեն բարձրացած երկու խոշոր տոհմերի ներկայացուցիչներին. Շահանդուխտը կինն էր Սյունյաց գահերեց իշխան Սմբատի, որը շուտով պիտի թագավորություն հիմներ Բաղաց Կապանում, իսկ մյուս դուստրը կնության էր գնացել Բագրատունի Աշոտ Բ-ին (Երկաթ), որը Հայոց գահի ժառանգորդն էր։ Չի կարելի կասկածել, որ Սահակ Սևադայի խնամիական այս կապերը թելադրված էին նաև պետական նկատառումներով։ Խաչենի իշխանն իրեն ու իր երկրամասը արյամբ ևս կապել էր հայրենի երկրի բախտը տնօրինող երկու խոշոր տոհմերի հետ։ Ինքն անձամբ մասնակցում էր Սյունյաց իշխանության ներսում կատարվող միարար գործերին[54]։ Այն Սահակ Սևադան, «հոյակապ իշխանն մեծ Սահակ, որ որդիացուցեալն էր փեսայութեամբ զթագաւորն Աշոտ»[55]։ Այն Սահակ Սևադան, որ փեսայի քաջ զինակիցն էր, երբ սա մարտնչում էր Հայոց միասնական թագավորության դեմ ըմբոստացած ուտիացի Մովսես իշխանին զսպելու համար։ Մանավանդ, որ այդ Մովսեսն էլ իր ստորադրյալն ու հովանավորյալն էր Ուտիքում։ Այս դեպքի մասին Հովհաննես կաթողիկոսը հետևյալն է պատմում. «...թագաւորն Աշոտ արքայորդին չուեալ գնայ առ մեծ իշխանն Սահակ աներ իւր. և ապա զկնի իւր զնա համագունդ հանդերձեալ՝ իւրովքն զօրօք երթայ գնայ յՈւտի գաւառ առ ի հնազանդել զբիրտ ապստամբութիւնն Մովսէսի, զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան և հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառին»[56]։ Ճնշվում է ապստամբությունը, փախըստական դարձած Մովսես իշխանը բռնվում է, և թագավորը նրան ենթարկում է ամենադաժան պատժի՝ «խարեալ զաչս նորա խաւարեցուցանէր կուրութեամբ»[57]։

Հնարավոր է, որ այս պատիժը Մովսեսի նախկին հովանավորի՝ Սահակ Սևադայի սրտով չի եղել։ Այդ մասին չի խոսում պատմիչը։ Այլ ուզում է ընթերցողին հավատացնել, թե Սևադան թագավոր-փեսայի հետ թշնամացել էր չարամիտ մարդկանց հրահրմամբ. «հրապուրեալ ի բանս թովչաց ոմանց չարախորհաց, ընկլոյզ զիմաստութիւնն իւր մեծ և ապա սկսաւ չարիս իմն ի վերայ թագաւորին նիւթել իբր յօտար թշնամւոյ»[58]։

Վերոհիշյալ դեպքին հաջորդում է մեկ ուրիշը, որը և, հավանաբար, վճռական դեր է խաղացել Սևադայի ու իր փեսա-թագավորի փոխհարաբերությունների մեջ։ Ասացինք, որ Սահակ Սևադայի դուստր Շահանդուխտը Սյունյաց գահերեց իշխան Սմբատի կինն է եղել։ Այս Սմբատի եղբայր Վասակը «որ սեփհականաբար պայազատէր զտէրութիւնն Գեղարքունւոյ կարծիս իմն երկիւղի յարքայէ ի մտի եդեալ՝ խնդրէր առ ի նմանէ յետկար երդման, զի անկասկած լիցի ի մտանելն առ նա և յելանելն»[59]։ Այս նշանակում է՝ Բագրատունի Աշոտ Երկաթին հպատակ իշխաններն այլևս իրենց ապահովված չէին զգում սեփական թագավորից։ Եվ պատահական չէ, որ թագավորն այս պահանջված երդման գիրը տալուց հետո՝ անգամ բռնում ու կալանավորում է Գեղարքունու զգուշավոր իշխանին. «կալեալ կապէ զնա երկաթի կապանօք, և դնէ յամրոցի անդ, որ Կայեանն կոչի»[60]։ Հովհաննես կաթողիկոսը պատմում է, որ ինքը, իմանալով այս աննախադեպ իրողությունը, խիստ կշտամբեց արքային. «պաշարեցի զնա կշտամբութեամբ մեծաւ վասն ստելոյ ուխտին երդման»։ Թագավորը կաթողիկոսին խոստանում է ազատել Սյունյաց իշխանին, սակայն խոստումը չի կատարում։ Այն ժամանակ Սահակ Սևադան ինքն է ազատում կալանավորին։ Թագավորին այդ մասին լուր են տանում, և նա գալիս է, տեսնում «նախ զԿայեանն կոչեցեալ բերդ յափշտակեալ իշխանին Սահակայ, և որ ի նմա կայր դիպահոջ, Վասակ տէր Սիւնեաց՝ հանեալ արձակեալ զնա ի տուն հօր իւրոյ. և զայլ ևս ազատ կանայսն որ ի նմա ըստ սակի գերելոց՝ սա անց վարատեալ, և պահակն զիւր ամրոցն կացուցեալ»[61]։

Այսպես սկսվեց Սահակ Սևադայի ապստամբությունը Հայոց թագավորի դեմ։

---

54 Տե՛ս Օրբելեան, էջ 230—234։

55 Յովհաննէս կաթողիկոս, էջ 383։

56 Անդ, էջ 377։ Հեղինակը ճիվաղաբարո ազգեր է համարում Զորոգետի Սևորդիներ կոչված այն ուտիացիներին, որոնք պատմության մեջ միշտ էլ հայտնի են եղել իրենց անհնազանդությամբ (տե՛ս Կաղանկատուացի, էջ 389)։

57 Անդ, էջ 379։

58 Յովհաննէս կաթողիկոս, էջ 383։

59 Անդ, էջ 381։

«Յետկար երդման». «յետկար»-պրս. «յադգար»—«հիշատակ», «հուշանվեր» բառից։ Այստեղ՝ երդման գիր-թուղթ։

60 Անդ։

61 Անդ, էջ 387։

Թագավոր փեսան իր զորքով հարձակվում է աներոջ վրա։ Տեղի է ունենում ահեղ ճակատամարտ։ Սահակն ու նրա որդի Գրիգորը պարտվում են։ Աշոտը կալանքի տակ է առնում երկուսին, «եւ այնպէս անխորհուրդ երկիւղիւ զգածեալ՝ կուրացուցանէ զաչս երկոցունց նոցա»[62]։

Պատմիչն ուզում է հավատացնել, թե թագավորը վախից է այսքան դաժան պատժի ենթարկել աներոջն ու աներձագին. իբր, վախենում էր, թե նրանք հետո իրեն կսպանեն ոխակալությունից։

Սևադայի որդի Գրիգորի հետագա ճակատագրի մասին լռում են աղբյուրները։ Հավանական է, որ նա զրկված լինի Ուտիքի Նահանգում ունեցած տիրույթներից, որովհետև, ինչպես Վարդան Արևելցին է հաղորդում, X դարի երկրորդ կեսին Զորոգետի ու շրջակաների վրա արդեն Բագրատունի Աշոտ Ողորմածի որդի Գուրգենն էր տիրակալ դարձել՝ հիմնադրելով Կյուրիկյան թագավորությունը[63]։ Այս դեպքում Գրիգորը պիտի մնար Ներքին Խաչենի տեր, ինչպես նկատել էինք վերևում։

Պերճախոս տեղեկություններ կան Սահակ Սևադայի մյուս ժառանգի՝ Շահանդուխտ թագուհու մասին։ Շահանդուխտը կինն էր Սմբատի՝ «Սիւնեաց մեծ և գահերեց իշխանի», որի անվան հետ է կապված նաև Սյունիքի թագավորության հիմնադրությունը X դարի երկրորդ կեսին[64]։ Հավանաբար ամուսնությունը տեղի էր ունեցել X դարի կեսերին։

Ինչպես ամուսնու հետ միասին, այնպես էլ նրա մահից հետո, Շահանդուխտը Սյունյաց երկրում հովանավորում է մշակույթը, կառուցում Վաղադնի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքը (Ոլոտնավանքը)՝ «հրամանով թագաւորին Սնպատա ի ձեռն Շահանդրխտո բարեպաշտ թագուհոյ»,—գրված է վանքի արևելյան պատուհանի պսակի քարի վրա[65], որ նշանակում է՝ Սմբատն արդեն վախճանված է եղել, և Շահանդուխտը կառուցել է նրա կտակի համաձայն։ Կառուցումն ավարտվել է 1000 թվականին[66]։ Ապա թագուհին կառուցում է «և տուն աղօթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս. և շուրջ պարսպէ զվանքն. և որոշէ նմա անդաստանս ի Վաղատնոյ և տայ զԳոմեր ագարակ ի վանսն. և պայծառապէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք։ Եւ ինքն վախճանեալ դնի ի դրան այնր սրբարանի։ Ապա յետամաց ինչ ի 455 (1006) թ. Սեւադա որդի նորին Շահանդխտոյ... շինէ և մեծածախ աշխատութեամբ եկեղեցի մի յոյժ պայծառ և գեղեցկայարմար, գմբեթայարկ յանուն Սրբոյ Կարապետին, և դաւիթ ի դրան նորին...»[67]։

Ըստ Ստ. Օրբելյանի՝ Շահանդուխտը բազմաթիվ եվերներով ու գործուն օժանդակությամբ շենացրել էր Տաթևի վանքը, ինչպես նաև ուրիշ մենաստաններ»[68]։

Սմբատի ու Շահանդուխտի դուստրը կնության էր տրված նույն Սիսական տոհմի իշխանազուններից մեկին՝ Աշոտին, որը Սմբատի ու Վասակի թագավորության օրոք կոչվում էր իշխանաց իշխան։ Աշոտից սերվում են երկու որդի՝ Սմբատ և Գրիգոր։

Սմբատի ու Շահանդուխտի թագավոր որդի Վասակը մեռնում է անժառանգ, և «թագաւորեցուցանեն զՍմբատ՝ որդի Աշոտոյ. և կարգեն ի տեղի հոր իւրոյ զԳրիգոր՝ եղբայր սորա, իշխան իշխանաց Սիսական աշխարհիս»[69]։ Մի քանի տարի թագավորելուց հետո վախճանվում է Սմբատը, «եւ առնու զթագաւորութիւն նորա եղբայր Գրիգոր. և սոքա երկոքեան որդիք մեծին Աշոտոյ, որ աւագ Աշոտեանք կոչին»[70]։

Գրիգոր Աշոտյան թագավորը ևս կնության էր առել զամենօրհնեալ և մեծահաւատ բարեպաշտուհին Շահանդուխտ ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սևադայի»[71]։

Նկատի առնելով, որ Սահակ Սևադան X դարի առաջին կեսին ծերունի էր արդեն, պետք է մտածել, որ նրա թոռ Իշխան Սևադան կնության տալու աղջիկ կունենար հաջորդ դարում։ Ուրեմն, երկրորդ Շահանդուխտը Բաղաց Կապան հարս է գնացել XI դարի կեսին, բայց ո՞չ դրանից վաղ։ Այս հաշիվները կատարելիս մենք նկատի ունենք Շահանդուխտի մահվան տարին՝ 1116 թվականը, երբ նա, ամենայն հավանականությամբ, հառաջացած տարիք ուներ։

Գրիգորն ու Շահանդուխտն արու զավակ չունեին։ Նրանցից ծնվել էր մի դուստր միայն, որին կոչել էին Կատա։ Որպեսզի թա-

62 Յովհաննէս կաթողիկոս, էջ 392։
63 Վարդան Վարդապետ, էջ 90։
64 Օրբէլեան, էջ 250, 252։
65 «Դիվան հայ վիմագրության», Բ, էջ 100։
66 Օրբէլեան, էջ 302։

67 Օրբէլեան, էջ 302։
68 Անդ, էջ 291—293 և հետ.։
69 Անդ, էջ 318։
70 Անդ։
71 Անդ։

գավորությունն անժառանգ չմնար, թագավոր Գրիգորն ու թագուհի Շահանդուխտը. «խորհեալ ի միասին ընդ իշխանսն՝ ածեն յԱղուաՇահանդուխտ. «խորհեալ ի միասին ընդ իշխանսն՝ ածեն յԱղուանից զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդխտոյ թագաւորազն մանից զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդխտոյ թագաւորազն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, հանճարեղ և իմաստուն...»[72]։

Պատմագիտության մեջ հաճախ շփոթվել են Խաչենից Բաղաց Կապան թագավոր գնացած Սենեքերիմը և բուն Խաչենում, Փառիսոսի տարածքի վրա թագավոր դարձած Հովհաննես Սենեքերիմը[73]։ Պատահել է, որ նրանց հետ միաժամանակ և նրանցից զատ մի այլ թագավոր Սենեքերիմ էլ դրել են Դերբենդում[74], կամ էլ սրանց մասին եղած տեղեկություններն են վերագրել, իբր թե, Դերբենդում հայ թագավորություն ժառանգած Սենեքերիմին[75]։

Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ բացահայտ մի թյուրիմացության արդյունք է Դերբենդի, այսպես կոչված, հայկական թագավորության «փաստը»։ Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ Ս. Գ. Բարխուդարյանի վարկածը, Ուռհայեցու ժամանակագրության՝ արդեն նկատված մի թյուրիմացությունից բացի[76], աղբյուրագիտական ուրիշ հիմք չունի, ասենք, որ նման թագավորության համար Դերբենդում պարզապես տեղ էլ չկար։ Ս. Գ. Բարխուդարյանի հոդվածի համաձայն՝ Դերբենդի հայ թագավորությունը պետք է գոյատևած լինի IX—XII դարերում։ Մինչդեռ հավաստի աղբյուրներից հայտնի է, որ 860-ական թվականներից սկսած՝ Դերբենդում և նրա շրջակա գավառների վրա տիրություն է արել արաբական մի ամիրայություն, որը, առանց ընդմիջումի, գոյատևել է ընդհուպ մինչև XII դարը[77]։ Այս դեպքում արաբ Հաշիմյան ամիրայությունն ո՞ւր պիտի տանել։

Ինչ վերաբերում է Բաղաց Կապանի թագավոր, խաչենցի Սենեքերիմին ու բուն Խաչենում թագավոր դարձած Հովհաննես Սենեքերիմին, ապա աղբյուրների տեղեկությունների համադրությամբ դժվար չէ ցույց տալ, որ նրանք ոչ թե նույնն են կամ միմյանց հանդեպ օտար դեմքեր, այլ տոհմակիցներ են, սակայն մեկը X դարից (Անանիա Մոկացու ժամանակակիցը), մյուսը՝ Բաղաց Կապան թագավոր գնացածը՝ XI դարի երկրորդ կեսից։

Օրբելյանի տեղեկությունից գիտենք, որ Բաղաց Կապան թագավոր գնացած Սենեքերիմը Խաչեն-Փառիսոսի թագավորազուն Սևադայի որդին է եղել («թագաւորազուն» կոչվում էին Խաչենի իշխանազուններն այն հիմքի վրա, որ, նախ, նրանք Համամի ժառանգներն էին, ապա՝ նրանց Առանշահիկ տոհմը, ինչպես տեսանք, V դ. վերջից՝ Վաչագան Բարեպաշտի ժամանակներից ըսկըսած՝ թագավորական էր հռչակված)։

Սևադա կրտսերի որդի Սենեքերիմը Բաղաց Կապանում խակապես խոհեմաբար վարում է թագավորության գործերը։ Սերտ բարեկամություն հաստատելով Ամրպատականում նստող Մելիք-շահի հետ և վաստակելով նրա վստահությունն ու հովանավորությունը՝ Սենեքերիմ թագավորն «ընդարձակեաց զամենայն սահ-

72 Օրբէլեան, էջ 318։

73 Մ. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղուանից, Ա, հ., էջ 136. «Յովհաննէս, որ է Սենեքերիմ՝ որդին Իշխանակ թագաւորին, թագաւորում է Բաղաց Մեծ Սիւնեաց»։

Այստեղ կրկնակի սխալ կա, որովհետև Հովհաննես Սենեքերիմը թագավոր էր Փառիսոսում և ոչ թե Բաղաց-Կապանում։ Մյուս կողմից էլ՝ Հովհաննես Սենեքերիմը Սահակ Սևադայի որդին է եղել և ոչ թե Իշխանակի, որը, լինելով Համամի թոռ ու Ատրներսեհի որդին, թագավոր եղավ Շաքի-Կամբեճանում (տե՛ս «Արարատ», 1897, էջ 131, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, էջ 98, 203)։

74 Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 168—169։

75 Ս. Բարխուդարյան, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, էջ 130—132։

Հեղինակը ոչ միայն Սենեքերիմին է Դերբենդի թագավոր համարում, այլև նրա հայր Սևադային՝ գտնելով, որ Բաղաց Կապանի թագավորներին հարս գնացած Շահանդուխտները Դերբենդի թագավորների դստերն են եղել (անդ, էջ 130)։ Ապա Խաչենի ու Բաղքի Սենեքերիմներին վերաբերող նյութերն իմի հավաքելով եզրակացնում է, որ «Դերբենդի թագավոր Սևադայի երկու որդիները, երկուսն էլ Սենեքերիմ անունով, թագավոր են մեկը Դերբենդում, մյուսը՝ Սյունիքում»։

Հետաքրքիրն այն է, որ Բարխուդարյանը սրանց կողքին ընդունում է նաև Փառիսոսի թագավոր Հովհաննես-Սենեքերիմի գոյությունը (անդ, էջ 131)։ Երբ մենք գիտենք, որ այս երրորդ Սենեքերիմի հայրն էլ էր Սևադա իշխանը, ըստ Ս. Բարխուդարյանի՝ ստացվում է, որ Սևադան երեք Սենեքերիմ որդի է ունեցել, որոնք միաժամանակ թագավորել են երեք տարբեր տեղերում՝ Դերբենդում, Փառիսոսում և Բաղաց Կապանում։

76 Միք. վ. Ջամչեանց, Պատմութիւն հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 1004, Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 141—143, Բ. Հարությունյան, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, էջ 148։

77 Տե՛ս Անանուն ժամանակագրի երկը թուրք պատմագիր Մունեջիմ-Բաշիի պատմության մեջ՝ «Тарих Баб-ал-Абваб» վերնագրով՝ թարգմանությամբ ու հանգամանալից ծանոթագրություններով հրատարակված՝ В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, М., 1963, էջ 64—79 և հտգ.։ Նաև՝ Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ Բաշիի 11—12-րդ դարերի անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին. «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 471—486։

մանս տէրութեանն իւրոյ», բարեկարգեց երկրամասը, կառուցեց վանքեր ու եկեղեցիներ, խթանեց մշակութային գործը։ Սենեքերիմն ու քույր Շահանդուխտը, դաստիարակված Խաչեն աշխարհի թագավոր Համամ-Գրիգորի, Սահակ Սևադայի ու մյուս լուսավորյալ տերերի մշակութանպաստ ավանդներով, Բաղաց Կապանում ծավալում են հայրենաշեն մի բուռն գործունեություն։ Ըստ Օրբելյան պատմիչի՝ «...այս Սենեքերիմ և քոյրն իւր Շահանդուխտ բազումս արարին արդիւնս և շինուածս երևելիս ի վանսն Յովհաննու նաև բազում պարգևս և ժառանգութիւնս ընծայեցին ի սուրբ մայրաքաղաքն աթոռ ի Տաթև...»[78]։

Նրանց նվիրատվությունների մեջ նշանակալից է Տաթևին պարգևած Արիտ ավանը «իւր ամենայն սահմանօք շուրջանակի, հողով և ջրով և արտավարօք և զամենայն որ ինչ իւրն էր»։ Սենեքերիմն այս առթիվ գրում է, թե «Ետու անհաշիւ, անհամիմաղ, առանց զոք զրկելոյ, առանց զուրուք յափշտակելոյ, առանց ումեք տրտնջելոյ. քանզի մեր սեփական էր և ոչ այլ ումեք դոր ընծայեցի սուրբ ուխտիդ Տաթևոյ...»[79]։ Թագավորը շեշտում է նաև Արիտ ավանի ու շրջակայքի՝ Ծղուկ գավառի պատկանելության մի այլ կարևոր հանգամանքը՝ գավառն իրեն է պատկանում որպես «արեանգին», այսինքն. որ ինքն այն արյամբ է նվաճել թշնամիներից («արեանգինք գաւառացս ի Ծղուկ նահանգի զԱրիտն աւան»)[80]։ Նվիրատվությունը կատարվել է 1085 թվականին։ Նշանակում է՝ դրանից առաջ Սյունյաց թագավորը ճակատամարտ է տվել հարևան թուրք նվաճողների դեմ և Ծղուկը ետ խլել նրանցից, չնայած այս ճակատամարտի մասին մատենագրական ուղղակի վկայություն կամ տեղեկություն չունենք։ Մեր տեսակետի օգտին է խոսում նաև մի այլ նվիրատվության մեջ արված համանման ակնարկը։ Նվիրատուն գրել է. «Այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ. այս օրս որ Աստուած ինձ յաջողումն երետ. և ես զիմ բերդն ի Մշտաքարթենէն առի և զԿովսական գաւառ իմ արեամբս յամիրայ Փատլընոյ թափեցի, զՆորաշինիկ և զՁեռատիվանս այլ ի Տաթևոյ սուրբ նշանս դարձուցի իմ թագաւորիս Սենեքերիմայ հրամանաւ... ի թուականիս Հայոց 535 (1086)»[81]։

Սենեքերիմ թագավորն էլ է հաստատում Հասանի նվիրատվության վճռի՝ մեզ հետաքրքրող մասը. «Ես Սենեքերիմ թագաւոր իմ ձեռովս հաստատեցի զՀասանայ վճիռս, որ զայս շինարիս որ ի Տանկաց թափեալ էր իւր արեամբն, այլ ի Տաթև երետ իմ հրամանաւ»[82]։

Ուրեմն Կովսական գավառը ևս, որ այժմյան Ծավ գետակի ու Ողջագետի աջակողմյան վտակների ավազաններին է համապատասխանում[83], զավթված է եղել Փաղլունյանների կողմից, և Գրիգորի (հաճախ կոչված նաև Գրիգորիկ) որդի Հասանն այն ետ է առել պատերազմով։

Այսքանից կարելի է եզրակացնել, որ Սենեքերիմի խոսքը ևս Գանձակի ամիրայության մասին է, և ինքն ու Հասանը «թափել», ազատագրել են Սյունյաց գավառները։

Հետազոտողները շատ են գրել Սենեքերիմի պետական շրջահայաց քաղաքականության մասին, ցույց տվել, թե ինչպես նա կարողանում էր լայնորեն օգտվել Մելիքշահի բարյացակամությունից, ամրացնել իր թագավորությունը։ Սակայն և այնպես նա չկարողացավ փրկվել Գանձակի ամիրայի խարդավանքներից, այն ամիրայի, որը Մելիքշահի մահից հետո իրեն ազատ էր զգում՝ գործելու ուզածի պես։ Աղբյուրները վկայում են, որ Փաղլունյաններին օժանդակում էին հայ իշխաններ, ինչպես «Վասակ Պահլավ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի»[84], որի առաջնորդությամբ Գանձակի ամիրա Փաղլունը պաշարում է Բաղաց Կապանը, դավով սպանում Սենեքերիմ թագավորին, և «շիջաւ ճրագն որ անդ, և տիրեցին Պարսք»[85]։

---

78 Օրբէլեան, էջ 321։

79 Անդ, էջ 323։

80 Անդ, էջ 325։

Այստեղ Ծղուկը համարված է նահանգ, որն, իբր, ունի գավառներ։ Մինչդեռ հայտնի է, որ Ծղուկը մեկ գավառն էր Սիսական կամ Սյունիք նահանգի։ Այն համապատասխանում էր այժմյան Սիսիանի շրջանին ու նրանից հյուսիս ընկած լեռնաստանին։ Գավառիս սահմանների մասին հանգամանորեն տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 206, Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, էջ 137 և հետ.։

81 Օրբէլեան, էջ 326—328։

82 Անդ, էջ 327 (ընդգծումը մերն է—Բ. Ու.)։

83 Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 104—107։ Համմտ. Ալիշան, Սիսական, էջ 286։

84 Վարդան Վարդապետ, էջ 103։

Ստեփանոս Օրբելյանը, այս Վասակի փոխարեն, Բաղաց Կապանի կործանման օժանդակող է համարում Շիրակի իշխան Գրիգոր Ապիրատյանին, որը նույն Պահլավունիներից էր (Օրբէլեան, էջ 320)։

Ըստ Վարդան Վարդապետի՝ Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակի որդու անունը ևս Գրիգոր է եղել (Վարդան Վարդապետ, էջ 103—104)։ Հայտնի չէ՝ Օրբելյան պատմիչը պա՞տ, թե՞ թոռ Գրիգորին է համարում Բաղաց Կապանի նենգ կործանման պատճառ։

85 Վարդան Վարդապետ, էջ 103։

Մեր պատմիչի այս արժանահավատ տեղեկությանը հակասում է հետազո-

Պետք է ենթադրել, որ հենց այս ժամանակից Փադլունյանների տիրապետությունը վերստին տարածվել էր նաև հարևան հայկական շրջանների, ինչպես նաև Խաչենի վրա։

Սենեքերիմի սպանությունից (1096) հետո քույր Շահանդուխտն էր տնօրինում Բաղաց թագավորության շինարարական ու բարեգործական գործը։ Նա էլ վախճանվեց 1116 թ.։

Խաչենը սելջուկ թուրքերի տիրապետության շրջանում.— XI դարի առաջին կեսին թուրք-սելջուկյան հրոսակախմբերը պարբերաբար ասպատակում էին Հայաստանն ու Անդրկովկասը։ Հենց այդ ժամանակ էլ Հայաստանի հինավուրց թշնամի Բյուզանդիայի ձեռքով քայքայվել էր Բագրատունյաց թագավորությունը, և նրա փոխարեն այս ու այնտեղ նշանակված բյուզանդական կուսակալներն ի վիճակի չէին սելջուկյան հեղեղի առաջն առնել։ Ուրիշ խոսքով՝ Բյուզանդիան խարխլել էր այն հուսալի պատվարը, որը կարող էր խափանել արևելքից եկող բռնագրավիչների հաղթարշավը դեպի կայսրություն։ Այս պատճառով էլ սելջուկ-թուրքերը, առանց նկատելի դժվարության, մեկը մյուսի ետևից նվաճում էին քաղաքներն ու մարզերը, կողոպտում, բնակչությանը կոտորում կամ գերեվարում։

XI դ. երկրորդ կեսին Հայաստանը սելջուկյան անհուն ու անեզերք թագավորության տիրապետության տակ էր։ Անցել էին առաջին ասպատակություններն ու կողոպուտը, կոտորածներն ու գերեվարությունները, և հաստատուն տիրապետություն ստեղծած սելջուկ բռնակալներն արդեն գիտակցում էին, որ հպատակ երկրները քարուքանդ անելով և բնակիչներին ոչնչացնելով՝ իրենք իրենց զրկում են նոր եկամուտների ու հարստության աղբյուրներից։ Սկսեցին պետական կարգուկանոն ստեղծել նվաճած երկրներում, նրանց հնարավորություն տալ վերականգնելու քայքայված տնտեսությունը, վերակառուցելու և շենացնելու մեծ ու փոքր բնակավայրերը։

Այս նոր քաղաքականությունն իր դրսևորումն ստացավ Ալփ-Արսլանի որդի ու հաջորդ Մելիքշահի (1072—1092) օրոք։ Մելիքշահի պետության ստեղծած ներքին կարգն իր արտացոլումն է գտել «Սիասեթ-նամե» («Կառավարման ձեռնարկ») նշանավոր երկում, որի հեղինակն է շահի մեծ վեզիր Հասան իբն-Ալին՝ մականվանված Նիզամ ալ-Մուլք («Պետության կարգավորում»)[86]։ Այս խոհուն քաղաքագետի գրավոր ու բանավոր խորհուրդներով և նշանակած պաշտոնյաներով էր կառավարվում հսկայածավալ տերությունը։ Հպատակ ժողովուրդները, նախորդ շրջանի անկարգություններից ու անօրինություններից զզված, հիմա համեմատաբար գոհ էին նոր տիրապետողի ստեղծած կարգ ու կանոնից։ Գոհ էին հատկապես հոգևոր դասի ներկայացուցիչները, որովհետև Մելիքշահը շատ վայրերում եկեղեցին ազատել էր տուրքերից, հատուկ հրովարտակներով նրան ապահովել բավական արտոնյալ վիճակ, որ չէր եղել վաղուց ի վեր[87]։

Հայտնի է Մելիքշահի բարյացակամ վերաբերմունքն Արևելյան Հայաստանի բնիկ իշխանությունների և առանձնապես Բաղաց թագավոր Սենեքերիմի ու նրա տոհմակիցների՝ Խաչենի իշխանների նկատմամբ[88]։ Այս կապերի շնորհիվ որոշ նպաստավոր վիճակ ստեղծվեց Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգներում, որոնք այլևս ապահովված էին Գանձակի՝ ծագումով քրդական ամիրայության սադրանքներից։

Սակայն Մելիքշահի մահվանից (1092) հետո սելջուկյան կենտրոնական պետությունն սկսում է քայքայվել։ Ծայր են առնում գահակալական ներքին կռիվները։ Սուլթանության նախկին կուսակալներն այժմ ազատ էին իրենց կամայականությունների մեջ և սաստկացնում էին բռնությունները հպատակների վրա։ Իսկ որ ամենասոսկալին էր, նրանք բնակություն էին հաստատում հպատակ նահանգներում ու գավառներում, տեղական իշխանավորներին դուրս մղում իրենց հնամենի օրրաններից, դառնում միահեծան տեր ու տնօրեն։ Այսքանին էլ հետևում էր այդ նոր տերերի ցեղակից ու ոչ ցեղակից խաժամուժի ներհոսքը, և այսպես նաև երկրամասի էթնիկական դեմքն էր փոխվում։

Սելջուկյան կենտրոնական պետության խարխլման հետևանքով ստեղծված վիճակում անասելի ծանրացել էին հարկերը, հպատակ ժողովուրդները տնքում էին եկվոր բռնակալների ճնշման տակ։ Հայտնի է, որ այս ժամանակ նախկին հարկերին գումարվել

տող Ռ. Հուսեյնովի կարծիքը, որի համաձայն՝ Մելիքշահի տիրապետության հաստատումով պետք է վերջ լիներ Առանի կամ Գանձակի Շադդադյան-Փադլունյան իշխանությանը («При великом султане Мелик-шахе... династия Шаддадидов в Аране была пресечена». *Р. А. Гусейнов*, Сельджуки и Закавказье, автореферат докторской диссертации, Баку, 1969, стр. 10).

86 *Сиасет-намэ*, Книга о правлении визиря XI столетия Низам-ал-Мулька, перевод Б. Н. Заходера, М.—Л., 1949.

87 **Մատթէոս Ուռհայեցի**, *ժամանակագրութիւն*, *էջ 240*։ **Սամուէլ Անեցի**, *էջ 117*, **Վարդան Վարդապետ**, *էջ 108*։ **Օրբէլեան**, *էջ 319*։

88 **Օրբէլեան**, *էջ 319, 332*։

էին տեղերում ինքնագլուխ դարձած իշխանավորների կամայականությունները, նրանց պարբերական ասպատակություններն ու չարագործությունները։ Այս ծանր վիճակին ենթակա էին հատկապես Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգները, որոնք, արդեն նախորդ դարերում մղած անընդմեջ պայքարի պայմաններում կրած զրկանքներից, օտարների նորանոր ասպատակություններից հյուծված ու արնաքամ, անկարող էին դիմագրավելու և վանելու սանձարձակ դարձած բռնակալներին։

Ծանր էր հատկապես Խաչենի դրությունը։ Այս երկրամասին հասած աննախադեպ չարիքներին գումարվեց 1139 թ. ահավոր երկրաշարժը, որը Մխիթար Գոշի կողմից ավանդվել է սրտաճմլիկ նկարագրությամբ։ Պատմիչի հաղորդած տեղեկություններն այնքան սպառիչ են, որ կարելի է լրիվ պատկերացնել, թե ինչպես տակն ու վրա է եղել ամբողջ Առանը[89]. «...շարժմամբ բազում աւերուած լինէր ընդ բազում տեղիս ի գաւառիս Փառիսոսոյ և Խաչինոյ, առ հասարակ ի դաշտս և ի լերինս. յորում և մայրաքաղաքն Գանձակ առ հասարակ յանդունդս կործանիւր, խորասոյզ առնելով զբնակիչս իւր. քանզի չորս կողմ երեսաց նորա ամփոփեաց զնոսա ի ծոց իւր. և ի լեռնակողմանս բազում դղեակք և գիւղք տապալեցան հանդերձ վանորայիւք և եկեղեցիւք, որք փլան ի վերայ գլխոյ բնակչաց իւրեանց. յորում և անթիւք սատակեցան ի կործանմանէ շինուածոց և աշտարակաց»[90]։

Պատմիչի վկայությամբ՝ այսքանը տեղի է ունեցել ՇՁԸ (1139) թվականի արեգ (հայկական տոմարի 8-րդ ամիսը՝ սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 12-ը) ամսի 18-ին, «ի գիշերի ուրբաթուն ի լուսանալ շաբաթուն» (այսինքն՝ սեպտեմբերի 30-ին)։

Այս երկրաշարժի ահագնությունը լրիվ պատկերացնելու համար հիշենք նաև Կիրակոսի մի արժեքավոր տեղեկությունը. «Փլաւ և լեառն Ալհարակ ի շարժմանէն և արգել զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա. եւ եղեւ ծովակ, որ է մինչև ցայսօր»[91]։ Խոսքն այժմյան Ադրբեջանական ՍՍՀ Խանլարի շրջանի Գյոյ-գյոլ (Կապույտ լիճ) լճակի մասին է, որի շրջակայքը նշված ժամանակաշրջանում Խաչենի մեջ էր մտնում։

89 Համանման մի «անհնարին դողմամբ սաստիկ կործանումն» էլ, որ տեղի էր ունեցել Վայոց ձորում, նկարագրում է Սյունյաց պատմիչը (Օրբելեան, էջ 142—143)։ Հավանաբար սա ևս Գոշի վկայած երկրաշարժի մի թեն է եղել։

90 Մխիթար Գոշ, ժամ Գանձակայ.. Ալիշան, Հայապատում, էջ 361։

91 Կիրակոս, էջ 117։

Ժողովուրդը դեռ ուշքի չէր եկել բնական արհավիրքի հասցրած այս կործանարար հարվածից, հազիվ վերականգնվում էին ավերված գյուղերն ու քաղաքները, վանքերն ու բերդերը, երբ Գանձակի շահապ (քաղաքագլուխ) կարգված Խուհտուղտին ապստամբեց իր սուլթանի դեմ[92] և մեծաքանակ զորք առած՝ շարժվեց շրջակա գավառների վրա, նպատակ ունենալով ընդարձակել իր տիրապետության սահմանները և հիմք դնել մի նոր անկախ ամիրայության։ «Սորա (Խուհտուղտին) ապստամբեալ ի սուլտանէն,— պատմում է Գոշը,— յանդգնէր և ձեռնարկէր համարձակութեամբ արտաքոյ իշխանութեան սահմանաց իւրոց. և ապա ելեալ զօրօք բազմօք ի Գանձակայ՝ եկն ի լեռնակողմ Հադահերայ, և հասեալ ի բերդն, որ կոչի Կաթողիկոսի քար, և որ մերձն է առ նմին, որ անուանի Կարապետանց քար. և բազում աւուրս պաշարեալ զերկոսին և ջանիւ մեծաւ առեալ՝ աւերեաց զերկոսին քակմամբ և հրկիզութեամբ. և եկեղեցիք սրբութեան կոխան եղեն անօրինացն, մինչ զի իսպառ ջնջել և աւերիլ Կաթողիկոսի քարին ի ՇՂԱ (1142) թվակ. Հայոց»[93]։

Պատմիչի հիշած Հադահերի, Կարապետանց քարի ու Կաթողիկոսի քարի մասին ուրիշ այնպիսի տեղեկություններ չկան, որոնց օգնությամբ հնարավոր լինի այդ անուններն անսխալ տեղադրել։ Մակար եպիսկոպոսը կարծում էր, թե Կաթողիկոսի քարը դա Կիրակոսի[94] հիշած Քարհերձ բերդն է[95], չնայած Կիրակոսի մոտ կա այդ անվան ոչ թե կոնկրետ տեղադրություն, այլ անորոշ հիշատակություն, որից կարելի է մոտավորապես գուշակել, թե այն գտնվում էր Գարդմանքի ու Շամքորի միջև։ Ապա Մակար եպիսկոպոսը Քարհերձն ու Ջարեքն է դնում իրար կողքի[96]։ Մինչդեռ Գոշն ասում է՝ ասպատակիչը, Գանձակից դուրս գալով, «եկն ի լեռնակողմ Հադահերայ, և հասեալ ի բերդն, որ կոչի Կաթողիկոսի քար...», իսկ Գանձակից դեպի Շամքոր «լեռնակողմ» չկա,

92 Մխիթար վարդապետը սուլթանի անուն չի տալիս։ Բայց աղբյուրներից հայտնի է, որ նա հայ հեղինակներից շատերի, հատկապես Ստ. Օրբելյանի գովասանքին արժանացած Մելիքշահի թոռ և Մուհամմեդ Ա-ի որդի Մասուդն է եղել (1134—1155)։

93 «Հայապատում», էջ 386։

94 Կիրակոս, էջ 163։

95 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա, էջ 186, «Արցախ», էջ 301, 430 (ծան. 44)։ Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հատ. Գ, էջ 101։

96 «Արցախ», էջ 430։

հարթ տարածություն է։ Լեռնակողմ ասելով պիտի հասկանալ Շամքորից մինչև Ղարաբաղի լեռնաշղթան ընկած տարածքը։ Եվ Կաթողիկոսի քարն էլ, կարծում ենք, այժմ Կաթողիկոսասար կոչվող վայրն է Թարթառի ափին, Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղի մոտ, որն ավելի վաղ ժամանակներում Աղվանից կաթողիկոսների ամարանոցն էր՝ Բերդակուր անունով[97] և ոչ միայն կաթողիկոսների աթոռանիստն էր, այլև բերդ (քար), ինչպես անունն ինքն է հուշում։ Խուհտուղտու հրոսակները, ինչպես Գոշն է վկայում, Կաթողիկոսի քարը հիմնահատակ ավերել էին («մինչև զի իսպառ ջնջել և աւերել»), այդ պատճառով էլ հետագայում այն ոչ մի անգամ չի հիշվում ոչ Կաթողիկոսասար կամ քար, ոչ էլ Բերդակուր անունով։

Խուհտուղտու ապստամբությունը ճնշելու համար Պարսկաստանից եկավ Զոլի (Զալի) զորապետը։ Նա պաշարեց Գանձակը, մի ամիս հետո նվաճեց այն և գերի վերցված ապստամբի աչքերը հանեց։ Նույն 1143 թ. Զոլին իր զորքով շարժվեց դեպի Խաչեն և, Գոշի ասելով, «էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց զեկեղեցիսն և այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն և գերեաց զզօրականսն, պէսպէս իսպառ մաշեաց զամենեսեան առ հասարակ ի սուր և ի գերութիւն»[98]։

Սամուել Անեցին ևս պատմում է այս դեպքը, տեղեկացնելով, որ Զոլին խաբեությամբ իր մոտ էր հրավիրել Խաչենի իշխաններին (ազատներին), կալանավորել նրանց։ Այսքանից հետո էր, որ անպաշտպան երկիրը «մաշեաց... սովով և սրով և գերութեամբ, ընդ որս քահանայք և սուրբ կտակարանք և կրոնաւորք առ ոտս ընկան անօրինաց»[99]։

Զոլին այս ավերածությունից հետո անցնում է Պարսկաստան։ Երկու տարի անց (1145—1146) կրկին գալիս է Խաչենի վրա, ասպատակում «ի կողմ Խաչենոյ, Տանձեաց և Ադախայ»[100], որովհետև երկրի մնացած իշխանները, որոնք առաջ պատսպարվել էին անտառախիտ խորաձորերում, վերստին տեր էին դարձել իրենց

97 Կաղանկատուացի, *340, 394։*

98 «Հայապատում», էջ *386։*

99 Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց,* էջ *132։* Նույն տեղեկությունը տե՛ս նաև՝ Մխիթար Այրիվանեցի, էջ *63։*

100 Եթե «Խաչենն այստեղ երկրամասի կենտրոնական մասն է ճանաչվում, Թարթառի հովիտը, ապա Տանձիքը նրանից հյուսիս ընկած տարածքն էր, Մռավի հյուսիս-արևմտյան լանջերը, ներառյալ հետագայի Գոշավանքի շրջակայքը (Կիբերդամրոցներին «և դարձեալ ապստամբութեամբ վարէին ընդ Տաճկացն»[101]։

Խաչենցիների անհնազանդությունից գազազած Զոլին, որ չը-կարողացավ նվաճել ամրոցները, ավերում է անպաշտպան բնակավայրերը, հրի մատնում վանքերն ու եկեղեցիները։ «Այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեան, որ կոչուի Դաղուի վանք»[102],— դառնությամբ վկայում է Գոշը։

Սրանից հետո Զոլին Առանը թողնում, գնում է Պարսկաստան, «ապա չարաչար մահուամբ սատակի մերձ ի քաղաքն Զանգան (Ատրպատականում—Բ. Ու.), ի ՇՂԵ (1146) թվականին Հայոց»։

Գոշը պատմում է նաև Զոլիից հետո եկած նոր զորապետների մասին (Փախրադին, Ըրդիշ և այլք), որոնցից յուրաքանչյուրը մի տարի էլ չի կարողանում տեր մնալ Գանձակի ամիրայի աթոռին, որովհետև շրջակայքի գավառապետ ազատներն ու բնակչությունը այլևս չէին հանդուրժում նրանց, մանավանդ, որ հիմա առանցիներին հաճախ էր օգնության գալիս Վրաց թագավորն իր զորքերով։

Այսօրինակ ճակատամարտերի մանրամասները դժբախտաբար չեն ավանդվել մեր ժամանակագիրների կամ հիշատակագիրների կողմից։ Նրանց մասին քիչ բան կարելի է իմանալ նաև ուրիշ աղբյուրներից։ Սակայն վիմագրական նյութերի կցկտուր տեղեկություններից հնարավոր է մոտավոր գաղափար կազմել այն պարբերական ճակատամարտերի մասին, որ Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների և հատկապես Արցախի ու Սյունիքի իշխանություններն էին մղում մահմեդական բռնակալների և նրանց հովանավոր Ատրպատականի ամիրայության դեմ՝ ազատագրելով իրենց տիրույթները։ Նախորդ դարին վերաբերող համանման տեղեկություններ կան, ինչպես արդեն վերը տեսանք, Խաչենից Բաղաց Կապան թագավոր գնացած Սենեքերիմի 1085 թ. և հատկապես Գրիգորիկի որդի Հասանի 1086-ին թողած ընծայագրերի մեջ։

XII դարի կեսերի ազատագրական ճակատամարտերի մասին ևս կոնկրետ վկայություններ են մնացել Խաչենի վիմագրերում։ Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Հասանը 1182-ին գրած

ռակոս, էջ *210—211)։* «Ադախ»-ը պիտի լինի «Արդախ»՝ Գանձասարն ու շրջակայքը (տե՛ս Օրբելեան, էջ *278—279)։*

101 «Հայապատում», էջ *386բ։*

102 Անդ։

արձանագրությամբ հայտնում է, որ Խ (40) տարի, այսինքն՝ 1142—1182 թթ., լինելով Խաչենի իշխանաց իշխանը, մղել է շատ պատերազմներ և հաղթել իր բոլոր թշնամիներին[103]։ Սրանք այն պատերազմներն էին, որ խաչենցիները վարում էին իրենց անմիջական հարևան Գանձակի ամիրայության ոտնձգությունների դեմ։

Գոշի և մեր մյուս ժամանակագիրների հաղորդած տեղեկություններից դժվար չէ եզրակացնել, որ սելջուկյան խարխլվող տիեզերակալության կուսակալները մի ահավոր պատուհաս էին դարձել հպատակ ժողովուրդների համար։ Սրանք անտանելի էին հատկապես այն պատճառով, որ գալիս էին մեծամեծ հավակնություններով և կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ։ Տեղերում նրանք անմիջապես իրենց զգում էին ինքնիշխան, տիրակալ, ապըստամբում կենտրոնական իշխանության դեմ, կամ տիրապետությունն ընդարձակելու նպատակով կռվում հարևանների հետ՝ փորձելով հիմնել անկախ ու ինքնիշխան իրենց պետական միավորումները։ Այս մարտերից տուժվում էին առաջին հերթին հպատակ երկրամասերը, որոնք և ակամա մասնակից էին դառնում բոլոր այդօրինակ կռիվներին, բացի այն անագորույն պարագայից, երբ իրենց երկիրը միշտ էլ ոտքի կոխան էր և եկվոր տիրողների ասպատակությունների, ավերի ու ավարի թատերաբեմ։ Այսպիսի ավերածություններից ու բռնություններից գոնե մասամբ զերծ մընալու նպատակով հպատակ երկրամասերի իշխանավորներն այս կամ այն միջոցով փորձում էին արժանանալ թուրք-սելջուկ կուսակալի բարեկամությանն ու հովանավորությանը։ Հաճախ նրանք միջոցների մեջ խտրություն չէին դնում, և բանը հասնում էր խնամիությանը, եկվոր բռնակալին աղջիկ տալուն, որը տհաճությամբ էր ընդունվում հարևան հայ ազգակիցների, հատկապես աշխատավոր բնակչության կողմից[104]։ Խնամիացող հայ իշխանավորը, այսպիսով, նվաճում էր բռնակալի հովանավոր բարեկամությունը և ազգակիցների ատելությունը, որը հաճախ գերաճում, դառնում էր անզիջում թշնամանք՝ հող հանդիսանալով եղբայրասպան պատերազմների ու արյունահեղությունների համար։

103 «Վիմական տարեգիր», էջ 34։

104 Մխ. Գոշն իր մի առակում ծաղրում է շատ տարածված այս երևույթը, երբ քրիստոնյա թագավորներն ու իշխաններն օտարների ու այլադավանների հետ էին ամուսնացնում իրենց դստերին (տե՛ս «Առակք Մխիթարայ Գոշի», Վենետիկ, 1854, էջ 104)։

Սելջուկ բռնավորի հետ խնամիացող իշխանը, ըստ երևույթին, իր առաջ նպատակ էր դնում նաև գահերեցություն ձեռք բերել տոհմակից կամ ազգակից իշխանավորների մեջ, դառնալ նրանց ու սելջուկ մեծավորների միջնորդը։ Եվ սա ավելի էր գրգռում իր ազգակիցներին։

XII դարի առաջին կեսի Խաչենին վերաբերող կցկտուր տեղեկություններից անգամ պարզ երևում է, որ խաթարված է եղել միաբանությունը բնիկ իշխանավորների միջև։

Ներքին խռովություններով հայտնի այս ժամանակաշրջանին է վերաբերում մեր միջնադարյան մի վկայության խոսքը, որ լի է ցավով ու ափսոսանքով։ Այն իրավամբ վերագրվում է մեծ վարդապետ Մխիթար Գոշին[105] և հայտնում է, որ «ի ժամանակս բռնակալութեան Եղեմացւոց, որում վաղ ուրեմն բարձեալ էր թագավորութիւն Հայոց սպառսպուռ, անտէրունչք շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վսրատեալք, ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ»[106]։

Մահմեդական մեծավորների բերած խառնակության և Խաչենի տերերի անմիաբանության մասին Գոշն ավելի հանգամանորեն պատմում է իր հայտնի ժամանակագրության էջերում։ Այստեղ պատմիչը ներկայացնում է վարչա-քաղաքական այն տխուր վիճակը, որ տիրական էր հայոց Աղվանքում և հատկապես հին Ար-

105 «Վկայութիւն սրբոյն Խոստրովու», «Արարատ», 1896, էջ 590 և հտգ.։ Անվանի բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանի համոզիչ բացատրությամբ՝ այս երկը պատկանում է Մխիթար Գոշի գրչին և գրված է 1187 թ., Խոստրովի նահատակությունից քսան տարի անց («Արարատ», 1896, էջ 590)։

106 «Վկայութիւն սրբոյն Խոստրովու», էջ 590—591։

«Եղեմացիք» ասելով հեղինակն, անկասկած, նկատի ունի էլամացիներին։ Էլամը հնագույն պետություն էր Պարսկաստանի հարավ-արևմուտքում։ Ըստ դիցաբանության՝ Սեմի ավագ որդի էլամի երկիրը։ Մեր հեղինակն այդ անունով է կնքում մահմեդական եկվորներին։ Նույն երկում հանձին բռնակալների՝ ճանաչում է «որդւոց Քետուրայ և Իսմայելի և Եղեմացւոց» (անդ, էջ 591)։ Քետուրան Աբրահամի վերջին կինն է եղել ըստ ավանդության։ Նրա հետ Աբրահամն ամուսնացել է Սառայի մահից հետո։ Խորենացու գրի առած ավանդության համաձայն՝ պարսիկները սերված են Աբրահամից ու Քետուրայից (Խորենացի, էջ 203)։

XII—XIII դդ. հայկական աղբյուրներում, ինչպես նաև դրանից էլ առաջ, շատ դեպքերում իրար փոխարինում էին «պարսիկ» և «իսմայիլացի» բառերը։ Եվ զարմանալի չէ, երբ քննվող աղբյուրում էլ նույնացված են եկվոր թուրքմենները (մուսուլմանները) և էլամացիք։

ցախի տարածքի վրա։ Սելջուկյան տիրապետողները բռնությամբ և հաճախ էլ խնամիական կապերով հաստատվել էին հայկական բնակավայրերում, հարմար առիթների էին սպասում հարևանների հաշվին իրենց մանրիկ իշխանություններն ընդարձակելու համար։ Խոխանաբերդի իշխան Գրիգորին փեսայացել էր Դարի կամ Դարայի («որդի Դարին») որդի Տողանը, որն արդեն նստում էր Ջարաբերդ (Ջրաբերդ) դղյակում և տիրում էր նաև համանուն գավառին[107]։ Խոխանաբերդի տիրոջ տոհմակից Հասանը ևս, որ Դեսումի որդին էր, իր դստերը կնության էր տվել թուրքմեն առաջնորդներից մեկին։ Այս խնամիական մրցակցությունը տոհմակից իշխաններ Գրիգորին ու Հասանին այնպես էր թշնամացրել, որ նրանք դաժան կռիվներ էին մղում միմյանց դեմ, և այդպիսի մի կռվի մեջ Հասանն սպանել էր Գրիգորի եղբայր Սմբատին։

Այսքանից հետո էլ Ջարաբերդի տեր դարձած Տողանն այնքան էր ամբարտավանացել, որ իր առաջ նպատակ էր դրել նվաճելու շրջակա բոլոր գավառները։ Նա փայփայում էր Առանի միահեծան տերը դառնալու երազանք։ Տողանն այս միջոցով պետք է վրեժ լուծեր նաև սելջուկ մեծ սուլթանի Ջախր-շահ անվամբ որդուց, որը դրանից առաջ կռվով եկել էր Ջարաբերդի ու շրջակաների վրա և նվաճել ու հարկատու դարձրել ինչպես Տողանին, այնպես էլ նրա աներ Գրիգորին։

Հետաքրքիր է, որ Գրիգոր իշխանն էլ նպատակ ուներ փեսայի այս միջոցառումն օգտագործելու իր զոհված եղբայր Սմբատի վրեժը Դեսումի որդի Հասանից լուծելու համար։

Եվ այսպես փեսա ու աներ ելնում են պատերազմի։ Նրանք բանակ են դնում Հերքան բերդի մոտ գտնվող Կայծո-ծառ կոչված լեռան վրա[108]։ Տողանը ճակատամարտ պիտի տար նախ և առաջ այն թուրքմենների դեմ, որոնք ըմբոստացել էին Աղվանքում և այլևս չէին ենթարկվում սուլթանի ստորադրյալներին։ Այդ ըմբոստների առաջնորդն էր Գուրբուղայի փեսա Ռովադին, որն իր թութակյանք կոչվող թուրքմեններին հավաքել էր Դիվախոռ լեռան վրա[109] և պատրաստ էր պատերազմելու։ Տողանը նրանց առաջարկում է հպատակվել իրեն, իսկ նրանք ի պատասխան այդ առաջարկի՝ հարձակվում են ամբարտավան Տողանի բանակի վրա, ջարդում այն մինչև վերջին զինվորը. «...Հարան զօրքն Տաւղանա, և ինքն Տաւղան սպանաւ. սպանին և զԳրիգոր, և ընդ նմին այլեւս ազատս, որ և թաղեալ անդ քրիստոնէից գաւառին. և զկնի ամի միոյ առեալ բերին ի վանքն անուանեալ Գանձասար, որ էր տապանատուն նախնեաց նորա, և անդ թաղեցին զնա»[110]։

Գոշի վկայությամբ՝ այս դեպքերը տեղի են ունեցել 1147/48 թվականից հետո։

Խոխանաբերդի տեր Գրիգոր իշխանի հաջորդների մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Միայն նրա դուստր և Տողանի կին Հասանն է, որ մի արձանագրությամբ հայտնվում է XIII դարի սկզբին, հավանաբար՝ անզավակ, որովհետև հիշում է միայն հորն ու ամուսնուն։ Ահա այդ արձանագրությունը, որ գտնվել է Վաղուհաս գյուղի մոտի մի ավերակ եկեղեցուց. «Ի թվիս ՈԿԴ (1215) էր։ Ի վերջին և ի նվազել ժամանակիս ես Հասան՝ դուստր մեծին Գրիգորոս, ամուսին Տաւղանա իշխանի, շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն... և առն իմոյ..»[111]։

---

107 Մխիթար Գոշի մոտ՝ «իշխան Ճառաբերդին և նորին դղեակին» (տե՛ս «Հայապատում», էջ 387)։

Աղբյուրներում բերդը կոչվում է Ջրաբերդ, Ջարաբերդ, այստեղ էլ՝ Ճառաբերդ։ Արցախի հնագույն անմատչելի ամրոցներից է, առաջին անգամ հիշված խազարաց՝ 620-ական թվականների արշավանքի կապակցությամբ (Կաղանկատուացի, էջ 179. «Հանդիպեցան յամրոցին Ջարաբերդոյ»)։ Գտնվում է Տրտու (Թարթառ) գետի և նրա Թրղի վտակի միջև սեպաձև վեր խոյացած ժայռի վրա։ Բերդի ու շրջակայքի նկարագրությունը տե՛ս Բաֆֆի, հատ, 10, էջ 167—168 և հտգ., Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 252—265, «Արցախ», էջ 139—140։

Ջրաբերդի (ամրոցի) անունից հնում գավառը ևս կոչվում էր Ջրաբերդ։

108 «Հայապատում», էջ 387. «Լեառն, որ կոչի Կայծոյ ծառ, մերձ ի Հերքան բերդ»։ Կայծո-ծառ լեռը, որ, ըստ Մ. Գոշի, գտնվում էր Հերքան բերդի մոտ, ուրիշ աղբյուրներում չի հիշատակված։ Հերքան բերդի մասին ևս, դժբախտաբար, ոչինչ չկա մեր ձեռքի տակ։ 1417 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում կա «Հերգա գաւառ». «Սայ էր բնական ի Հերգա գաւառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտաւա, ի գեաւղէ, որ կոչի Պարիս» (ԺԵ, Ա, էջ 205)։ Թվում է՝ այս Հերգա գավառը (որ Պարտավի շրջակայքում էր գտնվում) և Գոշի հիշատակած Հերքան (իմա՝ Հերգան) բերդը իրար վերաբերում են այնպես, ինչպես Ջրաբերդն ու Ջարաբերդի գավառը։

Գոշի պատմածից ևս կարելի է ենթադրել, որ Հերքան բերդը գտնվել է Պարտավի կողմերում, խաչենից արևելք։

109 «Հայապատում», էջ 387. «Լեառն, որ կոչի Դիւախոռ»։ «Խոռ» նշանակում է սարի գագաթի փոս։ Այստեղ սար, որ գագաթին փոս ունի և կոչվում է դիվային։

Սխալվում է Զ.Բունիաթովը՝ կարծելով, թե Դիւախոռը կազմված է «դև» և «խոռ» արմատներից (տե՛ս «Албанская хроника», Баку, 1960, стр. 16: «конюшня дьявола»)։

110 «Հայապատում», էջ 387։

111 Մեսրոպ մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր, էջ 99ա։

Գոշն իր ժամանակագրության հետագա էջերում անդրադառնում է Գանձակի նոր իշխողների և շրջակայքի հայկական գավառների բնակչության, ինչպես նաև Վրաց թագավորների միջև եղած հարաբերություններին։

Նախճավան նահանգի տեր Էլտկուզ ամիրան օգտվում է Առանում տիրող խառնակությունից, նվաճում Գանձակը, մահացած Մասուդ սուլթանից հետո թագավոր դարձնում Ասլան-շահին։ Էլտկուզի որդեգիրն էր նոր թագակիրը, որովհետև թագադիր-ամիրան առաջ ամուսնացել էր Մասուդ-շահի նախկին կանանցից մեկի հետ, որի որդին էր Ասլանը։ Սակայն Էլտկուզն իր որդեգրին շահ դարձնելով չի բավարարվում. ինքն էլ դառնում է աթաբեկ և անսահմանափակ իրավունքներով տիրանում Արևելյան Հայաստանին ու Վրաստանին։ Գոշը նրան վերագրում է շատ ծառայություններ. «տիրեալ թագաւորութեանն Պարսից՝ զօրացաւ յոյժ և եբարձ զմեծամեծ իշխանսն ամենայն և հնազանդեցոյց զբազումս. և զգլխաւոր ապստամբն ի Թուրքմանացն եբարձ բնաւ. և խաղացոյց զխռովութիւն աշխարհիս Առանայ. և վայրենամիտ ազգն Իսմայելացւոց ընդանացան, և կապուտ-կողոպուտն դադարեաց ի նոցանէ, զոր առնէին յաճախ աշխարհիս Աղուանից։ Բայց սակայն զմարտ պատերազմի ո՛չ դադարեցուցանէր ընդ թագաւորին Վրաց և ընդ իշխանսն Խաչենու. զի երթեալ երբեմն գաղտագողի և առեալ զամրոցն Հարու, և առ հասարակ զամենեսեան կոտորեալ սրով»[112]։

Այս բոլոր մանր ու մեծ պատերազմների և ասպատակությունների հետևանքն այն է լինում, որ ջլատվում են հայ իշխանական տները, փշրվում ու մանրանում, և հին նախարարական իշխանությունների փոխարեն տարբեր մասերի վրա տեր են դառնում կամ վաղեմի նախարարական տների մանրատված բեկորները, կամ պատմական ասպարեզում կենսունակություն ցուցաբերած հայ զորապետները։ Վերջիններս սելջուկ բռնավորներից խլած հողամասերն ստանում էին որպես «արյան գին» և ստեղծում իրենց մանր իշխանությունները։ Սակայն ինչպես սրանք, այնպես էլ հին նախարարական տների մնացորդները տերիտորիալ ու քաղաքական տեսակետներով այնքան մանր ու թույլ էին, որ ավելի ճիշտ կլիներ նրանց կոչել գավառապետներ, քան իշխաններ։

XII դարի երկրորդ կեսին մանրատվել ու համեմատաբար նվազել էր նաև Խաչենի իշխանությունը։ Այս ժամանակաշրջանում այն արդեն վերջնականապես բաժանված էր երեք ճյուղերի, որոնցից մեկի իշխանանիստն էր Խոխանաբերդը՝ Գանձասարի վանքի մոտ, մյուսինը՝ Հաթերք ամրոցը Թարթառի ձախ ափին, գետի միջին հոսանքում, երրորդինը՝ Հանդաբերդը Ծար գավառում։ Այս երեք ճյուղերի հարևանությամբ, հին Արցախի լեռնային ու նախալեռնային մասերում գոյություն ունեին նաև ավելի մանր իշխանավորներ, որոնք նույն Առանշահիկ տոհմի շառավիղներն էին, ինչպես՝ Խաղբակյանք, Դեսումյանք, Դլենյանք և Գեռաքարեցիք։ Սրանք ունեին տիրույթներ, կոչվում էին իշխաններ, սակայն հին օրերի անխախտ օրենքներով՝ չէին օգտվում իշխանապետի ինքնավարությամբ, որովհետև կային նախկին գահերեց Առանշահիկներից սերվածները, և սրանք էին իշխանապետության օրինական ժառանգները։

Հետո կտեսնենք, որ, ինչքան էլ զարմանալի, Խաչենի գահերեցությունը հաստատուն հանգրվան չուներ նաև վերոհիշյալ երեք ճյուղերից որևէ մեկում։ Հետագայում այն պետք է հաթերքցիներից անցներ խոխանաբերդցիներին, ապա մի կարճ պահ փոխանցվեր Ծարա տերերին, որպեսզի XIII—XVI դարերում էլ Խաչենի գահերեց տեր ճանաչվեին միայն խոխանաբերդցիները։ Գահերեցության այս փոխանցումները, սկսած XII դարի երկրորդ կեսից, այլևս չէին ուղեկցվում ավատական կարգին հատուկ կռիվներով կամ այլ բարդություններով։ Համենայն դեպս, այդպիսիք չեն արձանագրված պատմական աղբյուրներում։ Ընդհակառակը, նկատելի է մի անընդմեջ համերաշխություն երեք ճյուղերի միջև, որ թագավորել է ամբողջ Խաչենի տարածքի վրա։ Շատ հավանական պետք է համարել, որ այս կամ այն ճյուղի ներկայացուցիչը գահերեց էր դառնում ավելի շատ հանգամանքների բերումով, իր քաղաքական ու ռազմագիտական կարողությունների առանձնաշնորհով, քան ժառանգական իրավունքով։

---

112 «Հայապատում», էջ 388—389։

Ղ. վ. Ալիշանը Հարու ամրոցը նույնացնում է այժմյան Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղի հետ (անդ, էջ 389, ծանոթ. 1)։ Ընդունելի է այս տեղադրությունը, որովհետև Հարավն իսկապես գտնվում է Կարկառ գետի աջափնյակի բարձրադիր մի ժայռի վրա և իր դիրքով հարմար է ամրոցի համար։ Այս վարկածի օգտին խոսող մի այլ հանգամանք ևս կա. վերջերս մենք Հարավ գյուղի մոտ գտել ենք մի գեղեցիկ խաչքար Խաղբակյան իշխաններից մեկի սեփական արձանագրությամբ։ Սա ինքնին հաստատում է, որ գյուղը Խաղբակյանների տիրույթն է եղել, իսկ հայտնի է, որ Խաղբակյաններն էլ գանձասարցիների տոհմակիցներն էին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱՔԱՐՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ԽԱՉԵՆԸ։ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆ

XII դ. կեսին Հայաստանի և Անդրկովկասի կյանքում տեղի ունեցան քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային անանախադեպ վայրիվերումներ, որոնք պայմանավորված էին, մի կողմից, սելջուկ թուրքերի կենտրոնական իշխանության խարխլումով, մյուս կողմից, որ շատ կարևոր է, վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշնակցության ստեղծումով։

XII դ. կեսից սկսած ամբողջ Խաչենն ընդգրկված էր հակասելջուկյան ազատամարտերի ոլորտում, իսկ դարի վերջին քառորդում երկրամասի իշխանական տներն արդեն իրենց գործուն դերն ունեին Զաքարյան իշխանապետների ռազմա-քաղաքական միջոցառումներում։

Բանն այն է, որ Զաքարյանները Հայաստանն ազատագրելու և մեկ միասնական ամբողջության մեջ առնելու իրենց գործունեությունը չէին կարող պսակել հաջողությամբ, առանց ի մի համախմբելու երկրի շատ թե քիչ ազդեցիկ իշխանական տներին, որոնք Բագրատունյաց ժամանակներից հետո տարանջատված էին իրարից և ոչ մի հակում չէին ցուցաբերում մեկ ընդհանուր քաղաքական լեզվով խոսելու համար։ Եվ պատահական չէ, որ Սարգիս Զաքարյանը միարարի իր առաքելությունն սկսեց հին ու փորձված միջոցով՝ խնամիական կապերի ստեղծումով։ Նա իր չորս աղջիկներին կնության տվեց Հյուսիս-արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ իշխանական տների պայազատներին։ Անկասկած է, որ այս կապերն ավելի պիտի դյուրացնեին Զաքարյանների գործը, որ էր՝ Վրաց թագավորության հովանավոր աջակցությամբ վերջնակա-

նապես ազատագրել Հայաստանը և նրան դնել ինքնուրույն պետական կյանքի հունի մեջ։

Պատմագիտության մեջ վաղուց նկատված իրողություն է, որ Վրաստանը քիչ էր ենթարկվել նախորդ շրջանների օտար բռնակալական հարվածներին ու ավերածություններին։ Այդ պատճառով էլ Վրաստանում առավել բուռն պոռթկում ունեցավ ազատագրության ոգին, հենց որ սելջուկյան պետությունն սկսեց ներսից քայքայվել և ստեղծվեց նվազագույն հնարավորություն այդ ահարկու տիրապետությունը թոթափելու համար[1]։ Վրաց թագավորությունը, որի զորքերի հետ կռվում էին հայ զորամասեր, կարողացավ ոչ միայն իր երկիրն ազատագրել անկոչ հյուրերից, այլև նրանց դեմ մղած հերոսական ճակատամարտերում փրկեց սահմանակից հայկական նահանգները՝ Անի մայրաքաղաքով։ Առաջին հաջողությունները ոգևորեցին հայ իշխանապետներին, և նրանք վրաց-հայկական միասնության մեջ տեսան նաև Հայաստանի ազատագրության հնարավորությունը։

Եթե թռուցիկ մի հայացք ձգենք նախորդ դարերի իրականության վրա, կտեսնենք հետաքրքիր մի երևույթ. այն դերը, որ XII դարի վերջին Վրաց թագավորությունն էր խաղում հայերի և Հայաստանի համար, ուղիղ երեք դար առաջ էլ պատկանում էր Հայոց թագավորությանը՝ հանձին Բագրատունյաց հարստության։ IX դարում հայ Բագրատունիները, վերականգնելով հայկական միասնական պետությունը համարյա իր հինավուրց քաղաքական ու էթնիկական սահմանների մեջ, օգնության ձեռք մեկնեցին հարևան ժողովուրդներին, հատկապես Վրաստանին, փորձելով ստեղծել մի դաշնություն, որը վեր է ազգային սահմանափակություններից և միակ հուսալի պատնեշը կարող է դառնալ դրսեկ բոլոր բռնակալների դեմ։ Հայ Բագրատունյաց մի ճյուղը, որ իշխանական նոր հարստության էր վերաճել Սպերում, Տայքում, ու Կղարշքում, ընդունեց քաղկեդոնական դավանանքը և «շուտով դարձավ վրացական ազգային հարստություն»[2]։ Այս նորաստեղծ հարստությունն էր, որ գլխավորելու էր Վրաստանի վերելքը X դարում և նրան հաջորդող դժվար ժամանակներում։

---

1 Գարեգին Հովսեփյան, *Խաղբակյանք*, էջ 1, 2, Մանանդյան, *Քննական տեսություն*, Գ, էջ 89—91 և հտգ., Л. Бабаян, Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV веках, М., 1969, էջ 13 և հտգ.։

2 Ն. Ադոնց, *Բագրատունյաց փառքը*, էջ 154։

Սակայն Բագրատունյաց տոհմի բունը մնացել էր Շիրակում, և «այստեղից բխած կամ ներշնչված ջանքերը տանում էին դեպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հավաքել, խմբել կովկասյան բոլոր ցեղերը մի և հանուր քաղաքական հարկի տակ, ներդաշնակել նրանց կյանքն ու գործունեությունը համագործակցության և համերաշխության գետնի վրա, Բագրատունի ծառի հովանու ներքո»[3]։

Հայոց թագավորությունը վերականգնող Աշոտ Բագրատունու և նրա տոհմակիցների ու հաջորդների ջանքերն իզուր չանցան։ Վերջ տրվեց արաբական տիրապետությանը, և շուրջ երեք դար տևած ծանր մղձավանջից հետո ժողովուրդները լծվեցին խաղաղ կյանքի, տնտեսական ու մշակութային բուռն վերելքին։

«Բագրատունյաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը՝ ինչպես մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայանում է մեզ որպես մի խիզախում՝ գաղափարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում և կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը»[4],— իրավացիորեն նշել է Ն. Ադոնցը։

Սակայն Բագրատունյաց նկրտումները մնացին կիսակատար, որովհետև նրանց ճանապարհն անցնում էր այնպիսի խրամատների վրայից, ինչպես կրոնական, ազգային, ավատատիրական չմիավորվող ձգտումները և հատկապես հարևան բյուզանդական խարդախ քաղաքականությունն ու սպասվող թուրք-սելջուկյան խաժամուժը։ Եվ ահա Բագրատունյաց փորձից շուրջ երեք դար հետո բախտը վերստին առիթ էր ընձեռել հարևան ժողովուրդների կամքն ու զինական ուժերը միավորելու՝ ընդդեմ օտար բռնակալների։ Այս անգամ արդեն որպես միարար ուժի կենտրոն հանդես էր գալիս Վրաց Բագրատունիների թագավորությունը։ Հարկավ կրավորական դերում չէին և հայերը։ Եթե նկատի էլ չառնենք Վրաց թագավորին ենթակա զորքերի մեջ հայ զինվորության օրըստօրե ստվարանալը, ապա բավական է թեկուզ և վրաց-հայկական դաշնակցության ստեղծման ու ամրապնդման գործում տեսնել այն խոշոր դերը, որ պատկանում էր երկու եղբայրակից ժողովուրդների զինական ուժերի գերագույն հրամանատարին ու նրա ազգակից զորապետներին։ Սկսած XII դարի վերջին քառորդից միացյալ

3 Անդ, էջ 155։

4 Անդ, էջ 156։

զորքերի գերագույն հրամանատարի պաշտոնն զբաղեցնում էր հայազգի Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչը։ Իսկ եթե դրան էլ գումարենք արքունի գործերի կառավարչին և այլ բարձրապաշտոն անձանց՝ արքունիքում ու զինական գործերում, որոնցից առաջինը դարձյալ լինում էր Զաքարյաններից, իսկ մյուսները հայ իշխանական այլևայլ տոհմերից,— ապա դժվար չի լինի պատկերացնել, որ վրաց-հայկական զինակցության մեջ հայերը կրավորական դեր չունեին, ինչպես ջանում են ներկայացնել որոշ պատմաբաններ։

Ինչպես ասացինք, Զաքարյաններին էր պատկանում նաև աթաբեկի պաշտոնը։ Իսկ Զաքարյան տոհմի մի այլ ճյուղի ներկայացուցիչները՝ Գագ բերդի տերերը, ստացել էին գործակալության, վրացերեն՝ մսախուրթ-ուխուցեսի, առանձնաշնորհը։ Զաքարյան պայազատներից մեկը 1232 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում փորձել է բացատրել մսախուրթ-ուխուցեսը և այդ պաշտոնում ամփոփել արքունի մեծամեծ արտոնություններ։ Հիշատակագիրը նշում է. «...ըստ Վրացն բարբառոյ մսախուրթախուցես, որ ըստ մերումս թարգմանի՝ գլուխ իշխեցող և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»[5]։ Գլուխ և հրամանատար ամենայն իշխեցողաց (իշխանների) և գլխավորաց թագավորության։ Ուրեմն՝ Վրաց թագավորության մեջ, թագավորից հետո խոշորագույն պաշտոնն էր սա։ Պատերազմների ժամանակ նա էր գերագույն իրավատերը, խաղաղ հարցեր քննելիս թագավորը վճիռ կարող էր հանել նրա կարծիքը լսելուց հետո՛ միայն։

Ամիրսպասալարի կամ մանդաթուրթ-ուխուցեսի դերը մոտավորապես այսպես են բացատրում վրաց գիտնականները. «Պետության ռազմական գործերը ամիրսպասալարն էր վարում», իսկ «եթե հարցը վերաբերում էր «հող նվիրաբերելուն», այսինքն՝ ավատատերերից որևէ մեկին՝ տիրելու իրավունքով՝ հող ընծայելուն, ապա թագավորն առաջին հերթին պետք է լսեր ամիրսպասալարի կարծիքը, որին պատկանում էր առաջին խոսքը նաև ռազմական հարցեր քննելիս»[6]։

5 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 887։

6 «История Грузии», т. I, под редакцией Н. А. Бердзенишвили (гл. редактор), *В. В. Дондуа*, Г. А. Меликишвили, Тбилиси, 1962, стр. 211.

1185 թ. վրաց-հայկական զորքերի գերագույն հրամանատար դարձավ Զաքարյան Սարգիսը, որը դրանից առաջ ևս նշանավոր իշխան էր ու զորապետ և արքունիքին ցույց տված հավատարմության ու մեծամեծ ծառայությունների համար վայելում էր թագավորի առանձնահատուկ վստահությունն ու հարգանքը։ Սարգսին հաջորդեց նրա ավագ որդին Զաքարեն՝ ամենահզորն ու ամենափառավորը՝ այդ տիտղոսը կրածների մեջ։ Ապա գալիս են նրա որդի Շահնշահը, թոռ Զաքարեն և ուրիշներ։

XIII դ. սկզբին Վրաց թագավորության մեջ է մուծվում արաբական թագավորությունից ուրիշներին անցած մի պաշտոն ևս՝ աթաբեկությունը, որի առաջին կրողը եղավ Զաքարե ամիրսպասալարի եղբայր Իվանեն։ Նրա խնդիրն էր զբաղվել գահաժառանգի դաստիարակությամբ և լինել պալատական խորհրդատու, գլխավորել թագավորական դրասենյակը, այսինքն՝ ինչպես պետական ղեկավարման բոլոր մարզերը, այնպես էլ դատական գերագույն օրգանի ղեկավարությունը[7]։

Այս պաշտոնը ևս Զաքարյան պայազատներին էր պատկանում։ Իվանեից պիտի անցներ նրա որդի Ավագին, ապա հաջորդներին։

Կարևոր է հիշել, որ Վրաց թագավորության մեջ քաղաքական ու ռազմական պաշտոններ զբաղեցնող հայերը ներկայացնում էին Հայաստանի այս կամ այն նահանգի մարմնավոր իշխանությունը և նախապես ունեցել էին իրենց զորքը, որով և մտել էին եղբայր ժողովուրդների զինակցության մեջ։ Օրինակ, Զաքարյան Սարգիսը՝ վրաց-հայկական զինակցության գերագույն հրամանատար լինելուց շատ տարիներ առաջ կոչվում էր հայոց զորքերի սպարապետ[8]։ Եվ նույն այս Սարգիսն իր զորքով ոչ միայն մասնակցել էր ազատագրական մարտերին, այլև խոշոր դեր խաղաց Վրաց թագավորության ամրապնդման գործում, պայքարեց և ճնշեց վրաց կենտրոնախույս ուժերին, որոնք ապստամբել էին իրենց թագավորի դեմ։

Վրաց-հայկական միացյալ զինական ուժերի գերագույն հրամանատար Զաքարեն մահացավ 1212 թ.։ Այնուհետև Հայոց երկրի շահերը ներկայացնող նրա հաջորդի՝ Իվանեի մասին վրաց անանուն

7 Անդ, էջ 211—212։

8 Դարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 2, Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 126։

ժամանակագիրը գրել է, թե «սա բոլոր իշխաններից (էրիսթավներից) առավել գերազանց էր»[9]։ Իվանեի ու նրա ազգակից զորավար-իշխանների դերը բարձր են գնահատում ինչպես նրանց ժամանակակից աղբյուրները, այնպես էլ հետագայի հետազոտողները[10]։

Վրաց թագավորների գերագահությունը և Հայաստանի նկատմամբ ունեցած նրանց բարյացակամությունը հայ զորապետների ու զինվորության կողմից վարձատրվում էր անմնացորդ։ Հնարավոր է, որ Վրաց Բագրատունիների տոհմական հիշողության մեջ դեռևս վառ էր մնում իրենց ծագումնաբանությունը, և նրանք իրենց չէին անջրպետում Հայաստան երկրից, որի՝ արդեն կորսված թագավորական հարստությանը կապված էին արյամբ, իսկ նրանց հողին ու հայրենիքին՝ ճակատագրով։ Այս պարագայում իրավացի է Աշոտ Հովհաննիսյանը, երբ գրում է, թե «11—13-րդ դարերում Վրաց Բագրատունիները հանդես էին գալիս Հայաստանում ո՛չ որպես նվաճողներ, այլ որպես գահաժառանգորդներ, որոնց զենքի հաղթանակին, որքան այն ուղղված էր օտարակալության դեմ, հայ ժողովուրդն ակտիվորեն ընդառաջում և աջակցում էր։ Վերամիավորելով Հայաստանն ու Վրաստանը, Վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպես իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպես իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ֆեոդալական ազատությունները վերականգնվել էին հայ և վրաց ուժերի համատեղ ջանքերով»[11]։

XII դ. վերջի և XIII դ. սկզբի վրաց-հայկական զինակցությունը յուրահատուկ բնույթ ուներ և այն տեսակետից, որ նրա հովանու կամ տիրապետության տակ տնտեսական ու քաղաքական համանման վիճակ էին ապրում թե՛ հայերը և թե՛ վրացիները՝ իրենց ավանդական հողերի վրա։ Եթե վրացական որևէ մարզի բնակչության բախտը կախված էր իր հայրենի ավատատիրոջից, ապա նույն կախման մեջ էր նաև հայկական այս կամ այն նահանգի բնակչությունն իր տեր իշխանավորից, որը, համարյա առանց բացառության, հայ էր լինում, քանի որ ազատագրված երկրամա-

9 «Վրաց աղբյուրներ», Բ, էջ 50։

10 С. К. Какабадзе, Грузинская царица Тамара Великая. Газета «Кавказское слово», 1916, № 99. M. Brosset, Additions et eclaircissements à l'histoire de la Géorgie, S. Pétersb., 1851, p. 266. Դարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 2—3 և այլն։

11 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 161։

սերը թագավորության կողմից բաժանվել էին պատերազմներում աչքի ընկած զորապետներին ու իշխաններին։ Եթե կար տարբերություն կամ խտրություն, դա արդեն վերաբերում էր պաշտոնեության մարզին, ուր ժողովուրդների իշխող դասերի ներկայացուցիչները բանեցնում էին իրենց դասային ու դիրքային բաժանումներին համապատասխանող իրավունքներ։ Եվ այստեղ էլ, ինչպես վերը տեսանք, հայ զորապետներն ու իշխանավորները չէին կարող դժգոհել իրենց արտոնված իրավունքներից։

* * *

Զաքարյան իշխանապետների ազատագրական ճակատամարտերի հետևանքն իրենց հայրենիքի համար այն եղավ, որ սելջուկյան բռնակալներից վերջնականապես ազատագրվեցին հյուսիսային ու հյուսիս-արևելյան, ինչպես նաև կենտրոնական Հայաստանի բոլոր նահանգները։ Մեզ հետաքրքրող տարածքի համար բնորոշն այն է, որ վերջնականապես ազատագրվել էին հին Ուտիքի ու Արցախի բոլոր գավառները։ Այս կողմից Հայաստանի սահմանները հասել էին Ատրպատականի հյուսիսային եզրերին[12], և ազատագրված նահանգների ու գավառների լիիրավ տերերն էին դարձել կամ հին իշխանական տների ներկայացուցիչները, կամ էլ այդ ազատագրական ճակատամարտերում առավել աչքի ընկած զորավարները։ Եթե հին Արցախն ազատագրվելուց հետո հաստատվեց իր Առանշահիկ տերերի արդեն եռաճյուղ (Խոխանաբերդ, Հաթերք, Ծար) իշխանական տիրապետության տակ, ապա սրանց մի երկրորդական ոստի ներկայացուցիչ Վասակ Խաղբակյանը «և երեք որդիքն իւր՝ Պապաքն, Մկդէմն և քաջն Պռոշ, եկեալ ի Խաչենոյ, բազում արութիւնս ցուցին յայլասեռս և բազում բարութիւն առ ազգս քրիստոնէից»[13] և որպես «արեանգինք» Զաքարյաններից ստացան նոր մի ընդարձակ տիրույթ, դարձան «կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»[14]։

Վերին Խաչենի տերերին պատկանող երկրամասի արևմտյան գավառում՝ Գեղարքունիքում, ինչպես Գոշի ժամանակագրությունից հայտնի է, բնակություն էին հաստատել թուրքմենները։ Ճիշտ

12 Կիրակոս, էջ 163, Վարդան Վարդապետ, էջ 138։ Հմմտ. «Խաղբակյանք», էջ 5։
13 Մխիթար Այրիվանեցի, 1860, էջ 65։
14 Օրբելեան, էջ 397։

է, աղբյուրները նրանց համարում են այստեղի ժամանակավոր բնակիչներ, որովհետև ցույց են տալիս, որ Գեղարքունիքը ինչպես թուրքմենների, այնպես էլ հետագայում եկած մոնղոլների համար ամառանոցավայր էր, իսկ ձմեռոցը Մուխանք գավառն էր՝ Մուխան (Մուղան) բարեբեր դաշտով, Պարտավը և շրջակաները[15]։ Սակայն բացառված չէ նաև, որ XII դ. վերջում Սևանի ափերին թուրքմենները ձմեռելիս էլ լինեին։ Եվ ահա վրաց-հայկական զորքերի հոգսն էր դարձել նաև Գեղարքունի գավառի մաքրումն այդ եկվորներից։ Կիրակոս Գանձակեցին Գեղարքունիքը և շրջակաները թվարկում է Զաքարյանների ձեռքով ազատագրված երկրամասերի շարքում. «Սոքա (Զաքարյանները—Բ. Ու.) բազում մարտս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհս Հայոց, զոր ունէին պարսիկք և տաճկունք, առին և նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ շուրջ զծովովն Գեղարքունւոյ, և զՏաշիր, և զԱյրարատ, զԲջնի քաղաք և զԴուին, և զԱնբերդ և զԱնի քաղաք, և զԿարս, և զՎայոյ ձոր, և զաշխարհն Սիւնեաց, և որ շուրջ զնովաւ են բերդք և քաղաքք, և գաւառք... Ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց։ Այսպէս և միւս իշխանն, Զաքարէ անուն, և եղբայրն իւր Սարգիս, և միւս Սարգիս, հայրն Շալուէի և Իւանէի, ազգականք մեծ իշխանացն, ձեռնտուութեամբ նոցին՝ առին և նոքա բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածարէթ, զՏերունականն, և զԳագ և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ...»[16]։

Իսկ Վրաց «Քարթլիս ցխովրեբայի» «Թամարի թագավորությունը» հատվածում Գեղարքունիքի ազատագրությունը նկարագրված է հանգամանորեն և վերագրված Թամարի ռուս ամուսին Գեորգիին. «Թագավորը... մեծ զորք ժողովեց ու դիմեց Գեղարքունիք, որը դժվար էր գրավել թուրքմենների՝ այնտեղ ծովի ավազի պես շատ լինելու պատճառով։ Հարձակվեցին, կոտորեցին և վերցրին մեծ քանակությամբ գերիներ ու ավար, իսկ երբ (Գեորգիի զորքերը) հաղթանակով վերադառնում էին, նրանց ետևից ընկավ ամբողջ թուրքմենությունը Գեղարքունիքում... (նրանց դեմ) դուրս ելան Թամարի զորքերը, այնպես, որ ծերը երիտասարդի առաջն էր առնում և երիտասարդը՝ ծերի, տերը՝ ծառայի և ծառան՝ տիրոջ,

15 Կիրակոս, էջ 256։ Տե՛ս նաև՝ «Վրաց ժամանակագրություն», էջ 74. «Թաթար-մոնղոլ նոյինները ձմեռը Պարտավում էին անցկացնում, ամառը՝ Գեղարքունյաց և Արարատյան լեռներում»։
16 Անդ, էջ 163։

որոնք փախուստի մատնեցին, կոտորեցին և բնաջինջ արին (նը-
բանց)»[17]։

Ներքին Խաչենի ազատագրմանը վերաբերող տեղեկություններ
չկան։ Դա կարելի է բացատրել նրանով, որ մատենագիրները հիմ-
նականում ուշադրություն են դարձրել Զաքարյանների մղած մար-
տերին, իսկ սրանք չէին շոշափել Ներքին Խաչենը։ Պետք է կար-
ծել, որ Խոխանաբերդի ու Հաթերքի տերերն իրենք են ազատագրել
իրենց երկրամասը՝ առանց Զաքարյանների ու վրացիների օժան-
դակության։ Այդ մասին եղած ակնարկ պիտի համարել Հաթերքի
տեր Հասան մեծի Դադի վանքում 1182 թ. թողած հայտնի արձա-
նագրությունը։ Ներքին Խաչենի մասին նման տեղեկություն չու-
նենք։ Սակայն այս դեռ չի նշանակում, թե Խոխանաբերդի տեր
Վախտանգ-Տանգիկը կարող էր դուրս մնացած լինել ազատագրա-
կան այն մեծ խանդավառությունից, որ բորբոքել էին նրա աներ
Սարգիս ամիրսպասալարը և իր խիզախ ու տաղանդավոր որդի-
ները։

Ի՞նչն է բնութագրական Զաքարյան իշխանապետության ժա-
մանակի ազատագրված Հայաստանի քաղաքական կյանքի հա-
մար։

Զաքարեի ու Իվանեի՝ Հաղարծնում թողած մի վիմագիրը շատ
լավ է բնութագրում քաջ զորապետների գործունեությունը և նրանց
իշխանության իրական մակարդակն ու հավակնությունները։ Եր-
կու եղբայրները գրել են. «... Այս մեր գիր յիշատակի է և արձան
մշտնջենաւոր որդոց Մեծին Սարգսին յազգէ Բագրատունեան Իւա-
նէին և Զաքարէի։ Յորժամ նախախնամութիւնն աստուծոյ եհաս
յարարածս և ետ տիրել սեպհական ժառանգութեան նախնեաց մե-
րոց և ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զԱնբերդ և զԹա-
գաւորանիստ քաղաքն Անի և ապա յամուրն Բջնի, զՄարանդ մինչև
զԳաւզանդ ի Թաւրեզ, ի Կարնոյ քաղաքէն մինչև ի Խլաթ, զՇաքի
և զՇրուան, և զԲարտայ մինչև ի Պէլուական և այլ բազումս իւրեանց
սահմանաւքն, զոր աւելորդ համարեցաք յիշատակել։ Այլ և ան-
բարկանալին աստուած սիրեաց զթագ պարծանաց գլխոյ Զաքա-
րեաին...»[18]։

Այստեղ ուշադրության արժանի են մի քանի հանգամանքներ.

17 «Վրաց աղբյուրները», Բ, էջ 12։

18 Շահխաթունեանց, Բ, էջ 370, «Արցախ», էջ 366, «Վիմական տարեգիր», էջ 141։

նախ՝ Զաքարյաններն իրենց համարում են Բագրատունյաց թա-
գավորական տոհմի ներկայացուցիչներ և իրենց վերանվաճած
Հայաստանն ու նրա իշխանաց իշխանի կամ գերագույն իշխանա-
պետի դիրքը նկատում որպես իրենց ժառանգական իրավունքը
(«սեպհական ժառանգութիւն նախնեաց մերոց»)։

Ապա՝ ազատագրած երկիրն իր սահմաններով, որոնք մեր
խնդրո առարկայի տեսակետից գծված են կոնկրետ և ընդգրկում
են Պարտավն ու Բայլականը, այսինքն՝ հյուսիս-արևելքից ու արե-
վելքից համընկնում են Բագրատունյաց Հայաստանի սահմաննե-
րին՝ իրենց մեջ առնելով ամբողջ Արցախը և Ուտիքը, բացի Գան-
ձակից։ Հիշենք, որ արաբ ու հայ ժամանակագիրները Շամքոր,
Պարտավ, Բայլական քաղաքներն իրենց շրջականերով անվերապա-
հորեն ճանաչում էին հայկական՝ Աշոտ Բագրատունու թագավորու-
թյան մեջ (IX դ.)։

Չի կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, որ Զաքարյան իշ-
խաններն իրենց համարում էին թագավորներ Հայաստանի։ Այս-
պիսի ինքնաբնութագրությունն առկա է վիմագրական աղբյուրնե-
րում[19]։

Ցայսօր ոչ ոքի չի հաջողվել սպառիչ պատասխան տալ այն
հարցին, թե իրավական ի՞նչ հարաբերություններ կային Զաքար-
յան Հայաստանի ու Վրաց թագավորության միջև։ Աղբյուրների ըն-
ձեռած հնարավորությունից դատելով՝ պետք է եզրակացնել, որ
նախամոնղոլական շրջանում Հայաստանը, գտնվելով Վրաց թա-
գավորության կազմում, ուներ իր որոշակի ինքնուրույնությունը։
Հայ իշխանապետների բարձր դիրքերը վրաց-հայկական դաշնակ-
ցության մեջ ապացույց են, թե հայոց «կախումը չպետք է շատ
զորեղ լիներ»[20]։ Վերը մեջբերված վիմագիրը և շատ նման նյութեր,
ընդհակառակը, թույլ են տալիս մտածելու, որ Զաքարյան պայա-
զատները խոհեմաբար Վրաց զինակցությունը մի անհրաժեշտ
պայման էին համարում անկախ ու հզոր հայկական թագավորու-
թյուն ստեղծելու ճանապարհին։ Բավական է հիշել, թե ազատա-
գրված Հայաստանը քաղաքական ու քաղաքակրթական ինչ վիթ-
խարի վերելք ապրեց XII դարի վերջին քսանամյակում ու XIII-ի ա-
ռաջին քառորդում, որպեսզի հնարավոր լինի պատկերացնել, թե
ո՛րն է եղել Զաքարյանների ծրագրած վարչա-քաղաքական կյան-
քը հայ ժողովրդի համար։

19 «Վիմական տարեգիր», էջ 41։

20 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 7։

Զաքարյան զորապետների գերիշխանության տակ էին գտնվում ազատագրված Հայաստանի նահանգները, սակայն, որքան կարելի է եզրակացնել աղբյուրների ընձեռած տեղեկություններից, իրավական տարբեր աստիճաններով։ Քննության ենթակա նահանգի մեջ մտնող գավառների համար ևս այդ իրավական փոխհարաբերությունները տարբեր էին։ Եթե Գեղարքունիքը (հավանաբար՝ նրա հետ էլ Ծարը) Զաքարյաններն էին ազատագրել, և Խաչենի իշխանության Ծարա ճյուղի ներկայացուցիչները համարյա միշտ էլ ենթակա էին Զաքարյաններին, ապա նույնը չի կարելի ասել Ներքին Խաչենի ճյուղի մասին։ Խոխանաբերդի տերերն իրենց համարում էին իրենց երկրամասի ինքնակալ իշխանապետները։ Ծարա տեր Գրիգոր մեծ իշխանը նույնիսկ մոնղոլների տիրապետության հաստատումից հետո էլ ենթակա էր աթաբեկ Իվանեի որդի Ավագին։ Նրա ղեկավարությամբ մասնակցել էր թաթարաց արշավանքներին (դեպի Կարին ու Կեսարիա) և այնտեղ փրկած մի ձեռագրի հիշատակարանում Ավագին համարում էր իր պարոնը. «... գնալով ընդ նոսա (թաթարների) ... եւ ի մայրաքաղաքն Կեսարիայն Կապատկացոց նահանգին եւ անդի առեալ զԱւետարանս՝ պարոնն իմ Աւագն եւ ետ ինձ...»[21]։

Այդպես չէր Հասան-Ջալալի փոխհարաբերությունն իր ժամանակի Զաքարյան իշխանապետների հետ։ Նա «բնակաւոր ինքնակալ» էր Ներքին Խաչենում, իրեն համարում էր «թագաւոր բարձր և մեծ Արցախական աշխարհի»[22]։ Սակայն նրա այս բարձր կոչումը մենք տեսնում ենք ոչ միայն Ջալալի սեփական գրություններում։ Նրա թագավոր լինելը, ըստ պարսիկ ժամանակագրի վկայության, ընդունում էին նույնիսկ Վրաց միապետները[23]։

Այս հարցերի հանգամանալից քննությունը թողնելով հաջորդ

21 Մատենադարանի ձեռ. № 7347, թ. 343բ։

22 Տե՛ս Գանձասարի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունը։ Ս. Պողոսյանը գրել է, թե Զաքարյան զորապետների «երրորդ ճյուղը Զաքարեի և Իվանեի հորեղբայր Վահրամի ժառանգներն էին, որոնք հաստատվել էին Արցախի նահանգում և կալվածներ ունեին Գարդմանում, Փառիսոսում, Շամքորում և այլ գավառներում» («Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Երևան, 1965, էջ 104)։ Իրականում Վահրամ Զաքարյանը և նրա ժառանգները ոչ մի կապ չունեին Արցախի հետ և տիրություն էին անում Ուտիքի արևմտյան գավառներին՝ մինչև Շամքոր։ Նրանց նստավայրն էր Գագ ամրոցը, որից էլ Վահրամը կոչվում էր նաև Գագեցի, վրաց աղբյուրներում Գագելի (տե՛ս Կիրակոս, էջ 163, 243, «Վրաց աղբյուրները», Բ, էջ 23—24, 34, 51 և հտգ.)։

23 «Ученые записки Института востоковедения АН СССР», т. IX, Л., 1954, стр. 204

գլխին, ասենք, որ Զաքարյանների շրջանը Հայաստանի միջնադարյան կյանքում արտակարգ բախտավոր փուլերից մեկն էր, երբ երկրի քաղաքական-տնտեսական մեծ վերելքի համեմատ ծաղկեց և հոգևոր ու մշակութային կյանքը։ Սկսվեց շինարարական մի անախորժեցնթաց եռուզեռ, որի փառահեղ արգասիքները՝ վանքերն ու նախընթաց եռուզեռ, որի փառահեղ արգասիքները՝ վանքերն ու ճարտարապետական այլ կառույցները, խաչքարերն ու քարդործ վարպետների մյուս ստեղծագործությունները, իրենց արվեստի բարձրությամբ պիտի մնային օրինակելի հետագա բոլոր դարերում։ Դպրության, գրականության, գրչության արվեստի դարձյալ անախադեպ մակարդակ պիտի ստեղծվեր և, որ ամենաուրախալին է, հայկական համարյա բոլոր նահանգներում։

Սակայն ճակատագիրը հայ ժողովրդի համար երբեք չէր նախատեսել տևական երջանկություն։ 1220/21 թթ. Անդրկովկասում երևացին մոնղոլական առաջին այն ավարառու գնդերը, որոնք ասես եկել էին խուզարկելու ապագա կողոպուտների և ահարկու նվաճումների վայրերը։ Այնուհետև Ջալալեդդինի զորագնդերը շուրջ յոթ տարի հոշոտեցին Հայաստան երկիրը։ Իսկ 1236 թ. սկսած՝ շատ երկար ժամանակ Հայաստանն ու Անդրկովկասը պետք. տնքային թաթար-մոնղոլական դաժան տիրապետության տակ։

Ներքին Խաչենի տերերը XII դ երկրորդ կեսին և XIII-ի սկզբներին.— Ինչպես պարզ երևում էր Մխիթար Գոշի արժանահավատ ժամանակագրությունից, XII դ. կեսին Ներքին Խաչենում ստեղծված ինքնուրույն իշխանությունն ուներ իր վարչական ու հոգևոր կենտրոնները։ Գանձասարը, «որ էր տապանատուն նախնեաց», իշխանության եպիսկոպոսանիստն էր, հավանաբար, առավել հռչակավոր կենտրոն, քան գավառի մյուս առաջնորդարանը՝ Ս. Հակոբա վանքը (այժմյան Քոլատակ գյուղի մոտ) և դա այն պատճառով, որ Գանձասարն առավել մոտ էր իշխանանիստին ու նախնյաց տապանատունն էր միաժամանակ։

Իշխանության վարչական կենտրոնը գտնվում էր Գանձասարից հարավ, Խաչենագետի աջ ափին, մի բլրի վրա և կոչվում էր Խոխանաբերդ (Խաչխանաբերդ[24], նաև Խոյախան բերդ)[25]։ Ճիշտ է, Խոխանաբերդի տերերն ունեին նաև ուրիշ հռչակավոր բերդամ-

24 Կիրակոս, էջ 269. «...բերդն, որ կոչի Խոխանաբերդ՝ ըստ բարբառոյն պարսից»։

25 Կեչառիսի վանքի վերակառուցման առթիվ Հասան-Ջալալն իր արձանա-

գրոցներ, ինչպես Հավքախաղացը[26] կամ Կաչաղակաբերդը Խաչենագետից հարավ, Քոլատակի ու Պատարա գյուղերի միջև, մի բարձր ու անմատչելի ժայռի վրա, Ջրաբերդը Թարթառի ափին, Գեռաքարը դարձյալ Խաչենագետի աջ ափին։ Սակայն Խոխանաբերդն էր իշխանանիստը, և Ներքին Խաչենի պայազատներն իրենց տիրապետությունը շեշտում էին այս բերդի անունով. «տէր Խոխանաբերդոյ» նշանակում էր «Ներքին Խաչենի իշխան»։

Վախտանգ մեծը և իր որդիները.— Գոշի ժամանակագրության ընդգրկած տասնամյակներին Ներքին Խաչենի իշխանությունը, հավանաբար, գլխավորում էր Վախտանգ մեծ իշխանը։ Ճիշտ է, նրան վերաբերող ո՛չ մատենագրական տեղեկություններ կան մեր ձեռքի տակ, ո՛չ էլ անմիջապես նրա անունից պահպանված վիմական արձանագրություններ։ Սակայն նրա որդուն ու թոռանը վերաբերող հիշատակները պահել են և նրա անունը։

Թոռ Վախտանգ-Տանգիկը 1212-ին գրած մի Ավետարանի հիշատակարանում հիշում է իր հայր Հասան մեծին և պապ Վախտանգ մեծին։ Ձեռագիր այս շքեղ Ավետարանը պատվիրվել է «Հրամանաւ և ծախիւք բարեսէր և աստուածահաճո առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա...»[27]։

Այսքանով դժվար է պարզել Վախտանգ պապի ժամանակը։ Բնագավառն, իհարկե, պարզ է, որովհետև ձեռագրի պատվիրատուն և հիշատակարանի հեղինակը Ներքին Խաչենի տեր Հասան Ջալալի հայր Վախտանգ-Տանգիկն է, և հասկանալի է, որ նրա պապը էլ նույն Ներքին Խաչենի տերն է եղել՝ Խոխանաբերդով ու սրա շրջականերով հանդերձ։

Ժամանակը մասամբ պարզվում է մի այլ հիշատակով, որը վերաբերում է Վախտանգ-Տանգիկի հայր Հասան մեծին և որոշակի մանրամասներ է հաղորդում։

գրության մեջ իրեն կոչում է «տէր Խոյախան բերդոյ» (տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 317)։

Հետագայում կոչվել էր նաև Դարպասներ։ Բերդի ավերակների նկարագրությունը՝ տե՛ս «Արցախ», էջ 181։

26 Մ. Բարխուտարյանցը Հավքախաղացը տեղադրում է Հաթերքից վերև, Դադի վանքի դիմաց, Թարթառի աջ ափին (տե՛ս «Արցախ», էջ 211, 427), որ սխալ է։

27 Մատենադարան, ձեռ. № 378, էջ 308ա։ Հմմտ. Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 761։ И. А. Орбели, Избранные труды, стр. 148

Ձեռագրիս վերաբերող տեղեկությունները՝ տե՛ս Վախտանգ-Տանգիկի ու նրա կին Խորիշահի մասին խոսելիս։

Հասան մեծն իր կանգնեցրած մի խաչքարի վրա իրեն կոչում է «որդի Վախտանգա» և ամուսին «Թագուհո՝ դստեր Թագ(ա)ւորին Բաղաց»[28]։

Խաչքարը կանգնեցվել է 1181 թվականին՝ «ի տապանի դստեր իմո (Հասանի) Խաթունին եւ մաւր իւր...»։ Նշանակում է՝ այս թվականին Հասանն արդեն հասուն տղամարդ էր։ Սակայն անկախ այս մի փաստից էլ, Հասանի որդի Վախտանգ-Տանգիկը, որ մահացել է 1214-ին, իշխանական աթոռն զբաղեցնելու համար հասուն որդի ուներ, նշանակում է ինքը մահացել է առնվազն 50—60 տարեկան հասակում։ Իսկ եթե հորը՝ Հասան մեծին էլ իրենից մի 30—40 տարով մեծ համարենք, նա ծնված պիտի լիներ ամենաուշը՝ 1125—1130 թթ.։ Ուրեմն Վախտանգ մեծն էլ ծնված կարող էր լինել XI դարի վերջին, եթե ոչ ավելի վաղ։

Այսպիսով, Ներքին Խաչենի առաջին գահերեց տերերի իշխանապետության մոտավոր ժամանակները կարելի է որոշել հետևյալ կերպ. Վախտանգ մեծ՝ 1120—1150, Հասան մեծ՝ 1150—1181, սրանից հետո՝ մինչև 1214-ը՝ Վախտանգ-Տանգիկ։

Վախտանգ Ա-ի հարս Թագուհին, ինչպես Հասան Ա-ի խաչքարի արձանագրությունից է պարզվում, կոչվել է «դուստր Թագաւորին Բաղաց»։ Բաղաց ո՞ր թագավորի դուստրն է եղել՝ դժվար է հաստատ խոսք ասել։ Նկատի առնենք, որ Բաղաց-Կապանի վերջին թագավոր Գրիգորը (մահացած 1166 թ.) միայն մի դուստր է ունեցել՝ Կատա անունով, որին ամուսնացրեց Գեռաքարեցի կոչված Հասան իշխանի հետ (Հասանը խոխանաբերդցիների տոհմակիցն էր)։ Գրիգոր թագավորի նախորդը Բաղաց Կապանի գահի վրա՝ նրա հայր Սենեքերիմն էր՝ Խաչենի կրտսեր Սևադայի (Սահակ-Սևադայի թոռան) որդին, որը Գանձակի ամիրայի ու Շիրակի Գրիգոր Ապիրատի խարդավանքին զոհ գնաց 1190-ական թվականներին՝ թողնելով չորս որդիներ՝ «Գրիգոր, Սմբատ, Սևադա և դուստր մի»[29]։ Սյունյաց պատմիչն այս միակ դստեր անունը չի տալիս։ Բայց մենք չենք կարող հանձին նրա տեսնել Հասան Ա-ի կին Թագուհուն, որովհետև վերջինիս ժամանակը նրան չի համապատասխանում։ Բացի դրանից, Սենեքերիմն ու Ներքին Խաչենի տեր Վախտանգ Ա-ը տոհմակիցներ են գալիս, որ կարող էր խանգարել նրանց խնամիությանը։ Սակայն հիշենք, որ Ներ-

---

28 Խաչքարն այժմ գտնվում է Գանձասարի վանքում։

29 Օրբելեան, էջ 319։

քին Խաչենի (Խոխանաբերդի) տերերն ու Փառիսոսի Սահակ- Սևադան տարընդոստել էին Գրիգոր-Համամից՝ IX դարի վերջին կամ X-ի սկզբին և XII-ի սկզբին պետք է իրարից հեռացած լինեին ամենաքիչը 6—7 սերնդով, որը կրոնական ամենախիստ օրենքով անգամ չէր կարող արգելք լինել խնամիության համար։ Այսուհանդերձ, Թագուհու հոր հարցը մնում է առկախ։

Վախտանգ Ա-ի մահվան թվականը հայտնի չէ, թեպետ Հր. Աճառյանը խոսելով նրա ու թոռ Վախտանգ-Տանգիկի մասին, գրել է, թե «երկուսն էլ (Վախտանգ Ա և Բ) մեռել են 1214 թ.» և գրում է՝ «Շողակաթ, 198»[30]։ «Շողակաթ» ժողովածուի 198-րդ էջում նկարագրվում է Վախտանգ Բ-ի կամ Տանգիկի ու Խորիշահի պատվերով ընդօրինակված Ավետարանը, և նման տեղեկություն չի հաղորդվում։ Հավանական է՝ գիտնականի եզրակացությունը խարսխված է Վարդան Վարդապետի մի վկայության վրա, որն ասում է. «ի վեց հարիւր վաթսուն և երեք թվին (1214)... մեռաւ Վախթանգ բուն տէր նորա (Հաթերքա—Բ. Ու.) և որդիք իւր տարաժամ. և միւս Վաղթանգ Սակռեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ...»[31]։

Այստեղ ոչ մի խոսք չկա Ներքին Խաչենի տեր Վախտանգի (Սակռյանցի) պապ Վախտանգ մեծի մասին։ Առաջին Վախտանգը Հաթերքի տերն էր, Վերին Խաչենի իշխանաց իշխան Հասանի վեց որդիների ավագը։

Վախտանգ մեծը պետք է որ մահացած լիներ մինչև 1167 թվականը, քանի որ այդ թվականին, ըստ Խոստրովիկի վարքի տեղեկության, Ներքին Խաչենի իշխանն էր նրա որդի Հասան Ա-ը[32], մի հանգամանք, որ չէր կարող լինել հոր կենդանությամբ։

Թագուհին մահացած պիտի լինի 1181 թ. կամ նրանից առաջ, որպեսզի այդ տարում ամուսին Հասանը նրա հիշատակին խաչքար կանգնեցներ։

Վախտանգ Ա-ի՝ Տանգիկի պապի զավակներից հայտնի են Հասան Ա-ը և Սմբատը։

30 Հր. Աճառյան, *Հայոց անձն. բառ.*, հատ. Գ, էջ 55։

31 Վարդան Վարդապետ, էջ 140։

32 Հ. Մանանդյան և Հր. Աճառյան, *Հայոց նոր վկաներ*, Վաղարշապատ, 1903, էջ 31. «Ի թվ. ՈԺԶ (1167) ... յիշխանապետութեանն Հասանայ՝ որդւոյ Վախտանգայ, ի հայրապետութեանն տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց Մեծաց և տան Աղուանից տեառն Ստեփաննոսի... և յիշխանապետութեանն Արևելից Եյոկուզին...»։

Հասան մեծը, ինչպես վերը՝ Խոստրովիկի մասին Մ. Գոշի գրած վարքաբանությունից տեսանք, Ներքին Խաչենի իշխանն էր տակավին 1167-ին։ Նրա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չունենք։ Հավանաբար իշխել է մինչև XII դարի 80-ական թվականների առաջին կեսը։ Մենք նրա անունից արձանագրություն ունենք 1174 թվականից. Գանձասարում այժմ էլ մնում է կոտրված մի խաչքար, որի գիրն է. «Թիւն ՈԻԳ ես Հասան կանգնեցի...»։ Մնացածն անհնար է կարդալ[33]։

Հաջորդը վերոհիշյալ խաչքարն է, որ Հասանը կանգնեցրել է կնոջ և աղջկա հիշատակին .«Թիւն ՈԼ (1181) էր || ես Հասան որդի Վախտա || նգա կանգնեցի զխաչս ի տապան || ի դստեր Խաթունին եւ մաւր ի || ւր Թագուհու դստեր Թագուրին Բաղաց»[34]։

Խաչքարը գտնվում է Գանձասարի վանքի տաճարի հյուսիսային պատի տակ, գետնի մեջ տնկված։ Թվականը գրված է ուռուցիկ (ռելիեֆ) տառերով։

Հ. Օրբելին սույն խաչքարի ցածի տարածության քանդակներն այսպես է նկարագրում. «Խաչի տակ շրջանակն է՝ բաժանված երեք մասի։ Առաջին մասում տեղավորված է մահճի բարձրաքանդակ պատկեր (երկու զուգահեռ գծեր, արանքում՝ հորիզոնական գիծ). մահճում ներկայացված է մի կին՝ երեխայի հետ. աջում քանդակված է իրար հաջորդող երկշար շրջանակների խումբ, որի շրջանակներն իրար են հաջորդում հորիզոնական գծերով»[35]։

Խաչքարի վրա մահճի, կնոջ ու երեխայի բարձրաքանդակներ չկան։ Կարելի կլիներ մտածել, թե քանդակները քայքայվել են, եթե, իհարկե, նրանց հետքը մնացած լիներ։ Սակայն խաչքարը լավ պահպանված է։ Հավանաբար գիտնականը նկարագրության մեջ սույն խաչքարը շփոթել է մի ուրիշի հետ։ Իսկ երկշար շրջանակները, որոնց մասին խոսում է նա, ծաղկած խաչի մանրամասներն են։ Խաչի ստորին թևի տակից՝ կողքերի վրա փարթամորեն բարձրանում են երկու շքեղ ոստեր, երեքական ճյուղերի բաժանվում հորիզոնական թևերի տակ, և այս ճյուղերից ամեն մեկն էլ իր հերթին վերջավորվում է բարձրաքանդակ գնդիկով։ Համանման քանդակներով խաչքարեր, հատկապես XII—XIII դարերից, շատ կան

33 Հ. Օրբելին ավելացրել է նաև «զխաչս», որ այժմ չկա (տե՛ս *И. Орбели*, Надписи Гандзасара и Гавошптука (այսուհետև՝ Օրբելի), № 32:

34 Արձանագրությունը հրապարակել է Հ. Ա. Օրբելին (տե՛ս *И. А. Орбели*, Бытовые рельефы на хаченских крестных камнях XII—XIII веков. Избр труды, էջ 199, նաև՝ Օրբելի, № 32։

35 *И. Орбели*, Бытовые рельефы, էջ 199:

Խաչենի տարածքում։ Այս մեկը, սակայն, պատկանում է այն լավագույնների թվին, որոնք աչքի են ընկնում քանդականախշերի բարեձև մշակվածությամբ։

Հասան մեծի մահվան տարին հայտնի չէ։ Սակայն Գանձասարի վանքի արևմտյան պատի տակ մի փառաշուք խաչքար կա, 1202 թ.՝ կանգնեցված Հասան մեծի որդի Վախտանգի անունից. «ես Վախտան||գ որդի Հասա||նա կանգնեց||ի զխաչս ի տ(ա)պան||ի որդոյ իմոյ, աղաւթս յիշեցէք, թ. ՈՄԱ» (1202)[36]։

Մեզ թվում է՝ այս թվականին Հասան Ա-ը չկար այլևս, ապա թե ոչ՝ արձանագրության մեջ նրա անունն այլ կապակցության մեջ կդրվեր։

Վախտանգ-Տանգիկ՝ հայր Հասան-Ջալալի.— «Տանգիկ»-ը հավանաբար Վախտանգ անվան վերջին մասն է՝ փաղաքշական «իկ» մասնիկով հանդերձ։ Անվանը փոքրացուցիչ մասնիկ ավելացնելու մեջ կարող էր դեր խաղացած լինել նաև նույն ժամանակ Խաչենում գահերեցի իրավունքով իշխող տոհմակից մյուս Վախտանգը, որը Հաթերք գավառի տերն էր և կոչվում էր «գըլխաւոր այլոց իշխանաց»[37]։ Վերջինս, որքան հայտնի է, տարիքով էլ էր Տանգիկից մեծ, որովհետև իշխանության գլուխ էր անցել 1181-ին և 1214-ին (մեռնելու տարին) արդեն տարեց մարդ պիտի լիներ. այսպես թե այնպես, միայն 33 տարի իշխանապետ էր ե-

36 Հր. Աճառյանը սխալմամբ Հասանին է վերագրում այս խաչքարը՝ գրելով «Հասան, հայր Վախտանգի, որ մի խաչքար է կանգնեցրել Գանձասարում (երևի իր հոր) դամբարանի վրա 1202 թ. «Արցախ», 179 (տե՛ս «Հայ. անձն. բառ.», Գ, էջ 55)։

Իրականում խաչքար կանգնեցնողը Հասանի որդի Վախտանգն է. «ես Վախտանգ որդի Հասանա...»։ Մակար վարդապետն այս արձանագրությունն արտագրել է պակասավոր (տե՛ս «Արցախ», էջ 179. «Թուին ՈՄԱ. ես Վախտանգ որդի Հասանա կանգնեցի զխաչս ի տապանի... (կոտրած է)»։

Եթե խոսքն ուրիշ խաչքարի մասին չէ, ապա մեր կարդացած արձանագրության խաչքարը, ճիշտ է, վնասվածքներ ունի, սակայն գիրը լրիվ ընթերցվում է.

37 Հ. Օրբելին, խոսելով Հասանի և նրա որդի Վախտանգ-Տանգիկի (Հասան-Ջալալի պապի ու հոր) մասին, նրանց հետ նույնացնում է Հաթերքի մեծ իշխան Հասան-կրոնավորյալին ու սրա որդի Վախտանգ իշխանաց իշխանին (տե՛ս նրա՝ Հասան-Джалал, князь Хаченский, стр. 146—147)։

Գիտնականի ուշադրությունից վրիպել է նույնիսկ մի այնպիսի փաստ, ինչպիսին Մ. Գոշի տեղեկությունն է վերջիններիս մասին, որով նրանք հաստատապես կապվում են Հաթերքի հետ (ինքը հիշում է այդ տեղեկությունը. տե՛ս անդ, նաև՝ էջ 163), իսկ Վախտանգ-Տանգիկը և նրա նախորդն ու հաջորդները Խոխանաբերդի տերերն էին։

ղել։ Իսկ Տանգիկ-Վախտանգը մահացավ նրա հետ միաժամանակ, նույն 1214 թ., և գրեցին, թե «յերիտասարդ հասակի փոխեցաւ ի Քրիստոս»[38]։

Ինչպես վերը տեսանք, Վախտանգին վերաբերող առաջին վիմագրական տեղեկությունը նրա կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ է՝ 1202 թվականից. «ես Վախտան||գ որդի Հասա||նա կանգնեց||ի զխաչս ի||տ(ա)պանի որդո իմոյ աղ||աւթս յիշեցէք թ. ՈՄԱ» (1202)[39]։

Այս թվականից, ուրեմն, նա արդեն երեխաներ ուներ։ Երեխաներ ենք ասում, որովհետև մահացածը չէր կարող ավագ որդին լինել։ Ըստ Խաչենի ավանդույթի՝ ավագը պետք է կոչվեր պապի անունով՝ Հասան։ Հասանը (Ջալալ կոչված) մնաց և, 1214-ին ժառանգելով մահացած հոր իշխանական աթոռը, դարձավ Խաչենի ինքնիշխան տիրակալը։ Կարծում ենք, որ մահացածը Գանձասարի շինարարական մեծ արձանագրության մեջ հիշատակված երրորդ եղբայր Դաւլան է, որը հայտնի չէ այլուստ[40]։

Վախտանգն ամուսնացած էր ժամանակի վրաց-հայկական միացյալ զորքերի գերագույն հրամանատար (ամիրսպասալար) Սարգիս Զաքարյանի դուստր Խորիշահի հետ, որը քույրն էր հետագայում հոր պաշտոնը ժառանգած Զաքարե ամիրսպասալարի և Վրաց արքունիքի աթաբեկ Իվանեի։

Սարգիս Զաքարյան ամիրսպասալարն իր մյուս երեք դստերին ևս կնության էր տվել ժամանակի հայ նշանավոր նախարարական տների ներկայացուցիչներին։ Դոփը Խաչենի իշխանության Ծարա ճյուղն էր հարս գնացել և կինն էր Հասան Ա-ի[41]։ Նանան Լոռու Կյուրիկյան Աբասի կինն էր[42]։ Իսկ նրանց Նրջիս անունով քույրը, որ, հավանաբար, կրտսերն էր, հարս էր գնացել Դսեղի

38 Տե՛ս նրա մահվանը վերաբերող արձանագրությունը, որի մասին կխոսվի հետո։

39 Մեր հավաքածուից։ Ծ-ն քանդակված է ձ ձևով։

40 «Արցախ», էջ 174։

41 Տե՛ս Դոփի արձանագրությունը Ծարա իշխանական տան հոգևոր կենտրոն Խաղավանքում. «Ի թուին ՈՀԴ (1225) ես Դաւփս դուստր Սարգսի, քոյր Զաքարէի և Իւանէի...»։

42 Ջալալեանց. Ա, էջ 38. «Ես Նանա յազգէ Բագրատունեաց, դուստր մեծի Սարգսի, քոյր Զաքարէի և Իւանէի, կին Աբասայ թագաւորին, որ վախճանեցաւ կեսաւրեայ, խաւարեցոյց զիս, կանգնեցի զխաչս, շինեցի զկամուրջս յիշատակ նմա...»։

Ջալալյանցը «կեսաւրեայ» (երիտասարդ հասակում)-ի փխ. արտագրել է «Կեսարիայ», որ սխալ է։

Մամիկոնյանների տունը[43]։ Սարգիս զորապետը, որ ձգտում էր տնօրինել Արևելյան Հայաստանի ճակատագիրը, խնամիական սերտ կապերով իրեն ու իրար էր կապել երկրի հիմնական ու կանգուն իշխանությունների ներկայացուցիչներին։

Վախտանգի իշխանական գործունեությանը վերաբերող հանգամանալից տեղեկություններ չկան։ Նրա մասին խոսող միակ ծավալուն վավերագիրն այն հիշատակարանն է, որ գրված է իշխանի ու նրա կողակից Խորիշահի անունից, իրենց իսկ պատվիրած, ապա և խոխանաբերդցիների տոհմական սեփականությունը դարձած հայտնի Ավետարանում։

Այս ձեռագիրը նկարագրված է Գարեգին Հովսեփյանի կողմից[44]։ Իսկ Վախտանգի ու Խորիշահի հիշատակարանը հրատարակել են Մակար վ. Բարխուտարյանցը (միայն սկիզբը)[45], Հ. Օրբելին[46] և Գարեգին Հովսեփյանը[47]։ Այսուհանդերձ, մենք այն մեջ ենք բերում ամբողջությամբ, նկատի առնելով պարունակած մի շարք մանրամասներ, որոնք կարևոր են իշխանի և իշխանուհու կենսագրության հանգամանքները բացահայտելու առումով։

էջ 308ա. «Աստանոր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ Աւետարանիս հրամանաւ և ծախիւք բարեսէր և աստուածահաճոյ առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա և քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստրը մեծ սպարապետին Սարգսի։ Արդ ես Վախտանգ և լծակից իմ Խորիշահ ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ՝ ծնաք երիս ուստերս և երիս դստերս ժառանգ մարմնաւոր և յիշատակ հոգևոր։ Այսմ առաւել նախանձախնդիր եղեալ՝ բազում փափագանաւք և յաւժարութեամբ սրտիս մերոց շինեցաք զեկեղեցին և երևելի սպասիւք զարդարեալ ներքո[յ] և արտաքո[յ] և հաստահեղուն հաւրինուածովք։

308բ. Աստանոր հոգւոյ ակամբ նա[յ]եցեալ ի փառսն, զոր խոստացեալ է սիրելեաց իւրոց անսուտն Աստուած, [ն]մա[ն]ապէս և մեք կամեցաք գրել զանուանս մեր ի գիրն կենդանի՝ վստահ եղեալ ի մարդասիրութիւն աստուծոյ։ Ձկենդանարար և զցանկալի ըզսուրբս զայս Աւետարան ետուք գրել բազում և զանազան ռեզովք զհամաբարբառս և ոսկեղեղ գրով զառաջս աւետարաններոյս զարդարեալ և յիշատակ յաւիտենից լինել ի տան տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ։ Զմտաւ ածեալ զբանս մարգարէին, որ ասէ՝ Պատուիրանք տեառն լոյս եւ լոյս տան աչացս, և երկիւղն Աստուծոյ մտա յաւիտեան։ Արդ ես Վախտանգ և զուգակից իմ Խորիշահ ցանկացող եղաք սրբո(յ) Աւետարանիս»[48]։

Ե՞րբ է գրվել այս հիշատակարանը, հայտնի չէ։ Դժբախտաբար չի պահպանվել նաև ձեռագրի ընդօրինակման թվականը. ըստ երևույթին այն գրվել է այն թերթերի վրա, որոնք ընկած ու կորած են համարվում[49]։ Գարեգին կաթողիկոսի կողմից՝ հիշատակարանը գրելու հավանական տարիներ են համարվել 1212—1216[50], մեկ էլ 1212—1223 թվականները[51]։ Մատենադարանի աշխատակիցները դրա համար ավելի մեծ ժամկետ են նշանակել՝ 1261 թվականից առաջ[52]։

Բայց ինչո՞ւ 1261-ից առաջ։ Կամ ինչո՞ւ 1212—1223-ը, նույնիսկ 1212—1216-ը, երբ Վախտանգ-պատվիրատուն մահացել է 1214-ին[53]։

---

43 Ջալալեանց, Ա, էջ 103, 111, 141։ Հմմտ. «Խաղբակյանք», էջ 8, ծան. 4։

44 Տե՛ս Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը, 74, 75, «Շողակաթ», էջ 198—199։

45 Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Ա, էջ 142։

46 И. А. Орбели, Избранные труды, стр. 148.

47 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 761—762։

48 Մատենադարան, ձեռ. № 378, թ. 308ա, բ։ Համեմատիր՝ И. А. Орбели, Избранные труды, էջ 148, Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 761—762։ Վերջինում՝ «ծնաք երիս ուստերս և երիս դստերս»-ից վրիպել է երկրորդ «երիս»-ը։

Գարեգին կաթողիկոսը հաղորդում է, որ սույն հիշատակարանը «երեք ուրիշ թղթերի հետ կտրված և պահպանակ է եղել 1497 թվի մի Յայսմաւուրքի, և Սարկաւագ վ. Ամատունին գտել ու դրել է այստեղ՝ իր տեղում» (Յիշատակարանք, Ա, էջ 762)։

Ձեռագիրը կաշեկազմ է, բաղկացած 308 թերթ հաստ մագաղաթից, գիրը՝ երկաթագիր, հատվածների սկզբնագրերը՝ մանրանկարչական, առաջին տողը՝ խեցոսկով գրած։ Ոսկյա խոշոր տառերով է նաև հետևյալ ձոնը՝ 9-րդ թղթի բ էջի կապույտ ֆոնի վրա. «Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրական փառաւք, զԽորիշահ և զՎախտանգ ընդ սուրբս քո դասեա, ամէն»։

6-րդ թղթի ա էջի խորանի գերանների վրա գունազարդ գրված է. «Տէր Աստուած, զՎախտանգ և զԽորիշահ յիշեա ողորմութեամբ քո և ողորմեա»։

Գրիչն ու նկարիչն է Թորոսը, որի ինքնագիրը պահպանվում է. «զԹորոս նուաստ գրիչ յիշեսջիք ի Քրիստոս» (թ. 2 ա) և «Թորոս նկարիչ» (թ. 9 բ), նաև՝ «Քրիստոս Աստուած, ողորմեա Թորոս գրչի, ամէն, և ծնողաց իւրոց և ազգականաց» (թ. 258 բ)։

49 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 762։

50 Անդ, էջ 759—760։

51 Անդ, էջ 762։

52 «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», Ա, Երևան. 1965, էջ 309. «ԺԳ դար (1261-ից առաջ)»։

53 Վարդան Վարդապետ, էջ 140։

Հիշատակարանում խոսվում է այն մասին, որ Վախտանգն ու Խորիշահը կառուցել են եկեղեցի՝ «երևելի սպասիւք զարդարեալ ներքոյ և արտաքոյ և հաստահեղուն հաւրինուածովք»։

Ի՞նչ եկեղեցի է կառուցվածը։ Խորիշահն իր մի արձանագրությամբ պատմում է. «...վերստին շինեցի զեկեղեցին Մեծառանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղաւթս յիշեցէք»[54]։

Խոսքը Մեծառանք գավառի եպիսկոպոսանիստ Ս. Հակոբա վանքի մասին է, որը և Խոխանաբերդի ճյուղի հոգևոր կենտրոններից է եղել։ Վախտանգի օրոք կառուցված ուրիշ վանական շինության մասին տեղեկություն չկա։ Նշանակում է՝ Ավետարանի հիշատակությունն ու արձանագրության կոնկրետ խոսքը վերաբերում են նույն վանքի շինարարությանը, որ կատարվել է 1212-ին։ Հետևապես և 1212-ն է ձեռագրի ընդօրինակման ու հիշատակարանը գրելու տարին։

Երկու տարի հետո՝ 1214 թ., Վախտանգը մահացել է։ Իսկ Խորիշահն ապրել է երկար՝ 1216-ից սկսած մասնակցելով Գանձասարի փառահեղ վանքի շինությանը։ Այս ընթացքում, ամուսնացնելով իր երեք արու զավակներին՝ Հասան-Ջալալին, Զաքարեին ու Իվանեին, ճգնելու գնաց Երուսաղեմ «և զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն տեսողսն և զլսողսն, քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս և ի կարօտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, և ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր։ Եւ անդէն մեռաւ, զոր աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր՝ լոյս կամարաձև կացեալ ի վերայ գերեզմանին առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս»[55]։

Խորիշահը մահացել է մինչև 1240 թ., որովհետև Գանձասարի վանքի շինարարությանը վերաբերող (1240) մեծ արձանագրության մեջ նրա մասին խոսվում է իբրև վախճանվածի. «... ի խփել լուսամտին արևելից մայր իմ կրոնաւորեալ չոգաւ յԵրուսաղէմ երկրորդ անգամ, անդէն ի դրան Յարութեան խարազանազգեաց ճրգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ և անդէն պահեցաւ»,— քանդակել է որդին՝ Հասան Ջալալը։

Հաթերքի տերերը XII—XIII դարերում և Վերին Խաչենի կամ Մարա Դոփյան ճյուղի սկզբնավորման հանգամանքները.— *XII դարի երկրորդ կեսը և XIII-ի սկիզբը Խաչենի իշխանության հայրենապաշտպան պայքարի ու հաղթանակների, ծաղկման ու վերելքի փառավոր ժամանակաշրջանն էր։ Եվ հենց այս ժամանակ էլ՝ արդեն եռաճյուղ իշխանության գահերեց տերը Հաթերքի գահակալն էր՝ իշխանաց իշխան Հասանը (1142—1182), նրանից անմիջապես հետո, մինչև 1214 թվականը՝ Հասանի ավագ որդի Վախտանգը։ Հասանը Դադի վանքում քանդակած իր արձանագրությամբ հետևյալն է հաղորդում. «Ես Հասան, որդի Վախտանգա, տէր Հաթերքո եւ Հանդաբերդո, Խաչինաբեր[դ]ո եւ Հաւախաղացին, կացի յաւագութեան ամս խ (40) շատ պատերազմաւ եւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբ աստուծոյ։ Եւ եղեն ինձ Զ (6) որդի։ Զբերդերս եւ զգաւառս ետու նոցա, եւ ես եկի ի վանքս մաւտ յիմ եղբայրս ի տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնաւոր եւ բերի զխաչաքարս յԱղուա շատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք եւ կանգնեցի սուրբ նշան հոգո իմո յիշատակ։ Արդ վասն ձեր հոգոյդ որք ընթեռնոյք, զիս յաղաւթս յիշեցէք»[56]։

Հասանի հետ Դադի վանք[57] էր գնացել նաև կինը՝ Կյուրիկե Բագրատունի թագավորի դուստր Մաման[58]։

Հասանի ու Մամայի վեց տղաների մասին պահպանվել են մատենագրական ու վիմագրական ստույգ տեղեկություններ։ Նրանք էին՝ Վախտանգը, Վասակը, Սմբատը, Գրիգորը, Խոյդանը և Գրի-

---

54 «Արցախ», էջ 171, «Բանասէր», 1901, էջ 142։

55 Կիրակոս, էջ 268։

56 Հ. Օրբելի, ԱՀՀ, № 160։

Գիտնականը սույն արձանագրությունն ընդօրինակել է Դադի վանքի կաթողիկեից՝ հաղորդելով, որ «Տաճարում սեղանի քար (վերին) է ծառայում խոշոր խաչքարի մի մեծ մասը, որի կողքի վրա կա սույն արձանագրության 20 տողը։ Արձանագրության մնացած տողերը՝ նույն խաչքարի մյուս կտորի վրա՝ գտնվում են տաճարի հարավային պատի դիմացի խուցի դռան մոտ» (նույն տեղում)։

Արձանագրության առաջին մասն ընդգրկող քարն այժմ ընկած է տաճարի առաջ։ Սակայն դժվար թե այն խաչքարի մաս եղած լինի, որովհետև կանոնավոր քառանիստ պրիզմայի ձև ունի և իր վրա խաչի ոչ մի նախշ չի կրում։ Հավանական է՝ այն եղել է հենց սեղանի հիմք, որի մի մասը՝ արձանագրության վերջին ինն տողերով՝ այժմ ընկած է Հասանի կառուցած փոքր եկեղեցու ներսում։ Մյուս մասը՝ արձանագրության վերջին 6 տողով, որ ցարդ կորած էր համարվում, մենք գտել ենք Արզու խաթունի կառուցած եկեղեցու հարավային պատի տակից։ Այն հողով ծածկված է եղել։

57 Դադի վանքի պատմության ու ճարտարապետության հանգամանքների քննությունը՝ տե՛ս Մեսրոպ Մագիստրոս, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութա վանք, «Էջմիածին», 1971, էջ 62—72։

58 «Արցախ», էջ 204։

գորիսը։ 1184 թ., երբ Մխիթար Գոշը մահմեդականներից հալածված և Գանձակում նստող Աղվանից կաթողիկոս Ստեփաննոսի խարդավանքներից զզված՝ ապաստանել էր Հաթերքում, այնտեղի, այլև ամբողջ Խաչենի իշխանաց իշխանն էր Վախտանգը։ Միջնադարի մեր մեծ իրավագետն ու պատմիչը նշում է, որ ինքը Դատաստանագիրքն սկսեց գրել «ի թուականութեանս հայոց ՈԼԳ (1184)... յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղընջուց՝ ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրաւնաւորեցելոյ և որդւոյ նորա Վախտանգայ ի դղեկին, որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց, և կողմանցն Կիւղիկեայ՝ մեծի իշխանին Ռուբէնին...»[59]։

Մխիթար Գոշը ևս վկայում է, որ Վախթանգը իսկապես գահերեցն էր Խաչենի իշխանության («գլխաւոր այլոց իշխանաց»), և նրա իշխանությունն առավել նշանակալից և հուսատու բեկորն էր վաղընջուց կորսված հայոց թագավորության։

Վախտանգն ու եղբայրները մի քանի տարի անց (1191) Գոշի համար կառուցում են Նոր-Գետիկի վանքը՝ մեծապես օժանդակելով Հյուսիս-արևելյան Հայաստանի այդ նշանավոր հոգևոր կենտրոնի հիմնադրությանը[60]։

Գոշը հետագա իր գործունեության ընթացքում միշտ էլ երախտագիտությամբ է հիշել Վախտանգին ու նրա եղբայրներին, հատկապես Վախտանգին ու նրա կին Արզու-խաթունին (վերջինս Կայենի ու Մահկանաբերդի տեր և Տփղիսի ամիրա Քրդի դուստրն էր, Դավիթ ու Սադուն իշխանների քույրը)։ Հայտնի է Դատաստանագրքի մի օրինակը՝ նվիրված Վախտանգին ու Արզու-խաթունին՝ հեղինակի երախտալից ընծայագրով. «Յիսուս Քրիստոս, յորժամ գաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգւով և մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ և զամուսին իւր զԱրզու խաթուն ի կեանս անմահս»[61]։

59 Մ. Գոշ, *Դատաստանագիրք*, էջ 70—73, Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 505։

Այս գրքի ցանկում (էջ 1233) Հաթերքի Վախտանգը (կինը՝ Արզու-խաթուն) շփոթված է Խոխանաբերդի տեր Վախտանգի (կինը՝ Խորիշահ) հետ։

60 Նոր Գետիկ վանքի շինարարությանը Հաթերքի իշխանազունների բերած մասնակցության և դրան վերաբերող արձանագրության քննությունը տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դաղի կամ Խութա վանք, էջ 70—71։

61 Ալիշան, *Հայապատում*, Ա, էջ 407։

Պահպանվել է նաև Գոշի Դատաստանագրքի՝ Վախտանգին ու Արզու-խաթունին նվիրված մի այլ օրինակը՝ հեղինակի հետևյալ ընծայագրով. «Տէր աստուած վայելել տացէ աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ ի կամս իւր զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»[62]։

Վախտանգի իշխանության օրերում Խաչենը շարունակում էր հերոսաբար ետ մղել թուրք-սելջուկյան բռնատիրության մնացորդների հարվածները։ Խաչենցիները սելջուկ ասպատակիչների դեմ մարտնչում էին ինչպես իրենց իշխանության սահմաններում, այնպես էլ հարևան հայկական գավառների ու մարզերի ոլորտներում։ Վախտանգի եղբայր Վասակը 1201 թ. ճակատամարտ է տալիս Գոլաշտյան բերդի համար[63]։ «Առ զնա (Գոլաշտյան բերդը—Բ. Ու.) յանաւրինաց... և բնակեցոյց անդ զորդին իւր և ինքն նահատակեցաւ ի վերա քրիստոնէից...»,— հաղորդում է մի խաչարձանի գիրը, որ ընդօրինակվել է Մ. Բարխուտարյանցի կողմից[64]։

1214 թ. վախճանվեց իշխանաց իշխան Վախտանգը։ Դրանից առաջ էլ մահացել էին նրա երկու արու զավակները. ավագ որդի Հասանը նահատակվել էր սելջուկ թուրքերի դեմ կռվելիս, կրտսերը՝ Գրիգորը, մահացել էր երիտասարդ հասակում։ Եվ գահերեց իշխանական աթոռը մնացել էր առանց օրինական ժառանգի։

Դա մի ժամանակ էր, երբ սելջուկյան տիրապետությունից ազատագրված հայկական համարյա բոլոր իշխանությունները փաստորեն միավորված էին Զաքարյան իշխանապետների հովանու տակ և գտնվում էին կազմավորված վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշնակցության մեջ։ Այս դաշնակցության երկրորդ դեմքը (Վրաց թագավորից հետո առաջինը) Իվանե աթաբակն էր, որի ձայնը և կամքը վճռական էին հայոց վերաբերող հարցերում։ Իվանեն, ինչպես և դրանից առաջ էլ նրա ավագ եղբայր Զաքարիա ամիրսպասալարը, ամեն կերպ ջանում էր Հայաստան աշխարհի բոլոր իշխանությունները հավաքել Զաքարյան զարմիկների կամ

62 «Բազմավէպ», 1848, էջ 117, Հ. Վ. Ոսկյան, Մատենագրական քննություններ, էջ 152—153։ Այս ընծայագիրը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մ. Գոշի «Դատաստանագիրքը» ստեղծման ժամանակից սկսած՝ կիրառություն է ունեցել Արևելյան Հայաստանում։

63 Կարծում ենք՝ Սյունյաց պատմության մեջ հայտնի Գոլոշտի բերդն է, որի անվամբ կար նաև վանք (տե՛ս Օրբելեան, էջ 261, 398, 511)։

64 «Արցախ», էջ 196։

նրանց հետ խնամիացած տոհմերի ձեռքը։ Այս նպատակով էլ Իվանեն գահերեցության ժառանգորդ չունեցող Հաթերքի իշխանության տիրույթները միացրեց Վերին Խաչենի կամ Ծարա իշխանությանը։ Սրանով իսկ իշխանության աթոռն զբաղեցնող Դոփը (Իվանեի քույրը) դարձավ Խաչենի մեծագույն մասի լիիրավ տնօրենը։ Դոփն ինքն էր գլխավորում իշխանությունը, որովհետև, ինչպես ենթադրվում է, արդեն մահացած պիտի լիներ նրա ամուսին Հասանը, որից արձանագրություն ունենք միայն 1204 թվականից։

Վարդան Վարդապետը ծարեցիների տիրույթների ընդարձակումը հաթերքցիների հաշվին՝ համարում է Հաթերքի տերերի կամքով կատարված մի գործարք. «Ի վեց հարիւր վաթսուն և երեք (1214) թուին զՀաթերք յիւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վախթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ»[65]։

Հնարավոր է, որ սա ճիշտ էլ լինի։ Վախտանգը մահացել էր, Վասակը՝ նահատակվել, մնացել էին Խոյդանը, Սմբատը, Գրիգորն ու Գրիգորիս հոգևորականը, որոնք, հավանաբար, անկարող էին դիմադրել Զաքարյանների կամքին ու Ծարա տերերի մրցակցությանը։

Կարևորն այն է, որ այս գործարքը խաղաղությամբ է կատարվել, ամենայն հավանականությամբ, այն պատճառով, որ հաթերքցիներն ու ծարեցիները ո՛չ միայն տոհմակիցներ էին (Առնաշահիկ տոհմի ներկայացուցիչ ճյուղեր), այլև արյունակիցներ էին մայրական գծով. եթե Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի կին Արզու-խաթունը Կայենո և Մահկանաբերդի տեր ու Տփղիսի ամիր Քուրդ Արծրունու դուստրն էր[66], ապա նույն Քրդի քույրն էր Սարգիս Զաքարյանի կին Սահակադուխտը (Դոփի մայրը)[67]։

Ճիշտ է, կան բազմաթիվ տեղեկություններ Հաթերքի հիշյալ իշխանազունների հետագա կյանքի, ինչպես և նրանց ժառանգների ու հետնորդների մասին։ Ամուսնու մահից հետո շինարարական ու բարեգործական բուռն գործունեություն էր ծավալել Վախտանգի այրի Արզու-խաթունն իր դստերների հետ։ Նա էր, որ կառուցեց Դադի վանքի փառավոր կաթողիկեն, ձեռագործ զարմանահրաշ ծածկոցներով ու վարագույրներով զարդարեց Դադի վանքի, Հաղբատի

65 Վարդան, էջ 140։

66 Կիրակոս, էջ 215։

67 Անդ, էջ 210։ Հմմտ. «Խաղբակյանք», էջ 3, 7։

և Հյուսիս-արևելյան Հայաստանի ուրիշ վանքեր, արժանանալով ժամանակակիցների դրվատանքին[68]։

Այս բոլորը կան։ Արզու-խաթունի և նրա տեգրերի ու վերջիններիս ժառանգներին վերաբերող տեղեկություններում հաթերքցիներն արդեն սովորական հողատերեր են և ոչ մի հավակնություն չեն դրսևորում՝ տիրելու իրենց կորցրած իշխանությանը։

Վիմագրական նյութերը հնարավորություն են տալիս հետևելու հաթերքցիների տոհմաբանությանը։ Այսպես, աղբյուրներից հայտնի են Վախտանգ-Սակառի չորս որդիները՝ Հասանը (կրոնավորյալը), Սմբատը, Գրիգորիսը և Վահրամը։ Գրիգորիս, ըստ ավանդության, կոչվում էին Հաթերքի կուսակրոն իշխանազունները, որոնք հերթով պետք է վարեին Դադի վանքի առաջնորդությունը։ Վախտանգի որդի Գրիգորիսը 1182-ին վանքի առաջնորդն էր, երբ եղբայրը՝ Խաչենի գահերեց իշխան Հասանը, կրոնավորելու գնաց նրա մոտ։ Մի կիսեղծ արձանագրության համաձայն (քանդակված 1181 թ.) Դադի վանքում նա կառուցել է «զեկեղեցիքս, զժամատունս, զգաւիթս»[69]։ Գրիգորիսը դեռևս կենդանի էր 1190 թ. և խաչքար կանգնեցրեց մոր՝ Շուշիկի հիշատակին։ «Թ.ՈԼԹ (1190)։ Ես Գրիգորես որ[դի] Վախտանգա կան[գ]նեցի զխաչս մաւր իմո Շուշկան...»[70]։

Վախտանգ-Սակառի որդի Վահրամը վախճանվել է 1182 թ. կամ դրանից առաջ, քանի որ եղբայր Հասանն այդ թվականին է նրա հիշատակին խաչքար կանգնեցրել. «Թ.ՈԼԱ (1182) ես Հասան կանգնեցի զխաչս աղբաւր իմո Վարհամա...»[71]։

Սմբատը 1181-ին կառուցել է Արզու-խաթունի կաթողիկեից արևմուտք գտնվող եկեղեցու գավիթը։ Նրա այս գործին նվիրված արձանագրությունն արտագրել է միայն Հ. Օրբելին՝ «Բաց սրահի դրսի հարավային պատից, առաջին սյունից (արևելքից սկսած) վերև». «Ի ՈԼ (1181) թուիս ես Սնպատ որդի Վախտանգա շինե-

68 Արզու-խաթունի գործունեության մանրամասների մասին տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութա վանք. «Էջմիածին», 1971, № 6, էջ 66—70, նույնի՝ «Խաչենի հին մշակույթի պատմության մի էջ». «Սովետական արվեստ», 1971, № 8, էջ 46—49։

69 Հ. Օրբելի, АНХ, № 162։

70 Անդ, № 174։

71 Այս խաչքարն ընկած է եղել Արզու-խաթունի կառուցած կաթողիկեի գավթում։

ցի զգաւիթս եկեղեցոյս եւ ետու զՇինաձոր իւր սահմանովն եւ զԴոփոյն տափն յեկեղեցիս վասն փրկութեան հոգո իմոյ»[72]։

Հայտնի չէ Սմբատի մահվան տարին։ Սակայն 1190 թ. նրա հիշատակին խաչքար է կանգնեցրել եղբայրը՝ վանքի առաջնորդ Գրիգորիսը[73]։

Սմբատի ժառանգների մասին տեղեկություններ չունենք։

Խաչենի գահերեց իշխան Հասանի վեց որդիների մասին ևս մատենագրական ու վիմագրական հավաստի տվյալներ են պահպանվել։ Իշխանության ժառանգորդ Վախտանգի (1182—1214) և նրա անժամանակ վախճանված Հասան և Գրիգոր որդիների մասին վերը խոսեցինք։ Արձանագրություն է պահպանվել նաև Վախտանգի դուստր Մամայի անունից (1241 թ.)։ Այստեղ էլ մարում է Հաթերքի գահերեց տեր Վախտանգի տան հիշատակը։

Մյուս եղբայրներից ժառանգներ են ունեցել Սմբատը, Վասակը, Խոյդանը։ Աշխարհական Գրիգորն ինքն է 1224 թ. շորս «տուն շինական» նվիրել Դադի վանքին։ Սա նրա մասին մեր ունեցած միակ տեղեկությունն է, եթե չհաշվենք Գոշավանքի արձանագրությունն ու Կիրակոսի վկայությունը, որոնց մասին արդեն խոսվել է։

Սմբատի որդիներից հայտնի են Վախտանգն ու Սևադան, որոնք, ճիշտ է, Դադի վանքում իրենց քանդակած արձանագրություններում չեն հիշատակում պապի անունը, որպեսզի պարզ լինի, թե իրենց հայրը ո՞ր Սմբատն է՝ Վախտանգ-Սակառի՞ որդին, թե՞ Հասան-կրոնավորյալի։ Սակայն այլուստ հայտնի նյութերից պարզվում է և այդ պարագան. նրանք զավակներն են Հասան կրոնավորյալի (1142—1182) և ապրել են XIII դարի առաջին կեսում։ Վախտանգը 1241-ին Դադի վանքում քանդակել է. «Ես Վախտանկ՝ որդի Սմբատայ, ծառայ Յի և ամուսին իմ Նանա՝ աղախին Քի, միաբանեցաք Դադի վանացս և տուաք ի հայրենեաց մերոց զՁեշայ ձորին բերդին մինչի այգին՝ Խոդինակս, զՄանանայս, արդ և մեծածախ մասամբ խաչ մի մեծաւ յուսով։ Եւ բնակիչքս տր Գրիգորիս և միաբանքս սահմանեցին մեզ Բ օր ժամ զամեն եկեղեցիքս զտօնն Յովհաննու Նանային և տօնն Վարդանանց՝ Վախտանկա... ի թուին ՈՂ (1241) էր»[74]։

72 Հ. Ա. Օրբելի, նույն տեղում, № 161։ «զԴոփոյն տափն» չկա Օրբելու ընդօրինակածի մեջ, վերականգնում ենք հին արտագրություններից։

73 Անդ, № 164։

74 Հ. Ա. Օրբելի, անդ, № 146 (պակասավոր)։ Կոպիտ սխալներով են հրատարակել Շահխաթունյանցը (Բ, էջ 161), Ս. Ջալալյանցը (Բ, էջ 204)։ «Վիմական տարեգիրը» (էջ 35), նախորդներին հետևելով, թվական է նշանակել ՈԼԱ (1182)։

Երկրորդի արձանագրությունը ևս պահպանվել է Դադի վանքում։ Այստեղ Սմբատի որդի Սևադան հանդես է գալիս իշխանական տիտղոսով. «Ես Սեւադա իշխան, որդի Սմբատայ, եւ ամուսին իմ Թաճերն տուաք ի հայրենեաց մերոց ի Դադի վանս զԿարմընջատափն, մէկ այգի Խոզենեկուց ի նշխարատունն մեծ յուսով. Տէր Գրիգորիս և միաբանքս ետուն մեզ Բ ժամ զամէն եկեղեցիքս. զտօնի Տեառնընդառաջին՝ ինձ, զաւագ հինգշաբաթ աւրն՝ Թաճերին... թիւն ՈՂ» (1241)[75]։

Վախտանգի որդուն վերաբերող մի անթվական արձանագրություն է պահպանվել Գեղարդավանքում։ Այստեղ, հավանաբար XIII դ. երկրորդ կեսին, նա թերևս հայտնվել էր կնոջ՝ Ռուզուքանի շնորհիվ, որը աթաբակ Իվանեի հովանավորյալ էլիկում Օրբելյանի դուստրն էր[76]։ Վախտանգի այս որդու անունն է Հասան, որը գրել է. «Ես Հասան՝ որդի Վաղթանկայ, թոռն մեծի Սմբատայ թագաւորազին, միաբանեցաք սուրբ ուխտիս եւ ետու պատուական Աղաւորազին, միաբանեցաք սուրբ ուխտիս եւ ետու պատուական Աւետարան և Տաւնական։ Եւ սպասաւորք սորա խոստացան ի տարվոջն Զ աւր պատարագ Զատկին. Ա՝ ինձ, Գ՝ իմ մաւրն Նանային, Բ՝ Ռուզուքանայ՝ կենակցի իմոյ»[77]։

Ռուզուքանը 1265 թ. արձանագրություն ունի Մեծառանից Ս. Հակոբա վանքում, որը քանդակել է տվել ընծաների առթիվ՝ ներկայանալով որպես «ամուսին Հասանայ, դուստր մեծ իշխանին Ելիգոմին...»[78]։

Հասան կրոնավորյալի մյուս որդիներից Գրիգորիսը Դադի վանքի առաջնորդն է եղել, հավանաբար, մինչև XIII դ. 20-ական-

75 Ս. Ջալալեանց, Բ, էջ 225—226, Մեսրոպ Մագիստրոս, էջ 95։

76 Օրբէլեան. էջ 353, 359—361 և հտգ. «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 211։

77 Ալիշան, Այրարատ, էջ 340։

78 «Բանասէր», 1901, հ. Գ, պրակ Բ և Գ, էջ 140։

Խաչիկ Վարդապետը Ռուզուքանի մոր անուն է արտագրել «Թամոծի» («դուստր մեծ իշխանին էլեգոմին, պարոն մաւրն Թամոծի»), իսկ Օրբելին, դրա փոխարեն՝ «պարոնութեամբ...» և այլն (AHX, № 45)։

Օրբելին այս արձանագրության թվական է արտագրել «ՁԾԴ» (1305), որ կասկածելի է, որովհետև այնտեղ վանքի առաջնորդ է հիշվում «տր Վդ» (Վարդան), որն առաջնորդ է նստել սկսած 1250-ական թվականներից (տե՛ս «Բանասէր», նույն տեղում, էջ 136, 142—144) և չէր կարող այդքան երկարակյաց լինել։

ների սկիզբը, քանի որ նրան հաջորդած Ճյուռ Գրիգորիսը՝ Վասակի որդին, արդեն առաջնորդ է հիշվում 1224 թ. ժամատուն կառուցելու առթիվ։ «Թ. ՈԼԳ 1224) ես տր Գրիգորիս առաջնորդ սբ ուխտիս, որդի նահատակին Վասակայ, շինեցի զժամատունս...»[79]։ Վերջինս հիշատակված է նաև 1240-ականներին վերաբերող արձանագրություններում[80]։

Կարելի է Հաթերքի Ճյուղի ուրիշ ներկայացուցիչների մասին էլ խոսել։ Սակայն դա ոչինչ չի ավելացնի ասվածին, քանի որ նրանք այլևս ոչ մի դեր չէին խաղում երկրամասի քաղաքական կյանքում։ Նրանք XIII դ. երկրորդ կեսում արդեն իրենց տիրույթների արևմտյան մասերը զիջել էին ծարեցիներին, իսկ Դադի վանքից արևելք ընկած ամբողջ տարածքը գտնվում էր Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալյանների իշխանության ներքո։

Ծարա իշխանությունը XII դ. վերջի և XIII-ի սկզբի Հայաստանում նոր կազմավորված կամ վերահաստատված այն վարչական միավորներից է, որոնք Զաքարյան իշխանապետների հովանավորությամբ հզորացան և հայրենի տիրույթների ոլորտում տնօրինեցին քաղաքական, տնտեսական ու մշակութային մի եռանդուն կյանք։ Աղբյուրները նվազ տեղեկություններ են հաղորդում Ծարա այս ժամանակների իշխան Հասանի մասին, որը, ինչպես ասվեց, մահացել է XIII դարի առաջին քառորդում։ Սակայն դրա փոխարեն մենք երկրամասի քաղաքական կյանքի ղեկավար ենք տեսնում նրա կնոջը՝ Դոփին, որն իր եղբայր աթաբեկ Իվանեի հովանավորությամբ ու ամեն տեսակ օժանդակությամբ Ծարա իշխանության համար ստեղծում է մի արտոնյալ վիճակ Արևելյան Հայաստանի մանր իշխանությունների շարքում։ Եվ պատահական չէր, որ Վերին Խաչենի այս իշխանությունը հետագայում, XIII դարի կեսից սկսած, կոչվում էր Դոփյան։

Հայ իրականության մեջ արտակարգ երևույթ է, երբ իշխանական տոհմը կոչվում է կնոջ անունով։ Սա ինքնին ապացույց է, որ հանգամանքների բերումով Դոփն է դարձել գերդաստանի ազդեցիկ ներկայացուցիչը՝ զավակների խնամակալը, ինչպես նաև իշխանության կառավարիչն ու գլխավորը։

79 Դադի վանքում առաջնորդություն արած բոլոր Հաթերքցիներն էլ Գրիգորիս էին կոչվում, ինչպես Գանձասարի Հասան-Ջալալյանները՝ հիմնականում Հովհաննես։ Հովհաննես էին կոչվում նաև Ծարա Ճյուղից կուսակրոնության տրված իշխանազունները։

80 Ս. Ջալալեանց, Բ, 227—228, Մեսրոպ Մագիստրոս, էջ 95—96 ևն։

Այս դարի վերջ կյանքում, որ չէր կարող իր ազդեցությունը թողած չլինել Զաքարյան իշխանության ներքին կարգ ու կանոնի վրա, կային կին-իշխանության առավել զորավոր օրինակներ. թագավորական գահին բազմել էր Թամարը։ Հետագայում էլ Ռուզուդանը պետք է զբաղեցներ նույն գահը։ Իվանե աթաբեկը, հավանաբար, վրացիներից ընդունել էր ոչ միայն քաղկեդոնականություն, այլև նրանց թագավորության շատ կանոններ։

Դոփյան իշխանության ակունքի հարցը.— Դոփյան իշխանության ակունքի մասին աղբյուրների հաղորդած տեղեկությունները մեր հետազոտողների կողմից երբեմն աղավաղվել են և, կարելի է ասել, աղավաղումների համար որոշակի հիմք է հանդիսացել Եսայի կաթողիկոսի կազմած այն Ճյուղագրությունը, որ կցված է Խաչենի վիմագրերի հավաքածուին։ Ահա այդ տոհմագրությունը. «Դոփ բարեպաշտուհի, դուստր Սարգսի իշխանաց իշխանին։ Սա ուներ ամուսին իւր զբարեպաշտ իշխանն զՂարա Գրիգորն, և որդի սոցա քաջ և յաղթող զորաւարն և մեծ իշխանն Հասան տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շաղվաքու և այլ բազում գաւառաց, և քան զամենայն առաւել սիրէր զգէօղն Ծար՝ հայրենիք և պարգևք քաջութեան, որին գինք արեան տուեալ աշխարհակալացն Հայոց...»[81]։

Եսայի կաթողիկոսի այս ձեռագիր հավաքածուն պարունակում է Խաչենի վանքերի ու գերեզմանների բազմաթիվ արձանագրություններ, որոնք արտագրված են գերագույն բարեխղճությամբ։ Սակայն մեջ բերված հատվածը, որ ինքը՝ կաթողիկոսն է հորինել Դոփյան տոհմաճյուղի սերնդաբանությունը որոշելու նպատակով, ինչպես արդեն առիթ ենք ունեցել ասելու, պարունակելով մի լուրջ սխալ՝ հիմք է դարձել հետագա ավելի մեծ թյուրիմացությունների համար։

Ալիշանը, օրինակ, հենց Եսայի կաթողիկոսի այս անստույգ տվյալի հիման վրա գծել է Դոփյան իշխանության տոհմածառը[82], որի ակունքում դրված Ղարա Գրիգորի գոյությունը ջնջվում է իր իսկ հրապարակած վիմագրական ու ձեռագրական աներկբայելի տեղեկություններով։

Մակար Բարխուտարյանցն էլ Եսայի կաթողիկոսի տոհմաբանությանն է խառնում Հաթերքի Ճյուղը և այսքանից հետո կծիկն

81 Մատենադարան, ձեռ. № 7821, թ. 2 ա, բ, № 9923, թ. 3 ա։

82 Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 37-ին կցված «Պայազատք Հասան Դօփեանց, մելիք Գեղամայ և Ծարայ» տոհմածառը։

այնպես է թվում, որ արդեն ծայրը գտնելը դառնում է անհնար[83]։ Իսկ Կարապետ Տեր-Մկրտչյանը, սխալմամբ, Մակար վարդապետին վերագրելով մի նոր թյուրիմացություն, նրա հիման վրա ստեղծում է նոր սխալ վարկած. «... մի կետում ուղիղ պիտի լինի Բարխուտարյանցի ենթադրությունը, որ Վախտանգ թագավորազնի (Հաթերքի իշխանաց իշխանի—Բ. Ու.) եղբայրների շարքում հիշված Գրիգորին է համարում Դոփի ամուսինը»[84]։

Ավելորդ է ասել, որ սրանք բոլորն էլ սխալ են։ Բայց չի կարելի չնկատել, որ այս սխալների հիմքը Եսայի կաթողիկոսի գծած տոհմաբանական պատկերն է, որի մեջ եղած Ղարա-Գրիգորը ոչ մի հետք չի թողել աղբյուրներում։ Եվ նման անունն անհավանական է այն պարզ պատճառով, որ XII դ. վերջում «Ղարա» անուն կամ մականուն հայոց մեջ անհնար է պատկերացնել։ «Ղարա»-ն թուրքերեն բառ է, որ հայերեն անձնանուններին խառնված ենք տեսնում ամենավաղը XV դարի վերջին և XVI-ի սկզբին[85]։

Հավանական ենք համարում, որ «Գրիգոր մեծը» հետագայում դարձած լինի «Ղարա-Գրիգոր»։ Սակայն այսքանը՝ անկախ այն հանգամանքից, որ Գրիգոր մեծը Դոփի որդին էր և ոչ թե ամուսինը։

Այսքան երկար կանգ առանք Դոփի ամուսնու անվան աղավաղումների վրա, որովհետև ուսումնասիրողները և նույնիսկ Կարապետ եպիսկոպոսը, որ հատուկ ուսումնասիրություն է գրել Դոփյան տոհմաճյուղի մասին, Եսայի կաթողիկոսի մի հատիկ թյուրիմացությանը կառչած՝ չեն նկատել աղբյուրներում սփռված բազմաթիվ այնպիսի տեղեկություններ, որոնք տալիս են Դոփյան ճյուղի ճշգրիտ ակունքը։ Կարապետ եպիսկոպոսը երբեմն այս վերջին տեղեկությունները փորձում է հարմարեցնել իր սխալ պատկերացումին։ Օրինակ, նա վկայակոչում է Ստ. Օրբելյանին, որը գրել է, թե Օրբելյանների դուստր Ասփան կնության է տրվել. «մեծի և փառաւորեալ իշխանին Խաչենոյ Գրիգորոյ՝ որդւոյ Հասանայ,

83 Մակար վարդապետի մոտ Դոփը ոչ միայն Ղարա-Գրիգորի կինն է, այլև դուստրն է «Սարգիս-Քուրդ իշխանի» (տե՛ս «Պատմություն Աղվանից», էջ 136), որպիսի զույգ անունով ոչ մի իշխան չի եղել այս ժամանակներում։ Նրա կարծիքով՝ Դոփի ու Ղարա-Գրիգորի որդին է Հասանը՝ ամուսին Մամայի, որն, իբր թե, քույրն է եղել Զաքարեի ու Իվանեի։ Հետո տեսնելով, որ Մաման իրեն անվանում է «դուստր Քրդին և Խորիշահի», Մակար վարդապետը Մամային ևս համարում է Քուրդ իշխանի դուստրը (անդ)։

84 Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք, էջ 49։

85 Հր. Աճառյան, Հայ. անձ. բառ., Գ, էջ 134—135։

որդւոյ մեծի Գրիգորին, որ էր քեռորդի աթաբէկ Իւանէի»[86]։ Այստեղից պարզ երևում է, որ Գրիգոր մեծը աթաբեկ Իվանեի քրոջ՝ Դոփի և Հասանի որդին է։ Մինչդեռ Կարապետ եպիսկոպոսն Օրբելյանի տեղեկության հետ մի փոքր վիրահատություն է կատարում («մեծի և փառաւորեալ իշխանին Խաչենոյ՝ Գրիգորոյ որդւոյ Հասանայ, որ էր քեռորդի աթաբէկ Իւանէի»)[87], և ստացվում է, որ Հասանն է Իվանէի քեռորդին։

Ավելորդ ենք համարում անդրադառնալ Եսայի կաթողիկոսի սխալ տեղեկությունից սերվող համանման թյուրիմացություններին կամ այնպիսի աղավաղումներին, որոնց համար աղբյուրագիտական ճիշտ կամ սխալ որևէ հիմք գտնելը պարզապես անհնար է։ Օրինակ, Միքայել Չամչյանը կարծում էր, թե աթաբեկ Իվանեն «ուներ և զերիս քոյր՝ Շուշեն, Խորիշահ, Նանան։ Շուշեն եղև կին Դաւթայ ուրումն, յորմէ ծնաւ Գրիգոր Դուփեանց»[88]։ Սա պարզապես եռասխալ է և ոչ մի կապ չունի աղբյուրագիտական արժանահավատ տվյալների հետ։

Դեռևս Գարեգին Հովսեփյանի ժամանակից հայտնի է մի հիշատակարան՝ գրված Դոփի որդի Գրիգորի ձեռքով, 1244-ին, «որ իբրև պահպանակ կցված է Ալեքսանդրապոլից (այժմ՝ Լենինական—Բ. Ու.) քիչ հեռու Օրթաքիլիսա (այժմ՝ Մայիսյան) գյուղի Ավետարանին։ Այստեղ Գրիգորն իրեն անվանում է «որդի Հասանայ և Դոփին, քուեր որդի սպարապետացն Հայոց և Վրաց Զաքարիայի ու Իւանէի»[89]։

Եվ ահա մի այլ ձեռագիր, որի ստացողն է «Գրիգոր իշխան՝ որդի Հասանայ և Դոփին» (գրված՝ 1244-ից), գալիս է վերջնականապես հաստատելու, որ Գրիգորը եղել է որդին ոչ թե ինչ-որ Ղարա-Գրիգորի, այլ Հասանի[90], որն իր հերթին կարող էր լինել մեկ միայն Վերին Խաչենի տեր Վախտանգ իշխանի որդին և Սակառի եղբայրը։

Միջին դարերում ընդունված էր հայրանունը դարձնել ազգանուն։ Սահլ որդի Սմբատա՝ կոչվում էր նաև Սմբատյան, Վախտանգի որդիներ Սակառը, Հասանը, Հովհաննեսը կոչվում էին Վախ-

86 Օրբելեան, էջ 424։

87 «Դոփյանք», էջ 60։

88 Միք. վ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 185։ Այս առթիվ տե՛ս «Խաղբակյանք», էջ 10, ծան.։

89 Գար. Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, էջ 20։

90 Մատենադարան, ձեռ. № 7347, թ. 343 ա։

տանգյաններ։ Սակառի որդիներն էին Հասանը, Գրիգորն ու Վահրամը (կարճակյաց), որոնք կոչվում էին Սակառյաններ։

Վախտանգի որդի Հասանն ամուսնացավ Դոփի հետ և ունեցավ որդիներ, որոնցից հայտնի է Գրիգոր իշխանը։ Սա իրեն Հասանյան չէր կոչում, այլ «որդի Հասանայ և Դոփին»։ Աղբյուրներն էլ նրան կոչում են ոչ թե հոր անունով, այլ մոր՝ Դոփի։ Այս իրողությունը կարող էր ունենալ երկու պատճառ. կամ Հասանը եղել է, հնօրյա խոսքով ասած, ընդաղոտ ու թուլակամ մի մարդ, և նրա տանը տիրական են եղել հզոր Դոփի ձայնն ու անունը, կամ էլ՝ շատ քիչ է ապրել, իսկ Դոփն ապրել է երկար և, քանի որդիները անչափահաս էին, հետագա իշխանապետական գործարքներում նա է հանդես եկել որպես գերդաստանի իրավական տնօրեն։ Սրան էլ եթե գումարենք հորանց՝ Զաքարյանների զորավոր ազդեցությունը, հասկանալի կդառնա, թե ինչու Դոփի կենդանության օրերում աղբյուրները նրա զավակներին իր անունով էին կոչում՝ հոր փոխարեն։ Իսկ ինչ վերաբերում է հետագայում (XIII դ. վերջին և ավելի ուշ շրջանում) տոհմաճյուղը Դոփյան կոչվելուն, ապա, ամենայն հավանականությամբ, դրան նպաստել է նաև «Դաւփ» անսովոր անունը։ Միայն այդ անվամբ կարող էր տոհմաճյուղը տարբերվել մյուսներից և ոչ թե ճյուղի ուրիշ որևէ նշանավոր ներկայացուցչի անունով։ Ինչպես տեսանք, այս ճյուղի նշանավոր մարդիկ հիմնականում երեք անուն ունեին՝ Հասան, Գրիգոր, Հովհաննես։ Այս անուններով կոչված նշանավոր իշխանություններ կային նաև հաթերքյանների ու խոխանաբերդցիների մեջ։ Եվ պատահական չէ, որ վերջիններիս (խոխանաբերդցիների) ճյուղին էլ տվել են Հասան-Ջալալյանք՝ դարձյալ անսովոր անունը։

Ամեն պարագայի՝ Հասան Ծարեցու տանը Դոփի ձայնը երկար ու բարձր է հնչել։ Պահպանված պատմական հիշատակներն անուղղակի խոսում են այդ մասին։ XIII դ. արշալույսին (1204) Հասանի եղբայր Հովհաննեսը Վաղուհասից արևմուտք, անտառի մեջ կառուցում է Խադա վանքը, ձեռագիր մատյաններ ու խաչեր հավաքում այնտեղ, հին ու նոր այգիներ տալիս վանքին, ապա բոլորը միասին, Հաթերքի տեր Վախտանգի միջնորդությամբ, նվիրում իր եղբայր Հասանին ու նրա որդիներին։

Հասանն էլ, նույն արձանագրության երկրորդ մասի համաձայն, ընդունում է այս ընծան, ինքն էլ իր հերթին խնձորաբակի այգին նվիրում վանքին[91]։ Սրանից հետո այլևս չեն լսվում այս

91 Այս արձանագրությունը քանդակված է եղել Խադավանքի արևմտյան

Հասանի ո՛չ ձայնը, ո՛չ անունը։ Սակայն Հասանի կին Դոփը դեռ երկար պիտի ապրեր, պաշտոնական փոխհարաբերություններում հանդես գալով որպես իրենց գերդաստանին ժառանգություն հասած տիրույթների տնօրենը. «Ի թուին ՈՀԴ (1225) ես Դաւփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի և Իւանէի, շինեցի գաւիթս և մատուռս և տուի Աւետարան և զՅանկաբակուց երկիրն և յԱկուռինայ զիմ մատաղիս իմ հոգւոյս...»[92]։

Այս արձանագրությունից երևում է, որ Հասանը մահացած է եղել շատ վաղուց, այլապես Դոփը որևէ ձևով կհիշեր նրա անունը։

XII դարից սկսած՝ Դոփյան իշխաններն ամփոփված էին Խաչենի հյուսիս-արևմտյան մասում և իրենց տոհմական գերեզմանատուն էին դարձրել Վաղուհասի Մայրաքաղաք ու Խադա (կամ Գետամիջի) վանքերը։ Եթե Վախտանգի որդի Հասանն իր հետագաներով (Վախտանգ, Վասակ, Գրիգոր և մյուս երեքը) զբաղեցնում էր Դոփյանների ու Խոխանաբերդցիների տիրույթների արևելքում ընկած տարածքը՝ տոհմական գերեզմանատուն դարձնելով Դադի վանքը, ապա XIII դ. քսանական թվականներից այս տարածքի տնօրինությունն էլ է անցնում ծարեցիներին։

Խաչենի իշխանության տոհմակունքները քննելիս մենք ցույց էինք տվել Ծարա, Հաթերքի ու Խոխանաբերդի տերերի տոհմակցությունը։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում քիչ ավելի հանգամանորեն կանգ առնել մի փաստի վրա, որն առավել ևս հիմնավորում է ծարեցիների ու հաթերքցիների՝ անմիջապես սերվելը նույն պապից։

1201 թ. մի արձանագրություն՝ գրված Հաթերքի իշխանաց իշխան Հասանի որդի Վասակի անունից, իր պապ է ճանաչում Սակառին. «բարեպաշտ պատրոնիկն Վասակ... որդի Հասանայ, որդւոյ Սակառայ տեառն Հաթերքոյ...»[93]։ Վասակը որդին է այն Հասանի, որ 1182-ին իր իշխանությունը հանձնեց վեց որդիներին ու գնաց կրոնավորելու։ Նույն Հասանն իր մեծ արձանագրության մեջ իրեն համարում է որդի ոչ թե Սակառի, այլ Վախտանգի. «... ես Հասան՝ որդի Վախտանգայ, տէր Հաթերքոյ...»[94]։

Դեռ Կարապետ եպիսկոպոսն է նկատել այս տարբերությունը

պատի ճակատակալ քարերից մեկի վրա։ Քարը՝ անեղծ արձանագրությամբ, այժմ գտնվում է Մատենադարանի ցուցասրահում։

92 Շահխաթունեանց, Բ, էջ 363։ Ջալալեանց, Ա, էջ 207։

93 Շահխաթունեանց, Բ, էջ 363։

94 «Արցախ», էջ 203։

և ենթադրել, թե «Սակառայ» «երևի կամ (Հասանի) պապի անունն է կամ Վախտանգի երկրորդ անուն»[95]։

Առայժմ մեր ձեռքի տակ անառարկելի փաստեր չկան՝ մեկ կամ մյուս ենթադրությանը նախապատվություն տալու համար։ Սակայն կարծում ենք, որ Սակառ (հիշտը՝ Սակռ) կարող էր և մականուն լինել, քանի որ արաբերենից փոխառյալ բառ է, որ նշանակում է «որսի բազե»[96]։ Ջնայած կան անուղղակի տվյալներ, որոնք հաստատում են, որ Սակռը կամ Սակառը տարածված անուն է եղել Խաչենում։ Վարդան Վարդապետը Ներքին Խաչենի տեր Վախտանգին (Հասան-Ջալալի հորը) կոչում է «միւս Վաղթանգ Սակռեանց»[97]։ Ծարում բնակվում էր Հասանի եղբայր և Վախտանգի որդի Սակռը, որն իր երկու արձանագրություններում էլ ուղղակի իրեն կոչում է «որդի Վախտանգա»[98]։

Մենք հակված ենք Վարդանի «միւս Վաղթանկ Սակռեանց»-ի մեջ «միւս»-ը վերագրելու ոչ միայն Վախտանգին, այլև «Սակռյանց»-ին, որով կհաստատվի, որ Վերին Խաչենի ճյուղը ևս հենում կոչվում էր Սակռյանց, կամ այն Ներքին Խաչենի ճյուղից հատվածվել է Սակռ նախնուց սկսած։ Այս պատճառով էլ նահատակ Վասակն արձանագրության մեջ իրեն պապ էր համարում ոչ թե անմիջապես պապ Վախտանգին, այլ նախապապ կամ ապուպապ Սակռին։ Այս վարկածի օգտին են խոսում նաև Ծարա տերերի մեջ պահպանված «Սակռ» անունը։ Ինչպես հայտնի է, Խաչենում համարյա բացառիկ է, որ թոռներից որևէ մեկը չի կոչվում պապի անունով. Վախտանգ → Հասան → Վախտանգ, Գրիգոր → Հասան → Գրիգոր և այլն։

Սակռ նախապապից սերված և Ծարը հայրենի տիրույթ դարձրած իշխանն էր այն Վախտանգը, որին իր արձանագրություններում հիշում է նրա որդի Սակռը՝ Ծարեցի Հասանի կրտսեր եղբայրը. «Թիւն ՈՀԳ (1224) էր. ես՝ Սակռ, որդի Վախտանգա, եղբայր Հասանա, շինեցի զեկեղեցիս և ետու զորդի իմ զԳրիգորս սպասաւոր, և զիմ արկած այգին ի ձաքի իւր կատապանովն իմ հոգոյս...»[99]։

95 «Դոփյանք», էջ 51։

96 Ստ. Մալխասյանց, Հայ. բաց. բառ., Դ, էջ 173, Հր. Աճառյան, Հայ. արմ. բառ., Զ, էջ 41։

97 Վարդան Վարդապետ, էջ 140։

98 «Արարատ», 1896, էջ 81։

99 Ս. Բարխուդարյան. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 59։

Այս արձանագրությունը գտնվել է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 2—3 կմ հեռու գտնվող եկեղեցու ավերակներից[100]։

Վաղուհասն ու շրջակաները Ծարեցիների տիրույթների մեջ էին մտնում. Վաղուհասից մի քանի կիլոմետր հարավ-արևմուտք նրանց իշխանական տապանատունն էր՝ հայտնի Խադա վանքը։ Ուրեմն, Սակռը Ծարա իշխանազուններից էր, Հասան գահերեցի (Դոփի ամուսնու) կրտսեր եղբայրը։ Մեծ եղբայր Հասանն ու մյուս եղբայրը՝ հոգևորական Հովհաննեսը, միասին արձանագրություն են քանդակել Խադա վանքում 1204 թ.։ Հետևապես, Ծարա իշխան Վախտանգը երեք որդի է ունեցել՝ Հասանը, Հովհաննեսը և Սակռը։

Սակռի մյուս՝ շատ հետաքրքիր արձանագրությունը վերոհիշյալ եկեղեցու մոտ գտնված մի խաչքարի վրա է եղել և խոսում է նրա նվիրաբերությունների մասին. «Թիւն ՈԿԵ (1216)։ Ես՝ Սակռ, որդի Վախտանգա, կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստ հոգո իմո և ետու զՊշնկրա այգին իւր հողով և կատապանաւ և Եղնանստին երկիրն ի սբ Գրիգոր Բերդաձորա և զԲախերին մատաղիսն և զձաքեցանց երկիրն և Ա ջաղաց ի ժամատունս... ի հայրապետութեանն տր Յոհաննիսի...»[101]։

Այս արձանագրությունից պարզվում է, որ վերոհիշյալ եկեղեցին կոչվել է «Սուրբ Գրիգոր» և ոչ թե Կարմիր վանք, ինչպես կարծել են Մ. Բարխուտարյանցն[102] ու Ս. Բարխուդարյանը[103]։

Կա նաև երրորդ, անթվական մի արձանագրություն՝ Սակռի տապանագիրը, որ գտնվել է նրա կառուցած եկեղեցու ժամատանը. «Այս է հանգիստ բարեպաշտ պատրոնին Սակռի»[104]։

Սակռը կառուցել, ավելի ճիշտ՝ վերակառուցել էր Բերդաձորի ս. Գրիգոր վանքը, դարձել նրա հովանավորը (պատրոնը)։ Եվ անհավանական չէ, որ վանքը հետագայում գտնվեր նրա հաջորդների հովանավորության տակ, այլև վանքի առաջնորդությունը դարձած

100 Անդ, էջ 58։

101 Խաչիկ Դադյանի ընդօրինակությունն է («Արարատ», 1896, էջ 81)։

Դադյանը «կատապանաւ»-ի փոխարեն արտագրել է «վատապանաւ», որ անիմաստ է։

102 «Արցախ», էջ 193։

103 Ս. Բարխուդարյան, նշվ. գիրքը, էջ 58։

104 Անդ, էջ 59։

լիներ նրանց ժառանգական արտոնությունը։ 1259 թ. մի արձանագրության մեջ այս վանական ուխտի առաջնորդ է հիշվում տեր Գրիգորիսը[105], որն անկասկած Սակոի որդին է, նա, որ, ինչպես տեսանք, վանքին սպասավոր էր տրվել 1224-ին։

Դոփն իր արձանագրություններում ու գործնական հարաբերություններում լիիրավ-իրավունքով էր հանդես գալիս նույնիսկ այն ժամանակ, երբ որդի Գրիգորն իշխանապետ էր և ներկայանում էր որպես Ծարա ու շրջակաների տեր։ 1225 թ. մի արձանագրության համաձայն՝ Դոփը կառուցել է իր տեգր Հովհաննեսի կերտած տաճարի գավիթը (խաղա վանքում), նաև մի մատուռ և վանքին տվել մի Ավետարան ու այլ ընծաներ։ Իսկ անթվական մի արձանագրության մեջ Դոփը հանդես է գալիս որպես տիրույթի վրա ժառանգական իրավունքներ բանեցնող անձ. «Հրամանաւ պարոնացն և Դաւփին ես Ջամալարինս միաբանեցա սբ Քառասնից»[106]։

Քառասնից վանքը գտնվում էր Հաղբատի մոտ։ Եթե արձանագրության մեջ հիշատակված Դոփը Ծարա տեր Հասանի կինն է, ապա պետք է կարծել, որ այս վանքի վրա ունեցած իրավունքը նա իր հետ բերել էր որպես օժիտ։

Դոփը թաղված է Հաղբատում։ Նրա տեգր Հովհաննես եպիսկոպոսի կառուցած մեծ գավթում, իր որդի Հովհաննես եպիսկոպոսի տապանաքարի կողքին։ Նրա տապանաքարը կա՝ հետևյալ գրով. «Ջաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւփն»[107]։

Հասանի ու Դոփի զավակներից աղբյուրներում հիշատակվում են չորսը՝ Գրիգոր եպիսկոպոս Հաղբատի, որ ընդդիմացավ իր քեռի Ջաքարեի եկեղեցական նորամուծություններին և բանտարկվեց նրա ձեռքով, Հովհաննեսը՝ եպիսկոպոս Սանահնի, ապա Հաղբատի, որը երկու վանքերում էլ հաջորդեց հորեղբորը՝ հայտնի շինարար Հովհաննես Խաչենեցուն, Գրիգոր մեծ իշխանը, որ Խաչենի քաղաքական ու մշակութային կյանքում խոշոր դեր խաղաց, և Գերգը կամ Գևորգը, որը երևի վաղ մահացել է, և ավագ Գրիգոր

105 Անդ։

106 Ջալալեանց, Ա, էջ 118։

107 Կ. Ղափադարյան, Հաղբատ, էջ 185։

Արձանագրությունն սխալ են ընդօրինակել Հ. Ղրիմեցին, Ջալալյանցը, Երզնկյանը։ Առաջին ճիշտ ընդօրինակությունը պատկանում է Կարապետ եպիսկոպոսին (տե՛ս «Դոփյանք», էջ 55։ Հմմտ. «Խաղբակյանք», էջ 8)։

հոգևորականն է միայն, որ հանգուցյալի համար Դաղի վանքում կանգնեցրած խաչքարով հիշել է նրան։

Դոփյան իշխանության տարածքին վերաբերող մի հարցի շուրջը.— Դոփյան իշխանության վարչա-քաղաքական կյանքին է վերաբերում մի հարց, որը, կարծում ենք, ցարդ ճիշտ չի բացատրվել հետազոտողների կողմից։ Դա սույն իշխանության ընդգրկած տարածքի և նրա առանձին մասերի հին ու նոր պատկանելությունների հարցն է։

Վերը տեսանք, որ իշխանաց-իշխան Վախտանգի մահվամբ Հաթերքի իշխանության տարածքը, Իվանե աթաբեկի նախաձեռնությամբ, անցել է Ծարա ճյուղին, և վերջինս՝ տեր դառնալով ամբողջ Խաչենի մի խոշոր մասին (Հաթերքից ու Վաղուհասի մոտերքից արևմուտք, ընդհուպ մինչև Սևանա լճի արևելյան ու հարավային ափերը)՝ մտնում է Զաքարյան իշխանության ոլորտը։ Հակոբ Մանանդյանը, ընդունելով Կարապետ եպիսկոպոսի կարծիքն այն մասին, որ, իբր, Սևանա լճի ափերը և այլ տիրույթներ Դոփն իր հետ օժիտ է բերել Վերին Խաչենի իշխանին, ինքն էլ իր հերթին գտնում էր, որ «Այս ենթադրությունը կարող է իրապես ճիշտ լինել, որովհետև Դոփյանների իշխանության սահմանների մեջ արդեն XIII դարի առաջին կեսում մտնում էր, հավանորեն, Սևանա լճի ամբողջ հարավակողմը մինչև Շողվագա (այժմյան Օրանոսից ու Ադամխանից մի փոքր հարավ), այսինքն՝ Գեղարքունիքի մեծագույն մասը, որ պատկանում էր, ինչպես վերը տեսանք, աթաբեկ Իվանեին»[108]։

«Վերև» ասելով՝ գիտնականը նկատի ունի վրաց ժամանակագրի վկայությունը, որի համաձայն՝ «Ողորմած լինելով հավատարիմների և յուրայինների հանդեպ (Թամար թագուհին) շնորհեց Սարգսի որդի Իվանեին առաջնություն և մսախուրթուխուցեսի պաշտոնը և ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը, Գեղարքունիքով և այլ բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու երկրներով...»[109]։

Այս առանձնաշնորհումները տեղի են ունեցել XII դ. 90-ականների սկզբին[110]։ Սակայն մենք գիտենք, որ Դոփն ամուսնացել

108 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 156։

Լ. Հ. Բաբայանը ևս ընդունում է Կարապետ եպիսկոպոսի ենթադրության հիմքի վրա Հ. Մանանդյանի արտահայտած կարծիքը, որ, իբր թե, «Դոփը որպես օժիտ ստացել է Գեղարքունիքի մեծագույն մասը...» (տե՛ս նրա՝ նշված գիրքը, հայ., էջ 57)։

109 «Վրաց աղբյուրները», Բ, էջ 13։ Հմմտ. «Քննական տեսություն», Գ, էջ 128։

110 «Քննական տեսություն», Գ, էջ 127—128։

է իր հայր Սարգիս ամիրսպասալարի կենդանության օրոք (Սարգիսը մահացել է 1187 թ.)։ Ինչպես քիչ հետո կտեսնենք, Հասանի ու Դոփի որդի Գրիգորիսն էլ 1198 թ. արդեն վարդապետ էր Սանահնի վանքում, որ նշանակում է՝ արդեն հասուն տղամարդ էր։ Հետևապես Դոփն ամուսնացած կարող էր լինել աթաբեկ Իվանեի՝ տիրույթներ ստանալուց ու բաշխելուց ավելի քան քսանհինգ-երեսուն տարի առաջ և չէր կարող օժիտ բերած լինել եղբոր՝ դեռևս չբաժանված Գեղարքունիքը[111]։ Իսկ, ամենակարևորը, ինչպես արդեն ցույց ենք տվել պատմա-աշխարհագրական ակնարկում, Գեղարքունիքը և նրա հետ Շողվագը՝ շրջականներով Խաչենի իշխանության էին պատկանում IX դարից սկսած. Սահլ Սմբատյանն էր բռնությամբ առել Գեղամա (Գեղարքունի) գավառը, և դրանից հետո այն միշտ էլ գտնվել է Խաչենի իշխանության մեջ։

Ինչ վերաբերում է Շողվագ գյուղաքաղաքին, ապա այն ևս IX դ. ընկած լինելով Խաչենի իշխանների (ժառանգության իրավունքով՝ նաև Փառիսոսի տերերի) տիրապետության տակ, IX դ. կեսին, ինչպես տեսանք իր տեղում, խլվել էր Գանձակի ամիրայության կողմից[112], և հետագայում վերստացան խաչենեցիները՝ իհարկե, վրաց-հայկական միացյալ ջանքերով։

Այսքանից կարելի է եզրակացնել, որ Գեղարքունիքը Ծարա իշխանության մեջ է մտել ոչ որպես Դոփի բերած օժիտ։ Եվ այն կարող էր այդ կողմերի գերագույն տեր հռչակված Իվանե աթաբեկի կողմից ոչ թե նվիրվել, այլ միայն վերահաստատվել որպես ծարեցիների տիրույթը և ժառանգական հայրենիքը։

Զաքարե ամիրսպասալարի եկեղեցական նորամուծության փորձը և Հասանի ու Դոփի որդի Գրիգորի ընդվզումը նրա դեմ։ Բյուզանդական եկեղեցու նոր ոտնձգությունները.— Հայ եկեղեցու պատմությունը լի է իր ինքնուրույնության համար մղված համառ ու երկարատև պայքարի էջերով։ Այդ պայքարն ամենից առաջ մղվում էր քաղկեդոնականության դեմ, որի դրոշակակիրն է եղել բյուզանդական եկեղեցին՝ հայ ժողովրդի պետական ու կրոնական ինքնուրույնության երդվյալ թշնամիներից մեկը։ Հայտնի է, որ Բագրատունյաց համահայկական թագավորության վերացումն, առաջին հերթին, բյուզանդական արքունիքի խարդախ քաղաքականության արդյունքն է եղել։ Միասնական թագավորության կորստից հետո հայ եկեղեցին մնում էր այն եզակի միարար ուժը, որը պարտավոր էր հայությունը հեռու պահել ուծացումից ու հարևան մեծ ազգերին կուլ գնալուց։ Հայ եկեղեցու առաջնորդներն այդ դերը կատարում էին ամենայն համառությամբ ու զգուշավորությամբ։ Սակայն բյուզանդական եկեղեցու պետերը, ինչպես նաև արքունիքը, երբեք էլ չէին հրաժարվում իրենց հայակուլ նկրտումներից, քանի որ նրանց կարծիքով՝ հայ ժողովրդի մեկուսի գոյությունը խանգարում էր բյուզանդական քաղաքական ու կրոնական տիրապետությանը ողջ արևելքում։ Բյուզանդական եկեղեցու նվիրապետները հայերին միավորելու առաջարկություն էին անում՝ այդ միավորումի տակ հասկանալով հայերի ձուլվելն իրենց հետ։ Խաղաղ առաջարկությանը հետևում էին սպառնալիքն ու բռնությունները, որոնց հանդեպ որքան ներողամիտ էին Բյուզանդիային մոտիկ հայկական մարզերում ու Կիլիկիայի հայկական իշխանության սահմաններում գտնվող լուսավորչական կրոնի առաջնորդները, այնքան անհանդուրժողական ու անհաշտ էին Արևելյան Հայաստանի վարդապետները։ Այս հողի վրա էլ XII դ. վերջին քառորդում տեղի ունեցան բուռն վեճեր հայ եկեղեցու ներսում։ Իրար դեմ բախվում էին Հռոմկլայում նստող կաթողիկոսներն ու նրանց շուրջը համախմբված վարդապետները՝ մի կողմից, Հաղբատի, Սանահնի և Հյուսիս-արևելյան Հայաստանի նշանավոր ուրիշ վանքերի վարդապետները՝ մյուս կողմից։ Առաջին խմբի ներկայացուցիչները, հավանաբար, նկատի ունենալով իրենց երկրամասի վիճակը (գտնվում էին Բյուզանդիայի քաղաքական ազդեցության ներքո և ռազմական հնարավորություն չունեին դիմադրելու, պաշտպանվելու)՝ համաձայն էին փոխզիջումներով միանալ բյուզանդացիներին, հայության ազգային նկարագիրն ու կրոնական հիմնական սկզբունքները պահպանելու պայմանով։ Իսկ երկրորդները, միանգամայն իրավացի, չէին հավատում հակառակորդի համերաշխության սուտ երդումներին և ազգակից արևմտականներին կոչ էին անում չգնալ ոչ մի զիջումի, մինչև վերջ պաշտպանել հայոց եկեղեցու անաղարտությունն ու ինքնուրույնությունը։

Հունաց առաջարկությունն ընդունելու համար Հռոմկլայում (Հայոց կաթողիկոսների աթոռանիստը) 1179 թ. գումարվեց եկեղեցական ժողով, որին հրավիրված էին նաև Հյուսիս-արևելյան Հայաստանի առաջնորդներն ու ականավոր վարդապետները։ Վեր-

111 1204-ին Հասանն ու Դոփն արդեն արձանագրության մեջ հիշելու արժան որդիներ ունեին, ինչպես այդ երևում է Հովհաննես եպիսկոպոսի արձանագրությունից։

112 Վարդան Վարդապետ, էջ 100։

ջիններս, Կիլիկիա գնալու փոխարեն, ուղարկեցին իրենց համախոսական թուղթը՝ միության մերժումով։

Կաթողիկոս Գրիգոր Տղային դիմելով՝ իրենց այսպես էին ներկայացնում նրա հյուսիս-արևելյան թղթակիցները. «... ամենանուաստ աղօթող աշակերտքս լուսաւորչական աթոռոյդ Բասիլ եպիսկոպոս, որ յարևելս հիւսիսոյ. վարդապետ Գրիգոր Սանահնին, և հայր Յօհաննէս. վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ. Խաչատուր վարդապետ Հաղարծնին, Մխիթար վարդապետ Խոռակերտոյ, և միւս Մխիթար վարդապետ Գետկայ, և այլք...»[113]։

Արևելցիներն առաջարկում էին՝ չընդառաջել բյուզանդացիների պահանջին, չհավատալ նրանց խոսքերին ու հղած թղթերին, որովհետև «գրեալքս ի նոցանէ պատրուակեալ յինքեանս ունին զթոյնս դառնութեանն»[114]։

Գրիգոր Տղա կաթողիկոսն ու նրա մերձավորները, սակայն, չանսալով արևելցիների ձայնին, փորձում են ուղիներ հարթել միության համար։ Վերջում, սակայն, նրանք ևս համոզվում են, որ բյուզանդական արքունիքն ու եկեղեցու նվիրապետները բանկանում են կլանել հայ եկեղեցին և ոչ թե հավասար հիմունքներով միավորվել կամ դաշնակցել։ «Միության» ամենաեռանդուն քարոզիչ, այդ նպատակով հունաց մոտ բանակցության գնացած Ներսես Լամբրոնացին վերջապես համոզվում է, որ բյուզանդական եկեղեցու առաջնորդները «միություն» ասելով հասկանում են իրենց հավատի գերիշխանությունը և մյուսների վերացումը։ Եվ հուսահատ ու թեաթափ խոստովանում է, թե «ստրջացեալ ի հոգեւոր կամս մեր՝ դարձաք յիմաստախորհ յուսոյ սոցա ամօթով»[115]։

Մեր հետազոտողներից ոմանք, չգիտես դյուրահավատությունի՞ց, թե՞ ինքնախաբկանքով, կարծում են, թե հույների առաջարկությունները վերաբերել են հավատի երկրորդական հարցերին, և այդ հարցերում ընդառաջելով՝ հայերն իսկապես կարող էին ապրել նրանց հետ բարեկամության ու փոխադարձ հարգանքի պայմաններում։ Կամ, իբր, արևմտականները, օրինակ, նրանց տեսական ու գործնական ամենահեղինակավոր առաջնորդ Ներսես Լամբրոնացին, ընդառաջելով հույներին, միայն այնքան բան էր

113 Ն. Շեռեռալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 426—427։ «Մխիթար վարդապետ Գետկայ»-ը Մխիթար Գոշն է։

114 Անդ, էջ 428։

115 Ալիշան, Հայապատում, էջ 425։

ուզում, որ հայ թագավոր Լևոնը եվրոպական հագուստ հագնի ու երկար մորուս չթողնի... «միաժամանակ նա ցանկանում է նորություններ մտցնել նաև հայոց եկեղեցում, այսինքն՝ կամենում է, որ բեմ բարձրանան մետաքսյա պատշաճ հանդերձանքով ու գլխաբաց և ոչ թե «սաքուլայի» և «երկու կանգունանոց վեղարի» մեջ թաղված»[116]։ Մինչդեռ իրականում բյուզանդական արքունիքի ու եկեղեցու առաջնորդների հոգսն էր «բարեկամաբար» վերացնել հայկական հավատը՝ որպես իրենց նպատակներին խոչընդոտող երևույթ, հայերին դարձնել քաղկեդոնականության՝ իբրև «առավել լավ» ու միակ ճշմարիտ հավատի[117]։ Իսկ երբ հայերը մերժեցին այդ առաջարկը, նրանք բացեիբաց սկսեցին անլուր հալածանքներն ու բռնի հավատափոխությունը իրենց ենթակա հայկական մարզերում։ Այստեղ կայսրն էլ «...յարոյց հալածանս և չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա,— գրել է Վարդան Վարդապետը։ Ապա պատմելով, որ Գրիգոր Տղա կաթողիկոսն այս հալածանքների առթիվ աղերսագիր է հղել կայսեր, և ի պատասխան՝ ավելի դաժան միջոցառումներ են սկսվել հայերի դեմ, Վարդանը պատմում է, թե կայսրը «ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց ի կրոնս իւր և զայլս հալածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք և հազար և վեցհարիւր քահանայք, զորս ի մի հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք դերծան ամբողջ հաւատով»[118]։

Ուրեմն, մնում էր չհավատալ «միություն» կոչվող շողոմ խոսքին, որի տակ թաքնված էր ուծացման նենգ ու պատիր քաղաքականությունը, այլ ջանալ պահպանելու ժողովուրդը իր ինքնուրույն հավատով ու մշակույթով։

XIII դ. սկզբին վերստին արծարծվեց հավատի խնդիրը։ Ճիշտ է, այս անգամ նախաձեռնությունն անմիջապես օտարների կողմից չէր, այլ հարցը բարձրացրել էր հայրենի ամենահեղինակավոր պետական գործիչ Զաքարե ամիրսպասալարը։ Եվ, այսուհանդերձ, ոտքի ելան Հյուսիս-արևելյան Հայաստանի եկեղեցու հայրերը։ Այս անգամ ևս նրանց շարքում էին Մխիթար Գոշն ու Հովհաննես .

116 Գ. Աբգարյան, Ներսես Լամբրոնացին առանց «լուսապսակի». «Գրական թերթ», 1972, փետր. 11։

117 Տե՛ս Հր. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 285—295։

118 Վարդան Վարդապետ, էջ 133—134։

պիսկոպոսը։ Ասպարեզ էին եկել նոր վարդապետներ, որոնք Հայրենի հավատի անաղարտությունը պաշտպանելու համար պատրաստ էին գնալ նահատակության։ Այդպիսի հոգևորականներից էր Հասանի ու Դոփի որդի Գրիգորը, որի անձի ու գործունեության շուրջը ցայսօր պատմագիտության մեջ տեղ են գտել շատ թյուրիմացություններ։

Զաքարե ամիրսպասալարը փորձեց Արևելյան Հայաստանի եկեղեցու կարգ ու կանոնի մեջ նորամուծություններ կատարել։ Ռիթը պատարագի համար շարժական սեղան ունենալու խնդիրն էր։ Իբր, իր վարած վրաց-հայկական զորքի հետ շարժվելիս տեսնում էր, թե ինչպես վրացի զորապետները երթի ժամանակ ճոխ ծեսեր են կատարում, որովհետև հարմարություններ ունեն, շարժական վրան-եկեղեցի և այլ պիտույքներ, իսկ ինքն ու իր ազգակիցները զրկված են նման հնարավորություններից, մանավանդ, որ հայոց տոներն էլ հաստատված չէին ամսաթվերի վրա[119]։ Այս հարցով նա դիմում է այդ ժամանակի Հայաստանի ամենաանվանի վարդապետին ու իրավագետին՝ Մխիթար Գոշին. ինչպե՞ս վարվել։ Գոշը խորհուրդ է տալիս դիմել իրավասու մարդկանց՝ ամենայն հայոց կաթողիկոսին և Հայոց (Կիլիկիայի) թագավորին։ Զաքարեն դիմում է նրանց, և գալիս է պատասխանը՝ բաղկացած ութ կետից։ Այդ կետերի կիրառումով Զաքարեն հույս ուներ բարելավել հայոց եկեղեցու ծեսերը, նրանց կարգ ու կանոնը։ Իսկ եկեղեցու առաջնորդները դեմ են կանգնում նման նորամուծություններին՝ նրանց մեջ տեսնելով Գրիգոր Տղայի օրերի բյուզանդական միջամտության տարբերակը (այն ժամանակ բյուզանդացիների պահանջներն արտահայտված էին ինն կետով), որի առաջ ընկրկել էին Կիլիկյան հայկական թագավորության հոգևոր ու աշխարհիկ ղեկավարները և հենց նրանք էլ, ինչպես ուրիշ զիջումներով, այնպես էլ այսօրինակ թուլակամությամբ հող պատրաստեցին թագավորության կործանման համար։

Զաքարե ամիրսպասալարի նորամուծության փորձի դեմ ընդվզած հոգևորականների մեջ էր Հաղբատի առաջնորդ Գրիգորիսը, որի մասին Կիրակոսը խոսում է հիացմունքով՝ նրան կոչելով «սուրբն Գրիգորիս»։ Պատմիչը նրա տոհմական պատկանելության մասին որոշակի ոչինչ չի ասում, չնայած խոստովանում է, որ

119 Կիրակոս, էջ 166—167։ Մանրամասները տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, գիրք Գ, էջ 1570 և հտգ.։

Գրիգորիսն իր ժամանակ է առաջնորդ եղել Հաղբատի վանքում. միայն այնքանը, որ «Սա ազգական էր իշխանացն Զաքարէի և Իւանէի»[120]։ Սակայն Կիրակոսը հանգամանորեն պատմում է, թե ինչպես Գրիգորիսի կարգադրությամբ հաղբատցիները ծեծում են՝ նոր կարգ ու կանոնը Հաղբատի վանքում կատարելու համար Զաքարեի ուղարկած հոգևորականներին։ Նրանք կիսամեռ են դարձնում ուղարկվածների գլխավոր, Կիլիկիայից եկած եպիսկոպոս Մինասին, «և զչորիսն, որք էին ընդ նմա բեռնակիրք, գահավէժ արարեալ՝ սատակեցին»[121]։

Սաստիկ զայրանում է Զաքարեն, կարգադրում բռնել Հաղբատի եպիսկոպոսին և պատժել խստագույնս։ Գրիգորիսը փախչում է Նոր-Գետիկ, Մխիթար Գոշի մոտ, իմանալով, որ վերջինս բարձր հեղինակություն է ամիրսպասալարի համար և անպայման կփրկի իրեն։ Եվ Գոշն իսկապես հովանավորում է նրան։ Սակայն հետագայում Զաքարեն իր ազգականին ձերբակալել է տալիս Կեչառիսում (ուր, հավանաբար, նա շարունակում էր պայքարը նորամուծությունների դեմ) և նշանակում խաչենեցի (ծարեցի) Հովհաննես Ա-ին։

Ո՞վ էր Զաքարեի ու Իվանեի ազգական Գրիգորիսը, որտեղացի՞ և ի՞նչ տոհմից։ Հետազոտողները (Հ. Ղրիմեցի, Ալ. Երիցյան, Մ. Օրմանյան, Հր. Աճառյան, Կ. Կոստանյանց և այլք)[122] միահամուռ նրան նույնացրել են Սանահնի հռչակավոր վարդապետ Գրիգոր Տուտեորդի Խաչենեցու հետ, չնայած աղբյուրների տեղեկություններով այս նույնացումը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել, մանավանդ, երբ կա Կիրակոսի այն խոսքը, թե Հովհաննես Խաչենեցին Սանահնի առաջնորդ դարձավ Տուտեորդու մահից հետո[123], իսկ Հովհաննեսի՝ սանահինյան եպիսկոպոսության օրերին էր, որ տեղի ունեցան վերոհիշյալ դեպքերը։

Առաջին անգամ Կ. Ղաֆադարյանն է մտածել, որ «Գրիգորիս ազգական իշխանացն» և Գրիգոր Տուտեորդին նույնը լինել չեն կարող։ Սակայն նա էլ, նախ, Գրիգորիսին համարում է Սյունիքի Օրդ-

120 Կիրակոս, էջ 98, 171։

121 Անդ, էջ 173։

122 Յովհաննես Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր Վանից հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1965, էջ 86, 101—103 կն., Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800—1832), Թիֆլիզ, էջ 213, Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, գ. Գ, էջ 1576—1578 և հտգ., Հր. Աճառյան, Հայոց անձն. բառ., հատ. Ա, էջ 554, Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 58, 60։

123 Կիրակոս, էջ 171։

բելյանների ազգական[124] (երևի հետևելով Մ. Օրմանյանին)[125], ապա մի տեղ գրում՝ «Գրիգորիս եպիսկոպոս (Դոփյան)»[126]։

Բանն այն է, որ Գրիգորիսը 1198 թ. մի արձանագրությամբ (հորեղբայր Հովհաննես եպիսկոպոսի հետ միասին) հայտնում է, որ ինքը Սանահնի պատրոնաց քեռորդին է. «Ես տէր Յովհաննէս տնկեցի զայս տնյարկս մեծաւ աշխատութեամբ։ Եւ ի Ոսէ (1198) թվին ես Գրիգոր վարդապետ՝ քուէրորդի պատրոնացն, նոր շինեցի զայգիս և կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովհաննէսի վասն յիշատակի նոցա և ինձ»[127]։

Այս ժամանակ Հասանի եղբայր Հովհաննես Խաչենեցին (խաղավանքի կառուցողը) Սանահնի առաջնորդն էր։ Իսկ Սանահնի ու շրջակաների պատրոնները (տնօրենները) Զաքարեն ու Իվանեն էին։ Ուրեմն՝ տեր Գրիգորիսը սրանց քրոջ որդին է եղել։ Սա հաստատվում է Ստ. Օրբելյանի վկայությամբ, որի համաձայն՝ Հաղբատի առաջնորդ Գրիգորիսը էր «քեռորդի Զաքարէի և Իւանէի»։ Բայց ո՞ր քրոջ։ Զաքարեի ու Իվանեի չորս քույրերն էլ հայտնի են աղբյուրներից։ Երկուսը (Նրջիս՝ Դսեղի Մամիկոնյանների հարս և Նանա՝ զեռահաս Աբաս Կյուրիկյանի կին) մահացան անզավակ։ Մյուս երկուսը հարս էին եկել Խաչեն. Խորիշահը Խոխանաբերդի տեր Վախտանգի կինն էր, Դոփը՝ Ծարա տեր Հասանի։ Վախտանգի զավակների անուններն էլ են հայտնի (Հասան-Ջալալ, Զաքարե, Իվանե և Նասր-Դավլա)։ Նրանց մեջ Գրիգորիս չկար։ Մնում է Դոփը, որից և պետք է ծնված լիներ Գրիգորիսը։ Բայց մի՞թե նա հայրենի Խաչենում ոչ մի հիշատակ չէր թողել. չէ՞ որ Հաղբատի ու Սանահնի առաջնորդներ դարձած խաչենեցի վարդապետների օրրանները

124 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 195[illegible], էջ 52. «Գրիգորիս եպիսկոպոս Հաղբատայ»։ Վերջինս ոչ թե Տուտեորդին է, այլ միանգամայն այլ մարդ։ Սա է, որ Օրբելյաններին ազգական է և թաղված է Նորավանքում...»,— գրում է գիտնականը։ Նա երևի հիմք է ընդունում Ստ. Օրբելյանի հետևյալ տեղեկությունը. «Սա (տէր Ստեփաննոս) ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաղբատ զտէր Գրիգորիս՝ քեռորդի Զաքարէի և Իւանէի, և տեսեալ յեպիսկոպոսութեանն ամս 46՝ վախճանի ի Վայոց ձոր յԱռափա գիւղն. և տարեալ զնի ընդ հօր իւրում ի նոյն Նորավանս, ի 665 թուականին» (Օրբէլեան, էջ 343)։ Այստեղ, սակայն, Նորավանքում թաղված է համարվում ոչ թե Գրիգորիսը, այլ նրան ձեռնադրող Ստեփաննոսը։

125 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, գ. Գ, էջ 1576. «Գրիգոր Տուտեորդին էր, Օրբելյանց ազգականը»։

126 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 275։

127 Ջալալեանց, Ա, էջ 80։

Խաչենի վանքերն ու եկեղեցիներն էին, և այստեղ է, որ նրանք աճում ու դաստիարակվում էին՝ հասնելով հարևան թեմերը։

Վերջերս մենք Դադի վանքում, Հասան կրոնավորյալի կառուցած փոքրիկ եկեղեցու հյուսիսային պատի մեջ գտել ենք Գրիգորիս Ծարեցու մի արձանագրությունը, որով արդեն կարելի է հաստատել, որ «Գրիգորիս քուէրորդի պատրոնացն» վերին-խաչենեցի է, Հասանի ու Դոփի որդին։ Խաչարձանի վրա գրված է. «Ես Գրիգոր քուէրորդի կա||նգնեցի զխաչս եղբաւր իմո Գիո||րգա, որք երկրպագէք, յաղաւթս||յիշեսջիք», խաչի հորիզոնական թևերի տակ էլ՝ «Թ. Ոլ» (1181)։

Չի կարելի կասկածել, որ այս «Գրիգոր քուէրորդի»-ն և վերևի «Գրիգոր քուէրորդի պատրոնացն» նույնական են։ Առաջինի քանդակողը խաչքարի վրա տեղ չի ունեցել «Զաքարէի և Իւանէի» գրելու համար և չի գրել՝ նկատի առնելով, որ դա հասկանալի է ինքնըստինքյան. այդ ժամանակ արդեն Հայաստան աշխարհում ու նրա սահմաններից էլ դուրս Սարգիս ամիրսպասալարի երկու որդիների անունները հայտնի էին, և Խաչենում էլ քաջ գիտեին, թե ովքեր են Դոփյան իշխանազունների քեռիները[128]։ Հետևապես, Գրիգորիս եպիսկոպոսը Հասանի ու Դոփի որդին էր, նույն Դադի վանքի հոգևորական, հավանաբար այնտեղ էլ կրթված ու դաստիարակված, ապա Սանահնի վարդապետ, վերջում՝ առաջնորդ Հաղբատի, որտեղից էլ նրան հալածեց ու բանտարկեց քեռի Զաքարեն։

Դոփի ու Հասանի երկու նույնանուն (Գրիգորիս և Գրիգոր) որդի ունենալը տարօրինակ չպետք է թվա, որովհետև առաջինի «Գրիգորիս»-ը կարող էր լինել հոգևոր անուն և, ապա, համանման մի երևույթ էլ տեսանք հաթերքցիների մոտ։ Հասանի վեց տղաների մեջ կային Գրիգորիս եպիսկոպոս և Գրիգոր իշխան։

Դառնալով XII դարի երկրորդ կեսում և XIII դ. սկզբում պարբերաբար արծարծված դավանաբանական վեճին, պետք է ասել, որ այն չհանգավ ու չմնաց մոռացության մեջ։ Բյուզանդիան ու նրա եկեղեցին (հետագայում էլ՝ նրանց քաղաքականության ժառանգորդները) երբեք չհաշտվեցին այն իրողության հետ, որ իրենց կողքին կա քրիստոնեական մի այլ եկեղեցի, այդ եկեղեցին դարեր շարունակ իր գոյությունը պահել է ինքնուրույն և պիտի պահի

128 Հենց նույն 1181 թ. Հովհաննես եպիսկոպոս Խաչենցին իր արձանագրության ժամանակը Զաքարեի ու Իվանեի անուններով էր նշում. «Ի ժամանակս յաղթող թագաւորին Գեորգա և յամիրսպասալարութեան Սարգսի և որդւոց իւրոց Զաքարէի և Իւանէի» (Կ. Ղաֆադարյան, Սանահին, էջ 104)։

նաև հետագայում։ XIII դարի կեսին Հռոմի պապը դիմում է Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթումին՝ վերստին առաջարկելով իրենց գերիշխանությունը, քանի որ, իբր թե, «Հռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերա երկրի կապելոյ և արձակելոյ, և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք»[129]։

Պապի թղթի պատասխանը (Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի անունից) գրվել է «ի ձեռն արդիւնական Վարդապետին Վարդանայ», 1246 թ., երբ Վարդան Արևելցին Երուսաղեմից հայրենիք վերադառնալու ճանապարհին գտնվում էր կաթողիկոսի մոտ՝ Հռոմկլայում[130]։ Այստեղ արդեն հայրենասեր կաթողիկոսը ոչ թե Գրիգոր Տղայի պես երկընտրական խոսք է ասում կամ Ն. Լամբրոնացու պես տարփողում իր աշխարհաքաղաքացիությունը, այլ կտրականապես դեմ է կանգնում պապի ոտնձգությանը, հայտարարելով, թե «զիւրեանց արուեստակեալ առասպելսն իսկի չընդունիմք, այլ և արհամարհեմք»[131]։

Հայոց դավանանքի դեմ օտար, հատկապես լատին բռնատիրական հարվածները չվերացան հիշատակված դեպքերով։ Եվ ոչ էլ արևելցիները դադարեցրին իրենց պայքարը կամ ընկրկեցին այդ հարվածների դեմ։ XIII դ. վերջում և XIV դ. սկզբին այդ պայքարը նորից բորբոքված ենք տեսնում, իսկ Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների վարդապետներին՝ պայքարի առաջին գծի վրա։ Բավական է հիշել Ստեփաննոս Օրբելյանի եռանդուն գործունեությունը՝ ի պաշտպանություն հայրենի հավատի ու ազգային ավանդների։ Այդ նա էր, որ Գրիգոր Տուտեորդու և նրա համախոհների պես հաստատակամ կանգնած էր մեր ազգային ավանդույթներն օտար հողմերից պաշտպանելու դիրքում։ Օրբելյանի ավանդապահությունն արտահայտվում էր ֆանատիկ ուժով։ «Հաւանիմք մեք ընդ հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»,— իր հավատամքն այսպես էր արտահայտում Սյունյաց պատմիչը, որովհետև լավ էր ճանաչում հոռոմ կայսրերի ու պատրիարքների նենգապատիր քաղաքականությունը և հենց նրանց շողոմ խոսքերից էլ զգուշացնում էր ժամանակակիցներին ու գալոց սերունդներին. «Մի՛ խաբիք ի քաղցր բանից նոցա, զի պատրող են որպէս շրթունս պոռնկաց»[132]։

129 «Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց զոր գրեաց առ Հեթում թագաւորն...». «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 501—509։

130 Կիրակոս, էջ 294։

131 «Գիրք թղթոց», էջ 509։

132 «Արարատ», 1893, էջ 418։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ՝ «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ»

ԽԱՉԵՆԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼՄԻ ՏԱԿ

XIII դարը Խաչենի, ինչպես և ամբողջ Հայաստան աշխարհի պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկն էր։ Դարասկզբի տնտեսական ու մշակութային բուռն վերելքը մասամբ կասեցվում է մոնղոլ-թաթարների առաջին արշավանքով ու Ջալալ-էդ-դինի բիրտ ասպատակություններով։ Ապա կարճատև խաբուսիկ խաղաղությանը հաջորդում է մոնղոլական արյունարբու բանակների ներխուժումը, որն ավարտվում է երկրի համատարած նվաճումով։

Նախամոնղոլական շրջանի և հատկապես մոնղոլական տիրապետության հաստատման ժամանակի Հյուսիս-արևելյան Հայաստանի ամենանշանավոր երևույթներից էր Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալի իշխանությունը։ Այս հայրենասեր ու լրջախոհ իշխանապետի աթոռակալության առաջին տարիներին Ներքին Խաչենը տնտեսապես բարձրացավ մի աննախընթաց մակարդակի։ Աշխուժացավ մշակութային կյանքը։ Ստեղծվեցին հոգևոր նոր կենտրոններ, և կառուցվեցին ճարտարապետական այնպիսի կոթողներ, որոնք դասական օրինակ ծառայեցին հետագա դարերի համար։ Մեծ էր այդ ողջամիտ ու հեռատես անհատի դերը նաև Խաչենի ու ամբողջ Հայաստանի կյանքում։ Բավական է հիշել այն միջոցառումները, որոնք նա գործադրեց՝ երկիրը թաթար-մոնղոլների կործանարար դաժանություններից զերծ պահելու համար։

Խաչենի իշխանական տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր Հասան-Ջալալը, կենդանության ժամանակ միշտ պատմիչ-

ների ուշադրության կենտրոնում, եղերական մահից հետո՝ ժողովրդի ու դարձյալ աղբյուրների միահամուռ գովաբանությամբ պսակված։ Ժամանակակից հեղինակները ոգեշունչ խոսքերով են պատմում նրա գործունեության մասին։ Նրա ապրած կյանքի ու կատարած եռանդուն գործի համարյա յուրաքանչյուր մանրամասն արձանագրված է Խաչենի տարածքի և հարևան գավառներում պահպանված խոսուն քարերի վրա, Գանձասարի վանքին նվիրած նրա ձեռագիր Աստվածաշնչի հայտնի հիշատակարանում և այլուր։ Ջալալի մասին է խոսում նաև իր իսկ գործածած թրի այն նեֆրիտե երախակալը, որի վրա նախշանկար քանդակված է «Հասան-Ջալալ իշխան Խաչենոյ»[1]։

«Հասան» արաբերեն բառ է, որ նշանակում է «գեղեցիկ»[2]։ Սակայն գգվանոք Հասանին կոչում էին նաև Ջալալ, որը դարձյալ արաբերեն է և նշանակում է «փառք, վեհություն, մեծություն»[3]։

Հասան-Ջալալն իր վրա էր առել նաև մի երկրորդ փաղաքշական անուն (թե՞ մեծարանքի ցուցիչ)՝ «Դալա», որ արաբերեն «դալաթ-դօվլաթ» բառից է և նշանակում է «հարստություն, մեծություն, ինչք, պետություն» (իշխանություն)[4]։ Հավանաբար բառն այստեղ դրված է վերջին նշանակությամբ՝ իշխան, ինքնակալ։

Պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են եղել Հասան-Ջալալի գահակալության սկզբի և նրա ժառանգած տիրույթների մասին։

Հ. Օրբելին առաջին հարցին անորոշ պատասխան է տալիս, կարծելով, թե Հասան-Ջալալը միայն Խաչենի տիրակալն էր 1229 թվականից, երբ իր կառուցած եկեղեցում (Վանքում) թողել է մի արձանագրություն՝ իրեն ներկայացնելով որպես «տէր Խաչենոյ», իսկ հոր մահվան տարին (1214) նա կարող էր դեռևս երեխա եղած լինել[5]։ Գիտնականն այստեղ մոռանում է իր իսկ վկայակոչած հիշատակարանը, գրված Վախտանգի ձեռքով՝ 1212-ին, որով նա հայտնում էր, թե ունի վեց զավակ։ Եվ եթե վեցի ավագն էլ Հասանն էր, ապա երկու տարի հետո հազիվ թե նա անչափահաս լիներ ու անընդունակ իշխանական աթոռի վրա փոխարինելու վախճանված հորը։

Ինչպես հետո կտեսնենք Հասան-Ջալալի աղջիկ Ռուզուդանին 1236 թ. ամուսնացրին մոնղոլ զորապետ Բորա-Նոյինի հետ։ Եթե այս թվին Հասան-Ջալալն ամուսնանալու աղջիկ ուներ, ապա անկասկած է, որ հոր մահվան տարին նա հասուն պիտի լիներ իրեն ժառանգություն մնացած իշխանական աթոռին բազմելու համար։ Վարդան Վարդապետի տեղեկությունն այն մասին, թե Վախտանգի մահից հետո նրա որդիներին ու կնոջը՝ Խորիշահին «խնամարկէր Իւանէ», այսինքն՝ աթաբեկ աներձագը[6], չպետք է հասկանալ այնպես, թե, իբր, Իվանեն «քույր Խորիշահի հետ միասին դաստիարակում էր և նրա որդիներ Զաքարեին ու Հասանին»[7]։ Նախ՝ «խնամարկէլ» նշանակում է ոչ թե «դաստիարակել», այլ հոգալ, իսկ տվյալ դեպքում՝ հովանի լինել։ Ապա՝ մենք համոզված ենք, որ, զարմանալիորեն, Վարդան Վարդապետի պատմության այս հատվածի տեղեկությունն այնքան էլ վստահելի չէ, եթե նկատի առնենք հենց թեկուզ այն հանգամանքը, որ Վախտանգի վեց որդիներից հիշատակում է միայն երկուսին։

Վախտանգի մահվանից հետո Հասան-Ջալալը ծնողների վեց որդիներից ավագն էր[8]։ Սա ինքնին բավական է հավաստելու համար, որ նա իշխանական աթոռի վրա անմիջապես հաջորդել է հորը։

Եվ, վերջապես, բավական է հիշել Խանչալ-խաչ կոչվող վայրում Վախտանգի որդի Սմբատի կանգնեցրած արձանագրությունը (1216 թ.), որի մեջ Հասանը կոչված է արքա. «Թվիս ՈԿԵ (1216։

---

1 *И. А. Орбели,* Нефритовая кинжальная рукоять с армянской надписью Избранные труды, стр. 135—145.

2 Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 51։*

3 *Նույն տեղում, հատ. Դ, էջ 286։*

4 *Նույն տեղում, հատ. Բ, էջ 76։*

5 *И. А. Орбели,* Хасан-Джалал, князь Хаченский, Избранные труды, стр. 150.

6 Վարդան Վարդապետ, *էջ 140։*

7 Օրբելի, *Հասան-Ջալալ, էջ 149։*

Հր. Աճառյանը Վախտանգի կին (Սարգիս Զաքարյանի դուստր և Զաքարե ու Իվանե իշխանապետների քույր) է համարում Թամթի կամ Թամթա անունով մեկին (տե՛ս Հայոց անձ. բառ., Բ, էջ 269, Ե, էջ 7)՝ վկայակոչելով Ստ. Օրբելյանի պատմությունը և Ղ. Ալիշանի կազմած երկու տոհմաբանական տախտակները (Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 175, Հայապատում, էջ 447)։

Ստ. Օրբելյանի պատմության մեջ Թամթա անուն չկա առհասարակ։ Իսկ Ալիշանի երկու տախտակներում էլ այդ անունը փոխարինում է Խորիշահին և չի հիմնավորված պատմական որևէ աղբյուրով։ Հետևապես Խորիշահի Թամթա լրացուցիչ անունը թյուրիմացություն է։

8 *Հիշենք, որ Վախտանգի և Խորիշահի հիշատակարանում նշված վեց որդիներից բացի մեկն էլ, անկասկած՝ ոչ ավագը, մահացել էր 1202 թվականին։*

ես Սմպատ որդի Վախտանգա տեառն Խաչինոյ,... եղբէր արքէին Հասանայ...»։

Վախտանգ-Տանգիկի զավակների թիվն աղբյուրներում և՛ երկուս է, և՛ երեք, նույնիսկ չորս ու վեց։ Այդ պատճառով էլ պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են պաշտպանվել, որոնք, սակայն, մինչև օրս էլ հարցը թողել են մութ։

Վարդան Արևելցու վկայությամբ՝ Վախտանգը մահացել է, թողնելով «երկու տղայս՝ զՀասան, որ ի գգուանաց Ջալալդօլա և զՋաքարէ, որ և Նասրադօլա»[9]։

Իսկ նախորդ գլխում վկայակոչված հիշատակարանը, որ գրվել է 1212 թ., Վախտանգի մահից երկու տարի առաջ, ինչպես տեսանք, խոսում է երեք տղաների ու երեք աղջիկների մասին. «Ես Վախտանգ և լծակից իմ Խորիշահ... ծնաք երիս ուստերս և երիս դստերս՝ ժառանգ մարմնաւոր և յիշատակ հոգևոր»։

«Զերիս ուստերս» հաստատվում է նաև մի այլ հիշատակարանով, որ գրել է խաչենեցիների տոհմակից խաղբակյանների մի շառավիղը՝ Ջաջուռի դուստր և Խաղբակի թոռ Վանենին։ Նրա վկայությամբ՝ 1232 թ. Խաչենը գտնվում էր «ի տէրութեան երից հարազատիցն բարեպաշտ իշխանացն Ջալալին, Ջաքարիային և Իւանին»[10]։

Եվ, վերջապես, երեք արու զավակների մասին է վկայում նաև մի այլ ժամանակակից՝ Կիրակոսը, դարձյալ նրանց կոչելով Ջալալ, Ջաքարե և Իվանե[11]։

Մ. Բրոսսեն, այս տարբեր աղբյուրներին հավասարապես հավատ ընծայելով, մեկ Վախտանգի որդիներ է ճանաչում երկուսին միայն՝ Ջալալին ու Ջաքարեին, մեկ էլ երեքին՝ Ջալալին, Ջաքարեին, Իվանեին և սրանց էլ գումարում մի աղջիկ՝ Մարինա[12], որի անունը կա Գանձասարի վանքի մեծ արձանագրության մեջ։ Պարզ է, որ եվրոպացի արևելագետը երկու դեպքում էլ աղբյուրների տեղեկություններն ընդունել է՝ առանց քննելու կամ իրար հետ համեմատելու։

Հ. Օրբելին անվերապահորեն վստահում է Վախտանգի հիշատակարանին, գտնելով, որ նա ունեցել է միայն երեք տղա[13]։ Նա.

9 Վարդան Վարդապետ, էջ 140։

10 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, էջ 216, Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 344։

11 Կիրակոս, էջ 268։

12 Histoire de la Siounie, t. II, p. 34, M. Brosset, Additions et eclaircissements.... p. 344.

13 Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 148—149։

իհարկե, գիտե, որ արձանագրություններում առկա է նաև «Նասր Դալա» անունով որդի և անառարկելիորեն հայտարարում է, թե դա էլ Ջաքարեի մականունն է. «Եղբայրներից Ջաքարեն մականվանվում էր Նասր Դավլա, Հասանն էլ ստացել էր Ջալալ Դավլա մականունը»[14]։

Որ Հասանն իսկապես կոչվել է Ջալալ Դավլա, դա երևում է նրան վերաբերող բազմաթիվ աղբյուրներից։ Իսկ որ Ջաքարեն էլ մականվանվել է Նասր Դավլա, վկայում է միայն Վարդան Վարդապետը։ Սակայն վերջինս, զավակների թվի մասին տված սխալ տեղեկությունից հետո, կասկածելի աղբյուր է դառնում նաև անունների համար։ Մանավանդ, երբ կա Հասան-Ջալալ Դավլայի արձանագրությունը, որի մեջ Դավլան (Նասր Դավլա) և Ջաքարեն միանգամայն տարբեր անուններ են։ Անխաթար պահպանվել է այդ արձանագրությունը՝ գրված 1240-ին, Գանձասարի վանքի օծման առթիվ։ Այստեղ Հասան-Ջալալ Դավլան, «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի և թագաւոր ի յոգնասահման նահանգի», պատարագներ է որոշում իր պապ Հասանին, հայր Վախտանգին, մայր Խորիշահին, կենակից Մամքանին, նաև «իմ եղբաւր Ջաքարէի[ն]... իմ եղբաւր Դաւլին... իմ քուէրն Մարինայ ... իմ եղբաւրն Իւանէին»[15]։

Հնարավո՞ր է, որ այսքան կարևոր մի արձանագրության մեջ Հասան Ջալալը սխալվեր իր եղբայրներին հիշելիս։ Բնա՛վ։ Ուրեմն, Վախտանգն ունեցել է չորս արու զավակ՝ Հասան, Ջաքարե, Իվանե, Նասր Դավլա։ Բայց ինչպե՞ս է, որ նրանց հայր Վախտանգը 1212-ին հիշել էր միայն երեքին։ Թերևս հնարավոր լինի մտածել, թե նրանցից մեկը ծնվել է 1212—1214 թթ. արանքում։ Կամ, որ շատ հավանական է, Նասր Դավլան հիշատակարանը գրելու ժամանակ արդեն մահացած է եղել։

Մնում է Կիրակոսի ու Վարդանի թյուրիմացությունն այս հարցում։ Կիրակոսը կարող էր սխալվել։ Իսկ Վարդանը, որ սերտ առնչություն է ունեցել Հասան-Ջալալի հետ, չպետք է սխալվեր, չնայած Հ. Օրբելին հավանական է համարում, թե, իբր, Վարդանը քիչ է տեղյակ իրողությանը[16]։

Կարելի է մտածել, որ Ջաքարեն ու Նասր Դավլան կարճակյաց են եղել ու չեն թողել որևէ նշանակալից հետք, որպեսզի 1260-ա-

14 Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 149։

15 Տե՛ս Գանձասարի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունը. «Արցախ», էջ 173—174։

16 Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 149։

կան թվականների երկրորդ կեսին Վարդանը նրանց հիշեր հանգամանորեն։ Մինչդեռ Իվանեն ունեցել էր Հովհաննես որդի, որը պետք է դառնար Գանձասարի վանքի առաջնորդը[17]։

Զաքարեի ու Նասր-Դավլայի մասին մեր ասածը ենթադրություն է միայն և կարիք ունի առավել հիմնավոր փաստարկումների։ Սակայն անտեսել Գանձասարի մեծ արձանագրության իրողությունը, որով հիշատակվում են Վախտանգի չորս տղաները՝ Հասան-Ջալալ Դավլան, Զաքարեն, Իվանեն և Նասր Դավլան, պարզապես անհնար է։

Վախտանգի դուստր Մարինի (կամ Մարինայի), ինչպես նաև մյուս երկու դստերերի մասին ձեռքի տակ աղբյուրագիտական ուրիշ տեղեկություններ չունենք։

Մշակութային ու շինարարական գործի վերելքը Հասան-Ջալալի օրերում.— Հասան-Ջալալի կենսագրության նշանակալից մասն է կազմում իր շինարարական գործունեությունը՝ ծավալված Հայրենի Խաչենում և Խաչենի սահմաններից դուրս՝ Հաղբատում ու Կեչառիսում։ Ամենուր նրա հետ է կինը՝ բարեպաշտուհի Մամքանը, որն ինչպես ամուսնու հետ, այնպես էլ նրանից զատ՝ և որդի Աթաբակի հետ, և միայնակ, եկեղեցիներ է նորոգում ու կառուցում, խաչքարեր է կանգնեցնում, օժանդակում մատյաններ ստեղծելուն, ապա նվիրում է հայրենի վանքերին։

Առաջին արձանագրությունը, որ պատմում է Հասան-Ջալալի կառուցողական գործունեության մասին, պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ ավանի ավերակներում (այժմյան Ծմակահող գյուղի մոտ). «Ես Հասան՝ որդի Վախտանկայ և Խորիշահի, տէր Խաչենու, շինեցի զսուրբ եկեղեցիս... ՈՀԸ» (1229)[18]։ Ապա գալիս են նրա կանգնեցրած գեղեցկաքանդակ խաչքարերը նույն Վաճառում, որոնք թվագրվում են մոտավորապես նույն ժամանակաշրջանով և բացառիկ նշանակություն ունեն այն տեսակետից, որ իրենց վրա կրում են ժամանակի աշխարհիկ կյանքի դրոշմը. քարերի վրա, Քրիստոսի ու կրոնական մոտիվների փոխարեն, քանդակված են զինվորականներ, ռազմական ու կենցաղային զանազան տեսարաններ։

1216—1238 թթ. Հասան-Ջալալի ու նրա հարազատների հոգսը Գանձասարի վանքի շինարարությունն էր։ Թաթար-մոնղոլների

17 «Արցախ», էջ 177։

18 Անդ, էջ 185։

առաջին արշավանքների, ավերի ու ավարի միջոցին նրանք ասես վերացել էին ժամանակից ու տարածությունից և կառուցում էին հավերժության համար, հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ արարիչ ձեռքն անհնար է կտրել։

Գանձասարի վանքի շինարարությունն ավարտվել է 1238 թ.։

Ժամանակակից պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են նկարագրում վանքի շինարարությունն ու նրա օծման արարողության մանրամասները։ Կիրակոսի պատմելով՝ օծման հանդեսին ներկա էին Աղվանքի կաթողիկոս Ներսեսը՝ բազում եպիսկոպոսների հետ, անվանի Վանական Վարդապետը շատ ուսուցչապետներով հանդերձ և ուրիշ բազմաթիվ հոգևոր առաջնորդներ։ Ասում են՝ հենց միայն յոթ հարյուր քահանաներ կային։ Հասան-Ջալալը շքեղ ճաշկերույթ էր սարքել։ Ինքն իսկ անձամբ սպասարկել էր մասնակիցներին, ապա առատաձեռն նվիրատվությամբ նրանց բոլորին ճանապարհել իրենց տները։

Այս հանդիսությունները տեղի են ունեցել ՈՁԹ (1240) թվականին, Վարդավառի մեծ տոնի օրը[19] (հուլիսի 22-ին, կիրակի)։

Գանձասարի վանքը.— Պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների շարքում Արցախական աշխարհն առանձնանում է իր վարչա-քաղաքական ու մշակութային անխուսափելի կյանքով։ Դա միանգամայն հասկանալի մի իրողություն է դառնում, երբ նկատի ենք ունենում այդ աշխարհի դերը Հայաստանը հյուսիսից ու արևելքից եկող ասպատակություններից պաշտպանելու գործում։ Արցախն անխորտակ մի պատնեշ էր պարբերաբար հորդացող բրոնագրավիչ հեղեղների դեմ։ Եվ ուշագրավն այն է, որ հայապաշտպան այդ դիմագրավումների ու ոգորումների մեջ իրենց անգնահատելի դերն ունեին լեռնաստանի վանքերը՝ Ամարասը IV դարի սկզբից՝ Գրիգոր Լուսավորչի հիմնադիր ձեռքի դրոշմը վրան, Կատարո վանքը Դիզափայտ լեռան գագաթին՝ հյուսիսական ու արևելյան վայրենաբարո ցեղերի հարձակումներին միշտ ենթակա, Գտիչը՝ արաբների դեմ մղված ազատամարտերի համար բերդ ու խրախուսիչ և, վերջապես, ճարտարապետական հրաշակերտներ Դադի վանքն ու Գանձասարը։

Տեղին ենք համարում հենց այստեղ երկու խոսքով բնութագրել Ներքին Խաչենի հոգևոր կենտրոնի՝ Գանձասարի վանքի ճարտարապետական մի քանի բնորոշ առանձնահատկությունները,

19 Կիրակոս, էջ 270։

նշելով նաև այդ կառույցի տեղը հայ ճարտարապետության հազարամյա պատմության մեջ։

Թ. Թորամանյանի վկայությամբ՝ Փարիզի Սորբոնի համալսարանի բյուզանդական ճարտարապետության պրոֆեսոր Շ. Դիլը 1907 թ. մարտի 6-ին ունեցած իր ելույթում, բնութագրելով հայ ժողովրդի ճարտարվեստի գործերից համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հինգ ամենաուշագրավ երևույթները, երրորդ տեղը հատկացրել է Գանձասարի վանքին։ Այս դեպքում եվրոպացի գիտնականն սկսել է Աղթամարի եկեղեցիով, անցել էջմիածնի Հռիփսիմեի տաճարին, ապա նշել Գանձասարը, չորրորդ տեղը հատկացնելով Հաղբատի վանքի համալիրին, իսկ հինգերորդը՝ Անիի մայր եկեղեցուն[20]։

Ճարտարապետության պատմության մի այլ հմուտ գիտակ՝ ռուս գիտնական Ա. Լ. Յակոբսոնը, ցույց տալով Գանձասարի վանքի ճարտարապետական բարձր արժանիքները և նրանք գնահատելով համահայկական արվեստի ընդհանուր չափ ու կշռույթով[21], գրել է, թե այդ կոթողը «հայ ճարտարապետության մարգարիտն է, հայկական միջնադարյան ճարտարապետության ու կոթողային քանդակագործության եզակի հուշարձանը», մի այնպիսի ստեղծագործություն, որն, ամենայն իրավամբ, պետք է համարել «XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»։ Յակոբսոնի կարծիքով՝ Գանձասարը ոչ միայն ընդգրկում և ընդհանրացնում է հայ դասական ճարտարվեստի բազմադարյան նվաճումները, «ոչ միայն ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է. մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»[22]։

Պատմական ճակատագրով Գանձասարին վերապահված էր մեծ ու դժվարին մի դեր Արևելյան Հայաստանի պատմության մեջ։ Այն Արցախական աշխարհի Առանձնահիկ տիրակալների հիմնական աթոռանիստներից մեկն էր, իսկ X—XI դարերից, այսինքն՝

20 Տե՛ս Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը. «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Բ, Երևան, 1948, էջ 25։

21 А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). «Исследования по истории культуры народов Востока», сборник в честь И. А. Орбели, М.—Л., 1960, стр. 144—158.

22 Անդ, էջ 151։

ներքին Խաչենի իշխանության ստեղծման ժամանակներից սկսած՝ այդ նույն ճյուղի բնակատեղին, և վանքն էլ՝ իշխանության տոհմական տապանատունը։

IX—X դարերին վերաբերող պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին քաղաքական ու կրոնական հավաքատեղի է եղել Արցախի ու շրջակա գավառների համար[23]։ Այնպես որ Հասան-Ջալալը XIII դարի սկզբին նոր վանքը կառուցեց ոչ թե ամայի վայրում, այլ նախկին նշանավոր եկեղեցու տեղում։ Նորակառույցին վիճակված էր բազմապատկելու նախկին հոգևոր կենտրոնի փառքը, դառնալու ոչ միայն Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր կենտրոնը, այլև ամբողջ Հայոց արևելից կողմանց կաթողիկոսանիստը և միաժամանակ քաղաքական մեծ խմորումների, ճակատագրական դեպքերի ու իրադարձությունների կազմակերպիչը։

Վանքն այժմ էլ համարյա անվնաս կանգուն է։ Նրա ճարտարապետությունն ու դեկորատիվ քանդակագործության տարրերը կազմում են մի արտակարգ համամասնություն և պերճախոս վկայությունն են Արցախական աշխարհի հայության կառուցողական բարձր ձիրքի։

Գանձասարի վանքը, շրջապատի բնակելի ու տնտեսական շենքերի հետ միասին, ժամանակին կառուցվել է որպես մի ավարտուն ճարտարապետական միավոր։ Այդ մասին են խոսում նրա չորս պատերը, որոնցից յուրաքանչյուրը դրսից ներկայացնում է որպես իր նկարագիրն ունեցող ճակատ։

Եվ, այսուհանդերձ, հետագայում նրան կից կառուցված գավիթն այդ միանգամայն ավարտուն ամբողջությունն անպայման լրացնում է, ավելի ամբողջացնում, դարձնում առավել կատարյալ։

Գավթի արտաքին ու ներքին հորինվածքները, ճարտարապետական լուծումներն ու քանդակագործական մանրամասները լիովին համապատասխանում են վանքին, բխում են նրանից ու կազմում են նրա արժանիքների շարունակությունը։

Գանձասարի վանքի և նրա գավթի ճարտարապետական ու քանդակագործական արժանիքների հանգամանալից քննությունը թողնելով մի այլ առիթի՝ ասենք, որ Հասան-Ջալալի կառուցած այս հոյակերտը անմահության պսակով է զարդարել ինչպես Խաչենի մեծ իշխանին, այնպես էլ Արցախական աշխարհի անանուն շինարարներին։

23 «Արարատ», 1897, էջ 143։ Ստ. Օրբելեան, էջ 278—279։

1248 թ. Հասան-Ջալալն ու Մամքանը հիմնովին նորոգել են նետողաց ազգի (թաթար-մոնղոլների) ավերած Կեչառիսի վանքը. Այդ մասին է պատմում վանքում պահպանված հետևյալ արձանագրությունը. «Ես Ջալալ Հասան որդի Վախտանգայ որդոյ մեծին Հասանայ տէր Խոյախան բերդոյ եւ Խաչենոյ եւ ամուսին իմ Մամքան՝ դուստր Բաղաց թագաւորին, միայբանեցաք մեծ եւ հռչակաւոր սուրբ ուխտիս Կեչառուաց եւ տեսի յաւերման նետողաց, բազում գանձիւք վերստին նորոգեցաք... թուի (ՈՂԷ» (1248)[24]։

1251-ին Մամքանն ինքն է հայրենի Վաճառում եկեղեցի շինել տալիս[25]։ Արձանագրության մեջ «եկեղեցիներ» է. «շինեցի զեկեղեցիս»։ Հավանաբար ուրիշներն էլ նորոգվել են։

Գանձասարի վանքի գավթի վիմագիրը քանդակվել է 1261 թ.։ Արձանագրության մեջ որպես կտիտորներ (պատվիրատուներ) հիշատակված են Հասան-Ջալալը, Մամքանը, նրանց որդի Աթաբեկը։ Արձանագրության առաջին մասը Հասան-Ջալալի անունից է, երկրորդը՝ Աթաբեկի։ «Թիւն ՉԺ է (1261)։ Ես Ջալալ Դալաս, որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ, եւ ամուսին իմ Մամքան, թոռն Բաղաց թագաւորին եւ հարազատ որդին իմ Աթաբակ Իւանէ յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս եւ բազում աշխատութեամբ աւարտեցաւ. զոր եւ հայցեմ անմոռաց յիշել յաղաթս ձեր։ Փոքր ընծայ տուի զՄուռտեղն իւր չարեքտարովքն, զՃռանց իւր սահմանովն»։ Ապա անմիջապես շարունակվում է՝ արդեն Աթաբեկի անունից. «Դարձեալ ես Աթաբակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետուփ Աւետարան...» և այլն[26]։

Պարզ է, որ գավթի կառուցումն ավարտվել, արձանագրության վերջն էլ գրվել է Հասան-Ջալալի եղերական մահից (1261) առաջ։

Ներքին Խաչենի նվաճումը թաթար-մոնղոլների կողմից.— Հասան-Ջալալի գահակալության առաջին տարիներին հաջորդեցին աշխարհացունց դեպքեր, որոնք այլ ուղղություն տվին Խաչենի ու ողջ Անդրկովկասի պատմական ընթացքին։

Թուրք-սելջուկյան բռնագրավումներից ազատագրված, հայվրաց զինական դաշնակցությամբ վերակենդանացող հայկական նահանգների համար քաղաքական ու տնտեսական վերելքի նոր հեռանկարներ էին բացվում։ Ազատագրվել էին երկրի հյուսիսային և հյուսիս-արևելյան բոլոր մարզերը։ Էլ չենք խոսում երկրի կենտրոնական նահանգների մասին։ Դեպքերի մասնակից և արժանահավատ պատմիչներ Կիրակոսն ու Վարդանը թվարկում են ազատագրված գավառները, որոնց մեջ են Հայոց արևելից կողմանց պատմական հողերը՝ Շամքորից մինչև Ատրպատական, Մուղանի դաշտից մինչև Գեղարքունիք։

Թվում էր, թե հայ ժողովուրդն արդեն ստացել է քաղաքական ու մշակութային եռուն կյանքով ապրելու հնարավորություններ։ Սկիզբ էր առել շինարարական մի աննախընթաց խանդավառություն։ Վանքերում ու եկեղեցիներում դպրոցներ էին բացվել, ուսումնածարավ մանուկները կրթվում էին ժամանակի գիտությամբ։

Եվ հենց այս ժամանակ էլ կործանարար հեղեղի պես արևելքից, անդրկասպյան տափաստաններից, հետագայում էլ՝ Վոլգայի մուժը։ Ասպատակիչներն Անդրկովկաս խուժեցին հանկարծակի, վայրենի մոլուցքով, գեհենային ուժով։ Կիրակոսն այս արշավանքի տարի է համարում 1220 թվականը՝ վկայելով, որ «... յանկարծակի յեղակարծում ժամու յոլով գունդս զօրու ծանու, ամենայն կազմութեամբ, ելեալ ընդ դուռն Դարբանդայ ուժգին դիմեցմամբ, և եկեալ յաշխարհն Աղուանից՝ գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց, և զոր ինչ գտանէին ի ճանապարհին՝ զամենեսեան սրոյ ճարակ տային՝ զմարդ և զանասուն, մինչև ի շունս անգամ. և մեծագին հանդերձից և այլ ընչից փոյթ ինչ ոչ առնէին, բայց ի ձիոյ»[27]։

Այսպես, նրանք կոտորելով ու ավերելով, հասնում են Տփղիս, ապա վերադառնում, նստում Շամքորի դաշտում։ Այստեղ էլ հպատակության երդումով իրենց մոտ գնացածներին սրի են քաշում, ապա իջնում Պարտավի ու Բայլականի միջև ընկած դաշտը (Բեղամեջ), այնտեղից էլ պարբերական ասպատակություններով ավերում շրջակա գավառները։ Վրաց թագավոր Գեորգի Լաշան ու Զա-

24 Շահխաթունեանց, Բ, էջ 194 (տպագրված է պակասավոր)։ Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 317։

25 «Արցախ», էջ 184։

26 Շահխաթունեանց, Բ, 372—373։ «Արցախ», էջ 174—175։ «Վիմական տարեգիր», էջ 108—109 (աղավաղումներով)։ «Չարեքտար» պարսկերեն բառ է՝ «չարեկ» (մեկ-քառորդ) բարդությունից («չահար»—չորս և «եկ»—մեկ) և նշանակում է «կալվածք կամ արտ, որի վարձողը տիրոջը բահրա էր տալիս բերքի մի-քառորդը» (Ստ. Մալխասյանց, Հայ. բաց. բառ., Դ, էջ 15)։ «Չարեք»-ի մասին հանգամանորեն տե՛ս А. А. Али-заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, էջ 239, Լ. Ս. Խաչիկյան, ժե, Բ, էջ XLIX—XLX։

27 Կիրակոս, էջ 201—202։

քարյան Իվանե սպարապետը վրաց-հայկական միացյալ զորքերով ճակատամարտի են դուրս գալիս եկվորների դեմ։ Ճակատամարտը տեղի է ունենում Կուրի ափին, Խունան դաշտում, որը, ըստ Հ. Մանանդյանի, գտնվում է Խրամի գետաբերանի արևելակողմում[28]։

Սկզբում վրաց ու հայոց զորքերը խուճապի են մատնում մոնղոլներին ու հալածում որոշ տեղ։ Սակայն հետո պարզվում է, որ դա թշնամու սարքած ծուղակն է. մոնղոլների դարանած զորամասերը հարձակվում են թիկունքից, կոտորում վրաց-հայկական զորքերին։ Վարդան Արևելցու վկայությամբ՝ միայն Վահրամ Զաքարյանն էր, որ, անտեղյակ յուրայինների պարտությանը, «մեծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման»[29]։

Սա թաթար-մոնղոլների առաջին արշավանքն էր Անդրկովկաս և հարևան երկրները, որով նրանք, ինչպես Հ. Մանանդյանն էր իրավամբ նկատում, կատարել էին հետախուզություն. «1223 թ., մոտ երեք տարվա արշավանքներից հետո, սրանք վերադարձան Արևելք՝ Չինգիզ-խանի մոտ, հավաքած լինելով կարևոր տեղեկություններ արևմտյան այն երկրների մասին, որ իրենք նվաճելու էին մոտ ապագայում»[30]։

Պատմական աղբյուրներում հիշատակություններ կան 1220—23 թթ. մոնղոլների կատարած ասպատակությունների մասին։ Մեր խնդրո առարկայի տեսակետից կարևոր է ղփչաղների Անդրկովկաս գալու մասին վկայությունը։ Մոնղոլներից հալածված՝ նրանք Դերբենդի դռնով խուժում են Կուրի ավազանը և բնակավայր խնդրում Վրաց թագավորից։ Մերժում են ստանում։ Իսկ Գանձակի ամիրան նրանց իր քաղաքում բնակվելու հնարավորություն է տալիս՝ նպատակ ունենալով նրանց ուժն օգտագործել վրաց-հայկական միության դեմ։ 1222 թ. Իվանե սպարապետը հարձակվեց Գանձակի ամիրայի վրա՝ այդ խարդավանքի համար նրան պատժելու նպատակով, սակայն ծանր պարտություն կրեց։ Իվանեի զորավարներից շատերն ընկան կռվում կամ գերվեցին թշնամուց։ Դրանցից էին խաչենցի Խաղբակ իշխանի որդի Գրիգորը և թոռ (Վասակի որդի) Պապաքը։ «զՊապաքն սպանին ի պատերազմին.

28 «Քննական տեսություն», հ. Գ, էջ 183։

Հավանաբար «Խունան» քաղաքի անունից է, որով կոչվում էր հին Հնարակերտը և գտնվում էր Խրամի գետաբերանին։

29 Վարդան Վարդապետ, էջ 142 ։

30 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 185։

խսկ զԳրիգոր ձերբակալ արարեալ, նեղեցին բազում խոշտանգանօք, զի ուրասցի զՔրիստոս, և նա ոչ առ յանձն ... Եւ նոցա բարկացեալ՝ քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի և փշով քանցեցին զամենայն մարմինս նորա, և այնքան տանջեցին զնա, մինչև ի գանելն աւանդեաց զհոգին... Սոքա գաւառաւ խաչենեցիք էին, յերևելի ազգէ, հաւատով քրիստոնեայք, ուղղափառք և ազգաւ հայ»[31]։

Ամենամեծ դժբախտությունն այն էր, որ մոնղոլների առաջին արշավանքները համընկան Վրաց պետության խարխլման և հայ-վրաց զինական ուժերի թուլացման հետ։ Թամար թագուհուց հետո և հատկապես քաջ զորավար Զաքարեի մահից (1212) հետո պետական կառավարությունն ընկավ թույլ ու անկարող հաջորդների ձեռքը, որոնք չկարողացան ապահովել լայնածիր պետության ամբողջականությունը։ Թամարի որդի և հաջորդ Գեորգի Լաշան «անբարոյական կենցաղով և հարբեցողությամբ իր դեմ հարուցեց Վրաստանի իշխաններին և առավելապես Իվանե աթաբեկին ու Զաքարիայի որդի Վահրամ Գագեցուն»[32]։ Լաշայի հաջորդ Ռուզուդանը (1223-ից), որ ամուսնացել էր Էրզրումի ամիրայի որդու հետ, բարձր արժանիքներ չունեցող մի կին էր, և նրանից դժգոհ էին առաջին հերթին վրաց իշխանները, որոնցից ամեն մեկն արդեն մտածում էր իր գլխի ճարը տեսնելու և ոչ թե միասնական պետությունն ամրացնելու մասին։ Այսքանից հետո արդեն պատահական չէին վրաց և հայոց միացյալ զորքերի պարտություններն ինչպես Աղվանից կողմերում՝ մոնղոլների ու ղփչաղների դեմ, այնպես էլ հարավում ու կենտրոնական Հայաստանում՝ Խորեզմից եկած զորքից, որը հայկական նահանգների գրավումից հետո, 1226-ին շարժվեց Տփղիսի վրա, նվաճեց այն ու ավերեց[33]։

Մի խոսքով՝ խախտվել էր Վրաց թագավորության հզորությունը, ջլատվել էր վրաց և հայ ժողովուրդների ռազմական միասնությունը,

31 Կիրակոս, էջ 205—206։ Հ. Օրբելին այս ճակատամարտի մասին խոսելիս գրում է, թե Իվանեի զինվորներից շատերը գերվել են, «ծախվել մահմեդականներին որպես ստրուկներ։ Եվ դրանց մեջ էին նաև երեք եղբայրներ Հասանը, Զաքարեն ու Իվանեն, երկայնաբազուկի (Իվանե սպարապետի—Բ. Ու.) ազգականները, Վախտանգ Սակաոյանի որդիները» (տե՛ս նշվ. աշխ., էջ 152)։ Նրա վկայակոչած աղբյուրներում (Կիրակոս, Վարդան, Գրիգոր Պատմիչ և այլն) նման ոչ մի տեղեկություն չկա։

32 «Վրաց աղբյուրները», Բ. էջ 50—51։

33 Անդ, էջ 53։ Միխ. Ասորի, էջ 523, Վարդան, էջ 143, Իբն-ալ Ասիր, էջ 158—159։

նությունը, և այլևս չկար մի ամուր ձեռք, որն ի վիճակի լիներ վերականգնելու այն, նախապատրաստելու պաշտպանությունը երկրին սպառնացող մեծ աղետի դեմ։ Իսկ այդ աղետը չուշացավ։

Մոնղոլներն ասպատակեցին Խորասանը։ Դրան հետևեց Պարսկաստանի, Ատրպատականի ու Դիլմաց նվաճումը, որից հետո արդեն շարժվեցին դեպի Անդրկովկաս։ Նրանք իրենց վրանները զարկեցին Մուղանի դաշտում[34]։ Իսկ կործանիչ հեղեղն առաջինը շրջվեց Գանձակի վրա։

Ըստ Կիրակոսի՝ մոնղոլների հարձակումը հանկարծակի էր, և նրանք Առանի մայրաքաղաք Գանձակն այնպես պաշարեցին, որ այնտեղից ոչ ոք չկարողանա դուրս գալ ու փրկվել։ Պատմիչը հանգամանորեն նկարագրում է ռազմական այն հնարանքներն ու բարբարոսությունը, որ գործադրեցին թաթարները Գանձակի առման ու ավերման ժամանակ, ապա և նրանց անլուր կողոպուտը, որից հետո քաղաքի ավերակների տակ անգամ թաքցված ոչինչ չէր մնացել։ «Եւ այսպէս ամայի եկաց քաղաքն զչորս ամս, և ապա հրաման ետուն շինութեան քաղաքին, և եկին ժողովեցան առ սակաւակաւ, և սկսան շինել զնա բաց ի պարսպէն»[35]։

Վարդան Վարդապետը ևս պատմում է այս ավեր-ավարը, ցույց տալով, որ մոնղոլները սրի էին քաշել բոլոր գանձակեցիներին, «բաց ի մատաղ տղայոց և կանանց՝ յորս հաճէին»[36]։

Վարդան Վարդապետը Գանձակի այս աղետի տարի է համարում 1225 թվականը[37], որ ճիշտ չէ։ Այն տեղի է ունեցել 1231/32 թվականին՝ ըստ Գրիգոր Պատմիչի, ինչպես նաև Ստեփաննոս եպիսկոպոսի ու Անանունի ժամանակագրությունների[38]։ Գարեգին կաթողիկոսն այս թվականի օգտին վկայակոչում է մի առավել հավաստի աղբյուր՝ Խաղբակյան Վանենու հիշատակարանը Խաչենի Հավապտուկ վանքին նվիրված Ավետարանի մեջ. «...Ի թուիս հայոց ՈՁԱ (1232)... եկն ազգն նետողաց եւ զմայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ՝ կոտորեաց զմարդ և զանասուն, զբազումս ի քրիստոնէից»[39]։

34 Կիրակոս, էջ 234—235։

35 Կիրակոս, էջ 237։

36 Վարդան, էջ 144։

37 Անդ։

38 Գրիգոր Պատմիչ, էջ 6, Մժ, Ա, էջ 40։ «Անանուն ժամանակագրություն», Երևան, 1940, էջ 20։ Հմմտ. Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 46։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 194։

39 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 344։

Այս ժամանակների մասին է, որ տեղեկացնում է Կիրակոսը՝ անհուն դառնությամբ պատմելով, թե ինչպես Արցախ և Ուտիք նահանգների ծայր-արևելյան մասը՝ բարեբեր Մուղանի դաշտը, դառնում է օտարների ոտքի կոխան, որովհետև այդ թափառական հրոսակները գալիս, այնտեղ խփում են իրենց վրանները. «Եւ ապա եկին հասին (ասպատակիչները—Բ. Ռ.) յաշխարհն Աղուանից ամենայն աղխիւք բազմութեամբ իւրեանց, և ի բերրի և յարգաւանդ դաշտին, որ կոչի Մուղան, լի ամենայն բարութեամբ՝ ջրով, փայտիւ, մրգով և որսով, անդ զետեղ առեալ՝ հարին զխորանս իւրեանց։ Այսպէս առնէին զամենայն աւուրս ձմերայնոյն, և ի ժամանակս գարնանային սփռէին ընդ կողմանս-կողմանս ասպատակաւ և աւերմամբ, և դարձեալ դառնային, անդրէն բանակէին»[40]։

Այնուհետև մոնղոլ զորապետները Հայոց և Վրաց երկրների նահանգները բաժանում են իրենց միջև, հարձակվում, կոտորում քնակչությանը, ավերում բերդերը, գյուղերն ու քաղաքները, նույնիսկ այգիներն ու անդաստաններն են ոտքի տակ տալիս, ոչնչացնում։

Սա արդեն Իվանե զորավարի մահից (1234) հետո էր, մի ժամանակ, երբ հայ ու վրաց զորքերը քաշվել էին իրենց տերերի՝ կենտրոնախույս իշխանների բերդերն ու ամրոցները, և այս իշխաններն էլ մտածում էին միայն սեփական գլուխներն ու տիրույթները պահելու մասին։

Կիրակոսն այս ամենի պատճառ է համարում, առաջին հերթին, Վրաց գահը տնօրինած ապիկար Ռուզուդան թագուհուն[41]։

Վախճանվել էր Իվանեն։ Իսկ նրա որդի Ավագն ու հորեղբորորդի Շահնշահը չունեին հայրերի ո՛չ քաջությունը և ո՛չ էլ հատկապես պետական սթափ մտածողությունը։

Մոնղոլ զորապետները (նոյինները) անդիմադրելի հաղթողի իրավունքով շարժվում են դեպի իրենց «վիճակված» նահանգները. «Զաղաղա նոյինն էառ զլօռէ քաղաք և որք յայնր կողմանէ գաւառք. Դոլադա նոյինն՝ զԿայէն բերդ, ուստի հանին զԱւագն տէր երկրին, և մեծն Զորմաղանն՝ զԱնի և զԿարս և զմերձակայսն, Ղաւտաղա նոյինն՝ զկողմանս Զարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու։ Իսկ Մոլար նոյինն ի բաժնի առեալ զբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ և նախ առնու զՇամքոր հնարիւք. և Վահրամ որդւովն

40 Կիրակոս, էջ 234—235։

41 Անդ, էջ 238։

Աղբուղայիւ փախչի տեղւոջէ ի տեղի, մինչև գիտաց, եթէ խնայեն ի հնազանդեալս՝ որք կամօք խոնարհին ի ձեռս նոցա...»[42]։

Ժամանակակիցների վկայությամբ՝ ոչ ոք չփորձեց դիմադրել անպատիժ ու անարգել առաջ շարժվող մոնղոլներին։ Նրանք նվաճում էին քաղաք քաղաքի ետևից, բերդ բերդի ետևից՝ առանց կըռվի ու ճակատամարտի, և եթե արյուն էր թափվում, դա նվաճվող անպաշտպան ժողովրդինն էր, որի տված զոհերն անթիվ էին, կորուստներն ու զրկանքներն անհաշվելի։ Վարդանն ասում է՝ թաթար-մոնղոլներն «ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեանց» նվաճեցին Հայաստանը[43]։

Կարծես նախորդ պատերազմներից ընդարմացել էր ժողովուրդը, դարձել անտարբեր իր երկրի ու ճակատագրի նկատմամբ և հլու ընդունում էր ահավոր օրհասը։ «Թաթարական խիզախությունն ու անգթությունը՝ միացած իրենց հաջողության հավատի հետ՝ անպարտելի էր կացուցանում ազգերի աչքում, նրանց երևույթը աստվածառաք մի պատիժ ընդունվում, որ նախատեսված էր վաղ ժամանակից»[44]։

Վճռական դեր էր խաղում, իհարկե, նաև մոնղոլ զինվորը։ Կռիվն ու կոտորածը, ավերածությունն ու կողոպուտը նրա ամենօրյա զբաղմունքն էին, նրա կյանքի նպատակն ու էությունը։

Սրանից բացի, թաթար զորքի ու զինվորի մասին տարածված ահարկու պատմությունները ևս դող ու սարսափ էին սփռել նրանց ճանապարհին՝ իրենցից առաջ։ Ճշմարտություն է Իբն-ալ Ասիրի այն վկայությունը, թե «թաթար մի հեծյալը որևէ գյուղ մտնելով կամ ճանապարհին բազմությունների հանդիպելով՝ մեկը մյուսի ետևից կկոտորեր նրանց, և ոչ ոք չէր համարձակվի նրան ձեռք տալ...»[44ա]։

Այս և նման հանգամանքներով պիտի բացատրել, որ թաթար-մոնղոլական երեսուն հազարանոց բանակի առաջ իրար ետևից ծնկի եկան երկրներ ու ժողովուրդներ, որոնցից ամեն մեկը հայտնի էր անցյալում կատարած քաջագործություններով և հզորությամբ։

Հայ իշխաններն առանձին-առանձին ծվարել էին իրենց բերդերում։ Նրանցից ամեն մեկն սպասում էր իր վերջին օրվան կամ

42 Վարդան, էջ 144—145։

43 Անդ։

44 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 47։

44ա Իբն-ալ Ասիր, էջ 175։

Վահրամ Գագեցու նման՝ գլուխն առած ամրոցից ամրոց էր փախչում՝ օտար թշնամու առաջ հալածական։

Կիրակոսը ցավով ու կշտամբանքով է նկարագրում փառապանծ Զաքարեի որդու՝ Շահնշահի արարքը։ Մոնղոլները պաշարում են նրա ամրոցը՝ Լոռեն։ Իսկ նա, քաղաքը հանձնելով անբրանց ձեռքը, կնոջ ու երեխաների հետ գաղտագողի փախչում և պատսպարվում է քարայրներում։ Իշխանազունները (իմա՝ նաև Շահնշահը), «քանզի արք կանացիք էին, ուտելոյ և ըմպելոյ և արբեցութեան պարապեալ», քաղաքն ու բնակիչներին հանձնում են բախտի բերմունքին, և մոնղոլներն ավերում են բերդը, անպաշտպան ու անզեն մարդկանց կոտորում կամ գերության քշում։

Ստեղծված վիճակից ուրիշ ելք չտեսնելով՝ հայ իշխանները հպատակություն են հայտնում բռնագրավիչներին։

Հպատակության առաջին օրինակը տալիս է Իվանե ամիրսպասալարի որդի Ավագը։ Նա Սևանի ափերին բանակած Զարմաղանի մոտ բանախոս է ուղարկում իր տան վերակացու Գրիգոր Հեջուբ Խաչենեցուն, ապա անձամբ ինքն է ներկայանում բռնավորին։ Զարմաղանը Գրիգորին ընդունում է սիրով և իր զորքերին կարգադրում չասպատակել Ավագի տիրույթները։

Ավագին հետևում են մյուս իշխանները՝ Վահրամ Զաքարյանը, Շահնշահը, Էլիկում Օրբելյանը և ուրիշներ։

Կիրակոսի և Վարդան Վարդապետի երկերը հարուստ տվյալներ են պարունակում ոչ միայն հայ բնակչության ու իշխանավորների, այլև հոգևոր դասի նկատմամբ մոնղոլ նվաճողների վարած քաղաքականության մասին։ Ըստ երևույթին ավարառու եկվորները կռահել էին, որ հոգևոր դասի ներկայացուցիչները, հատկապես մտավորականները մեծ հեղինակություն ունեն տեղաբնիկների աչքում, որոշել էին այդ հեղինակությունից էլ օգտվել։ Գերեվարում էին նրանց, ապա ազատում ահռելի փրկագնով։ Այդպես ազատվեց Վարդանի, Կիրակոսի ու Գրիգոր Պատմիչի պաշտելի ուսուցիչ Վանական Վարդապետը, որի փրկագինը վճարել էին Գագ բերդի բնակիչները[45]։ Մոնղոլները հայ մտավորականներին ստիպում էին նաև սովորել իրենց լեզուն, որպեսզի նրանք իրենց մոտ գրագրություն անեն և թարգմանչի դեր կատարեն արշավանքի ժամանակ։ Այս պայմաններում է, որ Կիրակոսը սովորում է մոնղոլերենի բազմաթիվ բառեր՝ «խօսք նոցա խժականք և անծա-

45 Կիրակոս, գլ. ԻԴ, էջ 250—251։

նօթք ի մենջ»։ Կիրակոսը թվարկում է սովորած բառերը, տալիս նրանց հայերեն բացատրությունները, ապա ավելացնում՝ «և զայլ այսպիսի խժական անուանս... ակամայ ծանուցեալ»[46]։

Աղբյուրները բազմաթիվ ու հավաստի տեղեկություններով են ներկայացնում մոնղոլ բռնագրավիչների գազանությունները. Խաչենում։

Ներքին-խաչենցիներն ամրացել էին երկու անառիկ բերդերում՝ Հավքախաղացում ու Խոխանաբերդում։ Առաջին ամրոցը հեշտությամբ նվաճվում է արնածարավ կողոպտիչների կողմից։ Սրանք գաղտագողի թափանցում են բերդը, «սրոյ ճարակ եւուն զբազմութիւնն և զկէսն գահավէժ արարին։ Եւ ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և արիւնն առու եղեալ՝ իբրև զջուր երթայր, և ոչ յոք խնայեցին. և ոսկերքն ևս յետ բազում ժամանակաց իբրև զդիրբուկս քարանց կուտեալ երևէին»[47]։

Հասան-Ջալալ իշխանն «ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խոխանաբերդ»[48]։

Մոնղոլները տեսնելով, որ անհնար է այս բերդն առնել, «կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս»։ Պաշարված, թեպետ և անգրավ վիճակում ոչ մի լավ հեռանկար չտեսնելով, Հասան-Ջալալը մեծ նվերներով իջնում է իր բերդից և հաշտություն կնքում։ Մոնղոլները նրան են հանձնում իր երկիրը «յաւելուածով»։

Հետագայում Հասան-Ջալալը ճկուն քաղաքականությամբ ու նվերներով կարողանում է նվաճել բոլոր զորապետների սիրտը, և սրանք համեմատաբար հանգիստ են թողնում Խաչենի բնակչությանը։

Մեկ անգամ արդեն Խաչենի տիրոջ առատաձեռնությունը ճաշակած մոնղոլ զորապետների այցելությունները դառնում են հաճախակի։ Եվ ամեն անգամ նրանք Խաչենից հեռանում են ճոխ նվերներով։

Այսքանը տեղի է ունեցել 1238—1239 թվականներին կամ մինչև 1240-ի սկզբները։ 1238 թ. ավարտված Գանձասարի օծումը ձգձգվել ու կատարվել է 1240-ին, հավանաբար, հենց այս պատճառով։ Այս տարիներին է վերագրվում նաև Հասան-Ջալալի դուստր Ռուզուքանի ու Զարմաղանի որդի Բորա-Նոյինի ամուսնու-

46 Անդ, էջ 273—275։

47 Կիրակոս, էջ 267։

48 Անդ, էջ 268։

թյունը[49], որի շնորհիվ, պետք է ենթադրել, որ մոնղոլ զորապետներն առավել բարյացակամ են դառնում Հասան-Ջալալի ու նրա երկրի նկատմամբ[50]։

Մոնղոլական տիրապետությանն անմիջապես նախորդած հատասնամյակներում, ինչպես պետք է ենթադրել աղբյուրների հաղորդած տեղեկություններից, Խաչենը մտնում էր վրաց-հայկական ալինակցության մեջ[51]։ Սակայն նրա իշխաններն այնքան անկախ էին Վրաց թագավորից, որ վերջինիս հետ մտնում էին սովորական առևտրական հարաբերությունների մեջ։ Օրինակ՝ վրաց տարեգիրը հայտնում է, որ իրենց թագավոր Դավիթը հռչակավոր մի նժույգ է գնել Վախտանգ Խաչենեցուց (Հաթերքեցի)՝ դիմացը վճարելով մի բերդ և մի ավան, «որ են Գարդմանք»[52]։ Սա եղել է հավանաբար XIII դարի արշալույսին, երբ Հաթերքում դեռևս կենդանի էր իշխանաց իշխան Վախտանգը։

Խաչենի իշխանության ճյուղերի և Զաքարյան իշխանության փոխհարաբերության հարցը.— Պատմագիտության մեջ դեռ պարզ

49 Հասան-Ջալալը, ըստ աղբյուրների, ունեցել է երեք դուստր՝ Մինախաթուն (Տարսայիճ Օրբելյանի կինը), Մամախաթուն (վաճառական Ումեկի կինը) և Ռուզուքան (Բորա-Նոյինի կինը)։

50 Լեոն ենթադրում էր, թե Հասան-Ջալալի դստեր մասին է հյուսված «Սուգ դստեր մեծի իշխանի» չափածո զրույցը (հրատարակված Ալիշանի կողմից՝ «Բազմավէպ», 1848, էջ 169բ—170ա, Հայոց երգք կամ ռամկականք, Վենետիկ, 1852, էջ 7—13), որն, իբր, հետագայում «շատ է ենթարկվել վերամշակումների» (Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 411 և հտգ.)։

Այս զրույցը XIII դ. գործ է համարել նաև Գ. Լևոնյանը (տե՛ս նրա՝ «Թատրոնը Հին Հայաստանում», Երևան, 1941, էջ 80—81)։

Սակայն, ինչպես արդեն աղբյուրների հավաստի տվյալներով ցույց է տվել Աս. Մնացականյանը, հիշյալ զրույցը հորինված է XIX դարում, Դորպատի համալսարանի ուսանող Ավազյանի կողմից՝ իբրև պատմական ստեղծագործություն (տե՛ս Աս. Մնացականյան, Մի կարևոր ուղղում. «Սովետական գրականություն», 1947, № 5, էջ 96—99)։

Ինչ վերաբերում է զրույցի և Հասան-Ջալալի դստեր աղերսին, ապա անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդպիսին առհասարակ գոյություն չունի, քանի որ զրույցի հերոսուհին կոչվում է Շուշան, մինչդեռ մեր իշխանի դստեր անունն էր Ռուզուքան։ Կան նաև այլ մանրամասներ, որոնք զրույցը հեռացնում են Հասան-Ջալալյան տնից. զրույցի հերոսուհու ապագա ամուսինը մահմեդական էր, իսկ Ռուզուքանի ամուսին Բորա-Նոյինը՝ ոչ, զրույցի հերոսուհու ամուսնությունից առաջ նրա մայրը մահացած էր, իսկ Ռուզուքանի մայրը դստեր այդ ամուսնությունից հետո ապրեց ավելի քան քսան տարի։

51 Վարդան, էջ 140, «Վրաց աղբյուրները», Բ, էջ 14—15։

52 «Վրաց աղբյուրները», Բ, էջ 15։

պատկերացում չկա այն մասին, թե մոնղոլների տիրապետության շրջանում քաղաքական ի՞նչ իրավունքներ ունեին Խաչենի իշխանության ճյուղերը։

Նույն վրաց տարեգրի հաղորդման համաձայն՝ հենց դարասկզբին էլ Իվանե աթաբեկի նախաձեռնությամբ թուրքմեններից փրկվում է Գեղարքունիքը[53]։ Ապա 1214 թ. մահանում է Հաթերքի տեր Վախտանգը, և գահերեցի բացակայությամբ՝ հաթերքյան իշխանազունները, Ծարա տեր Հասանի ժառանգների հետ միասին, կախման մեջ են մնում Իվանե Զաքարյանից։

Այսպիսով, ակներև է, որ միացյալ զինակցությանը ենթակա էին հիմնականում Վերին Խաչենի (Ծար, Սոդք) և Հաթերքի իշխանները, որոնք ստորադասված էին Վրաց արքունիքի ազդեցիկ ներկայացուցիչ Իվանե աթաբեկին[54], մոնղոլների տիրապետության առաջին շրջանում էլ՝ Իվանեի որդի և հաջորդ Ավագին։ Ծարա իշխան (Դոփի ու Հասանի որդի) Գրիգորը, որն Ավագի, Հասան-Ջալալի ու մյուս հայ իշխանների հետ մասնակցել էր թաթար-մոնղոլների արշավանքին (դեպի Կարին, Կապադովկիա և այլն), վերադառնալուց անմիջապես հետո՝ 1244-ին իր հիշատակարանում Ավագին իր պարոնն է համարում. «...անդ (Կեսարիայում—Բ. Ու.) առեալ զԱւետարանս պարոնն իմ Աւագն և ետ ինձ և իմ խնդալից եղեալ...»[55]։

Պարզ է, որ Գրիգորը ենթակա էր իր քեռու որդի Ավագին։

Ինչ վերաբերում է Ներքին Խաչենի ճյուղին, ապա այն, ամենայն հավանականությամբ, մոնղոլների գալուց առաջ ապահովել էր իր անկախությունը։ Ամեն պարագայի՝ հայտնի չէ այդ անկախության դեմ խոսող որևէ տեղեկություն՝ գոնե մինչև մոնղոլների առաջին արշավանքը։ Եթե Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալը XIII դ. 40-ականների վերջին Բաթու խանից ետ է ստանում «զՋարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»[56], ապա այստեղ վրացիների (պետք է հասկանալ Իվանե Աթաբեկի և նրա ժառանգների գերիշխանությունը) կողմից խլված միայն Ականան է եղել, որն անմիջապես

53 Անդ, էջ 15—16 և հտգ.։

54 Վարդան, էջ 140։ Հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 147։

55 Մատենադարանի ձեռ. № 7347, թ. 343բ (ընդգծումը մերն է—Բ. Ու.)։

56 Կիրակոս, էջ 359։

պատկանում էր Վերին Խաչենի ճյուղին[57]։ Եվ այստեղ Հասան-Ջալալը պարզապես ներկայացված է որպես ամբողջ Խաչենի (իր խոսքով՝ Արցախական աշխարհի) գահերեց իշխանը, և հենց այդ պատճառով է, որ պատմիչը նրա հայրենիքն է համարում նաև Ականան։ Հ. Մանանդյանը միանգամայն իրավացի է, երբ հենց Հասան-Ջալալի այցելությունը Բաթու խանին ինքնին համարում է հաստատող նշան այն իրողության, «որ Ներքին Խաչենը, եղել է մոնղոլների ժամանակ անկախ իշխանություն և չի գտնվել Զաքարյանների, այսինքն Վրաստանի գերիշխանության տակ»[58]։

Առհասարակ պետք է նկատի առնել, որ մինչև դարի հիսնականների կեսը մոնղոլները նվաճած երկրներում տեղական իշխանների կեսը մոնղոլները ճանաչում էին որպես իրենց վասալների ու ռազմական պաշտոնեության ներկայացուցիչների։ Սրանց միջոցով էին հավաքում հարկերը, և սրանք էին, որ իրենց զորքերի գլուխն անցած կռվում էին մոնղոլների հետ միասին՝ նրանց նոր բռնագրավումների համար։

1254 թ. Մանգու մեծ խանի հրամանով Անդրկովկաս եկան Արղունը՝ որպես անսահմանափակ իրավունքներ ունեցող վերակացու «հարկացն արքունի ի հնազանդեալ աշխարհացն, և միւս ևս ցու «հարկացն արքունի ի հնազանդեալ աշխարհացն, և միւս ևս ցու «հարկացն արքունի ի հնազանդեալ աշխարհացն, և միւս ևս ցու գլխաւոր այր ի տանէ Բաթուին, որում անուն էր Թորա աղա, հանդերձ այլովք բազմօք, որ ընդ նոսա, աշխարհագիր առնել յամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ»[59]։

57 Դա, ինչպես կտեսնենք հետագայում, նշված է Ծարեցի իշխանների արձանագրություններում ու հիշատակարաններում (տե՛ս «Արցախ», էջ 405, 408, Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 84 և այլն)։

Աղբյուրներում չկա Ականայի կոնկրետ տեղադրությունը։ Մի Հայամավուրքում այն հիշված է հոնաց կամ հյուսիսային Ռուսաստանի ասպատակության առիթով. «Մի ոմն յիշխանացն գնաց երկիրն Խաչինոյ... բանակեցաւ ի տափարակ տեղի մի, մատ յԱկանայ քաղաքն... Նահատակեցաւ սուրբ կինն Թագուհի... ի տեղուջն որ այժմ կոչի Աստղաբլուր» (Յ. վ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 39)։

Աղվանից աշխարհի պատմությունից գիտենք, որ խոսքը վերաբերում է Մեծկվենք գավառին, ուր և տեղի է ունեցել Թագուհու նահատակությունը (Կաղանկատուացի, էջ 104—110)։ Իսկ Մեծկվենքը կամ Մեծկողմանքը, ինչպես գրքի սկզբում է ցույց տրվել, Արցախի այն գավառն էր, որն ընդգրկում էր Թարթառի վերին ավազանի ձախափնյակը, այսինքն՝ Հաթերքի իշխանների տիրույթները, և մի փոքր հատված աջափնյակից (խաթրավանքը՝ շրջակայքով հանդերձ)։

58 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 221։

59 Կիրակոս, էջ 362։

Այս ժամանակից սկսած արդեն նրանք էին գրավված երկրների միահեծան ու անողոք տերերը, և տեղացիների մեջ գլխավոր ու ենթակա տեսնելը կլինի պարապ զբաղմունք։

Լ. Բաբայանը մի քանի անգամ[60] անդրադառնում է Հասան-Ջալալի իշխանության և Զաքարյանների տիրապետության առընչություններին՝ գալով այն եզրակացության, թե Ներքին Խաչենը մինչև XIII դարի կեսը գտնվում էր Զաքարյան իշխանության կազմում, մոնղոլների տիրապետության առաջին տարիներին էլ մրտնում էր Ավագ Զաքարյանին ենթակա թումանը, իսկ «50-ականներին Ավագյանների թումանից անջատվեց և նույնպես կազմեց առանձին ռազմա-վարչական միավոր»[61], իրեն հայտարարեց «բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր եւ ի յոգնասահման նահանգի...»[62]։ Գիտնականը Հասան-Ջալալի վերջին ինքնահորջորջումը կապում է այն ժամանակաշրջանի հետ, երբ Խաչենի տերն «օգտագործելով իր մտերմական հարաբերությունները Բաթուի և Սարթախի հետ, երկրի քաղաքական կյանքում այդ շրջանում բավական ակտիվ դեր սկսեց խաղալ...»[63]։

Սակայն հայտնի է, որ Բաթուի հովանավորությունից Հասան-Ջալալը օգտվել է 50-ականներին։ Կիրակոս Գանձակեցին չի նշում Հասանի՝ Բաթուին այցելելու տարին։ Սակայն դեպքը կատարված է համարում Դավիթ Ծարեցու ընդվզումից (1250) և Վանական Վարդապետի մահվանից (1251) հետո։ Ամեն պարագայի՝ 50-ական թվականներին։ Իսկ Հասան-Ջալալն, ինչպես հայտնի է, որպես «ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր» էր ներկայացել իր իսկ արձանագրության մեջ (Գանձասարում) 1238—1240-ին, մոնղոլների տիրապետության առաջին իսկ տարիներին։ Նշանակում է՝ 40-ականներին ևս Հասան-Ջալալի տիրույթը չէր մտնում Ավագյան թումանի մեջ, այլև ինքնուրույն ռազմա-վարչական միավոր էր՝ միայն հարկատու մոնղոլներին։

Հասան-Ջալալի և մոնղոլ տիրակալների փոխհարաբերությունները.— Եվ, այսպես, Հայաստանի հյուսիս-արևելյան բոլոր նահանգներն ընկնում են մոնղոլների տիրապետության տակ։ Հպատակները պարտավոր էին հարկ վճարել և կռվել տիրապետողների զորքերի հետ կողք-կողքի, նրանց նոր նվաճումների համար, ընդդեմ սելջուկների։ Սա ստեղծված իրադարձությունից միակ ելքն էր[64]։

Հայ իշխանները, որոնք իրենց հայրենիքը մոնղոլներից պաշտպանելու համար զենք ու զորք չէին հանել, հիմա նույն մոնղոլների հրամանի ներքո էին դրել ստվար զորամասեր, որոնք ստուն ու տեղից կտրված՝ գործիք էին դարձել մոնղոլ ասպատակիչների ձեռքին։ Այսպես, նրանք մասնակից եղան Կարնո (1242), Կեսարիայի, Սեբաստիայի և Փոքր-ասիական մյուս քաղաքների (1243) նվաճումներին։

Ճիշտ է, այս պատերազմներում հայերն ամեն կերպ աշխատում էին պաշտպանել յուրայիններին։ Հայաստանի արևմտյան նահանգներում սելջուկյան ու մոնղոլական ստրկությունից նրանք ազատում էին հարյուրավոր տարաբախտ ազգակիցների։ Նրանց ձեռքով ոչնչացումից փրկվում էին մշակութային քանի-քանի կոթողներ, գերեվարված ձեռագրեր ու արվեստի այլ նշխարներ։ Սակայն փաստ է, որ սեփական հայրենիքի ազատության համար չծախսված արյունը հիմա հեղվում էր նախ և առաջ ի փառս մոնղոլների տիեզերական տիրապետության։

1242 թ. սկզբներին Հայաստանում գտնվող մոնղոլ զորքերի հրամանատար Ջարմաղանը համրանում է։ Խականը նրա փոխարեն զորահրամանատար է նշանակում Բաչու-Ղուրչի անունով մեկին[65]։ Սակայն իշխանությունը պետք է վարեր Ջարմաղանի կին Ելթինա-խաթունը[66]։

Բաչուն իր նոր պաշտոնը նշանավորում է նրանով, որ հպատակ այլազգիներից կազմում է զորագնդեր և իր հետ առնելով՝ արշավում դեպի Արևմտյան Հայաստան, սելջուկ սուլթան Ղիյասէդդին քայ-Խոսրովից (հայկական աղբյուրներում՝ Ղիաթադին) Հայաստանի արևմտյան նահանգները նվաճելու համար։

Այս արշավանքի և Կարնո նվաճման մասին պատմող Կիրակոսը Բաչուի զորքերի հետ գնացած հայ իշխաններին թվարկելիս հիշում է նաև Հասան-Ջալալին։ Պատմում է, որ սուլթանի զորքերին տված առաջին նշանակալից ջարդից հետո մոնղոլները վերա-

60 Լ. Հ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում*, Ե., 1964, էջ 235—236, 262, 270։

61 Անդ, էջ 235։

62 Անդ, էջ 262։

63 Անդ։

64 *Вл. Гордлевский*, Государство сельджукидов Малой Азии, М., 1964, էջ 36։

65 Կիրակոս, էջ 278—279։

66 Անդ, էջ 290։

դառնում են Մուղան՝ ձմեռն այստեղ անցկացնելու, որովհետև, ինչպես Գրիգոր Պատմիչն է վկայում, Մուղանում «միշտ կանաչ լինի խոտն ամառն և ձմեռն՝ վասն պարարտութեան երկրին և քաղցրութեան յօդոյն»[67]։

Պարտված սուլթանը չի հուսահատվում. դեսպաններ է ուղարկում մոնղոլների մոտ, նոր ճակատամարտի հրավիրում։ Իսկ սրանք չեն շտապում, «այլ մեղմով գումարեալ զզօրս իւրեանց և որք ընդ ձեռամբ նոցա, եկեալ յաշխարհս Հայոց, ի խոտաւետ վայրս ամենայն աղխիւ, գիրացուցեալ զերիւարս և ապա մեղմով մօտ հասեալ, ուր էր բանակ սուլտանին»[68]։

Խորամանկ Բաչուն հպատակների ջոկատները դասավորում է իրարից հեռու, որպեսզի նրանք չմիավորվեն ու չդավեն, իսկ ճակատամարտի ընթացքում նրանց առաջ է տալիս, յուրայիններին տանում ետևից։ Այսպես նա Երզնկայի շրջանում, Զման-Կատուկ գյուղաքաղաքի մոտ մեծ ջարդ է տալիս սուլթանին, ապա նրա մազապուրծ զորքերին հետապնդելով՝ առնում Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան, Տիվրիկը և այլ քաղաքներ։

Այս մարտերում հայ իշխաններն ու զորքերն ամեն կերպ ջանում էին օգնել տեղի հայությանը։ Նրանք «զբազումս ազատեցին ի գերելոցն, որ յայտնի և որ ի ծածուկ, զքահանայս և զկրօնաւորս, մանաւանդ մեծամեծ իշխանքն՝ Աւագն և Շահնշահն, Վահրամ և որդի իւր Աղբուղայն, և խաչենեցիքն՝ Ջալալ-Հասան և զորք իւր, և ազգականքն, և Գրիգոր՝ Դօփին որդի, մորաքուեր որդի Ջալալին և այլ իշխանքն և զօրք նոցին ըստ կարի իւրեանց։ Եւ այս եղև ի ՈՂԲ (1243) թուականիս Հայոց»[69]։

Հենց այս շրջանին էլ վերաբերում է Հասան-Ջալալի այն գործարար միջնորդությունը, որի շնորհիվ հայկական Կիլիկիայի թագավոր Հեթումի ու մոնղոլների միջև ստեղծվում է բարեկամական հարաբերություն, և Կիլիկիան փրկվում է հարևան երկրներին վիճակված ավերածություններից։

Բանն այն է, որ Հեթումը Ղիյաս-էդդին սուլթանի դաշնակիցն էր և, անշուշտ, պետք է բաժաներ նրա ճակատագիրը։ Սակայն շրջահայաց հայ թագավորն իր դաշնակցի պարտությունից անմիջապես հետո դեսպաններ է ուղարկում մոնղոլ զորապետների մոտ՝

67 Գրիգոր Պատմիչ, էջ 8։
68 Կիրակոս, էջ 282։
69 Անդ, էջ 284։

առաջարկելով իր բարեկամությունն ու հպատակությունը։ Հեթումի դեսպանների տեսակցությունը Բաչու-նոյինի, Զարմաղանի կին Ելթինա խաթունի ու մոնղոլ մյուս մեծամեծների հետ կազմակերպվում է Հասան-Ջալալի միջոցով։ Մոնղոլներն ընդունեցին Հեթումի ընծաները, «Հաստատեցին և սէր ընդ արքայի, ետուն և գիր ըստ դենին իւրեանց, զոր էլ-տամղայն կոչէին»[70]։

Թվում է, թե Հասան-Ջալալի բարեկամությունը մոնղոլ մեծավորների հետ, ճկուն քաղաքականությունն ու ամենաբարդ իրավիճակներում կողմնորոշվելու փայլուն ընդունակությունը նրա համար պետք է ապահովեին մի համեմատաբար խաղաղ ու բարվոք վիճակ օտարների անհաղթահարելի գերիշխանության տակ։ Սակայն այդպես չեղավ։ Փոխվեց մոնղոլ կենտրոնական իշխանությունը, և մեծ խան ընտրվեց Գույուկը։ Սրա առաջին գործն այն եղավ, որ հարկահաններ ուղարկեց հպատակ երկրները և կարգադրեց անհապաղ հավաքել հարկերը, ընդ որում՝ հարկատու էին ոչ միայն հպատակ երկրների բնակիչները, այլև իրենց իսկ զինվորներն ու հրամանատարները[71]։ Մերձավոր Արևելքի երկրներ ուղարկված հարկահանների գլխավորներն էին Արղունն ու Բուղան՝ մեկը մյուսից դաժան ու նենգավոր։

Հավանաբար հայկական նահանգներում հարկահանությունը հիմնականում Բուղան էր գլխավորում, այդ պատճառով էլ հայ աղբյուրներում ամենից ցայտուն ներկայացված է նրա անողորմ վարքը։ Կիրակոսը կարծում է, որ սա ավելի մեծ չարագործ էր, քան նրա այն անվանակիցը, որ IX դարում «ել ի Հայս և աւերեաց բազում աշխարհս»[72]։

Ի՞նչ էր անում նոր կեղեքիչը և ինչպե՞ս նա առաջին իսկ հանդիպումից ոտքի տակ տվեց այն բարյացակամությունը, որ Հասան-Ջալալն էր վայելում մոնղոլ տիրակալներից։ Կիրակոսն այսպես է

70 Կիրակոս, էջ 285։
Կիլիկյան հայկական թագավորության ներկայացուցիչների ու մոնղոլ տիրակալների այս բանակցության մանրամասները և առհասարակ Հասան-Ջալալի ու Արևելյան Հայաստանի մյուս իշխանների դերը հայ-մոնղոլական փոխհարաբերությունների մեջ՝ տե՛ս Ա. Գալստյան, Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, ՊԲՀ, 1964, № 1, էջ 98—99 և հտգ.։
71 Կիրակոս, էջ 312։
72 Անդ, էջ 313։
Հ. Օրբելին Բուղայի գալու տարի է համարում 1246 թ. կամ ամենաուշը՝ 1247-ը (տե՛ս Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 154)։

նկարագրում նրա գործունեությունը և հատկապես Հասան-Ջալալի դեմ ունեցած թշնամանքը. «... Այս Բուղա եկեալ ի զօրսն Թաթար, մտանէր ի տունս աւագանւոյն, և զոր ինչ ախորժ թուէր իւր՝ առնոյր անխնայ. և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա, զի ժողովեալ էր իւր արս սրիկայս ի պարսից և ի տաճկաց, որք անխնայ գործէին զգործ խակութեան և թշնամիք էին առաւել քրիստոնէից։ Վասն որոյ չարացուցին զնա ի վերա բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն ասէին, որ ըմբռնեաց զնա ի մեծ դրանն առաջի ամենայն աւագանւոյն, և ընդ բազում պատժօք զնա արկեալ, քակեաց զանմարտնչելի բերդս նորա, զոր Խոյախանայ բերդ կոչէին ըստ պարսկական բարբառոյն, և զԴեղն, և զՍիրանաքարն, և զայլ ամրոցս նորուն։ Եւ այնպէս յատակեաց զնոսա, մինչև հետք անգամ ոչ երևէին, թէ բնաւ շէն լեալ իցէ։ Եւ բազում ոսկի և արծաթ առեալ ի նմանէ, հազիւ ղերծաւ ի մահուանէ. և մեծամեծ աւագանին ոչինչ կարացին օգնել նմա. այսպէս ահ արկ ամենայն տեսողացն»[73]։

Շուտով մեռնում է Բուղան։ Սակայն կենդանի էր Արղունը, որ Բուղայից պակաս նենգավոր չէր և Ջալալի դեմ ուներ հատուկ թշնամանք, որը և պետք է ճակատագրական դեր խաղար Խաչենի իշխանաց իշխանի համար։

Հասան-Ջալալը դիմում է Գույուկ մեծ խանին փոխարինած Բաթու խանի որդի Սարթախի օգնությանը։ Քրիստոնյա էր Սարթախը և պատրաստ էր ամեն կերպ օգնել իր հավատակիցներին։ Այս հանգամանքից բացի, Սարթախի, ինչպես նաև նրա հոր՝ Մանգու մեծ խանի միջև կային հակասություններ, որոնք Սարթախին ստիպում էին բարեկամություն հաստատել մեծ խանից ու նրա դրածոներից դժգոհ հպատակ իշխանավորների հետ։

Կիրակոս Պատմիչը համակրանքով է խոսում Սարթախի մասին՝ պատմելով այն բարեգործությունները, որ կատարում էր երիտասարդ մոնղոլ խանը՝ ի նպաստ քրիստոնյա եկեղեցու և հոգևորականների, ամեն կերպ օգնելով նաև բոլոր նրանց, ովքեր որևէ խնդիրքով կամ բռնակալներից նեղված՝ դիմում էին իրեն։

Սարթախը Հասան-Ջալալին ընդառաջում է սիրով ու պատրաստակամությամբ և ուղեկցում իր հոր՝ Բաթուի մոտ։ Խաչենի իշխանաց իշխանը մեծ զորավարի մոտ էր գնացել մի պատկառելի շքախմբով, որի կազմում էին Խաչենեցի ուրիշ իշխանազուններ ու մեծազգի հոգևորականներ՝ ծերունի Գրիգոր Տղան (հեջուբ Գրիգորը), երիտասարդ իշխան Դեսումը, վարդապետ Մարկոսը և եպիսկոպոս Գրիգորը։

Ովքե՞ր էին Հասան-Ջալալի շքախմբի անդամները։ Այս հարցին անհրաժեշտ է պատասխանել փոքր ինչ հանգամանորեն, որովհետև հետազոտողների կողմից այն արժանացել է տարբեր, իրար հակասող պատասխանների։

Օրինակ, ո՞վ էր Գրիգոր Տղա հեջուբը՝ ըստ այդ հետազոտողների։

Գար. Հովսեփյանը «հեջուբը» բացատրում է որպես իշխանական տան անմիջական կառավարիչ կամ վերակացու[74]։ Իսկ Հ. Մանանդյանը նշում է, որ հեջուբը դերագույն կառավարիչն է իշխանդյանը նշում է, որ հեջուբը դերագույն կառավարիչն է իշխանապետի տան և միաժամանակ խնամակալը նրա որդու[75]։ Հ. Աճառյանի մոտ՝ «թագավորի սենեկապանը, արարողապետ»[76]։

Գարեգին կաթողիկոսը, ճիշտ բնութագրելով Գրիգոր հեջուբի գործունեության մանրամասները (որ նա Իվանե աթաբեկի հեջուբն էր, ապա՝ նրա որդի Ավագի, կյանքի վերջին տասնամյակներին էլ դարձավ Հասան-Ջալալի խորհրդականը), այնուհանդերձ, գտնում էր, որ նա նույնն է եղել այն հեջուբ Գրիգորի հետ, որ մի քանի անգամ հիշված է «Հոռոմոսի արձանագրությունների մեջ և նույն վանքի անմիջական տերն էր իր Սմբատ ու Իշխան եղբայրների հետ»[77]։

Հ. Մանանդյանն էլ կարծում էր, որ Գրիգոր հեջուբ Տղան տոհմակից է եղել Հոռոմոսի տեր Գրիգորին, սակայն չի բացատրում, թե ինչպե՞ս կամ ի՞նչ հիմունքով[78]։

---

73 Կիրակոս, էջ 313։

Դեղ և Սիրանաքար բերդերի մասին ուրիշ հիշատակություններ չգիտենք։ Իսկ Կիրակոսի ասածի հիման վրա դժվար է որոշել տեղադրությունը։ Համենայն դեպս Հասան-Ջալալի տիրույթի՝ ներքին Խաչենի բերդերն են։ Մեսրոպ Թաղիադյանցը Կուսապատ գյուղի մասին խոսելիս այն կոչում է «Ծառաքար կամ լաւ ևս Սիրանաքար՝ կալուած Մելիք Վանուոյ» (տե՛ս «Ճանապարհորդութիւն», էջ 332)։ Սակայն սա կամայական անվանակոչություն է և ո՛չ աղբյուրագիտական հիմք ունի, ո՛չ էլ աշխարհագրական. Կուսապատ գյուղը գտնվում է այժմյան Մարտակերտից արևմուտք, ժայռերից (Սիրանաքար) հեռու, բերդի համար միանգամայն անհարմար վայրում։

74 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 11։

75 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 159։

76 Հր. Աճառյան, Հայ. արմ. բառ., Դ, էջ 257։

77 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 11։

78 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 59։

Մ. Օրմանյանի կարծիքով՝ Գրիգոր հեջուրը հայրն է եղել այն Սևադա նահատակի, որն ընկավ «Մուֆարդինի պատերազմին մեջ»[79]։

Լ. Հ. Բաբայանը, խոսելով Խաչենի իշխանության Ծարա ճյուղի ներկայացուցիչ Գրիգոր Դոփյանի (Հասանի և Դոփի որդու) մասին, գտնում է, որ «այս Գրիգորն է հենց մեր կարծիքով, որ հանդես է գալիս աղբյուրներում Ավագի տան հեջուրի պաշտոնում, կրելով «Տղա» մականունը»[80]։

Հեղինակը, հավանաբար, նկատի չի առել, որ Գրիգոր հեջուրը կոչվում էր «որդի Սմբատայ», իսկ Ծարա իշխան Գրիգորի հոր անունը Հասան էր։ Կարելի է բերել նաև ուրիշ անհամատեղելի տվյալներ, սակայն այս մեկն էլ բավական է հաստատելու համար, որ հեջուրը Գրիգորը ծարեցիների հետ կապ չի ունեցել։

Կա նաև մի չորրորդ կարծիք, որն արժանի է ուշադրության թեկուզ հենց այն պատճառով, որ խարսխված լինելով անունների սոսկական նմանության վրա, հեջուրը Գրիգորին հեռացնում է իր տոհմաճյուղից։ Այս կարծիքն էլ պատկանում է Հռ. Ջանփոլադյանին, որը հեջուրը Գրիգորին կամ Գրիգոր Տղա իշխանին կապում է Վերին Խաչենի կամ Հաթերքի տոհմաճյուղին, հայտնելով, թե, ինչը, Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկություններով «հաջողվում է պարզել, որ Գրիգոր Տղան թոռն է եղել Մխիթար Գոշի Հովանավոր հաթերքցի Վախտանգի»[81]։

Նախ, ասենք, որ Կիրակոսն այսպիսի տեղեկություն կամ ի նպաստ նման կարծիքի ոչ մի տվյալ չի հաղորդում, այլ միայն՝ «յազատացն Խաչենոյ»[82], մեկ էլ՝ որ եղավ Իվանեի ու նրա որդի Ավագի դաստիարակը[83]։ Իսկ այսքանը ոչինչ չի նշանակում նրա տոհմաբանության համար։

79 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, գիրք Ա, Պեյրութ, 1960, էջ 1671։

80 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, էջ 373 (նույնի ռուս. հրատարակության մեջ՝ էջ 186)։

Լ. Բաբայանը էջատակին հղում է՝ Ալիշան, Շիրակ, էջ 23։ Սակայն այստեղ Հռոմոսի արձանագրությունն է՝ «ճաճուպ Գրիգորոյ՝ որդո Հասանա և ... Իշխանիս՝ որդո Քրդին», որի հետ, դժբախտաբար, շփոթում էին նաև Գ. Հովսեփյանն ու Հ. Մանանդյանը։

81 Р. М. Джанполадян, История Армении Киракоса Гандзакского и надписи Нор-Гедика. Сборник «В честь акад. И. А. Орбели», стр. 62.

82 Կիրակոս, էջ 256։

83 Անդ, էջ 222։

Գրիգոր Տղան կամ հեջուրը Հաթերքի Վախտանգ իշխանաց իշխանի թոռը լինել չի կարող այն պարզ պատճառով, որ Վախտանգի անդրանիկ տղայի անունը Հասան էր, կրտսերինը՝ Գրիգոր[84]։ Իսկ հեջուր Գրիգորի հոր անունը Սմբատ էր։

Գրիգոր հեջուրը Վախտանգ հաթերքցու աղջկա զավակն էլ չէր, որովհետև նրա աղջիկները չէին կարող ամուսնացած լինել Խաչենի իրենց տոհմակից իշխանազունների հետ։

Գրիգոր հեջուրի սեփական արձանագրությունը Գոշավանքում, իբր թե, 1198 թվականից, հետևյալն է. «Ես Գրիգոր՝ հեջուր ամիրսպասալար Աւագին, որդի Սմպատա որդոյ մեծին Վախտանգա՝ կողմնապետաց աշխարհին Արցախա, առեալ աթաբեկ Իւանէի սնոյց զիս եւ իւր տանն Աւագին առաջնորդ կացոյց։ Զի ոչ ունէի զաւակ, յուսով խնդրեցի զայս եկեղեցի ինձ շիրիմ հանգստեան։ Աւագն ինձ երետ, և միաբանք սահմանեցին զայս խորանս պատրագեալ ինձ զքս հանապազ։ Ով կարդայք, Աւագին զերկար կենդանութիւն խնդրեցէք եւ Գրիգորոյ մեղաց թողութիւն...»[85]։

Չի կարելի կասկածել, որ սա Իվանե աթաբեկի տան հեջուրն է, այսինքն՝ նա, որին, Կիրակոսի վկայությամբ, Իվանեն մեռնելուց (1234) առաջ «յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած և փառաւորած Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին»[86]։ Նույնիսկ ակնհայտ է, որ Կիրակոսն իր տեղեկությունը հյուսել է հեջուր Գրիգորի արձանագրությունից, հաղորդելով նրա բոլոր մանրամասները՝ գումարած «զոր Տղայն կոչէին»-ը։

Ապա պատմիչը նկարագրում է, թե ինչպես նույն ինքը՝ Գրիգոր Տղան (հեջուրը) Զարմաղանի մոտ բանախոս գնաց ամիրսպասալար Ավագի անունից[87]։ Իսկ շատ տարիներ հետո էլ (1247-ից հետո) Հասան-Ջալալի շքախմբի կազմում մոնղոլ մեծ խանի մոտ գնաց նույն Գրիգորը, «զոր սովորութեամբ Տղայն կոչէին, և էր ծեր յայնժամ»[88]։

Արձանագրության «առեալ աթաբեկ Իւանէի սնոյց զիս և իւր տանն Աւագին առաջնորդ կացոյց»-ը և Կիրակոսի խոսքը Իվանեն

84 Տե՛ս Վախտանգի կին Արզու-խաթունի մեծ արձանագրությունը Դադիվանքի կաթողիկեի շինարարության մասին։

85 Հ. Ջանփոլադյան, Մ. Գոշը և Նոր-Գետիկ վանքը, Հայկական ՍՍՀ պատմական թանգարանի աշխատություններ, Ա, Երևան, 1948, էջ 158—159։

86 Կիրակոս, էջ 222։

87 Անդ, էջ 256։

88 Անդ, էջ 359։

նեի մասին, թե՝ «մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած և փառաւորած Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին»՝ նույն բովանդակությունն ունեն և, անկասկած, վերաբերում են նույն մարդուն։ Ասենք նաև, որ Գոշավանքում հեջուբ Գրիգորի արձանագրությունն անթվական է, և սխալվել է Կ. Կոստանյանցը՝ նրան ավելացնելով 1198 թվականը։ Բովանդակությունից երևում է, որ այն գրվել է Իվանեի մահից (1233/4) հետո։ 1198 թ. և առհասարակ Մխիթար Գոշի կենդանության օրոք (նա մահացել է 1213 թ.) ոչ մի դեպքում նման բան չէր կարող գրվել, քանի որ Գոշն էր վանքի տնօրենը, նա՛ պետք է եկեղեցին տար «շիրիմ հանգստեան» և ո՛չ թե Ավագը։

Գրիգոր հեջուբ Վախտանգյանի հիշատակները պետք է փնտրել իր հայրենի եզերքներում՝ Խաչենում և «տեղի գերեզմանի» ստացած Գոշավանքում։

Մեծառանից Ս. Հակոբա վանքում պահպանված նրա մեծ արձանագրությունը հետևյալն է ասում. «Ես Գրիգոր՝ որդի Սմպատա, միաբանեցա տանս Մեծարիանց յառաջնորդութեանս տր Սարգսի եւ տր Վարդանա եւ տվի սբ նշան եւ աւետարան եւ Ա կիսաւար իւր հողովն ի Մեղրենիսն յիմ հայրենաբաժնէն, իմ հաւր տված Վասուրանց հողն Ջալալ Դալին յիշխանութեամբ իմ հոգոյս տվի... թ. ՈՂ» (1241)[89]։

Անկասկած է, որ այս ժամանակ Գրիգորն այլևս Զաքարյան Ավագի տան հեջուբը չէր։ Ճիշտ է, Ավագը մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակում բավական ազդեցություն ուներ Հայաստանի և Արևելյան Վրաստանի քաղաքական կյանքում, նույնիսկ ենթադրվում է, որ այդ երկու երկրների իշխանությունները գլխավորվում էին Ավագ աթաբեկի ու ամիրսպասալարի կողմից[90]։ Սակայն այն հանգամանքը, որ նա արու զավակ չուներ, որպեսզի որդու խնամակալ-հեջուբ պահեր, պե՞տք է կարծել, որ Գրիգորը հեռացած կլիներ նրա տնից։ Թերևս Հ. Մանանդյանը գերագնահատում է Ավագի քաղաքական դերը վերոհիշյալ տասնամյակում։ Ավագն այս ժամանակ պետք է որ թաթար-մոնղոլներին ենթակա մի սովորական իշխանավոր լիներ։ Եվ պատահական չէ, որ նույն դարի 40-ականների սկզբին (1241) Գրիգորին մենք տես-

89 «Բանասէր», էջ 138, АНХ, էջ 55։ Առաջինում «Վասուրան ցհողն» փխ. «Վասուրանց հողն»-ի

90 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 246։

նում ենք Խաչենում, առանց «հեջուբ» տիտղոսի («Ես Գրիգոր՝ որդի Սմբատա»—Մեծառանից վանքի արձանագրությունից)։ Իսկ մի քանի տարի անց նա արդեն իր տոհմակից Հասան-Ջալալ մեծ իշխանի գործակիցն էր, նրա բանագնացության մասնակիցը՝ հավանաբար իբրև հմուտ բանախոս, որ Կիրակոսի վկայությամբ՝ «էր ծեր յայնժամ»։

Սրանք են մեր ունեցած տեղեկությունները Վախտանգ Ա-ի թոռ Գրիգոր Տղայի գործունեության մասին։ Ասացինք, որ նա ժառանգ չի ունեցել[91]։ Այդ պատճառով էլ Խոխանաբերդի տեր Վախտանգ-Տանգիկի որդի Սմբատի ճյուղն այստեղ սպառվում է։

Շքախմբի մյուս անդամ Դեսումը երիտասարդ շառավիղն էր Ներքին Խաչենի իշխանական տոհմի այն երկրորդական ճյուղի, որի ներկայացուցիչը, ինչպես նախորդ գլխում տեսանք, սելջուկյան տիրապետության օրերում (XII դ. կես) սպանեց իր տոհմակից Սմբատին։ Սպանողը Հասանն էր՝ «որդի Դեսմոյ»[92]։ Երևի երկրամասի գահերեց տերերից ճնշված Դեսումյաններն աստիճանաբար դուրս են մղվել հայրենի տիրույթներից՝ փորձելով ապավինել Գագի ու շրջակայքի տեր Զաքարյաններին։ Դեսումյան շառավիղներից մեկը՝ Խաթուն տիկինը, Հաղբատում իր ծախքով կառուցած եկեղեցում (XIII դ.) թողել է մի ընդարձակ նախադասություն, որից իմանում ենք, որ նա՝ դուստր Հասան Դեսումյանի, ամուսնացած էր Գագի, Տավուշի, Տերունականի և այլ գավառների տեր Զաքարիայի հետ, և նրա հետ Հաղբատ են եկել երկու եղբայրները՝ Սենեքերիմն ու Սևադան, որոնք երիտասարդ հասակում մահանալով՝ թաղվել են Խաթունաշեն եկեղեցու բակում[93]։ Խաթունի ու նրա եղբայրների մասին մատենագրական տեղեկություններ չկան։ Հաղբատում գտնվել են Խաթունի եղբայրներ Սևադայի և Սենեքերիմի անթվական տապանագրերը, առաջինի վրա՝ «Սևադայ», երկրորդի վրա՝ «Սենաքերիմ՝ թոռն աւագ Սենաքերիմա»[94]։ Երկրորդը շատ արժեքավոր է, քանի որ նրանով հնարավոր է լրացնել Դեսումյան տոհմաճյուղի XII դարի և XIII դարի առաջին կեսի հատվա-

91 Մեծառանից Ս. Հակոբա վանքում արձանագրություններ են թողել «Սմպատ որդի Հեջբին» (Գ, № 14) և «Մուշեղ որդի Հեջբին» (Գ, № 9՝ 1293 թվականից)։ Սակայն այստեղ Հեջուբը հատուկ անուն է, որի մեջ, հավանաբար, դեր է ունեցել անունը կրողի տոհմակից Գրիգոր Տղայի հին տիտղոսը։

92 Մ. Գոշ, Կաթողիկոսք և դէպք, էջ 387։

93 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1961, էջ 220։

94 Անդ, էջ 187։

ձը. եղբայրներ Սենեքերիմ, Սևադա, քույրը՝ Խաթուն, նրանց հայրը՝ Հասան, պապը՝ Սենեքերիմ, Սենեքերիմի հայրը՝ Հասան, պապը՝ Դեսում։

Եվ ահա Դեսումյան այս ճյուղի մի նոր ներկայացուցիչ էլ («Դեսում իշխանն պարկեշտ պատանի») իր մեծ տոհմակից Հասան-Ջալալի հետ բանագնացության էր գնում մոնղոլ տիրակալի մոտ։

Անկասկած Մարկոսը ևս Խաչենի մտավորականներից է եղել, ստույգ՝ Վանական Վարդապետի աշակերտը, Կիրակոս, Վարդան և Գրիգոր պատմիչների դասակիցը, նրանց հետ միասին Վանականից վարդապետական աստիճան ստացած[95]։

Գրիգոր եպիսկոպոսի մասին էական ենթադրություն է արել Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը։ Նա գտնում էր, որ Գրիգոր եպիսկոպոսը ծնունդով Ականա բնակավայրից էր, Վանականին աշակերտել էր, ուստի և հնարավոր է, որ հենց նա էլ «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի հեղինակ Գրիգոր Պատմիչն է, որին ավելի ճիշտ կլինի կոչել Գրիգոր Ականացի կամ Ականեցի[96]։

Գրիգոր եպիսկոպոսն, անշուշտ, Վերին Խաչենի հոգևոր կենտրոն Դադի վանքի առաջնորդն է՝ «որդի նահատակին Վասակայ», որի անունից արձանագրություններ կան (առաջնորդական տիտղոսով) XIII դ. 20-ական թվականներից մինչև դարի կեսերը[97]։ Վասակը Հաթերքի տեր և Խաչենի գահերեց իշխան Հասան Հաթերքցու վեց տղաներից մեկն է եղել և 1201-ին նահատակվել է Սյունիքի Գոլաշտյան բերդը թուրքմեններից ետ առնելիս[98]։

Հնարավոր է, որ Գրիգորը (ինչպես և նրա հայր Վասակը) Ականա ավանում է ապրել։ Մեծ հեղինակության էր արժանացել առաջնորդական պաշտոնում։ Եռանդուն դեր էր խաղում Հյուսիս-արևելյան Հայաստանի հոգևոր կյանքում։ Հիշենք նրա պայքարը Դավիթ Մարեցու դեմ, որի մասին խոսք կլինի հաջորդ գլխում։

---

95 Կիրակոս, էջ 225։

96 Կ. Ա. Մելիք-Օհանջանյան, Կիրակոս Գանձակեցու կյանքը և գրական գործունեությունը (առաջաբան). Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ ԻԱ, ծան. **։

97 Տե՛ս Մեսրոբ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1931 (այսուհետ՝ «Մեսրոբ Մագիստրոս»), էջ 95—96 և հտգ.։

98 Տե՛ս նրա մասին ընդարձակ արձանագրությունը Խաթրավանքում (Շանխաթունեանց, Բ, էջ 363, «Արցախ», էջ 196)։

Չի բացառված նաև, որ հենց այս Գրիգորի ձեռքով է գրվել «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկը։ Համենայն դեպս սույն պատմության հեղինակը Հյուսիս-արևելյան Հայաստանի ծնունդ է եղել։

Եվ, այսպես, Հասան-Ջալալն իր պատկառելի շքախմբով ուղևորվում է մոնղոլ տիրակալ Բաթու խանի մոտ։

Կիրակոսը չի տալիս Բաթուի նստավայրի անունը, ուր և նա պիտի ընդուներ Խաչենի իշխանին։ Սակայն նկատի առնելով Բաթուին վերաբերող մյուս տեղեկությունը, որի համաձայն՝ նրա տիրապետության տակ էին գտնվում Կասպից ծովի հյուսիսային ափերը՝ Վոլգայի ստորին ավազանը (նա էր «առեալ իւր բնակութիւն առ ափն Կասբից ծովուն և Աթլ գետոյն մեծի»)[99], պետք է ենթադրել, որ նստավայրն է եղել Իթիլ (այժմյան Աստրախանի տեղում) քաղաքը, որ Հասան-Ջալալը նրան հենց այստեղ էլ հանդիպել է։

Բաթու խանը պատվով ընդունում է Հասան-Ջալալին և նրան է վերադարձնում «զՀայրենիս իւր զՋարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն Թուրքաց և վրաց»[100]։

Ջալալը մոնղոլ տիրակալից ստանում է արտոնություններ իր տիրույթների բնակչության, ինչպես նաև Աղվանքի կաթողիկոսության համար և մեծ հույսերով ու ակնկալություններով բռնում վերադարձի ճամփան։ Սակայն այս անգամ ևս Խաչենի տերը չպետք է վայելեր մոնղոլ տիրակալի ողորմածությամբ տրված անդորրությունը։ Հայրենիք է հասնում, թե չէ, Արղունը վերստին նորոգում է իր սադրանքները։

Արղուն բռնավորի չարությունները յուրովի հիմք ունեին։ Նվաճված երկրի մի շարքային իշխան, որ պարտավոր էր գլխահակ ենթարկվել իրեն և եթե որևէ արտոնություն էր պետք՝ խնդրեր իրենից, ահա Բաթու խանի մոտ իր դեմ գանգատի էր գնացել։ Եվ այդ գանգատի շնորհիվ հայ իշխանն ստացել էր արտոնություններ, որոնց առկայությամբ նսեմանում էր Արղունի դերը՝ որպես խանի կուսակալի ու գլխավոր հարկահանի։ Չէր կարող պատահել, որ հարևան հայ ու այլազգի իշխանավորները ևս Հասան-Ջալալի

---

99 Կիրակոս, էջ 356։ Աթլ (ուրիշ աղբյուրներում կոչված Իթիլ) գետը Վոլգան է։

100 Կիրակոս, էջ 359։

օրինակին հետևելով՝ չբողոքեին կամ չհրաժարվեին ենթարկվել Արղուն հարկահանին։ Այս պատճառով էլ Արղունը պիտի Հասան-Ջալալի դեմ նորոգեր ու բորբոքեր իր հին ատելությունը, սկսեր նոր հալածանքներ, նրա վրա դներ անտանելի հարկերի այն բեռը, որից հետո խեղճ խաչենեցուն ոչինչ չէր մնա, քան ձեռք առնել մի ավելի մեծ ու ծանր ճանապարհորդություն դեպի հեռավոր Մոնղոլիա՝ մեծ խանի մոտ, որը նստում էր Կարա-Կորումում։

Պատմական աղբյուրների տեղեկություններում չի կարելի չնկատել մոնղոլ խաների ու խականի (մեծ խանի) երկդիմի քաղաքականությունը։ Նրանք ամեն անգամ իրենց ոտքը գնացող իշխանավորների հնազանդության երդումին պատասխանում էին մեծամեծ ընծաներով, պարգևում զանազան արտոնություններ, անմիջապես էլ նրանց երկրներն ուղարկելով իրենց կուսակալներին և հարկահաններին՝ ամենաանսահմանափակ իրավունքներով ու լիազորություններով։

Այսպես եղավ նաև Հասան-Ջալալի, ինչպես նաև Հեթում թագավորի հետ։ Արտոնած բարձր պատիվներով ու իրավունքներով խանը նրանց ճանապարհ էր դրել, իսկ յուրաքանչյուրի ետևից էլ եկել էին նոր հարկահաններ՝ առավել անագորույն պլաններով ու լիազորություններով, և ամեն անգամ սկսվել էր մի այնպիսի կողոպուտ, որ հարկատու ժողովուրդը երանությամբ է հիշել նախորդ բռնակալներին։

Հասան-Ջալալը մոնղոլ մեծ խանի մոտ էր ճանապարհվել 1255 թ., կնոջ՝ Մամքանի և միակ տղա Աթաբակի հետ։ Այս անգամ ևս նրա հետ էր մոնղոլ բարերար Սարթախը։ Այս ճանապարհորդությունը տևել է ուղիղ հինգ տարի՝ մինչև 1260 թվականը։

Խաչենի իշխանը Մանգու մեծ խանին գանգատվում է իր վիճակից, բողոքում նրա ոստիկան Արղունի դեմ։ Եվ խանը նրան է վերադարձնում ավատապետի տոհմական իրավունքները. «Եւ ետ նմա գիր իշխանութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել յումեքէ»[101]։

Հասան-Ջալալի բախտը կարծես պիտի բացվեր, քանի որ Մանգու մեծ խանը նրա հետ գնացած Սարթախին ևս ընդունում է ամենայն սիրով, վախճանված հոր տեղ նրան նշանակում հյուսիսի ու Կովկասի կուսակալ «և երկրորդ իւր կոչիլ»։

101 Կիրակոս, էջ 373։

1256-ին Մանգու խանի մոտ էր գնացել Սմբատ Օրբելյանը և այնտեղ տեսել իր բարերար Արղունին՝ կալանքի տակ առնված «վասն մատնութեան ինչ»[102]։

Հ. Օրբելին ենթադրում է, որ Մանգու խանն իր ոստիկանին կանչել ու կալանավորել է Հասան-Ջալալի գանգատով[103]։ Սա քիչ հավանական է, որովհետև եթե Հասան-Ջալալը Մոնղոլիա էր ճանապարհվել 1255-ին, ապա Սմբատն այնտեղ էր արդեն 1256-ին, այսինքն՝ ընդամենը մեկ տարի հետո։ Եվ Արղունին էլ Մանգուի մոտ էին կանչել Սմբատի գնալուց առաջ. «Բայց զի նախ զերթալն սորա (Սմբատի) կոչեալ էին զԱրղունն ի դուռն վասն մատնութեան ինչ»[104]։

Հասան-Ջալալի Մոնղոլիա գնալ-գալը տևել է շուրջ հինգ տարի։ Թո՛ղ որ ձգձգումներով։ Այսուհանդերձ, դժվար կարելի է հավատալ, թե այն ժամանակվա փոխադրական միջոցներով մի տարուց էլ քիչ ժամանակվա մեջ Հասան-Ջալալը Կովկասից գնար-հասներ Կարա-Կորում (Մոնղոլիայում), գանգատվեր մեծ խանին, նրա գանգատի հիման վրա սուրհանդակը գար Անդրկովկաս, և սրանից հետո էլ Արղունը գնար-հասներ Կարակորում ու կալանավորվեր։ Այսքանը մեկ տարում կատարելու համար անհնարին մի արագություն էր հարկավոր, որն այն ժամանակ չէր կարող լինել։ Հ. Օրբելու վարկածի օգտին չի խոսում նաև այն հանգամանքը, որ Սմբատ Օրբելյանի ցուցմունքներով Մանգու խանը կալանքից ազատում է Արղունին, նրան վերականգնում նախկին իրավունքների մեջ և մահվան դատապարտում Սևինճ բեկ ու Շարափադին դատավորներին։ Վերջիններս մեղադրվում են շահախնդրության մեջ. իբր թե, նպատակ են ունեցել մեջտեղից վերացնելու Արղունին, որպեսզի իրենք զբաղեցնեն նրա տեղը[105]։ Սակայն «արդարացված» Արղունի գործով Մանգու խանը ոչ մի պատժի չի ենթարկում Հասան-Ջալալին։ Իսկ եթե Խաչենի իշխանը խառնված

102 Օրբելեան, էջ 413։

103 Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 156։

104 Օրբելեան, էջ 413։

105 Օրբելեան, էջ 413—414։

Այն հանգամանքը, որ Արղունի արդարացումով մահվան են դատապարտվել նրա դատավորները, ինքնին ապացուցում է, որ առաջինի մեղքը ոչ այնքան գանգատներից պետք է հյուսված լիներ, որքան պալատական գզվռտուքից։ Եվ դժվար թե Մանգու խանը մի առանձնակի մեղք համարած լիներ Արղուն ոստիկանի դաժանությունները, որոնց դեմ բողոքել էր Հասան-Ջալալը։

լիներ Արղունի գործին, դժվար թե չարժանանար Սևինճ բեկի ու Շարափադինի բախտին, կամ գոնե մասամբ չբաժաներ նրանց հասած պատիժը։ Մինչդեռ, ինչպես հայտնի է, Հասան-Ջալալը մոնղոլ մեծ խանի մոտից հայրենիք է վերադարձել արտոնություններով ու մեծավայել պատիվներով։

Դժբախտաբար, հետագա դեպքերը դասավորվում են ի վնաս Խաչենի մեծ իշխանի։ Նախ՝ նա կորցնում է իր բարեկամ և հովանավոր Սարթախին։ Վերջինս վերադառնալուն պես մեռնում է հարազատների տված մահադեղից։

Հասան-Ջալալը վերադարձի ճանապարհին ուշանում է Թավրիզում։ Մամքանին ու Աթաբակին նա ուղարկել էր հայրենիք։ Վերադառնալով՝ կնոջը գտնում է վախճանված։

Այս ամենի մասին Խաչենի մեծ իշխանը պատմում է հոր ու մոր պատվերով ընդօրինակված հայտնի Ավետարանի հիշատակարանում, որն ինքն է գրել 1261-ին՝ վերադառնալուց անմիջապես հետո։ Ահա այդ հիշատակարանն ամբողջությամբ։

«Ե[ս Հասան Ջալալ Դալա գնացի] յարևելս առ արքայն նեստողաց և ի կողմն հիւսիսոյ տոհմիւ աղխաւորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ. ես և ամուսին իմ Մամքան և տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արևելս հիւսիսոյ. և ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն որ Մանգու խանն։ Եւ յամեալ զամս հինգ, դարձա ի տուն. նոյնպես (Մամքան) և Աթաբակն դարձան։ Եւ նոքա ժամանեալ ի տեղի իւրեանց, և ես ի Թաւրէժ յամեալ, յորում և աւրհասական մահ ի վերա հասեալ փոխի (Մամքան) ի Քրիստոս։ Եւ ես եկեալ գտի զպայծառ տուն իմ լի սգով արտասուաւք անմխիթարելի. զի նա էր ամենայն զաւրաց և հեծելոց, նաև եկեղեցոյ և քահանից սփոփիչ և մխիթարութիւն։ Արդ ի թվին Հայոց ՉԺ [ետու] զսուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածասէր տիկնոջն [Մամքանայ] ի մեր լուսաւորիչ սուրբ աթոռն Աղուանից ի հոգևոր տէրն Ներսէս, որ այժմ բարեհամբուրիւ ունի զաթոռն սուրբն եւ առաւել քան զսուրբս։ Արդ աղաչեմ զձեզ, սուրբ հայրք եւ ընթերցողք, որ զյիշատակս կարդայք, լի բերանով ասասջիք. Քրիստոս աստուած, յորժամ գաս ի նորոգել եւ ի փոխադրել զտիեզերս, նորոգէ և միաւորէ զաստուածասէրն [Մամքան] եւ դասէ ի դասս ընտրելոց քոց. բարեխաւսութեամբ արարչագործ կամաց քոց. եւ աղաչանաւք սրբոց աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց դասէ եւ պայծառացոյ ընդ սուրբս քո ընդ նմին... պարգեւէ զխաղաղութիւն հոգւոյ եւ մարմնոյ եւ միոյ մանկանս

իմոյ Իւանին ... պարգևէ զքո զառատ ողորմութիւնդ եւ զամենայն թշնամի սոր[ա] ընկրկեալ սատակէ եւ յամաւթ արա. ամեն ամեն»[106]։

Կարծես քիչ էր Հասան-Ջալալին հասած ողբերգությունը։ Դրան էլ հին թշնամի Արղունի սադրանքն է գումարվում։

Վրաց թագավոր Դավիթը (Լաշայի որդին) 1260 թ. ապստամբում է մոնղոլների դեմ, ապա Թիֆլիսը լքելով՝ փախչում է Աբխազիայի խորքերը։ Այնպես է փախչում, որ չի էլ հասցնում կնոջն ու որդիներին (բացի ավագ տղա Գեորգիից) իր հետ վերցնել։ Այս ժամանակ էլ նրա կողմնակից վրացական մի ջոկատ հարձակվում է Արղունի զորքերի վրա և մեծ վնասներ հասցնում։ Լինում են նաև ուրիշ ընդվզումներ։

Կատաղած Արղունը կալանավորում է Գոնցա թագուհուն, սրա դուստր Խոշաքին, Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահ սպարապետին, ինչպես նաև Հասան-Ջալալին։ Անմիջական տեղեկություն չկա այս ապստամբությանը Հասան-Ջալալի բերած մասնակցության մասին։ Սակայն հիմնազուրկ չի լինի մի այդպիսի ենթադրություն, քանի որ հենց նույն ապստամբության ճնշումից հետո էր, որ Արղունը կալանավորեց Հասան-Ջալալին[107]։

Ապստամբներից ոմանք ծանր փրկագնով ազատվեցին բռնավորի ձեռքից։ Իսկ Հասան-Ջալալը դեռ պիտի ենթարկվեր դաժան տանջանքների։ Արղունը նրանից պահանջում էր անհնար մի փրկագին։ Եվ չստանալով իր պահանջածը՝ «Եղեալ փայտ ի պարանոց նորա և երկաթ յոտս նորա», տարավ Ղազվին՝ տաժանակրության։

Հասան-Ջալալի դուստր Ռուզուքանը, որ Զարմաղանի որդի Բորա-նոյինի կինն էր, շտապում է Հուլավուի կին Տողուս-խաթունի մոտ, որպեսզի նրա միջնորդությամբ հորը փրկի Արղունի ձեռքից։ Այս մասին իմանում է Արղունը և փութով դահիճ է ուղարկում, որը և հոդակոտոր անելով սպանում է Հասան-Ջալալին[108]։

---

106 Մատենադարանի ձեռ. № 387, էջ 8բ, 9ա։

107 Հ. Մանանդյանի կարծիքով՝ Հասան-Ջալալի և մյուսների ձերբակալությունն անմիջապես կապ ունեցած պիտի լինի ապստամբության հետ («Քննական տեսություն», Գ, էջ 238)։ Իսկ Ա. Գալստյանը գտնում է, որ Հասան-Ջալալն անմիջապես մասնակցություն է ունեցել ապստամբությանը (տե՛ս Ա. Գալստյան, Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945, էջ 32)։

108 Կիրակոս, էջ 391, Վարդան Վարդապետ, էջ 152, Մխիթար Այրիվանեցի, էջ 68, Մժ, Ա, էջ 43։

Կիրակոսն ու Վարդանն այսքանից հետո սրբացնում են Խաչենի իշխանին, պատմելով, որ, իբր, Ղազվինում մի պարսիկ Հասան-Ջալալի մարմնի մասունքների վրա իջած լույս է տեսել, և հավատացած նրանց սրբությանը, լցրել է ցամաք ջրհորի մեջ ու պահել։ «Այլ և բերողքն նշխարացն տեսին և ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն ի վերա նշխարացն»[109]։

Աթաբակը նահատակված հոր մասունքները տեղափոխում է հայրենիք և թաղում իրենց տոհմական գերեզմանատանը՝ Գանձասարի վանքի արևմտյան բակում, ուր այդ ժամանակ կառուցված էր վանքի գավիթը՝ իշխանական տոհմի տապանատունը։

Այս նույն տարում (1261) Հուլավուն էլ սպանում է ամիրսպասալար Շահնշահի որդի Զաքարեին[110]։

Հասան-Ջալալի նահատակությունն, ուրեմն, տեղի է ունեցել 1261 (ՉԺ) թվականին։ Ինչպես վերը տեսանք, այդ են վկայում Կիրակոսը և Վարդան Վարդապետը[111], որոնց վկայությունն էլ հաստատվում է ժամանակագիրների տեղեկություններով։

Հ. Օրբելին իր ուսումնասիրության մեջ քննության է առել այս թվականի հետ, իբր թե, անհարիր երկու տվյալ ևս. մեկը Գանձասարի վանքի շինարարությանը նվիրված մի երկրորդական արձանագրություն[112], ապա Մ. Բարխուտարյանցի վկայակոչած մի արձանագրությունը, որ կա Հասան-Ջալալի մահից 170 տարի հետո դրված տապանաքարի վրա[113]։

Ակնհայտ է, որ երկրորդը Հասան-Ջալալին չի վերաբերում, այլ տապանագիրն է նրա թոռնթոռ մի Ջալալի, որի մասին մենք պիտի խոսենք։ Իսկ առաջինը ոչ թե տապանագիր է, այլ վանքի շինարարությանը նվիրված մի երկրորդական արձանագրություն, որ գրի է առնվել միայն Ս. Ջալալյանցի կողմից, և ուրիշ ոչ ոք այն չի տեսել։ Այն համառոտագրությունն է Գանձասարի շինարարական մեծ արձանագրության և հակասական ոչ մի թվական չի նշում։

Թյուրիմացության տեղիք կարող է տալ վանքի գավթի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունը 1261 թ., որի մեջ շինողներ են Հասան-Ջալալը, իր կին Մամքանը և որդի Աթաբակը։

109 Կիրակոս, էջ 392։

110 Կիրակոս, էջ 392։

111 Անդ, էջ 391, Վարդան, էջ 152. այստեղ հրատարակիչը բաց է թողել «տասն» (Ժ), որը նախորդ և հաջորդ թվական տվյալներով վերականգնվում է։

112 Օրբելի, նշվ. աշխ., էջ 173, Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Ա, էջ 182։

113 «Արցախ», էջ 424։

Այստեղ Աթաբակը հանդես է գալիս միայն արձանագրության երկրորդ մասով. «...Դարձեալ ես Աթաբակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետուփ Աւետարան և պատուական սուրբ նշան...» և այլն։ Վերը արդեն խոսվել է այս արձանագրության մասին։ Այժմ ավելացնենք, որ նրա բովանդակությունից երևում է, թե ինչպես վերջը գրվել է լոկ Աթաբակի ձեռքով (առաջին մասում՝ «հիմնարկեցաք ժամատունս», բայց և՝ «հայցեմ... յիշել», նվիրատվությունները էլ ինքն է կատարում)։ Սակայն արձանագրության սկզբում գրված են ծնողների անունները՝ հանուն նրանց հիշատակի և, հավանաբար, այն պատճառով, որ գավթի շինարարությունը նրանք են կատարել։

Իշխանուհի Մամքանը.— Հասան-Ջալալի կին Մամքանի տապանագրի, նույնիսկ նրա գերեզմանի տեղը հայտնի չէ։ Ռ. Երզնկյանցը տպագրել է մի այսպիսի արձանագրություն. «Մամքան Շուշանիկն է, քոյր Զարեհ իշխանին Հաղբատայ, թոռն Բաղաց թագաւորի, կին Ջալալ իշխանին Խաչենայ»[114]։

Արձանագրությունն անթվական է, ընդօրինակված, իբր թե, Հաղբատի վանքից։ Սակայն հետագա ուսումնասիրողներից ոչ ոք այս արձանագրությունը չի տեսել։ Դեռ ավելին. չի տեսել որևէ արձանագրություն, որի մեջ լիներ «Շուշանիկ» կամ «Զարեհ» անուն։ Զարեհ անունով իշխան չի հիշում այս ժամանակներին վերաբերող ոչ մի աղբյուր։

Հ. Օրբելին, հավատալով այս արձանագրության տվյալներին, գտնում է, որ Մամքանը թաղվել է Հաղբատում[115], չնայած իր աշխատության ծանոթագրություններում անմիջապես նկատում է, որ Երզնկյանցի աղբյուրները միանգամայն անվստահելի են, և ինքը՝ Երզնկյանցն էլ այնքան պարզ պատկերացում չունի իր իսկ «ընդօրինակած» արձանագրության անունների մասին[116]։

Մամքանի տոհմային պատկանելության հարցում խառնաշփոթությունից չի խուսափել նաև Հր. Աճառյանը. Նա Մամքանի մասին հետևյալն է գրել. «Մամքան թագուհի, դուստր Կյուրիկե Գ-ի (որ կոչվել է նաև Բաղաց թագավոր), քոյր Ռուսուքանի, Մարիամի և Աբաս Բ թագավորի Կյուրիկյանց. կին Հասան-Ջալալ-Դոլա իշխանի Խաչենի, մայր Վասակ պատրոնիկի...»[117]։

114 Ռ. Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ Ս. Նշանի, Վ-պատ, 1886, էջ 54։

115 Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 151։

116 Անդ, էջ 165—166։

117 Հր. Աճառյան, Հայոց անձ. բառ., Գ, էջ 188։

Այստեղ իրար հետ շփոթված են Բաղաց թագավորն ու Բագրատունի Կյուրիկեն, Հասան-Ջալալն ու Հաթերքի տեր (անպայման Հասան-Ջալալի տոհմակից) Հասան իշխանը և Հասան-Ջալալի կին Մամքանն ու Հաթերքի Հասանի կին Մաման[118]։

«Մամքան» իսկապես Հասան-Ջալալի կնոջ անունն է։ Ինքը՝ Մամքանն իր արձանագրություններում իրեն կոչում էր «դուստր Բաղաց թագաւորին»[119], նաև՝ «Ես Մամքան թագուհի՝ ամուսին Ջալալ Դաւլին և թոռն Բաղաց թագաւորին, այսինքն Սիւնեաց»[120]։ Վերջինը հավանաբար ճշգրիտն է, քանի որ Մամքանն իր հոր անունը չի տալիս, այլ նշում է իր սերվելը Բաղաց կամ Սյունյաց Կապանի թագավորական տնից, որն, ինչպես հայտնի է, մարեց մոտավորապես 1170 թվականին։ «Բաղաց թագաւորին, այսինքն՝ Սիւնեաց»-ը Կյուրիկյաններից մեկընդմիշտ հեռացնում է Մամքանին։

Կյուրիկեի դուստր Մաման Հաթերքի իշխան Հասանի կինն էր, որն իր ամուսնու հետ 1182 թ. Դադի վանքում կրոնավորելու գնաց՝ իշխանությունը հանձնելով վեց տղաներին՝ Վախտանգին, Վասակին, Սմբատին, Խոյդանին, Գրիգորին ու Գրիգորիսին։ Այս Մաման իրեն կոչում էր «Մամա թագուհի, ամուսին Հասանա, դուստր Կիւրիկա թագաւորին»[121] և այլն։ Սրա որդին Վասակն էր, որ իրեն կոչում էր «Վասակ թոռն Կիւրիկայ թագաւորին, որդի Հասանայ որդւոյ Սակառայ տեառն Հաթերքոյ...»[122]։

Մամքանը երբեք չի նշում իր «Բաղաց թագաւոր» հոր կամ պապի անունը։ Կարելի է մտածել, որ այս «Բաղաց թագավորը» եղել է ոչ այնքան հայտնի մի անձնավորություն, թերևս՝ ոչ գահերեց, այլ գահերեցներից մեկի եղբայրը, և այդ պատճառով էլ նրա շառավիղ Մամքանն իր արձանագրություններում հարմար է

118 Հր. Աճառյանի տխալի հիմքը, անշուշտ, Վիեննայի մխիթարյան գիտնական Ղ. Մովսիսյանի թյուրիմացությունն է (տե՛ս Ղևոնդ Մովսիսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1928, էջ 69—71 և գրքի վերջին կցված տոհմացանկը)։ Մովսիսյանը Մամայի անունը դարձրել է Մամքան՝ նրան վերագրելով Հասան-Ջալալի կին Մամքանի երկու հայտնի արձանագրությունները։

119 Նա այդպես է կոչված նաև Գանձասարի գավթի շինարարությանը վերաբերող արձանագրության մեջ («Արցախ», էջ 175)։

120 «Արցախ», էջ 184։

121 Անդ, էջ 204։

122 Անդ, էջ 126։

համարում հիշել միայն նախորդների տոհմական տիտղոսը։ Եթե Մամքանը որևէ առնչություն ունենար Կյուրիկյան թագավորական տան հետ, որն այդ ժամանակներում ուներ մեծ դիրք ու համարում ոչ միայն հայ իրականության մեջ, այլև համաանդրկովկասյան մասշտաբով, ապա նա երբեք էլ չէր զլանա իր արձանագրությունների մեջ շեշտել այդ առնչությունը։

Մամքանի Հաղբատում թաղված լինելու վարկածին դժվար է հավատալ նաև այն պատճառով, որ չէր կարող պատահել, թե նրա որդի Աթաբակը, արդեն հասուն տղամարդ, իրենց տոհմական տապանատուն Գանձասարը թողած, մորը թաղեր Հաղբատում, որի հետ իրենց տոհմը ոչ մի կապ չուներ։ Մանավանդ, որ Մամքանը մահացել է մինչև 1261 թվականը՝ ամուսնու և որդու հետ Ոսկե Հորդա գնալ-գալուց անմիջապես հետո։ Հասան-Ջալալն իր հիշատակարանում պատմում է, որ Ոսկե Հորդայից վերադառնալիս կնոջն ու որդուն ուղարկեց հայրենիք, իսկ ինքը գործով ուշացավ Թավրիզում։ Ապա ինքն էլ հայրենիք վերադառնալով՝ գտավ իր պայծառ տունը «լի սգով և արտասուաք անմխիթարելի», որովհետև վախճանվել էր Մամքանը[123]։

Հասան-Ջալալի տիտղոսը և տիրապետության սահմանները.— Տիտղոսի հարցը հանգամանորեն քննված է Հ. Օրբելու աշխատության մեջ։ Գիտնականը մեկ առ մեկ հիշում է մատենագրության մեջ ու արձանագրություններում Հասան-Ջալալին տրված բոլոր կոչումները և փորձում նրանցով պատկերացում տալ Խաչենի իշխանի իրավունքների, նույնիսկ հավակնությունների մասին։

Բազմապան են այն տիտղոսները, որոնցով կոչվել է Խաչենի տերը։ Դրանք կարելի է դասդասել հետևյալ խմբերով.

ա) «Իշխան Խաչենոյ», «տէր Խաչենոյ», «տէր Խոխանաբերդոյ և Խաչենոյ», «մեծ իշխան»։ Սրանք բոլորն էլ հաստատում են, որ Հասան-Ջալալը Խաչենի իշխանն է։

բ) «Ինքնակալ իշխանաց իշխան, տէր Խաչենոյ», «իշխանաց իշխան արքայաշուք»։ Առաջինը՝ Գանձասարի մեծ արձանագրությունից, ինքնաբնորոշում, երկրորդը՝ Վարդան Վարդապետի տվածը[124]։ Այս տիտղոսներից պետք է ենթադրել, որ Հասան-Ջալալը գահերեց էր Խաչենի (ինչպես Ներքին Խաչենի, այնպես էլ Վերին

123 Մատենադարանի ձեռ. № 378, 8բ։

124 Վարդան, էջ 152։

Խաչենի—Ծարի ու Հաթերքի) իշխանների մեջ։ Սա հաստատվում է, մանավանդ, հաջորդ տիտղոսով, որ է՝

գ) «Մեծ իշխան Խաչենոյ և կողմանցն Արցախոյ»[125]։ Այստեղ հաստատապես նկատի է առնվել բուն հին Արցախի տարածքը, և այդ տարածքի վրա տիրություն անողների մեջ՝ Հասան-Ջալալի գահերեցությունը։ Մանավանդ, երբ կա նաև տիտղոսների մի ամբխումբ, որից ուրիշ եզրակացության հանգել անհնար է։

դ) «Մեծ կողմնակալ Աղուանից»[126], «իշխան Խաչինոյ և Ռանա»[127]։

«Աղուանքն» ու «Առանը» այստեղ նույնիմաստ լինելով հանդերձ՝ գործածված են իրենց ետնագույն առումով, այսինքն՝ դարձյալ նշանակում են Արցախը՝ հարևան հայկական գավառների հետ միասին։ Հետևաբար, թյուրիմացություն է, երբ Հ. Օրբելին երկուսն էլ թարգմանում է «Албанский», «Албании»[128]։ Ալբանիան, ինչպես հայտնի է, Կուրի ձախափնյակն էր հունա-հռոմեական դասական հեղինակների հորջորջմամբ։ Տվյալ դեպքում իրար հետ շփոթվում են նույն գետի՝ անհամատեղելի երկու ափերը։

Իրավացի չէ գիտնականը, երբ Հասան-Ջալալին տրված «արքա», «թագաւոր», «ինքնակալ թագաւոր» տիտղոսների մեջ տեսնում է նրա՝ իբր թե, Սյունիքի թագավորական տնից սերված լինելու արտահայտությունը[129]։ Այստեղ նա կրկնում է Մ. Բրոսսեի թյուրիմացությունը[130]։ Քանի որ այս հարցը նախորդ էջերում քննել ենք, հիմա էլ ավելացնենք, որ Հասան-Ջալալի թագավորական տիտղոսի մեջ, կոնկրետ փաստից բացի (այսինքն՝ որ այդ ժամանակ թագավոր կոչվում էին նաև հասարակ իշխանները. դա արաբական տիրապետության ժառանգությունն էր տիտղոսավորման

125 Կիրակոս, էջ 358։

Հ. Օրբելին «կողմանցն» («կողմանցն Խաչենոյ», «կողմանցն Արցախայ») մեկ թարգմանում է «страи» («իշխան կողմանցն Խաչենոյ»—«князь стран Хаченских», մեկ էլ՝ «окраин»—«կողմանցս Արցախայ»—«окраин Арцахских» (տե՛ս նշվ. աշխ., էջ 157)։ Երկու դեպքում էլ պակասավոր է թարգմանությունը, որովհետև «կողմանք» բառն ունեցել է միայն «աշխարհ-նահանգ» իմաստ և պետք է թարգմանվեր «область» «իշխան կողմանցն Խաչենոյ»—«князь области Хачен», ինչպես որ «Հայոց արևելից աշխարհ», «Աղվանից կողմանք»՝ «Աղվանից աշխարհ»։

126 Ջալալեանց, Բ, էջ 174։

127 «Արցախ», էջ 288—289, «Արարատ», 1896, էջ 234։

128 Օրբելի, նշվ. աշխ., էջ 158։

129 Օրբելի, նշվ. աշխ., էջ 158—159։

130 „Histoire de la Siounie“, t. I, p. 5, 149.

բնագավառում), առկա է նաև Խաչենի իշխանական տոհմի ներկայացուցիչների արդար հավակնությունը։ Նրանք զտարյուն ժառանգներն էին Առանշահիկ այն տոհմի, որը երկու անգամ թագավորություն է վերահաստատել բռնակալ տերությունների աքցանի մեջ՝ մեկ Վաչագան Բարեպաշտի ձեռքով, մեկ էլ Համամ Բարեպաշտի։ Եվ եթե նրանց օրինական ու հարազատ ժառանգ Հասան-Ջալալն իրեն կոչում է «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի և թագաւոր յոքնասահման նահանգաւք»[131], դրա մեջ տարօրինակ ու սխալ ոչինչ չպետք է տեսնել։

Սակայն «ինքնակալ» և «թագաւոր» տիտղոսները Հասան-Ջալալին բնութագրում են նաև որպես մի իշխողի, որն անկախ էր ժամանակի հայկական միջավայրում և միայն վասալական կախման մեջ էր թաթար-մոնղոլական բռնապետությունից։

Որ Հասան-Ջալալի «թագավոր» տիտղոսը միայն կրողի անձնական հավակնության արդյունքը չէ, դա ապացուցվում է աղբյուրների տվյալներով։ Վերը վկայակոչված արձանագրությունը Խանչալ-Խաչ կոչված վայրից (1216 թ.) նրան հիշում է «արքա» տիտղոսով։ 1229 թ. Ապարանից Խաչեն եկած ոմն Տիրածայր Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցում քանդակած իր արձանագրության մեջ նրան հիշում է իբրև «Բարեպաշտ արքային Ջալալին»[132]։ Հեջուբի որդի Սմբատը «թագաւոր Ջալալայ Դովլին հրամանով» նվիրատվություններ էր արել Մեծառանից Ս. Հակոբա վանքին[133]։ Մի ուրիշ արձանագրության մեջ, որ գրված է, հավանաբար, երկրամասի իշխանների անունից, Հասան-Ջալալը կոչված է «արքայ Ջալալ Դալա»[134]։

Հասան-Ջալալին արքա կամ թագավոր են կոչում ո՛չ միայն հայկական աղբյուրները։ Պարսիկ մի անանուն ժամանակագրի տեղեկությամբ՝ «Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների միջև։ Այն Առանի նահանգներից է։ Այնտեղ հայեր

131 Օրբելի, նշվ. աշխ., էջ 158։

«Բնակաւոր»-ը ճիշտ չէ թարգմանված Հ. Օրբելու կողմից։ Նրա կարծիքով՝ «природный» է (տե՛ս նշվ. աշխ., էջ 158), որ և սխալ է, և անիմաստ։ «Բնակաւոր»-ն այստեղ «բնության» հետ չի կապվում, այլ «բնակ» և «բնակության»՝ «բնիկ»—«տեղացի» իմաստով, որ կլինի՝ «բնիկ (ոչ թե եկվոր կամ օտար) ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի»։

132 «Արարատ», 1896, էջ 81։

133 «Բանասէր», 1901, հատ. 3, պրակ Բ և Գ, էջ 135։

134 «Արցախ», էջ 189։ Հմմտ. «Արարատ», 1896, էջ 234։

են (բնակվում)։ Աբխազի (Վիրքի) մարդիկ նրանց փադիշահին կոչում են թագավոր»[135]։

Եվ, վերջապես, եթե նկատի առնենք նաև, որ այս ժամանակներում, ինչպես «թագավոր», այնպես և «շահ», «շահնշահ» և նման տիտղոսներն արդեն իրենց մեջ պարունակում էին ավելի նեղ բովանդակություն, քան վաղ-ավատատիրական շրջանում, ապա միանգամայն իրավացի է հետազոտող Լ. Բաբայանը, երբ Հասան-Ջալալին ու նրա ժամանակակից հայ մյուս թագավոր կոչվածներին ճանաչում է որպես իրենց տիրույթների ինքնուրույն ու ինքնավար տիրակալների[136]։

Այսպիսով, պարզեցինք, որ Հասան-Ջալալը 1214—1261 թթ. հանդիսացել է ամբողջ Խաչենի, դեռ ավելին՝ հին Արցախի իշխանաց իշխանը կամ իր խոսքով ասած՝ «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի և թագաւոր յոքնասահման նահանգաւք»։

Սրանով էլ ընդհուպ մոտենում ենք Հասան-Ջալալի տիրապետության կոնկրետ սահմանները որոշելուն։

Ինչպես տեսանք, աղբյուրները նրան ներկայացնում են որպես ո՛չ միայն ամբողջ Խաչենի, այլև Արցախի, ապա նաև Աղվանքի կամ Առանի մեծ իշխանի ու թագավորի։ Կոնկրետ աշխարհագրական կետերի մասին խոսելիս ևս հաստատվում է այս պարագան։ Ահա, օրինակ, այն բերդերը, որոնց թվարկումով Կիրակոսը Հասան-Ջալալի տիրույթների մի ծայրը հասցնում է Ծար գավառը, մյուսը՝ Հաբանդ։ Հասան-Ջալալը կարողանում է ետ ստանալ «զհայրենիս իւր զՋարաբերդ և զԱկանայ և զԿարկառն»[137]։ Ջարաբերդը նույն Ջրաբերդն է Խաչենի կենտրոնում, Թարթառ գետի և նրա վտակ Թրղիի արանքում[138]։

Կարկառն անսխալ տեղադրել հիմա անհնար է, որովհետև ոչ ավանն է պահպանվել, ոչ էլ նրա մասին որևէ ուրիշ տեղեկություն։ Սակայն Կարկառ անունը ենթադրել է տալիս, որ այն պետք է կապված լինի համանուն գետակի հետ, որի ստորին ավազանը հին Հաբանդ գավառի արևմտյան մասն է ընդգրկում, հետևապես և

135 *Н. Д. Миклухо-Маклай*, Географическое сочинение XIII в на персидском языке. «Ученые записки Института востоковедения», т. IX, Л., 1951, стр. 204.

136 Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 21—22։

137 Կիրակոս, էջ 359։

138 «Արցախ», էջ 239—240։

դուրս է Խաչենից, որովհետև Խաչենը հարավում ու արևելքում ավարտվում էր վաղ շրջանի Մեծառանք գավառով։

Վրացական մի աղբյուրի տեղեկության համաձայն՝ Կարկառը ոչ միայն քաղաք է, այլև գավառ և ընկած է Խաչենի ու Բայլականի միջև[139]։ Իսկ սա Կարկառ գետի ստորին ավազանն է, այժմյան Աղդամի շրջանի հարավային մասը և Մարտունու շրջանի այն տարածքը, որ սկսվում է նրա հյուսիս-արևմտյան ծայրից և վերջանում Ամարասի մոտերքում։

Ականա բերդավանը, ինչպես ասացինք, Վերին Խաչենի տարածքում էր գտնվում, հին Վայկունիքի կամ այս ժամանակներում Ծարի արևելյան մասում։ Հասան-Ջալալի նախորդների ու հարազատների օրերին Ակսնայի տերերը վերին-խաչենեցիներն էին։ Օրիորդների օրերին Ակսնայի տերերը վերին-խաչենեցիներն էին։ Օրիորդներին, վերին-խաչենեցի Գրիգոր իշխանը (Հասանի ու Դոփի թոռնորդին) Ծարում թողած մի արձանագրության մեջ իր հայր Հասանին ներկայացնում է որպես «Ականայ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո և այլ բազում գաւառաց» իշխանի[140]։ Բազում գավառները մնում են անորոշ, սակայն թվարկվածները գտնվում էին Վերին Խաչենում։ Որ Ականան Վերին Խաչենում էր, հաստատվում է նաև մի այլ արձանագրությամբ՝ գրված արդեն ավելի ուշ՝ XV դարում. «Ես Սայտի... տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց Ականայ և Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվագայ...»[141]։ Պարզ է, որ այստեղ խոսքը միայն Վերին Խաչենի մասին է՝ Գեղամա ծովակից մինչև Հաթերք։

Ուրեմն, այս տարածքի մեջ էր գտնվում Ականան, և Հասան-Ջալալն էլ նրա տերն էր՝ ըստ Կիրակոսի արժանահավատ վկայության։

Կիրակոսի տեղեկության մեջ կա նաև մի այլ նուրբ հանգամանք. Հասան-Ջալալը ետ էր վերցրել իր վերոհիշյալ բերդաքաղաքները, «զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն Թուրքաց և վրաց»։ Թուրքմենները խլել էին Արցախի հարավային ու արևելյան մասերը, հավանաբար՝ Կարկառն իր շրջակայքով, քանի որ այս տեղերն էին, որ միշտ ենթակա էին Գանձակի ամիրայի ասպատակություններին։ Կիրակոսը «վրացի» ասելով, նախ, հասկանում էր վրաց արքունիքի առաջին մարդուն՝ Իվանե ամիրսպասալարին,

139 «Վրաց աղբյուրները», Բ, էջ 14։

140 «Վիմական տարեգիր», էջ 130։

141 Անդ, էջ 173։

որը, ինչպես Վարդանն է վկայում, Վերին Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի մահվանից հետո յուրացրել էր նրա տիրույթների մի զգալի մասը. «Եւ մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՋարեքն և զամենայն շրջակայս նորա և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Զաքարիայ, առնուն զՇամքոր...»[142]։

Պարզ է, որ այս «զամենայն շրջակայս»-ի մեջ է մտել նաև Վերին Խաչենից ձեռք ձգած տարածքը, որը և Հասան-Ջալալը ետ է ստացել։

Դատելով XIII դ. վրաց անանուն պատմիչի ժամանակագրությունից, Թամար թագուհին Արցախի արևմտյան գավառների մի զգալի մասն իսկապես հանձնել էր Զաքարյաններին, որոնցից առանձապես Իվանեն հատուկ ջանք էր թափում Խաչենի տերերին Վրաց թագավորությանը հպատակեցնելու համար։ Պատմիչը տեղեկացնում է, որ իրեն հավատարմորեն ծառայող հայ զորավարներին Թամարն առատորեն ընծաներ էր տալիս հենց հայկական հողերից՝ «Վահրամի որդի Զաքարիային՝ Գագը Քուրդի-վաճառ(ձոր)-ով հանդերձ, մինչև Գանձակ բազում ... քաղաքներով, բերդերով և ավաններով, և Սարգսի որդի Հովհաննին (Իվանեին) էլ՝ առաջնության և գործակալի (մսախուրթախուցեսի) պաշտոնը և ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը՝ Գեղարքունիքով և բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու երկրներով»[143]։

Վրաց ժամանակագիրը հիշում է նաև մի արշավանք, որով հայ ու վրաց միացյալ զորքերը ոտքի տակ տվին Գեղարքունիքը «և անցնելով Խաչենը՝ իջան Կարկառ երկիրը. հասնելով Բայլական՝ ավերեցին ամբողջ Առանը... Իսկ Կարկառից վեց օր ման եկան մինչև Շամքոր»[144]։

142 Վարդան Վարդապետ, էջ 140։

143 «Վրաց աղբյուրները», Բ, էջ 13։ Լ. Մելիքսեթ-Բեկը (թե՞ ժամանակագիրը) Վահրամի տեղ գրել է Վարդան, որ սխալ է։ Այս Զաքարեն որդին էր Վահրամ Գագեցու և հայրը մի այլ Վահրամի ու Սարգսի, որոնք ևս մեծամեծ ծառայություններ պիտի մատուցեին Վրաց արքունիքին (տե՛ս Կիրակոս, էջ 152)։

144 Մելիքսեթ-Բեկն այս «Կարկառի երկիրն» ծանոթագրում է որպես «Գարգարացւոց» երկիր (անդ, էջ 28), որ թյուրիմացություն է. Կարկառ, ամենայն հավանականությամբ, Կարկառ քաղաքի շրջակայքն է եղել, համանուն գետի ավազանը։ Ինչ վերաբերում է գարգարացիներին կամ գարգարներին, ապա նրանք երբեք էլ Կուրից հարավ չեն ապրել։ Այս առթիվ հանգամանորեն տե՛ս Հ. Համբարյան, Գարգարացի՞ք թե՞ գուգարացիք. «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 241—242։ Նաև՝ Բ. Ուլուբաբյան, Հայոց լեզվի հյուսիս-արևելյան եզրի և հարակից հարցերի մասին, էջ 55—59։

Սակայն այս բոլորը եթե չլինեին էլ, բավական էր հենց միայն Կոնստանտին Բարձրբերդցի կաթողիկոսի շատ արժեքավոր արձանագրությունը, որպեսզի անվերապահորեն հաստատվի, որ Հասան-Ջալալն էր համարվում Վերին ու Ներքին Խաչենների լիիրավ իշխանաց իշխանն ու ինքնակալ տերը։ Վաղուհասի վանքում՝ Վերին Խաչենի կենտրոնում, հայոց կաթողիկոսը քանդակել էր տվել արձանագրություն, որով ամբողջ Խաչենի իշխանապետ էր ճանաչում միայն «Մեծի Ջալալ Դալին»[145]։

Քահանա (թե՞ վաճառական) Սարգիսը «Անվոյ կողմերում հանդիպում է Հաղբատում ստեղծված հանրահայտ Ավետարանին («Գետաշենի» կոչված Գ. Հովսեփյանի կողմից), առնում, նվիրում է իր «սննդարան» Մեծկողմանց եպիսկոպոսարանին (Հաթերքի կողմերում—Բ. Ու.) և դարձյալ ճանաչում է «հզաւրին Հասանայ որդոյ Վախտանգայ»[146]։

Հասան-Ջալալի ժառանգները XIII դ. երկրորդ կեսում.— Հասան-Ջալալի միակ արու զավակն էր Իվանեն կամ Աթաբակը[147], որը և պետք է ժառանգեր հոր իշխանությունը։ Եվ հենց նա էլ Ներքին Խաչենի իշխանությունը տնօրինեց՝ «Հրամանաւ Հուլաւուին և Արղունին»[148]։

145 «Արցախ», էջ 192։

146 Գ. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց, էջ 44 և հտգ.։

147 «Աթաբակ»—«աթաբեկը» թուրք-սելջուկների բերած նոր տերմինն է, որ իրենց լեզվով նշանակում է «բեկի (թագավորի) հայր», և տրվում է թագավորազունի դաստիարակին, որն արքունիքում, ապագա թագավորին կրթելուց ու դաստիարակելուց բացի, ուներ նաև այլ իրավունքներ. նա պալատական խորհրդատուն էր, թագավորական տան վերակացուն և դատարանի կառավարիչը։ Աստիճանաբար այս իրավունքները ծավալվում ու հիմնավոր են դառնում՝ աթաբեկին հասատելով տերության խոշորագույն դեմքերից մեկի դերում (տե՛ս Անանյան, Հայ. անձ. բառ., Ա, էջ 65։ «История Грузии», т. I, էջ 211)։ Խաչենում շատ էին սիրում օտար բարձր տիտղոսներից անձնանուններ սարքել։ Նման անուններից էին Հասանը, Ջալալը, Մելիքը, նաև Աթաբակը, որ առաջին անգամ Հասան-Ջալալի տանն է դառնում անձնանուն և տարածվում որպես այդպիսին։ Սակայն մենք գիտենք, որ Հասան-Ջալալի միակ արու զավակի մկրտչական անունն Իվանե է եղել (տե՛ս Մատենադարանի ձեռ. № 387, թ. 9ա., «միոյ մանկանս իմոյ Իւանին»՝ Հասան-Ջալալի հիշատակարանից)։ Ըստ երևույթին նրան կոչել են ժամանակի ականավոր ազգականի՝ հոր քեռի աթաբակ Իվանե Զաքարյանի անունից ու կոչումից։ Եվ, իսկապես, Գանձասարի վանքի գավթի շինարարությանը վերաբերող արձանագրության մեջ նա այդպես էլ կոչված է. «Իվանէ»-ն չեն արտագրել Մ. Բարխուտարյանցը և մյուսները, իսկ Հ. Օրբելին արտագրել է «Աթաբակ եւ Աննա» (տե՛ս «Надписи Гандзасара...», էջ 5)։

148 Կիրակոս, էջ 382։

Հայրն Աթաբակին իշխանական աթոռի համար նախապատրաստել էր վաղ մանկությունից։ Հենց միայն այն փաստը, որ մոնղոլ մեծ խանի մոտ՝ Կարա-Կորում գնալիս նա իր հետ վերցրել էր նաև որդուն, շատ բան է ասում։ Հասան-Ջալալն, անկասկած, դրանով որդուն հեռացրել էր Արղուն բոնակալի չարություններից։ Սակայն, միաժամանակ, իր իշխանության վաղվա մտահոգությունն ունեցող իշխանապետը երիտասարդ որդուն պիտի ծանոթացներ թաթար-մոնղոլական աշխարհակալության կարգ ու կանոնին, պետական վարչաձևին, ենթարկեր երկար ու ծանր ճանապարհի փորձություններին։

1261-ին նահատակված հորը թաղելով՝ Աթաբակը դառնում է Խաչենի ինքնակալ իշխանը։ Պատշաճում էր, որ նա ժառանգեր ոչ միայն հոր թողած իշխանությունը, այլև շինարարական եռանդը։ Սակայն նա միայն ավարտեց հոր հիմնադրած գավթի շինարարությունը։ Այդ գավիթով Գանձասարի վանքի ճարտարապետությունն ավարտվեց ու ամբողջացավ։

Պատմությունն այլևս չի հիշում ուրիշ որևէ մեծագործություն, որ կապված լիներ Աթաբակի անվանը։

Արձանագրություններից երևում է, որ Աթաբակը երկար է վարել իշխանությունը։ 1271 թ. հորեղբայր Իվանեի որդի և Գանձասարի առաջնորդ Հովհաննեսը, «Հրամանաւ տեառն Խաչենոյ Աթաբակին», գնում է Վարնգաթաղն ու մին չորեցեղն» և դրանք, այլ ընծաների հետ, նվիրում վանքին[149]։

Նույն տարում, Աթաբակի իշխանությամբ, վանքին իր հոգու արդյունքն է նվիրում նաև Սասնա Հանդաբերդեցին[150]։

1276 թ. «Հրամանաւ Աթաբակին տեառն Խաչինոյ» Աբաջուր երիցու որդի Բարսեղն ու իր կին Մամքանը գնում են «զՏնկին երկիրն» ու նվիրում Գանձասարին[151]։

Հետաքրքիր է, որ նվիրատուներն Աթաբակ իշխանի կարգադրությամբ են գնումներ կատարում, ապա անում իրենց ընծայաբերությունները։ Նշանակում է՝ Գանձասարի իշխանն ու պարոնտնօրենը, իրենց տոհմական տապանատան բարվոք վիճակն ապահով պահելու համար, չէր խորշում և մարդկանցից հարկադրական «նվերներ» առնելուց։

Կիրակոս պատմիչն, անկասկած, Գանձասարի հանդեպ ցուցաբերած այս արտակարգ հոգատարությունը նկատի ուներ, ինչպես նաև վանքի փառավոր գավթի շինարարությունը, երբ Աթաբակին բնութագրում էր գովական խոսքով. նա էր «այր սրբասքունդ, պարկեշտ և խոնարհամիտ և աղօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեցաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»[152]։

1282 թ. «իշխանութեամբ Աթաբակին» Գանձասարում իր նվիրատվությունն է արձանագրում Ամարասի եպիսկոպոս Ներսեսը[153]։

Աթաբակի գործունեության մասին ուրիշ հիշատակներ չկան։ Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրության համաձայն՝ նրա մահը տեղի է ունեցել ՉԼԶ (1287) թվականին. «Զմեռն խիստ եղեւ. մեռան մեծ իշխանք ի Խաչէն՝ Աթաբակ որդի Ջալալին և Հասան թոռն Դաւիթին, և ապա մեռաւ Ճարն ի Տփխիս»[154]։ Ուրեմն, նույն ծանր ձմռանը մահացան Աթաբակը, Խաչենի իշխանության մյուս ճյուղի՝ Ծարա տեր Հասանը և Հասան-Ջալալի փեսա Ումեկի որդի Ճարը (ոչ- Հասան-Ջալալի աղջիկ Մամախաթունից)։

Աթաբակի պես, թերևս նրանից էլ առավել, Հասան-Ջալալի ու Մամքանի բարեմասնությունները ժառանգել էին դստերը, որոնցից երկուսը՝ Մամա-խաթունը և Մինա-խաթունը արժանի են առանձնահատուկ ուշադրության։ Երրորդի՝ Ռուզուքանի մասին միայն այնքանն է հայտնի, որ ամուսնացել է Ջարմաղանի որդի Բորա-նոյինի հետ և փորձեց Արղունի ճանկն ընկած հորն ազատել Տողուս-խաթունի միջոցով, սակայն ապարդյուն[155]։

---

149 Հ. Օրբելի (Հ. Օրբելու կազմած «Надписи Гандзасара» գրքույկը նկատի ունենք— Բ. Ու.), № 39, «Արցախ», 177 և Ս. Ջալալեանց, Ա, 101, սխալ են ընդօրինակել «մին չորեցեղն»՝ դարձնելով «մինչորից և նալն» (Ջալալեանց) ու «մին չորից և զնա» («Արցախ»)։ «Չորեց»—չորոց» նշ. է չորս անասուն լծած արոր (տե՛ս Հ. Աճառյան, Հայ. արմ. բառ., Ե, էջ 756, Ստ. Մալխասյանց, Հայ. բաց. բառ., Դ, էջ 28)։ Ղարաբաղում երկու գոմեշ ու երկու եզ միասին լծում էին մեկ արորին։ Տվյալ դեպքում չորս եզան մասին է խոսքը («չորեցեղն»)։

150 Հ. Օրբելի, № 43։

151 Անդ, № 12։

«զՏնկին երկիրն» կապակցության մեջ «երկիր» ասելով պիտի հասկանալ «հող»—«հողամաս», հավանաբար՝ հողամաս, որ այգի է դարձված, ինչպես «մատաղիս»՝ մատաղ այգի։

152 Կիրակոս, էջ 392։

153 Հ. Օրբելի, № 50։

Ջալալյանցը (Ա, էջ 190) թվական է նշանակել ՉՂԱ (1342), որ սխալ է։ «ՉԼԱ»-ն (1282) պարզ երևում է տեղում։

154 Մխ, հատ. Ա, էջ 48։

155 Հ. Օրբելին հաշվում է չորս աղջիկ, չորրորդ «անանունին» էլ համարում է

Մամա-խաթունը թաթար-մոնղոլական շրջանում լայն գործունեություն ու հեղինակավոր անուն ունեցած վաճառական պարոն Ումեկի կինն էր։ Կիրակոսն Ումեկին հիշում է 1254-ին մոնղոլների կատարած աշխարհավեր աշխարհագրի առիթով։ Մոնղոլ հարկահաններն թալանում են հպատակ ժողովուրդներին. «Յամենեցունց պահանջեալ խստագոյնս հարկս, աւելի քան զկար մարդոյն, սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կոտանօք և չարչարանօք և գելոցօք»[156]։

Ահա այս տառապանքներին գումարվում են տեղացի իշխանների շահախնդրությունները. «Այլ և իշխանքն՝ տեարք գաւառացն, նոցուն գործակից լեալ ի նեղելն և ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ»[157]։

Այս տեղացիներից մեկն էր և վաճառական Ումեկը, մանազկերտցի ազնվական[158], որի մասին Կիրակոսի խոսքն անվերապահ բարյացակամ է։ «Բայց մեծարեցաւ ի նոցանէ (թաթարներից—Բ. Ու.) այր մի մեծատուն վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին. այր բարեգործ... որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի թաթարէն հանդերձ որդւովքն Յովհանաւ, Ստեփանոսիւ և եղբարբք իւրովք։ Եւ էր յայնժամ ի Տփխիս քաղաքի բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի ղանէն գրով և յամենայն աւագանւոյն։ Սա առատ տուրս ետ Արղունին և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց»[159]։

Ուրեմն՝ առատորեն վճարեց Արղունին ու նրա հետ եկածներին և փոխարենը վաստակեց նրանց համակրանքը։

Ահա այս մեծատուն Ումեկն էր Հասան-Ջալալի փեսաներից մեկը։

«Այր բարեգործ» բնութագրությունը այլուստ ևս հաստատվում է։ Կիրակոսը, նախ, նկատի ունի նրա կին Մամա-խաթունի առատ նվիրատվությունները հայրենի եկեղեցիներին՝ հաստատված նրա արձանագրություններով, որոնցում, սակայն, բացակայում է Ումեկի մասնակցությունը։ Մամա-խաթունի անունից գրված այս արձանագրություններում ամուսին Ումեկը միայն հիշատակված է որպես «պարոն», «մեծ պարոն»։

Ումեկի բարեգործությունը կոնկրետ հիշատակված է նրա որդի Ճարի՝ 1289 թվակիր մի արձանագրության մեջ՝ Գոշավանքում, որը պատմում է, թե հայր Ումեկը 40 հազար դուկատով (թաթարներից) ետ է գնել Գետիկը, երբ «հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ»[160]։ Այս նույն արձանագրությունից իմանում ենք, որ Ումեկն ունեցել է նաև Թագուհի անունով կին (արձանագրության Հեղինակ Ճարի մայրը)։

Անկասկած, Ումեկի այս գործարքը կատարվել է ո՛չ հավատացյալի բարեգործական դրդումով։ Նա գնել է Գետիկն իր շրջակայքով որպես «հայրենիք», որի լիիրավ տերն այդուհետև ինքն ու իր ժառանգները պիտի լինեին։

Մամա-խաթունի որդին էր Վախտանգը, վաղ մանկությունից շոյված մեծամեծների ուշադրությամբ և գրական մի այնպիսի մեծության փառաբանությամբ, ինչպիսին Հովհաննես Երզնկացին էր[161]։

Վաղ մանկությունից Վախտանգը սիրով կապված էր մեծ մորապապի թանկագին հիշատակների ու նրա երկրի հետ։ Այդ սերը մայրն էր դաստիարակել՝ նրան քանի-քանի անգամ խաչեն տանելով և հորենական հոգևոր կենտրոններին տված իր ընծայաբերություններին մասնակից անելով։

ամուսնացած Հեթում թագավորի եղբայր Օշինի հետ 1243/4 թվականին (տե՛ս «hасан-Джалал.», էջ 169, ծան. 60ա) Այս վարկածի համար Օրբելին հիմք է ընդունել Խաչիկ վ. Դադյանի ցուցակի այն հիշատակարանը, որի ձեռագրի պատվիրատուն է եղել «արքայազունն պարոն Աւշին որդի Աւշինի արքայեղբարն և հարեղբարն Լևոնի արքայի, և ըստ մայրենի ծննդեան դստեր մեծի քաջի և իմաստնոյ աստուծակրոդի Ջալալին՝ Հայոց Մեծաց պարոնին, զարմէ Լուսաւորչին»։ Այս առթիվ Օրբելին գրել է, թե «քանի որ այդ ժամանակի համար, թվում է, տեղեկություններ չկան ուրիշ Ջալալի մասին, ապա շատ հավանական է, որ դա Ջալալ Դավլան է» (անդ)։

Հետազոտողը, դժբախտաբար, ուշադրության չի առել հիշատակարանի պատվիրատուի ինքնահորջորջման կարևոր մի հանգամանքը. նա ինքն իրեն սերված է համարում Լուսավորչի տոհմից, և, ինչպես արդեն նկատվել է հայագիտական գրականության մեջ, Պահլավունյաց զարմիկներից է (տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 334, 336, 848։ Հր. Աճառյան, Հայոց անձ. բառ., Բ., էջ 287, Ե., էջ 238—239)։ Ուրեմն, Խաչենի իշխանական տոհմի հետ կապ չէր կարող ունենալ։

156 Կիրակոս, էջ 362։

157 Անդ։

158 «Վիմական տարեգիր», էջ 124. «Ես Ճարս, որդի պարոն Ումեկին, թոռն Ճարին, աշխարհաւ Մանծկերտացի...»։

159 Կիրակոս, էջ 363։

160 «Վիմական տարեգիր», էջ 124։

161 Տե՛ս «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք. արարեալ հոգելից և իմաստուն վարդապետի Յովհաննիսի Երզնկացւոյ... ի խնդրոյ զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ, կրտսեր որդւոյ հռչակաւոր իշխանին Հայոց Ումէկայ, յամի տեառն 1284», Նոր-Նախիջևան, 1792։

Բայց Մամա-խաթունն իր հորենական տիրույթների հետ կապել էր նաև ամուսնու գերդաստանի մյուս ներկայացուցիչներին, նույնիսկ կեսրայրին։ Գանձասարի մի արձանագրության մեջ կեսրայրու հարս միասին են նվեր տալիս վանքին. «Ես Մամա-խաթուն և պատրոնն իմ ճար միաբանեցաք սբ ուխտիս Գանձասարա և սոքա տուին... պատարագ պատրոն Ումեկին... թվին ՉԺէ» (1268)[162]։

1280-ին Մամա-խաթունը Վախտանգ որդու հետ է գալիս Գանձասար։ Այս առթիվ գրված արձանագրության մեջ Ումեկն արդեն հիշվում է որպես վաղուց վախճանված մի հարազատ, որի կորստյան հետ հաշտվել են յուրայինները։ Տված ընծաների դիմաց Մամա-խաթունը խնդրում է, «... պատարագն քանի ես կենդանի եմ՝ զժամն իմ հարն եւ իմ մարն կատարեն եւ յետ իմ փոխման՝ ինձ կատարեն»[163]։

Մամա-խաթունի ամուսին Ումեկը մահացել է 1267 թ. Ծառզարդարի օրը[164]։ 1284 թ. Երզնկացին պատանի է համարում նրա որդի Վախտանգին։ Նշանակում է Վախտանգը ծնվել է հոր մահից ոչ շատ առաջ, թերևս՝ 1265—1267 թվականներից մեկում։ Վախտանգի անվան հետ են կապված երկու ձեռագիր մատյաններ, որոնց մանրակրկիտ ուսումնասիրությամբ զբաղվել է Գար. Հովսեփյանը։ Ձեռագրերից մեկն Ավետարան է՝ գրված 1279-ին՝ որպես ձեռնարկ ազնվական երեխայի «վարժութեան և դաստիարակութեան», մյուսը՝ Թուղթք որպես շարունակություն ավետարանական ուսման։

Առաջին ձեռագրի հիշատակարանն ասում է. «Մատթեոսեան Աւետարանս ի թվի ՉԻԸ (1279) յամսեանն արեգ. ԻԸ (28)։ Հրամանաւ բարիարմատ և քաղցրամիտ պատրոնին (Վախտ)անկա, որդո աստուածասէր մեծ պատրոնին Ումեկին և թոռին իշխանաց

162 Հ. Օրբելի, № 52

Հետաքրքիր է, որ այստեղ «պատրոն» բառն օգտագործված է իր երկու, իրարից միանգամայն հեռու իմաստներով. առաջին դեպքում նշանակում է կեսրայր (Ղարաբաղի բարբառով), մյուս դեպքում՝ իշխան-հոչակավոր (փոխառյալ բառ)։ Երկու իմաստների մասին՝ Մալխասյանց, Հայերեն բաց. բառ., Գ, էջ 75։ Նաև՝ Գար. Հովսեփյանց, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, Երևան, 1935, էջ 7։

163 Հ. Օրբելի, № 4։

164 ՄԺ, Ա, էջ 43։ Համաձայն Վ. Հակոբյանի հաշվումների՝ 1267-ի Ծառզարդարը եղել է ապրիլի 10-ին (անդ, էջ 60, ծանոթ. 72)։

իշխանին Ջալալին, ի վայելումն և ի պահպանութիւն անձին իւրոյ, և ի խրատ և ի վարժումն մանկական՝ տիոց իւրոյ[165]։

Մյուս ձեռագիրը Պողոս առաքյալի թղթերն են, վերջից թերթեր պոկված։ Սակայն պահպանված մասով էլ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, որովհետև վկայում է նկարիչ ձևավորողի բարձր վարպետությունը։ Բայց ամենից կարևորը պատանի Վախտանգի մանրանկարն է, որն ունի աղգագրական բացառիկ նշանակություն, որովհետև այնտեղ կոնկրետ մանրամասների մեջ ցույց են տրված ժամանակի հայ ազնվականի զգեստները, շրջապատի իրերն ու առարկաները[166]։

Վախտանգի կերպարն առավել ամբողջական է դառնում Հովհաննես Երզնկացու խոսքով, որը նախադրված է վերը հիշված նրա տիեզերագիտական տետրակին. «Ես նուաստ Յոհաննէս Երզնկայեցի, աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր սուրբ գրոց բանի, ի թվին ՉԼԳ (1284) պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքն ի Տփխիս, փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց։ Եւ հանդիպեցաւ խօսել մեզ բան քարոզութեան ի դուռն եկեղեցոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Ումեկն։ Եւ էր խօսեցեալ բանն յաղագս երկնային շարժմանն, վասն որոյ ախորժելի եղև զուարթամիտ պատանոյն Վախթանգա, որ էր որդի կրտսէր հռչակաւոր անուան պարոն Ումեկին, և մայրենի ազգաւ թոռն մեծ իշխանին Ջալալին տէրն Խաչենոյ, որդի մօր բարեպաշտի, որ էր Քրիստոսի օրինօքն զարդարեալ հոգի, և ի խնդիր բանիս յորդորող զորդի։ Սա խնդրեաց ի մէնջ յաղագս երկնի և նորին շարժմանն։ Յոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր՝ մեծազգի եպիսկոպոսի տէր Յոհաննէս ազնուական զարմից և բարետոհմիկ հարց ծնունդ. որ և շարժեալ ի սիրոյ և ի յուսոյ խնդրողաց, և ակն առեալ ի պատուող շնորհաշուք տեառն և գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն, ի նրբաշաւեղ և ի կորովամիտ բանից սուրբ հարցն և վարդապետաց

165 Գար. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, Ա, էջ 5. «Գրված էր և պատանի իշխանի մոր անունը, բայց անհարազատ ձեռքը ջնջել է և տեղը «Զուլու խաթուն» նշանակել»։

166 Այս ձեռագրի և Վախտանգի նկարի գիտական քննությունը՝ տե՛ս Գար. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը. «Նյութեր և ուսումնասիրություններ», Ա, էջ 1—5։

մերոց և իմաստակ արանց, պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողաց»[167]։

Այս հիշատակարանը շատ բան է պարզում։ Նախ՝ որ Ումեկը Թիֆլիսում կառուցել է եկեղեցի[168], ուր և հանդես է եկել Երզնկայից եկած անվանի վարդապետ Հովհաննեսը։ Որ վերջինիս ճառը մեծ բավականություն է պատճառել երիտասարդ Վախտանգին, և սա, մոր հորդորանքով, դիմել է Հովհաննես Երզնկացուն՝ գրելու «յաղագս երկնի և նորին շարժմանն»։

Հիշատակարանը պարունակում է նաև մի թանկագին տեղեկություն. «մեծազգի եպիսկոպոսն տէր Յովհաննէս ազնուական զարմից և բարետոհմիկ հարց ծնունդ»։ Սա ևս Խաչենի իշխանական տան ներկայացուցիչներից էր, Հաղբատի առաջնորդը, չորրորդը Խաչենեցի Հովհաննես առաջնորդների շարքում, որոնց շինարարական ու մշակութանպաստ եռանդուն գործունեությունն արժանի է հատուկ ուսումնասիրության։

Այսքանից հետո աղբյուրները լռում են Վախտանգի մասին, և նրա ու մոր անունները կապվում են Սյունյաց աշխարհի նյութական մշակույթի հուշարձանների հետ։ Վախտանգին վերաբերող մի վերջին արձանագրություն կա պատմական Եղեգիս (Ալայազ) գյուղի «Զորաց տաճար» եկեղեցու պատի տակ թաղված մի տապանաքարի վրա. «Թվ ՉՂԶ (1347). այս է հանգիստ պարոն Վաղթանգին՝ որդոյ պարոն Ումեկին»[169]։

Սյունիքի հետ ի՞նչ կապ ունեին Մամա-խաթունն ու նրա որդի Վախտանգը։ Ումեկը հայրենի Մանազկերտը թողել էր դարասկզբին[170], սակայն, ինչպես տեսանք, տիրույթներ էր ձեռք բերել Գեղարքունիքի շրջակայքում, Տփղիսում մեծատունների գլխավոր էր, Վրաց թագավորի հոգեհայրն ու դաստիարակը, իսկ մոնղոլ ոստիկանները նրան միայն մեծարանք էին մատուցում։ Ինչո՞ւ արդեն հորենական ժառանգական բնակավայրերից կտրված՝ Վախտանգն իր հավիտենական հանգիստը գտավ սեփական տոհմի հետ ոչ մի առընչություն չունեցող Սյունիքում, Եղեգիս ավանում։

Գար. Հովսեփյանը դա փորձում է բացատրել միայն Եղեգիսի տերերի հետ նրա ունեցած ազգակցությամբ. «Եղեգիսում թաղվելու հանգամանքն անհայտ է, բայց, գուցե, կարելի է բացատրել նրանով, որ ազգակցական կապեր ուներ Օրբելյանների հետ։ Վախտանգի մորաքույրը Մինա-խաթուն՝ Տարսայիճ Օրբելյանի երկրորդ կինն էր, Ստեփանոս Օրբելյանի խորթ մայրը»[171]։

Սա, իհարկե, հավանական պատասխանն է այն հարցի, թե ինչո՞ւ Եղեգիսում է թաղված։ Սակայն հարկավ ո՞չ այն հարցի, թե ինչո՞ւ ոչ հոր գնած Գետիկում, կամ Տփղիսում կառուցած Ս. Գևորգ եկեղեցում։

Ամենայն հավանականությամբ՝ պատճառը նրանց գերդաստանի խճողված վիճակն էր։ Ումեկի առաջին կին Թագուհուց ծնված ավագ որդիները՝ Ճարը, Քարիմատինը, պետք է որ տիրած լինեին իրենց ավագության իրավունքներին ու հոր իշխանությանը։ Աղբյուրներում երևում է Քարիմատինի՝ հորից ժառանգած իշխանական տիտղոսը։ Հովհաննես Երզնկացին ճանաչում է «մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց պարոն Քարիմատինին»[172]։

Իրավացի է Գար. Հովսեփյանը. «Որդիների մեջ ավագը ... Քարիմատինն էր, որ ժառանգել է հոր շինած եկեղեցին Տփղիսում, իսկ երկրորդը՝ Ճարը, որ ստացել է Գետիկը և իր անձնական գնումով վրան ավելացրել Հովը»[173]։ Պարզ է, որ Վախտանգին ոչինչ կամ համարյա ոչինչ չպետք է մնար։

Այսքանից հետո թերևս Վախտանգի մորաքույր Մինա-խաթունն ու նրա ամուսին, իշխան Տարսայիճ Օրբելյանը նրան ու մորը՝ Մամա-խաթունին, բնակության տեղ տված լինեին իրենց ընդարձակ տիրույթներում, որ, ինչպես Տարսայիճի մի արձանագրությունից է երևում, ձգվում էին «ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դունայ»։

---

167 Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք Յովհաննիսի Երզնկացւոյ, էջ Թ—Ժ։ Ալիշան, Հայապատում, էջ 512։ Գար. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա, էջ 6։

168 Սա Թիֆլիսի Մայդանի Ս. Գևորգ Հայոց եկեղեցին է. տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձ. բառ., Դ, էջ 202։

169 «Դիվան հայ վիմագրության», Գ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 110։

170 Ժամանակագիրը հայերի կողմից Մանազկերտը թողնելու տարի է համարում այն թիվը, երբ Զաքարե ամիրսպասալարն առավ Կարսը (տե՛ս Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն, էջ 147)։ Իսկ այս առումը տեղի է ունեցել 1206—1207 թթ.։ Բայց ուրիշ հետազոտողներ հայերի ելքը Մանազկերտից դնում են 1208—1209 թթ. տակ (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 408, Գար. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա, էջ 9, Մժ, Ա, էջ 38, 54)։

171 Գար. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա, էջ 7։

172 Ալիշան, Հայապատում, էջ.512։

173 Գար. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, Ա, էջ 10։

Հասան-Ջալալի մյուս շառավիղն է Մինա-խաթունը՝ հարս գնացած Սյունիքի Օրբելյան իշխանական տունը։ Ստեփաննոս Օրբելյանը բավական մանրամասն ներկայացնում է իր հոր երկրորդ ամուսնությունը՝ մոր (Արուզ-խաթունի) կենդանությամբ։ «Սա (հայրը՝ Տարսայիճ Օրբելյանը—Բ. Ու.) առեալ զթագաւորն Վրաց Դաւիթ՝ գնայր ի տունն Խաչենոյ, առ որդի մեծ իշխանին Ջալալին Աթաբէկն. և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զՄինա-խաթունն առ կենօք առաջին ամուսնոյն։ Ընդ որ ոչ հաճեցան օրենք և վարդապետք եկեղեցւոյ։ Եւ բերեալ ի տուն իւր ստացաւ ի նմանէ որդի մի գեղեցկուղէշ և անուանեաց զնա Ջալալ. և դստերս երկու, յորոց զաւագն ետ ի կնութիւն մեծի և փառաւորեալ իշխանին Խաչենոյ Գրիգորոյ՝ որդւոյ Հասանայ, որդւոյ մեծի Գրիգորին, որ էր քեռորդի աթաբէկ Իվանէի. և զմիւս յետ հօրն ետուն եղբարքն հարսն ի տուն Վրաց թագաւորին՝ կին եղբօրն Դաւթի թագաւորի, Մանուէլին՝ որդւոյ Դեմետրէ թագաւորին...»[174]։

Ուրեմն, Տարսայիճի այս ամուսնությունը կատարվել է առաջին կնոջ կենդանությամբ։ Եվ առաջին կին Արուզ-խաթունի ու Տարսայիճի ամուսնության մասին էլ նույն պատմիչը հաղորդում է հետևյալը. «... Տարսայիճն ... առեալ իւր կին յիսմայէլացւոցն՝ զդուստր տեառն Սիւնեաց՝ զԱրուզ խաթուն, որ եղև քրիստոնեայ և երևելի հաւատով ... յորմէ ծնան որդիք երեք՝ Ելիկումն, Ստեփաննոս, որ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն, և Փախրադուլայն»[175]։

Պատմիչը չի ասում, թե ինչպես է պատահել, որ հայրն իր կնոջը (Սյունյաց տիրոջ դստերը) առել է իսմայելացիներից։ Գար. Հովսեփյանը վերջին արտահայտությունն այնպես է բացատրում, թե այն նշանակում է «ազգով իսմայելացի»[176]։ Սա ճիշտ է այն տեսակետից, որ Արուզ-խաթունը, մինչև ամուսնանալը, եղել է մահմեդական (իսմայելացի)։ Քանի որ անմիջապես հիշվում է, թե «եղև քրիստոնեայ և երևելի հաւատով»։ Եվ «դուստր տեառն Սիւնեաց» էր, որ նշանակում է, թե Սյունիքի տերը մահմեդական է եղել։ Ո՞վ էր այդ մահմեդական տերը, ե՞րբ էր տիրացել կամ մինչև ե՞րբ տեր մնաց,— դժվար է որոշակի խոսք ասել։ Պատմիչը նման հարցերի պատասխանելու համար հավելյալ տեղեկություններ չի հաղորդում, իսկ 1286-ին մահացած և Տաթևում թաղված Արուզ-խաթունը հիշվում է միայն իր տապանագրի մեջ՝ դուստր Սադունի կամ Սասունի[177]։

Օրբելյանի խոսքը, թե Տարսայիճի ու Մինա-խաթունի ամուսնությունը «ոչ հաճեցան օրէնք և վարդապետք եկեղեցւոյ», չպետք է այնպես հասկանալ, թե այն չէր օրինակացված եկեղեցու կողմից։ Վիմական (հենց եկեղեցիներում պահպանված) բազմաթիվ արձանագրություններում Տարսայիճն ու Մինա-խաթունը ամուսիններ են հայտարարված։ Հատկապես Տարսայիճի արձանագրություններում նրանց սերն ու փոխադարձ նվիրվածությունն արտահայտված են վիմագրական խոսքի համար չափազանց ջերմ։ Ինչպես արդեն նկատվել է, մինչդեռ Տարսայիճը Արուզ խաթունի հիշատակը ոչնչով չի հավերժացրել, Մինա-խաթունի անվամբ բազմաթիվ նվիրատվություններ է կատարել, կառուցել շենքեր։ Պատմիչը երևի նկատի ունի առաջին կնոջ կենդանության պարագան, քանի որ քրիստոնեական օրենքներով արգելվում էր բազմակնությունը։

Տարսայիճի ու Մինա-խաթունի ամուսնությունը, ըստ Գար. Հովսեփյանի, պետք է որ տեղի ունեցած լինի 1261-ին (Հասան-Ջալալի եղերական մահից) հետո, քանի որ փեսան ու խնամախոսության գնացած Վրաց թագավոր Դավիթը Մինա-խաթունի ձեռքը խնդրել են նրա եղբայր Աթաբակից։ Բայց և 1271-ից առաջ, քանի որ Դավիթ թագավորն էլ մահացել է այս թվականին[178]։

Մեր կարծիքով՝ նրանց ամուսնությունը տեղի է ունեցել մինչև 1265 թ., կամ, համենայն դեպս, այս թվականին, քանի որ պահպանվել է Տարսայիճի ավագ եղբայր Սմբատ մեծ իշխանի արձա-

174 Օրբէլեան, էջ 424։

175 Անդ, էջ 416։

176 Գար. Հովսեփյան, Տարսայիճ Օրբելյանի և Մինախաթունի սերունդը. Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, էջ 431։

177 Արձանագրության առաջին ընդօրինակող Ս. Ջալալյանցի մոտ. «Այս յարկ տապան և դիր դամբարան մեծահաւատ կնոջ Արուս խաթուն դստեր Սասունի և ամուսնոյն Տարսայիճ իշխանին թվին ՉԼԵ» («Ճանապարհորդութիւն», Բ, էջ 301). Ս. Բարխուդարյանը դժգոհ էր այս ընթերցվածից և գտնում էր, որ Ջալալյանցն սխալ է արտագրել, և որ Տարսայիճի կնոջ «անունը եղել է Արզու խաթուն։ Արզու խաթունը պատմագիր Ստ. Օրբելյանի մայրն է. վերջինս միշտ Արզու խաթուն է գրում իր մոր անունը (համեմատի՛ր Օր., էջ 416, 425, 1910 թ. հրատ.)» (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», Բ, էջ 36)։

Սակայն Օրբելյանի պատմության՝ Ս. Բարխուդարյանի նշած էջերում «Արուզ խաթուն» է՝ ավելի մոտ Ջալալյանցի («Ուրուս-խաթուն»), քան իր ընթերցածին, և ապա ինքն էլ Ջալալյանցի «դստեր Սասունի»-ն դարձրել է «դստեր Սադունի»՝ առանց բացատրելու, թե ինչի՛ հիման վրա։

178 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 431։

նագրությունը Դաղի վանքում, 1265-ից, ուր պատմվում է Սմբատի նվիրատվությունների մասին[179]։ Սա ինքնին վկայություն է, որ Օրբելյանները կամ արդեն խնամիացած էին Խաչենի տերերի հետ, կամ էլ այդ նվիրատվություններով հաստատում էին իրենց խնամիացումը։

Գարեգին կաթողիկոսի հաշվումներով՝ երկրորդ ամուսնության ժամանակ Տարսայիճը պետք է որ տարիք առած մարդ լիներ, ավելի քան 43 տարեկան[180]։ Եթե նկատի առնենք, որ նրա՝ այս ժամանակ արդեն ունեցած երեք որդիներից միջնակը 1280-ին եպիսկոպոս է ձեռնադրվել[181], իսկ այս պաշտոնի համար մարդ առնվազն երեսուն տարեկան պետք է լիներ[182], ապա Գարեգին կաթողիկոսի հաշիվը ճիշտ դուրս կգա, մանավանդ, որ 1221-ից Տարսայիճի անունը կա Նորավանքի շինարարությանը վերաբերող արձանագրության մեջ[183]։

Տարսայիճը Սմբատ եղբոր մահից (1273)[184] հետո դառնում է Սյունիքի իշխանաց իշխանը։ Նրա տիրապետությունն այս ժամանակից տարածվում էր «ի Բարկուշատայ մինչ ի դաշտն Դվնայ» կամ «ի դրանէն Բարկուշատայ մինչև ցսահմանն Բջնւոյ»[185]։ Նրա դիրքն ու փառքն այնքան են բարձրանում, որ, որդու՝ Ստեփաննոս Օրբելյանի պատմելով, մոնղոլ խանի աչքում Տարսայիճը դառնում է ամենաազդեցիկ իշխանապետը Հայաստանում։ Քանի-քանի անգամ նրանից նվերներ է ստանում. «այնքան յարգեալ լինէր առաջի Ապաղայ ղանին, որ բազում անգամ զարքայական հանդերձն իւր մերկացեալ յանձնէ՝ հագուցանէր Տարսայիճին յոտից մինչև ցգլուխն, և զկամարն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք և մարգարտօք լցեալ՝ տայր ածել ընդ մէջ նորա»[186]։

Քաջ ու անվեհեր մարդ էր Տարսայիճը։ Պատերազմներում տարած հաղթանակների համար նոր տիրույթներ է վաստակում։ Մինա-խաթունի հետ միասին վանքեր ու հյուրանոցներ է կառուցում, հայրենի սուրբ ուխտերին տալիս մեծամեծ նվերներ, օժանդակում այս օջախներում հոգևոր մշակույթի զարգացմանն ու բարգավաճմանը։

Տարսայիճը մահացել է 1290-ին[187]։ Այրիացած Մինա-խաթունը շարունակել է նախկին ջերմեռանդությամբ նվերներ մատուցել սուրբ ուխտերին, որոնց մեծ մասը՝ «վասն հարկից արքայշուք տեառն իմոյ Տարսայիճին»։

Մինա-խաթունն էլ մահացել է 1298-ին, թաղվել Ամաղուի Նորավանքում, ամուսնու և տեգրոջ՝ Սմբատի կողքին[188]։

Տարսայիճն ու Մինա-խաթունն ունեցել են երեք զավակ. մի տղա՝ «գեղեցկուղեշ» Ջալալը, և երկու աղջիկ՝ Ասփան և Մամքանը։ Ասփան դեռ հոր կենդանությամբ ամուսնացավ Խաչենի իշխանության մյուս ճյուղի՝ Ծարա Դոփյանց ներկայացուցիչ Գրիգորի հետ։ Իսկ Մամքանին Վրաց արքունիքը հարս տարավ Տարսայիճի մահից հետո[189]։

Դոփյան իշխանական տունը թաթար-մոնղոլների տիրապետության ներքո.— Նախորդ էջերում հանգամանորեն խոսվել է թաթար-մոնղոլական տիրապետության հաստատման մասին։ Տեսանք, որ Խաչենի գահերեց իշխան Հասան-Ջալալը, ստեղծված իրադրության մեջ ուրիշ ելք չգտնելով, ընդունել էր եկվոր բռնակալության գերիշխանությունը և ամեն կերպ ջանում էր իր երկրամասը զերծ պահել նոր տիրակալների բռնադատումներից ու ավերածություններից։ Ավագ Զաքարյանի հովանու տակ գտնվող Դոփյան իշխանությունը ևս Ավագի միջոցով հպատակություն էր հայտնել մոնղոլներին և պարտավոր էր ենթարկվել նրանց կամայականություններին։ Այս ժամանակ իշխանության գլուխ էր կանգնած Գրիգորը՝ Հասանի և Դոփի որդին։

Ըստ երևույթին Գրիգոր եպիսկոպոսը Հասանի և Դոփի որդիների մեջ ավագն է եղել, քանի որ արդեն վարդապետ էր XII դ. 90-ականներին, իսկ XIII-ի սկզբին Հաղբատի առաջնորդությունն էր վարում։ Մինչդեռ հաջորդ որդու՝ Գրիգոր իշխանի մասին մեզ ունեցած առաջին տեղեկությունը 1220 թվականից է։ Խաղավանքից մենք արտագրել ենք նրա մի կիսեղծ արձանագրությունը խաչքարի վրա, որով հաստատում է իր ընծաները վանքին։ Ջանգակատան

179 «Արցախ», էջ 205։
180 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 431։
181 Օրբելեան, էջ 427։
182 Կիրակոս, էջ 304։
183 «Դիվան», Գ, էջ 211։ Գարեգին կաթողիկոսը թյուրիմացաբար 1222 է գրել (տե՛ս «Խաղբակյանք...», էջ 431)։
184 Օրբելեան, էջ 420։ Վիմ. տար., էջ 116։
185 «Վիմական տարեգիր», էջ 114, 116 և հաղ.։
186 Օրբելեան, էջ 423։

187 Օրբելեան, էջ 430, Մժ, Ա, էջ 50։
188 Ալիշան, Սիսական, էջ 192, «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 237։
189 Օրբելեան, էջ 424։

խորքի պատի մեջ գտնվող երկու խաչքարերից ձախակողմյանը Գրիգոր իշխանի կանգնեցրածն է։ Հորիզոնական թևերի տակ ընթերցվում է՝ «Թ. ՈԿԹ» (1220), իսկ խաչից ու կողքերի միջակ զարդաքանդակներից ներքև բուն արձանագրությունն է. «Ես Գրիգոր որդի Հասանա||տվի Ջարհի այգին||...տ||վի ի խադրա վանս...|| ...Ե(5) աւր... իմ հոգոյ||...ով խափանէ...»։

Գրիգոր իշխանի կյանքի մասին պատմող բազմաթիվ տեղեկություններ կան։ Սակայն ամենաուշագրավները նրա հիշատակարաններն են։

Բաշու-նոյինի բանակի կազմում բռնությամբ պատերազմի քշված Գրիգոր իշխանը, որպես ականատես ու դեպքերի մասնակից, իր մի հայտնի հիշատակարանում սրտի կսկիծով պատմում է, թե ինչպես նետողաց ազգը, Պարսից քաղաքներն ու շեներն ավերելով, գալիս-հասնում է Աղվանք ու Հայաստան և այստեղ էլ հրի ու սրի մատնում խաղաղ գավառները, «զոր ոչ կարեմք գրով արկանել զաղետս կործանման հանուր յաշխարհի... Ի սուր սուսերի մատնեցին զազգն քրիստոնէից, զիշխանսն մեծամեծս և զռազմիկ ժողովրդականս և ... զսպասաւորս սրբոյ սեղանոյն Աստուծոյ, զդասս քահանայական, զմիայնակեցունսն և զճգնաւորս, տապալեալ զեկեղեցիսս և զսպասս սրբութեան և զնշանս տէրունական»[190]։

Գրիգորն այնուհետև պատմում է, որ հիշյալ նահանգները հպատակեցնելուց հետո էլ մոնղոլները հայոց գավառների «զիշխանս և զհեծելազօրս ընդ ինքեանս տանէին ուր և երթային. ընդ որս և գրաւեցայ ես՝ Գրիգոր որդի Հասանայ և Դոփին, քուերորդի տպարապետացն Հայոց և Վրաց Զաքարիայի և Իւանէի»։

Արևմտյան Հայաստանում կատարված նվաճումները պատմելով՝ Գրիգորը հիշում է, որ մոնղոլները գրաված բնակավայրերում քստմնելի առուծախ էին անում՝ իրենց զինակցող հայերի վրա վաճառելով գերի հանձնված նրանց ազգակիցներին, իշխանավորներին ու հոգևորականներին, սրանց կայքն ու գույքը։ Եվ նվաճումների մասնակից հայերն ամեն ջանք ու ծախս հանձն էին առնում՝ որքան կարելի է շատ հայրենակիցներ փրկելու համար։

Մոնղոլներն առևտրի կարևոր առարկա էին դարձրել հայկական ձեռագրերն ու եկեղեցական սրբությունները։ Միջնադարյան

190 Մատենադարան, ձեռ. № 7347, թ. 343ա, հմմտ. Գարեգին կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 957—958։

այդ խավարամիտները մեսրոպատառ մատյանների իսկական արժեքը զարմանալիորեն սկսեցին հասկանալ այն ժամանակ, երբ տեսան, թե հայերն ինչպե՞ս իրենց կյանքը վտանգելով՝ հրդեհից ու գերեվարությունից փրկում էին մատյանները։ Այստեղ էլ նրանք, իրենց համար անսպասելի՝ հայտնաբերելով եկամտի մի մեծ աղբյուր, նվաճած վայրերում հափշտակում ու խնամքով պահում էին ձեռագիր մատյանները՝ հետագայում հայերին վաճառելու համար։

Կիրակոս Գանձակեցին ականատեսի պատմածից նկարագրում է Կարնո առումին հաջորդած այսօրինակ առուծախը. «Անթիւ գոյին անդ կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն՝ ծախէին քրիստոնէիցն, որ ի զօրուն էին, զյաճախագինն ընդ դոյզն գնոց։ Եւ նոցա խնդութեամբ առեալ, սփռէին յիւրաքանչիւր գաւառ, բաշխելով յեկեղեցիս և ի վանորայս»[191]։

Կիրակոսը գնողներից հիշում է Զաքարե ամիրսպասալարի հարազատներ Ավագին ու Շահնշահին, Վահրամի որդի Աղբուղային և Գրիգոր Խաչենեցուն (Դոփի որդուն), «որ էր այր երկիւղած»։

Գրիգորն իր գնումների մասին խոսելիս թվարկում է նրանք՝ «... զսպաս սրբութեան, զնշանս տէրունական և զտառս աստուածային ոչ ձեռօք մերովք առեալ յաւարի, այլ գնեալ ի նոցանէ բերրաք ի տէրութիւնս մեր զծաղկալից բուրաստան զաւագ Տօնական և միւս այլ Տօնական ... Յոհանն և զԱւետարանն և զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն Կանու (Կարնո—Բ. Ու.)[192] բերաք... և տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խադայի (Խաղրավանք—Բ. Ու.) վանիցս։ Ի միւսում... ամի այլ գնալով ընդ նոսա... և ի մայրաքաղաքն Կապադ[ո]կացոց նահանգին և անդի առեալ զԱւետարանն պարոնն իմ Աւագն և ետ ինձ և իմ խնդալից եղեալ... և բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»[193]։

Փրկված գրչագիր մատյաններից է եղել նաև սույն հիշատակարանը պարունակող Ավետարանը՝ ընդօրինակված 1166 թ. Հռոմկլայում, որը հետագայում Խաղավանքից հեռացել է՝ [illegible]կ-

191 Կիրակոս, էջ 279—280։

192 Գարեգին կաթողիկոսը «Կանու»-ի առաջ դնում է «Իկոնիա» (տե՛ս «Ցիշատակարանք ձեռագրաց», Ա, էջ 390), որ, մեր կարծիքով, ճիշտ չէ, որովհետև Կիրակոսը մոնղոլների ավերած քաղաքներից հիշում է միայն «Կարնոյ»-ը, որը, անշուշտ, Գրիգորի «Կանու»-ն է։

193 Ձեռ. № 7347, թ. 343բ։

նելով Լենինականի մոտի Օրթաքիլիսա (այժմ՝ Մայիսյան) գյուղի եկեղեցին, իսկ այժմ պահվում է Մատենադարանում։

Խաչենեցիների փրկած ձեռագիր մատյաններից մեկն էլ երկար ժամանակ պահվել է Ջրաբերդի մոտ գտնվող Եղիշե առաքյալի (Ջրվշտիկ) վանքում։ Մագաղաթյա մեծադիր այս Ավետարանը՝ «գրված ամբողջապես գլխագրերով և շքեղորեն նախշազարդված», փրկվել էր Մեծկվենքի տեր Ուզի որդի Հասանի ձեռքով[194]։

Կարնո գավառի ավերածությունից հետո մոնղոլները վերադարձել էին Մուղան, այս տաք ու բերրի դաշտում ձմեռելու։ Մինչ նրանք հանգստանում էին, պարտված թուրք Ղիաս-էդդին սուլթանը դեսպաններ է ուղարկում սպառնական ահազանգերով, թե ահա ուր որ է պիտի գա և ջախջախի մոնղոլներին։ Վերջիններս, առանց ավելորդ փութկոտության, հզորացրին իրենց բանակները և հայ-վրացական զորամասերն էլ իրենց հետ առած՝ հաջորդ տարին շարժվեցին աքլորացած սուլթանի վրա։

Այս անգամ մոնղոլ զորքերի կազմում Հասան-Ջալալ Խաչենեցու հետ միասին կռվում էր նաև Գրիգոր իշխանը՝ Հասան-Ջալալի մորաքրոջ որդին։ Հավանական պիտի համարել, որ այս արշավանքի ընթացքում Գրիգորը գտնվել է Հասան-Ջալալի հրամանի ներքո։

Բաչու-նոյինը հպատակեցրած երկրների զորքերը խորամանկությամբ դասավորել էր որպես առաջապահներ, նրանց արանքներում էլ յուրայիններից կարգել հսկիչներ, որպեսզի հպատակները խույս չտան կռվից կամ չանցնեն հակառակորդի կողմը։

Ճակատամարտը տեղի ունեցավ Զման-Կատուկ գյուղաքաղաքի մոտ։ Սուլթանի զորքերը ջարդվեցին գլխովին։ Ինքը՝ սուլթանը, փախավ մազապուրծ, մոնղոլներին թողնելով իր բերած հարստությունը, ոսկեղենն ու գոհարեղենը, մեծաքանակ անասուններ ու մթերքներ, նույնիսկ ընտանիքը։ Դրանից հետո մոնղոլներն անարգել շարժվեցին առաջ՝ գրավելով Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան, Տիվրիկը։

Այս արդեն 1243 թվականն էր, որից հետո և հատկապես 1250-ական թվականներին մոնղոլները շարունակում են իրենց նվաճողական պատերազմները փոքր-ասիական նահանգներում, Բաղդադի խալիֆայության և Միջագետքի ու Ասորիքի մահմեդական իշխանությունների դեմ։ Այս պատերազմներին մասնակցում էին հայ զորքերը՝ իրենց իշխանների գլխավորությամբ։ Նրանց հետ էր և Կիլիկիայի թագավոր Հեթումի զորքը։ Հայոց զինական ուժերի սպարապետությունն այն ժամանակ Զաքարյան իշխաններից անցել էր Խաղբակյան Պռոշ իշխանին, որին ենթակա էին հայ մյուս իշխանները՝ Սևադա Խաչենեցին, Բագրատունի Կյուրիկեի որդի Թաղիադինը և ուրիշներ։ 1258—1260 թթ. մոնղոլ ու հայ զորքերը պաշարողական դաժան մարտեր էին մղում Մուֆարկին-Տիգրանակերտի դեմ։ Ծանր զոհերի ու կորուստների գնով քաղաքը նվաճեցին 1260-ի գարնանը և անգթաբար կոտորեցին երկարամյա պաշարումից հյուծված քաղաքի բնակիչներին[195]։

Տիգրանակերտի համար մղված մարտերում զոհվեց «գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապես մարտուցեալ և յայնոսիկ պսակեալ»[196]։

Նիկ. Ադոնցը, հանձին այս Սևադայի, տեսնում է Բաղաց Կապան թագավոր գնացած Սենեքերիմի հետնորդներից մեկին. իբր թե, Սենեքերիմի երրորդ զավակ Սևադան ունեցել է մի Գրիգոր որդի, որը մոնղոլների դաշնակիցն էր, ապա սրա որդին էր նահատակված Սևադան[197]։

Սակայն մոնղոլների դաշնակից Գրիգորը ոչ թե Սևադայի որդին էր, ինչպես արդեն տեսանք, այլ Հասանի և Դոփի։ Եվ հետո էլ, պատմիչը մոնղոլական այս արշավանքների շրջանի Խաչենեցի Գրիգոր մեծ իշխան է ճանաչում (այն էլ քանի՞ անգամ) միայն Ծարա կամ Վերին Խաչենի տիրոջը։ Իրավացի է Հ. Մանանդյանը, երբ հանձին նահատակ Սևադայի տեսնում է Դոփի ժառանգ Գրիգոր իշխանի որդուն[198]։

Ճիշտ է, այս ժամանակ Խաչենում կար նաև Գրիգոր անունով մի այլ իշխան՝ Հաթերքի տեր Հասանի որդի Գրիգորը։ Սակայն նրա

194 Այս Ավետարանի նկարագրությունն ու հիշատակարանները տե՛ս Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 226—227, նաև՝ «Պատմութիւն Աղվանից», Ա, էջ 145։

195 Կիրակոս, էջ 384—387, Վարդան, էջ 150—152, Գրիգոր Պատմիչ, էջ 27—28։ Օրբէլեանը (էջ 402) Մուֆարկինը պաշարած է համարում մեկ տարի, որ ճիշտ չէ, քանի որ Կիրակոսն առավել հավաստի աղբյուրից՝ Խաղբակյան Պռոշից ստացած տեղեկությամբ է գրել՝ քաղաքի պաշարումը հաշվելով երկու տարի։

196 Վարդան, էջ 152։

Գարեգին Հովսեփյանը, խոսելով այս դեպքի մասին, զոհված է համարում Սևադայի որդի Գրիգորին («Խաղբակյանք», էջ 49), որ թյուրիմացություն է։

197 Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, էջ 140—141։

198 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 234։

մասին խոսելիս պատմիչները երբեք «մեծ» պատվանուն չեն գործածում։

Թյուրիմացության տեղիք կարող է տալ նաև Գրիգոր Դոփյանի հիշատակարանը (1244), որով նա հիշում է միայն իր երկու զավակներին՝ «զՀասան և զՅովհաննէս»[199]։ Սակայն սա ևս հիմնավոր կռվան չէ, քանի որ հիշատակարանում անընթեռնելի բառեր կան և Հասանի, և Հովհաննեսի անուններից հետո, ուստի հնարավոր է, որ նրանցից մեկն էլ լինի հենց Սևադայի անունը։

Գրիգորի մահվան թվականը պարզող աղբյուր չենք գտել։

Հասան Բ՝ որդի Գրիգորի, թոռ Հասան Ա-ի և Դոփի.— Գրիգոր իշխանը 1244 թ. գրած հիշատակարանում խնդրում էր հիշել իր երկու հարազատ որդիներին՝ «զՀասանն և ...զՅոհաննէս»։

Աղբյուրներն այս Հասանին պատվում են «արիական», «քաջ» և «հաղթող զորական» ու նման այլ մակդիրներով։ Որդին իր արձանագրության մեջ նրան կոչում է մեծ իշխան «Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողվահոյ և այլ բազում գաւառաց»[200]։

Կարապետ եպիսկոպոսը սրան խառնում է տոհմաճյուղի համանուն ուրիշ ներկայացուցիչների հետ, մեկ համարելով Դոփի որդի («Դոփը... սորա ամուսինն էր Ղարա Գրիգորը, իսկ նոցա որդին՝ Ականա, Հանդաբերդո, Սոթից և Շաղվաքու տէր քաջ և հաղթող զորավար Հասանը»)[201], մեկ էլ նույնացնում նրա պապի, այսինքն՝ Դոփի իսկական ամուսին Հասանի հետ, գրելով. «Դոփը թաղված է... յուր հայրենյաց մայր վանքում (Հաղբատում—Բ. Ու.). ուր առաջնորդ էր, երևի նորա մահվան օրերում էլ, նորա որդին Հովհաննեսը... Այս Հովհաննեսի և յուր եղբայր Հասանի զույգ արձանագրությունները 1204 թվից պահված են Խաթրա վանքի տաճարի վրա»[202]։

Իսկ մենք գիտենք, որ 1204 թ. Խաթրավանքը կառուցած և այդ առթիվ արձանագրություն թողած Հովհաննեսի եղբայր Հասանը Դոփի ամուսինն է եղել։

199 Մատենադարան, ձեռ. № 7347, թ. 343բ։

200 «Արցախ», էջ 405։

201 «Դոփյանք», էջ 44—45։

202 «Դոփյանք», էջ 55։

Երբ Կարապետ եպիսկոպոսն զգում է, որ վիմական արձանագրությունները համաձայն չեն իր վարկածի հետ և տեսնում է Կիրակոսի ու Ստեփաննոս Օրբելյանի տեղեկությունները, որոնց դեմ առնելով՝ փշրվում է իր հյուսած տոհմաբանությունը, սկսում է մեղադրել այս աղբյուրների հեղինակներին, իբր, նրանք խոսում են «հարկավ անգիտաբար»։

Նրա մասին եղած առաջին տեղեկությունը հոր հիշատակարանն է, հետո գալիս են վիմական արձանագրությունները, որոնցում Հասանը ներկայանում է իբրև քաջ զորավար, մեծ իշխան, Տարա և Սևանի հարավ-արևելյան ափերի տերը։

Հասան Բ-ը փեսան էր Արագածոտն գավառի տեր Քուրդ Վաչուտյանի[203], որի կինն էր Դսեղի տեր Մամիկոնյան Մարծպանի դուստր Խորիշահը[204]։ Քուրդ Վաչուտյանին չպետք է շփոթել Մահկանաբերդի ու Կայենի տեր Քրդի հետ, որը Հաթերքի Վախտանգ իշխանի աներն էր (Արզու-խաթունի հայրը), հովանավոր եղավ Մխիթար Գոշին, Տփղիսի ամիրան էր և խոշոր դեր կատարեց Վրաց թագավորության ներքին ու արտաքին կյանքում[205]։

Հասան Բ-ի իշխանությունը (XIII դարի երկրորդ կես) համընկավ մոնղոլական տիրապետության նոր ու առանձնահատուկ շրջանի հետ։

Տեսանք, որ 1259—1261 թթ. Վրաց թագավոր Դավիթը, մի շարք իշխանների հետ միասին, ապստամբել էր մոնղոլ տիրապետողների դեմ։ Անուղղակի վկայություններ կան, որ ըմբոստություններին մասնակցել են նաև հայ-վրացական զորքերի հրամանատարներ ու հայ իշխաններ ևս։ Ժողովրդական ըմբոստություններ են եղել նաև Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգներում և հատկապես Առանում, որի մի զգալի մասն էին կազմում հայկական գավառները։

Հարկավ, միայն այս ըմբոստությունները չէին, որ հեղհեղուկ էին դարձրել մոնղոլների դիրքերը ինչպես Անդրկովկասում,

203 «Վիմական տարեգիր», էջ 87. «Ես Քուրտ՝ իշխանաց իշխան, որդի մեծին Վաչեի»։

204 1283 թ. Հովհաննավանքում թողած մի արձանագրության մեջ սրանց որդի Հասանն իրեն կոչում է «Հասան իշխան՝ որդի Քրդին իշխանաց իշխանի և մայր Խորիշահի՝ յազգէ Մամիկոնեանց, թոռն մեծին Վաչէի» («Վիմական տարեգիր», էջ 124)։ Իսկ «յազգէ Մամիկոնեանց» Խորիշահը դուստրն էր «Մարծպանա և Մամքանա» («Վիմական տարեգիր», էջ 94)։

205 Այս Քրդի որդիներն էին նաև Դավիթն ու Սադունը (Կիրակոս, էջ 215), որոնցից երկրորդը պետք է Անդրկովկասի քաղաքական կյանքում կատարեր հոր դերը՝ դառնալով Վրաց թագավորության և մոնղոլական տիրապետողների փոխհարաբերությունների հմուտ կազմակերպիչը։

Մակար Բարխուտարյանցը սխալվում էր՝ կարծելով, թե Մամքանը՝ կին «քաջ Հասանին և մայր Գրիգոր իշխանին» նաև «քոյր էր Արզու-խաթունի» (տե՛ս «Արցախ», էջ 206)։

այնպես էլ գրված մյուս երկրներում։ Հեռավոր Արևելքում Մանգու մեծ խանի մահից (1259) հետո ներքին արյունոտ մրցակցություն էր սկսվել թափուր մնացած գահին տիրելու համար։ «Այս առաջին անգամն էր, որ համերաշխությունը և կարգապահությունը քայքայվեցին նաև Չինգիզ-խանի տոհմում և ընտանեկան պառակտումները վերածվեցին միջցեղային պատերազմի»[206]։ Համանման երկպառակություններ սկսվեցին նաև Ոսկե Հորդայի՝ Առաջավոր Ասիայում ու Կովկասում բնավորված խանությունների միջև։ Աղբյուրները տարբեր պատճառներ են տեսնում այս երկպառակությունների հիմքում։ Սակայն կարևորն այն է, որ համարյա միշտ էլ նման գժտությունների հիմքը եղել է բարձր դիրքի ու գահերեցության մոլուցքը։

Նման արյունահեղ ընդհարումների թատերաբեմ էր դարձել նաև Անդրկովկասը, որի ժողովուրդները, առանց այդ էլ հյուծված ու քայքայված, տալիս էին անթիվ զոհեր, և ավերվում ու ավարի էին ենթարկվում նրանց երկրները։

Չինգիզ-խանից ժառանգություն մնացած տիեզերական տիրակալությունն արդեն տրոհվում էր առանձին մասերի, և ամեն մի մասը դառնում էր անկախ պետություն։ Այս կերպ ստեղծվեց Հուլավու խանի վիթխարի պետությունը, որի մեջ էին մտնում ինչպես Հայաստանը, այնպես էլ ամբողջ Անդրկովկասը[207]։ Այս վիթխարածավալ տերության հոգսն այսուհետև պետք է լիներ ունեցած սահմաններում ինքն իրեն պաշտպանելը, քան թե նոր հողեր ու ժողովուրդներ գրավելը։

Հուլավու խանն էր պետության հիմնադիրը, այդ պատճառով էլ տիրապետող տոհմը պետք է կոչվեր Հուլավյան։

Հայկական աղբյուրները մի անվերապահ համակրանքով են խոսում Հուլավու իլխանի («իլխան»—ժողովրդի պետ—իշխան) մասին։ Վարդան Վարդապետը նրան համարում է «բարեսէր և քաղցրաբարոյ» իշխանավոր և նրա այդ առաքինությունների հիմք է համարում Հուլավուի՝ քրիստոնյա կնոջից ծնված լինելը, նաև այն հանգամանքը, որ մեծ իլխանի տանը միշտ էլ բարյացակամություն կար քրիստոնյաների հանդեպ։ Պատմիչի հետ ունեցած հայտնի զրույցի ընթացքում Հուլավուն ինքն էլ խոստովանել էր այդ հանգամանքը. «Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռվիլ, որ մեք քրիստոնասէր ենք և քրիստոնէութիւն կայ ի մեր տանս. նաքա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նացա տանն»[208]։

Հավանաբար Հուլավուն ու նրա հաջորդները հրաժարվել էին քրիստոնյաների և առհասարակ հպատակ ժողովուրդների հանդեպ նախորդների վարած ջարդարարական քաղաքականությունից՝ ոչ միայն այն պատճառով, որ քրիստոնեություն կար նրանց տանը, այսինքն՝ քրիստոնյա էին, որքան ա՛յն իրական վիճակի թելադրանքով, որի մեջ իրենք իրենց գրել էին՝ կտրվելով կենտրոնական մեծ խանությունից ու հարևան մյուս մոնղոլ իլխանություններից։ Վերջիններիս հետ մրցակցական-թշնամական դիրք բռնելով, Հուլավյանք չէին կարող բացահայտ թշնամության մեջ գտնվել նաև հպատակների հետ, որոնց վրա հենվում էին թե՛ արտաքին և թե՛ ներքին քաղաքականության հարցերում։ Նրանք արդեն գիտակցում էին, որ երբ հզոր են իրենց հպատակ վասալները, դա նաև իրենց հզորությունն է։ Եվ անջատ-անջատ պահելով այդ հպատակներին, հնարավորություն էին տալիս, որպեսզի նրանք հզորանան, կարգավորեն իրենց ներքին տնտեսական ու մշակութային կյանքը։

1265 թ. մեռավ Հուլավու խանը։ Նրա գահը ժառանգեց ավագ որդին՝ Ապաղան (1265—1282)։

Ապաղան իր հոր հարազատ ժառանգն էր նաև հպատակների նկատմամբ վարելիք քաղաքականության մարզում։ Նրա ժամանակակից հայ հեղինակներից շատերը վկայում են, որ Ապաղան քրիստոնյաներին հովանավորում ու պաշտպանում էր իր ցեղակից կեղեքիչներից[209]։

Վիմական արձանագրություններում ևս Աբաղայի մասին խոսվում է համակրանքով. օրինակ, Մեծ Սյունյաց Թանահատի վանքի պարոններն ու միաբանները Ս. Ստեփանոսի եկեղեցու վրա

206 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 238։

207 Հ. Մանանդյանն աղբյուրների քննությամբ պարզել է այս իլխանության սահմանները, որոնք իրենց մեջ էին առում «Պարսկաստանը և Առաջավոր Ասիայի մեծագույն մասը՝ Հնդկաստանից և Ամու-Դարյայից մինչև Միջերկրական ծովը։ Իլխանության երկրները սահմանակից էին հյուսիսում Չաղաթայանների և Ջուչյանների մոնղոլական պետություններին, իսկ հարավ-արևմուտքում եգիպտական Մամլուքների սուլթանությանը։ Նրա կենտրոնավայրերն էին Թավրիզի շրջանը և Ղարադաղը, Մուղանն ու Ղարաբաղը, նաև Ալադաղը։ «...Հուլավուն... հիմնեց Ալադաղում գտնվող Դառն դաշտում՝ այժմյան Բագավանի ու Դիադինի հարավակողմում, որ իր սիրած ամառանոցային վայրն էր՝ աթոռանիստ բնակատեղի» («Քննական տեսություն», Գ, էջ 242)։

208 Վարդան Վարդապետ, էջ 158։

209 Մխ. Այրիվանեցի, էջ 68։ Գրիգոր Պատմիչ, էջ 37 և։

քանդակված արձանագրության մեջ հիշում են «մեծին եւ բարէպաշտին Ապաղայ ղանին»[210]։

Աղբյուրների վկայությամբ՝ Աբաղան իր իլխանության վրա պարբերաբար ճակատամարտերի եկող մոնղոլ մյուս խաների և եգիպտական սուլթանության դեմ ճակատելիս՝ ամեն անգամ իր հետ ուներ հայ և վրաց զինական ուժերը, որոնց գլխավորում էին նրանց տեր-իշխանները։ Վերջիններիս զինակցությունը և խիզախությունները նա գնահատում էր՝ տալով մեծամեծ արտոնություններ. տեսանք Ստ. Օրբելյանի վկայությունը, ըստ որի՝ Ապաղան «ի վերայ ամենայն թշնամեաց» քաջաբար կռվող Տարսայիճ Օրբելյանին բազում անգամ պարգևատրել է թանկարժեք ակնեղենով ու ոսկով[211]։ Օրբելյանը հանվանե թվարկում է նաև այն վայրերը, ուր կռվել է Սյունյաց մեծ իշխանը (ինչպես նաև նրա բախտակից մյուս հայերը)՝ «ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս և ի Համայ ընդ Մսրացւոյն, և ի Դարբանդ՝ ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ մարտս...»[212]։

Աբաղայի վարած քաղաքականությունից զոհ էր նույնիսկ այնպիսի թաթարատյաց հեղինակը, ինչպիսին Ֆրիկն էր, որ անանախադեպ աղետ էր համարում թաթարական տիրապետությունը, գրելով.

«Հիմիկ դրժարէց բաներս,
Որ թաթարն եղավ թագաւոր,
Զրկեց զամենայն աշխարհ
Ու գողերն եդիր մեծաւոր...»[213]։

Նա իր «Վասն Արղու ղանին և Բուղային» ընդարձակ բանաստեղծությամբ խրատ է կարդում Աբաղայի այն ցեղակիցներին, որոնք անխոհեմությամբ ու ապերախտությամբ դավեր էին նյութում իրենց տիրակալի դեմ։

Այս ընդարձակ բանաստեղծության ընդհանուր տրամադրությունից կարելի է եզրակացնել, որ օտարների կռիվներից տեղացի ժողովուրդն է տուժում, և Ֆրիկը հենց դրա համար էլ քարոզում է խաղաղություն նրանց միջև։

210 «Դիվան հայ վիմագրության», պրակ Գ, էջ 74։
211 Օրբելեան, էջ 423, 424։
212 Անդ, էջ 423, 424։
213 Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 217։

Սակայն հոգևորականների գովասանքին ու տեղական իշխանավորների բարյացակամությանն արժանացած Աբաղա խանն անգամ մի սովորական բռնակալ էր, որից աշխատավոր ժողովուրդը դժգոհ էր և հարմար առիթին ըմբոստանում էր նրա լծի դեմ։ Հայտնի է Առանում տեղի ունեցած գյուղացիական մի ապստամբություն, որը բռնկվել էր Աբաղա խանի դեմ 1270-ական թվականներին։

Ծարեցի Հասանը ևս մասնակցում էր Հուլավյան տիրակալների ձեռնարկած արշավանքներին։ Տարսայիճի համար Ստ. Օրբելյանի գծած ռազմական երթուղին աներկբայորեն կարելի է համարել նաև Հասանինը։ Այս պատերազմներում նա բազում քաջություններ կատարեց՝ իր թափած արյամբ վերանվաճելով հայրենի տիրույթները։ Այս քաջ զորականի կյանքի մեծ մասը պետք է որ անցկացած լիներ պատերազմներում, որովհետև նրա կին Մամքանն ու որդի Գրիգորը համարյա միշտ իրենց արձանագրություններում նրա մասին խոսում են որպես կենդանի, սակայն բացակա հարազատի ու իշխանավորի։ Մամքանի անունից՝ Դադի վանքում արձանագրված է. «... Ես Մամքան՝ ամուսին արիականին Հասանա և որդի մեր Գրիգոր, տէրք գոլով տեղոյս հայրենաւք... ի ՉԺԶ (1267) թվին տուաք ի սբ ուխտս զՇովատեղ, զՋաջուռանց, զՋոլբեկանց»[214]։

Հայրենի երկրում պահպանված հիշատակներով Հասանը մեր առաջ կանգնում է որպես իր երկրի տնօրեն իշխանը, որը միայն գտնվում է մոնղոլական տիրապետության տակ։ Սոդքում պահպանվել է մի արձանագրություն՝ գրված «ՉԻԵ (1276) ի թագաւորութեան Ապաղին, կաթողիկոսութեան տր Ստեփանոսի, պարոնութեան Հասանա»[215]։ Դաշքենդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցողները ժամանակ են նշում «ի աշխարհակալութեան Ապաղա ղանին, իշխանութեան մեծին Հասանա եւ Մամք նա եւ աստխանշան որդոյն Գրիգորի...»[216]։ Անթվական է այս արձանագրությունը։ Բայց անկասկած է, որ գրվել է 1287-ից առաջ, չնայած տարօրինակ է, որ միաժամանակ հայտարարվում է հոր և որդու իշխանությունը։ Պիտի կարծել որ հոր երկարատև բացակայությունների ընթացքում իշխանությունը Գրիգորն էր վարում, և այդ պատճառով էլ նա փաստորեն դարձել էր հոր աթոռակիցը։

214 Մեսրոպ մագիստրոս, էջ 94բ։ Շահխաթունեանց, Բ, էջ 360, «Արցախ», էջ 205 (տարբերություններով)։
215 Ջալալեանց, Բ, էջ 212, Սմբատեանց, էջ 625։
216 Ջալալեանց, Բ, էջ 115, Սմբատեանց, էջ 629։

Հասանի հիշատակին արված ընծաների մասին արձանագրություններ են պահպանվել ինչպես Դաշքենդի Ս. Աստվածածին եկեղեցում, այնպես էլ Ծարա Ս. Սարգիս մատուռում։ Առաջինում Մամքանն ու Գրիգորը վանքին են նվիրում «զՁորին ջաղացն, զՃալին հողն, Ստեփանոսի ջաղացադռան խոտն»[217]։

1289-ին Հասանի որդի Գրիգորը Ծարա Ս. Սարգիս մատուռի դռան գլխի խաչքարի վրա թողած արձանագրության մեջ գրել է. «... Ես Գրիգոր՝ որդի Հասանայ, քաջ և յաղթող զաւրաւարին և մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո և այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար՝ սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք և պարգև քաջութեան»[218]։

Կարապետ եպիսկոպոսը ենթադրում էր, թե «այդ թվականին (1289—Բ. Ու.)... վախճանված էր Հասանը և իշխանությունն անցել էր իր որդուն»[219]։ Իսկապես արձանագրությունը նման եզրակացության հիմք տալիս է։ Այստեղ, ճիշտ է, իշխանությունը Գրիգորին անցած լինելու մասին ոչ մի ակնարկ չկա, և Գրիգորը հանդես է գալիս որպես «որդի Հասանայ», որը միայն հոր մահից հետո կարող էր ժառանգել նրա «իշխան», «տէր» տիտղոսները և դրանցով ներկայացնել իրեն։ Սակայն և այնպես արձանագրությունը քանդակելու տարում Հասանը կենդանի չէր, քանի որ Գրիգորը կենդանի հոր մասին կխոսեր ուրիշ տեսակ։ Իսկապես, Հասանը, Ստեփաննոս եպիսկոպոսի ժամանակագրության համաձայն, մահացել է 1287 թ. ձմռանը, Հասան-Ջալալի որդի Աթաբակի հետ միասին[220]։

Ճիշտ է, Ծարից արտագրված մի արձանագրության մեջ դրությունն այնպես է ներկայացված, որ Հասանն ու Գրիգորը հանդես

217 Նույն տեղում։

218 «Արցախ», էջ 405։

«Պարգև քաջութեան»-ով Գրիգորն ուզում է նշել, որ հայրը գործած արիությունների համար վերահաստատվել է որպես իշխան իր ժառանգական տիրույթում։ Ուրիշ կերպ չի կարելի պատկերացնել նրա տոհմի ժառանգական սեփականություն հանդիսացող Ծարի պարգև ստանալը։

219 «Դոփյանք», էջ 65։

220 Տե՛ս ՄԺ, Ա, էջ 48։ Այս տեղեկությանը ծանոթ չէր Գարեգին Հովսեփյանը, այդ պատճառով էլ կարծում էր, թե 1289-ին Հասանը «հավանական է կենդանի լիներ» (տե՛ս «Խաղբակյանք», էջ 175—176, 175-ի ծան. 6)։

Այս ժամանակագրական կարևոր տվյալին տեղյակ չլինելու պատճառով Գ. Կիրակոսյանը ևս Հասանի մահվան ու Գրիգորի իշխանության սկզբի տարեթվի մասին անում է դատողություններ, որոնք չեն հիմնավորվում (տե՛ս նրա՝ «Մատենագիտական տեղեկություններ», էջ 219)։

են գալիս համաժամանակյա իշխանությամբ. «... ի հայրապետութեան տր Գրիգորոյ, յիշխանութեան Հասանա ու Մամքանին, Գրիգորոյ, Ասփէին, մեք միաբան եղբարքս Ուհան և Սարգիս, Յովհաննէս... և ամուսինք մեր... շինեցաք զկաթողիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց...»[221]։ Սակայն, նախ չի կարելի երաշխավորել, թե այս արձանագրությունն արտագրված է անսխալ, ապա՝ հնարավոր է, որ կառուցող միաբաններն իրենք Դոփյանների իշխանության մի այսպիսի հախուռն բաժանում կատարած լինեին, այդ իշխանությունից բաժին հանելով նաև Մամքանին ու Ասփային։ Մամքանն ու նրա հարս Ասփան սեփական անունից խոսող արձանագրություններում երբեք իրենց չէին ներկայացնում որպես իշխանությամբ օժտված անձերի։ Մամքանը միշտ էլ իրեն կոչում էր «ամուսին արիսկանին Հասանայ» կամ պարզապես «ամուսին Հասանայ», իսկ Ասփան ներկայանում էր որպես «դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի»[222]։

Հասանի կյանքն ու հերոսական գործունեությունը փառաբանության են արժանացել ժամանակի գրական մի փայլուն գործի մեջ, որի հիշատակած պատմական դեպքերի ու դեմքերի հավաստիությունն անառարկելի է։ Գրական այդ հուշարձանը Խաչատուր Կեչառեցու հայտնի «Ողբ վասն աւերման տանս Արևելեան» երկն է՝ գրված 1295 թ.[223], որն Արևելյան Հայաստանի անցած-գնացած

221 Ջալալեանց, Բ, էջ 115։ Ալիշան, Սիսական, էջ 73։ Նաև՝ «Ազգագրական հանդես», 1910, № 1, էջ 18։

Կարապետ եպիսկոպոսը փորձում է սույն արձանագրության «տէր Գրիգորոյ» անվան տակ տեսնել Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին, որը գահակալել է 1293—1307 թթ. (տե՛ս «Դոփյանք», էջ 64)։ Սրանով կարող էր պարզվել, որ Հասանը կենդանի է եղել 1293-ից հետո ևս, ամեն պարագայի՝ 1293-ին։ Սակայն հետազոտողը մոռանում է, որ Ծարն Աղվանքի եկեղեցու ոլորտում էր գտնվում, և արձանագրություններում ծարեցիներն իրենց կաթողիկոսի անունը կգրեին, որ այդ ժամանակներում Ստեփաննոսն էր։ Այստեղ «ի հայրապետութեան տր Գրիգորոյ» կապակցության «հայրապետը» միայն «վանահայր» է նշանակում։ Այս նույն թյուրիմացությունը կրկնված է նաև «Դիվան հայ վիմագրության»-ի վերջերս լույս տեսած Դ հատորի (էջ 315) խմբագրական միջամտության մեջ։

222 «Արցախ», էջ 194։

223 Այս երկը Մատենադարանի № 425 ձեռագրի (Գանձարան, թ. 681—685) մեջ կոչվում է «Ողբ Խաչատրոյ Կեչառեցւոյն վասն իշխանաց»։

Մ. Աբեղյանի համոզիչ կարծիքով՝ «Ողբ»-ը գրված է Ղազան խանի իշխանության սկզբում (1295) կատարված քրիստոնեահալած քաղաքականության առթիվ (տե՛ս նրա՝ «Հայոց հին գրականության պատմություն», գիրք II, էջ 229)։ Համանման կարծիք է հայտնել նաև Գար. Հովսեփյանը, ցույց տալով, որ «ժամա-

Հզոր իշխանների շարքում հիշում է նաև Դոփյան Հասան իշխանին.

«Զ Հասանն յիշեմ ըզխաչենեցի,
Որ մականուամբ էր որդի Դոփի.
Հանց յուժընդակ էր ինքն յատենի՝
Քան զ Քրիստոսի նշանն ի բեմի»[224]։

Մանուկ Աբեղյանն իրավամբ գտնում է, որ միջնադարի համար շատ անսպասելի է Հասան իշխանի և Քրիստոսի զորավոր նշանի (խաչի) համեմատությունը. Հասանն ատյանում այնպես հզոր էր, ինչպես խաչը բեմի վրա։ Սակայն չի կարելի նկատի չառնել Կեչառեցու բարձր կարծիքը հին մեծազոր իշխանների մասին, որոնց բացակայությամբ էլ նա բացատրում է իր օրերում հայրենի երկրին հասած աղետները։

Հասանի կին Մամքանը, որ, ինչպես տեսանք, դուստրն էր Արագածոտն գավառի տեր Քուրտ Վաչուտյանի, իր արձանագրություններով ներկայանում է որպես ժամանակի մեծահարուստ բարերարներից մեկը։ Հայրենի տիրույթներում կանգնեցրած խաչերն ու վանքերին ընծայած նրա նվերները մի պատկառելի թիվ են կազմում։ Դժբախտաբար, պահպանվել է մի չնչին մասը ծարեցիների ավանդական մշակութային կենտրոնի՝ Խաթրավանքի բոլոր արձանագրությունների, որոնցից, ամենայն հավանականությամբ, կարելի կլիներ առավել լրիվ պատկերացում կազմել Մամքանի ու նրա ամուսին Հասանի մշակութանպաստ գործունեության մասին։

Մամքանը թաղված է Դադի վանքում։ Նրա տապանագրի թվականն իրարից տարբեր են ընթերցել Մակար Բարխուտարյանցն ու Մեսրոպ Մագիստրոսը։ Առաջինի մոտ՝ «Թվ. ՉԽԷ» (1298)[225] երկրորդի մոտ՝ «Զ» (1251)[226]։ Ճիշտն, իհարկե, Բարխուտարյանցի ընթերցումն է, որովհետև Մամքանն իր նվիրատվությունների մասին արձանագրություններ է թողել 1267-ին ու հետագա թվականներին.

Հասան Բ-ն ունեցել է նաև Աթանաս անունով մի որդի, որի մասին արձանագրություններ են պահպանվել Դադի վանքում։ Նա է եղել վանքի առաջնորդը 1260—80-ական թվականներին։ 1261 թ. ձեռնավոր[227] Սասնան, Աթանասի առաջնորդությամբ վանքին ընծայել է «Սարուտանց հողն, Դ (4) եզն և այլ արդիւնք»։ 1271 թվականից ունենք արձանագրություն, որով Պռոշյան-Խաղբակյան Ամիր-Հասանի որդի Աշոտն ու իր մայր Թաճերն են միաբանում Դադի վանքին՝ Աթանասի առաջնորդությամբ։

Եվ, վերջապես, Աթանասի անվան հետ են կապված այն երկու գեղեցիկ խաչքարերը, որոնք Դադի վանքի ճարտարապետական համալիրի լավագույն զարդն են։ Նրանք ամրացված են համալիրի կենտրոնում բարձրացած զանգակատան արևմտյան որմնախորշին։ Զախակողմյանի վրա, երեք եզրերին գրված է. «Էին այ զաւրութեամբն ես տէր Աթանաս՝ որդի Հասանայ||կանգնեցի զսբ նշանս յիշատակ հոգոյ իմոյ||թիւն հայոց ՉԼԲ» (1283)[228]։ Երկրորդի գիրն է. «Զտէր Գրիգորիս սնուցող Աթանասայ, յիշեցէք ի Քրիստոս»։

Ուրեմն, Գրիգորիսն Աթանասի դաստիարակն է եղել։ Բայց հայտնի չէ, թե որտեղացի էր ու ինչ տոհմից։

Դադի վանքի երկու խաչքարերն իրենց նախշերի նրբությամբ ու գեղազարդական վսեմ արժանիքներով բացառիկ տեղ են գրա-

---

նակի այն նկարագրությունը, որ տալիս է հեղինակը, համապատասխան է միայն 1294/5 թվականին, Նավոուզի կատարած չարիքներին» (Խաղբակյանք», էջ 176)։ Նույն տեղում Դար. Հովսեփյանն ունի նաև մի սրամիտ նկատողություն. «Ողբի մեջ մեռած վերջին իշխանն է Ամիր-Հասան Պռոշյանը (վախճ. 1292-ին), և չի հիշվում Պապաքը, որ մեռել է 1298-ին։ Այս նշանակում է՝ Ողբը գրվել է Պապաքի (Կեչառեցու տոհմակցի) մահից առաջ։

Այսքանից հետո չի կարելի չնշել, որ Կարապետ եպիսկոպոսն սխալվում էր՝ կարծելով, թե Ողբը գրվել է 1316 թ. հետո («Դոփյանք», էջ 75)։

224 Մատենադարան, ձեռ. № 425, թ. 425, Ալիշան, Հայապատում, էջ 527, Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 391։

225 «Արցախ», էջ 206։

226 Մեսրոպ Մագիստրոս, էջ 96ա։

227 «Ձեռնաւոր» բառին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ն. Մառը («Новые материалы по армянской эпиграфике», СПб., 1893, էջ 89—90)։ Ապա Գարեգին Հովսեփյանն է հանգամանորեն քննել նրա գործածության փաստերը միջնադարյան մատենագրական աղբյուրներում ու վիմագրերում և եզրակացրել, որ «ձեռնավորը մի ստորին պաշտոնյա էր հարկերի հավաքման գործում, որն ի կատար էր ածում պարոնի հրամանները» (Գարեգին վարդապետ, Զագավանից ժողովը, էջ 34)։

Բառի քննության և գործածության եղանակների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Լ. Խաչիկյանը (տե՛ս նրա՝ XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, ՊԲՀ, 1958, № 1, էջ 111—112) և Ս. Բարխուդարյանը (տե՛ս նրա՝ Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ. «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», ժողովածու՝ նվիրված Աշ. Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 1971, էջ 92—95)։

228 Այս խաչքարերի մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի հին մշակույթի պատմության մի էջ. «Սովետական արվեստ» հանդեսի 1971 թ. № 8, էջ 46—49, Նույնի՝ Դադի կամ Խութա վանք, «Էջմիածին», 1971, Զ—Է, էջ 69։

վում հայ միջնադարյան քանդակագործության ամենաշքեղ օրինակների շարքում և վկայում են ժամանակի Խաչեն աշխարհի քարագործ վարպետների կախարդական արվեստը։

Խաչենի մշակութային կյանքը XIII դարում։ Մշակույթի ականավոր գործիչները.— XIII դարը իրավամբ համարվում է հայ մշակույթի և գրականության զարգացման արծաթե դար։ Զաքարյան զորապետների գերիշխանության ներքո ազատագրված Արևելյան Հայաստանի բոլոր մարզերում սկիզբ էր առել տնտեսական ու մշակութային նոր վերելքը։ Իսկ Կիլիկյան Հայոց թագավորության մեջ արդեն առկա էր ազգային հոգևոր ու մշակութային կյանքի մի այնպիսի առաջընթաց, որի մեջ չի կարելի չտեսնել մեր բազմադարյան ազգային ավանդների և հարևան ու ոչ հարևան ժողովուրդների մշակութային ազդեցությունների զուգորդումը։ Հետագայում մոնղոլական տիրապետությունը, իհարկե, կասեցրեց այս բուռն վերելքը, տնտեսական ու մշակութային կյանքը կանգնեց փակուղու առաջ։ Սակայն նույնիսկ այս շրջանում էլ երկրի քաղաքակրթական կյանքում մեռած չէր վիճակը, քանի որ նախընթացի զարգացման առողջ ազդակները հեշտությամբ չէին կարող տեղի տալ։ Ուշագրավ է նաև, որ եկվորները չկարողացան ամենուր խափանել ու կասեցնել առաջընթացը։ Մյուս կողմից էլ, ճիշտ է, մոնղոլներն իրենք մշակութային ցածր մակարդակի վրա էին գտնվում և այս տեսակետից ոչ մի ուսանելի բան չէին բերել իրենց հետ, սակայն նրանց տիեզերական տիրապետության շնորհիվ իրար էին կապվում հեռու և մոտիկ բազմաթիվ ժողովուրդներ, ստեղծում մշակութային արժեքների աշխույժ փոխանակություն, այս ճանապարհով էլ՝ փոխադարձ ազդեցության մթնոլորտ։ Եվ զարմանալի չէ, որ XII դարի վերջին ու XIII դարի սկզբին բորբոքված մշակութային կրակը շատ կողմերով դեռևս ջերմ էր նաև XIII դ. վերջին։

Խաչենի մշակույթը չի կարելի պատկերացնել հայկական ընդհանուր կյանքից մեկուսի։ Այն հանուր հայության մշակույթի մի օղակն էր, հետևապես սնունդ էր առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն էր բերում համազգային մշակույթի գանձարանին։ Հետաքրքիր է, որ այս նահանգի բնակչությունը, իր քաղաքական ու մշակութային շրջահայաց գործիչների ջանքերի շնորհիվ, պատմական ամենածանր պայմաններում իսկ կարողանում էր ետ չմնալ համազգային հոգևոր կյանքի ընթացքից։ Դա նկատելի է հատկապես քննության ենթակա ժամանակաշրջանում,

որի թողած արժեքներն այսօր էլ պահպանում են իրենց դասական նշանակությունը։ Մենք նկատի ունենք հատկապես ճարտարապետությունը և նրա օժանդակ բնագավառները՝ քանդակագործությունն ու զարդարվեստն առհասարակ։ Եթե Ներքին Խաչենի մշակութային կյանքի այս շրջանում բարձրացել էր անգերազանցելի Գանձասարը, ապա Վերին Խաչենն էլ տվել էր Դադիվանքի կաթողիկեն, Խաթրավանքի տաճարը, Ծարա Ս. Աստվածածինը, Վաղուհասի Մայրաքաղաքը և ճարտարապետական ուրիշ կառույցներ, որոնք իրենց վրա կրում են դարի հայկական բարձր արվեստի կնիքը։

Հայ մշակույթի պատմության մեջ բացառիկ նշանակություն ունեն Դադիվանքի գլխավոր եկեղեցու որմնանկարները, որոնք XII—XIII դարերի հայ գեղանկարչական արվեստի բացառիկ երևույթներից են և, միաժամանակ, փայլուն ապացույցն այն իրողության, որ այդ դարերում հայ եկեղեցաշինությունը չէր հրաժարվել որմնանկարչությունից։

Սակայն Խաչենի նկարչական արվեստի հիշատակները Դադիվանքի որմնանկարներով չեն սահմանափակվում։ Մատենագրական ստույգ տեղեկություններով հաստատվում է, որ Խաչենի իշխանական տներում և վանքերին կից գործող գրչատներում ու արվեստանոցներում սովորում էին նկարել, ձեռագործությամբ զբաղվել։ Գանձասարի և Վերին Խաչենի վանքերում (Խաթրավանք, Դադիվանք, Ս. Աստվածածին և այլն) ստեղծված գրչագրերն ունեն ընտիր մանրանկարներ ու զարդանախշեր՝ ստեղծված Խաչենեցի ծաղկողների կողմից։ Կիրակոսի վկայությամբ՝ Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալի մայր Խորիշահը Երուսաղեմում «ձեռագործաւ իւրով կերակրէր»[229]։ Իսկ Վերին Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի կին Արզու-խաթունի և նրա դստերց ձեռագործ վարագույրների, նրանց նկարների բարձր վարպետության մասին պատմիչը խոսում է անխառն հիացումով. «Սա [Արզու-խաթունը]... արար և վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն։ Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան... Եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծած-

229 Կիրակոս, էջ 268։

կոյթ, այլ և այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ և Մակարայ վանից և Դադի վանից...»[230]։

Եթե Արզու-խաթունի ու նրա դստերց գործած վարագույրների վրա «ճշգրտագոյն հանուածովք» կային փրկչի ու այլ սրբերի պատկերները և սրանք՝ մի այնպիսի վարպետությամբ, որ պատմիչը նրանց մեջ տեսնում էր «հանճար նկարակերտութեան», ապա մենք հնարավոր ենք համարում, որ նրանց ձեռքի գործը լինի նաև Դադիվանքի՝ հենց Արզու-խաթունի կառուցած կաթողիկեի որմնանկարները[231], որոնցում դարձյալ փրկչի ու այլ սրբերի նկարներն են՝ սյուժետային տարբեր արտահայտություններով։

XIII դարի վերջը, ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Խաչենում հայտնի է մեծածախս շինությունների կառուցման բացակայությամբ կամ սակավությամբ։ Պատճառը մոնղոլական տիրապետության սաստկությունն էր. պարբերական ավերի ու կողոպուտի պայմաններում ժողովուրդն այլևս հնարավորություն չուներ խոշոր միջոցներ ներդնելու շինարարության մեջ։ Սակայն, այսուհանդերձ, չէր մեռնում ճարտարապետական ու քանդակագործական արվեստը։ Այն ապրում էր փոքրածավալ շինությունների՝ մատուռների կառուցման մեջ, հին հուշարձանների մասնակի վերանորոգումների ու վերակառուցումների ձևով և հատկապես խաչքարերի փոքրածավալ, բայց բարձրարվեստ բնագավառում։ Խաչքարերը, հայ արվեստի այդ բարձրարժեք գոհարները, միջնադարյան դաժան իրականության մեջ պահպանում էին ժողովրդի գեղարվեստական հանճարի անկանգ հոլովույթը։ Հնարավորություն չունենալով ձեռք զարկել մեծածավալ ու մեծածախս կոթողների, հայ ճարտարապետներն ու քարգործ վարպետները փոքրիկ այդ ստեղծագործությունների մեջ դրսևորում էին իրենց ամբողջ ձիրքն ու կարողությունը, իրենց բարձրաթռիչք արվեստի բոլոր կարելիությունները։ Եվ այդ է պատճառը, որ պատմական Հայաստանում սփռված բազմահազար խաչքարերը չեն կրկնում իրար, նույնիսկ նույն քարգործ վարպետի անունով հայտնի ստեղծագործություններից յուրաքանչյուրն ինքնատիպ է և չի կրկնում մյուսներին՝ ոչ թեմատիկ տեսակետից, ոչ էլ մանրամասների մեջ։

Խաչենի տարածքում խաչքարերի արվեստը, սկիզբ առնելով

230 Անդ, էջ 215—216։

231 Այս որմնանկարների մասին հանգամանորեն տե՛ս Մեսրոպ Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 86բ—87ա, բ։ Բ. Ուլուբաբյան, Խաչենի հին մշակույթի պատմության մի էջ, էջ 46—49։

վաղ միջնադարից[232], իր բարձր զարգացումն ապրեց VI—VII դարերում։ IX—X դարերից մեզ հասած նմուշների մեջ ցայտուն կերպով դրսևորված ենք տեսնում գեղեցիկ արվեստի տարրերը և աշխարհիկ կյանքի, բուսական ու երկրաչափական պատկերների այն նմուշները, որոնք XII—XIII դարերում պիտի դառնային տիրական՝ պայմանավորելով Խաչենի խաչքարերի առանձնահատուկ արժանիքները[233]։ Չխոսելով արդեն XIII դարում կանգնեցված բազմաթիվ, բազմապիսի և բոլոր դեպքերում բարձրարվեստ խաչքարերի մասին, չենք կարող լռությամբ անցնել Դադիվանքի երկու անզուգական խաչքարերի կողքով (կանգնեցված 1280-ական թթ.), քանի որ ականատեսների միահամուռ կարծիքով՝ դրանք իրենց տեսակի մեջ լավագույնն են այն բոլորից, որ երբևէ ստեղծել է հայ քարգործ վարպետի ձեռքը։ Ս. Ջալալյանցը նրանց մասին քարերի մասին, չենք կարող լռությամբ անցնել Դադիվանքի երկու հանգստարանի վանացն Սանահնի գերազանց էր քան զամենայն քանդակագործութիւնս ի շրջակայ վանորայս և ի գերեզմանատունս, սակայն առ սոքօք համարի այն խամաշէն և անարուէստ...»[234]։ Մի այլ հետազոտող համոզված է, որ այս խաչարձանների «քանդակների գեղեցկությունը, խորությունը, նրբությունը, մանր աշխատությունը և երկար ու համբերատար շինական տոկունությունը ոչ մի տեղ, ոչ մի վանքի մեջ իրենց հավասարը չունին»[235]։ Երկրաբան Հերման Աբիխը, դիտելով այս խաչքարերը՝ իր օրագրում նշել է, թե մեր աչքի առաջ է արտակարգն ու անկրկնելին, և այստեղ զգում ենք, որ բառերը պակասավոր են մեր զգացածն արտահայտելու համար[236]։

232 Դադիվանքի ու Խաթրավանքի շինությունների պատերի մեջ պահպանվել են հավասարաձև խաչերով հուշարձաններ։ Մարտունու շրջանի Ճարտար գյուղի մշակույթի պալատի հիմքը փորելիս հանվել է հին շինության մի խոյակ՝ հավասարաթև խաչերով։ Խաչերի այսօրինակ քանդակները, ըստ Գարեգին Հովսեփյանի համոզիչ կարծիքի, համընկնում են հայկական վաղ քրիստոնեական շրջանին՝ IV դարին (Գարեգին Հովսեփյան, Գերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության մեջ. «Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Գ, Նյու-Յորք, 1944, էջ 105)։

233 XII—XIII դդ. Խաչենի խաչքարերի զարդաքանդակների աշխարհիկ բովանդակության մասին տե՛ս И. Орбели, Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII—XIII веков. Избранные труды, Ереван, 1963.

234 Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, էջ 221։

235 Ս. Շ., Գանձասար և Խութա վանքերը, «Նոր-դար», 1891, № 123։

236 Г. В Абих, Геологические наблюдения в нагорной стране между Курой и Араксом. Записки Кавказского отдела Императорского географического общества, кн. 8, 1873, стр. 63.

Կարելի է Դադիվանքի խաչքարերի և Հայաստանի տարբեր մարզերում գտնվող միջնադարյան մեր համանման հուշարձանների փոխազդեցությունների մասին երկար խոսել։ Եվ ո՛չ միայն այս խաչքարերի, քանի որ Խաչենի մշակույթի այս բարձր մակարդակը քննության ենթակա ժամանակաշրջանում՝ արդյունքն ու մի ինքնատիպ դրսևորումն էր ամբողջ հայ մշակույթի զարգացման և, բնականաբար, չէր կարող արտահայտվել ինքնամփոփ երևույթի տեսքով։ Խաչենն անթիվ թելերով կապված էր հայրենիքի մյուս մարզերին ու կենտրոններին, ընդհուպ մինչև Կիլիկյան հայկական թագավորությունը։ Բավական է հիշել Վանական Վարդապետի՝ Հասան-Ջալալի այդ հովանավորյալի, կապը ժամանակի մշակույթի ազգակից գործիչների հետ, Մխիթար Գոշի, Կիրակոս, Վարդան, Գրիգոր պատմիչների և Խաչենի տերերի առնչությունները, Արևմտյան Հայաստանում նստող կաթողիկոսների ու թագավորների գործուն ուշադրությունը Խաչենի նկատմամբ, Արևմտյան Հայաստանի հոգևոր մշակույթի խոշոր գործիչ Հովհաննես Երզնկացու գործարար բարեկամությունը Դոփյան Հովհաննես եպիսկոպոսի հետ։ Հայտնի են Կոնստանտին Բարձրբերդցի կաթողիկոսի գրչագիր—նվերները Վերին Խաչենի հոգևոր կենտրոն Խաթրավանքին և Ուտիքի վանքերին, մյուս կաթողիկոսների սերտ թղթակցությունը Խաչենի առաջնորդների հետ։ Ըստ ավանդության՝ Վերին Խաչենի ամենանշանավոր ամրոցներից մեկը՝ Թարթառի աջ ափին, Դադիվանքի դեմ-դիմաց բարձրացած լեռան վրայի բերդը, վերակառուցվել է Կիլիկյան թագավոր Լևոն Ա-ի ծախքով, այդ պատճառով էլ նրա անունն էր կրում[237]։ Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանի հոգևոր կենտրոններում ստեղծված բազմաթիվ ձեռագրեր են բերվել Խաչեն՝ ինչպես նվիրատվությունների ու գնումների ճանապարհով, այնպես էլ թաթար-մոնղոլական արշավանքների ընթացքում Խաչենի իշխանների ձեռքով փրկվելու եղանակով։ Այս բոլորը չէին կարող իրենց ազդեցությունը թողած չլինել երկրամասի մշակույթի զարգացման վրա։ Խաչենի մշակութային-հոգևոր մթնոլորտն այդ ճանապարհով նոր ազդակներ էր ստանում, անընդհատ թարմանում ու բարելավվում։ Սակայն ինքն էլ երբեք պարտք չէր մնում, քանի որ այս մթնոլորտում ստեղծված արժեքները տարածվում էին, դառնում համազգային սեփականություն։

Մենք այստեղ հարկ ենք համարում քիչ ավելի հանգամանորեն

237 «Փորձ», 1880, № 5, էջ 134, ծան. 2։

խոսել Վերին Խաչենի ծնունդ երեք մշակութային նշանավոր գործիչների մասին, որոնց երախտաշատ գործունեությունը ծավալվել էր ոչ միայն հայրենի տիրույթներում, այլև նրա սահմաններից դուրս՝ Հաղբատում ու Սանահնում։ Նրանք երեքն էլ Ծարա իշխանական տան ժառանգներն էին, այդ հոգևոր հայրերին բնորոշ անունով. երեքն էլ կոչվում էին Հովհաննես և իրար հաջորդեցին վերոհիշյալ վանքերի առաջնորդական աթոռների վրա։

Միջնադարի մղձավանջում, սելջուկ թուրքերի և ապա նրանց հետքերով եկած թաթար մոնղոլների բնաջնջող անընդհատ հոսքի մեջ չոչնչանալու համար ժողովրդին պետք էր ուժերի մինչև այդ չեղած ու չտեսնված մի լարում։ Անհրաժեշտ էր օգտվել ամենաանշան, համարյա թվացող հնարավորությունից և վերականգնել կործանվածը, ստեղծել նորն ու անկործանելին։ Այս պայմաններում ժողովրդի ստեղծագործական ուժերին ուղղություն տվող շրջահայաց մարդիկ էին պետք, և ծնվում էին նրանք։ Մեկը վանք ու ամրոց էր կառուցում։ Մյուսը դպրոցներ էր բացում, ժողովում հոգևոր մշակույթի նշխարները։ Մի երրորդը վերականգնում էր ասպատակիչների սմբակների տակ հողին հավասարեցված շեներն ու այգեստանները։ Լինում էր և այնպիսին, որ գերմարդկային ուժով իր մեջ համադրում էր այս բոլորը, դառնում ժողովրդի ստեղծարար ուժի հավաքական պատկերը։

Ահա այդպիսի մեկը, եռանդաշատ ու անհանգիստ մի մտավորական, որի երկարատև կյանքը շուրջ ութ դար հետո մեզ է ներկայանում որպես անխոնջ նվիրումի մի գեղեցիկ օրինակ։ Նա վիմական արձանագրություններում իրեն կոչում է «Հովհաննէս Խաչենեցի», ուրիշները՝ «Հովհաննէս ի գաւառէն Խաչենոյ»։

Այս կից անունները նրան ու նրա հայրենակիցներին էին կրչում հայրենի Խաչենից դուրս, ուր նրանք լինում էին մայր ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքին ծառայելու իրենց շատաշրջիկ գործունեության ընթացքում։

Ինչպես արդեն տեսանք նախորդ գլուխներում, հայկական ավատական կարգերի անխախտ օրենքի համաձայն՝ իշխանապետի ավագ զավակն էր հոր փոխանորդն ու գահակալը։ Մյուսները, ճիշտ է, օժտված էին իշխանական իրավունքով, ունեին իրենց բաժին ժառանգություն-հայրենիքը, սակայն զբաղվում էին իշխանության պաշտպանության գործով։ Խաչենի իշխանությունը, պահպանելով հանդերձ հայ ավատականության այս անբեկանելի կարգը, մեզ ներկայանում է նաև իր մի այլ, համարյա անխախտ սո-

վորությամբ։ Այստեղ երկրամասի հոգևոր իշխանությունը ևս իշխանական տան ժառանգական իրավունքն էր։ Հետևապես իշխանի արու զավակներից մեկը (հաճախ նույնիսկ երկուսը) պետք է կուսակրոնության տրվի, որպեսզի իրավունք ունենար ժառանգելու գավառի հոգևոր առաջնորդությունը։ Կուսակրոնության տրվող իշխանազունները Խաչենում տարբերակվում էին. երեք ճյուղերից ամեն մեկն ուներ իր հոգևորական անունը, Ծարեցիները՝ հիմնականում՝ Հովհաննես, Հաթերքցիները՝ Գրիգոր, Խոխանաբերդի տերերը՝ ևս Հովհաննես (ուշ շրջանում՝ նաև Գրիգոր)։

Եկեղեցական թեմերի վրա ունեցած այս ժառանգական իրավունքն արդեն հզոր խթան էր հոգևոր կենտրոնների աննախադեպ զարգացման համար։ Իշխանական տան ժառանգությունն ու տոհմական տապանատունը դարձած վանքերը, նույն այդ իշխանական տան նյութական բազմակողմանի օժանդակությամբ, ստեղծում էին իրենց առաջնակարգ դպրանոցները, մատենադարանները ու գրչական արհեստանոցները։ Այսպիսով, վանքերը կատարում էին գավառների մշակութային կենտրոնների իրենց դերը, այսօրվա խոսքով ասած՝ ստեղծում կադրեր, ոչ միայն նույն վանքերի, այլև հարևան եկեղեցիների և բնակավայրերի հոգևոր կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար։

Խաչենի հոգևոր կենտրոններում իրենց կրթությունն ու դաստիարակությունն ստացած եկեղեցական գործիչները բարձր համարում ունեին Արևելյան Հայաստանում և նրա սահմաններից դուրս։

Բավական է հիշել թեկուզ XII դարի այնպիսի ականավոր վարդապետների, ինչպիսիք էին Գրիգոր Տուտեորդին ու Հաղբատի եպիսկոպոս Բարսեղը[238], հաջորդներից՝ Հովհաննես Վանականն ու Վարդանը, Ծարեցի Հովհաննեսներն ու Հաթերքի Գրիգորները և շատ ու շատ ուրիշներ, որոնք իրենց ամբողջ կյանքը անմնացորդ նվիրեցին հայ մշակույթի զարգացմանն ու առաջընթացին։

Վերին Խաչենի իշխանությանը վերաբերող այս բաժնում մենք առիթներ կունենանք հանգամանորեն խոսելու Ծարա ճյուղից սերված մշակութային ակնառու գործիչների մասին։ Իրարից տարբերելու համար մենք նրանց կկոչենք Հովհաննես Ա, Հովհաննես Բ և այլն։

Ծարեցի՝ մեզ հայտնի առաջին Հովհաննեսը Դոփի ամուսին Հասանի եղբայրն էր, մի եռանդաշատ մտավորական, որի գործունեության շառավիղները հայրենի Խաթրավանքից ու Դադիվանքից հասան Սանահին ու Հաղբատ։

Առանձնահատուկ տոհմի հարազատ ներկայացուցիչն էր նա, ծնված ու մեծացած պապերի օրրանում՝ Վերին Խաչենի լեռնաստանում։ Հենց այստեղ էլ նա ստացավ իր կրթությունն ու դաստիարակությունը, որ կարող էր լինել մոտավորապես XII դարի կեսերին, քանի որ նույն դարի 80-ականների սկզբին արդեն հասուն այր էր և Սանահնի վանքի առաջնորդ։

Մատենագրական տեղեկություններով ու վիմագրական հարուստ նյութերով կարելի է կազմել մեծ երախտավորի ապրած երկար կյանքի տարեգրությունը՝ Սանահնի առաջնորդությունից մինչև Հաղբատավանք գնալը, այնտեղից հայրենի Խաչեն վերադառնալը և, վերջապես, շուրջ քսանամյա առաջնորդությունը Հաղբատի վանքում, ուր նա, հոգևոր իր խնդիրները կատարելուց բացի, ծավալեց շինարարական մի այնպիսի գործունեություն, որի արգասիքներն այսօր էլ մեզ են ներկայանում որպես իր դարի հայ ճարտարապետական արվեստի վսեմագույն կոթողները։

Կիրակոս պատմիչը Հովհաննես Ա-ի առաքինությունների ու գործունեության մասին տարբեր առիթներով խոսելիս հիշում է և նրա մի խոշոր ծառայությունը, որի համար միայն արժեր, որ սերունդները չմոռանային նրան։ Այս Հովհաննեսն է եղել Սարգիս ամիրսպասալարի երկու որդիների՝ Զաքարեի ու Իվանեի դաստիարակը («սնուցող նոցուն իշխանացն»)[239]։ Չի կարելի Զաքարյան զորապետների սխրալից կենսագրության մեջ չտեսնել ու չգնահատել այն սքանչելի սերմերը, որ հմտորեն նրանց հոգու մեջ է ձգել Հովհաննես դաստիարակը։ Եվ հենց այն հանգամանքը, որ Զաքարեն, քեռորդուն Հաղբատի առաջնորդությունից վռնդելուց անմիջապես հետո, իր ուսուցիչ ու դաստիարակ Հովհաննեսին նշանակեց Արևելյան Հայաստանի ամենախոշոր թեմի առաջնորդը, վկայում է այդ օրերի Հայաստանի գերագույն իշխանապետի երախտագիտությունը Հովհաննեսի նկատմամբ։

Ասացինք, որ Հովհաննեսի անունը հիշատակված է XII դարի 70—80-ական թվականներից՝ որպես Սանահնի առաջնորդի։ Այս

238 1172 թ. Հաղբատում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում «տեառն Բարսղի արհիեպիսկոպոսի» մասին այսպես է գրված. «...ըստ կանխանկատ գիտութեան վերնոյ դիտմանն՝ եկեալ ի գաւառէն Խաչենոյ, եղեւ ըստ աջողելոյ հոգւոյն աստուծոյ՝ վերատեսուչ համայն քրիստոնէից Հայոց, որ ընդ գաւազանաւ թագաւորութեանս Վրաց» (Գարեգին կաթ., Յիշատակարանք, Ա, էջ 408։ Ալիշան, Հայապատում, էջ 382)։

239 Կիրակոս, էջ 171։

առաջին հիշատակությունների մեջ էլ նրա անունը կապվում է նաև հայոց ազգային ավանդների պահպանման համար մղվող պայքարի հետ։

Նա մեկն էր Հյուսիս-արևելյան Հայաստանի այն հոգևոր առաջնորդներից, որոնք XII դարի 70—80-ականներին համառ պայքար էին մղում բյուզանդական թագավորի ու եկեղեցու՝ հայոց հավատի դեմ կատարած ոտնձգությունների դեմ։ Գրիգոր Տուտեորդու, Մխիթար Գոշի, Դավիթ Քոբայրեցու և մյուսների հետ Հովհաննեսն ստորագրեց այն նամակները, որոնցով հյուսիս-արևելյան նահանգների վարդապետները դատապարտում էին բյուզանդական ոտնձգությունները և զգուշացնում Գրիգոր Տղա կաթողիկոսին՝ չընկնել հունաց «միություն» կոչված թակարդը։

Ապա մեկը մյուսի ետևից վիմական արձանագրություններն են խոսում Հովհաննեսի մասին. մեկում նա այգի է տնկում «մեծաւ աշխատութեամբ», և իր եղբայր Հասանի որդի վարդապետ Գրիգորն էլ, որ, անշուշտ, իր կրթածն ու դաստիարակածն էր, նրա այգին նորոգում է ու խաչ կանգնեցնում[240]։ Մի այլ արձանագրությամբ նրա շինարարական գործն է հիշատակվում։

Հովհաննեսի օրոք, 1181 թ. կառուցվեցին Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցին ու նրա գավիթը, ճարտարապետական մի հոյակերտ, որի իրականացնողն էր ինքը՝ Հովհաննեսը՝ «աւգնութեամբ ամիր Քրդին և վարդապետի մեծի Գրիգորի» (Տուտեորդի Խաչենեցու)[241]։

240 Հ. Ղրիմեցի, Պատմութիւն, էջ 150։ Ջալալեանց, Ա, էջ 80։

Ինչպես Ղրիմեցու, այնպես էլ Ջալալյանցի մոտ արձանագրության Հովհաննեսի բաժնում թվական է նշանակված Ռ—1251, որ, հավանաբար, թյուրիմացություն է։ Կ. Ղաֆադարյանը նկատել է, որ Ղրիմեցին (նաև նրանից արտագրող Ջալալյանցը) «տասնավորի և միավորի գրերը մոռացել է վերցնել» (Ղաֆադարյան, Սանահին, էջ 188, որտեղ հետազոտողը Գրիգորի բաժնի ՌԽԷ—1198-ի փոխարեն իզուր տեղը նշանակել է Ղրիմեցու ՌԻԷ—1178)։ Սակայն, մեր կարծիքով, իրավացի չէ գիտնականը, երբ այս և 1181 թ. արձանագրությունների մեջ որպես վանքի առաջնորդ հիշված Հովհաննեսին տարբեր է համարում Հովհաննես Խաչենեցուց և պարզապես սխալվում է, երբ այս (1198 թ.) արձանագրության երկրորդ մասի հեղինակ «քուերորդի պատրոնացն» Գրիգորին ու Գրիգոր Տուտեորդուն համարում է նույնական (տե՛ս «Սանահին», էջ 51)։ Ինչպես իր տեղում տեսանք, «քուերորդին» Զաքարեի ու Իվանեի քույր Դոփի և (Հովհաննես Խաչենեցու եղբայր) Հասանի որդին է։

241 Ղաֆադարյան, Սանահին, էջ 104։ Սույն արձանագրության՝ Սանահնի Քոթուկում՝ գրանցված տարբերակի մեջ «վարդապետի մեծի Գրիգորի»-ի փոխարեն գրված է «վարդապետի մեծի թագաւորին» (տե՛ս Մատենադարանի ձեռ. № 3032, թ. 70), որ գրչական սխալ պիտի համարել։

Երեք տարի հետո Գրիգոր Տուտեորդին իր հայտնի խաչարձանի վրա հիշատակագրում է վանքի կաթողիկեի նորոգումը Հովհաննեսի առաջնորդությամբ[242]։

Հովհաննեսը Սանահնի առաջնորդ է հիշվում հետագայի մի շարք արձանագրություններում՝ մինչև 1191 թվականը[243]։

Նկատի առնելով, որ 1195 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում Հովհաննեսն արդեն Հաղբատավանքի առաջնորդն է[244], պետք է մտածել, որ նա Սանահնից այստեղ է փոխադրվել 1191 ու 1195 թթ. արանքում։ 1196-ին, ըստ Կիրակոսի տեղեկության, տեղի է ունենում Մխիթար Գոշի համար կառուցված նոր Գետիկի վանքի նավակատիքը. «Անդ էր և եպիսկոպոսն Հաղբատայ՝ Յոհաննէս, առաքինի և սուրբ այր»[245]։

1198 թ. մի արձանագրությամբ նա դեռևս եպիսկոպոս էր Հաղբատում։ Ինքն այգի էր գցել Սևորդյաց ձորում, մի խաչքարի վրա արձանագրել այդ մասին։ Նրա գրի տակ էլ վանքի վարդապետ Գրիգորը թողեց իր արձանագրությունը. «Ի ՌԽԷ (1198) թվին ես՝ Գրիգոր վարդապետ քուերորդի պատրոնացն, նոր շինեցի զայգիս և կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Հովհաննէսի, վասն յիշատակի նոցա և ինձ»[246]։

Այսքանից հետո է, որ Հաղբատի առաջնորդ Հովհաննեսը, ըստ Կիրակոսի տեղեկության, «եթող զաթոռն և գնաց ի Խաչեն»[247]։

Ինչո՞ւ աթոռը թողեց ու գնաց։ Կիրակոսի պատմության մեջ այս հարցի պատասխանը չկա։ Հովհաննես Ղրիմեցին, չգիտես որտեղից քաղելով, այդպիսի պատճառ է համարում Գրիգոր վարդապետի (որին նա թյուրիմացաբար Տուտեորդի է համարում) «խարդավանքները». իբր թե, «զզուեալ ի մախանաց» Գրիգորի, Հովհաննեսը թողեց Հաղբատը և գնաց ոչ թե Խաչեն, այլ Սանահին, քանի որ Սանահնում 1205-ին պիտի քանդակեր հյուրատուն կառուցելու մասին իր արձանագրությունը[248]։ Սակայն, անկախ նրանից,

242 Կ. Ղաֆադարյան, Սանահին, էջ 180։

243 Անդ, էջ 105—106։

244 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 383, նաև՝ Զարբհանալյան, Մատենադարան թարգմանութեանց նախնեաց (Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 448, Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 911. գրեցաւ «գիրքս այ ի գաւառիս Զորոյ գետ, ի վանքս Հաղբատ... յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի»։

245 Կիրակոս, էջ 216։

246 Ջալալեանց, Ա, էջ 80, Ղաֆադարյան, Սանահին, էջ 188։

247 Կիրակոս, էջ 174։

248 Ղրիմեցի, Պատմութիւն, էջ 154։

որ ոչ մի աղբյուր չի հաղորդում Հովհաննեսի՝ Խաչեն գնալու պատճառը, Ղրիմեցու վարկածն սխալ է իր մանրամասներով. Գրիգոր վարդապետը, ինչպես հետո կտեսնենք, Հովհաննեսի եղբորորդին էր, ոչ թե Տուտեորդին, և Հովհաննեսն իսկապես Խաչեն գնաց, ոչ թե Սանահին...

Խաչենում Հովհաննեսը մնաց իր ոգուն ու կոչմանը հարազատ. օգնեց հայրենի գավառի հոգևոր մշակույթի զարգացմանը, բարեկարգեց Դադի վանքի ու Խաթրավանքի թեմերը։ Այստեղ նա, հավանաբար, մնաց միայն մի քանի տարի, որովհետև 1198-ին դեռևս Հաղբատում էր ու 1205-ին էլ Սանահնում պիտի լիներ ու պիտի արձանագրեր իր շինարարական գործերը։ Եվ այս երկու թվականների արանքում նա կառուցում է Խաթրավանքի կաթողիկեն, նրա պատի վրա թողնելով (1204) այն արձանագրությունը, որով պատմում է, թե ինչպես կառուցեց եկեղեցին, այնտեղ հավաքեց խաչեր, խաչքարեր, ձեռագիր մատյաններ, տնկեց Ջոթաց այգին, ապա նոր մի այգի (մատաղիս) ևս գցեց և այս բոլորը, Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի միջնորդությամբ, հանձնեց իր եղբայր Հասանին ու նրա որդիներին[249]։

1205 թ. Հովհաննեսը նորից Սանահնում էր։ Նա այստեղ արդեն կառուցել էր վանքի հյուրատունը, նրան նվիրելով Կոշաձորի այգին և «Ուռնագոմուց կեսն»։ Այս բոլորը պատմում է նրա կանգնեցրած մի գեղեցիկ խաչքարի արձանագրությունը. «Ի թվականիս հայոց ՈԾԴ (1205), ի թագաւորութեանս Վրաց Թամարին, յամիրապասալարութեանս Զաքարի և Իւանի եղբարց հարազատաց, որդեաց մեծին Սարգսի, ես՝ հայր Յոհաննէս գաւառաւ Խաչինեցի, եկեալ բնակեցա ընդ Սրբո Աստուածածնիս եւ շինեցի զհիւրատունս...» և այլն[250]։

249 Այժմ այս վանքը դեռևս կանգուն է (Վաղուհասից 6—7 կմ դեպի արևմուտք, անտառի մեջ), սակայն ճաքճքված պատերով, որովհետև կտրին բուսած դարավոր ծառերի արմատները մխրճվել են պատերի ու ծածկի մեջ, խարխլել վաղնջական ամրությունը։ Խաթրավանքի այս տաճարի ամենաուշագրավ կողմերից մեկն է այն հանգամանքը, որ Հովհաննես շինարարը նրա պատերի մեջ հագցրել է հին խաչքարեր ու զարդաքանդակված արձանագրություններ ունեցող քարեր։ Եվ, այսպիսով, տաճարը դարձել է գավառի յուրատեսակ թանգարանը։

250 Ղաֆադարյան, *Սանահին*, էջ 183—184։

Ջալալյանցը (Ա, էջ 28) և Մեսրոպ Մագիստրոսը (էջ 113) այս արձանագրության թվական են արտագրել ՈԶ (1157), որ չի համապատասխանում Թամարի թագավորության (1184—1213 թթ.) ժամանակին (տե՛ս Ղաֆադարյան, *Սանահին*, էջ 184)։

Այս անգամ արդեն Հովհաննեսը Սանահնում երկար չի մնում, որովհետև Զաքարե ամիրսպասալարը նրան Հաղբատի առաջնորդն է դարձնում՝ այնտեղից վռնդված իր քեռորդու (Դոփի որդի Գրիգորիսի) փոխարեն։

Ո՞ր թվականին է եղել այս նշանակումը։ Կիրակոսի պատմությունից հայտնի է, որ այն կատարվել է Լոռեի այն ժողովից հետո, որ Զաքարեն էր գումարել իր եկեղեցական նորամուծությունը հաստատելու համար։ Իսկ ե՞րբ է գումարվել Լոռեի ժողովը։ Կիրակոսը նրա գումարման տարին չի նշում։ Այն պետք է պարզել օժանդակ փաստերի միջոցով։ Հետազոտողները տարբեր տարեթվեր են ընդունում, առանց ասելու, թե ինչի՞ հիման վրա։ Այսպես, Հովհաննես Ղրիմեցին Լոռեի ժողովի տարի է համարում ՈԾԴ (1205) թվականը և սրան հաջորդած Անիի ժողովի տարի՝ ՈԾԵ (1206) թվականը[251]։ Համազասպ Ոսկյանը ևս այն կարծիքին էր, թե Լոռեի ժողովը գումարվել է 1205-ին[252]։ Ոսկյանի կարծիքով՝ Անիի ժողովն էլ գումարվել է 1207-ին[253]։ Կ. Ղաֆադարյանը համաձայն չէ նախորդների հետ և նշում է, թե «հաստատուն վկայություն ունենք այն մասին, որ ... Հովհաննեսը վանքի (Հաղբատի—Բ. Ու.) առաջնորդ է դարձել Լոռվա (Լոռեի—Բ. Ու.) 1208 թվականի ժողովից հետո»[254]։ Սակայն, դժբախտաբար, գիտնականն իր գտած վկայության տեղը չի նշում։

Անիի ժողովի գումարման տարեթիվը քննության առարկա հարցի համար անկարևոր համարելով, մենք պետք է ընդունենք, որ Լոռեի ժողովը տեղի է ունեցել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին, բայց երբե՛ք 1208-ին։

Սրա համար կա արդեն շատ հաստատուն տեղեկություն. 1207 թ. Հաղբատում, «ընդ հովանեաւ Սրբոյ Նշանին» ընդօրինակվել է մի Աստվածաշունչ՝ «յառաջնորդութեան սուրբ հայրապետիս մերոյ տեառն Յոհանիսի, ի թուիս հայոց ՈԾԶ (1207)[255]։ Այս նշանակում է՝ Լոռեի ժողովը պետք է տեղի ունեցած լիներ 1207 թ. առաջ, որպեսզի նրանից հետո Զաքարեն «քուէրորդի» Գրիգորիսին

251 Ղրիմեցի, *Պատմութիւն*, էջ 86։

252 Հ. Ոսկյան, *Մատենագրական քննություններ*, Վիեննա, 1926, էջ 135։

253 Անդ, էջ 136։

254 Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 30։

255 Գարեգին կաթողիկոս, *Ցիշատակարանք*, Ա, էջ 735։ Սույն ձեռագրի մասին մանրամասները տե՛ս Գարեգին Հովսեփյան, *Նյութեր և ուսումնասիրություններ*, պրակ Ա, էջ 71 և հետ.։

քանտարկեր, և փոխարենը Հաղբատի առաջնորդ նշանակեր «քուէրորդու» հորեղբայր Հովհաննեսին, և այս Հովհաննեսն էլ գործի անցած լիներ, որպեսզի գրիչը 1207-ին նրա անունը հիշեր որպես վանքի առաջնորդի։

Ուրեմն, Հովհաննես վարդապետը Հաղբատավանքի առաջնորդ է դարձել 1205-ին կամ ամենաուշը 1206-ին։

Սրանից հետո Հովհաննեսը, որ արդեն պետք է առնվազն 65—70 տարեկան ծերունի լիներ, կապվում է միայն Հաղբատի հետ։ Այստեղ են անցնում նրա կյանքի վերջին քսան տարիները, որոնց թողած հիշատակների հիման վրա միայն հետազոտողները նրան կոչում են խոշոր շինարար ու մեծ երախտավոր։

Կիրակոսը նրա գործունեությունից առանձնացնում և մի հատուկ սքանչացումով է պատմում Հաղբատի վանքի մեծ գավթի շինարարությունը. «...քակեաց զգաւիթն փոքրագոյն, որ ի դուռն կաթողիկէին Հաղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուած, որ զարմացուցանէ զտեսողսն հիացմամբ»[256]։ Ապա՝ «Եւ այր առաքինի էր Յովհաննէս, և բազում գործս յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»[257]։

Եվ, իսկապես, միայն այս գավիթը բավական կլիներ, որպեսզի գալիք սերունդները երախտագիտությամբ հիշեին նրա շինարարին։

Հետազոտողները, առանց բացառության, գտնում են, որ «Հաղբատի մեծ գավիթը հայ ճարտարապետության ամենափառավոր կոթողներից մեկն է», «իսկ գավիթների ճարտարապետության մեջ՝ առաջինը»[258]։

Հաղբատի հին տաճարին կցված գավիթը՝ կառուցված նույն վանքի Հովհաննես Ա եպիսկոպոսի կողմից, իր հոյակապ մեծությամբ, իրար խաչող վիթխարի կամարներով և կրկնակի գմբեթների բարձրությամբ մի գլուխգործոց է միջնադարյան հայ ճարտարապետության մեջ[259]։

Ե՞րբ է կառուցվել այս հուշարձանը։ Հետազոտողներն իրարամերժ պատասխաններ են տալիս այս հարցին։ Կ. Լ. Հովհան-

256 Կիրակոս, էջ 98։

257 Անդ, էջ 174։

258 Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, էջ 66։

259 Կ. Ղաֆադարյան. Հաղբատ, էջ 32։

նիսյանը գտնում է, որ «Գավիթը հիմնված լինելով 1185 թ., այն հետագա մասնակի փոփոխություններից հետո ստանում է ներկայիս ձևը»[260]։ Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը գավթի կառուցման տարի են համարում 1201 թվականը[261]։ Կ. Ղաֆադարյանն էլ, մերժելով այս կարծիքները, որոնք ակնհայտորեն սխալ են, քանի որ հակասում են մատենագրական ու վիմագրական տվյալներին, հայտնում է հետևյալ կարծիքը. «..մեծ ժամատան կառուցման սկիզբը պետք է համարել 1208 թվականը, Հովհաննես Խաչենեցու առաջնորդության առաջին տարին, որովհետև երեք տարի հետո... այդ ժամատունն արդեն կառուցված էր առնվազն մինչև մուտքի ճակատակալ քարը, որի վրա կա 1210 թվականի արձանագրություն, իսկ ժամատան ավարտման թվականը որոշելու առայժմ ոչ մի հիմք չունենք, բայց գիտենք, որ 1210-ական թվականներից այն կողմը չի անցել». «Նշանակում է, Հաղբատի մեծ ժամատունը կառուցվել է ...1208-ից հետո, 1210-ական թվականներին»[262]։

Կ. Ղաֆադարյանի մոտ ժամատան կառուցման սկիզբը դրվում է 1208-ից հետո, որովհետև նրա կարծիքով՝ Հովհաննեսը վանքի առաջնորդ է դարձել այդ թվականին։ Սակայն մենք տեսանք, որ Հովհաննեսի առաջնորդությունն սկսվում է առնվազն երկու տարի վաղ՝ 1206-ին։

Ճշգրտման կարիք ունի Կ. Ղաֆադարյանի կարծիքի երկրորդ մասը՝ գավթի շինարարության ավարտման տարին, որ հասկացվում է 1210-ից հետո, ավելի ճիշտ 1210-ականներին։ Սակայն ինքն էլ հիշում է, որ ճակատակալ քարի վրա, մուտքի կամարի տակի ամբողջ տարածությունն զբաղեցնում է Զաքարեի ու Իվանեի մեծ արձանագրությունը 1210 թվականից։ Ուրեմն, 1210-ականներն էլ վերացական պատկերացնել չի կարելի, քանի որ Զաքարեն մահացել է 1212-ին, իսկ արձանագրությունը գրված է նրա անունից։

Բայց, ամենակարևորը, մի՞թե հնարավոր է պատկերացնել, թե շենքն անավարտ էր, երբ Զաքարեն ու Իվանեն նրա վրա դրին իրենց 19 տողանոց արձանագրությունը։ Դա անհնարին է։ Հետևա-

260 Կ. Լ. Հովհաննիսյան, XII—XIX դարերի հայկական ճարտարապետությունը. «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 228։

261 В. Арутюнян, В. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, էջ 57։

262 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 32։

պես, չի կարելի մեծ գավթի ավարտման տարին 1210-ից հետո դնել։ Ուրեմն, կառուցումն սկսվել է 1206-ին, ավարտվել 1210-ին։

Այս առումով էլ ավելի հավանական ենք համարում Կ. Ղաֆադարյանի ենթադրությունն այն մասին, «որ ժամատան կառուցման արձանագրությունը դեռևս չգրած, Զաքարեի հրովարտակին են հատկացրել նրա (գավթի—Բ. Ու.) պատվավոր տեղը»[263]։ Սա միանգամայն հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք, որ Զաքարեն ու Իվանեն էին Հաղբատի ու շրջակայքի պատրոնները, գավիթը կառուցող Հովհաննեսի սաներն ու հավանավորները և, մանավանդ, եթե հաշվի առնենք այն արտակարգ համեստությունը, որ բնորոշ էր Հովհաննես եպիսկոպոսին։

Հովհաննեսի գործունեության այս վերջին կամ Հաղբատյան շրջանը լի է մշակութային մի շարք խոշոր երևույթներով։ Նրա օրոք և նրա գլխավորությամբ վանքը շարունակում էր կատարել գրչական խոշոր կենտրոնի իր դերը։ Այստեղ, հենց այս տարիներին ստեղծվում են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մեզ հասած օրինակներն աչքի են ընկնում գրչական ու մանրանկարչական բացառիկ արժանիքներով։ Այս տեսակետից եզակի երևույթ է «Գետաշենի» անվամբ հայտնի այն Ավետարանը, որը 1211 թ. «ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ, յառաջնորդութեան տեառն Յոհաննիսի սրբասիրի»[264]։ Մի այլ ձեռագիր՝ Տոնապատճառ, ստեղծվում է «ի թուականութեանս հայոց ՈԿԷ (1218) և ի հայրապետութեան սուրբ ուխտիս Հաղբատայ տեառն Յովհաննիսի հեզի և առաքինւոյ և [ի] սպարապետութեանս Հայոց և Վրաց Իւանեի և մանկանն Շահնշահի...»[265]։ 1220-ին ընդօրինակված մի ձեռագրի գրիչը խնդրում է հիշել Հովհաննէս արհեպիսկոպոսին[266]։ Գարեգին կաթողիկոսը հանձին այս արհեպիսկոպոս Հովհաննիսի ենթադրում էր «Կայենո բերդի շինողին»[267], այսինքն՝ Հովհաննես Բ-ին, որ Ա-ի հաջորդն էր և նրա եղբորորդին։ Սակայն քիչ հետո

263 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 32։

264 Մատենադարանի ձեռ. № 6288, թ. 348բ։ Ձեռագրիս նկարագրությունը տե՛ս «Արցախ», էջ 262—263, ընդարձակ ու հանգամանալից քննությունը՝ Գարեգին Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Ավետարանը). «Նյութեր և ուսումնասիրություններ», պրակ Ա, էջ 41—75։

265 «Բազմավէպ», 1887, էջ 107—108, Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 321ա։ Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 795։

266 Մատենադարանի ձեռ. № 1912, թ. 228ա։

267 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 810։

կտեսնենք, որ ոչ միայն 1220-ին, այլև առնվազն մինչև 1225 թ. Հովհաննես Ա-ն էր Հաղբատի առաջնորդը։ Հետևապես Հովհաննես արհեպիսկոպոսը նույն ինքը Հովհաննես Ա-ն է եղել։

Հովհաննես եպիսկոպոսի այս տարիների վաստակի մեջ պետք է մտցնել նաև նրա վանքանպաստ գործունեության մի ուրիշ կողմը. երբ նրա գործուն միջամտությամբ Հաղբատում շինարարական ու վերանորոգչական հսկայական աշխատանք են կատարում և վանքին մեծամեծ ընծաներ տալիս ժամանակի մեծատունները՝ Տփղիսի հայ իշխանավորներից սկսած մինչև Վաչուտյանց և Ուքանանց տոհմերի պայազատները[268], մինչև իր հայրենի Խաչենի իշխաններն ու իշխանուհիները[269]։ Եվ իզուր չէ, որ վերջիններս իրենց արձանագրությունների մեջ Հովհաննեսի անունը հիշում էին մի առանձնահատուկ երախտագիտությամբ՝ ոչ միայն որպես վանահոր։ Այսպես, ոմն Հովսեփ, որ Հաղբատում ՈՄԸ (1209) թ. խաչքար է կանգնեցրել «Յառաջնորդութեամբ տէր Յովհաննիսի և ի տէրութեան Զաքարէի և Իվանէի», խնդրում է հիշել նշված անունները և «եւս առաւել զՅովանէս»[270]։

Սակայն, այսպես թե այնպես, Հովհաննես Ա-ը հայտնի է որպես մեծ շինարար և դժվար է պատկերացնել, թե նա հանգիստ պիտի նստեր Հաղբատի մեծ տաճարին կից գավթի կառուցումից հետո։ Պահպանված արձանագրությունները պատմում են, որ 1211 թ. նորոգել է Հաղբատյան համակառույցի 1025 թ. շինված Սուրբ Գրիգոր եկեղեցին։ Այդ եկեղեցու ճակատին, մուտքից վերև՝ նորոգմանը նվիրված արձանագրությունն է. «Թվին ՈԿ (1211) նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յոհանիսի եւ միաբան եղբարցս»։ Ապա նորոգումը հիշատակվում է Հովհաննեսի 1221 թ. գրած, իր գործերն ընդհանրացնող արձանագրության մեջ։ Ս. Գրիգոր եկեղեցու վերանորոգումը, ըստ երևույթին, վերակառուցման պես մի բան է եղել, եթե, ինչպես Կ. Ղաֆադարյանն է իրավացի կերպով ենթադրում, նորոգման հետ միասին, եկեղեցուն ավելացվել են ներքին ավանդատները։ Այլապես դժվար էլ է պատկերացնել, թե Հովհաննես եպիսկոպոսն իր գլխավոր արձանագրության մեջ, մեծ գավթի կառուցման կողքին հիշեր փոքրածավալ մի գործ[271]։

1214 թ., Խաչենի իշխանաց իշխան Վախտանգի մահից հետո,

268 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 172—174, 230—231 ևն.։

269 Կիրակոս, էջ 215—216։

270 Ղրիմեցի, Պատմութիւն, էջ 82։

271 Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 60։

նրա կնոջ նախաձեռնությամբ սկսվում է Վերին Խաչենի առաքելադիր Դադի վանքի մեծ եկեղեցու կամ կաթողիկեի կառուցումը։ Հետազոտողների կողմից արդեն նկատվել է, որ այս շենքի մեջ իրենց կիրառությունն են գտել Հաղբատի Ս. Նշան եկեղեցու ճարտարապետական վսեմ արժանիքները։ Մեսրոպ Մագիստրոսն այս մասին խոսելիս համոզիչ փաստարկով հաստատում է, որ Հովհաննես Խաչենեցին Հաղբատում կառուցած մեծ ժամատան մեջ իրականացնելով Դադի վանքի հին բազիլիկի ճարտարապետական որոշ տարրերը[272], հետո էլ Հաղբատի կաթողիկեի փորձն է կիրառել Արզու-խաթունի կառուցած եկեղեցու մեջ՝ Դադի վանքում։ Մեսրոպ Մագիստրոսի կարծիքով՝ Հովհաննեսն առհասարակ Դադի վանքի շինարարության գլխավոր խորհրդատուն է եղել, և «նրա առաջարկով է Դադի վանքի կաթողիկեին Սուրբ Խաչ կամ Սուրբ Նշան անունը տրվել, հետևողությամբ Հաղբատի Սուրբ Նշանին»[273]։

1221 թ. Հովհաննես եպիսկոպոսն իր կառուցած մեծ գավթի ներսում, արևելյան պատի վրա, քանդակում է մի արձանագրություն, որը մասամբ թվարկում է Հաղբատավանքի համար կատարած իր գործերը. «Յամս աստուածազաւր թագաւորացս Թամարա եւ որդո իւրո Գեորգէ եւ Բ(2) հարազատաց Զաքարէի եւ Իւանէի, հրամանաւ տոցա կոչեցա յեպիսկոպոսութիւն սբ աթոռոյս Հաղբատա ես՝ Յոհանէս ի Խաչենոյ։ Ներողութեամբ այ կացեալ իմ ամս բազում յառաջնորդութեանս, սպասաւորեցի սրբոցս ի շինութիւն եւ յառաջդիմութիւն տանս այ, նախ՝ ի ձեռն շինուածոց ի սբ Նշանիս, մատենս, ի սպաս զարդուց, զկաթողիկէս սալել եւ զդուռնիս կազմել, զսբ Գրիգորն նորոգել, զգաւիթս շինել զգաւթի սբ սեղանոյն եւ զԳ (3) սբ Նշանս... ՈՀ» (1221)[274]։

Հայտնի չէ, թե ե՞րբ է մահացել Հովհաննես Ա Խաչենեցին։ Հետազոտողները 1221-ի արձանագրությունից հետո խառնում են նրա և հաջորդի՝ Հովհաննես Բ-ի գործերը։ Սակայն նկատի առնելով, որ Հաղբատում իսկապես նրան անմիջապես հաջորդել է իր եղբորորդի Հովհաննեսը, որը միաժամանակ քվերորդին էր Զաքարեի ու Իվանեի[275], Հաղբատից առաջ էլ Սանահնի առաջնորդ եղած,

272 Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, *Հայկական երեք մեծ վանքեր*, էջ 88։

273 *Անդ*։

274 Ղափաղարյան, *Հաղբատ*, էջ 180։

275 Կիրակոս, էջ 99։ «Եւ յետ նորա (Յովհաննիսի Խաչենեցւոյ.—Բ. Ու.) միա

կարելի է առաջինի մահվան տարին մոտավորապես որոշել նրանով, թե երկրորդը մինչև ե՞րբ է մնացել Սանահնում։ Հովհաննես Բ-ը Սանահնում էր մինչև 1225-ը հաստատապես. նա 1225 թվականից այնտեղ ունի արձանագրություն, որով հայտնում է, որ «Ի թվի ՈՀԴ» (1225) մատուռ է կառուցել[276]։ Այս Հովհաննեսին Սանահնում անմիջապես հաջորդած Գրիգոր եպիսկոպոսին վերաբերող առաջին արձանագրությունն էլ 1229-ից է[277]։ Նշանակում է՝ Հովհաննես Բ-ը Սանահնից Հաղբատ է տեղափոխվել 1225—1229 թթ. արանքում, և հենց այս ժամանակ էլ մահացած է եղել Հովհաննես Ա-ը։

Ստուգապես հայտնի չէ Հովհաննես Խաչենեցու գերեզմանի տեղը։ Հայտնի չէ՝ նրա վրա քարե՞լ են տապանաքար, թողե՞լ են տապանագիր[278]։ Ինքը կենդանության օրերում, ամենաեռանդունը եռանդավորների մեջ և համեստագույնը համեստներից, դասակիցներին խնդրում էր հիշել նախ և առաջ իր կառուցածները, իր խաչարձաններն ու հավաքած մատյանները. «իմ խնդիր է միաբանացս՝ զՍուրբ Յակոբայ տօնի կիրակէն իմ սուրբ նշանացս տօն կատարէն»։

Իսկ այդ կառույցներն ու նորոգածները, կանգնեցրած խաչարձաններն ու հավաքած մատյաններն այնքան շատ են, որ պարզապես թվում են անհնար՝ սովորական մի կյանքի համար։ Բավական է, թեկուզ, հիշել ամենակարևորները՝ Սանահնի եկեղեցին՝ գավթով հանդերձ, խաթրավանքի գլխավոր տաճարը, Հաղբատի

Յովհաննէս՝ քուերորդի իշխանացն Զաքարէի և Իւանէի և եղբօրորդի առաջնոյ Յովհաննիսին»։

276 Կ. Ղափաղարյան, *Սանահին*, էջ 170։

277 *Անդ*, էջ 130։

278 Ռ. Երզնկյանցը Հաղբատում գտնված մի խաչարձանի ճակատին կարդացել է. «Այս է հանգիստ տր Յոհաննիսի»։ Հետազոտողն այս խաչարձանը համարել է Հովհաննես Ա Խաչենեցու տապանաքարը (տե՛ս նրա՝ «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի», Վաղարշապատ, 1886, էջ 64)։ Եվ Գարեգին Հովսեփյանն էլ, դա համարելով անքննելի ճշմարտություն, ավելացրել է. «նա թաղված է Գեորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան յուր գեղարվեստասեր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի ավելի մեծ խաչարձան կանգնած...» (տե՛ս նրա՝ Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց, էջ 67)։ Սակայն, դժբախտաբար, ոչ Երզնկյանը, ոչ էլ նման դեպքերում բծախնդիր Գարեգին Հովսեփյանը, չեն ասում, թե իրենք ինչպես են Հաղբատի առաջնորդ եղած մի շարք Հովհաննեսներից Հովհաննես Ա-ին տալիս հիշյալ տապանաքարը, մանավանդ, երբ նրա վրայի գրի մեջ բացակայում է այդ Հովհաննեսին երկրորդ անվան պես կպած «Խաչենեցի» տարբերակիչը։

մեծ ժամատունը, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ բավական կլիներ գալիք սերունդների երախտագիտությունը նվաճելու համար։

* * *

Հովհաննես Ա-ի հետքերով գնաց նաև նրա եղբորորդին՝ անվանակից հոգևորական ականավոր գործիչը։ Հայրենի Վերին Խաչենի վանքերում կրթվելուց—դաստիարակվելուց հետո նա աշխատեց նույն վանքերի միաբանների հետ, ապա եղավ Սանահնի առաջնորդը։ Այստեղ նրա առաջին արձանագրությունը 1221-ից է[279], վերջինը՝ 1225-ից[280]։ Ապա Հաղբատի առաջնորդարանում փոխարինում է հորեղբորը, կառուցում «բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ և ընդ Սանահինն»[281], որով նպատակ ուներ վանքերը պաշտպանել խորեզմցիներից։ Նրա օրոք նորոգվում են վանական համալիրները, ստեղծվում բարձրարժեք ձեռագիր մատյաններ։

Հովհաննես Բ-ին էլ, որոշ ընդմիջումից հետո, փոխարինում է նրա եղբայր Գրիգորի որդի Հովհաննես Գ-ը, որի հաղբատյան գործունեության սկզբի մասին տարակարծություններ կան[282]։ Մեզ թվում է՝ նա Հաղբատի առաջնորդ է դարձել 1257-ին՝ փոխարինելով Համազասպ Անեցուն, և այդ պաշտոնը վարել մինչև դարի վերջը՝ կատարելով վանքանպաստ բազմաթիվ գործեր. կառուցել է վանքի փոքր գավիթը, գրատունը՝ սրահով, լիճը, Ամենափրկիչ խաչքարը։ Հովանավորել է Վարդան Վարդապետին, Հովհաննես Երզնկացուն[283]։

Հովհաննես Գ-ը Վերին Խաչենի ծնունդն էր և կյանքում երբեք չկտրվեց հայրենի լեռնաստանից, նրա հոգևոր կենտրոններից ու մշակութային կյանքից։

Հովհաննես Գ-ի մասին հայրենի նահանգում պահվել է մի կարևոր արձանագրություն դարի 70-ական թվականներից։ Ահա

279 Կ. Ղաֆադարյան, *Սանահին*, էջ 133։

280 Անդ, էջ 170։

281 Կիրակոս, էջ 99։

282 Գ. Հովսեփյան, *Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց*, էջ 67, Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 276։

283 Ծարեցի Հովհաննես անունով եպիսկոպոսների կյանքի և գործի մասին ավելի մանրամասնորեն տե՛ս Բ. Ալչուքաբյան, Ծարեցի իշխանազունները Հաղբատ և Սանահին վանքերի առաջնորդներ. «Էջմիածին», 1974, ԺԱ, ԺԲ։

այդ արձանագրությունը. «Թվ. ՉԻԸ (1279) ի հայրապետութեան տէր Աթանասի, ի պարոնութեան Դաւթին որդոյն Ուհան երէցու. Ուհանէս շինեցաք զՍուրբ Սարգիս կենաց բարեխաւս...»[284]։

Աթանասը Դադի վանքի բազմամյա առաջնորդն էր։ Իսկ թե Հովհաննեսն ինչու կոչված է պարոն և «Դավթի որդի», դժվար է բացատրել, քանի որ, ինչպես երևում է, կամ արձանագրողն է գրից ու Ծարա իշխանական գերդաստանից հեռու մի մարդ եղել, կամ էլ Մակար Բարխուտարյանցն է անփույթ արտագրել, որն առավել հավանական է։

Հովհաննես Գ-ի ինքնագիր վերջին արձանագրությունը պահպանվել է Ծարա Ս. Աստվածածին վանքում։ Այստեղ, երևի խոր ծերության հասած մեր վարդապետը պատմում է, որ, երբ թաթարմոնղոլները տիրել-բռնել էին ամբողջ աշխարհը՝ իրենց հայրենի երկրներից մինչև «յօվկիանոս ծով և Ստամպուլն» և ծանրածանր հարկերով, գերեվարություններով ու ավեր-ավարով տանջում էին ժողովուրդներին,— ահա «յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տէր Յովհաննէս Դոփեան տրուպ և նուաստ և տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն առաջնոյ աթոռն հռչակելի Հախպատ»[285]։ Ապա մեծ վարդապետը պատմում է իր դարձը հայրենի Ծար՝ ավագ եղբայր, քաջ զորական և «հռչակաւոր արիացելոյն» Հասանի տունը, ուր արդեն Ծարա տիրակալն էր Հասանի որդին՝ Գրիգոր իշխանը՝ Սյունյաց երկրի մեծ իշխան Տարսայիճի Ասփա դստեր ամուսինը։ Հովհաննեսը պատմում է ապա, թե ինչպես Ծարում տեսավ մի ձորակ, ուր «հոսէին ջուրք աստի և անտի և միջի նոցա բլրակ մի գեղեցիկ։ Ես հաճեցաւ ընդ սա և մտա անապատս և սկսա շինել մատուռ մի։ Եւ յայնմ խորհրդի եկն Գրիգոր եղբաւրորդի մեր և իշխան գաւառիս և այլ շատ-շատ կողմանց իշխեցող և կամեցաւ շինել զՍուրբս Աստուածածինս ի բարեխաւս մեզ և ամենայն քրիստոնէից։ Ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցոյս ի թուին ՉՄ (1301)[286]։

Հավանաբար հայրենի տիրույթը վերադարձած վարդապետը կյանքի վերջում տեսչություն էր անում Դադի վանքի ու Ծարա եպիսկոպոսանիստ Խաթրավանքի վրա, հսկում վանական շինությունների վերանորոգումները։ Խաթրավանքի կաթողիկեի բեմի

284 «Արցախ», էջ 406։

285 «Արցախ», էջ 407—408։

286 Անդ, էջ 408։

տեղան կանգնեցնող Ասփան (Գրիգոր իշխանի կինը) իր արձանագրության մեջ գրել է, թե «կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննիսի», և իր միջոցներով նորոգումներ է կատարել վանքում[287]։

Հովհաննեսը վերակառուցել է Խաթրավանքը։ Սակայն այս մասին արձանագրությունը գրվել է, ըստ երևույթին, նրա մահից հետո («զմեծ տէր Յովհաննէս շինող եկեղեցւոյս՝ որդին Դոփին, եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղօթս յիշեցեք»)[288], քանի որ նրա մեջ սպրդել են թյուրիմացություններ. նա Դոփի թոռն էր և ոչ թե որդին, իսկ Դոփի որդի Հովհաննես Բ-ը Գրիգոր մեծի եղբայրն էր և ոչ թե Հասանի։ Ապա՝ ինքը չէր գրի «շինող եկեղեցւոյս», երբ իրականում շինողը Հովհաննես Ա-ն է եղել՝ ուղիղ մեկ դար առաջ՝ 1204 թվականին։ Հովհաննես Գ-ը մահացել է 1305 թ.։ Թաղված է Դադի վանքում։ Նրա տապանագիրն է. «...ի հայր... և ի երանելն Հաղբատայ և Դատէի և Խաթրայի աթոռակալն զտէր Հովհաննէս՝ եղբայր քաջ զաւրականին Հասանայ և հաւրն արքայազնորհ իշխանին... Գրիգորոյ աղաչեմ ի բարին թվ. ՉՄԴ» (1305)[289]։

Եզրափակելով մեր խոսքը XIII դ. վերին Խաչենի մշակութային կյանքի և նրա մի քանի ականավոր գործիչների մասին, անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ մեր խնդրի մեջ չէր մտնում հարցի համապարփակ քննությունը։ Ինչպես այս դարի, այնպես էլ հազարամյա նախընթացի ու հետագա ժամանակների ամբողջ Խաչենի մշակույթը կարոտ է հատուկ և առավել հանգամանալից հետազոտության։

287 «Արցախ», էջ 194։ Շանխաթունեանց, Բ, էջ 362։

288 Շանխաթունեանց, Բ, էջ 362—363։ «Արցախ», էջ 195։

289 «Արցախ», էջ 206-ում թվական է նշված ՉՁԴ (1335), որ սխալ է։ Ինչպես վերը տեսանք, Հովհաննեսը Ծարա Աստվածածին եկեղեցու շինարարությունն սկսեց 1301-ին և չհասցրեց ավարտել։

Մակար եպիսկոպոսի թյուրիմացությունը տեղ է գտել նաև Հր. Աճառյանի «Հայոց անձն. բառարանում», ուր հեղինակը Հովհաննեսի մահվան տարի է հիշում 1334 թվականը (տե՛ս հատ. Գ, էջ 616)։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԽԱՉԵՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և ժողովրդի իրավական վիճակը տասնամյակներ շարունակ գտնվում են հայ պատմաբանների ու իրավագետների ուշադրության կենտրոնում։ Մեծանուն Լեոյից սկսած՝ մեր գիտնականներն ամեն կերպ ջանում են հայկական և օտար աղբյուրների, նյութական ու հոգևոր մշակութային հուշարձանների ըստ ամենայնի քննությամբ պարզել հայ ժողովրդի տնտեսական ու իրավական ծանր դրությունը ինչպես հայրենի, այնպես էլ եկվոր բռնակալների լծի տակ։ Լեոյի, Խ. Սամվելյանի, Հ. Մանանդյանի, Թ. Ավդալբեգյանի և ուրիշ ավագների առաջին փորձերից հետո հրապարակվեցին Վ. Ռշտունու, Ս. Հակոբյանի, Ս. Պողոսյանի գրքերն ու հոդվածները հայ գյուղացիության բազմադարյան կյանքի մասին, ապա նորագույնների՝ Հ. Փափազյանի ու Մ. Զուլալյանի արժեքավոր դիտարկումները ուշ միջնադարի հայկական կյանքի մեջ պարսկական ու օսմանյան բռնատիրությունների թողած հետքերի վերաբերյալ։ Եվ, վերջապես, Լ. Խաչիկյանի, Բ. Առաքելյանի ու Լ. Բաբայանի՝ 1960-ական թվականներին հրապարակած արժեքավոր աշխատությունները[1]։

1 Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա և Բ մասերի ընդարձակ առաջաբան-քննական տեսություններ, Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հատ. Ա, Երևան,, 1958, հատ. Բ, 1964, Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, նույնը՝ նաև ռուսերեն (Մոսկվա, 1969)։

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքն արդեն լուսաբանվել է սովետահայ պատմագիտության մեջ, և այդ կյանքին վերաբերող հիմնական հարցերն այս կամ այն չափով ըստացել են իրենց պատասխանները։ Անշուշտ կան հարցեր, որոնք կարոտ են առավել հանգամանալից ու խորազնին հետազոտության։ Սակայն այս դեռ չի նշանակում, թե հայ ժողովրդի այս կամ այն հատվածի, վարչական այս կամ այն միավորի քաղաքական ու մշակութային պատմության հետազոտողը պետք է նույն մանրակրկիտությամբ ուսումնասիրի նաև իր խնդրո առարկայի սոցիալ-տնտեսական կյանքը։

Հետևելով Խաչենի իշխանության տարածքի վրա ապրող հայության մոնղոլական տիրապետության շրջանի սոցիալ-տնտեսական կյանքին, մենք համոզվել ենք, որ նրան բնորոշ են եղել բոլոր այն դարձդարձումները, որոնք տեղի են ունեցել ընդհանուր հայկական կյանքում։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Արաբական բռնակալության թոթափումից հետո հայկական միասնական թագավորության մեջ Խաչենի հայությունը բաժանեց հայ ժողովրդի ճակատագիրը, նրա հետ միասին հետագայում ապրեց սելջուկ թուրքերի, թաթար-մոնղոլների, ապա և սրանց ետևից եկած ակկոյունլու, կարա-կոյունլու թուրքերի բերած արհավիրքները։ Այդ պատճառով էլ Խաչենի՝ քննության ենթակա ժամանակաշրջանի սոցիալական վիճակը ներկայացնելիս, պետք է հիմք ընդունենք արդեն հրապարակի վրա գտնվող հետազոտությունները, վերստին ցույց տանք հայ աշխատավոր ժողովրդի ծանր վիճակը, օտարների բերած կարգերը (ավելի ճիշտ՝ անկարգությունները), նրանց հաստատած հարկային քաղաքականությունը, հայ եկեղեցու և աշխարհիկ ավատատիրության կիրառած նոր տնտեսական ռեժիմը, որի պայմաններում կրկնակի ծանրացել էր հասարակ ժողովրդի վիճակը։

Այս անխուսափելի կրկնություններից հեռու մնալու համար մենք հատուկ քննության չենք ենթարկել Խաչենի միջնադարյան սոցիալ-տնտեսական կյանքի իրողությունները, այլ աշխատել ենք միայն անդրադառնալ նրանցում նկատած ինքնահատուկ երևույթներին։ Այսօրինակ նկատողություններն ու դիտարկումները շարադրել ենք քաղաքական պատմության ընդհանուր հյուսվածքի մեջ, նրա հետ ունեցած սերտ աղերսներով հանդերձ։

Արցախ-Խաչենի տնտեսության ճկարագիրը.— Հնագույն ժամանակներից պահպանվել են ստույգ տեղեկություններ Արցախական աշխարհի ռազմական ու տնտեսական ուժերի մասին։ Նյութական մշակույթի հուշարձանները հաստատում են, որ երկրամասի տարածքում, հատկապես նրա դաշտային ու նախալեռնային մասերում անհիշելի դարերից ի վեր զբաղվել են հողագործությամբ, այգեգործությամբ ու շերամապահությամբ, որ այստեղ բարձր զարգացման հասած է եղել արհեստագործությունը, որի մի շարք տեսակների արտադրանքի պահպանված նմուշներն այսօր էլ հիացմունք են պատճառում։

Մարզպանության շրջանին վերաբերող աղբյուրների տեղեկություններից դատելով՝ Հայոց արևելից կողմանց, ուրեմն և Արցախի տարածքում կարելի էր հանդիպել, «ազգի-ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան և արծաթահալութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին»[2]։

Գրավոր պատմության այս մեծարժեք տեղեկությունը հաստատվում է ոչ միայն նյութական մշակույթի համապատասխան մնացորդներով, այլև բազմաթիվ այն հանքավայրերի առկայությամբ, որոնց երբեմնի շահագործման մասին են վկայում ժողովրդական ավանդությունները, ինչպես նաև հենց այդ հանքավայրերի նույնիսկ թուցիկ ուսումնասիրությունը։ Դրանցից են՝ Սոդքի ոսկու հանքերը. Գանձասարի փակված արծաթահանքի խորշերը, Մեհմանայի բազմամետաղ հանքավայրն ու Մռավի լանջերի մի շարք կետեր, ինչպես նաև Թաղավարդի արճճահանքը և այլն։

Արաբական աղբյուրները հիացմունքով էին խոսում Հայոց արևելից կողմանց արհեստագործության արտադրանքի մասին. «Նրանց արտադրած պարանների ու գորգերի, որդան կարմիրի, ծածկոցների ու ներկերի նման ոչինչ չկա»,— գրել է X դ. արաբ մատենագիր ալ-Մուքադդասին[3]։

Արաբական տիրապետության ժամանակներում գործում էր Դվին-Պարտավ տարանցիկ առևտրական ճանապարհը, որի վրա ծաղկել էին մի շարք կայան-գյուղաքաղաքներ՝ Բերդկունքը Սևանա լճի արևմտյան ափին, հետագայի Աղկալա գյուղի տեղում[4], Սի-

---

2 Կաղանկատուացի, էջ 190։

3 СМОМПК, вып. 38, стр. 15.

4 Տե՛ս Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 176—197, Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, էջ 196, 214։

Ս. Երեմյանը Բերդկունքը տեղադրում է Արցախի «Բերդաձոր գավառում, Սոդքի լեռնանցքի մոտ» (Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 45)։ Սակայն չի կա-

ասջան-Սիսական կայանը, Սոդքը (համանուն գավառի կենտրոնը), Հաթերքն ու Կաղանկատույքը[5]։ Պետք է կարծել, որ դրանցից Սոդքն ու Հաթերքը, որպես հնուց ի վեր իշխանանիստ եղած ավաններ, առանձնակի բարեկարգ վիճակ են ունեցել։

Սակայն արաբ և հայ հեղինակների նշած ուղեգծի վրա կային նաև ուրիշ բնակավայրեր։ Օրինակ, Մարը Սոդքի ու Հաթերքի արանքում, Կարկառը Կարկառ գետի ստորին ավազանում և այլն, որոնք պակաս դեր չունեին, քան նշվածները։ Մենք հավանական ենք համարում, որ հիշյալ ուղեգծի հետ անմիջական կապ ունեցած լինի նաև Ներքին Խաչենի առևտրական նշանակալից կենտրոնը՝ Վաճառ ավանը, որի մասին պահպանվել են վիմագրական ու մատենագրական տեղեկություններ[6]։

Բ. Առաքելյանն իրավացիորեն գտնում է, որ միջնադարում վաճառ է կոչվել տոնավաճառը՝ «որպես առհասարակ կոչվում էր շուկան»[7]։

Ամենայն հավանականությամբ Խաչենի Վաճառ ավանի անունն այդ բառից է առաջացել, քանի որ Խաչենի տերերն իրենց կենտրոն են դարձրել այն վայրը, ուր կիրակնօրյա տոնավաճառներ էին կազմակերպվում։ Հնարավոր է, որ վաճառատեղին ավանի տերերին բերելիս լիներ նաև մեծամեծ եկամուտներ։ Դրա ցայտուն արտահայտություններից է Վաճառի տեր Հասան-Ջալալի ու նրա կին Մամքանի մի արձանագրությունը՝ քանդակված Կեչառիսի վերանորոգման առթիվ, ուր նրանք գրում են, թե վանքին «տուաք յամեն ամի ի համարէն Վաճառէն Խ (40) դուկատ»[8]։

բելի մոռանալ, որ թե՛ արաբ աշխարհագետները, այնպես էլ հայ հեղինակները Դվինից մինչև Բերդկունք հաշվում էին 60 մղոն կամ մոտ 150 կիլոմետր. «Ի Դուինայ մղոն 60 ի Բերդկունն» (Հ. Թոփճեան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքի, Վենետիկ, 1962, էջ 75։ Նաև՝ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 183, 184)։ Իսկ այդ ճանապարհը Դվինից հասնում է Հ. Մանանդյանի տեղադրած վայրը՝ Աղկալա գյուղը։

5 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198—202։ Տե՛ս նաև այդ աշխատության քարտեզները՝ էջ 197-ում և 203-ում։

6 Տե՛ս Օրբելի, ԱՀԽ, արձանագրություններ № № 79—91, «Արցախ», էջ 183, Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 17, ծան. 2, էջ 40—41, 168։

7 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Բ, էջ 29։

8 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, է 317։

Գարեգին կաթողիկոսի գրքում «Վաճառը» փոքրատառով է գրված, չնայած գիտնականին էլ հայտնի է, որ խոսքը վերաբերում է Վաճառ ավան-վաճառատեղիին (անդ, էջ 186, ծան. 1)։

Արցախի գյուղատնտեսական բարձր մակարդակը վկայող փաստերից կարելի է նշել ոռոգման սիստեմի առկայությունը ինչպես Թարթառի ստորին հովտում, այնպես էլ Երասխից հանված առուների ցանցը Մուխանք գավառում։ Թուրքական ցեղերը Մուխանք թափանցելով՝ տեսան այնտեղ տարածված ջրանցքների սիստեմը և այն կոչեցին «Գյավուր արխ» («Անհավատների ջրանցք»)[9], մի անուն, որով մինչև օրս էլ կոչվում է Մուղանի դաշտը։

Արցախական աշխարհի հայությանը բախտ էր վիճակվել օրրան ունենալու բարեբեր մի երկրամաս, որտեղ ամեն ինչ կար ապրելու շեն ու լի կյանքով, զարգացնելու տնտեսության ու մշակույթի բազմաթիվ բնագավառներ, միշտ և բոլոր պայմաններում գտնվելու իր մայր ժողովրդի առավել շատ զարգացած հատվածների տնտեսական ու քաղաքակրթական մակարդակի վրա։

Սակայն նույն բախտը, ցավոք, այդ երկրամասը դրել էր բոլոր ժամանակներում ամենից բանուկ այն ճանապարհների վրա, որոնցով Անդրկովկաս էին թափանցում օտար բռնագրավիչները՝ թե՛ Պարսկաստանից ու շրջականներից և թե՛ Հյուսիսային Կովկասից ու Միջին-ասիական տափաստաններից։

Մարզպանության հաստատումից ի վեր Արցախի արևելյան գավառները, հատկապես Մուխանքը (Մուղան), ոտքի կոխան էին դարձել եկվոր հորդաների սմբակների տակ։ XIII դարում այդ բարեբեր դաշտն անդարձ կտրվեց Արցախից և հետագայում այնպես ավերվեց ու ամայացավ, որ դարձավ միայն օձերի ու կարիճների բնակավայր։

Թաթար-մոնղոլական խաժամուժի Մուղան մտնելը մեր հեղինակների (Կիրակոս, Գրիգոր Պատմիչ) կողմից նկարագրվել է որպես երկնահաս աղետ։ Կիրակոսը մռայլ գույներով նկարագրում է, թե ինչպես Մուխանք բերրի ու արգավանդ դաշտը, որ առաջներում սնում էր Արցախի և Ուտիքի բնակչությանը, միջնադարում ոչ միայն անդարձ կտրվեց նրանցից, այլև այնտեղ խփված խորանների պատճառով դարձավ մի որջ, որտեղ բանակած վաչկատունները ձմեռում էին տաք ու ապահով՝ գարնանը «ասպատակաւ և աւերմամբ» հայկական գավառների վրա շարժվելու համար։

Հայ բնակչությունն իր երկրի լեռնային շրջաններն է քաշ-

---

9 *К. Ган*, Опыт объяснения Кавказских географических названий, стр. 43.

վում, ապավինում անմատչելի ձորերին ու լեռնածերպերին՝ կըտրվելով իրեն սնունդ պարգևող դաշտերից և այգեստաններից։

Աշխատավոր գյուղացիության վիճակը.— Ինչպես մոնղոլական տիրապետության շրջանում, այնպես էլ նրանից առաջ՝ Զաքարյանների իշխանության օրոք, իսկ ավելի վաղ՝ սելջուկ-թուրքերի ասպատակությունների տասնամյակներում հայ աշխատավոր ժողովուրդը գտնվում էր տնտեսական ու իրավական անմխիթար վիճակում։ Դժբախտաբար մեր ձեռքի տակ եղած մատենագրական բոլոր տեղեկություններն էլ դուրս են եկել հոգևոր դասի ներկայացուցիչների գրչի տակից, իսկ հոգևորական հեղինակները ժողովրդական խավերի կյանքն արտացոլում էին եկեղեցական շահերի տեսակետից։ Եվ ո՛չ միայն ժողովրդի կյանքը։ Բռնագրավիչներին անգամ նրանք ներկայացնում էին միայն ըստ այն վերաբերմունքի, որ առաջինները ցույց էին տվել եկեղեցու հանդեպ։ Այսուամենայնիվ, գոյություն ունեցող աղբյուրագիտական տեղեկություններից երևում է, որ հայ աշխատավորությունը եկվոր բռնակալների տիրապետության օրոք անհամեմատ ավելի ծանր վիճակում էր գտնվում, քանի որ նույնիսկ ամենատանելի բռնագրավիչը հայերից, բոլոր սովորական ու պարտադիր հարկ ու տուրքերի հետ միասին, և ամենից առաջ պահանջում էր ջիզյա, որն այլադավանության հարկն էր՝ ծանր ու նվաստացուցիչ։

Գալով ժողովրդի վիճակին ընդհանրապես՝ ըստ երևույթին հայկական ավատատիրական կարգի բոլոր փուլերի համար էլ պետք է բնորոշ համարել Հ. Մանանդյանի հետևյալ կարծիքը, որ նա հայտնել է՝ հենվելով մեր մատենագրության ընձեռած հարուստ փաստերի ու տվյալների վրա։ Գիտնականը համոզված էր, որ «ճորտ» և «ճորտություն» բառերը խիստ ճապաղ ու առաձգական գաղափարներ են, որոնց տակ հասկացվել են տնտեսական ու իրավական բավական տարբեր դրություններ։ Ճորտությունը հաճախ այնքան մեղմ է եղել, որ շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների դրությունից, իսկ երբեմն այնքան ծանր է եղել, որ շատ մոտ է եղել կատարյալ ստրկության»[10]։

10 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 176։ Ի. Պ. Պետրուշևսկին փորձում է ցույց տալ, որ, իբր, ինչպես թուրք-սելջուկյան, այնպես էլ թաթար-մոնղոլական տիրապետության շրջանների Հայաստանում ու Անդրկովկասում ստրկատիրական կարգ է գոյություն ունեցել (И. П. Петрушевский, К истории рабства в халифате VII—X веков. Журнал «Народы Азии и Африки», 1971, № 3, стр. 65—71).

Վերջին վիճակը հաստատող բազմաթիվ օրինակներ կարելի է բերել հենց Արևելյան Հայաստանի միջնադարյան իրականությունից։ Գյուղացիների մի զգալի մասը իշխանավոր տերերի սեփականությունն էր հանդիսանում՝ այնքան ինքնուրույնությունից զուրկ, որ տերը գյուղացուն կարող էր վաճառել ու նվեր տալ՝ ում ուզենար։ Ճիշտ է, մեր մատենագիրներն այսպիսի երևույթներ շատ քիչ են արձանագրել, սակայն վիմական արձանագրությունները՝ այդ համառ ու անջնջելի վկայությունները, մեզ ընծայում են նման երևույթի տասնյակ փաստեր։ Եվ նրանց հիման վրա դժվար չէ պատկերացում կազմել միջնադարյան դաժան իրականության մասին։ Ինչպես Խաչենի տարածքից, այնպես էլ Հյուսիս-արևելյան Հայաստանի մյուս գավառներից հավաքած վիմագրական տասնյակ օրինակներ կարելի է բերել՝ հաստատելու մեր ասածը։ Արզուխաթունը Դաղի վանքի կաթողիկեն կառուցելուց հետո 1214 թ. մեծամեծ նվերներ է տվել եկեղեցուն, նրանց հետ՝ նաև «երկու տուն (ընտանիք—Բ. Ու.) յԱրփա»։

Հաթերքի մեծ իշխան Հասանի որդի Գրիգորը 1224 թ. տվել է «ի Դաղի գերեզմանս (իրենց տոհմական տապանատանը) չորս տուն շինական»[11]։ Նույն թվականին Վախտանգի որդի Սակը (Ծարի տեր Հասանի եղբայրը և Դոփի տեգը) Վաղուհասի Կարմիր վանքին կուսակրոնության է տվել իր որդի Գրիգորին, հետն էլ իր «արկած այգին ի Ճաքի իւր կատապանովն»[12]։

«Կատապան» նշանակում է այգեպան[13]։ Թվում է՝ նույն իմաստն ունի նաև «կողթապան» բառը, որ օգտագործված է մեր ձեռքի տակ եղած մի արձանագրության մեջ (արտագրված Ջարեքտարի վանքի ավերակից)՝ հետևյալ բովանդակությամբ. «Կամանայս գիր է Նորադինիս, որ||տվի զՓատլանայի կողթ||ապան իմ հոգոյս»[14]։

11 Ջալալեանց, Բ, էջ 227։

12 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 59։

13 «Կատապան» նաև «կատեպան»—հունարեն՝ կողմնապետ, կուսակալ, քաղաքապետ։ Հետագայում հայերենում իմաստավորվում է որպես այգեպան, այգուպահակ։ Օրինակ, Ստ. Օրբելյանը կատապանի հետ դնում է նաև «այգեգործ». «...էր նորա արջառ հազար, ոչխար երկու տասան հազար, ուղտ 700, ձի 600, էշ 400 և այգեգործս կատապանս՝ 170» (Օրբէլեան, էջ 86)։ Ժողովրդական լեզվում առավել գործածական է եղել «կատեպան» ձևը։ (Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1836, էջ 106, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. Բ, էջ 396—399, Հր. Աճառյան, Հայ. արմատ. բառ., Գ, էջ 1028—1030)։

14 Այս արձանագրությունը՝ Մամա-խաթունի մի անթվակիր արձանագրու-

Համանման օրինակներ կարելի է բերել և ուրիշ վայրերից։

Վարագա Սուրբ Նշան վանքում Վասակի որդի Դավիթը 1198 թ. գրել է. «Շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր Գրիգորի և նորին միաբանեկի Պետրոսի և եղբարցն նորա Յովհաննիսի և Ազարիայի և ետու հող ի Տանձկուր(տ) և յեզեր գետին և զդրախտն ընկուզի ջաղացէն Համադնոյ մինչև յընկուզուտն Խարաբի ջաղաց մի ի բաւն այգի և շինական մի...»[15]։

Պատահում էր, որ նվիրում էին նաև ամբողջ գյուղի բնակչությունը։ Այսպես, 1283 թ. Քուրդ Մամիկոնյանի որդի Հասանի և իր կին Արուզ-խաթունի («յազդէ Ուքանանց») անունից ետմահու քանդակված մի արձանագրության մեջ Հովհաննավանքին են նվիրված իրենց «գանձագին գեղն զՎահրամագեղ և զՂամազանցն իւրեանց ամէն հող ու ջրով ու բնորդի մարդկաւք...»[16]։

Կ. Ղաֆադարյանն ուշադրություն է դարձրել Սանահնի վանքի երեք արձանագրությունների վրա, որոնցում ևս խոսվում է վանքին շինականներ ընծայելու մասին[17]։ Սակայն գիտնականն այդ արձանագրություններից այն եզրակացությանն է հանգել, թե «Վանքին նվիրվող հատ ու կենտ մշակներն ու շինականները սովորական պայմաններում գտնվող գյուղացիներ չէին, այլ ինչ-որ արտակարգ պայմաններում գտնվող, անձնական ազատությունից զուրկ մարդիկ, որի հետևանքով նրանք կարող են ծախվել ուրիշի»[18]։ Որքան էլ զարմանալի, գիտնականն իր գրի առած երեք արձանագրության հիման վրա «միանգամայն իրավացի» է համարում Ս. Պողոսյանին, որի կարծիքով, իբր թե, «մինչև մոնղոլների արշավանքը հայ գյուղացին անձնապես կախման մեջ չի գտնվել ֆեոդալից»[19], և ապա համոզված գրում է, թե «Գյուղացիները կալվածատիրոջ պատկանող գյուղում ապրելու համար միայն հարկեր են վճարել և հարկադիր աշխատանք կատարել իրենց տիրոջ համար մինչև մոնղոլական տիրապետության շրջանը։ Հետզհետե վատթարանում է գյուղացիության վիճակը, նրա իրավունքներն այն աստիճան են սահմանափակվում, որ հողի և գյուղի հետ միասին սկսում են ծախել և նվիրել նաև գյուղի բնակչությանը»[20]։

Հայտնի չէ, թե Կ. Ղաֆադարյանը «մոնղոլների արշավանքը» երբ է համարում տեղի ունեցած և «մոնղոլական տիրապետության շրջանն» էլ երբվանից սկսված, եթե իր վկայակոչած արձանագրություններից մեկը 1214 թվականից է, մյուսը՝ 1222-ից, երրորդը՝ ԺԳ (XIII) դ. տասական թվականներից, և այս թվականներին արդեն առուծախի առարկա էր հայ գյուղացին։

Սակայն, անկախ այս երեք արձանագրությունների փաստից, Արևելից կողմանց հայ շինականի իրավական վիճակի մեջ առուծախի առարկա լինելը ոչ մի կապ չունի մոնղոլական տիրապետության հետ։ Այն գոյություն է ունեցել նաև մոնղոլական տիրապետությունից շատ դարեր առաջ։ Երբ Վաչե թագավորը հրաժարվեց հետ միասին, մի մեծ որձաքարի վրա, ընկած է Ջարեքտարի վանքի տեղում կառուցված պահեստի մոտ, բլրի վրա և պահպանվել է անխաթար։ Մեսրոպ Մագիստրոսը (Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, էջ 98ա) արտագրել է սխալներով. «Կամաւն այ այս գիր է Նորադինիա որ տվի զՓաթլունեանց ի կողթապան—իմ հոգոյս...»։

Ավելի սխալաշատ արտագրած է եղել Ջալալյանցը (Բ, էջ 229)։

Առաջին նախադասության ճիշտ գիրը մեր վերը վկայակոչածն է, երկրորդինը՝ «Առաջնորդ սբ ուխտիս Յոհանէս եւ էլ միաբանքս տվին ինձ Թ աւր ժամ սբ Սարգսին. Ա՝ ինձ, Բ աւրն՝ Խորիշահին»։

15 Տե՛ս «Արձագանք», 1888, էջ 89—90։ Հմմտ. Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 213։

16 «Վիմական տարեգիր», էջ 124։

17 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 107—108 (№ 15, 1222 թվականից), էջ 122—123 (№ 45, 1214 թ.), էջ 123—124 (№ 46, XIII դ. տասական թվականներից)։

№ 15 արձ. մեջ (էջ 108) Շոթոռկա որդի Դավիթը վանքին է նվիրում, ի շարս այլ ընծաների, նաև «շինական մի ի Հալալաշինի՝ մշակն լմնածուխ»։ Հետազոտողը կարծում է, որ «լմնածուխ, կամ լմանծուխ մեզ անհասկանալի առարկայի անուն է»։ Սակայն բարդությունը կազմված է շատ հասկանալի «լման-լրիվ» և «ծուխ» բառերից, որ նշանակում է՝ նվեր է տրված Հալալաշենից մի շինական մշակ՝ իր լրիվ ծխով (իմա՝ ընտանիքով)։

18 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը, էջ 60ա։

19 Անդ։ Հավանաբար խոսքը վերաբերում է Ս. Պողոսյանի «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում» (Երևան, 1956 թ.) գրքին, որի էջը չի նշված Կ. Ղաֆադարյանի կողմից, որպեսզի ստուգվի, թե Պողոսյանն ի՞նչ հիմունքով է կատարում գյուղացիության վիճակի այս բաժանումը։

Սակայն Ս.Պողոսյանի գրքում մի շարք անգամներ մեջ են բերվում վկայություններ, որոնք հաստատում են ճորտական իրավունքը Հայաստանում՝ մոնղոլական տիրապետությունից առաջ ու հետո, և, բնականաբար, այդ վկայությունների մեջ հիշված գյուղացիների մասին է, որ հեղինակը ասում է՝ նրանք «ճորտեր են եղել, որովհետև... խոսվում է գյուղացիների հողի հետ միասին նվիրելու մասին» (տե՛ս նշված գիրքը, էջ 302)։

20 Անդ, էջ 60բ։

վեց գահից, «հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ»[21]։ Այս հազար երդը սովորական շինական ընտանիքներ էին, իրենց տիրոջ ճորտերը։ Եվ մատենագրի խոսքն էլ ոչ թե հողատիրական ինչ-որ կախման մասին է, այլ սեփականատիրական այն լայն իրավունքի, որ ուներ տերն իր հրպատակների նկատմամբ։

Նույն ճորտական վիճակի անառարկելի վկայություններն առկա են նաև Վաչագան Բարեպաշտի կանոններում[22]։ Սա արդեն մարզպանական շրջանն էր (V դ. վերջ—VI-ի սկիզբ)[23]։

Արաբները նվաճած Հայաստանում սոցիալական կարգի նորություններ չստեղծեցին։ Նրանց նորությունը հարկերի սաստկացումն էր և նոր հարկի՝ ջիզյայի ստեղծումը, որը ավելի քան հազար տարվա ընթացքում հայ աշխատավորը պիտի վճարեր համարյա անընդմեջ, որովհետև բոլոր բռնագրավիչներն էլ, չնչին բացառությամբ, մահմեդականներ էին, որոնք հպատակներից պահանջում էին՝ կամ ընդունել իրենց կրոնը, կամ վճարել ջիզյա—այլադավանության հարկ։

Ճորտությունը մնաց ու խորացավ սելջուկ թուրքերի տիրապետության ժամանակներում։ Երբ 1198 թ. Վասակի որդի Դավիթը Վարագա վանքին «շինական մի» էր նվիրում, Կովկասում դեռևս մոնղոլների անունն էլ չգիտեին։

Մոնղոլ տիրապետողների օրոք հայ ժողովրդի սոցիալական ու իրավական վիճակն ավելի վատթարացավ։ Ճիշտ է, առաջին արշավանքների շրջանից հայտնի դաժանությունները մեղմացան նրանց տիրապետության հաստատումից հետո եկած տասնամյակներում, մանավանդ, երբ դեռ նվաճողները իսլամի մոլեռանդ հավատացյալներ չէին և այլադավան հպատակների նկատմամբ չէին տածում կրոնական ատելություն։ Սակայն հարկային քաղաքականության մարզում վիճակն օրըստօրե ծանրանում էր՝ տեղական բնակչությանն ստիպելով զանազան միջոցներ մտածել գոնե ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, քանի որ հարկ չվճարելու դեպքում հայ գյուղացին ինքն էր գերության գնում կամ առուծախի առարկա դառնում մոնղոլ բռնագրավիչների ձեռքում («որ ոչ կարէր հատուցանել զսակն, զմանկանս նոցա առնուին ընդ

21 Կաղանկատուացի, էջ 24։

22 Անդ, էջ 98—102։

23 Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դարձյալ Աղվենի ժողովի գումարման տարեթվի մասին, «Լրաբեր», 1969, №6։

պարտուցն»)[24]։ Որ տարեցտարի հարկերը բարձրանում էին ու դառնում անվճարելի ու անտանելի, երևում է, օրինակ, Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի՝ Արևելյան Հայաստանի հոգևոր առաջնորդներին հղած երկու թղթերից։ 1246-ին Վարդան Վարդապետի ձեռքով Արևելք բերված «Սահմանք կանոնականք»-ի 17-րդ կետով առաջարկվում էր հիշոցատուներին տուգանել և ստացված դրամը բաժանել աղքատներին («ըստ գոյին տուգանս առցեն և յաղքատս տայցեն»)[25]։ Ընդամենը հինգ տարի հետո Կոստանդին կաթողիկոսը վերստին թուղթ է հղում Արևելյան Հայաստանի բնակչությանը՝ խրատներով հանդերձ, և այս խրատների 7-րդ կետով սահմանում է հիշոցատուներից գանձվող տուգանքի գումարը, աղքատների եկամտահարկերի դիմաց, տալ մոնղոլ հարկահաններին. «և տուգանք առնուն և ընդ աղքատացն ի մալն տան»[26]։

Լ. Խաչիկյանը, որ առաջինն է ուշադրություն դարձրել այս հետաքրքիր վավերագրի վրա և բազմակողմանիորեն քննել այն, իրավամբ գրում է, թե «Ուշագրավ այս տարբերությունը ինքնին վրկայում է մոնղոլների կողմից գանձվող հիմնական հարկի ծանրության մասին։ 1251 թվականին մալը (եկամտահարկը—Բ. Ու.)[27] գանձվում էր այնպիսի բարձր չափերով ու վճարել անկարող շրքավորները ենթարկվում էին այնպիսի պատիժների, որ նրանց փոխարեն մալը վճարելն ու մոնղոլական հարկահանների ձեռքից ազատելն ինքնին համարվում էր բարեգործություն, ճիշտ այնպես, ինչպես մի քանի տարի առաջ ողորմություն բաշխելը»[28]։

Հայ ժողովրդի վիճակն առավել անտանելի դարձավ, երբ Մանգու մեծ խանը Կովկասի ու Հայաստանի վրա կուսակալ կարգեց Արղուն բռնավորին։ 1254 թ. Արղունն ու ոմն Թորա աղա, բազմաթիվ ուրիշների գլուխն անցած, գալիս են՝ «աշխարհագիր առնել ամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ»[29]։

24 Կիրակոս, էջ 362։

25 Անդ, էջ 307։

26 Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը՝ առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին. «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 283։

27 Հր. Աճառյան, Հայ. արմատ. բառ., հ. Դ, էջ 723—725։ *И. П. Петрушевский*, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв., Л., 1966, стр. 373.

Մալի գանձման մասին վկայությունները տե՛ս Կիրակոս, էջ 374, Երևան, էջ 493 և այլն։

28 Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, էջ 275։

29 Կիրակոս, էջ 362։

Հայ ժողովուրդը վաղուց ի վեր ծանոթ էր այդ աշխարհագիր կոչված չարիքին։ Արաբները ցուցակ մտցրած հանգուցյալների փոխարեն էլ սրանց հարազատներից հարկ էին հավաքում։

Նորեկ բռնավոր Արղունն իր կամակատարների հետ միասին շրջում էր հպատակ գավառները, «սկսեալք ի տասնամենից և ի վեր՝ ընդ գրով համարոյ արկանել զամենեսին, բաց ի կանանց։ Եւ յամենեցունց պահանջեալ խստագոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն, սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կոտանօք և չարչարանօք և գելոցօք։ Եւ որ թաքչէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն, զմանկունս նոցա առնուին, ընդ պարտուցն, քանզի պարսիկ տաճկահաւատ սպասաւորօք շրջէին»[30]։ Հարկ ու տուրքի տակ են առնվում նաև ծովերն ու լճերը, գետերն ու հանքերը, բոլոր արհեստավորներն ու արվեստագործները։ Տեղական իշխանավորներն էլ մյուս կողմից են կեղեքում ժողովրդին՝ գործակցելով աշխարհագիր անող օտարներին։ «Բայց յեկեղեցականացն ոչինչ առին հարկս, զի չունէին հրաման ի ղանէն»,— տեղեկացնում է պատմիչը[31]։

1256-ին մեռնում է Բաթու խանը։ Նրան փոխարինած որդուն՝ քրիստոնյա Սարթախին էլ մահադեղ տալով սպանում են ազգականները։ Անդրկովկաս ու Հայաստան են գալիս Չինգիզ-խանի թոռները, և ժողովրդի վիճակն ավելի է ծանրանում։ Արղունի դրած «մարդկային կարողությունից վեր» հարկերին գումարվում է մի նոր հարկ, «զոր թաղարն ասեն, յամենայն գլխոյ, որ մտեալ էր ի գիրն արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծատ, երեք տոպրակ, երկու չուան, մի սպիտակ, մի նետ, մի նալ՝ թող զայլ կաշառսն. և ի քսան անասնոյն՝ մի անասուն և քսան սպիտակ. և ոյր ոչ գոյր՝ զուստերս և զդստերս առնուին ընդ պահանջմանն»[32]։

Ըստ երևույթին մոնղոլների, ինչպես նաև նրանց նախորդների ու հաջորդների օրերում, ժողովրդի վրա ծանրացած ամենաանտանելի պարտականություններից էր պետական պաշտոնյաներին իջևան տալը, որ, հավանաբար, պարտադրում էր նաև ենթարկվել այդ պաշտոնյայի կամայականություններին։ Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալի հիշատակելի գործերից մեկն էլ այն է համարում, որ այդ իշխանն ինքն էր ընդունում մոնղոլ երթևեկներին, փոխարենը ժողովրդից ստանալով «որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկաց»[33]։

Թաթար-մոնղոլական տիրապետության շրջանին վերաբերող մի հիշատակարանում (ՉԾԳ—1304 թ.) գրիչն օրհնություն է կարդում Ղազան խանին, որ, այլ բարեգործությունների հետ միասին, «եբարձ սայ զերթևեկութիւն դեսպակաց, ելչեց և արդուչեաց. և կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս, որ են շքրիկք»[34]։

Մոնղոլների հարկային քաղաքականության հարցերը, նրանց տիրապետության տակ գտնված հայկական մարզերի սոցիալ-տնտեսական վիճակը և հարակից այլևայլ խնդիրներ (XIII—XIV) հանգամանորեն քննարկված են Լ. Հ. Բաբայանի գրքում, իսկ ակկոյունլու և կարա-կոյունլու բռնագրավիչների տիրապետության շրջանի (XV դ.) նույն հարցերը խոր քննության են ենթարկված Լ. Ս. Խաչիկյանի կողմից։ Երկուսի մոտ էլ լայնորեն օգտագործված են Խաչենի իշխանության տարբեր ճյուղերին վերաբերող ձեռագիր նյութերն ու վիմագրերը։ Նրանց կատարածը չկրկնելու համար մենք այս հարցերը վերստին քննության չենք առնում։ Այլ առանձին դիտողություններն ու արտաքո կարգի անհրաժեշտ հանգամանքները նշելու ենք քաղաքական պատմության շարադրանքի ընթացքում։

Մոնղոլական տիրապետության շրջանի կարևորագույն երևույթներից էր Դավիթ Ծարեցու ընդվզումը պաշտոնական եկեղեցու դեմ։ Ճիշտ է, նրա մասին շատ է խոսվել մեր ուսումնասիրողների կողմից։ Սակայն մենք չենք կարող այն շրջանցել, նրկատի առնելով գործողության վայրը և մի շարք հանգամանքներ, որոնք անմիջապես առնչվում են մեր ուսումնասիրությանը։

Ժողովրդական զանգվածների դժգոհությունները.—Խաչենի և հարակից շրջանների աշխատավորության սոցիալական ծանր վիճակը մոնղոլական տիրապետության ժամանակ չէր կարող չծնել արդար զայրույթ ու ընդվզումներ։ Պատմական աղբյուրները նվազ տեղեկություններ են հաղորդում այս առթիվ։ Եվ դա հասկանալի է. այդ աղբյուրների հեղինակները հոգևոր դասի ներկայացուցիչներ

30 Կիրակոս, էջ 362։
31 Անդ, էջ 363։
32 Անդ, էջ 374—375։
«Ծնծատ»—կճեպից չմաքրված բրինձ, չալթուկ։

33 Կիրակոս, էջ 269։
34 Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 24։
«Շքրիկ»—վրաց. «սուրհանդակ» (անդ, էջ 665)։

են։ Իսկ հոգևորականությունը միշտ էլ աչքի է ընկել չարին չհակառակելու, խոնարհամտության ու զրկանքներն անմռունչ տանելու հոգեբանությամբ։ Հասկանալի է, որ այդ հոգեբանությանը հակասող մտադրությունն ու արարքները պետք է դատապարտվեին նրա կողմից, շատ դեպքերում էլ լռության մատնվեին իբրև մեղսական գործողություններ։

Իհարկե, անիրավացի կլիներ մոռանալ պատմական ժամանակաշրջանի վիճակը։ Չկար միասնական պետություն, որի միջոցով միայն հնարավոր կլիներ ոտքի հանել ամբողջ երկիրը, կռվել ընդհանրական հայրենիքի շահերի համար։ Մանրատված ավատական տիրույթները, մանր իշխանությունները բարեբեր հող չէին մեծաքանակ զորք պահելու համար։ Իսկ եկվոր բռնակալների ամբողջ թափորը բաղկացած էր լինում գերազանցապես զինվորությունից։ Եվ այս բոլորին էլ գումարվում էր հայրենիքն ու ազգը միավորող միակ գործոնի՝ եկեղեցու սպասավորների եռանդուն վարդապետությունը՝ «մի՛ կալ ընդդեմ չարին», «հնազանդ լերուք տէրանց ձերոց»։

Մեզ հասած մատենագրական տեղեկություններից երևում է, որ հայոց եկեղեցու հայրերն ամեն կերպ ջանում էին իրենց հոտը պահել հնազանդ՝ ինչպես հայրենի տերերի, նույնպես էլ եկվոր բռնակալների հանդեպ։ Հավանաբար, բռնակալների խղճմտանքի ու մարդկայնության հետ նրանք մեծ հույսեր էին կապում։ Թաթարմոնղոլների առաջին խուժդուժ արշավանքներից և անլուր դաժանություններից հետո՛ անգամ, վրեժի ու ազատագրական մաքառումի կոչերի փոխարեն, հայ հոգևորականները, նախ, այդ բոլորի պատճառ էին համարում բնակչության գործած մեղքերը, որոնց համար, իբր, աստված արդար պատիժ է առաքել, ապա նախախնամության առավել ահավոր պատիժների սպառնալիքով քարոզում էին խեղճություն ու խոնարհություն։

Այս մտայնությունն առավել ցայտուն արտահայտված ենք տեսնում Կոնստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի վերոհիշյալ երկու թղթերի մեջ, որոնցից առաջինը՝ 1246 թ. հղված Արևելյան Հայաստան, բավականին հայտնի վավերագիր է, իսկ երկրորդը (1251) գիտական շրջանառության մեջ է մտել վերջերս[35]։

35 Լ. Խաչիկյան, *Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին. «Բանբեր Մատենադարանի», № 4, էջ 267—284։*

Դեռևս առաջին շրջաբերական-խրատական իր թղթում հայոց կաթողիկոսը գրում էր, թե արդեն տեղյակ է Արևելյան Հայաստանին հասած անագորույն աղետներին և դրանք համարում է ամենատես աստծո պատիժը. «ըստ յաճախելոյ յանցանաց մերոց ի վաղ ժամանակաց, յաճախեաց տրտմականն մասն ի հարուցածս գաւազանի ցասմանն աստուծոյ, և արբոյց մեզ տէր մրուր ուշաբարձ և արտասուս չափով ի վիշտն, զոր կրեաց աշխարհդ այդ՝ կոտորումն, կողոպուտ եկեղեցեաց, հոգևոր գանձուց, մարմնական տանց և գոյից, մտնաւանդ ի գերութիւն գառանցն Քրիստոսի, մերոց աղեաց և անդամոց, յորոց վերայ կարօտացաք գետաբուղխ արտասուաց և խաւարատան սենեկաց, թափել զդառն կսկիծ վիրին մեր ի խորոչ ժողովեալ»[36]։

Հայ եկեղեցու գերագույն ղեկավարը համոզված չէ, թե իր ազգի հավատացյալները գոնե հետագայում աստուծո սիրտը կշահեն իրենց խոնարհությամբ։ Այդ է պատճառը, որ դիմելով նրանց, ցանկանում է մի վերջին անգամ ևս զգուշացնել ամենահավոր պատիժներից. «Եւ վասն այս հարկի մեծագունի ցանկացա խնդրել ճանապարհ և անձամբ գալ, զգուշութիւն առնել հօտիդ իմոյ Քրիստոսի աստուծոյ յիս վստահացեալ ժողովրդեանդ՝ աղաչանօք և բանադրութեամբ, և սպառնալեօք, և ամենայն հնարիւք հանել ի ձէնջ զտեսակ ատելի դիմաց չարին, որ են մեղք...»[37]։

Երկրորդ (խրատական) թուղթն ունի նախաբան, որով կաթողիկոսը վրդովված խոսում է իր անխոհեմ «հոտի» հետ, զարմանալով ու զայրանալով նրա անուշիմության վրա։ Գրում է. «Եւ այդ ևս առավել հիացումն և մեծ զարմանք, որ այդպէս մոռացայք զպատուհասն զոր կրեցիք՝ հարուածեալք և գանեալք գաւազանաւ ցասմանն աստուծոյ. և տեսանէք աչաւք ձերովի զլերինս և զդաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, և զայրս և զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք, և ուտէք, և ըմպէք զհաց և զգինի ի գետնոյդ, զոր տեսէք ոռոգեալ արեամբ սիրելեաց ձերոց։ Դուք, որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք և տեսէք զդա լցեալ արեամբ և արտասուաւք, և զի լոյս պատուիրանին տեառն և աւրէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր՝ վասն այնորիկ տեսէք զխարումն եկեղեցւոյ և զկոխումն և կողոպուտ սպասուց և պաշտելի և սհաւոր նշանից և աստուածային գրոց։ Եւ ոչ

36 Կիրակոս, էջ 296։
37 Անդ, էջ 297։

սնուցանէիք զողայս ձեր աստուածպաշտութեամբ և ուսմամբ տեառն՝ առին զնոսա ի տանց և ի գրկաց ձերոց, այլ և ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնեալս արեամբն Քրիստոսի զգառինսն և տարեալ վաճառեցին յազգս և յաշխարհս հեռաւորս, իբրև զանբան անասուն»[38]։

Այս հատվածից և առհասարակ խրատական թղթի առաջաբանից կարելի է կատարել մի կարևոր եզրակացություն և այդ արել է Լ. Խաչիկյանը։ Այո, «Հայ ժողովրդի կրած բոլոր տառապանքները բացատրելով ժողովրդի իսկ «գործած» աններելի հանցանքներով՝ քրիստոնեական պատվիրանների խախտումով, կաթողիկոսը ձգտում էր ամրապնդել ժողովրդի հավատը, բարձրացնել եկեղեցու հեղինակությունը, վերականգնել քրիստոնեական բարոյականության ու աստվածավախության խախտված սկզբունքները, մի խոսքով՝ «դարձի բերել աստծու ճանապարհից շեղված իր հոգևոր հոտին»[39]։

Եվ, այսուհանդերձ, կաթողիկոսի ու նրան հետևող հոգևորականների այսօրինակ խրատներն ու սպառնալիքը, անմիջական անդրադարձումով, ժողովրդին ետ էին պահում բռնագրավիչների դեմ ելնելու, շարը խափանելու հնարավոր միջոցներից։ Մնում էր, որ նրանք եկած պատուհասն ընդունեին որպես աստուծո կողմից ուղարկված, անխուսափելի ու արդար դատաստան և միայն երկնառաք աղոթքներով թշնամուց հայցեին զիջողություն ու ողորմածություն։

Սակայն այս վարդապետության և տիրող անհուսալի պայմաններում իսկ ժողովուրդը չէր դադարում իր ուժերին հավատալուց, չէր հաշտվում բռնության հետ։ Հիշատակելի են, օրինակ, լայն ընդգրկումի այն շարժումները, որոնք ծավալված էին համարյա ամբողջ Վրաստանում ու Հյուսիս-արևելյան Հայաստանում, և որոնց, ինչպես ենթադրվում է, մասնակցել էր նաև Խաչենի տեր Հասան-Ջալալը։ Բնորոշ էր նաև Ծարում ու ամբողջ Վերին Խաչենում ծավալված ընդվզումը Դավիթ Ծարեցու գլխավորությամբ՝ XIII դարի կեսին։

Ռաշիդ-ադ-դին ժամանակագիրն արձանագրել է նաև գյուղացիական մի այլ ընդվզում մոնղոլ բռնակալության դեմ XIII դարի

38 Լ. Խաչիկյան, նշված հրապարակումը, էջ 279—280։

39 Անդ, էջ 274։

երկրորդ կեսին։ Այս շարժման վայրն է եղել Առանը՝ հայկական Արցախ և Ուտիք նահանգների տարածքը։

Սույն շարժման վայրը և մասնակիցների էթնիկական կազմը կարիք ունեն մասնակի ճշգրտման։

Ռաշիդ-ադ-դինը պատմում է, որ 1276 թ. մոնղոլ Աբաղա խանը եկել էր իրեն հպատակ Առան երկրամասը։ Մի օր նա այստեղ որսի է դուրս գալիս իր թիկնապահներով։ Մեկ էլ զինված տեղացիների մի խումբ հանկարծակի հարձակվում է խանի ու նրա մարդկանց վրա։ Տեղի է ունենում ընդհարում, որից հետո ապստամբները թողնում-փախչում են (իհարկե, ժամանակագրի՛ ասելով)։ Եվ, այսուամենայնիվ, Աբաղա խանը կարգադրում է գործողության վայրը բերել նահանգի (Առանի) աշխարհազորը՝ ապստամբներին վերջնականապես ջախջախելու համար։ Զինական այս նախապատրաստությունից վախեցած ապստամբների գլխավորը խանին է ներկայանում սրով ու պատանքով և հայտնում իր հնազանդությունը[40]։

Ժամանակագիրը չի խոսում ըմբոստության մասնակիցների էթնիկական պատկանելության մասին։

Լ. Բաբայանը, Ռաշիդ-ադ-դինի այս տեղեկությունը վերապատմելով, ըմբոստության մասնակիցների էթնիկական կազմի առթիվ կատարել է հետևյալ ենթադրությունը. «Առանի տերիտորիայում այդ ժամանակաշրջանում տակավին գերիշխող էթնիկական տարրն էր հայ ազգաբնակչությունը, ուստի սխալված չենք լինի, եթե նկատենք, որ այդ անհնազանդները ամենայն հավանականությամբ եղել են հայ գյուղացիները»[41]։

Սա, ինչ խոսք, գիտնականի՝ համոզմունքի պես ասած ենթադրությունն է, որը կարելի է ընդունել՝ նկատի առնելով առաջարկված հիմքը. իսկապես տվյալ ժամանակաշրջանում Առանի բնակչության և հատկապես գյուղացիության հիմնական էթնիկական տարրը հայերն էին կազմում։

Լ. Բաբայանի կարծիքի իրավացիությունն ընդունելու համար անհրաժեշտ է հիշել հետևյա հանգամանքը. արաբական տիրապետության վերջից սկսած՝ ընդարձակ իմաստով Առան էր կոչվում Կուրի ու Երասխի միջագետքը, որը համապատասխանում էր

40 *Рашид-ад-дин*, Сборник летописей. т. III, перевод А. К. Арендса, М.—Л., 1946, стр. 91.

41 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում (հայերեն), էջ 575, նույնը ռուսերեն՝ էջ 315։

Ուտիք ու Արցախ նահանգների բռնած տարածքին, իսկ նեղ իմաստով՝ Ուտիքի ու Արցախի դաշտային մասը (այժմյան Մարտակերտի դաշտը, Պարտավի, Շամքորի, Գանձակի շրջանները և Մարտունու ու Հադրութի շրջանների արևելյան մասերը)[42]։

Ճիշտ է, արաբական տիրապետության շրջանում, ինչպես նաև սելջուկ Թուրքերի օրոք, երկրամասի էթնիկական պատկերն զգալիորեն փոխվել էր։ Առան էին թափանցել այլացեղ տարրեր՝ արաբներ, պարսիկներ, հրեաներ, XI դ. հետո էլ՝ սելջուկներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ։ Սակայն թափանցողները եկել էին որպես արաբական ու սելջուկյան գերիշխանության գործիքներ՝ զինվորներ, հարկահաններ, վարչական այլևայլ աշխատողներ և մասամբ էլ արհեստավորներ, որոնք հիմնականում բնակվում էին քաղաքներում՝ Պարտավում, Գանձակում, Բայլականում։ Գրավոր պատմությունը չի հիշում, թե երբևէ բռնակալ արաբների կամ սելջուկների կողմից գյուղական նստակյաց բնակչություն բերված լինի Առան։

Ուրեմն, Առանի (Ուտիքի և Արցախի) գյուղական բնակչությունը եղել էր ու մնում էր հայկական, և ոչ մի հիմք չկա նրա էթնիկական պատկերի վրա կասկածելու։ Հարկ է չմոռանալ նաև, որ հայկական հին նախարարական տների ժառանգներն էին մնացել որպես Առանի բնիկ տերեր։ Եթե X դարից սկսած Գանձակն ու Պարտավը գտնվում էին, նախ, քուրդ Փադլունյանների, հետո էլ սելջուկ Թուրքերի ձեռքում, ապա Առանի մեծագույն մասը՝ Ուտիքի և Արցախի լեռնային ու նախալեռնային շրջանները, մնում էին որպես բնիկ հայ իշխանների տիրույթներ։ Վերը տեսանք, որ Խաչենի մեծ իշխան Հասան-Ջալալ Դոլան կոչվում էր «իշխան Խաչենոյ և Ըռանա»։ Դրանից առաջ էլ Սահլի որդի և Ներքին Խաչենի տեր Հովհաննեսն էր կոչվում «Առանի պատրիկ»։ Աղբյուրներում Առանի տեր է համարված նաև Հասան-Ջալալի մյուս ժամանակակիցը՝ Վահրամ Գագեցի Զաքարյանը[43]։ Այս բոլորը՝ վերոհիշյալ պատմական եղելության՝ Աբաղայի հետ կապված դեպքի անմիջական նախընթացին։

Ուրեմն, Լ. Բաբայանի հայտնած կարծիքը հիմնավորվում է պատմական հավաստի աղբյուրների ընձեռած տվյալներով։

42 Առան տեղանվան ու նրա գործառնության մասին հանգամանորեն տե՛ս Բ. Ուլուբաբյան, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները, էջ 124—126։

43 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 839. «յայսմ ժամանակի ինքնակալ տանս Ռանա (Առանա—Բ. Ու.) Վարհամ...»։

* * *

Խաչենի սոցիալ-տնտեսական կյանքի, աշխատավորության ծանր վիճակի և դժգոհությունների ու ժողովրդական ընդվզումների մասին մեր խոսքը կամենում ենք ավարտել XIII դ. կեսին Ծարում բռնկված մի ընդվզումի քննությամբ։

Դավիթ Ծարեցի «Սոլարեցուցիչ».— Գյուղացի աշխատավորության առաջին ընդվզումը, որ տեղի է ունեցել 1250 թ., Վերին Խաչենի Ծար գավառում, հանգամանորեն նկարագրված է Կիրակոսի պատմության մեջ։

Դժբախտաբար, Կիրակոսը միակ հեղինակն է, որ արձանագրել է այդ կարևոր իրադարձությունը։ Եվ կրկնակի ցավալի է, որ նա հանդես է գալիս որպես ըմբոստությունն ու նրա կազմակերպիչ Դավիթ Ծարեցուն դատապարտող և հենց այս դիրքից էլ մեզ է ներկայացնում կատարված փաստը։ Հետևապես, կասկածից վեր է, որ Ծարեցու գործը մեզ է հասել միակողմանի մեկնաբանությամբ։ Բավական է ուշադրության առնել պատահաբար արտահայտված մի մանրամասն՝ համոզվելու համար, որ պատմիչն ամեն կերպ աշխատել է Դավթի կազմակերպած պայքարը ներկայացնել որպես աղանդավորական հերձված։ Մինչդեռ այն, պաշտոնական եկեղեցու դեմ ուղղված լինելով հանդերձ, նաև սոցիալական դրդապատճառների արդյունք էր և հնարավոր է, որ իր հիմքում ունեցել է նույնիսկ քաղաքական լուրջ նպատակներ։

Այստեղ հարկ ենք համարում վկայակոչել Ֆ. Էնգելսի հայտնի դրույթն այն մասին, որ միջնադարում աշխատավոր զանգվածների ուղեղը մթնագնված էր կրոնական դոգմաներով, և նրան ոտքի հանելու, սոցիալական որևէ շարժման լծելու համար անհրաժեշտ էր «որ այդ զանգվածների շահերն իրենց ներկայացվեին կրոնական հագուստով»[44]։ Այս պատճառով էլ «ինքնըստինքյան պարզ է, որ բոլոր հարձակումները, որոնք տվյալ պայմաններում կատարվում էին ընդհանրապես ավատատիրության և ամենից առաջ եկեղեցու դեմ, ինչպես նաև հեղափոխական, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները գերազանցապես աստվածաբանական հերետիկոսություններ պիտի լինեին»[45]։

Այս տեսակետից բացառություն չէր կազմում միջնադարյան Հայաստանը։ Այնտեղ ևս ավատատիրության դեմ բորբոքված ամեն

44 Մարքս-Էնգելս, Ընտիր երկեր, հատ. Բ, Երևան, 1950, էջ 512։

45 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46։

մի պայքար «պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին եկեղեցու դեմ»։

Այսուհանդերձ, տեսնենք՝ Կիրակոսն ի՞նչ է պատմում Դավիթ Ծարեցու կազմակերպած ընդվզումի մասին։ Մենք այստեղ, առանց շեղումների ու բացթողումների, կվերաշարադրենք նրա պատումը։

Գեղարքունիքի սահմանի մոտ, Հանդաբերդ ամրոցին կից Ծար ջերմուկն էր, ուր ապրում էր չքավոր ու տնանկ մի մարդ՝ Դավիթ անունով։ Նա ջրաղաց էր պահում և դրանով կերակրում կնոջն ու երեխաներին։

Մի գիշեր էլ սատանան Քրիստոսի կերպարանք առած՝ հայտնվում է Դավթին, մոլորեցնում, թե՝ դու գյուղի ձիթհանքից մի գերան կհանես, նրանից խաչ կկանգնեցնես եկեղեցուց դուրս, այնուհետև բոլոր կողմերից մարդիկ պիտի գան քո մոտ բուժվելու, ձեռքդ կամաց կդնես նրանց վրա և կբուժես։

Եվ Դավիթն սկսեց քարոզել, թե Քրիստոսն իրեն երևացել է ու ասել՝ վերափոխի՛ր աշխարհը, բուժի՛ր մարդկանց։

Դավթի համբավը կարճ ժամանակում տարածվեց ամենուր։ **Նրան կոչեցին Դավիթ Միայնակյաց և Սքանչելագործ։ Եկեղեցու** դռանը տնկված նրա փայտյա բարձրաբերձ խաչին արջառներ էին զոհաբերում[46]։ Բոլոր կողմերից եկող ուխտավորներին օրհնության նշխարներ էին տալիս արջառների մսից ու ոսկորներից, փայտյա խաչի տաշեղներից ու Դավթի ջրաղացի կորեկահատիկներից։ Իբր, Դավթին այս գործին հրահրած բանսարկուն «դրդեաց և զամենայն գաւառս երթալ ի համբաւն յայն», և նրա մոտ էին շտապում կանայք ու տղամարդիկ, հոգևորականներ ու ազատ մարդիկ (ազնվականներ) «և ամենայն ախտացեալք և ցաւագնեալք»։

Դավիթն սկզբում, իբր թե, կեղծավորաբար, ոչ ոքից ոչինչ չի վերցնում և քարոզում է անշահ։ Իսկ երբ որևէ դիվահար էր գալիս, նա վերցնում էր հաստ մի գավազան, հիվանդին նրանով ծեծում էր անխնա, ապա ոտքը նրա կոկորդին սեղմած՝ կարգադրում էր վեր կենալ ու հեռանալ... Դիվահարը հեռանում էր՝ վախենալով որևէ տեղ ասել, թե չի բուժվել, քանի որ, հակառակ դեպքում, վերջաստին պետք է գանահարվեր։ Լեկրոտներին[47] երկար ստիպում էր պա-

46 Ըստ Կիրակոսի՝ «զենին նմա զուարակս» (էջ 323)։

47 Լեկրոտ-դիվահար, որ անվերջ ուզում է պարել։ Խաչենում լեկրոտին ասում են նաև խաղլացավոտ։

Լ. Խաչիկյանի կարծիքով՝ «լեկրոտ էին կոչվում այն գուշակները, որոնք երաժշտության տակ հափշտակությամբ պարում էին մինչև ուշաթափության աստիճան և ապա ինքնամոռացության մեջ սկսում պատգամախոսել» (Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը՝ առաքված Արևելյան Հայաստան 1251 թվականին, էջ 277)։

ռել իր առաջ։ Գոդիներին[48] թողնում էր իրենց անբուժելի ցավերի հետ։ Կուզերին տանջահարելով հարթեցնում էին նրա հրամանակատարները։ Իսկ եթե այս միջոցառումից մեռնում էր մեկը, Դավիթն ասում էր՝ մեռած է եղել առաջուց, նրան քայլեցնելիս է եղել ներսի դևը, հիմա ինքը դևին հանեց նրա մարմնից։ Իսկ եթե կենդանի էին մնում ու տանջվում, ասում էր՝ իրեն չեն հավատում, այդ պատճառով էլ բժշկությունը չի օգնում։

Գալիս էին ու անվերջ գալիս... Եվ այնքան բազմություն է հավաքվում, «մինչև տեղիք վայրացն ոչ բաւէին տանել զմարդիկ»։ Եվ որովհետև ամառ էր ժամանակը, հավաքվածները սարերն են բարձրանում, լցվում են դաշտերը և գործում ամեն տեսակ չարիք։ Իբր թե կանայք շնանում են ցանկացած տղամարդկանց հետ, «նոյնպէս և արքն...»[49]։

Գալիս են նաև հոգևորականներ, օգտվում Դավթի ձեռք բերածից։ Կային այնպիսիները, որ լվանում էին նորաթուխ մարգարեի ոտքերը և ջուրը ցանում իրենց ու հավաքված բազմության վրա։

Իսկ եթե որևէ վարդապետ կամ երեց համարձակվեր արգելել ուխտագնացներին, վերջիններս «հայհոյէին և բամբասէին՝ իբրև զնախանձոտս և զյաչաղկոտս, թէ՝ «Ինքեանք ոչ կարեն գործել զգործս նորա և ոչ կամին զբարեգործութիւն սրբոյն այնորիկ»[50]։

Պատմիչն առանձնապես հիշում է նվիրատվությունների ու զոհաբերությունների առատությունը. «Եւ գնային բազում պատարագօք՝ ոսկւով և արծաթով և զուարակաւ և ոչխարօք»։ Ապա՝ «Եւ տէր գեղջն, քանզի պարսիկ էր, առնոյր զբաժին իւր յընչից, քանզի յոյժ բազումս տանէին և յօժարութեամբ տային»[51]։

Եվ ահա այս բոլորը խիստ վրդովեցնում է Արևելից կողմանց հոգևորականության ականավոր ներկայացուցիչներին։ Խորանաշատի մեծ Վարդապետ Վանականը գրեց «Գիր սաստից և մեղադրա-

48 Գոդի—բորոտ։

49 Մեր անվանի բանասեր Ե. Տեր-Մինասյանը նկատել է, որ Կիրակոսն այս բոլոր դատապարտելի արարքներն ու անառակությունները ինքն է հորինել՝ «շարժումը վարկաբեկելու համար»։ «Այստեղ էլ, ուրեմն, մեզ արդեն վաղուց ծանոթ բարոյական սանձարձակության մեղադրանք է աղանդավորների հասցեին»,— եզրակացրել է գիտնականը (Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 218)։

50 Կիրակոս, էջ 326։

51 Անդ։

նաց»՝ դատապարտելով ոչ միայն Դավթին, այլև բոլոր նրանց, ովքեր մոլորված էին նրա կողմից, նշխարներ էին առել նրանից։ Բանադրական թուղթ է գրում նաև Կիրակոս պատմիչը, գրում և հղում «ի յոլով տեղիս»։ Գրում է և Հաղբատի եպիսկոպոս Համազասպը։ Իսկ Դադիվանքի եպիսկոպոս Գրիգորիսը[52] և Գանձասարի վանահայր Վարդանը, «զոր Յօժար որդին կոչէին»[53], բազում քահանաներով, խաչերով ու ավետարաններով գալիս են Ծար՝ բանադրելու և վերացնելու մոլորությունը, քանի որ գյուղը նրանց վիճակում էր գտնվում։ Նրանք փորձում են կարգի հրավիրել Դավթին, կործանել նրա կանգնեցրած խաչը, և բազմությունը վրա է տալիս «սրովք ու բրովք կամէին սպանանել զնոսա»։ Հեղինակավոր եպիսկոպոսներն ստիպված են լինում մի կողմ քաշվել ամբոխից, անիծել Դավթին ու նրա մոլորեցրած ամբոխին։ Ապա հավաքված-ներից ոմանք զղջում են իրենց հանդգնության համար և աղաչում եպիսկոպոսներին՝ ազատ արձակելու իրենց անեծքի կապանքներից, նույնիսկ Դավթին բռնում և մատնում են նրանց ձեռքը։

Եպիսկոպոսները Դավթին իրենց հետ տանում էին՝ երևի պատժելու, երբ ճանապարհին հանդիպեցին գառնեցիների և նրանց

52 Գրիգորիսը, ինչպես արդեն ասվել է, Հաթերքի տեր Հասան կրոնավորյալի թոռն էր, Վասակ Նահատակի որդին։ 1224 թ. Դադիվանքի առաջնորդ ձենադրվելու առթիվ ժամատուն էր կառուցել՝ թողնելով հետևյալ արձանագրությունը. «Թ. ՌՀԳ ես տ՝ Գրիգորիս առաջնորդ սբ ուխտիս, որդի Նահատակին Վասակա, շինեցի զժամատունս...»։

53 Կիրակոսը Յօժար որդի Վարդանի անունը տալիս չի նշում, որ նա Գանձասարի առաջնորդն է եղել։ Սակայն մենք այդ գիտենք Գանձասարի շինարարությանը վերաբերող մեծ արձանագրությունից։ Հասան Ջալալն էր թողել իր գիրը՝ «կամաւ տէր Վարդանայ՝ առաջնորդի սուրբ ուխտիս...»։

Ջամչյանը հանձին այս Վարդանի թյուրիմացաբար տեսնում էր Վարդան Վարդապետ Արևելցուն. «և մեծն Վարդան Բարձրբերդցի, որ նստէր ի վանս սբյն Անդրէի» (տե՛ս նրա՝ Պատմութիւն հայոց, Գ, էջ 233)։

Ճիշտ է, որ այս ժամանակ Վարդան Արևելցին (սխալմամբ կոչված Բարձրբերդցի) նստում էր Ուտիքի Կայան գավառի Ս. Անդրեի վանքում (Կիրակոս, էջ 311)։ Բայց չէ՞ որ Կիրակոսը, խոսելով Գրիգորիսի ու Վարդանի մասին, նշում է, թե Ծարն «ի նոցա վիճակին էր» (անդ, էջ 327), այսինքն՝ նրանք երկուսով առաջնորդություն էին անում Խաչենում։

Չպետք է մոռանալ, որ Կիրակոսը երկու Վարդաններին անպայման տարբերում է իրարից՝ պատմիչին կոչելով միայն «Վարդան Վարդապետ», (Կիրակոս, էջ 294 և հտգ.), իսկ Գանձասարի առաջնորդին՝ «Վարդապետ Վարդան», և, առաջինի հետ չշփոթելու համար, ավելացնում՝ «զոր Յօժար որդին կոչէին» (անդ, էջ 327)։

խնդիրքով ազատեցին՝ երդումն առնելով, «զի մի՛ այլ մոլորեցուսցէ զմարդիկ»[54]։

Եվ այսպես, ամեն ինչ ներկայացվում է որպես աղանդավորական մոլորություն։ Մեկ էլ հանկարծ, ի միջի այլոց, պարզվում է, որ Դավիթն ասել է. «Յարշակունեաց աղգէն եմ ես, և պարտ է որդւոց իմոց լինել միոյն թագաւոր և միւսոյն՝ կաթողիկոս. և սրբոյն Սահակայ տեսլեանն մարթ է ի վերայ նոցա կատարիլ»[55]։

«Սահակի տեսիլը» Սահակ Պարթև կաթողիկոսին վերագրվող այն երազանքն էր, թե հայ Արշակունյաց թագավորության և պարթևազուն կաթողիկոսների վերացված տիրապետությունը վերականգնվելու է անպայման «մերձ երևումն պղծոյն անապատի», այսինքն՝ աշխարհի կատարածին մոտ սահմաններում[56]։

Ուրեմն Դավիթը որոշել էր աշխարհը վերափոխել, որովհետև նրան, իբր, կարգադրված էր՝ «դարձո զաշխարհս»։ Եվ այդ աշխարհի դարձն էլ նրա համար այլ բան չէր, քան հայոց ինքնուրույն թագավորության և Լուսավորչի տոհմի կաթողիկոսության վերականգնումը։

Մեր կարծիքով՝ իրավացի են այն հետազոտողները, որոնք հանձին Դավիթ Ծարեցու տեսնում են ո՛չ սովորական աղանդավորի և նրա ելույթն էլ դիտում են որպես սոցիալական անարդարությունների դեմ պոռթկված մի ընդվզում, որն ուներ և քաղաքական լուրջ նպատակադրում[57]։

54 Կիրակոս, էջ 328։

55 Անդ։

56 Այս տեսիլքի հանգամանալից քննությունը տե՛ս՝ Ն. Ակինյան, Քննություն տեսլյան ս. Սահակա («Հանդէս ամսօրեայ», 1936, էջ 467 և հտգ., 1937, էջ 5 և հտգ.), Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ա, էջ 17, 36—37 և հտգ.։

57 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 388—390, Լ. Խաչիկյան, Աղանդավորական գաղափարախոսությունը XII—XIV դարերում. «Երևանի պետհամալսարանի Ն. Մառի անվ. կաբինետի աշխատությունների ժողովածու», № 2, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 310—312։ Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Բ, էջ 190—191։

Թ. Ավդալբեգյանը Ծարեցուն դիտում էր որպես հայ աղանդավորական շարժման բազմադարյան շղթայի մի օղակը (տե՛ս նրա՝ «Անհայտ աղանդավորներ հայոց մեջ ԺԶ և ԺԷ դարերուն». Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 193—194, 200 և հտգ.)։ Սակայն այս դեռ չի նշանակում, թե անվանի հայագետն աղանդավորական շարժման մեջ չէր տեսնում սոցիալական ու քաղաքական շերտեր։

Նույն վերաբերմունքը՝ տե՛ս Մ. Օրմանյանի «Ազգապատում», հատ. Բ, գիրք Ա, էջ 1639—1640։

Միայն այն հանգամանքը, որ Ծարեցու ելույթին հարում էին ոչ միայն աշխատավոր շինականներն ու շատ հոգևորականներ, այլև ավատատեր ազնվականները՝ «ազատ մարդիկ», ինքնին վկայում է, որ երևույթի հոգևոր կեղևի տակ առկա է եղել նաև սոցիալական ու քաղաքական որոշակի բովանդակություն։ Այս ազատները, հավանաբար, մոնղոլական հարկային քաղաքականության զոհերն էին, երբեմնի այն հողատերերը, որոնց սեփականությունը բաժին էր դարձել եկվոր բռնակալներին։ Պատահական չէ, որ հենց Ծարի՝ Վերին Խաչենի Առանշահիկների վաղեմի այդ աթոռանիստի, տեր է հիշվում մի պարսիկ, այսինքն՝ մահմեդական. «Եւ տէր գեղջն, զի պարսիկ էր, առնոյր զբաժին իւր յընչիցն»[58]։ Ուրեմն, եկվոր մահմեդականն արդեն տեր էր դարձել իշխանանիստ ավանին և նույնիսկ իր բաժինն էր առնում այն պարգևներից, որ նորընծա մարգարեին բերում էին նրա հետևորդները։

Ասվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

ա) Դավիթ Ծարեցու շարժումը սոցիալական բովանդակություն ունեցող ընդվզում էր՝ ընդդեմ եկեղեցական ու աշխարհիկ տիրող կարգերի, ինչպես նաև թաթար մոնղոլական բռնադրավիչների։

բ) Շարժումն ընդունել էր բավական լայն բնույթ՝ ընդգրկելով Հայոց արևելից կողմանց «զամենայն գաւառս» և այնքան վրտանգավոր էր համարվել, որ նրա դեմ վճռաբար պայքարի էին դուրս եկել ժամանակի Արևելյան Հայաստանի կուսակրոն անվանի վարդապետները՝ Հովհաննես Վանականը, Կիրակոս Գանձակեցին, Դաղիվանքի ու Գանձասարի առաջնորդները և այլք։

գ) Դավիթ Ծարեցին, ըստ երևույթին, ժամանակի զարգացած մարդկանցից է եղել և ոչ թե խեղճ ու անճար մի ջրաղացպան, եթե տեղյակ էր Սահակ Պարթևի տեսիլին և իր բորբոքած շարժման նրպատակն էր դարձրել աշխարհի վերափոխությունն ու հայոց ինքնուրույն թագավորության վերականգնումը։

58 Կիրակոս, էջ 326։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԱՉԵՆԸ XIV—XV ԴԱՐԵՐՈՒՄ

XIV դարի առաջին կեսը հայտնի է իբրև մոնղոլական իշխանության անկման ժամանակաշրջան։ Գահակալական կռիվները խարխլել էին անհուն ու անեզերք տարածությունների վրա փռված իշխանության ռազմա-քաղաքական հաստատությունները, և հպատակ ժողովուրդներն ու նրանց երկրները ձեռքից ձեռք էին անցնում։

Գահակալական կռիվները միշտ էլ աղետաբեր են եղել, առաջին հերթին, հպատակ ժողովուրդների համար։ Ինչպես սելջուկ թուրքերի տիրապետության վերջին շրջանում, երբ Հայաստանը ոտնատակ էր տրվում կենտրոնական իշխանությունից անկախացած ամիրաների ու զորապետների միջև վարվող պատերազմների պատճառով, թաթար-մոնղոլական տիրապետության վերջին տասնամյակներում ևս ժողովուրդները հեծում էին նման արհավիրքների ներքո։ Հուլավյան իշխանությունը Հուլավու խանի (1256—1265 թթ.) մահից հետո երերում էր գահակալական մրցապայքարից, որն առավելագույն չափեր ընդունեց Աբաղա խանի (1265—1282) և նրա հաջորդների օրերում։ XIV դարի սկզբին արդեն իշխանության կուսակալները և զորապետները տեղերում դարձել էին անկախ ու միահեծան տերեր և հաճախ ճակատում էին կենտրոնական իշխանության դեմ։

Հիշատակագիրներից մեկը դառնությամբ նկարագրում է Գեղարքունիքին ու հարևան շրջաններին հասած աղետները, որոնց պատճառը եղել էր իլխանության կուսակալ Ղուռումշիի ապստամբությունը գլխավոր զորապետ Ջոբանի, ապա և իլխան Աբու Սայիդի դեմ։ Հիշատակագիր Հովհաննես գրիչը պատմում է, թե ինչ-

պես «յարեաւ ոմն անաւրէն Ղուռումշի, որ պատերազմեցաւ ընդ պարոն Զաւպանի եւ արար փախստական», Ապա ապստամբ Ղուռումշիի զորքը կողոպտում է գյուղերն ու վանքերը, կոտորում բնակիչներին, շատերին (հատկապես ծերերին ու երեխաներին) գերեվարում։ Մնացած բնակչությունն «աշխարհիս թողին զինչս իւրեանց եւ ի ծերպս վիմաց ապաւինէին... էրէրէր երկիր ի յահէ անիծեալ Ղուռումշոյ...», մինչև որ Աբու-Սայիդը (հիշատակագրի մոտ՝ Բուսաիտ) զորքով եկավ, «կոտորեաց զՂուռումշի եւ զաւրսն իւր. եւ եղեւ խաղաղութիւն ամենայն աշխարհի եւ դարձաւ աշխարհս ի բնակութիւն իւր... եւ Զաւպանն կրկին հաստատեցաւ ի պարոնութիւն Բուսաիտղանի»[1]։

Ղուղումշիի, բայց ո՛չ նրա ապստամբության, մասին ակնարկում է նաև Սամվել Անեցու շարունակողը. «Երընչի և Ղուռումշին նստան»։ Եվ մինչդեռ Հովհաննես գրչի հիշատակարանում Ղուռումշիի ապստամբության և պարտության տարիներ են հիշված «ՉԿԸ եւ ի ՉԿԹ» (1319, 1320) թվականները, որ նշանակում է, թե Ղուռումշին սպանվել է 1320-ին, Սամուել Անեցու շարունակողն իր տեղեկությունը դրել է ՌՅԻԳ (1323) թվականի տակ[2], որ, հավանաբար, նկատի ունի հայկական քրիստոնեական թվականը։

Ինչպես պարզ երևում է մատենագրական նյութերից և վիմագրերից, մոնղոլ խաներն ու զորապետները, արագորեն իրարից խլելով բռնապետության սանձերը, մեկը մյուսից ծանր կեղեքումների էին ենթարկում ժողովուրդներին, սաստկացնում սոցիալական ճնշումն ու կրոնական հալածանքները։ Հայաստանի շատ նահանգներում ծայր էր առել մի արտագաղթ, որի հետևանքով կարճ ժամանակում դատարկվեցին նախկինում շեն ու բարեկարգ բազմաթիվ բնակավայրեր ու գավառներ։ Խաչենի հայությունը, ինչպես միշտ՝ ապավինած իր լեռնային աշխարհին՝ տոկաց, դիմացավ նաև այս ահավոր փորձությանը։ Եվ բավական էր, որ իլխանության ժառանգորդների թուլացմամբ նվազագույն հնարավորություն ստեղծվեր, որպեսզի լեռնաշխարհի բնիկ իշխանությունը վերստին բարձրանար՝ մի անգամ ևս ապացուցելով իր անկասեցնելի կենսունակությունը։

Ավատատիրական կարգն առհասարակ բարեբաստիկ պայմաններ չէր միասնական ու միաձույլ պետության պահպանման համար։

1 «ԺԴ», էջ 157, 167։
2 Սամուէլ Անեցի, էջ 167։

Իսկ երբ դրան էլ գումարվում էր արտաքին բռնակալության միջամտությունը, այն ժամանակ արդեն ավելորդ էր դառնում խոսքը միասնական ու միաձույլ պետական մարմնի մասին։

Պարսկական, ապա արաբական տիրապետության հինգդարյա մղձավանջում առավել ցայտուն էին դարձել հայ ավատական տների անջատողական տրամադրությունները՝ հասցնելով նրան, որ երբեմն նախկին ամեն մի իշխանության տարածքի վրա երևան եկան կարճակյաց մի քանի թագեր՝ շնորհված հարևան և ոչ հարևան տիրակալներից։ Բագրատունյաց թագակիրները, ճիշտ է, շուրջ մեկ ու կես դար տևած իրենց գերիշխանությամբ լուրջ քայլեր կատարեցին համահայկական թագավորություն ստեղծելու, համազգային շահերի գիտակցություն սերմանելու համար, սակայն, ըստ երևույթին, նրանց արածը քիչ էր։ Կուտակված բազմադարյան ախտը վերջնականապես վնասազերծելը և, այդպիսով, դրսեկ նոր շարիքներին դիմագրավելը առավել անհնար էր Բագրատունյաց գահի անկումից հետո։ Սելջուկների ու թաթար-մոնղոլների տիրապետության համար շատ էին շահավետ տեղական իշխանապետների կենտրոնախույս ձգտումները։ Այս ձգտումներն ու մեկուսացումները, հավանաբար, դրսեկ միջամտության բացակայությամբ ևս պետք է մանրատեին հայկական իշխանությունները, քանի որ իշխանական տներն անընդհատ ճյուղավորվում էին, և ամեն մի նոր ճյուղ առանձնանում, փակվում էր իրեն հասած տիրույթների մեջ, ստեղծում մի նոր իշխանություն։ Այս երևույթն էլ իր հետ բերում էր տնտեսության ճահճացում և մշակութային ուժերի անկում. «IX—XIII դարերի զարգացած ֆեոդալիզմը» հետագա դարերի հայկական կյանքում չհասավ իր նորմալ ավարտին, որ պետք է նշանակեր բուրժուական-կապիտալիստական հարաբերությունների առաջացում ու զարգացում։ Տեղի ունեցավ «հակառակը՝ վերադարձ դեպի մի կացություն, որը հիշեցնում է ֆեոդալիզմի պրիմիտիվ, բարբարոսական էտապը»[3]։

Մահմեդականություն ընդունած բռնակալների տիրապետության տակ հայ իշխանությունների վիճակն ավելի էր ծանրացել։ «1307 թվականից ի վեր կիրառելով շարիաթի օրենքը՝ մոնղոլ խաներն սկսում են գլխահարկ պահանջել քրիստոնյա հպատակներից, մի պահ այդ պահանջը տարածելով արտոնված դասերի վրա»[4]։

Ծայր աղքատության մեջ հեծում էր ժողովուրդը։ Երբեմնի

3 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ, Ա, էջ 402։
4 Անդ, էջ 403։

հարուստ խավերն անգամ կորցրել էին իրենց եկամուտների ու շահույթների աղբյուրները։ Խաթարվել էր ժողովրդի շինարարական եռանդը, որովհետև իշխանավորներն անգամ ի վիճակի չէին հոգալու կառուցման ծախսերը։ XIV դարը հայտնի դարձավ միայն իր թողած երկու փոքրիկ կառույցներով, որոնք Աշոտ Հովհաննիսյանի դիպուկ խոսքով՝ «իրենց վրա կրում էին թոշնումի հայտնի նշաններ։ Եկեղեցի-դամբարաններ էին դրանք, որոնք իրենց փարթամ հանդերձանքով ազդանշում էին հայ ֆեոդալիզմի մայրամուտը»[5]։

Այս պատկերն ամբողջացել էր դեռևս XIV դարի երկրորդ կեսին՝ Լանկ-Թամուրի բերած արհավիրքով։

Թամուրի արշավանքները, հիրավի, ամենադաժան աղետն էին միջնադարյան Հայաստանի մոայլ պատմության մեջ։ Բարբարոս հորդաները կողոպտում ու կոտորում էին ժողովրդին, ավերում իրենց ճանապարհին պատահած ամեն ինչ, զանգվածաբար ոչնչացնում հայ իշխանությունների ներկայացուցիչներին, կարևոր կենտրոնները կողոպտում ու քանդում։

Թամուրյան հրոսակների ոտքի տակ կործանվում ու ամայանում էին Խաչենի վաղեմի շեն ու հարուստ բնակավայրերը։ Թիկունքի ապահովության համար բռնագրավիչները կոտորում էին տեղական իշխանավորներին, նույնիսկ գյուղական այնպիսի պաշտոնյաներին, ինչպիսիք էին տանուտերերն ու ձեռնավորները։ Եվ, հավանաբար, հենց այդ շրջանի Խաչենին էր վերաբերում Մատթեոս Ջուղայեցու հայտնի մեկնաբանությունը «ավերակ» բառի, երբ մեծ վարդապետը այն հարցին, թե ի՞նչ է նշանակում ավերակ, պատասխանում է. «անկարգ շէնն որ ոչ ունի ձեռնաւոր և տանուտէր, աւէր կոչեմք՝ որպէս Խաչինեցիք... Աւէր կոչիմք, թէ իցէ ձեռնաւոր և տանուտէր և ոչ սերմանել աշունն և գարունն...»[6]։

Քիչ հետո կտեսնենք, որ Լանկ-Թամուրի ավերածությունների ընթացքում համարյա գլխատվեց Վերին-Խաչենի իշխանական տունը։

Երբ մեծ ու կենսունակ ծառը կտրում են բնից, հենց կտրած տեղից էլ դուրս են գալիս նոր ոստեր և արագ բարձրանում են՝ ծածկելով նախկին ծառի ընդգրկած շրջանը։ Ծարա իշխանության հետ էլ կարող էր նույնը կատարվել, եթե վերընձյուղած ոստերը չկարկտահարվեին, եթե պատմության բեմը զիջող Թամուրյանների հետքերով եկած չլինեին դաժանության և բռնությունների մեջ նրանց ոչնչով չզիջող կարա-կոյունլու և ակ-կոյունլու վաչկատուն ցեղերը։

Հարկ է նշել, որ Արևելյան Անդրկովկասը և հատկապես նախկին Արցախն ու նրա դաշտային մասերն ամենից շատ էին ենթակա ասպատակիչ հորդաների կոտորածներին ու ավեր-ավարին։ Բռնագրավիչ եկվորները ճակատամարտերից հետո միշտ ձմեռում էին նախկին Մուխանք գավառում, որ XIV դ. սկսած կոչվում էր Ղարաբաղի դաշտ։ Եվ նրանք այստեղից էին սկսում իրենց նոր ասպատակությունները, որոնց առաջին հարվածները, հասկանալի պատճառով, պետք է իջնեին Արցախի և հարևան հայկական գավառների վրա։ Իսկ եթե նկատի առնենք, որ նույն թուրք և տաթարացեղ մյուս ասպատակիչներն իրենց համար ամառանոցավայր էին դարձրել Գեղամա բարձրավանդակը, պարզ կլինի, թե ինչպիսի աքցանի մեջ էր առված Մուխանք-Ղարաբաղի դաշտի ու Գեղամա լեռների միջև ընկած տարածքի՝ Ծարա, Վերին ու Ներքին Խաչենների և հարակից գավառների հայ բնակչությունը։

Լանկ-Թամուրի ահավոր արշավանքներից ժողովուրդն աչք բացել չէր կարողանում։ Պատահական չէ, որ խեղճ գրիչը փորձում է բռնակալի անունը բացատրել որպես «դա մուր, զի ուր և հասանէ, մթնատեսակ և մրրատեսակ առնէ, զոմն կողոպտելով, զոմն շարշարելով, զոմն սպանելով, զոմն գերելով, զհայր ի յորդւոյ բաժանելով և զորդի ի հօրէ»։ «Դա մուր»-ի հրոսակներից փախչողները ևս չէին փրկվում օրհասից, «զի ոմանք ի սովոյ մեռանէին և այլք ի տօթոյ և ի ծարաւոյ, կէսք ի յահէ և յերկեւղէ զինքեանս քարավէժ առնէին, և այլ բազում չարիս, զոր դանդաղիմ ասել առ ի չձանձրանալոյ ընթերցողացդ»[7]։

Լանկ-Թամուրի արշավանքները պատմող մի այլ հիշատակագիր էլ հայտնում է, որ «թուին ՊԾԲ (1403) դարձաւ (Թամուրը— Բ. Ու.) յարևելս յԱղուանից և շինեաց քաղաք մի Բաղաղայ անուն. և օուր տօնի հրեշտակապետիցն եկն ձիւն սաստիկ ի նոր քաղաքն և եսպան ի շինողացն ԴՌ (4000) հոգի և ամենայն ի զինուորացն էին»[8]։

5 «Դրվագներ...», Ա, էջ 408։

6 Մատենադարան, ձեռ. № 1403, թ. 124—125։

7 Մատենադարանի ձեռագիր № 5232՝ գրված Շիրվանի նահանգի Մատրաստ գյուղում, էջ 248բ։ Հմմտ. ԺԵ, Ա, էջ 31։

8 ԺԵ, Ա, էջ 52, ծան. աստղանիշով։

Նկատի առնելով, որ դաշտային Ղարաբաղում սառնամանիքներ չեն լինում, կարելի է ենթադրել, որ Թամուրի կառուցած Բաղաղա քաղաքը գտնվել է լեռնային կամ նախալեռնային Ղարաբաղում, ամեն պարագայի՝ Կուրի աջափնյակի հայկական գավառներից մեկում, քանի որ քննության ենթակա ժամանակաշրջանում Աղվանք էր կոչվում միայն Կուրի աջափնյակը։ Եթե, իհարկե, հիշատակագրի «յարևելս յԱղուանից» արտահայտությունն այնպես հասկանանք, թե Թամուրը եկել է «Աղվանից արևելքը» և ոչ թե Աղվանքից է եկել արևելք։

Լանկ-Թամուրի մահից (1405) հետո նրա ժառանգների և իշխանության ներսի մյուս մեծավորների միջև ծագած գահակալական քայքայիչ պայքարից ու պատերազմներից օգտվում են կարակոյունլու ցեղերը, որոնք իրենց առաջնորդ Կարա-Յուսուֆի գլխավորությամբ ոչնչացնում են Թամուրյան պետության ժառանգորդների իշխանությունը և հաստատում իրենցը՝ կարա-կոյունլու ցեղի տիրապետությունը։ Այն պետք է գոյատևեր ավելի քան կես դար (1407—1467 թթ.)[9]։

Կարա-Յուսուֆի հաղթանակը մի կարճ պահ ոգևորում է Թամուրյան բռնության ամբողջ ծանրությունն զգացած հայերին։ Գրիչը նույնիսկ ուրախանում է, որ նա եկավ, ոչնչացրեց թաթարների լուծը «ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն»[10]։ Սակայն սա միայն պատրանք էր, և շատ շուտով ժողովուրդը համոզվում է, որ չարն է չարին փոխարինել։ Գանձասարի վանքի առաջնորդ, վարդապետ և գրիչ Մատթեոս Մոնոզոնը սրտի կսկիծով արձանագրում է, թե «դառնացաւ ժամանակս և թագաւորեաց ոմն թուրքման՝ անունն Ուսուֆ, զի ճանաչիւր ըստ թոյլ տալոյն աստուծոյ լինել կշտամբիչ, ըստ այն, թէ՝ «զչարիսն չարեաւ կորուսցէ, զի ի բառնալ գազանին չորրորդի Թամուրն կոչեցեալ Կաղն, բռնացեալ Ուսուֆն (պատմում է նրա ճակատամարտերը, թամուրյաններին կոտորելը)... Զայսչափ չարիս առ գլխաւորս աշխարհիս հասոյց Ուսուֆն, իսկ առ փոքունսն զի՞նչ ասացից։ Զի վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին, ոչ զընտանիսն գիտեն և ոչ զօտարսն, թալանեն և կոփեն զձեռնհասն իւրեանց, թէ ի ճանապարհի, թէ ի տան, թէ առանձին, թէ ի զքաղաքի, և այսպէս ոչ գոյր թիւ աղաղակի մերոյ։ Եւ դեռևս ի տարակուսի եմք՝ ոչ գիտելով թէ յառաջիկայսն զի՞նչ ծնանի մեզ և կամ թէ որպէ՞ս տի զերծանիմք յայսպիսի դառն նեղութեանցս...»[11]։

Մոնոզոնի պատմելով՝ թաթարները կողոպտել էին Գանձասարի վանքը։ Կարա-Յուսուֆի գալուց հետո էլ սրա բռնավորները բերին նրանց (երևի գերել էին և ծառայեցնում էին)և «յաւար հարին կրկին զսուրբ ուխտս, և ոչ ինչ ի մարմնաւոր ընչից մնաց, բայց միայն մեք և սրբութիւնքն»[12]։

Կարա-Յուսուֆի մասին մեր հիշատակագիրների հաղորդած տեղեկությունների մեջ նկատվում է մի հակասություն, որ կարոտ է բացատրության։ Շրջահայաց Մատթեոս վարդապետը նրան հռմարում էր նոր չար, որ փոխարինել է նախորդ չարին։ Հայտնի է նաև Կարա-Յուսուֆի վարած հարկային անխիղճ քաղաքականությունը, որի ներքո տնքում էին հայ ժողովրդի բոլոր դասակարգերը՝ ինչպես երկրի հարավային կամ արևմտյան մասերում, այնպես էլ հյուսիս-արևելյան նահանգներում[13]։ Սակայն, այսքանի կողքին, նկատելի է նաև գոհության մի արտահայտություն, որ իր հիմքն ունի։ Օրինակ, Թովմա Մեծոփեցին հաղորդում է, որ «թէպէտ հարկապահանջութիւնն բազում էր, սակայն խաղաղութիւնն առանց խրոովութեան էր»[14]։ Ուրեմն, մարդիկ գոհ էին, որ թեպետ և հարկերն աննախադեպ ծանր ու անտանելի էին, դարձյալ լավ էր նրանով, որ կռիվներն ու արյունհեղությունները տեղի էին տվել։ Եվ, ամենից կարևորը, Կարա-Յուսուֆն ու նրա ենթակաները հանդուրժողական քաղաքականություն էին վարում քրիստոնյա հպատակների և հատկապես եկեղեցու նկատմամբ։ Այդ պատճառով է, որ հայոց Աղվանքի ներկայացուցիչն արձանագրում է, թե Կարա-Յուսուֆը «թէպէտ և է այլազգի, բայց խաղաղութիւն ունի ընդ քրիստոնեայս, և ընդ քահանայս, և ընդ եկեղեցիս...»[15]։

---

9 Լ. Ս. Խաչիկյանը Թամուրյան Աբու-Բաքրի պարտությունը Կարա-Յուսուֆից դնում է 1406 թ. տակ (տե՛ս ԺԵ, Ա, էջ X), մինչդեռ Տաթևի գրիչ Հովհաննեսն այդ տարին և Յուսուֆի գահակալության սկիզբը համարում է 1407 թվականը. «...եկեալ ի վերա սորա (Յուսուֆի) թոռն Թամուրին կոչեցեալ Աբու-Բաքր, և Յուսուփս տիրէ թագաւորութեան ի թուականիս Հայոց ՊԾԶ (1407)-ի, մարերի ամսոյն ի ԻԵ (25), մայիսի ամսոյն Թ» (9) (տե՛ս ԺԵ, Ա, էջ 82—83)։ Այս տարին է հիշում նաև Տաթևի մի այլ գրիչ՝ Մատթեոս վարդապետը (անդ, էջ 76)։

10 ԺԵ, Ա, էջ 76։

11 Մատենադարանի ձեռ. № 8689, էջ 89ա—բ, հմմտ. ԺԵ, Ա, էջ 194—195։

12 ԺԵ, Ա, էջ 195։

13 Տե՛ս ԺԵ, Ա, էջ 166, 197, 200 և այլն։

14 Թովմա Մեծոփեցի. Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 73։

15 ԺԵ, Ա, էջ 240։

Ուրեմն, Կարա-Յուսուֆի իշխանության նկատմամբ տածած բարյացակամությունը ոչ այնքան ժողովրդի՝ թեկուզ համեմատական տանելի վիճակի արտահայտությունն էր, որքան եկեղեցու գործիչ հիշատակագիրների անհատական կամ դասային վերաբերմունքը, որ ոչ մի դեպքում չի կարելի տարածել ժողովրդի բոլոր խավերի վրա։

XV դարի առաջին քսանամյակը հայտնի է ուրիշ աղետներով ևս։ 1407 թ. բռնկվում է մի ահավոր «մահտարաժամ», որի մասին պատմող հիշատակագիրը սյունեցի է, և չի կարելի կասկածել, որ նրա խոսքը վերաբերում է նաև Խաչենին։ Դաժան համաճարակը «զտղայոց վերջք արար, որ բերանով չէ պատմելի, ի քսանէ, ի երեսնէ, ի յիսնէ թէ մին տղայ մնաց՝ ԺԵ (15) տարոյ ի վեր, պակաս՝ մեռաւ»[16]։

Թովմա գրիչը հենց այս «մահտարաժամը» նկատի առնելով գրում էր, թե մահացան անթիվ-անհամար երիտասարդներ. «Եւ ով կարէ պատմել զձայն կանացեաց՝ կականալիր և աղիողորմ, զի ամենեքեան որդեկորոյս եղեն՝ որբ և այրի, զի նախախնամութիւնն աստուծոյ ծաղկաքաղ առնէ զընտիրս ի մանկանց հաճելոյ»[17]։

Վերը վկայակոչված հիշատակարանները պատմում են, որ Սյունիքում պարբերաբար եղել են նաև երկրաշարժեր։ Դժվար է ասել՝ նրանք ընդգրկե՞լ են Խաչենը թե ոչ։ Խաչենի հիշատակագիրներից մեկը վկայում է, որ ուղիղ յոթ տարի՝ 1413—1420 թթ., մորեխը «զամենայն աշխարհ աւերեաց, և դեռևս եմք ի կասկածի»[18]։

Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալյանները XIV—XV դարերում.— Ներքին Խաչենի իշխանական տունը XIII դ. վերջից սկսած կոչվում է Հասան-Ջալալ իշխանի անունով՝ Հասան-Ջալալյանք։ Այսպես էին կոչվում նաև հոգևոր այն նվիրապետները, որոնք ներկայացնում էին նույն իշխանական տոհմը և արդեն ժառանգական իրավունքով XIII դ. երկրորդ կեսից տնօրինում էին նահանգի եպիսկոպոսությունը, իսկ XV դարից՝ նաև ամբողջ Հայոց արևելից կողմանց կաթողիկոսական աթոռը։

Դժվար ճակատագիր էր վիճակված Հասան-Ջալալի իշխանության ժառանգորդներին։

16 ԺԵ, Ա, էջ 82։

17 Անդ, էջ 80։

18 Անդ, էջ 240։

Թաթար-մոնղոլական բռնակալները նվաճած երկրներում անասելի ծանր հարկերի և պարբերական անողորմ կողոպուտի ու ավերածությունների միջոցով ժողովրդին դատապարտել էին ծայր աղքատության և հուսահատության։ Խաչենն ու հարևան լեռնային-նախալեռնային գավառները, որոնք միշտ էլ համեմատաբար քիչ էին ենթարկվում ասպատակիչների հարվածներին, XIII դարի ցընցող մի շարք դեպքերից հետո, XIV դ. կորցրել էին իրենց վաղեմի զորությունը և այլևս անկարող էին դիմադրելու թաթար-մոնղոլ բռնագրավիչների կամայականություններին։ Սպառվել էին նաև տնտեսական հիմքերը, ջլատվել մշակութային ուժերը։ Ոչինչ չէր կառուցվում։ Երկրի վաղեմի բարեշեն գյուղաքաղաքներն ու բերդամրոցները կիսավեր վիճակում էին։ Վանքերում ու եկեղեցիներում այլևս չկար նախկին խլրտուն մշակութային կյանքը։ Այս համընդհանուր ողբերգական վիճակի մասին, կցկտուր վկայություններից բացի, դժբախտաբար մենք ժամանակի հայ իշխանությունների մընացորդների քաղաքական կյանքը հանգամանորեն պատկերող տեղեկություններ չունենք։ Պարզ է, երբ ոչինչ չէր կառուցվում, խոսք չէր կարող լինել նաև վիմագրական նյութի մասին. կառուցվածի վրա էին գրվում արձանագրությունները, որոնք կառուցման փաստն արձանագրելով հանդերձ՝ ամենահավատի տեղեկություններ էին հաղորդում նաև երկրամասի քաղաքական ու տնտեսական կյանքի մասին։ Երբ համարյա մարել էր կյանքը հոգևոր կենտրոններում, ավելորդ է խոսել այն պայմանների մասին, որոնցում պետք է ստեղծվեին ձեռագիր մատյաններ՝ ժամանակի ու շրջապատի կյանքը ներկայացնող հիշատակարաններով։ Մենք ունենք մի ցնցող տեղեկություն այս մղձավանջի վերաբերյալ. Վերին Խաչենի տերերը թաթար-մոնղոլական տիրապետության վերջում ուշքի են գալիս տասնամյակների ահավոր թմբիրից ու հետաքրքրվում իրենց տարածքի հոգևոր գործերով և ականատես են լինում նախկին մըշտաբորբոք կյանքով հայտնի երեք մեծ կենտրոնների՝ Դադիվանքի, Խաթրավանքի ու Գետամիջի վանքի թափուր վիճակին[19]։

Արժանահավատ և ստույգ տեղեկությունների այս պակասով պիտի բացատրել մի թյուրիմացություն, որ ընդունված է պատմագիտության մեջ և աղավաղում է Խաչենի իշխանության իրական պատկերը XIV դարում։ Թյուրիմացության ակունքը Կարապետ եպիսկոպոսի (Կարապետ Տեր-Մկրտչյան) հրապարակած մի եգ-

19 «Արցախ», էջ 208։

գրակացությունն է, որի համար անառարակելի հիմքեր չեն վկայակոչված, և հենց այդ պատճառով ինքը՝ ուսումնասիրողն էլ իր կարծիքը հրապարակ էր հանել կասկածով ու թերահավատությամբ։ Խաչենի իշխանության մի ճյուղի՝ Ծարա տեր Դոփյանների քաղաքական պատմությանը նվիրած իր հետազոտության մեջ Կարապետ եպիսկոպոսն այն կարծիքն էր հայտնել, թե «...Հասան Ջալալ Դոլա իշխանից, մանավանդ նորա որդի Աթաբակից հետո՝ ԺԳ դարի վերջում, այս տոհմի իշխանությունը նսեմացած է երևվում»[20]։ Ապա՝ «...ԺԵ դարու վերջի արձանագրությունները ցույց են տալիս, որ այս տոհմը կրկին զորացել էր Խաչենում, մանավանդ ժառանգական դարձնելով իր մեջ Գանձասարի կաթողիկոսությունը»[21]։

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ այստեղ պատճառն ու հետևանքը փոխել են իրենց տեղերը. Գանձասարի կաթողիկոսությունը Հասան-Ջալալյանների ժառանգական արտոնությունն էր դարձել այն պատճառով, որ այդ տոհմի իշխանավորները հզոր էին ու նվաճեցին կաթողիկոսությունը և ոչ թե ժառանգեցին ու դրանով էլ զորացան։

Աղբյուրագիտական ի՞նչ հիմքեր էր առաջարկում Կարապետ Եպիսկոպոսը՝ ի հաստատումն XIV դարում Հասան-Ջալալյանների նսեմանալու մասին իր կարծիքի։ Նախ՝ որ Գանձասարի վանքում XIV դարից մնացած վիմական արձանագրությունների մեջ հանդիպել է Դոփյան տոհմին հատուկ անունների՝ Ուլուբեկ, Սատուն, Այտին, Շահանշե և այլն[22]։ Ապա «որ արդեն Դոփյան Հասան Բ-ի օրերից ի վեր նորա կալվածների շարքում է հիշվում» Ականա բերդավանը[23]։ Եվ, վերջապես, որովհետև «Կեչառեցու ողբի մեջ ուրիշ հայ իշխանների թվում այս տոհմից (Հասան-Ջալալյաններից—Բ. Ու.) ոչ ոք չի երևում. ուստի զարմանալի չէ, եթե սահմանակից Դոփյանները հառաջացած լինին նաև նոցա կալվածներում»[24]։

Դժվար չէ նկատել, որ հետազոտողի վկայակոչած երեք կրոնվաններից ոչ մեկը կամ էլ երեքը միասին՝ ի զորու չեն հաստատելու, թե Հասան-Ջալալյան իշխանական տունը նսեմացած էր XIII դարի վերջից մինչև XV (ԺԵ)-ի վերջը, այսինքն՝ ուղիղ երկու հարյուրամյակ։ Գանձասարի վիմագրերից քաղված անունները միայն Դոփյան իշխանազունների՛ն չէին հատուկ. նրանցով կոչվում էին ժամանակի հայ իշխանական տներից շատերի ժառանգները (հիշենք, թեկուզ, Զաքարյան Շահանշեներին)։ Իսկ, որ ավելի կարևոր է ու քիչ հետո կտեսնենք, նշված անունները հենց Հասան-Ջալալյաններինն էին և ոչ թե Ծարա Դոփյաններինը։

Ականա բերդավանը Ծարեցիների արձանագրություններում նրանց հայրենի սեփականությունն է հայտարարված XIV—XV դարերում, որովհետև այն գտնվում էր Ծարա տարածքում՝ Թարթառ գետի վերին ավազանում։ Եվ եթե Կիրակոս Գանձակեցին, խոսելով Հասան-Ջալալի տիրույթների մասին, հիշում էր նաև Ականան[25], ապա սոսկ այն պատճառով, որ, ինչպես արդեն ցույց ենք տվել իր տեղում, Հասան-Ջալալն ամբողջ Խաչենի, նույնիսկ ավելի մեծ նահանգի՝ Արցախի, գահերեց իշխանն էր համարվում։ Ինչ վերաբերում է Խաչատուր Կեչառեցու ողբի մեջ թվարկված անունների շարքում Հասան-Ջալալյանների բացակայությանը, ապա դա ևս լուրջ հիմք չի կարող համարվել, քանի որ Կեչառեցին «Ողբ»-ում հիշում է իր ժամանակ (XIII դ. վերջում)[26] արդեն վախճանված կամ նահատակված լոկ մի քանի իշխանների և ոչ թե Հայաստանի բոլոր նշանավոր ավատատերերին[27]։

Կարապետ եպիսկոպոսի այս կարծիքն ընդունվել է մեր պատմաբանների կողմից։ Օրինակ, XIII—XIV դդ. Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմությանը հատուկ ուսումնասիրություն նվիրած Լ. Բաբայանը համաձայն է նրա հետ և գրել է. «1282 թ. հետո Հասան-Ջալալի տոհմի մասին ոչ մի հիշատակություն չկա։ Կարծում ենք՝ իրավացի է Կարապետ եպիսկոպոսը, երբ գրում է. «Հասան-Ջալալի տոհմի իշխանությունը, նրա որդի Աթաբակի մահից հետո 14-րդ դ., թուլացել էր և, ամենայն հավանա-

20 Կարապետ եպիսկոպոս, Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք, էջ 93։

21 Անդ, էջ 94։

22 Անդ, էջ 93։

23 Անդ։

24 Անդ։

25 Կիրակոս, էջ 359։

26 Գարեգին կաթողիկոսը փաստարկելով հաստատել է, որ Կեչառեցու «Ողբ»-ը գրվել է 1295 ու 1298 թթ. արանքում (տե՛ս Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 176)։

27 Տե՛ս Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 527։

կանությամբ, նրանց տիրույթներն անցել էին Դոփյաններին։ Հետագայում, 15-րդ դ. վերջում, այդ տոհմը նորից զորացել էր»[28]։

Վերոհիշյալ կարծիքն անվերապահորեն ընդունում է նաև Գ. Կիրակոսյանը, որն այս առթիվ վերջերս գրել է. «Սկսած 1282 թ. մինչև 1383 թ. աղբյուրներում Հասան-Ջալալյանների մասին հիշատակությունների չենք հանդիպում...»։ Ապա անմիջապես անդրադառնալով Կարապետ եպիսկոպոսի հայտնած ենթադրությանը, Կիրակոսյանն ավելացնում է. «Այս միտքը (Կարապետ եպիսկոպոսի ենթադրությունը—Բ. Ու.) հաստատում են 14—15-րդ դարերում Դոփյանների թողած որոշ արձանագրություններ, որոնցում Դոփյան իշխաններն իրենց տեր են համարում Ականա, Հանդաբերդի, Հաթերքի, Խաչենի և այլ վայրերին։ Հարյուրամյա լռությունից հետո, 1383 թ. սկսած, ժամանակի աղբյուրները նորից սկսում են խոսել Ջալալյանների մասին»[29]։

Գ. Կիրակոսյանը երևի մտածում է, թե Ծարը Խաչենի մաս չի կազմել։ Սակայն անկախ այս թյուրիմացությունից, պատմական իրականությանը չի համապատասխանում նրա եզրակացությունը։ Աղբյուրների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ, ճիշտ է, թաթար-մոնղոլական տիրապետության հաստատումով թուլացել էր ներքին Խաչենի իշխանությունը (ինչպես և հայկական մյուս մեծ ու փոքր բոլոր իշխանությունները), սակայն և այնպես Հասան-Ջալալյանք կային ու մնում էին իրենց ժառանգական կալվածքների տերը՝ ինչպես ամբողջ XIV դարում, այնպես էլ հետագայում։

Ամարասի եպիսկոպոս Ներսեսի արձանագրությունը Գանձասարում 1282 թ., հարկավ վերջին տեղեկությունը չէ Աթաբակի մասին, ինչպես կարծում են դիտնականները։ Այս թվականից հետո Աթաբակն իշխանությունը վարել է ևս հինգ տարի և, ժամանակագրի վկայությամբ, ինչպես արդեն տեսանք, մահացել է 1287 (ՉԼԶ) թվականին. «Զմեռն խիստ եղեւ։ Մեռան մեծ իշխանք ի Խաչեն՝ Աթաբակ որդի Ջալալին և Հասան թոռն Դաւիթին»[30]։ Եվ Աթաբակին էլ անմիջապես փոխարինել է նրա որդի Ջալալը, որի մասին վիմագրական տեղեկություն ունենք 1293 թվականից։ Հաթերքի իշխանազուն Խոյդանի որդի Խութլուբեկը Մեծառանից Ս. Հակոբա

28 *Л. О. Бабаян,* Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV веках, М., 1969, էջ 189:

29 Գ. Կիրակոսյան, *Հասան-Ջալալյան իշխանական տունը XIV դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 5, էջ 88։*

30 *Մժ, Ա, էջ 48։*

վանքին «ընծաւիք» միաբանում է՝ «յիշխանութեան Ջալալին...ՉԽԲ» (1293) թվականին[31]։

Հարկ ենք համարում նշելու, որ Ջալալի իշխանությունը բավական ակնառու երևույթ է եղել, եթե այն հարկադրված նշել է նաև Հաթերքի տերը՝ Խաչենի իշխանության մյուս ճյուղի պայազատը։ Գանձասարի վանքում ՉԿ (1311) թվականից արձանագրություն է քանդակվել այն առիթով, որ Աբուքանն ու նրա ամուսին Մինան «յիշխանութեամբ Ջալալին եւ յառաջնորդութեան տեառն Յոհաննէսի» վանքին են նվիրել Ջարեքդարը (երևի գյուղը, որն այժմ էլ կա Մարտակերտի շրջանի հյուսիս-արևմտյան մասում, Թարթառի ափին) և այլ ընծաներ[32]։

Որոշ ժամանակ անց մի այլ նվիրատու նույն Գանձասարի վանքի պատին քանդակած իր արձանագրությամբ այսպես է հավաստել Ջալալի իշխանությունը. «...Ես Գերգ որդի Հայրապետայ [և] ամուսին իմ Մինա, յիշխանութեամբ Ջալալին, միաբանեցաք սուրբ ուխտիս, տուաք ընծա։ Տէր Յոհաննէս և միաբանքս տուին պատարագ Նոր կիրակէին... Թվին ՉԿէ» (1318)[33]։

Գանձասարի վանքի հյուսիսային պատի վրա կա նաև մի անթվական արձանագրություն, որով Պետրոսի որդի Սարգիս քահանան պատմում է, թե «իշխանութեամբ Ջալալին» միաբանել է վանքին ու տվել «Ե (5) գիրք և այլ ընծա»[34]։

Հիշատակված Ջալալն անշուշտ Աթաբակի որդին է և Հասան-Ջալալի թոռը։ Ջալալի մասին սույն արձանագրությունը գտնվում է Աթաբակի իշխանությանը վերաբերող (Ամարասի եպիսկոպոս Ներսեսի կողմից 1282 թ. քանդակած) արձանագրության կողքին։ Երկու արձանագրությունները քանդակված են նույն ձեռքով, նշանակում է՝ արձանագրությունը քանդակվել է 1282-ից հետո, բայց այդ թվականի մոտ ժամանակում։

Ուշադրավ է, որ XIV դ. սկզբներում արդեն, Ներքին Խաչենի քաղաքական իշխանության հետ միասին, հոգևոր իշխանությունը

31 Մ. Բարխուտարյանց, *Արցախ, էջ 170։ «Բանասէր», 1901, հատ. Գ, պրակ Բ և Գ, էջ 137։*

32 Շանխաթունեանց, *Հ. Բ, էջ 376։*

33 *Առաջին անգամ արտագրել է Հ. Ա. Օրբելին (տե՛ս ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի արխիվում պահվող «*Надписи Гандзасара и Հաւոցքտուկ, Птг., 1919» *(«Օրբելի, №...») գրքույկի տպագրական առանձնատիպի էջ 25)։*

34 Ջալալեանց, *Ա, էջ 190։*

ևս գտնվում էր Հասան-Ջալալյանների ձեռքում։ Եթե իշխան Ջալալը Աթաբակի որդին էր և Հասան-Ջալալ Դոլայի թոռը, ապա արձանագրությունների մեջ հիշատակված Գանձասարի առաջնորդ Հովհաննեսն էլ Հասան-Ջալալի եղբայր Իվանեի որդին էր։ Այդ նա էր, որ դեռևս Աթաբակի օրոք և նրա հրամանով 1271 թ., վանքի առաջնորդը լինելով, վանքի համար իր «հալալ արդեանց» միջոցով գնեց Վարդանաթաղը, «մին չորեցեզըն» և այլ ընծաներ։ Նա հենց այս արձանագրության մեջ ներկայանում էր որպես «Յոհաննէս որդի Իւանէի»[35]։

Եվ կարևորն այն է, որ իշխանազուն Հովհաննեսի եպիսկոպոսությունը մի պատահական երևույթ չէր. հետագայում արդեն Գանձասարի ու Մեծառանից Ս. Հակոբա վանքերի առաջնորդներ պիտի ձեռնադրվեին բացառապես Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչներից։

Ջալալ իշխանի հետագա կյանքի մասին տեղեկություններ չկան։ 1361 թ. արդեն իշխանության գլուխ էր կանգնած մեկ ուրիշը՝ Մեծ հորջորջված Իվանեն։ «Թվ. ՊԺ (1361) իշխանութեամբ մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ փափագանաւք գնեցի զանգականիս, սուրբ ուխտս բերի»[36]։

Այս Իվանեի մասին, դժբախտաբար, ուրիշ տեղեկություններ չունենք։ Սակայն դժվար չէ նրան տեղավորել Հասան-Ջալալյանների տոհմացանկում՝ իրեն վերապահված օղակում, այսինքն՝ համարել Ջալալ մեծի որդին, քանի որ վերջինս ավագ որդուն պետք է կոչեր հոր անունով, իսկ Ջալալի հոր անունը, ինչպես հայտնի է Գանձասարի հայտնի ձեռագրի հիշատակարանից, եղել է Իվանե Աթաբակ։ Ջալալ Բ-ի պապ Հասան-Ջալալն իր կողակից Մամքանի և միակ արու զավակի՝ Մոնղոլիայի մայրաքաղաք Կարա-կորում գնալ-գալու մանրամասները պատմելիս երկու անգամ հիշատակում է որդու անունը. առաջինում՝ «ես եւ ամուսին իմ Մամքան եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք արեւելս հիւսիսոյ...», իսկ երկրորդում՝ «...պարգևէ զխաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ և միոյ մանկանս իմ Իւանի...»[37]։ Պարզ է, որ նորածին Իվանեին ևս, ըստ սովորության, կոչել են այդպես՝ Աթաբակ Իվանե[38], ուր «աթաբակ»-ն արդեն ոչ թե տիտղոս էր, այլ անվան մաս։

35 Орбели, № 39։

36 Անդ, № 11։

37 Մատենադարանի ձեռ. № 378, էջ 8բ—9ա։

38 Տե՛ս Орбели, № 3։

Իսկ հետագայում նրան կարող էին կոչել և՛ Իվանե, և՛ Աթաբակ, ինչպես որ հայր Հասան-Ջալալին էին կոչում՝ ինչպես միայն Հասան, այնպես էլ միայն Ջալալ։ Հետո կտեսնենք, որ Հասան-Ջալալի որդին հետնորդների հիշողության մեջ երկու անվամբ էլ հայտնի էր. եթե թոռը կոչվում էր Իվանե, ապա սրա հետնորդների համար ավելի նախընտրելի էր Աթաբակ անունը։ Ամեն պարագայի՝ Ջալալ Բ-ն իր ավագ որդուն կոչել էր պապի անունով՝ Իվանե, և սա էլ իր ավագ որդուն պիտի կոչեր պապ Ջալալի անունով։ Այդպես էլ եղավ։ XIV դ. վերջին արդեն Ներքին Խաչենի իշխանն էր Իվանե Բ-ի որդին, որին ժամանակագիրը պատվում է «պարոն» տիտղոսով. «ՊԼԲ-ն (1383) էր, մեհեկի ամսի ԻԶ-ն (26) էր[39], որ կամեցաւ, որ է սուրբ Աւետարանս Մեծակողմանց Խաչինոյ եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէն՝ իշխանութեամբ պարոն Ջալալին. եպսութեամբ տէր Գրիգորին Գեռաքարեցին»[40]։

Ուշադրության արժանի է Գրիգոր Գեռաքարեցու առաջնորդ լինելը Ծարա իշխանության հոգևոր կենտրոն Խաթրավանքում (Մեծկողմանց եպիսկոպոսարանում)։ Գեռաքարեցիք, ինչպես համոզիչ կերպով հաստատել է Գարեգին կաթողիկոսը, Ներքին Խաչենի տերերից էին, Հասան-Ջալալյանների ու Խաղբակյանների մերձավոր տոհմակիցները[41]։ Վկայակոչված փաստը խոսում է այն մասին, որ Ներքին Խաչենի իշխանության հոգևոր ազդեցությունը ևս տարածված էր Վերին Խաչենի կամ Ծարա տարածքի վրա։ Սակայն տվյալ պարագային մեզ համար առավել կարևորը

39 «Մեհեկի» հին հայկ. տոմարի յոթներորդ ամիսն էր։ ՊԼԲ-ի մեհեկի ամիսը համապատասխանել է 1383 թ. հունիսի 14-ից մինչև հուլիսի 13-ը։ Հետևաբար, հիշատակարանը գրվել է 1383-ի հուլիսի 9-ին։

40 Մատենադարան, ձեռ. № 6288, թ. 112ա։ Հմմտ. «Արցախ», էջ 263։

Ավետարանի այս և նախորդ ու հաջորդ հիշատակարանները, ձեռագրի հանգամանալից նկարագրությունն ու քննությունը տե՛ս Գար. արքեպ. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Ավետարանը). Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, էջ 41—75։

Ավետարանը գրված է XIII դարի սկզբին (1211) Հաղբատի վանքում։ 1223-ին Անիում գնել է ոմն Սարգիս և Հասան-Ջալալի իշխանությամբ բերել, նվիրել իր անդրյան (ուսման և դաստիարակության) տեղի Մեծկողմանց եպիսկոպոսարանին, որ էր Խաթրավանքը։ Վերոհիշյալ հիշատակարանը գրվել է 1383 թ. հուլիսի 9-ին՝ Ավետարանը վերակազմելու և նորոգելու առթիվ։

41 Տե՛ս Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 14—17։

Մարա հոգևոր կենտրոնում ընդօրինակված ձեռագրի բովանդակությունն է. հիշատակագիրն այստեղ առաջին հերթին հիշում է պարոն Ջալալի իշխանությունը։

Դա աներկբայորեն նշանակում է՝ տեղի իշխանները ստորադասված էին Ներքին Խաչենի տեր Ջալալին։ Իսկ մենք գիտենք, որ այս ժամանակներում Մարա իշխանն էր Հասան Դոփյանը, ըմբոստ ու հայրենասեր այն իշխանը, որն իր գերդաստանի շատ անդամների հետ միասին նահատակվեց մի քանի տարի անց՝ 1387-ին և մտավ Գրիգոր Մերենց Խլաթեցու հայտնի չափածո վիպասանության մեջ[42]։

Ուրեմն, XIV դ. երկրորդ կեսում ևս Ներքին Խաչենի իշխանությունը ոչ միայն նսեմացած չէր, կամ նրա ներկայացուցիչն ստորադասված չէր Մարա տեր Դոփյաններին, այլև դահերեց էր վերջիններիս նկատմամբ, նույնիսկ մի այնպիսի նշանավոր իշխանի հանդեպ, ինչպիսին Հասան Դոփյանն էր։

Օտար բռնակալների նոր ասպատակությունները.— Աղբյուրները պատմում են Ոսկե Հորդայի վայրենաբարո զորքերի ասպատակությունները XIV դարի 80-ական թվականներին՝ Անդրկովկասում և Հայաստանում։ Թոխթամիշ խանի գլխավորությամբ կատարված զարհուրելի կոտորածներին ու ավերածություններին ենթարկվեցին հատկապես Հյուսիս-արևելյան Հայաստանի գավառները, թերևս ամենից շատ՝ Մարն ու շրջակաները։ Թոխթամիշի շարագործություններին հաջորդեցին Լանկ-Թամուրի ավերիչ արշավանքները։ Գրիգոր Մերենց Խլաթեցու չափածո հիշատակարանում և այս ժամանակ գրված ուրիշ հիշատակարաններում մանրամասն տեղեկություններ կան այն նահանգների ու գավառների մասին (Այրարատյան դաշտ, Բջնի, Սյունիք, Մար և այլն), որոնք ոտքի կոխան դարձան այդ արշավանքներից։ Սակայն տուժած գավառների շարքում չի հիշվում Ներքին Խաչենը։ Կարելի էր մտածել, թե երկրամասի իշխանը խոհեմաբար, ապուպապ Հասան-Ջալալի պես փորձել է լեզու գտնել բռնակալների հետ և իր տիրույթները զերծ պահել եկվորների ավերածություններից։ Սակայն բուն Խաչենում ստեղծված ձեռագրերի հիշատակարաններից չի կարելի հանգել այդպիսի եզրակացության։ Օրինակ, Գանձասարի առաջնորդ Մատթեոս Մոնոզոնի հիշատակարանը (1417 թ.) արժեքավոր

42 Ժե, Ա, էջ 275—276։

տեղեկություններ է հաղորդում հեղինակի հայրենի Ներքին Խաչենի նախորդ տարիների վիճակից։ Մոնոզոնը նախ պատմում է հարեվան Սյունիքի տերանց հասած չարիքների մասին. Սմբատ Բուրթելյանց իշխանը փախստական գնաց Վրաստան, այնտեղ էլ «յօտարութեանն վախճանեցաւ», և երկու որդիները եկան հայրենիք, բայց տեր չեն իրենց իշխանության, այլ գտնվում են «ընդ ձեռամբ անօրինաց»։ Ապա հաղորդում է. «Իսկ տանս Խաչենոյ բարեպաշտումն կայր՝ Զազայ անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք նորին և որդիք Զազային՝ Արղութէն և Ջալալադաւլէն, և եղբայրք նորին էլեգումն և էլեգանն՝ էն ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան»[43]։

Մատթեոս վարդապետի հիշատակարանի համաձայն՝ 1417-ին Ներքին Խաչենի իշխան Զազան արդեն վախճանված էր, իսկ Ջալալը, ինչպես և նրա ու Զազայի որդիները, գտնվում էին անօրենների ձեռքի տակ՝ «ի ներքոյ ձեռին անօրինացն», որ, հավանաբար, նշանակում է՝ հպատակ էին։

Զազան իշխանության գլուխ էր կանգնած դեռևս 1407 թ., թերևս նրանից առաջ էլ։ 1407-ից ունենք արձանագրություն, որ գրել է Մեջլիսի որդի Ուլուբեկը, պատմելով, թե տվեց իր «հայրենի հողն Ղուղտանոսի կտուրն, որ ի Վարդանբերանց է իւր սարհատովն, ի սբ ուխտս Գանձասարայ... յառաջնորդութեան Մատթեոս վարդապետին և իշխանութեան Զազին»[44]։

Մեջլիսը Ջալալի որդիներից էր[45], այն Ջալալի, որ դեռևս 1383-ին իր հայրենի նահանգի իշխանն էր և այս արձանագրությունից 10 տարի հետո էլ կենդանի էր՝ օտարների տիրապետության ներքո։ Ջալալը մահացել է 1431-ին, երևի խոր ծերության մեջ։ Գանձասարի վանքի գավթում է գտնվում նրա շիրմաքարը՝ հետևյալ կարճ տապանագրով. «Այս է հանգիստ մեծին Ջալալի, աղաւթս յիշեցէք։ Թվ. ՊՁ» (1431)[46]։

43 Ժե, Ա, էջ 194։

44 Շահխաթունեանց, Բ, էջ 374—375։

45 «Արցախ», էջ 187։

46 Օրբելի, № 63։

Գ. Կիրակոսյանը, խոսելով Զազայի և նրա ժամանակի անցուդարձերից, այն կարծիքն է հայտնում, թե Ջալալը Զազային է հաջորդել, «քանի որ Զազայի եղբայրները, ինչպես նշում է գրիչը, գտնվում էին անօրենների ձեռքում, իսկ նրա որդիները, հավանաբար, անչափահաս էին, այդ պատճառով իշխանությունն անցել է

Զազայի իշխանության մասին խոսք կա նաև 1411 թվականից. Ծարա Գետամիջի վանքում Թովմա Սյունեցու գրած հիշատակարանը նրան ներկայացնում է իբրև ամբողջ Խաչենի ու Ծարա տանուտերերի (իշխանավորների) գլխավորին։ Հիշատակագիրը բարի խոսքով է հիշում Ծարա իշխանական տան կենդանի ներկայացուցիչներին, ապա՝ «յիշատակ եղիցի և ի սմա ազատացն տանս Դաւբեան, նախ՝ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթապակին և այլ ամենայն ազատաց։ Նաև յիշել ի տէր զամենայն տանուտեարսն սստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Զազին...»[47]։

Սյունեցի գրիչն սխալվել է՝ Աթաբակին ու Զազային Դուիյան (Ծարա ճյուղի) տանուտերերի հետ խառնելով։ Այս շրջանի ծարեցի իշխանավորների մեջ նման անուններ չկային։ Աթաբակը Ներքին Խաչենի տերերի՝ արդեն ավանդական դարձած անունն էր, և այստեղ հիշատակված Աթաբակի մասին մենք ուրիշ վկայություններ էլ ունենք[48]։ Ինչ վերաբերում է Զազային, ապա, ամենայն հավանականությամբ, նա այս ժամանակ համարվում էր Խաչենի երկճյուղ մնացած (Հաթերքի ճյուղն արդեն մարել էր) իշխանության գահերեցը, կամ, եթե հիշատակագրի միտքը լրացնենք, առաջինը երկրամասի ամենայն տանուտերերի մեջ։

Ուրեմն, Զազան դեռևս կենդանի էր 1411 թվականին։

Սակայն ինչո՞ւ Ջալալի իշխանությունն ընդմիջվել է Զազայի՝ շուրջ մեկ տասնյակ տարիների գահակալությամբ։

Մատթեոս Մոնոզոնի պատճառաբանությունը 1417 թ. առումով, թե «Ջալալն և որդիք նորին... են ի ներքո ձեռին անօրինացն», կարող է նշանակել գերություն, բացակայություն Խաչենից։ Մենք գիտենք, որ բնակչությանն ու իշխանազուններին գերե-

Ջալալին։ Ջալալը իշխել է մինչև XV դարի 40-ական թվականները...» և այլն (տե՛ս նրա «Հասան-Ջալալյան իշխանական տունը XV դարում», էջ 89)։ Սակայն հենց սրանից առաջ ինքը՝ Գ. Կիրակոսյանը խոսել էր 1383 թ. հիշատակարանում նշված Ջալալի իշխանության մասին (անդ, էջ 88) և ապա՝ 1431 թ. մահացած Ջալալի իշխանությունը չէր կարող շարունակվել մինչև նույն դարի 40-ական թվականները, որքան էլ 1456 թ. կամ նույնիսկ ավելի ուշ՝ ժառանգներին վերաբերող նյութերում հիշատակվի նրա անունը (անդ, էջ 89—90)։ 1456 և 1471 թթ. նրա անունը տրված է սոսկ որպես ժառանգների նախորդի՝ առաջինի հոր, երկրորդի պապի։

47 Առաջին ընդօրինակող Փիրղալեմյանը (Նստարք, էջ 40) «Զազին»-ի տեղ կարդացել է «Զազիկ» (տե՛ս Ժե, Ա, էջ 122—123)։

48 Հ. Օրբելի, № 19։

վարում էին ոչ միայն Կարա-Յուսուֆի ժամանակ, այլև նրանից առաջ, իշխանազուններին՝ հատկապես, որովհետև նրանցից էր, որ կորզում էին մեծ փրկագին։ Հնարավոր է, որ հենց այդ ամբողջ ժամանակ էլ Ջալալը գերության մեջ եղած լիներ, մի հանգամանք, որ տոհմակից Զազային իրավունք կտար իշխանությունը վարելու։

Զազան Ջալալի տոհմից էր՝ հասկանալի է։ Հիշատակագիրը խոսելով նրա մասին, ավելացնում է՝ «յազգէ սորին Ջալալն»։ Սակայն, հավանաբար, եղբայրը չէր։ Այլապես այսքան մոտիկ արյունակցությունը կնշվեր տեղացի հիշատակագրի կողմից։ Կարծում ենք՝ նա եղել է Ջալալի հայր Իվանեի եղբայրը։ Այս կերպ նա կարող էր ունենալ Ջալալ անունով որդի և, եղբայր Իվանեի որդի Ջալալից տարբերելու համար էլ, սրան պիտի կոչեին Ջալալդավլե։

Այսպիսով. Աթաբակ Բ-ն ունեցել է Զազա, Եղեկում և էլեգան եղբայրներ։ 1417 թ. առաջ Զազան մահացած էր, իսկ մյուս երկուսը գտնվում էին «ի ներքո ձեռին անօրինացն»։

Ջալալ Գ իշխանին հաջորդել է Աղբաստը, մի ականավոր գործիչ, որի մասին աղբյուրները խոսում են մեծարանքով։

Մեզ հասած առաջին տեղեկությունն Աղբաստի մասին 1443 թ. է. «Տէր Վարդան՝ որդի Ջալալի», այսինքն՝ եղբայր Աղբաստի, Ծակ-խաչի հողը նվիրում է Գանձասարի վանքին Աղբաստի իշխանությամբ ՊՂԲ (1443)-ին[49]։

Աղբաստին վերաբերող հաջորդ հիշատակությունը մեզ է հասել մի հետաքրքիր իրադարձության առթիվ։ Հասան-Ջալալյան տոհմի երկու պայազատների՝ Ջալալի թոռ ու Մեջլիսի որդի Ուլուբեկի և Արղութինի թոռ ու Մեհրապի որդի Շահանշեի միջև հայրենական կալվածքների վեճ էր ծագել։ «Մեր հայրենեացս մէջն խաւսք իլաւ, պարոն Ուլուպէկին թալեղ մէկ մարդ մեռաւ»,— պատմում է վավերագիրը։ Եվ այս վեճը լուծելու համար երկու կողմերը գնացին Աղպաստի մոտ։ Աղպաստը, նախ, «երեք սահրատին վեր արին կապեց»[50], ապա սահմանեց յուրաքանչյուրի հայրենաբաժին հողամասերի սահմանները (բոլորը գտնվում էին Առաջաձոր գյուղի շրջակայքում, Գանձասարից արևելք)։

Այս գործարքի վկաներն են՝ Գանձասարի վանքի առաջնորդ Եղիան, Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսը («Թոռն Մեծին Աթապէկին»), Ջալալի մյուս որդիները՝ Աղպաստը, Աղեկը, Ամիր-Հա-

49 Հ. Օրբելի, № 44։

50 «Արցախ», էջ 187։

Ըստ երևույթին նշանակում է՝ արյունահեղությանը վերջ տվեց։ Կամ, թերևս, որևէ սովորություն է եղել «արյուն կապելու», որով վերջ է տրվել կռվին։

սանը, Տուրսունի որդի Միրզալին (ճիշտը՝ Միրզաբեկ, որը մի արձանագրությամբ հաստատվում է որպես Ջալալի թոռնորդի)[51] և մի ոմն Պաստամ։ Թիվն էր ՋԵ (1456)[52]։

Վերջում, առանց հայրանվան հիշատակված Պաստամը ևս պիտի Ջալալ Գ-ի որդին լիներ։ 1471 թ. նա Գանձասարի ուխտին է նվիրել «Կունճի հողին կալեն վերն»՝ ներկայանալով որպես «Պաստամ որդի մեծին Ջալալի»[53]։

Ուրեմն, Գանձասարի վանահայր Եղիայից բացի, մյուս բոլորը Ջալալի որդիներն են։ Իսկ ի՞նչ տեղեկություններ կան նրանց մասին

Հովհաննես կաթողիկոսը Աղվանից հայրապետությունը վարել է երկար տարիներ. նրա կաթողիկոսությունն առաջին անգամ հիշվում է 1428 թ. «յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամարասայ, ի գեղս Շոշու կոչեցեալ» գրված մի Ավետարանի հիշատակարանում[54]։

Հետո գրիչները երկար տարիներ հիշում են նրա հայրապետությունը՝ 1456[55], 1464[56], 1466[57], 1468[58] թվականներին։

Այս ժամանակներում Աղվանից կաթողիկոսական աթոռը դեռևս Մեծառանից Սուրբ Հակոբա վանքում էր գտնվում։ Եվ Հովհաննեսն այնտեղ է կանգնեցրել իր մի փառահեղ խաչքարը՝ 1469 թ.։ Այդ խաչքարն առաջին անգամ մասամբ նկարագրել և գիրն էլ լրիվ արտագրել է Խաչիկ վարդապետ Դադյանը։ Հովսեփ Օրբելու այցելության ժամանակ՝ 1909 թ. արձանագրության թվականի մասը ջարդված է եղել, որի պատճառով էլ Օրբելու ընդօրինակությունը պակասավոր է[59]։

Խաչիկ վարդապետի արտագրածն է. «Կամաւն այ ես տր Յոհաննէս||որդի Ջալալին մեծ իշ||խանի կանգնեցի զխաչս ի||փրկութի հոգոյ իմոյ։ ||Որք երկիրպագէք, աղ||աւթս, յիշեցէք։ ||թվ. ՋԺԸ» (1469)[60]։

Սա Հովհաննես կաթողիկոսի վերջին գիրն է, որովհետև մահացել է հաջորդ տարին և թաղվել է Ս. Հակոբա վանքում։ Նրա հուշարձանի վրա այժմ էլ կարդացվում է տապանագիրը. «Այս է հանգիստ տր Ովհանէս կթղս Աղվանից թվ. ՋԺԹ» (1470)[61]։

Աղբյուրներից ինչո՞վ են հայտնի Առաջաձորի հիշատակարանում թվարկված մյուս անունները։

Աղեկի ու Ամիր-Հասանի մասին այլուր տեղեկություններ չկան։

Պաստամը, ինչպես տեսանք, թվարկվածների հարազատ եղբայրն էր, որովհետև իր սեփական արձանագրությամբ ներկայացել էր որպես «որդի մեծին Ջալալին»։

Վարդանը հոգևորական էր՝ հայտնի Գանձասարին տված իր մի ընծային վերաբերող արձանագրությունից, որը գրվել է 1443 թվականին[62]։

Մեջլիսին անմիջապես վերաբերող տվյալներ չկան։ Բայց նրա որդի Ուլուբեկը դեռևս 1407 թ. Գանձասարին նվեր տալու առթիվ թողել է հետևյալ արձանագրությունը. «...Ես Ուլուբէկս որդի Մեջլիսին տվի զիմ հայրենի հողն Ղուզտանոսի կտուրն որ ի Վարդաբերանց է իւր սարհատովն ի սբ ուխտս Գանձասարայ իմ հոգւոյ յիշատակ յառաջնորդութեան Մատթէ վարդապետին և տէրութեան Զազին... ՊՄԶ (1407) թվին»։

Միրզաբեկը (Մակար վարդապետի կողմից տպագրված որպես «Միրզալին») հիշատակարանի տվյալով՝ Տուրսունի որդին էր։ Իսկ ո՞վ էր Տուրսունը։ XV դարի կեսերին Ծարա ճյուղում կար մի Տուրսուն՝ որդի Աղբուղին և հայր Այտինի[63]։ Կարող է շփոթվել նրա հետ։ Սակայն Ներքին Խաչենի Տուրսունի մասին ունենք նաև անմիջական տեղեկություն՝ Գանձասարի վանքում իր իսկ թողած արձանագրությունից. «Ես Տուրսուն՝ թոռն մեծին Ջալալին տվի Մսեր-

51 «Արցախ», էջ 178։

52 Անդ, էջ 187։

Մակար եպիսկոպոսն այս հիշատակարանն արտագրել է Առաջաձորի եկեղեցու մի ձեռագիր Աստվածաշնչի Հոութի գրքի վերջից։

53 Հ. Օրբելի, № 8։

54 ԺԵ, Ա, էջ 384։

55 ԺԵ, Բ, էջ 66։

56 Անդ, էջ 219։

57 Անդ, էջ 244։

Նույն տեղում, էջ 245։ Գանձակի գավառի Լեղանի Ս. Աստվածածին վանքում գրված անթվակիր մի ձեռագրի հիշատակարանի տվյալներից ելնելով՝ Լ. Ս. Խաչիկյանն Ավետարանի ընդօրինակման տարի է համարում 1446—1466 թթ.։ Այստեղ ևս հիշատակված է Հովհաննես կաթողիկոսը։

58 Համազասպ Ոսկյան, Արցախի վանքերը, էջ 162։

«Ի թվ. հայոց ՋԺէ» հեղինակը կարդացել է 1467, որն ուղղված է Լ. Ս. Խաչիկյանի կողմից՝ 1468 թ. (տե՛ս ԺԵ, Բ, էջ 272)։

59 Օրբելի, ԱՀՀ, № 54։

60 «Բանասէր», 1901, հատ. 3, պրակ Բ և Գ, էջ 138։

61 Անդ, էջ 139, Օրբելի, ԱՀՀ, № 66։

62 Օրբելի, № 44։

63 Տե՛ս «Արցախ», էջ 208։

սին հողն ի սբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տր Ներսէսի... ՉԽԲ (1493) թվին»[64]։

Այստեղ ևս ժամանակագրական հետաքրքիր պատկեր է ստացվում. հայր Տուրսունը վանքին նվեր է տալիս 1493-ին, իսկ նրա որդի Միրզաբեկը 1456-ին արդեն այնքան հասուն մարդ էր, որ կարող էր մասնակցել հողային վեճեր լուծելուն։ Տարօրինակ է, սակայն ո՛չ անհավանական, որովհետև խաչենեցիների երկարակեցությունը վաղուց հայտնի իրողություն է։

Մեծն Ջալալին 1431-ին փոխարինել էր Արպաստը։ Աղպաստին էլ 1456-ից հետո (թե որքան հետո՝ հայտնի չէ) փոխարինեց նրա ավագ որդի Սայտունը։ Ըստ երևույթին նրա ոչ այնքան տևական իշխանապետությունը նախորդների փառքն ու հզորությունը չի ունեցել։ Ասենք, այս առթիվ դժվար էլ է վճռական խոսք ասել, քանի որ շուրջ մեկ տասնամյակ ընդգրկող այն ժամանակահատվածում, որ կա նրա հոր մասին պահպանված վերջին հիշատակության և նրա միակ անմիջական արձանագրության թվականի արանքում, Գանձասարում որևէ էական արձանագրություն չի քանդակվել։

Սայտունն իր անունից ունի միայն հետևյալ արձանագրությունը Գանձասարի վանքում. «Ես Սայտունս որդի պարոն Աղբաստին տվի յիմ հայրենացն զՏանձաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Եղիային թվիս ԹՃԺԶ» (1467)[65]։

Հնարավոր է, որ 1467-ին հաջորդող տարիներից մեկում էլ մահացած լինի Սայտունը, որովհետև 1471-ին գրված արձանագրություններում չկա ոչ նրա անունը, ոչ էլ որևէ հիշատակություն տեղի իշխանի մասին առհասարակ։

1471-ից երեք արձանագրություններ կան։ Նրանցից մեկով իրենց ընծաներն են նվիրագործել եղբայրներ Պուտաղն ու Վախտանգը[66]։ Երկրորդով պարոն Փիրհամզի որդի Սմպատն է «Բեմին հողը» տալիս վանքին՝ իր «պապեց հոգոյն»[67]։ Երրորդը պատկանում է Ջալալ Գ-ի որդի Պաստամին, որը նշում է, թե նվիրեց «Կունճի հողին կալէն վերն ի սուրբ ուխտիս Գանձասարայ, առաջնորդութեամբ տէր Ներսէսի, թվին ՉԻ» (1471)[68]։

Վերը տեսանք, թե ով է եղել Պաստամը։ Կոնկրետ տեղեկություններ չկան մյուսների մասին։ Առաջին երկուսից «Վախտանգ» անունը հուշում է, որ կարող է պատկանել Վախտանգ-Տանգիկից սերված ճյուղի որևէ երկրորդական պայազատի։ Իսկ «Սմպատ որդի պարոն Փիրհամզին»-ի մասին դժվարանում ենք որոշակի խոսք ասել սակա նյութի հիման վրա, որովհետև այս ժամանակներում Խաչենի տարածքում հիշվում են նշանավոր (իշխանազուն) մի քանի Փիրհամզաներ, որոնցից ամեն մեկի որդին էլ կարող էր Գանձասարի վանքն ուխտ գնալ և միաբանել նվիրատվությամբ[69]։

Սայտուն իշխանին (կամ այս ժամանակներում առավել գործածական տերմինով՝ պարոնին) փոխարինեց նրա որդի Վելիջանը։ Դժվար է ասել՝ թե ո՛ր թվականից։ Սակայն 1473-ին նա արդեն պարոն է հիշված։ Այդ թվականին Խաչենաձորի Գետամիջի Ս. Աստվածածին վանքում ընդօրինակված Ավետարանի գրիչն իր ժամանակը նշում է որպես «ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին»[70]։

Պետք է ուշադրություն դարձնել այս կարևոր հանգամանքի վրա. Գետամիջի Ս. Աստվածածին վանքը Ծարա ճյուղի երկրորդ հոգևոր կենտրոնն էր ինչպես XV դարում, այնպես էլ նրանից առաջ ու հետո։ Եթե այնտեղ գրվող հիշատակարանում «տեղւոյս տէր» է համարվում ներքին խաչենցի պարոն Վելիջանը, մանավանդ այն պարագային, երբ Ծարա ճյուղն ինքն արդեն բաժանվել էր երեք մանր ոստերի[71], պարզ է, որ Ներքին Խաչենի տերն էր ամբողջ

64 Հ. Օրբելի, № 10։

Շահխաթունյանցը (Բ, էջ 375) ՉԽԲ-ն կարդացել է 1463։

65 Հ. Օրբելի, № 13։ Արտագրողներն այս արձանագրությունն ընդօրինակել են աղավաղումներով. Շահխաթունյանցն արտագրել է Եսայի կաթողիկոսի տետրակից՝ նկատի առնելով սոսկ բովանդակությունը, Ջալալյանցը (Ա, էջ 185—186) թվական չունի։ «Աղբաստին»-ի փխ. «Աղպատա», «Արցախ»-ում թվականը «ԹՃԾԶ» է (1507), որ ակնհայտ սխալ է քանի որ Ժ-ն պարզ երևում է՝ ԹՃԺԶ։

66 Հ. Օրբելի, № 27։

67 Հ. Օրբելի, № 17։

68 Անդ, № 8։

69 Խաչենի ու Գեղարքունիքի Փիրհամզաների մասին տե՛ս Կարապետ Եպիսկոպոս, Դոփյանք, էջ 99—100 և հտգ., Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքները, էջ 194—197։

70 «Արցախ», էջ 247, ԺԵ, Բ, էջ 344։

«Արցախ»-ում թվական է նշված ՉԽԲ (1493)։ Լ. Ս. Խաչիկյանն իրավամբ այստեղ նկատել է Ի և Խ տառերի շփոթություն, հաշվի առնելով, որ ՉԽԲ (1493)-ին հիշատակարանում հիշված Ուզուն Հասան խանն ու Արիստակես կաթողիկոսն արդեն մահացած էին։

71 Տե՛ս Մատենադարանի ձեռ. №7821, էջ 2բ։

Այս երեք ճյուղերի մասին հանգամանորեն կխոսվի գրքի հաջորդ գլխում։

Խաչենի տարածքի գահերեց իշխանապետը։ Մի հանգամանք, որ նկատելի էր նաև նախորդ դարերում, հակառակ հետազոտողների այն պնդումի, թե Ներքին Խաչենն այդ ժամանակ, իբր, անցել էր Ծարա տերերի՝ Դոփյանների իշխանության տակ։

Վելիջանի անունից առաջին արձանագրությունը Գանձասարում 1480 թվականից է։ Վանքին նվերներ է տվել իր և եղբայրների անունից, սակայն հիշել է միայն իր անունը. «...ես Վելիճան եւ եղբայրքս իմ՝ որդիք Սայտունին, թոռն մեծին Աղպաստու տեառն Խաչինո, տուաք Աշմանա իւր Դ (4) սահմանաւն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվիս ՋԻԹ» (1480)[72]։

Պարզ է, որ տեղի իշխանապետն է եղել ինքը՝ Վելիջանը, այլապես նա անպայման (եթե ոչ առաջին հերթին) կնշեր իսկական իշխանի անունը, որ իր եղբայրներից մեկն ու մեկը կլիներ։

Վելիջանի անունից արձանագրություն ունենք ավելի ուշ ժամանակից՝ 1507 թվականից, որ նշանակում է, թե նա շատ երկար է իշխել՝ ամենաուշը XV դ. 70-ական թվականների սկզբից մինչև XVI առաջին տասնամյակի վերջը՝ շուրջ 40 տարի։ 1507-ին նա խաչ է կանգնեցրել, որի արձանագրությունը հետևյալն է ասում. «Ի թվիս ՋԾԶ... ես Վելիճանս՝ որդի պարոն Սայտունին, թոռն մեծին Աղբաստոյ կանգնեցի (զ)խաչս...»[73]։ Մնացածը կոտրված է, և հնարավոր չէ պարզել, թե ո՞ւմ կամ ինչի՞ համար է կանգնեցրել։

Նախորդ արձանագրությունից գիտենք, որ Վելիջանն ունեցել է նաև եղբայրներ («որդիք Սայտունին»)։ Նրանցից միայն մեկի անունն է հայտնի մի արձանագրությունից, որ դարձյալ գտնըվում է Գանձասարում. «...Մելիքս՝ որդի Սայտունին, թոռն մեծին Աղպաստու, տվի շորջար, ըսկի ու այլ ընծայ։ Կակաչանց, Փուտուռանուց, Ծաղկաւանց Բ ըստակն գնեցի, տվի ի սուրբ ուխտս Գանձասար թվիս ՋԽԸ» (1499)[74]։

72 Ջալալյանց Սարգիս արքեպիսկոպոսը թվական է արտագրել ՋԽԹ (1500) (տե՛ս Ա, էջ 187), որ թյուրիմացություն է։

«Աշմանա» տարբեր ձևերով է ընդօրինակվել. Շահխաթունյանցը (Բ, էջ 374)՝ «Ալմանայ», Ջալալյանցը (Ա, էջ 187)՝ «Ալմաա», «Արցախ», (էջ 179)՝ «Աշմանա», Օրբելի (№ 23)՝ Աշմանա։ Մենք արձանագրությունը լուսանկարել ենք. «ԱՇ-ՄԱ||ՆԱ»-ն երևում է պարզ։

73 Հ. Օրբելի, № 74։

Հ. Օրբելին արտագրել է սխալներով։

74 Անդ, № 24։

Լրիվ ու անսխալ ընդօրինակել է միայն Հ. Օրբելին։ Մյուսների մոտ կան աղավաղումներ. Շահխաթունյանցը (Բ, էջ 374) «սկի»-ի փոխ. կարդացել է «սկիհ»,

XV դարի վերջից կա մի արձանագրություն՝ քանդակված Գանձասարի վանքում, որը ևս վերաբերում է Ներքին Խաչենի իշխանական տոհմին։ Այն գտնվում է տաճարի հյուսիսային պատի արևելյան մասում, երկու քարի վրա, 7 տողով. «Վախմս Աթապակին է։ ||Ես Այտինս, Խիմշէս՝||որդիք Աթապակին տվ||աք Աշմանայ տաբի[75] հողն||ի սուրբ ուխտս Գանձասարայ||առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվին ՋԽԴ (1495) ||Դաւթի...»[76]։

Աթաբակը ևս Ջալալի զավակներից էր։ Ըստ արձանագրության՝ ունեցել է երկու որդի՝ Այտին և Խիմշե։ Նրանց մասին այլուստ տեղեկություն չունենք։ Հրաչյա Աճառյանի կարծիքով՝ այս Այտինի ու Խիմշեի եղբայրը, հետևապես և Աթաբակի որդին է եղել Աղվանից կաթողիկոս այն Մատթեոսը[77], որն ըստ պահպանված կաթողիկոսական ցանկերի՝ գահակալել է XV դ. երկրորդ կեսին։

Գիտնականը, ճիշտ է, իր այս վարկածի համար հղում է աղբյուրների, որոնք դժբախտաբար չեն օգնում հարցը պարզելուն և առհասարակ չեն հաստատում Աճառյանի գրած մանրամասները հիշյալ կաթողիկոս Մատթեոսի ու, իբր թե, նրան հաջորդած Արիստակեսի վերաբերյալ։ Բանն այն է, որ գիտնականը, սկզբում Մատթեոսին ներկայացնելով որպես Աթաբակի որդու[78], մի քանի տող հետո դարձնում է «Աթաբեկի եղբորորդին»[79]։

Մատթեոսի ու Արիստակեսի XV դ. երկրորդ կեսի գահակալություն է նշված միայն Խաչիկ Դադյանի ընդօրինակած մի ցանկում[80], որի տեղեկությունն աղբյուրներով չի հաստատվում։

Վերջում անհրաժեշտ ենք համարում երկու խոսք ասել նաև Կարապետ եպիսկոպոսի կողմից Դոփյան ճյուղին վերագրված այն անունների մասին, որոնք առկա են Գանձասարի վիմագրերում։

Ջալալյանցը (Ա, էջ 184—185)՝ «Աղպաստա»-ի փոխ. «Հախպատու», «Արցախ»-ում պակասում են «տվի»-ն, թվականը (առհասարակ պակասավոր է)։

75 «Տաբ-տափ» Ղարաբաղի բարբառով՝ դաշտ, արտատեղ։

76 Հ. Օրբելի, № 19։

Շահխաթունյանցը (Բ, 375) առաջին տողը չունի, «Ալմաճատափ հողն», թվականը՝ ՋԺԶ (1467)։ Ջալալյանցը (Ա, 185), հավանաբար, վերցրել է նախորդից, որովհետև կրկնում է նրան։ «Արցախ», էջ 177. առաջին տողը չունի, թվականը ճիշտ է՝ ՋԽԴ (1495)։ Օրբելի, էջ 11. ճշգրտել է մյուսներին։ «Դաւթի»-ն միայն նրա մոտ է։ Ըստ երևույթին արձանագրությունը քանդակող գրիչի անունն է։

77 Հր. Աճառյան, Հայ. անձ. բառ., Գ, էջ 226—227։

78 Անդ, էջ 226։

79 Անդ, էջ 227։

80 «Ցուցակ ձեռագրաց» Խ. վ. Դադյան, Ա, էջ 89։

Ինչպես տեսանք սույն գլխի սկզբում, հետազոտողը (ինչպես և նրա կարծիքն ընդունողները) հենց այդ անունների մասին իր ենթադրությունն էլ հիմք էր ընդունում՝ հայտարարելու համար, թե, իբր, XIV—XV դարերում Ներքին Խաչենն անցել էր Ծարա Դոփյան իշխանների տիրապետության տակ։

Արդեն քննության առնված արձանագրությունները նորից չմեջբերելու համար հիշենք միայն արձանագրողների ինքնահորջորջումները կամ այն արտահայտությունները, որոնցով բնութագրվում են անունները կրողների տոհմերը։

Ուլուբեկը Ջալալ մեծի թոռն է ըստ վերոհիշյալ հողային վեճի մասին եղած վավերագրի. «Ուլուպէկս՝ որդի Մէջլիսին, թոռն Մեծին Ջալալին»[81]։

Շահանշեն Հասան-Ջալալյան Զազայի հետնորդներից է. իրեն այսպես է ներկայացրել. «Ես Շահանշէս՝ որդի Մեհրապին, թոռն Արղութինի»[82]։ Իսկ ըստ Մատթեոս Մոնոզոնի հիշատակարանի՝ Արղութինն էլ Զազայի որդին է եղել[83]։

Այտինը Հասան-Ջալալյան Աթաբակի որդին էր՝ ըստ իր իսկ արձանագրության. «Ես Այտինս, Խիմշես՝ որդիք Աթաբակին...»[84]։

Սայտոն-Սեյտի անունը ևս խորթ չէ Հասան-Ջալալյաններին։ «Ես Սայտունս՝ որդի պարոն Աղբաստի»,— վիմագրել է Սայտունը[85]։ Իսկ մենք գիտենք, որ Աղբաստը նշանավոր իշխանն էր Ներքին Խաչենի, որդին Ջալալ մեծի[86]։

Ուրեմն, այս անունները, որոնք Հասան-Ջալալյան իշխանական տան XV դարի հավաքական պատկերն են տալիս, դարձյալ գալիս են հաստատելու հիշյալ տոհմի անկանգ հոլովույթն իր պապենական տիրույթների վրա։ Հետևապես XV դարը ևս ոչինչ չէր փոխել Խաչենի իշխանության երկու ճյուղերի փոխհարաբերություններում։ Դարձյալ գերադաս էին մնում Հասան-Ջալալյանները, և Ծարա Դոփյանները ենթակա էին նրանց։

Դոփյան իշխանությունը XIV—XV դարերում.— Դոփյան իշխանության ու նրա պայազատների՝ XIV—XV դարերի կյանքը պատմագիտության մեջ շատ է արծարծվել։ Ցավոք, դա չի օգնել,

81 «Արցախ», էջ 187։
82 Անդ։
83 Ժե, Ա, էջ 194։
84 «Արցախ», էջ 177։
85 Անդ։
86 Անդ, էջ 187։

որպեսզի հստակ պատկերացում ստեղծվի, գծվի իշխանության ճշգրիտ տոհմածառը, բացահայտվեն տոհմաշղթայի այն օղակները, որոնք այս կամ այն չափով ճակատագրական դեր են ունեցել ինչպես տվյալ իշխանության, այնպես էլ նրա բնի վրա գոյացած ավելի մանր ավատական կազմավորումների՝ մելիքությունների համար։ Այդ պատճառով էլ մենք հարկ ենք համարում այստեղ քիչ ավելի հանդամանորեն քննել իշխանության տոհմածառին վերաբերող աղբյուրագիտական նյութերը։

Ուսումնասիրության նախորդ գլխում խոսվել էր Հասան Բ-ի մասին։ Սրա որդին էր Գրիգոր Բ-ը, որն առաջին անգամ հանդես է գալիս 1267 թ., մոր հետ Դադի վանքում քանդակված մի արձանագրությամբ. «Ես Մամքան՝ ամուսին արիականին Հասանա և որդին մեր Գրիգոր, տէրք գոլով տեղոյս հայրենաւք... ի ՉԺԶ (1267) թվին տվաք ի սբ ուխտս զՇովատեղ, զՋաջուռանց, զՉալբեկանց...»[87]։

Այս ժամանակ որդի Գրիգորը միայն կրավորական անձնավորություն էր, որ մոր հետ ուխտի էր գնացել Դադիվանք, և անունն էլ մտցվել էր վիմագրի մեջ։ Իրականում նա իշխանության գլուխ անցավ 1287-ին, հոր մահվանից հետո։

1289 թ. Գրիգորը Ծար գյուղում մի խաչքար է կանգնեցնում երկու տարի առաջ մահացած հոր հիշատակին, որի վրա թվարկում է հայրենի տիրույթները՝ Ականան, Հանդաբերդը, Սոդքը, Շողգահը (Շողուագը), ապա շեշտում Ծար ավանը, որ հոր համար հայրենիք էր ու, իբր, «պարգև քաջութեան»[88]։

Կարապետ եպիսկոպոսն այս արձանագրությունից եզրակացնում էր, թե Հասանը «պատերազմների մեջ ցույց տված իր քաջությամբ թաթարական իշխանության առանձին բարեհաճ ուշադրությանն է արժանացել և Ծարի հետ ուրիշ տեղեր էլ պարգև ստանալով՝ ընդարձակել իշխանության սահմանները, Ականից մինչև Շողվագա, այսինքն՝ Թարթառի հովտից մինչև Սևանա ծովի արևմտյան ափերը...»[89]։

Հետազոտողն այստեղ արձանագրության մի ոչ շատ կարևոր խոսքից կատարում է ընդհանրացումներ, որոնք հեռու են պատմական իրականությունից։ Ծարա իշխանական տան տիրույթների

87 «Արցախ», էջ 205, առանց թվականի։ Մեսրոպ Մագիստրոս, էջ 95բ։ Երկուսի մոտ էլ աղավաղումներ կան։
88 «Արցախ», էջ 405։
89 «Դոփյանք», էջ 65։

ու սրանց ընդգրկած տարածքի հարցի քննությունը մենք կատարել ենք արդեն։ Ասենք միայն, որ Շողվագը գտնվում էր ոչ թե Սևանա լճի արևմտյան ափերին, այլ տեղադրվում է Սևանից հարավ-արևելք և IX դարից սկսած՝ պատկանել է Խաչենին։ Իսկ Ծարը երբեք ուրիշին չի պատկանել, որպեսզի Հասանն այն պարգև ստանար իր պատերազմական քաջագործությունների դիմաց։ Ծար գյուղաքաղաքն ու գավառը Հասան-Դոփյան տոհմաճյուղի ավանդական տիրույթն էր, այնքան հայրենի ու սեփական, որ տոհմաճյուղը հենց այդ անունով էլ կոչվում էր՝ Ծարա իշխանական տուն։

Գրիգորի արձանագրության մեջ՝ Ծարը Հասանի սիրած վայրն էր, որ կարող էր իրողություն լինել, և «պարգև քաջութեան», որ գեղեցիկ խոսք է՝ գրված երախտագետ որդու կողմից։

Գրիգորն ամուսնացած էր Օրբելյան Տարսայիճ իշխանի ավագ դուստր Ասփայի հետ[90]։ Նրանց ամուսնությունը տեղի է ունեցել 1280-ական թվականներին, ամեն պարագայի՝ 1287-ից (Գրիգորի հայր Հասանի մահվան տարուց) առաջ, որովհետև Ծարա մի անթվական արձանագրության մեջ միասին հիշվում են կեսրար Հասանն ու հարս Ասփան («ի հայրապետութեան տէր Գրիգորոյ, յիշխանութեանս Հասանայ, Մամքանայ և Գրիգորոյ և Ասփէի»)[91]։

Դատելով Գրիգորի և Ասփայի արձանագրություններից ու թողած հիշատակարաններից, պետք է եզրակացնել, որ նրանց միջև եղել է պաշտամունքի հասնող մի սեր։

Ամուսինը թաթարաց արշավանքների մեջ էր, և Ասփան նրա համար բեմի սեղան կանգնեցրեց հայրենի խաթրավանքում՝ «նըպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրրիգորի ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս»[92]։ Նույն խաթրավանքում, դարձյալ ամուսնու բացակայությանը, Ասփան խաչքար կանգնեցրեց և կամուրջ կապել տվեց Թարթառի վրա «յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից և ապագայից»[93]։

90 Օրբէլեան, էջ 428։

Ասփայի մայրն էր Ներքին Խաչենի տիրակալ Հասան-Ջալալի դուստր Մինախաթունը։

Ուշագրավ է, որ Խաչենի իշխանության երեք ճյուղերը մինչև վերջ էլ գիտակցում էին իրենց տոհմակցությունը և երբեք իրարից աղջիկ չէին առնում։ Նրանց ամուսնական կապը պետք է անպայման ունենար մի այսպիսի հեռացնող օղակ, ինչպես Օրբելյան տունը Հասան-Ջալալյանների ու Դոփյանների արանքում։

91 Ալիշան, Սիսական, էջ 73։

92 «Արցախ», էջ 194։

93 Անդ, էջ 196։

Կ. Կոստանյանցն այս և նախորդ արձանագրության թվական է դարձրել (կատ-

Ասփայի կատարած մշակութաշահ գործունեության պսակն է համարվում այժմ «Թարգմանչաց» անունով հայտնի Ավետարանը, որ ինքն ու ամուսինն ստացել են և նվիրել իրենց տոհմական տապանատանը՝ Խաթրավանքին։ Այս Ավետարանը գրվել է 1232 թ., Տիրացու գրչի ձեռքով[94]։ Ծաղկող նկարչի անունն է Գրիգոր, առաջին ստացողինը՝ քահանա և պարոն Հովհաննես։

Ասփան երկրորդ ստացողն էր՝ իր ամուսին Գրիգորի հետ միասին։ Ըստ այս գործարքի մասին խոսող առաջին հիշատակարանի՝ Ավետարանն ստացել են ամուսինները միասին. «Զմեծ և զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դաւիթին և զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն զստացաւղք եւ զարդարիչք սբ Աւետարանիս յիշեսջիք»,— խնդրում է հիշատակագիրը[95]։

Մի այլ հիշատակարան՝ գրված արգեն Ասփայի մահվանից հետո, երախտագիտությամբ պատմում է նրա կատարած եկեղեցանպաստ գործերը. որ նա «ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ զարդարեաց զանազան սպասիւք և շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեաց։ Ստացաւ և զսբ Աւետարանս յարդար ընչից իւրոց

կածով) 1251-ը (տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 148), որ շատ հեռու է ստույգ լինելուց։ Այդ թվականին Ասփան ծնված չէր, նույնիսկ նրա մայրն ամուսնացած էլ չէր։ Ստ. Օրբելյանը պատմում է, որ Հասան-Ջալալի նահատակությունից (1261) հետո Տարսայիճը գնաց նրա որդի Աթաբակի մոտ «և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զՄինա խաթունն...» (Օրբէլեան, էջ 424)։

Տարսայիճն, ուրեմն, ամուսնացել է 1261-ից հետո, և նրա ավագ դուստրն ամուսնանալու հասակում կլիներ 1280-ից հետո։

Կարապետ եպիսկոպոսը Գրիգորի ու Ասփայի ամուսնությունը տեղի ունեցած է համարում 1285—90 թթ. («Դոփյանք», էջ 72), որի երկրորդ մասը հեռացնում է իրողությունից, քանի որ, ինչպես վերը տեսանք, Ասփան Դոփյան տանը հարս էր արդեն Հասանի կենդանության օրոք, 1287-ից առաջ։

94 Ձեռ. №2743, թ. 9բ. «ի թիւս ՈՁԱ (1232) ծաղկազարդեցաւ սուրբ Աւետարանս», իսկ էջ 311ա-ի աջ լուսանցքում շրջանակի մեջ՝ «թիւն ՈՁԱ» (1232)։

Գարեգին Հովսեփյանն իր «Թարգմանչաց Ավետարանը» հոդվածում սխալմամբ գրել է, թե այն գրված է 1202 թ. և հղում է 9բ, 10ա, 311ա էջերին, որոնցից երկրորդում թվական չկա, իսկ առաջինում ու երրորդում, ինչպես նշեցինք, «ՈՁԱ» է (տե՛ս «Անահիտ» հանդեսի 1911 թ., 5—6, էջ 97ա)։ Նույն թյուրիմացությունը կրկնված է նաև՝ «Խաղբակյանք», էջ 436-ում։

95 Ձեռ. № 2743, էջ 293բ։ Այս էջում սույն հիշատակարանի պատճենը հետագայում գրել են մանուշակագույն թանաքով, «Դաւիթին»-ը դարձրել «Տալիթին», հետո էլ, իբր թե, ուղղել-դարձրել «Գարփին», որից հետո էլ Մատենադարանի հրատարակած ցուցակում այս «Գարփին» դարձել է ծաղկող-նկարչի հայրանունը՝ «Ծաղկող՝ Գրիգոր որդի Գարփին» (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հատ. Ա, էջ 866)։

և ընծայեաց ի սբ ուխտն իւր Խաղարի վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դոփանց և ինքն կարճատեայ կենաւք փոխի մահուամբ յաշխարհէս առ Քս և դնի ի դանբանի ի նոյն վերասացեալս սբ ուխտն»[96]։

Նույն Ավետարանի մի այլ հիշատակարանից իմանում ենք, որ Ասփան մահացել է 1311 թվականին. «...յայսմ ամի, որ էր թիւն ՉԿ (1311) փոխեցաւ յաշխարհէս Ասփայ»[97]։ Հետևաբար վերևի հիշատակարանը գրված է նրա մահվանից հետո, թերևս անմիջապես հետո՝ որպես նշանավորումն թանկագին կորստի, քանի որ նույն այդ հիշատակարանի վերջում ասված է, որ Գրիգորը «զարդարեալ պճնէ զսա (Ավետարանը—Բ. Ու.) ոսկով և արծաթով ի յիշատակ հոգւոյ սբ ամուսնոյն իւրոյ Ասփայինն»[98]։

Սիրելի կնոջ հիշատակի համար Գրիգորը մեծամեծ նվիրատվություններ է կատարում, որոնց սկիզբը, ըստ երևույթին, հիշյալ ձեռագիր Ավետարանի զարդարելն էր։ 1312 թ. հիշատակարանի համաձայն՝ Գրիգորը Խաթրավանքին նվիրում է «ընծայս յոյլով՝ գիւղորայս, այգիս, անդաստանս, և զարդարէ զսուրբ ուխտն զանազան սպասիւք և հանդերձիւք, ընդ որս աւրենեալ շքեղացոյց և զսուրբ Աւետարանս ոսկենկար կազմածով և շնորհեաց գերեզմանի նորա և իւր նախնեացն յիշատակ»[99]։

Այս Ավետարանը, Գրիգորի հոգածությամբ շքեղացած ու զարդարված, միշտ էլ հանդիսացել է Ծարա առաջնորդարանի՝ Խաթրավանքի սրբազան հարստությունը։ Դոփյան իշխանապետները նրա

96 Անդ, թ. 113բ։

97 Անդ, թ. 183բ։

98 Անդ, թ. 113բ։

Գարեգին Հովսեփյանն այն կարծիքն է հայտնել, թե այս հիշատակարանը «գրված է Ասփայի կենդանության ժամանակ», և նրա մահվան տարի էլ համարում է 1311 թվականը։ Սակայն, ինչպես տեսանք, հիշատակարանը գրված է 1312 թվականին, և այնտեղ էլ Ասփայի մահը հիշվում է ետին թվով։

99 Անդ, թ. 183բ։

Հետաքրքիր է, որ արտագրողների մոտ (Ջալալեանց, Բ, էջ 168, ԺԴ դարի... հիշատակարաններ, էջ 84) այս հիշատակարանի առաջին «ՉԿԱ (1312)»-ի ազդեցությամբ երկրորդը՝ «ՉԿ (1311)»-ը ևս «ՉԿԱ» է դարձել, երբ այնտեղ պարզ նշանակված է «ՉԿ»՝ որպես Ասփայի մահվան տարի (տե՛ս ձեռագիր, էջ 183բ)։

Ավետարանի ներսի զարդերը, նույնիսկ գրերի մեջ օգտագործված ոսկին պահպանվում են։ Իսկ «ոսկենկար կազմածո»-ը գոյություն չունի։ Այն չի եղել նաև Մ. Բարխուտարյանցի ժամանակ (տե՛ս «Արցախ», էջ 291)։

մեջ են գրել իրենց տիրույթների ցանկն ու սահմանները[100]։ Սակայն հետագայում այս թանկագին ձեռագիրն ինչ-ինչ ճանապարհով ընկել է Գանձակի նահանգի Բանանց գյուղի մոտ գտնվող Թարգմանչաց վանքը, որտեղ մնացել է շուրջ մի դար՝ XIX դարի սկզբից մինչև 1900 թվականը[101]։

Գրիգոր իշխանն Ասփայի հիշատակի համար չբավարարվեց տոհմական տապանատանը տված ընծաներով։ 1312 թ. իր անունից՝ Սյունյաց Օրբելյանների տոհմական գերեզմանատունը հանդիսացող Ամաղուի Նորավանքին նվիրում է երկու այգի («Շատենց և զՄարգարտայ այգին»)՝ դրանք գնելով ՌՇ (1500) սպիտակով (արծաթով), որպեսզի տարին երեք պատարագ մատուցվի հանուն իր կին Ասփայի՝ «դստեր արքայաշուք իշխանին Տարսայիճի»[102]։ Օրբելյանների մյուս վանքում Գրիգորը մի արձանագրություն է քանդակել 1317-ին, որով այգի է նվիրում, որպեսզի վարդապետն ու միաբանները սահմանեն երկու պատարագ Ասփայի հիշատակին[103]։

Սրանք են մինչև այժմ հայտնի վիմագրական տեղեկությունները Գրիգորի ու Ասփայի մասին, եթե ասվածին էլ գումարենք Բջնիի վանքի մի պակասավոր արձանագրությունը, որով Գրիգորը, հավանաբար, նվեր է տալիս[104], և Ծարա տարածքում պահպանված մի շարք արձանագրություններ, որոնք գրվել են կողմնակի մարդ-

100 Ձեռ. № 2743, էջ 184բ։

101 Ձեռագրիս և նրա հիշատակարանների մասին՝ տե՛ս Ջալալեանց, Ա, էջ 167—168, «Արցախ», էջ 289—291, Գարեգին Կաթողիկոս, Յիշատակարանք, Ա, էջ 883—886, Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 84։

Ձեռագրի մանրանկարները հանգամանորեն նկարագրված են Գար. Հովսեփյանի կողմից (տե՛ս նրա՝ Թարգմանչաց Ավետարանը. Համառոտ տեղեկություններ էջմիածնի մի քանի մանրանկարների՝ «Անահիտ» հանդեսի 1911, թ. 5—6, էջ 97—102)։ Հետազոտողն այս ձեռագրի մանրանկարների մեջ տեսել է արևելյան, հատկապես պարսկական մանրանկարչության որոշ տարրերի ստեղծագործական յուրացման երևույթը և եզրակացրել, որ «Թարգմանչաց Ավետարանը իր պատկերագրությամբ, լուսանցազարդերով, զարդագրերով արևելյան մոտիվների ուսումնասիրության և համեմատության անբավ նյութ է տալիս» (նշված հոդվածը, էջ 102ա)։

102 Ջալալեանց, Բ, էջ 173, Ալիշան, Սիսական, էջ 198, «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 239։

103 Ջալալեանց, Բ, էջ 142, Ալիշան, Սիսական, էջ 116, «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 55։

104 Շահխաթունեանց, Բ, էջ 185. «ՉՇԲ (1303)... ես Գրիգոր իշխան՝ որդի... Թոռն Դաւիթն...»։

կանց անունից և վերջիններս իրենց պարտքն են համարել նշելու գավառի իշխանի ու նրա կողակցի անունները։

Սակայն շատ կան ձեռագրական տվյալներ, որոնք վերաբերում են և անմիջապես Գրիգորին ու Ասփային, և նրանց զավակ Սարգիս եպիսկոպոսի ու այլ տոհմակիցների առիթով՝ դարձյալ նրանց։

Մենք չենք խոսի այն հիշատակարանների մասին, որոնք գրվել են Սյունյաց իշխանության՝ Օրբելյանների տիրույթներում և, Տարսայիճի, Ջալալ իշխանի ու մյուս ժամանակակիցների կողքին, բարի խոսքով են հիշում նրանց հարազատ Ասփային, երբեմն՝ նաև Ասփայի ամուսին Գրիգորին[105]։ Մեզ համար կարևոր են ձեռագրական այն տեղեկությունները, որոնք անմիջապես վերաբերում են Գրիգորին ու Ասփային կամ նրանց տոհմաճյուղի ճակատագրին։

Այստեղ ստիպված ենք վերստին անդրադառնալ Թարգմանչաց Ավետարանի մի հիշատակարանին, որի մեջ թաթարաց աշխարհակալության խավար երկնակամարի վրա Գրիգորը ներկայացված է որպես մի պայծառ երևույթ. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց, Գրիգոր իշխան հայոց՝ տէր և պարոն Փոքր Սիւնեաց՝ Հանդաբերդոյ և Ականւոյ, և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուագայ», ապա թվարկում է Ծարեցիների ավանդական տիրույթները[106]։

Դրվատանքի այս խոսքերն, իհարկե, որոշ հիմք ունեն. ոչ ոք չի ուրանա Ծարա իշխանազունների քաջությունն ու անցյալ մեծագործությունները։ Սակայն դրվատանքի՝ չափից դուրս վառ գույները գալիս են նրանից, որ հիշատակագրողը ևս նույն տոհմաճյուղից է, հավանաբար՝ Գրիգորի որդի Սարգիսը։ Նա, ճիշտ է, իր մասին խոսելիս կողմնակի մարդու ապավորություն է թողնում. «Իսկ մինն (Գրիգորի ու Ասփայի զավակներից—Բ. Ու.), որում անունն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին»[107]։ Սակայն տիրույթների թվարկումից հետո՝ «ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է» արտահայտությունը, որ Գրիգորի անունից չի ասվում, մատնում է հիշատակագրողի, թերևս՝ նաև գրչի պատկանելությունը տոհմաճյուղին։ Իսկ Խաթրավանքում, ուր գրվել են այս

105 Տե՛ս ԺԴ, էջ 85, 100 և այլն։

106 Ձեռ. № 2743, էջ 183ա։

107 Անդ, էջ 183բ։

ու մյուս հիշատակարանները, այդ ժամանակ եպիսկոպոս էր Սարգիսը և միայն նա կարող էր հանդես գալ այդպիսի հիշատակագրությամբ։

Գրիգորի վախճանի մասին ոչ մի տեղեկություն չունենք։ Սակավ են նաև նրա ժառանգներին վերաբերող տվյալները։ Թարգմանչաց Ավետարանի հիշատակարանի համաձայն՝ Գրիգորն ու Ասփան ունեցել են «ուստերս և դստերս», այսինքն՝ ամեն սեռից մեկից ավելին։ Սակայն գրավոր հիշատակներ են պահպանվել միայն երկուսի կյանքից. մեկը Սարգիսն է, որ «նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին», մյուսը՝ Խորիշահը, որ հարս էր գնացել Վեդի գետի ավազանի տեր Մամիկոնյանների տունը[108]։

Սարգսի մասին մեր ունեցած տեղեկությունները սահմանափակ են, սակայն կոնկրետ։ Վերը տեսանք, որ նա մանկուց պապի եղբայր Հովհաննես Գ-ի հետ է եղել՝ նվիրված եկեղեցուն, դաստիարակվել ու կրթվել է նրա ձեռքով։ Եղել է Հաղբատի քահանա և վայելել է մեծ հեղինակություն՝ որպես «ի վարժս կրթութեան բանի և պարապեալ», որ և ուներ ձեռագիր մատյաններ և մեծապես օգնում էր գրիչներին[109]։

Դարասկզբին Սարգիսն արդեն Վերին Խաչենում էր և գլխավորում էր Ծարա ու Հոսթերքի եպիսկոպոսությունները։ Ըստ Թարգմանչաց Ավետարանի հիշատակարանի՝ «արժանաւորութեամբ ի կոչմանէ Հոգւոյն Էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան տանն Խաչենոյ, ընդ մարմնական տէրութեան, զոր ունէր ի հարանց, ստացեալ ընկալաւ և զհոգևոր պետութիւն»։ Համենայն դեպս հոր՝ Գրիգոր

108 Մակար Բարխուտարյանցը (Արցախ, էջ 207), Կարապետ եպիսկոպոսը (Դոփյանք, էջ 78), Գ. Հովսեփյանը (Խաղբակյանք, էջ 437), հիմք ընդունելով Եսայի կաթողիկոսի ձեռագրում եղած Դոփյանց տոհմաբանությունը, Գրիգորին վերագրում են նաև մի Վահրամ որդի, որից «սերվում է Դոփյանց հետագա սերունդը» (Խաղբակյանք», էջ 437)։ Այս վարկածն է արտացոլված նաև Ղ. Ալիշանի կազմած տոհմածառում. այնտեղ Գրիգորն ունի մի Վահրամ որդի, որից ծնվում են Հասան և Սարգիս տղաներն ու Խոշ դուստրը, և առաջին երկուսն էլ սկիզբ են դառնում նոր տոհմաճյուղերի (տե՛ս «Սիսականի»-ի մեջ տեղավորված «Պայազատք Հասան Դոփեանց» տոհմածառը)։ Եսայի կաթողիկոսի ձեռագրի համաձայն՝ ոչ թե Վահրամից է տրոհվում Դոփյանց տոհմաճյուղը, այլ Սարգսի որդի Հասանից. «և որդի Սարգսին Հասանն, և այսպէս բաժանի Դոփա ցեղն որք....» (Թոփճեան, Յուցակ ձեռագրաց Խ. վ. Դաղեանի, Ա, էջ 89, «Արցախ», էջ 207 են)։ Սարգսի օղակը, սակայն, չի հաստատվում աղբյուրներով. էլ չենք խոսում այն մասին, որ, ըստ վերոհիշյալ հեղինակների՝ կուսակրոն Սարգիսը որդիների հայր է դառնում։

109 Մատ. ձեռ. № 2406, էջ 186ա։

Բ-ի 1312 թ. արձանագրությամբ՝ նա Դադի վանքի առաջնորդն էր և, անկասկած, վարում էր նաև իր հայրենի Ծարա եպիսկոպոսությունը։

Անշուշտ Սարգիս եպիսկոպոսին է վերաբերում Դադի վանքի, Խաթրավանքի ու Գետամիջի կամ Աստվածածին վանքի հռչակավոր զանգակները բերել տալը, որ ավանդության ձևով մտել է Եսայի կաթողիկոսի կազմած տոհմագրության մեջ, և հետազոտողներն էլ վերագրում են ինչ-որ Վահրամի որդի Սարգսի։

Սարգիսը Դադի վանքում պահպանված մի արձանագրության համաձայն՝ 1331-ին դեռևս տեղի առաջնորդն է եղել[110]։ Նա մահացել է 1333 թվականին և թաղված է նույն Դադի վանքում[111]։

* * *

Եղեգիսի «Ջորաց տաճարում» պահպանվել է մի այսպիսի տապանագիր. «Ի թվ. ՉՁԲ (1333)։ Այս է հանգիստ Խոշին՝ դուստր Դոփենց Վահրամին»[112]։ Հետազոտողները, սկսած Եսայի կաթողիկոսից, եզրակացրել են, որ այս Վահրամը որդին է եղել Գրիգոր Բ-ի։ Կարապետ եպիսկոպոսը զարմանքով հարց է տալիս, թե ինչո՞ւ Խոշի ամուսնու անունը չի հիշված արձանագրության մեջ. «գուցե նրա մայրն այս կողմերից է եղել, ինչպես և տատն էր, կամ խառն ժամանակների որևէ բերմամբ այստեղ է բերվել»[113]։

Իրականում, սակայն, դժվար չէ պնդել, թե արձանագրության Վահրամը Գրիգորի որդին է, նախ, որովհետև Եսայի կաթողիկոսի կազմած տոհմաբանությամբ արդարացվում է այս կապը։ Ապա այդպիսի կարծիքն ընդունելու համար անհրաժեշտ են անմիջական տեղեկություններ, որպիսիք կարելի է համարել XV դարի ըսկզբից մնացած երկու արձանագրություններ[114], որոնց մասին խոսք կլինի քիչ հետո։

Գրիգոր Բ-ի դուստր Խորիշահի մասին եղած միակ աներկբայելի վկայությունը գտնվում է 1331 թ. Ծառուտիձորի Խումիթ կամ Ջերմառուաց վանքում ընդօրինակված մի Մաշտոցի հիշատակարանում։ Ձեռագիրը Մամիկոնյան Վահրամի ու սրա հարազատների պատվիրածն է։ Գրիչը հիշում է նրանց հականե-հանվանե,

110 Մեսրոպ Մագիստրոս, էջ 94բ։

111 «Արցախ», էջ 206։

112 Ջալալեանց, Բ, էջ 152, «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 110։

113 «Դոփյանք», էջ 78։

114 Ճանիխաթունեանց, Բ, էջ 359—360, «Արցախ», էջ 208—209։

ապա և «...միւս հարսինն՝ Խորիշայի, որդւոյ իւրոյ զՀամազասպայ, քոյր տէր Սարգսի Խաչինոյ տեառն Տաւփեանց»[115]։

Պարզ է, որ խոսքը վերաբերում է 1331-ին դեռևս կենդանի և Վերին Խաչենի (Դադի վանքի ու Խաթրավանքի) առաջնորդ Սարգսին։ Ուրեմն, Խորիշահը նրա քույրն էր և Գրիգոր Բ-ի դուստրը. Սակայն հիշատակարանից դժվար է պարզել, թե Համազասպը Խորիշահի ինչն էր՝ որդի՞ն, թե՞ ամուսինը։

Հիշատակարանում պատվիրատուների տոհմական պատկանելության մասին ասված է, թե նրանք են «ի մեծ սպարապետէն Հայոց սուրբ նահատակին Վարդանայ շառավիղէն յառաջ եկեալ, ի տիրասէր և յաստուածասէր ազգէն Մամիկոնեանց»[116]։

Այս և նախորդ դարում Մամիկոնյան տան բեկորները տիրություն էին անում Դսեղում ու Վեղիի վերին ավազանում[117]։ Հետաքրքիր է, որ մի քանի տասնամյակ առաջ նրանք՝ Մամիկոնյանները, և Ծարա տերերը Արագածոտնի Վաչուտյանների միջոցով կապվել էին խնամիությամբ. Դսեղի Մամիկոնյան պայազատուհի, Մարծպանի դուստր Խորիշահն ամուսնացել էր Քուրդ Վաչուտյանի հետ, և սրա թոռ Խորիշահն էլ հարս դնաց Մամիկոնյանների տունը։ Մի Խորիշահ այնտեղից դուրս եկավ XIII դարի կեսերին, և նրա թոռնորդին՝ դարձյալ Խորիշահ անունով, XIV դ. սկզբին հարս եկավ տատի պապոնց տունը։

1330 թ. գրված մի ձեռագրի հիշատակարան[118] մեր առաջ ներ-

115 Մատ. ձեռ. № 4083, էջ 235բ—236ա։ Տե՛ս նաև՝ ԺԴ, էջ 232։

Աշ. Հովհաննիսյանն արդեն նկատել է, որ թյուրիմացություն է սպրդել «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի առաջաբանի 14-րդ էջում, ուր Սարգիս եպիսկոպոսը համարված է Գրիգոր իշխանի միակ որդին (Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 456, ծան. 1)։

116 Անդ, էջ 235բ։

117 Գարեգին կաթողիկոս, Խաղբակյանք, էջ 18, 444։

118 Ձեռագիրն Ավետարան է, որ ընդօրինակվել է մինչև այժմ չբացահայտված Ջղանա անապատում (Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 224)։ Սակայն քանի որ գրիչը միաժամանակ վանքը կոչում է նաև Սուրբ Աստվածածին, որը գտնվում էր Դոփյանց տիրույթում, մենք հակամետ ենք կարծելու, թե խոսքը Հովհաննես Գ-ի ու Գրիգոր Բ-ի կառուցած Սուրբ Աստվածածնի մասին է, որը կոչվել է նաև Գետամիջի վանք։

Որ վանքը (ուր ընդօրինակվել է Ավետարանը) Դոփյանց տիրույթների մեջ էր մտնում, երևում է հիշատակագրող-գրչի խոսքից. նա իրեն ներկայացնում է որպես «Կիրակոսի պիտականուն վարդապետի Եղնկայեցւոյ, նշդեհի» (ուրեմն, Երզնկայից է և այստեղ՝ պանդուխտ), ապա Դոփյան Վեգենին ու Քիշարին համարում է վանքի պարոնտերեր (հովանավորներ ու տերեր), որոնք միաժամանակ և պարոններ են

կայացնում է Ծարա իշխանական տան մի նոր ու հետաքրքիր օղակը։ Ավետարանն ընդօրինակվել է Դոփյան Վեգեն կամ Վրթանես կոչված իշխանի պատվերով, «որ արհամարհեաց զսնուտի փափկութիւն կենցաղոյս՝ խարազանագեստ եղեալ կրաւնաւորեցաւ»[119]։ Կրոնավորյալ Վեգենն ու իր եղբայր Բիշարը վերակառուցում են Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցում Դեղձանավանաց եկեղեցին՝ գավթով հանդերձ[120], ապա բազմաթիվ կրոնավորներ հավաքում ու ստեղծում աշխույժ կյանքով ապրող մի ուխտ։ Հավանաբար 1319—20 թթ. Ղուռումչիի ավեր-ավարից հետո գավառի վանքերն ամայացել ու խարխլվել էին, և նրանց վերականգնման ու նրանցում հոգևոր կյանքի վերարծարծման մասին է խոսում հիշատակագիրը։

Հիշատակարանի վկայությունից հնարավոր է վերականգնել Վեգենի ու նրա հարազատների (գոնե երեք սերնդի) ցանկը։ Հիշա-

---

վանքի սպասավորների համար։ Թվարկում է սպասավորներին, հետո էլ՝ «որ բազում բարութիւնս արարին մեզ՝ նման աստուածասէր պարոնի (Վեգենի) իւրեանց» (Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 225)։ Անկասկած է, որ վանքը գտնվում էր Դոփյանց տիրույթում, իսկ այնտեղ կար միայն մեկ Աստվածածին վանք, որի մասին խոսել ենք Հովհաննես Գ-ի կապակցությամբ։ Հետևաբար ուղղելի է Լ. Ս. Խաչիկյանի կարծիքը, որի համաձայն Ջղանա անապատը պետք է տեղադրվեր Դոփյանների հայրենիքից դուրս, Վրաստանում (տե՛ս ԺԴ, էջ XIV)։

Աշոտ Հովհաննիսյանը ենթադրում էր, թե «Ջեռագրում հանդիպող Ջղոնա անապատը պետք է, որ գտնված լինի Վեդիի շրջանում, Խոսրովի անտառի և Օրբելյանների նախկին կալվածների սահմաններում կամ դրանց առընթեր։ Այժմ էլ գոյություն ունի Ջղին անունով գյուղ, որ հավանորեն նույնն է XIV դարի Ջղոնի հետ» («Դրվագներ», Ա, էջ 456, ծան. 2)։

Անվանի գիտնականի այս տեղադրությունը դժվար է ընդունել, չնայած առկա Ջղոնա-Ջղին նմանությանը, որովհետև, ինչպես տեսանք, Ջղոնա անապատը գտնվում էր Ծարա իշխանության մեջ, իսկ այս իշխանությունը չէր տարածվում այժմյան Վեդու շրջանի վրա։

Այս ձեռագրի հանգամանալից և հետաքրքիր քննությունը կատարված է Հ. Քյուրտյանի կողմից (Հ. Քյուրտյան, Մանրանկարիչ Կիրակոս Թավրիզեցի. «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ, 1949—1950, Անթիլիաս, էջ 125—130)։ Քյուրտյանը ևս չի որոշել «Ջղանա անապատի» տեղը (անդ, էջ 122)։

119 Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 224։

120 «...և շինեալ եկեղեցին Դեղձանավանաց՝ սալեցին, և զժամատունն գեղեցկապէս յաւրինեցին» (Լ. Խաչիկյան, ԺԴ, էջ 224)։ Ձենք կարծում, թե այստեղ խոսքը վերաբերի Դեղձնուտի վանքին, որը գտնվում էր Ծարից դուրս, Մեծկվենք գավառում։ Ծարում եղել է Դաղձանաց (թե՞ Դեղձանաց) գյուղ, հետագայում կոչված Ցարփուլլու, հավանաբար այս անունից է և վանքի անունը (տե՛ս Ե. Լալայան, Նոր Բայազետի գավառ, «Ազգ. հանդես», 1910, № 1, էջ 10)։

տակված է Վախախ անվամբ մի հանիկ (տատ), որի որդին է Վարդանը (կինը՝ Մահան), որոնց որդիներն են՝ կրոնավորյալ Վեգեն-Վրթանեսը, իշխան Բիշարը (մի անգամ գրված «Պիշար»), կինը՝ Թաւղթան, որդին՝ Հասան, պարոն Ալլատան (մի անգամ գրված «Ազատայն»), որդին՝ Վարդան, դուստր Խորիշահը (ամուսինը՝ Ջեսար), մյուս դուստրը՝ Վախախ։

Լրացուցիչ փաստեր չկան, որպեսզի պարզենք, թե ինչպես է, որ 1330-ին Ծարում իշխաններ էին կոչվում ոչ թե գահերից Գրիգորի զավակները, այլ Դոփյան մի երկրորդական ճյուղի ներկայացուցիչներ, որոնց նախնիների մասին լռում են աղբյուրները։

Հիշատակված անունների տոհմաբանության մասին այնքանը կարելի է ասել, որ նրանք սերված էին Հասան Ա-ից ու Դոփից (Վեգենը համարված է Դոփյան)։ Թերևս այստեղ հիշատակվող հանիկ (տատիկ) Վախախը հենց Դոփի հարսն է եղել, բայց ոչ Գրիգոր Ա իշխանի կինը, քանի որ հայտնի է Գրիգորի կնոջ Մամքան անունը[121]։ Վերոհիշյալ իշխանազունների՝ Հասան Բ-ից կամ Գրիգոր Բ-ից սերված լինելը ևս բացառվում է, քանի որ կա առաջինների տատ Վախախի փաստը, իսկ մենք գիտենք, որ Հասան Բ-ի կինը Մամքանն է եղել, Գրիգոր Բ-ինը՝ Ասփան։

Այսպիսով, պարզվում է, որ Հասան Ա-ն ու Դոփը, Գրիգոր եպիսկոպոսից, Հովհաննես եպիսկոպոսից, վաղամեռ Գերգից ու Գրիգոր իշխանից բացի, ունեցել են նաև մի այլ արու զավակ, որի կինն է եղել Վախախը, այդ զավակի ու Վախախի որդին է եղել Վարդանը (կինը՝ Մահան), թոռները՝ Վեգենը, Բիշարը, Ալլատան (Ալլատան), Խորիշահն ու Վախախը...

Խորիշահի ու նրա ամուսին Ջեսարի մասին կան վիմագրական ու ժամանակագրական տեղեկություններ։ Ջեսարի մեծ արձանագրությունը, որի մեջ տրված է ինչպես իր, այնպես էլ Խորիշահի տոհմաբանությունը, գտնվում է Սելիմի կարավանատանը, որ ինքը՝ Ջեսարն է կառուցել։ Այստեղ նա ներկայանում է որպես Իվանե Օրբելյանի թոռ, Լիպարիտ Օրբելյանի որդին, և նրա եղբայրներն են՝ Բուրթելը, Սմբատը, Էլիկումը[122]։ Կնոջը ներկայացնում է որպես «դուստր իշխանին Վարդանա եւ Դոփին... յաղդէս Սենեքերիմանց»[123]։

---

121 Մատ. ձեռ. № 7347, թ. 343բ։

122 Լ. Խաչիկյանը Ջեսարին համարում է «որդի իշխանաց իշխան Սմբատի» (տե՛ս ԺԴ, էջ 735)։ Նույն կարծիքին էր նաև Արշակ Ալպոյաճյանը (տե՛ս նրա՝ «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 354)։

123 «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 177—178։

Այստեղ Դոփը հիշված է ոչ թե որպես Խորիշահի մայր, այլ մի նախնի, որ հայտնի է, քան մեկ ուրիշ անուն։ Դա ակնհայտ է, որովհետև Դոփն այստեղ հիշատակված է որպես Վարդան իշխանի կին, իսկ մենք հենց նույն ձեռագրից գիտենք, որ Վարդանի կնոջ անունն է եղել Մահան։ Աշ. Հովհաննիսյանն այս թյուրիմացությունից եզրակացրել է, թե «Պիչարի... հարսերից մեկը կրում է միայն Գեղարքունիքում հանդիպող Դոփ անունը»[124]։ Սակայն ցայժմ հայտնի չէ Դոփ անունով որևէ անձնավորություն, բացի Սարգիս ամիրսպասալարի դուստր և Ծարեցի Հասանի կին Դոփից։

Սենեքերիմի անվան հիշատակումով սյունեցիները դրսևորել են իրենց այն ըմբռնումը, թե Ծարա պայազատները ժառանգորդներն էն Արցախի հին Առանշահիկ իշխանության, որի ներկայացուցիչ Սենեքերիմը (Սևադայի որդի) XI դարում թագավոր գնաց Բաղաց Կապան և իր քույր Շահանդուխտի հետ միասին կատարեց հիշատակության արժանի շատ գործեր[125]։

Վիմական արձանագրություններ չեն հայտնաբերվել, որոնք խոսեին Խորիշահի ու Ջեսարի վախճանի մասին։ Կա անթվական մի արձանագրություն, որը խաչքարի վրա գրել է ոմն Տիրի՝ «հոգոյն պարոն Խորիշահին»։ Չի կարելի կասկածել, որ սա Դոփյան Խորիշահի տապանագիրն է։

Խորիշահի ու Ջեսարի զավակների մասին խոսում է Սելիմի կարավանատան արձանագրությունը։ Այդ զավակներն էին՝ Սարգիսը, Հովհաննեսը, Քուրդը և Վարդանը[126]։

* * *

Եսայի կաթողիկոսի կազմած տոհմաբանության համաձայն՝ Գրիգոր Բ-ի որդին էր Վահրամը, «և որդի սորա Սարգիսն, և որդի Սարգսին Հասանն»[127]։ Վերը տեսանք, որ հավաստի տեղեկություն

124 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 456, ծան. 2։

125 Հ. Քյուրտյանն այս «Սենեքերիմաց»-ից եզրակացրել է, թե «Ուրեմն Խորիշահ ալ կուգար ազնվական ընտանիքե «Դուբենէ», կամ Դուփեանց «յազգէ Սենեքերիմանց», որ հավանաբար Արծրունյաց ըսել կուզե» (տե՛ս նշվ. աշխ., էջ 123)։

Հանդեսի խմբագրությունն էլ էջատակի ծանոթագրությամբ ավելի է խառնել այս տոհմաբանությունը։

126 «Սիսական», էջ 165։ «Դիվան հայ վիմագրության», Գ, էջ 178։

127 Թոփճեան, Ա, էջ 89բ։

«Արցախ», էջ 208. Վահրամի որդի Սարգսին էլ է համարում եպիսկոպոս, որն իբր թե կառուցել է Դադիվանքի զանգակատունը։ Կարապետ եպիսկոպոսն էլ նը-

կա միայն Վահրամի մասին։ Իսկ Վահրամի որդին համարված Սարգիս իշխանը թյուրիմացություն է, քանի որ նրա միակ աղբյուրը Եսայի կաթողիկոսի կազմած տոհմաբանությունն է, որի մեջ Սարգիս եպիսկոպոսի գործերն են վերագրված այդ «Սարգիս իշխանին»։

Հավանաբար Գրիգոր Բ իշխանին ու XIV դ. երկրորդ կեսում ապրած նշանավոր Հասան Դոփյանին կապող օղակն է եղել Վահրամ իշխանը, որի մասին թերևս Եսայի կաթողիկոսի ձեռքի տակ եղել են արժանահավատ աղբյուրներ։ Ուստի և Վահրամի օղակն ընդունում ենք պայմանական կերպով, հուսալով, որ հետագա պրպտումների միջոցով այն կհաստատվի։

XV դ. սկզբից մնացած մի արձանագրությամբ Վերին Խաչենի նախորդ ժամանակը ներկայացված է որպես համատարած ամլության շրջան։ Այդպես էր կյանքը հատկապես Ծար գավառում, ուր հիշյալ ժամանակ հավաքվում են իշխանության ժառանգորդները և ամայացած դտնում Դադի վանքի, Խաթրավանքի ու Գետամիջի (կամ Աստվածածին վանքի) առաջնորդությունները. «...ի վանորայքս մարդ չկար, որ յառաջն գար և շէն պահէր և զեկեղեցիքս լուսավորէր»։ Նրանք հարկադրված են լինում երեք առաջնորդությունները միավորել և հանձնել Ավագ անունով եպիսկոպոսին ու նրա եղբայր Մանուել աբեղային, որպեսզի սրանք այդ հինավուրց հոգևոր կենտրոններում վերականգնեն հոգևոր կյանքը։

Նախորդ ժամանակի, այսինքն՝ XIV դ. վերջի Վերին Խաչենի իշխանության միակ մխիթարական երևույթը Հասան Դոփյանն էր, որը մեզ է ներկայանում նահատակի լուսապսակով։ Նրա մասին հանգամանալից տեղեկություններ չեն պահպանվել։ Միայն Գրիգոր Ծերենց Խլաթեցու «Հիշատակարան աղէտից» կոչված չափածո հայտնի պատմական վիպասանության մի հատվածից կարելի է պատկերացնել Ծար գավառին ու նրա իշխան Հասան Գ-ի գերդաստանին հասած ահավոր աղետը։ Ժամանակագիրն ընդհանուր գծերով պատկերում է 1386 թ. Թոխթամիշ խանի գլխավորությամբ Ոսկե Հորդայի վայրենաբարո հրոսակների կատարած անլուր ապատակությունները Հայաստանում, ապա հանգամանորեն պատմում հաջորդ տարին հայ ժողովրդի վրա եկած առավել անտանելի

ման է վերագրում Վասակաշեն գյուղի (Վարդենիսի) հին եկեղեցում պահպանված հետևյալ տապանագիրը՝ «Աստ հանդչի մարմին Սարգիս վարդապետի» (ըստ «Սիսական», էջ 74-ի)։ Սակայն Բարխուտարյանցն ու Կարապետ եպիսկոպոսը մոռանում են, որ Վասակաշենի տապանագրում Սարգիս վարդապետի մահվան տարին է Ռ—1551 թվականը (տե՛ս Սմբատեանց, Տեղեկագիր, էջ 603, «Ազգ. հանդ.», 1910, № 1, էջ 11), որ ոչ մի կերպ չի կարող վերաբերել XV դ. կեսում ապրած Սարգսին։

արհավիրքը՝ Լանկ-Թամուրի աշխարհակործան արշավանքը։ Խլաթեցին պատմում է, որ թշնամու արնածարավ հորդաները, Վրաստանն ու նրա արքայանիստ Տփղիսը 1386-ին առնելուց հետո, ձմեռում են Մուղանում, իսկ գարնանը շարժվում Հյուսիս-արևելյան Հայաստանի վրա, ավերում Սյունիքը, նրա բերդերն ու վանքերը, ավար անում Բջնիում ու Երևանում։ Հայերը չէին կարող անտարբեր նայել իրենց երկրի անլուր ավերումին։ Ոտքի են ելնում, անհավասար մարտի նետվում, դիմագրավում թշնամուն։ Եվ այս հայրենապաշտպան մարտերում նահատակվում են հաղարավոր հայրենասերներ, որոնց շարքում՝ նաև Ծարա իշխան Հասանն ու իր զավակները։ Գրիգոր Խլաթեցու չափածո երկում առանձնապես շեշտված է այս տոհմական աղետը.

«Այլ և զՀասանն Ծարեցին
Երեք որդւովքն զենեցին,
Զի ըվնոցին ամուրն առին,
Եւ զբազումս գերեցին»[128]։

1411 թ. գրված մի հիշատակրանում հեղինակը թվարկում է Ծարա իշխանական տան զոհերին՝ «սրախողխող կոտորելոցն և աքիւնաներկ դիաթաւալ նահատակելոցն՝ նախ մեծաշուք իշխանին Հասանայ, որդւոյ Դաւթին, և ամուսնոյ իւրոյ Խոնձային և զաւակացն իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շիրվանին, նաև թագազարմ իշխանին Սադունին, զոր տէր տէրանց և թագաւորն թագաւորաց ընդ սրբոյ թագաւորացն և բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պսակեսցէ զնոսա...»[129]։

Այսպիսով, պարզվում է, որ նահատակվել են Հասանն ու իր՝ ոչ թե երեք որդիներն, ինչպես հաղորդում էր Գրիգոր Խլաթեցին, այլ վեց տղաները, և այդ աղետից փրկվել է միայն Վահրամը։

Մեզ թվում է՝ հիշատակարանի մեջ նահատակվածների շարքում թյուրիմացաբար է հիշատակված Գոնցայի (Խոնձա) անունը։ Նա հետագայում, ճիշտ է՝ անթվական մի արձանագրությամբ, բայց կենդանի մնացած երկու որդիների՝ Հասանի ու Վահրամի հետ նվիրատվություններ է անում Դադի վանքին[130]։ Գուցե հիշատակագիրը նկատի ունի, որ նա էլ հետագայո՞ւմ է զոհվել կամ մահացել։

Նահատակվածներն արդեն տուն-տեղ են ունեցել, քանի որ զավակներ են մնացել Շանշեից, Ջհանշեից և Աղբուղայից։ Վերոհիշյալ հիշատակարանի ստեղծման ժամանակ՝ 1411-ին Ծարա իշխաններ էին Հասան Գ-ի կենդանի մնացած զավակը՝ Վահրամը, Շանշեի որդի Սեյտին, Աղբուղայի որդի Տուրսունը, Վահրամի ավագ որդի Գրիգորը և մի պարոն Պոռշ, որի ինքնությունը չի պարզվում։

Թե ինչպես են այսքան իշխանները միասին գլխավորել իշխանությունը, եղած սակավաթիվ նյութերի հիման վրա դժվար է բացատրել։ Հավանական է՝ Վահրամի կենդանության ժամանակ նա էր գահերեց իշխանը, և մնացածները միայն իշխանական տիտղոս ունեին ու հողային ժառանգական սեփականություն, այսինքն՝ խոշոր հողատերեր էին, սեփական հողերի վրա ունեցած անսահմանափակ իրավունքներով հանդերձ։ Մյուս կողմից էլ՝ աղբյուրներից երևում է, թե օտարների տիրապետության ներքո ինչպես թուլանում է երբեմնի խոշոր իշխանությունը և տրոհվում մանր գավառապետական միավորների։

Չի կարելի մոռանալ, որ բոլոր ժամանակներում Հայաստանի վրա եկող բռնագրավիչներն իրենց նպատակին հասնելու, երկիրը հեշտ նվաճելու և կողոպտելու համար նախ և առաջ աշխատում էին գլխատել նրա պաշտպանական զորությունը՝ ոչնչացնել հայ իշխաններին, որոնք ամեն անգամ հանդես էին գալիս իրենց տիրույթները և հայրենիքը պաշտպանելու նախանձախնդրությամբ, և նրանք էին, որ ժողովրդին տանում էին անօրինակ խիզախումների։ Հայոց պատմության միջնադարը կարծես բռնված է այն սահմռկեցուցիչ ճենճերահոտով, որը բարձրացավ Նախիջևանի մայր տաճարում արաբ բարբարոսների ձեռքով 705 թ. վառված հարյուրավոր հայ իշխաններից։ IX դարի կեսին նույն սարաբները, ապստամբած բովանդակ հայությունից վրեժ լուծելու ուրիշ եղանակ չգտան, քան բոլոր աչքի ընկնող իշխաններին Սամառա տաժանակրության քշելը։ Եվ XIV դարի վերջն ու XV-ի սկիզբն էլ նորություն չէր հայության համար։ Եկել էին նոր բռնավորներ, որոնք,

---

128 Լ. Խաչիկյան, ժե, մասն Ա, էջ 275—276։

129 «Նստարք», էջ 39—40, ժե, Ա, էջ 122, «Դոփյանք», էջ 185։

130 Ջալալեանց, Բ, էջ 226։ Մեսրոպ Մագիստրոս, էջ 94։ Երկուսի մոտ էլ արձանագրությունն արտագրված է աղավաղումներով. Ջալալյանցինը՝ «Փոնձէս ու որդիքս Հասան և Վարնաթուն» (նրանք նման անուններով որդիներ չեն ունեցել), Մեսրոպ Մագիստրոսինը՝ «Գոնցէս և որդիքս Հասան ու Վահրամ՝ թոռն Դաւփեանց»։

սակայն, գործում էին հին եղանակներով։ Աշխարհին տիրելու, կողոպտելու մոլուցքը բազմապատկվում էր այլադավանի ատելությամբ, և զանգվածային կոտորածներն ու հավատափոխությունը դարձել էին սովորական երևույթ։ Դեռ Ստ. Օրբելյանն էր վկայել, որ Արղուն բռնավորի որդի Նավռուզն իշխանության գլուխ անցնելով՝ կարգադրել էր թլպատել եկեղեցականներին[131]։ Լանկ-Թամուրի հրոսակները կոտորում էին հայ ազնվականներին ու հոգևորականներին։ Մեկը մյուսի ետևից սպառվում էին հին իշխանական տները։ Եվ նորեկ բռնակալները ջանում էին իսպառ վերացնել նրանց վերջին բեկորները կամ դավանափոխ էին անում նրանց։ Թովմա Մեծոփեցին, որ ականատեսն էր այս քստմնելի աղետների, դառնացած պատմում է, թե Միրան շահի որդի Օմարը իշխանության գլուխ անցնելուն պես «երեք իշխան յազգէս մերմէ, որք իբրեւ զնիւ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութեան»[132]։

1411 թ. գրված վերոհիշյալ հիշատակարանի համաձայն՝ այդ ժամանակ Ծարա իշխանությունը վարում էին պարոն Վահրամը, պարոն Տուրսունը, պարոն Շրվանը և այլ պարոնայք (Սեյտի, Պռոշ, Գրիգոր)[133]։ Գրիչը հիշատակության արժանի է համարում նաև երկու այլ պարոնների՝ Աթաբակին ու Ջազային, որոնք, ինչպես իր տեղում նշել ենք, Հասան-Ջալալի հետնորդներից էին՝ ամբողջ Խաչենի վրա իշխելու դահերեցական իրավունքներով, սակայն այստեղ թյուրիմացաբար համարված են ի «ազատացն տանս Դաւբեան»[134]։

Յետոք, հիշատակարանի մեջ հասած պատառիկը մանրամասներ չի հաղորդում[135], և ուրիշ նյութեր էլ չկան՝ Ծարա իշխանական տան այս օրերի ներքին կյանքի հանգամանքները պարզելու համար։

Այս հիշատակարանում թվարկված անունների ու նրանց միջավայրի մասին քիչ ավելի մանրամասն տեղեկություններ կան այն երկու գրություններում, որ Ծարա իշխանազուններն իրենք են թողել Դադիվանքում։ Նրանցում, ինչպես վերն ասվել է, խոսվում է Վերին Խաչենի առաջնորդարանների՝ Դադի, Խաթրա և Գիտամիջի վանքերի անտիրության մասին։ Երկրամասի տերերը պատմում են, որ իրենց այս հոգևոր կենտրոններում կյանքը դադարել էր, և ոչ ոք չկար, որ վաղեմի ժամանակների պես «շէն պահեր ու եկեղեցիքս լուսաւորէր»։ Իրենք երեք վանքերի առաջնորդությունները հանձնեցին Ավագ եպիսկոպոսին ու նրա եղբայր Մուսվել աբեղային, և «տր Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ»։ Նրանք այս եպիսկոպոսությունների միավորման մեջ ոչ մի տարօրինակ բան չեն տեսնում, որովհետև, իբր թե, առաջներում էլ «տր Զաքարիային, տր Աթանասին և տր Սարգսին էր տվեալ զԴադի վանս, զխաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակաւն»[136]։

Գրավոր աղբյուրներից հայտնի չէ, թե երբ են հիշյալ եպիսկոպոսությունները (մանավանդ Հաղբատը՝ նրանց հետ) միաժամանակ ենթարկվել որևէ առաջնորդի։ Հնարավոր է, որ Ծարա իշխանազուններն այստեղ առաջնորդվում են բանավոր ավանդությամբ, կամ իրենց քայլն արդարացնելու համար հորինել են նման մի վարկած։ Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է Վերին Խաչենի վարչական վիճակի արտացոլումը, որ երկու արձանագրություններում էլ առկա է։ Ներկայանում են մի շարք իշխանազուններ՝ Հասանի

---

131 Օրբէլեան, էջ 472։

132 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, էջ 67։

133 Փիրղալեմյան, Նստարք, էջ 39։ «Դոփյանք», էջ 185։ Լ. Խաչիկյան, ԺԵ, Ա, էջ 122։ Ձեռագիրը Մաշտոցյան մատենադարանում չկա։ Փիրղալեմյանն ու Կարապետ եպիսկոպոսը նրա հիշատակարանն արտագրել են Վանի Հայկավանք եկեղեցում և, ըստ իս, որոշ անուններ ճիշտ չեն կարդացել։ Պետք է կարծել, որ Փիրղալեմյանի «պարոն Սատոյին» և Կարապետ եպիսկոպոսի «պարոն Սայդոյ» նույն Սեյտին կամ Սայտին է՝ Շանշեի կամ Շահանշեի որդին, որը հիշատակված է նաև վիմական արձանագրության մեջ (տե՛ս «Արցախ», էջ 408)։

Հավանական է, Պռոշն էլ Հասան Գ-ի թոռներից կամ թոռնորդիներից մեկն է եղել, որ դժբախտաբար, ուրիշ ոչ մի աղբյուրով ստուգել հնարավոր չէ։

134 «Նստարք», էջ 40։ «Դոփյանք», էջ 185, Լ. Խաչիկյան, ԺԵ, Ա, էջ 123։

135 Բարեբախտաբար, Կարապետ եպիսկոպոսն արտագրել է նաև հիշատակարանի սկիզբը, ըստ որի՝ «Պատուելի և հանճարեղ և իմաստուն քահանայս Յովհաննէս... ըղձացեալ այսմ... խմբարանի՝ տարեգիրք կոչեցելոյ, և ստացաւ զսա ի հալալ ընչից և ի քրտնաջան վաստակոց իւրոց՝ ի վայելումն անձին իւրոյ և դեռաբուսիկ զաւակին Թադէոսի... և յիշատակ ծնողաց իւրոյ՝ Էլինախին, Ազրէվարդին, և ամուսնոյ իւրոյ Ուտիանէ կոչեցելոյ» («Դոփյանք», էջ 184)։

Ամենայն հավանականությամբ՝ այս Հովհաննես քահանան ևս Դոփյան գերդաստանի պայազատներից էր, սակայն ոչ կուսակրոն, որի պատճառով էլ չէր օգտվում իր նախնիների (հոգևորական Հովհաննեսների) եպիսկոպոսական իրավունքներից։

136 «Արցախ», էջ 208։

թոռ (Շանշէի որդի) Սեյտին, Հասանի թոռներ (Վահրամի որդիներ) Գրիգորը, Հասանը, Պեկին, Ալթունը, Հասանի մյուս որդու՝ Աղբուղայի, թոռ Այտինը և, վերջապես Ջհանշեի (Հասանի որդու) թոռ Շահանշեն, բոլորն էլ՝ հավասար իշխանական իրավունքներով, ավելի ճիշտ՝ առանց շոշափելի գահերեցական իրավունքի։ Նրանք թվարկում են գյուղերի, հանդ ու անդաստանների անուններ, դրանք բոլորը նվիրում վերոհիշյալ վանքերի առաջնորդ կարգված Ավագ եպիսկոպոսին, որպեսզի «քանի որ իւր պետքն է՝ վարէ, Աստուծով ապատ է։ Իսկ եթե այլ մարդ վարէ, տասանորդն առնու և տա վանքին անպատճառ»[137]։ Հետո գալիս է անեծքի խոսքը. «Արդ ով որ զկնի այս վախմիաթներս այլայլէ կամ խլէ՝ թե յորդոց և թոռանց մերոց և յազգայնոց իցէ, առաջի աստուծոյ պարտական և սևերես լինի։ Իսկ թէ այլազգեաց կամ թուրքաց իցէ, իւր հալալն հարամ լինի և իւր փեղամբարէն ապիզար լիցի, ամէն»[138]։

Մեջբերված տողերից պարզ երևում է, որ Ծարա տերերի մեջ այս ժամանակ գահերեց մեկը չկար, որ խոսեր ավագ տիրոջի անունից, այլ բոլոր իշխանազուններն էլ միակամ ու միաձայն ընդունում են որոշումը, կարգավորում իրենց երկրամասի գործերը։ Ճապա մահմեդական ասպատակիչների ու բռնակալների ազդեցությունն այնքան իրական ու շոշափելի է եղել, որ անմիջապես մտել է արձանագրության մեջ։

Թվում է՝ վերը քննության առնված անթվական գրությունները ստեղծված պետք է լինեն 1410—20-ական թվականներին, երբ Լանկ-Թամուրի մահից հետո մոնղոլական տիեզերական պետությունը խարխլվել էր, առանձին նահանգներում տիրողները ժողովրդին կեղեքում էին անպատիժ, և ինքնիշխանությունն էր թագավորում սմենուր։ Այս կարծիքի օգտին է խոսում նաև գրությունների հեղինակներից մեկի՝ Սայտիի արձանագրությունը՝ քանդակված 1430 թ.[139]։

1420-ականների երկրորդ կեսին եկած և երկրին տիրություն անող կարա-կոյունլուներն արդեն ուրիշ տեսակ քաղաքական ծրագրեր էին իրականացնում. նրանք պետական բարձր պաշտոն-

137 Անդ, էջ 209։

138 Անդ։ Վերջը լրացնում ենք Եսայի կաթողիկոսի ձեռագրից (Մատենադարանի ձեռ. № 7821, էջ 2բ)։

«Վախմիաթ»—նվիրատվություն, «Փեղամբար»—ալլահի մարգարե, «ապիզար»—անիծյալ (պարսկերեն)։

139 «Արցախ», էջ 408։

ների էին առաջ քաշում իրենց տիրույթներից զրկված հայ ավատական անվանի տների որոշ ներկայացուցիչներին[140] և, հասկանալի է, որ շատերին դարձնում էին իրենց ավանդական տիրույթների տնօրեններ ու լիիրավ իշխաններ։ Այս հանգամանքն իր արտացոլումն է գտել 1430 թ. մնացած արձանագրության մեջ, որը Շանշեի որդի Սայտին է գրել իր հոր մահարձանի վրա և իրեն ներկայացնում է նախնիների ավանդական տիտղոսով՝ իբրև «տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչև ի Շաղուագայ»[141]։

Այստեղ ևս Հաթերքն առնված է Ծարեցիների գերիշխանության տակ։

Ինչպես վերը տեսանք, դրանից մի քանի տարի առաջ էլ Հաթերքցիների առաջնորդարանն ու տոհմական տապանատունը՝ Դադի վանքն էր ենթարկվել նույն ճակատագրին՝ հայտարարվելով Ծարեցիների ժառանգական սեփականություն և «հայրենի աթոռ»։ Պարզ է, որ XIII դարին հաջորդող ժամանակներում վերջնականապես սպառվել էր Հաթերքի իշխանական ճյուղը, և մեծ Վախտանգի ու նրա հարազատների սերունդներից չէր մնացել ազդեցիկ որևէ ներկայացուցիչ, որն ի վիճակի լիներ տիրություն անելու հայրենի գավառին։

Ի մի բերելով վերոհիշյալ հիշատակարանում ու վիմական արձանագրություններում եղած տեղեկությունները՝ գծել ենք Ծարեցիների տոհմածառի՝ Գրիգոր Բ (կինը՝ Ասփա) → Սեյտի հատվածը, որն ունի հետևյալ պատկերը.

Գրիգոր (կինը՝ Ասփա) (XIII դ. II կես—XIV-ի I քառորդ)
↓
Վահրամ
↓
Հասան (կինը՝ Գոնցա)
(+ 1387)

Հասան+Շանշե+Ջհանշե+Աղբուղա+Շրվան+Վահրամ+Գրիգոր+Սարգիս
(?) (+1430) (+1387) (+1387) (+1411) (+1411) (+1387) (+1387)
↓ ↓ ↓ ↓
(Սեյտի) Հասան Տուրսուն Գրիգոր+Հասան+Պեկի+Ալթուն
↓
(1430) Շանշե (1411)
↓ ↓
Ուլուբեկ Այտին

140 Լ. Խաչիկյան, ԺԵ, Ա, էջ XXIII։

141 «Արցախ», էջ 408։

* * *

Եսայի կաթողիկոսի կազմած տոհմացանկի համաձայն՝ Հասանից ու Գոնցայից (+ 1387) հետո Ծարա իշխանական տունը բաժանվում է երեք ճյուղի, «որք են այսոքիկ.

1. Շահանշէն Ուլուբէկանց պապ,
2. Աղբուղէն Այտինեցւոց պապ,
3. Ջհանշէն Ջհանշեցւոց պապ»[142]։

Շահանշեն (կամ Շահանշահը), Աղբուղան և Ջհանշեն (կամ Ջհանշահը) Հասանի յոթ որդիներից են, 1387-ին նահատակվածներից։ Անհասկանալի ու մութ է մնում, թե ինչո՞ւ այդ նահատակությունից փրկված և հետագայում աղբյուրների մեջ հիշատակված Շիրվանի ու Վահրամի ոստերն անհետանում են, մանավանդ Վահրամի՛, որի չորս որդիները (Գրիգոր, Հասան, Պեկի, Ալթուն) 1411-ին կենդանի էին ու տնօրինում էին հայրենի նահանգի հոգևոր ու աշխարհիկ գործերը։ Ամեն պարագայի՝ Եսայի կաթողիկոսի ժամանակներում (XVII դ. վերջ—XVIII-ի սկիզբ) պատմությանը հայտնի էին Շահանշահենք կամ Ուլուբեկանք, Աղբուղայենք կամ Այտինեցիք և Ջհանշահյանք։

Շահանշահի որդի Սեյտին, ինչպես տեսանք, 1430-ին հանդես էր գալիս որպես Ծարա լիիրավ տերը։

Ջհանշահի որդի Հասանից սերված էր Շահանշահ (Բ) իշխանազունը, որից երևի ծնված լիներ այն Ջհանշահը (Բ), որի որդի Հովհաննես Ծարեցին XVI դարում հայանի հոգևորական գործիչ էր։

Աղբուղայից սկսվող ճյուղը՝ Այտինեցիք, պետք է կոչվեին նրա թոռ Այտինի անունից՝ այն պատճառով, որ այս Այտինը մեծ դեր խաղաց հայրենի տիրույթները օտարների ձեռքից ետ խլելու գործում։ Եսայի կաթողիկոսի ցանկի մեկնաբանության մեջ ասվում է, թե «ի ժամանակի սորա (Այտինի—Բ. Ու.) ի զօրանալ իսմայելացւոց և ի նուազիլ տանս Հայոց, յարեան այլազգիքն. և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պեթալմոլ արարին. գնաց պարոն Այտինն ի դիւան և երեք ամ աշխատեաց. և բազում ինչ տուեալ՝ աղատեաց ի ձեռաց այլազգեացն զվանօրայքն և զշինարէնքն, զոր տէրն ամենայնի տացէ վարձս վաստակոց իւրոց»[143]։

142 Թոփչեան, Ա, էջ 89։ Մատենադարան, ձեռ. № 7821, թ. 2բ։
143 «Արցախ», էջ 207, Մատենադարան, ձեռ. № 7821, թ. 2բ։

Այտինի գործունեության մասին այս տեղեկությունը պահպանվել է Եսայի կաթողիկոսի հայանի տետրակում։ Իսկ թե ո՞րն է ակունքը, ցայսօր մնում է հարց։ Չի կարելի կասկածել, որ Արցախի պատմիչն ու հոգևոր առաջնորդն իր ձեռքի տակ ունեցել է հին ու արժանահավատ վավերագրեր, որոնցից և քաղել է այդ թանկարժեք վկայությունը։

Ամեն պարագայի՝ սույն հիշատակագրությունը շատ արժեքավոր է ոչ միայն Դուիյան տոհմաբանության մի որոշակի շրջանի հարցը պարզաբանելու տեսակետից, այլև՝ որ պարունակում է հետաքրքիր տեղեկություն եկվոր բռնակալների ու տեղական հայ իշխանության ներկայացուցիչների փոխհարաբերություններից։ Այստեղ կարևոր է հատկապես բեյթ-ուլ-մալի հարցը։

Բեյթ-ուլ-մալը օտար նվաճողների հորինած կարգն էր, որն իր սկիզբն առնելով արաբական տիրապետության օրերից, մահմեդականություն ընդունած մոնղոլների, ապա ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի տիրապետության շրջանում դարձել էր հայկական հողերը սեփականելու, հայ ազդեցիկ ավատատերերին հողազրկելու «օրինականացված» միջոցառում։ Այն սկզբնապես հորինված էր որպես մահմեդական օրենք, որով իսլամի հոգևոր ու աշխարհիկ գերագույն իշխանությանը պիտի անցնեին նվաճված երկրի այն հարստությունները, որոնց տերերը վախճանվում էին՝ առանց ժառանգորդ թողնելու[144]։ Սակայն, եթե արաբների օրոք բեյթ-ուլ-մալի գլխավոր տնօրենը խալիֆաթն էր և նրանից բացի ոչ ոք իրավունք չուներ տեր կանգնելու հարբունիս գրավված շարժական ու անշարժ հարստություններին, ապա մոնղոլների և նրանցից հետո եկած բռնագրավիչների շրջանում փոխվել էր կարգը. կենտրոնա-

144 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, էջ 365։
Հ. Փափազյանն իր մի արժեքավոր հոդվածում, հավաստի աղբյուրների քննությամբ, ցույց է տալիս, որ «բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտն սկիզբ է առել արաբ Օմար խալիֆի (634—644) օրոք։ Մի ժամանակ էր դա, երբ իսլամական հաջողակ բանակները հրով ու սրով խորտակում էին Պարսից տիրապետությունը, նվաճում նրան ենթակա ընդարձակ երկրները։ Նվաճված երկրում ձեռք բերվող ավարի մի մասն սկզբում անմիջապես տեղում էլ բաշխվում էր բանակի ամբողջ անձնակազմին, իսկ մի խոշոր մասն ուղարկվում էր «մուսուլմանների համայնական գանձատունը»՝ «Բեյթ-ուլ-մալ-ե մուսլիմին» (Հ. Փափազյան, «Բեյթ-ուլ-մալ-»ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում. ՊԲՀ, 1958, № 2, էջ 194)։ Բռնակալական այս արարողությունը երկար է գոյատևել. «Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայությամբ՝ XVIII դարում ևս եղել են բեյթ-ուլ-մալի վերակացուներ՝ «բեյթուլմալչիներ», որոնք զբաղվել են անժառանգ մեռնողների ունեցվածքի տնօրինման գործով» (անդ, էջ 196)։

կան իշխանության յուրաքանչյուր կուսակալ կամ զորապետ նվաճված երկրում ներկայանում էր որպես գերագույն իշխանության բոլոր արտոնություններով օժտված բռնավոր և նա էր բեյթ-ուլ-մալի ենթարկում տեղական իշխանավորների կալվածքներն ու շարժական ունեցվածքը։ Այս նորընծա գերագույն իրավատիրոջ կամայականությունների դեմ բողոքողը պետք է անցներ տիրապետողների պաշտոնական բոլոր աստիճանները, մի բան, որ հաճախ տարիներ էր տևում՝ բողոքողից քամելով նրա բարոյական ու նյութական բոլոր ուժերը։ Ակ-կոյունլուների և կարա-կոյունլուների բռնակալության շրջանում բեյթ-ուլ-մալի օրենքի նախնական իմաստը մթագնվել էր, և այն վեր էր ածվել «ինչպես առհասարակ հայ բնակչության տնտեսական ճնշման ու հարստահարման, այնպես էլ հատկապես հայ ֆեոդալականության հողային տիրույթների բռնագրավման և նրանց իրավազրկման ու սիստեմատիկ ոչնչացման միջոցի»[145]։

Այս անօրինության ցայտուն օրինակն էր Դոփյան Հասանի ունեցվածքի բռնագրավումը, որի մեջ դրսևորվել է կամայականությունը բոլոր կողմերից. նախ, հարքունիս էր գրավվել հայ մի ավատատիրոջ սեփականությունը, որն ուներ կենդանի ժառանգորդներ, որդիներ ու թոռներ, ապա և՝ այս ժառանգորդներից մեկը՝ Այտինը, իր արդար իրավունքները վերականգնելու համար, երեք տարի քարշ եկավ դիվանատներում և «բազում ինչ տուեալ»՝ փրկեց իրենց ժառանգությունը։

Ի՞նչ եղան Այտինն ու նրա տոհմակիցները, որոնք ըստ հիշյալ տեղեկության, բաժանվել էին երեք ճյուղի։ Կարապետ եպիսկոպոսի համոզմամբ՝ «այստեղ (Այտինի՝ հայրենի տիրույթները փրկելու պահին—Բ. Ու.) Դոփյանների մասին եղած պատմական հիշատակությունները սպառվում են», և այլևս անհնար է դառնում որոշել, թե ո՛վ որտե՛ղ հաստատվեց, ի՛նչ արեց կամ ի՛նչ եղավ[146]։

Այդպես չէ իրականում։ Այտինի գործով ո՛չ Դոփյաններն են սպառվել, ո՛չ էլ նրանց «մասին եղած պատմական հիշատակությունները»։ Վիմագրերն ու ձեռագիր հիշատակարանները մեր առաջ ներկայացնում են այդ իշխանական տոհմի հետագա կյանքի ու գործունեության մի անընդմեջ շղթա, միաժամանակ պարզորոշ ցույց տալով նաև առանձին օղակները։ Առանձնակի կոնկրետությամբ ընդգծվում են Դոփյաններից առաջացած երկու ճյուղերը՝ Ջհանշահենք և Ուլուբեկանք, որոնք և տիրում էին Դոփյաններին պատկանող ընդարձակ տիրույթների վրա՝ Հաթերքի մոտերքից մինչև Գեղամա գավառը։

Աղբյուրները ցույց են տալիս, որ XV դարի վերջից և XVI-ի առաջին կեսից սկսած Ծարում հաստատ նստած էին Ջհանշահենք։ Իսկ Սոդքում տիրություն էին անում Հասան Գ-ից սերված մյուս տոհմաճյուղի՝ Ուլուբեկանց սերունդները, որոնք հետագայում պետք է կոչվեին Մելիք-Շահնազարյանք։ Նույն աղբյուրների վկայությամբ՝ վերջիններն էին, որ գահերեցության իրավունքով հանդես էին գալիս նախկին ամբողջ Վերին Խաչենի տարածքում։

145 Հ. Փափազյան, նշվ. հոդվածը, էջ 196։

146 «Դոփյանք», էջ 92։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՐՍԿԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԽԱՉԵՆԸ

XVI դարը հայ ժողովրդին բերեց նոր աղետներ ու փորձություններ։ Արևելքում Պարսկաստանը շարունակում էր իր բռնակալական սադրանքները։ Իսկ արևմուտքում հայտնված նոր հարևան Թուրքիան, որ տիրացել էր արևմտահայկական մի շարք նահանգների, իր հատուկ հաշիվներն ուներ Հայաստանի նկատմամբ։ Հայաստանը նրա համար և՛ ավարի ու կողոպուտի աղբյուր էր, և՛ հարմարագույն հենակետ դեպի արևելյան ու հյուսիս-արևելյան երկրները կատարելիք արշավանքների համար։ Այս պատճառով էլ երկու ծավալապաշտ տերությունների միջև ընկած երկիրը չդադարող պատերազմների դաշտ էր դարձել։

Իրանը կամ Ղզլբաշների երկիրը և Օսմանյան Թուրքիան դեռևս դարասկզբից սկսած իրար դեմ պատերազմներ էին մղում. և այդ պատերազմների, հետևապես և նրանց ուղեկցող ավերածությունների վայրը Հայաստանն էր։ Կռվող ամեն մի կողմը հանձին Հայաստանի տեսնում էր ռազմագիտական տեսակետից կարևորագույն մի տարածություն, որի նվաճումից հետո ինքն արդեն գտնվում էր հակառակորդ երկրի դեմ-հանդիման։ Մյուս կողմից էլ՝ Հայաստանը տնտեսական ու ռազմական հզորացման աղբյուր էր նրանց համար, և մեկի կամ մյուսի ձեռքն ընկնելուց՝ սպառսպուռ քամվում էր այդ աղբյուրը, որովհետև նվաճողը համոզված էր, թե երկար չպիտի կարողանա օգտվել նրանից։ Պարսիկների ու օսմանյան Թուրքերի պարբերական պատերազմները հրահրվում էին նաև կրոնական մոլեռանդությունից. առաջինների շիա և երկրորդների սունի աղանդները՝ նույն մահմեդական կրոնի ներսում

միմյանց հանդեպ նույնքան թշնամական էին, որքան մահմեդականության համար քրիստոնեությունը, որը մահմեդական ֆանատիկի աչքում հավասար էր անհավատության։ Այս հանգամանքի պատճառով իրար դեմ կռվող բանակները դառնում էին այն աստիճան դաժան ու ավերիչ, որ ամեն անգամ իրենց ետևից թողնում էին միայն մահ ու մոխիր։ Թուրքերն ու ղզլբաշներն իրենց չարագործություններով մոռացնել էին տվել հին աշխարհի ու միջնադարյան իրականության ամենամռայլ պատկերները։ Այս դարի հայ գրիչները բառեր չեն գտնում որակելու թուրքաց գործած քստմնելի արարքները։ Սակայն որովհետև ղզլբաշ զորքերը ևս հիմնականում թուրքեր էին իրենց ծագումով, սանձարձակ մոլուցքով ու գիշատիչ վարքով, ապա բռնությունների ու անողորմ սրածությունների մեջ արժանավոր մրցակիցներ էին հանդիսանում՝ ջանալով իրար չզիջել ոչ մի բռնության մեջ։ Այդ պատճառով հայ ժողովրդի համար երկուսն էլ հավասարապես ատելի էին ու անտանելի։ Եվ պատահական չէ, որ 1551 թ. թուրք-պարսկական պատերազմի ականատես հայ հոգևորականը գրում էր, թե «շարժեցաւ ի վերա աշխարհիս Հայոց ազգ Ղզլպաշից՝ մանրել և մաշել զմնացորդս Արամեանց. Սղէտք գործոց վնասու նոցա առաւել են, քան զԼոնկ-Թամուրայն, զորս կարծեմ, թէ չիք տեսեալ ուրուք ի հողածնացս»[1]։

Այս պարսիկներն էին կամ ղզլբաշները։ Իսկ թուրքերի բարբարոսությունները ներկայացնող հիշատակագիրը պատմում է, թե ինչպես նրանք «զարսն սրով սպանին, զկանայսն և զտղայսն գերի վարեցին և այնչափ անողորմ արարին, զի տղայսն որորանով կալեալ և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին։ Եւ այլ ևս զի զտղայքն ի գիրկս մարցն ջամբէին զստինսն, և յանկարծ հասանէին ի վերայ նոցա, զմարսն սպանանէին և արիւնն և կաթն իրար խառնէին և ջամբէին մանկտիքն և ոչ գիտէին զվայս իւրեանց։ Եւ ետ այնորիկ բրէին նիզակ և հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վերացուցանէին զնիզակսն յերկինս ի վեր և հարկանէին ի վերայ քարի և ի վերայ փայտի և սպանանէին։ Եւ ոմանք հարկանէին զտղայսն ի ծայրն նիզակացն և վերացուցեալ զնիզակսն տնկէին զմիւս ծայրն ի գետին, և տղայքն ի վայր ծայրն աղաղակէին և ճղայիին, թալկանային և ի սաստկութենէ ձմեռանն սառեալ մեռանէին»[2]։

1 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 514։
2 Գ. Սրվանձտեան, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 268։

Ղզլբաշներն ու օսմանյան թուրքերն իրենց ճակատամարտերն անց էին կացնում հիմնականում հայոց հողի վրա և, որովհետև փոխնիփոխ հաղթում էին իրար ու ստիպում նահանջել, նահանջողն ամեն անգամ ավերում էր իր ճանապարհի բոլոր բնակավայրերն ու այն ամենը, ինչից կարող էր օգտվել հետապնդող հակառակորդը։ Քանդում ու հրդեհի ճարակ էին դարձնում գյուղերը, ավանները, սրի քաշում բնակիչներին, կողոպտում էին վանքերը, կոտորում եկեղեցականներին, հրկիզում էին արտ ու անդաստանները, կացնահարում «զծառատունկս անտառաց և զփայտս պտղաբերս»։ Հետո նոր ուժերով համալրված պարտվողն էր ետ գալիս, հետապնդում նախկին հաղթողին, վերջինիս բարբարոսություններից հետո նորից աղետի ենթարկում հայոց երկիրը, ոչընչացնում կենդանության այն մնացորդները, որ այս ու այնտեղ կային նախորդ արշավանքից հետո։ Եվ այսպիսով բազում գավառներ ամայանում էին, հիշատակագրի խոսքերով՝ «մարդաթափ լինում ի բնակչաց»։

Թուրք-պարսկական շուրջ կեսդարյա պատերազմները կարծես թե պիտի ավարտվեին 1555 թ. Ամասիայում կնքված պայմանագրով։ Այս պայմանագրի համաձայն Արևելյան Հայաստանի հետ Խաչենը ևս անցել էր Պարսկաստանին[3]։

Դարի 70-ական թվականներին Պարսից արքունիքում գահակալական գզվռտոցներ էին տեղի ունենում, և ղզլբաշները ժամանակ չունեին հարևան երկրների վրա հարձակումներ գործելու։ 1578 թ. Պարսից շահ է հռչակվում Մուհամմեդ-Խուդաբանդան՝ Թահմազ շահի կենդանի մնացած միակ, կույր ու անկարող որդին, քանի որ մյուսներն իրար կոտորել էին հոր թողած գահին տիրելու համար։ Հենց այդ տարին էլ թուրքերը, որ կարծես սպասում էին Պարսից գահի շուրջը բռնկված արյունոտ պայքարի ավարտին, մտան Անդրկովկաս։ Օսմանյան զորքերը Մուստաֆա-փաշայի գլխավորությամբ նվաճում են Վրաստանը, Շաքին, Շիրվանը, Դերբենդը, Հայաստանի Հյուսիսային նահանգները։ Հաջորդ տարին էլ հաջողությունը թեքվեց ղզլբաշների կողմը։ Նրանք նվաճեցին Թիֆլիսը, թուրքերին ետ քշեցին Անդրկովկասից։ Սակայն հենց նույն տարում օսմանցիները, նոր ուժեր հավաքելով, վերանվաճեցին Թիֆլիսը, շարժվեցին դեպի արևելք և ահեղ սպառնալիք դարձան

3 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 73, Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 34։

Թավրիզի համար։ Այս փոփոխական հաջողությունները տևեցին ավելի քան մեկ տասնամյակ (1578—1590)։ «Ընդհարումները տեղի ունեին Անդրկովկասի զանազան կողմերում. և Արարատյան դաշտը, Ղարաբաղը, ինչպես և մյուս հայաբնակ վայրերը պատերազմական բեմ էին դառնում փոփոխակի»[4]։

Հայ ժողովրդի այս տարիների անտանելի վիճակը նկարագրող բազմաթիվ հիշատակարաններ կան, որոնց միջից մեր առաջ պատկերանում են հանուր հայության վրա եկած աղետները, մեկը մյուսից ահարկու երկու թշնամիների պատճառած չարիքները։ Այդ հիշատակարանների կողքին կա և Ծարեցի Հովհաննիսիկ վարդապետի ժամանակագրությունը, որը սարսռազդու գույներով ներկայացնում է պատերազմի տարիների եղերական պատկերները։

Խաչենը, ինչպես երևում է աղբյուրներից, դուրս չէր մնացել վերոհիշյալ աշխարհակործան և ոչ մի աղետից։

Հյուսիս-արևելյան Հայաստանի աշխարհիկ իշխանությունների վիճակը.— Մեր պատմագիտության մեջ այն կարծիքն է տարածված, թե XIV—XVI դարերում հայկական իշխանություններն առհասարակ սպառված են եղել, լավագույն դեպքում՝ այնքան անզորացած (Աշոտ Հովհաննիսյանի խոսքով՝ փոշիացած), որ նրանց ներկայացուցիչները՝ կրոնավորի սքեմ հագել, քարշ էին տալիս իրենց գոյությունը, կամ ենթակա էին «հոգևոր ֆեոդալների հովանավորությանը»։

Այսպես, Հակոբ Փափազյանը վերոհիշյալ հոդվածում ի միջի այլոց, հենվելով ակադ. Հ. Մանանդյանի մի արտահայտության վրա, գտնում է, որ «հայ ֆեոդալական տների վերջին բեկորները (Դոփյաններ, Պռոշյաններ, Վաչուտյաններ, Ազիզբեկյաններ և այլն) հետզհետե իրենց իշխող դիրքերը կորցնում են՝ սկսած XIV դ. երկրորդ կեսից»[5]։

Հ. Մանանդյանի խոսքը, որքան էլ որոշակի ասված, չի կարող հիմնավորել այսքան վճռական մի եզրակացություն, մանավանդ Դոփյանների վերաբերյալ։ Մանանդյանը, խոսելով մոնղոլական հարյուրամյա տիրապետության հետևանքների մասին, ասում է՝ շդադարող կեղեքումներն ու հարկերը, հայ զինվորության մշտական մասնակցությունը մոնղոլական հեռավոր արշավանքներին՝

4 Լեո, Հայոց պատմություն, Գ, էջ 198։

5 Հ. Դ. Փափազյան, «Բեյթ-ալ-մալ»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում, էջ 193։

«հետզհետե հյուծել ու ուժասպառ էին արել հայկական երկրները։ Եվ երբ 14-րդ դարի երկրորդ կեսում Անդրկովկասը և Հայաստանը ենթարկվեցին նոր փորձությունների ու աղետի, հայ իշխանությունները, բնականաբար, այլևս անկարող եղան դիմադրել նոր ու ավելի սոսկալի հարձակումներին և կորցրին իրենց քաղաքական ինքնուրույնության վերջին թույլ մնացորդները»[6]։

Այստեղ երկրի քաղաքական վիճակը ճիշտ է ներկայացված ընդհանրապես։ Սակայն բոլոր իշխանությունները չէ, որ «կորցրին իրենց քաղաքական ինքնուրույնության վերջին մնացորդները»։ Հայտնի է, որ հայկական իշխանություններից մի քանիսը XV դարում վերստին ձեռք բերեցին իրենց այդ ինքնուրույնություն հիշեցնող իրավունքները, իսկ Դոփյանները Ծարում, Գեղարքունիքում հիմք դրին երկու այնպիսի մելիքությունների, որոնց բոլորովին էլ չի կարող հարմարվել ոչ «իշխող դիրքերի», և ոչ էլ, մանավանդ, «ինքնուրույնության վերջին թույլ մնացորդների» կորուստը։

Տեսնենք, թե ի՞նչ կարծիքի են մեր մյուս հետազոտողները։

Մ. Զուլալյանն ավելի անմխիթար է համարում հայ ավատատիրության վիճակը ուշ միջնադարում։ Նա գրում է. «Հայկական ֆեոդալական դասը մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում (XVI—XVII դդ.—Բ. Ու.) վաղուց արդեն վերացել էր։ Հայտնի է, որ հայկական ֆեոդալական դասի բնաջնջումն սկսվել էր դեռևս սելջուկների ժամանակաշրջանում»[7]։ Այնուհետև ուսումնասիրողը հիշում է հայ ավատատերերի մի մասի՝ Բյուզանդիա գաղթելը, մոնղոլների, ապա կարա-կոյունլու քոչվորների կողմից հայ մյուս ավատատերերի տիրույթների բռնագրավումներն ու այլևայլ եղանակներով յուրացնելը։ Եվ, այսուամենայնիվ, գտնում է, որ սխալ կլիներ ասել, թե «հայ ավատական դասն ամբողջությամբ ոչնչացված էր։ Հոգևորական պաշտոն ընդունելը՝ փրկեց ֆեոդալական փոքրամասնությունը ժառանգական տիրույթների անխուսափելի կորստից»։

«XVI—XVII դարերում Հայաստանի միայն մի շարք մասերում հայ ֆեոդալական դասի բեկորները դեռ պահում էին իրենց ավատական իրավունքների հետքերը. օրինակ՝ Լեռնային Ղարաբաղում, Սասունում ու Զեյթունում»[8]։

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 328—329։

7 Մ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դարեր), էջ 64։

8 Անդ, էջ 65։

Հավանաբար Մ. Զուլալյանն այստեղ արձագանքում է ակադ. Աշոտ Հովհաննիսյանին, որը, հայ ավատատիրության անմխիթարական վիճակի լայն բնութագիրը տալուց հետո, այնուամենայնիվ, հնարավոր է համարում եզրակացնել, թե «դասալքվել ու դիմազրկվել էին հայ ֆեոդալների բոլոր հետևորդները։ Հայկական լեռնաշխարհում կային տակավին որոշ վայրեր, ուր թուրք-իրանական տիրապետության այս դարերում իսկ պահպանվել էին տոհմատիրական (sic!) կարգերի կենդանի հետքերը, վայրեր, ուր հայ ֆեոդալական իշխող խավը չէր կորցրել կապը ազատության համար մարտնչող ժողովրդական մասսաների հետ։ Որպես օրինակ, կարող ենք հիշատակել Լեռնային Ղարաբաղը, Սասունը, Զեյթունը և նույնիսկ Արզության «ջամյաթի» հայրենիք Լոռին...»[9]։

Մենք Զուլալյանի կարծիքը մեջբերինք համարյա ամբողջությամբ, որպեսզի ոչ միայն երևա նրա սկզբի ու վերջի միջև եղած հակասությունը (եթե «հայկական ֆեոդալական դասը վաղուց արդեն վերացել էր», ինչպե՞ս հասկանալ նրա բեկորների գոյությունը, այն էլ փրկված միայն «հոգևորական պաշտոն ընդունելու» եղանակով), այլև հիշելու, որ հայ ավատատերերի ոչնչացման քաղաքականությունը սելջուկների նորամուծությունը չէր։ Այդպես էին վարվում պարսիկները մարզպանության օրերում, արաբները՝ իրենց տիրապետության առաջին իսկ շրջանից սկսած, և, համենայն դեպս, «հայկական ֆեոդալական դասը» չվերացավ ամբողջովին։

Հոգևորական սքեմի տակ աշխարհիկ հայ իշխանությունների փրկության մասին եղած կարծիքը պաշտպանում է նաև Գ. Կիրակոսյանը՝ գրելով, թե «XV դ. 20—30 թվականներին իշխող Տուրսուն, Սեյդի, Պողշ, Գրիգոր, Հասան (Դոփյաններ էին.—Բ. Ու.) և մյուս իշխանազունները տեր Ավագ եպիսկոպոսին և Մանվել աբեղային են հանձնել Դադի, Խաթրա և Գետամեջ վանքերի ու նրանց կալվածքների կառավարման գործը. «զերկու իշխանութիւնն որ է եպիսկոպոսութիւնն և պարոնութիւնն էլ հենց ի նոսա յանձնեցաք», արձանագրել են Դոփյան իշխանազունները։ Այս փաստը թուլացած աշխարհիկ իշխանների կողմից հոգևոր ֆեոդալների հովանավորությունն ընդունելու բնորոշ օրինակ է»[10]։

Կիրակոսյանի խոսքը ևս կարող է համարվել Աշ. Հովհաննիսյանի ասածների յուրահատուկ արձագանքը, քանի որ Հովհաննիս-

9 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 461։

10 Գ. Կիրակոսյան, Վանքապատկան հողատիրության ընդարձակման ուղիները XIV—XV դդ., «Լրաբեր հաս. գիտություններիՀ», 1971, № 4, էջ 82։

յանը ևս հիշել է Դադի վանքի ու Խաթրավանքի XV դ. սկզբի վիճակին վերաբերող այս ցայտուն օրինակը՝ առանց դրանից կատարելու այնպիսի եզրահանգում, ինչպիսին տեսնում ենք Կիրակոսյանի հոդվածում։ Դժբախտաբար, Աշ. Հովհաննիսյանը չի նկատել (հասկանալի է, չի նկատել նաև երիտասարդ ուսումնասիրողը), որ վկայակոչվող արձանագրությունը (ավելի ճիշտ՝ «սիկիլը») աղավաղված է։ Ճիշտն արտագրել է Մակար Բարխուտարյանցը։ Ահա փաստաթղթի մեզ հետաքրքրող մասը. «Ես՝ Տուրսունս, Սեյտիս, Պռաւշս, Գրիգորս, Հասանս և եղբարքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տէր Աւագ եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուէլ աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴադի վանս, զԽաթրի վանս, զԳէտամէջն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապանցն մեզ մնացած... զայս սուրբ աթոռնին ի նոքա ապսպարեցաք և զերկու իշխանութիւնն էլ հենց ի [նոսա] յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթողիկոսն մեծ տէր Զաքարիային, տէր Աթանասին և տէր Սարգսին էր տուեալ զԴադի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատս իւր վիճակաւն, նոյնպէս և այս տէր Գրիգոր կաթողիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ»[11]։

Այստեղ ոչ մի խոսք չկա Ավագ եպիսկոպոսին ու նրա եղբայր Մանուելին պարոնությամբ կամ աշխարհիկ իշխանությամբ լիազորելու մասին։ Ծսայի կաթողիկոսի տետրակից ընդօրինակող Հովհ. Շահխաթունյանցն է, որ «զերկու իշխանութիւնն» կարդալով՝ ավելացրել է՝ «որ է եպիսկոպոսութիւն և պարոնութիւնն էլ» և կարծել է, թե դրանով ճիշտ լրացնում է սիկիլը գրողների միտքը[12]։ Մինչդեռ իսկական փաստաթուղթն այդպիսի լրացում չունի, ավելի շուտ՝ պակասավոր չէ, և նրանում արտահայտություն գտած «երկու իշխանութիւն»-ը վերաբերում է երկու թեմերի՝ Դադիվանքի և Ծարա (Խաթրավանքն ու Գետամիջի վանքը միասին) առաջնորդություններին։

Կիրակոսյանն այս թյուրիմացության մեջ իզուր է տեսնում «թուլացած աշխարհիկ իշխանների» գոյության և հատկապես՝ նրանց կողմից հոգևոր ֆեոդալների հովանավորությունն ընդունելու» փաստ։ Ընդհակառակը, գավառի աշխարհիկ տերերն են, որ փորձում են կյանք ներարկել իրենց ավանդական հոգևոր կենտրոններում խարխլված հոգևոր նվիրապետությանը, կենդանացնել առաջնորդությունները։ Իսկ եթե անհրաժեշտ է ցույց տալ աշխարհիկ ազդեցիկ իշխանության առկայությունը՝ անկախ այս փաստի, ապա այդ կանենք հենց Կիրակոսյանի նշած ժամանակից՝ XV դ. 20—30-ական թվականներից պահպանված այն արձանագրության վկայակոչումով, որ Ավագին առաջնորդություն նվիրող Սեյտին է քանդակել Ծարա Ս. Աստվածածին վանքի խաչքարի վրա՝ տարփողելով իր իշխանության կայունությունը. «Ես Սայտիս՝ որդի պարոն Շանշին, քաջ և յաղթող զաւրաւարին և մեծ իշխանաց յազգէն, ի թվին ՊՀԹ (1430) տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գելամայ մինչ ի Շաղվաքայ, կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Շանշին...»[13]։

Չի կարելի կարծել, թե այս արձանագրության տերը կարող էր հրաժարված լինել իր աշխարհիկ իշխանությունից և ընդունած որևէ հոգևորականի հովանավորությունը, կամ, ինչպես Աշ. Հովհաննիսյանն է ասում, ասպետական զրահն ու սուրը փոխած լիներ եկեղեցական փիլոնի ու բուրվառի հետ։ Մեր քննած պատմական փաստն ավելի հարմար է գալիս Աշ. Հովհաննիսյանի մի այլ կարծիքին, որը շատ է իրավացի համանման երևույթները գնահատելու տեսակետից. իրենց դրածոների կամ «ազգականների ձեռքը հանձնելով «հայրենի» վանքերի ղեկը՝ հայ աշխարհիկ ավատատերերը տարածում էին իրենց հովանին հոգևոր վասալների և սրանց իշխանության տակ գտնված եկեղեցական հարուստ «ուխտերի» վրա»[14]։

Սա էր իրողությունը, հատկապես Խաչենում, որի թողած հիշատակներից այլ եզրակացության չի կարելի հանգել։

Ուսումնասիրողներից ոմանք էլ փորձում են աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների միաձուլման երևույթ տեսնել այն դեպքերում, երբ հոգևորականն աղբյուրներում կոչվում է նաև պարոն, պարոնտեր և նման տիտղոսներով։ Մինչդեռ այդ տիտղոսները լոկ այնքան բան էին նշանակում, որ տվյալ հոգևորականը, նախ, ազնվական-իշխանական գերդաստանից է, ապա և հովանավորում է այն վանքին, որի համար հայտարարված է պարոնտեր։ Օրինակ. 1279 թ. Ծարա Գետամիջի կամ Ս. Աստվածածին վանքի հոգևորական Ուհանը (Հովհաննես) կոչվում էր նաև պարոն. «թվ. ՉԻԸ

11 «Արցախ», էջ 208։

12 Սխալ այս արտագրությունից է օգտվել Աշ. Գ. Հովհաննիսյանը (տե՛ս նրա՝ «Դրվագներ», Ա, էջ 457—458։

13 «Արցախ», էջ 408։

14 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 455—456։

(1279)... ի պարոնութեան Դուփին որդոյն Ուհան երէցու... շինեցաք զՍուրբ Սարգիս կենաց բարեխաւս...»[15]։

Այս ժամանակ, ուրեմն, վանքի հովանավորը (պարոնը) Ուհան-Հովհաննեսն էր, որը Դոփյան իշխանական գերդաստանի ծրնունդ էր միաժամանակ։ Իսկ երկրամասի տերն ու իշխանն էր Հասանը՝ Դոփի թոռ և Գրիգոր մեծի որդի, որը Ծարա իշխանության գլուխ էր կանգնած մինչև 1287 թ.՝ մահվան տարին[16]։

Աշխարհիկ իշխանության համար ամենածանր պայմաններում՝ 1560 թ. Հովհաննես գրիչ աբեղան Խանձքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում նախ տալիս է «իշխանաւոր տեղոյս» Մեհրաբբեկ Հասան-Ջալալյանցի անունը և հետո միայն հիշում Գրիգոր կաթողիկոսին[17]։

Ինչպես Ներքին Խաչենի, այնպես էլ Ծարա կամ Վերին Խաչենի իշխանական տների, իսկ հետո՝ նրանց հիմքի վրա ստեղծված մելիքությունների պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայկական ավատական դասի մի հատվածի կենդանի ու չընդհատվող շղթան, որի ամբողջ երկարությամբ այդ տները, ճիշտ է, հպատակ էին եկվոր տիրողներին, կիսանկախ էին նրանցից, հաճախ նույնիսկ անկախ էին ու ինքնիշխան, բայց երբե՛ք ոչնչացած։ Եվ նրանք փրկվել էին ո՛չ թե հոգևոր պաշտոններ ընդունելով։ Թերևս ճիշտ լինի ասել, թե նրանցից շատերն իրենց տիրույթները փրկեցին՝ եկեղեցուն նվիրաբերելու եղանակով։

Մեր հիշատակարանները կան և կմնան անգերազանց աղբյուր իրենց ժամանակի քաղաքական ու սոցիալ-տնտեսական անցուդարձները պատկերացնելու և գնահատելու համար։ Սակայն միշտ չէ, որ նրանց ներկայացրած քաղաքական ողորմելի վիճակը, երկրի անհույս ու անհեռանկար կացությունը պետք է ընդունվի առանց վերապահության կամ առանց նրանց մեջ տեսնելու հիշատակագրի անձնական վշտի չափազանցված զեղումները։

Դիտողություններ XVI դարի Խաչենի քաղաքական ու սոցիալ-տնտեսական վիճակի մասին.— XVI դարում Արևելյան Անդրկովկասը հիմնականում Սեֆյան Իրանի տիրապետության տակ էր գտնվում, չնայած պարսկա-օսմանյան պատերազմները հաջողություն էին բերում մերթ կովող մեկ կողմին, մերթ մյուս։ Ամասիայի պայմանագրից հետո, ըստ հետազոտողների եզրակացության,

15 «Արցախ», էջ 406։

16 ՄԺ, Ա, էջ 48։

17 Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 177։

Պարսկական գերիշխանությունն Անդրկովկասում կազմել էր երեք ռազմա-վարչական միավորներ՝ Շիրվանի, Զուխուր-Սադի (Երևանի) և Ղարաբաղի բեկլարբեկությունները[18]։ Խաչենն անշուշտ մտցված էր Ղարաբաղի բեկլաբեկության մեջ, որի կենտրոնավայրն էր Գանձակը։ Սակայն չի կարելի ասել, թե այս ենթակայությունն անփոփոխելի է եղել։ XVI դարի վերջին վերաբերող մի հիշատակարանի (Ովանես քահանայի գրած) համաձայն, ինչպես արդեն նկատել է Աշ. Գ. Հովհաննիսյանը, Խաչեն-Ղարաբաղը ենթարկվում էր Երևանի կամ Զուխուր-Սադի (կոչվում էր նաև Փոսա նահանգ) բեկլարբեկությանը։ Հիշատակարանը գրվել է «ի Փոսա նահանգ, գաւառս Վարընթոյ, ի գաւղս, որ կոչի Շուշոյ, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսիս... ի թվականիս ՌԻԴ» (1575)[19]։

Եթե ռազմական գործողությունների ընթացքում հաջողություն ունեցող օսմանցիները կողոպտում ու կոտորում էին բնակչությանը, իրենց ետևից թողնելով մահ ու ավերածություն, ապա Իրանի իշխանավորները (իսկ նրանցից առաջ էլ՝ կարա-կոյունլուների կենտրոնական իշխանության ներկայացուցիչները) իրենց ենթակա բեկլարբեկություններում վարում էին հարկային շատ թե քիչ կայուն քաղաքականություն, տնօրինում էին գրաված հողերը, լուծում սոցիալ-տնտեսական հարցեր։ Հետաքրքիր են նվաճած հողի ու բնակավայրերի նկատմամբ գործադրած միջոցառումները, որոնց առթիվ պահպանվել են հավաստի վավերագրեր։

Կարա-կոյունլուների տիրապետության ժամանակների համար շատ բնորոշ երևույթ էր, երբ կենտրոնական իշխանության ներկայացուցիչները բռնությամբ ձեռք էին ձգում հայկական գավառներ, ավաններ ու գյուղեր, որոնք նրանց համար դառնում էին հարկ ու տուրք հավաքելու և պարբերական կողոպուտի անհատնում աղբյուր։

Սակայն, ըստ երևույթին, հարկ ու տուրք հավաքելը կապված էր որոշակի գլխացավանքի հետ։ Մյուս կողմից էլ՝ եկվոր իշխանավորը համոզված չէր, թե տվյալ կալվածքն իր ձեռքում հաստատ կմնա մինչև վերջ, քանի որ այդ ժամանակ արդեն Անդրկովկասում իրեն զգացնել էր տալիս Օսմանյան Թուրքիայի ռազմատենչ ներկայությունը։ Ուստի և կարա-կոյունլուների ժամանակա-

18 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 24. և հտգ.։

19 Մատենադարանի ձեռ. № 4375, էջ 264ա։ Հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 24, ծան. 2։

վոր տիրակալները հաճախ նախընտրում էին ձեռք ձգած գյուղերը վաճառել... նրանց իսկական, բնիկ տերերին։ 1436 թ. պահպանվել է մի վավերագիր, որն օրինականացնում է հետևյալ վաճառքը. «...հանգուցյալ Շեյխ-Համզայի որդի գերերջանիկ ամիր Հուսեյնը, հանգուցյալ Իսֆանդիարի որդի ամիր Ահմադն ու հանգուցյալ Դովլաթյարի որդի Սադը և հատկապես Բուլխեյրի դուստր Բեկում փաշան և Բուլխեյր Խալիլ Ֆախր-էդ-դինլուի դուստր Խանզադան քյոչիզ-հերհերցի Հովհաննեսի որդի քրիստոնյա Ավանին վաճառեցին Քյոչիզ-Հերհերի Քարահունչ [գյուղի] վեց դանգի որոշյալ երեք դանգը, վեց հազար հինգ հարյուր դինարով... (Վաճառքը կատարվեց) առանց բռնության ու հարկադրանքի, ճշմարիտ, շարիաթական ստացման միջոցով, հաստատմամբ և ընդունմամբ, ինչպես նաև բուն կալվածագրում նշված չորս սահմանների երաշխավորությամբ և բազմաթիվ վստահելի, բարեմիտ ու առաքինի մարդկանց [վկայությամբ]»[20]։

XVI դարում պարսիկների համար ստեղծվել էին առավել հարմար պայմաններ։ Նրանց այլևս չէր սպառնում ակ-կոյունլուների կամ կարա-կոյունլուների մրցակցությունը։ Այդ պատճառով էլ տիրույթների առևտուրը կատարվում էր պարսիկ տիրողների միջև։ Ահա մի այդպիսի վավերագիր, որով «երևելիներից լավագույնը՝ Նաֆասկուլի Թուշմալ Խալիլ-Ֆախր-էդ-դինլուն իր նմանների մեջ լավագույնին՝ Ֆսղանի Աշեղ Դիվանլուին, շարիաթական վաճառքով, քաղաքներում ընթացիկ Թավրիզի տասներկու թումանով, որի կեսը պարզ լինելու համար Թավրիզի վեց թուման է լինում, վաճառեց... Քոչիզի Խազազ գյուղի ամբողջ վեց դանգ մուլքը իր չորս սահմաններով»[21]։

Աշխատավորության այս ծանր վիճակը հարկավ չէր տարածվում միայն հոգևորականության վրա, որի նկատմամբ, ինչպես վերն ասվել է, Պարսից արքունիքը վարում էր հանդուրժողական քաղաքականություն, երբեմն նրան շնորհելով նույնիսկ անսահմանափակ արտոնություններ։ Հայտնի է, որ արքունիքի գործակալները տեղերում իրավունք չունեին ձեռք տալու եկեղեցուն պատկանող հողին ու գույքին, հարկի տակ դնելու եկեղեցու սպասավորներին։ Այս հանգամանքն արձանագրված է Գանձասարի կաթողիկոսների հաստատմանը նվիրված բոլոր հրովարտակներում, ինչպես նաև 1570 թ. Գանձասարի վանքին Թահմասպ Ա-ի կողմից տրված այն հրամանում, որով կրկին հաստատվում է վանքի ազատ լինելը հարկերից[22]։

Սակայն այսքանը բոլորովին էլ չի նշանակում, թե եկեղեցուց ու հոգևորականներից չստացվածը չէր փոխհատուցվում պարսիկ բռնագրավիչներին։ Քիչ հետո կտեսնենք, որ նույնիսկ Գանձասարի կաթողիկոսության ի՛նչ-ի՛նչ պարտքերը (նույնիսկ ապորինի պարտքերը) գանձվում էին նրան ենթակա շրջանների աշխատավորներից[23]։

Ներքին Խաչենի իշխանությունը՝ ըստ մի ուշագրավ հիշատակարանի.— Հասան-Ջալալյանների իշխանության XVI դարի առաջին կեսի վիճակի առթիվ հետաքրքիր տեղեկություն են հաղորդում 1532 թ. Թոխատում (Եվդոկիա) ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանները[24]։ Այս ձեռագրի վրա առաջին անգամ

«Վարընթոյ»—«Վարանդայի», Շուշոյ—այժմյան Շոշու կամ Շուշիքենդ գյուղն է, որից իր անունն է ստացել Շուշի բերդաքաղաքը (նախապես կոչվելիս է եղել Շոշու բերդ, Շոշվա դալա)։

20 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» (այսուհետև՝ ՄՊվ), II, Կալվածագրեր, պրակ առաջին (ԺԴ—ԺԶ դդ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, էջ 77։

Դանգն իմաստային երկու գործածություն է ունեցել։ Նախ՝ այն դրամի փոքրագույն միավորն էր, մի գրամից էլ քիչ կշռով (Ստ. Մալխասյանց, Հայ բաց. բառ., Ա, էջ 485)։ Աղբյուրներում հիշվում են «վեց դանգեան», «երեք դանգեան»։ Դանգան 1/6 դիրհեմն է (Հր. Աճառյան, Հայ արմ. բառ., Ա, 1971, էջ 620)։

Ե. Պախոմովի կարծիքով՝ XV դ. սկզբին «դանգը» կամ «թանկան» կշռում էր 6,2 գրամ մաքուր արծաթ (տե՛ս Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана. «Труды Общества обследования и изучения Азербайджана», вып. 3, Баку, 1922, стр. 29).

Կարծում ենք՝ իրավացի է Հ. Փափազյանը, երբ նշված հատվածում հիշվող «դանգը» նույնացնում է հայերեն «ստակի» հետ և բացատրում որպես տիրույթի, հողամասի և նման այլ սեփականությունների 1/6-ական մասը (տե՛ս ՄՊվ, I, էջ 391—392)։ Վկայակոչված վավերագրի «խազազ գյուղի ամբողջ վեց դանգ մուլքը» կնշանակի՝ ամբողջ գյուղը («իր չորս սահմաններով», ինչպես նշված է շարունակության մեջ)։

Ինչ վերաբերում է դինարին, ապա այն դրամական միավոր է և վերոհիշյալ վավերագրի անմիջական ժամանակներում մեկ թումանի 10000-րդական մասն էր կազմում։ «XV—XVII դարերում արծաթե դինարը հաստատուն կշիռ չուներ» (ՄՊվ, I, էջ 392)։

21 ՄՊվ, Բ, Կալվածագրեր, պրակ առաջին, էջ 116։

22 ՄՊվ, Ա, հրովարտակ, № 18։

23 ՄՊվ, Բ, էջ 87։

24 Մատենադարանի ձեռ. № 6644։

Այս ձեռագիրը 1822 թ. ոմն Մանուել վարդապետ նվիրել է «Առ ազգային բարերար վեհազնեայ աղայ Յովակիմ Լազարիչի համալսարանն» (էջ 188ա), որ է Մոսկվայի Լազարյան ճեմարանը։

ուշադրություն է դարձրել Աշ. Գ. Աբրահամյանը՝ գիտական ասպարեզ հանելով նրա գրիչ Եղիշե աբեղայի գրի առած ծածկագիր երկու հետաքրքիր նմուշները, որոնք գտնվում են ձեռագրի 163ա և 165բ էջերում[25]։ Ձեռագրի հիշատակարաններով չի զբաղվել ոչ ոք։ Արժանի ենք համարում այստեղ քննել նրանց այն հատվածները, որոնք վերաբերում են գրչի տոհմին, որ Հասան-Ջալալյանք են, և նրա միջավայրի առթիվ գրչի ունեցած պատկերացումներին։

Ի դեպ ասենք, որ սույն հիշատակարանի քննությամբ և Ներքին Խաչենի իշխանության XVI դ. կյանքին վերաբերող ուրիշ բազմաթիվ նյութերի վերլուծությամբ մի անգամ ևս կապացուցվեր, որ սխալվում են ուսումնասիրողները՝ կարծելով, թե այս դարում ըստ պատվել էին հայկական իշխանությունները կամ իրենց գոյությունն էին քարշ տալիս հոգևորական սքեմի տակ։

Եղիշե աբեղան ձեռագրի հիշատակարաններում իրեն մեկ Արևելցի է կոչում[26], մեկ էլ՝ Արցախեցի[27]։ Իսկ ոմն Հովհաննես Ղարբերդցի, ծանոթանալով ձեռագրին ու ծածկագրերին, նրան անվանում է «Եղիշէ Խաչենեցի»[28]։ Եվ ահա այս Արևելցի-Արցախեցի-Խաչենեցի Եղիշե աբեղան Եվդոկիայում պանդուխտ է եղել։ Նրան դաստիարակել և հոգատար հայրություն է արել մի խոջա Աստվածատուր։ Եղիշեի վարպետն է եղել գրչության գծով տեր «Առրստակէս հեզայհոգին և դարմանիչն ատարաց և աղքատաց»[29]։

Եղիշեն դառնացած սրտով պատմում է, որ պանդխտավայրում էլ հանգիստ չունի, քանի որ այնտեղ տիրում են մահմեդական բռնավորները. «Ով եղբայր ընթերցող այսմ գրոյս, յիշեայ զշատայշրջիկ և մոլորեալ Արևելցիս, որ խիստ փափաքանաւք գրեցի զգիրքս ի քաղաքիս Եւտոկիայ, որ այժմ կոչի Թուխաթ, ի դուռն Սուրբ Սարգսի, որ այժմ քակել են ազգն Մահմետի, և մեք խիստ տարէկուսի կանք և տեղի աղաւթից ոչ ունիք և ամեն ձմեռն ցրտուն սապապուն ամեն աւր կու մարտիրոսանանք, մինչև որ ժամն կասենք, նայ մեր հոգեստանս կու ելնու ի ցրտոյն...»։

Այս անմխիթարական վիճակի նկարագրության հետ միասին Եղիշեն հաղորդում է և կարևոր տեղեկություններ, որոնք վերաբերում են հայրենի Խաչենին ու իր հարազատներին։ Նա գրում է. «Արդ եղև ծրագրել սորա [ձեռագրի] ի թվականին ՉՁԱ (1532) և փոքրն ՆԽԸ (448)[30] և վերադիրն ԻԹ (29) և է (7) երակն Դ (4)... ձեռամբ յոգնայմեղ և փծուն գրչի Եղիշէ կրանաւորի, ի վայելումն անձին իմոյ, յիշատակ ինձ և ծնողացն իմոց և ամենայն զարմից։ Աղաչեմ զձեզ միով ողորմայիւ արժան առնէք զհայրն իմ Մալիք-սուլտանն և ծնողն իմ Սուլտան-խաթունն... և զմեծ քոյրն զՇահում աղան և զկրսերն զԹաճում աղան և զեղբարքն իմ Աղայպակին և Աղայպաստին և Սետիպակն, և զիշխանութիւն մերոյ ազգիս, որ դեռևս կան կամակցութեամբն աստուծոյ մեծաւ իշխանութեամբ, բազում ազգաւ և ազգականաւք տիրեալ են յիշխանութեամբ յանառ և հուպ երկրին Արցախու և են ազգաւ Բագրատունիք, անձաւ մեծ և տիաւքն գեղեցիկ և ունին սիթոռ մեծ և հրաշալի և գեղեցկայշուք, երկնայհանդերձ, ճոխ և քաղցրատեսիլ, հրեշտակայբնակ սուրբ յաթոռն Գրիգորիսի և են աստ պարծանք մերոյ ազգիս և յամենայն քրիստոնէից՝ աջն սուրբ Առրստակիսի և գլուխն սրբոյն Յովհաննու...»[31]։

Գրիչ Եղիշեի տեղեկությունները խառնակ են և պարզելու համար կարիք ունեն քննության։ Իր հարազատներին, օրինակ, համարում է «ազգաւ Բագրատունիք»։ Չգիտենք՝ անտեղյակությունի՞ց, թե՞ տոհմական սնափառությունից։ Սակայն հասկանալի է, որ խոսքը Խաչենի տերերի մասին է։ Առանձահիկ տոհմից տարածված այն ճյուղերի մասին, որոնք «բազում ազգաւ և ազգականաւք տիրեալ են յիշխանութեամբ յանառ և հուպ երկրին Արցախու»։

25 Աշ. Աբրահամյանը ձեռագրի ընդօրինակության տարի է համարում 1527 թվականը (տե՛ս Աշ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 221)։ Մինչդեռ ձեռագիրն, ինչպես քիչ հետո կտեսնենք Եղիշեի զույգ տոմարական հիշատակություններից, 1532-ից է։ Ձեռագրի մեջ տեղ գտած ծածկագրերից մեկը (թ. 165բ), որ, հավանաբար, Եղիշեն ընդօրինակել է անփոփոխ, բընագրում ունեցել է «թվկնին ՉՀՁ (1527) (գրիչն էլ՝ Հայրապետ Սեպաստացի)։ Աշ. Աբրահամյանը նկատի է ունեցել այս թվականը։

26 Մատենադարանի ձեռ. № 6644, էջ 78ա, 144բ, 167ա։

27 Անդ, էջ 155բ։

28 Անդ, էջ 132ա։

29 Անդ, էջ 166բ։

30 Խոսքը Սարկավագաղիր փոքր կամ անշարժ տոմարի մասին է, որը հաշվի էր առնում նահանջ տարին, այսինքն՝ ունի նաև 366 օր։ Այն Հովհաննես Սարկավագ Իմաստասերի կողմից հաստատվել է 1084 թ.։ Այս տոմարի նավասարդի 1-ը համապատասխանում է օգոստոսի 11-ին։ Մինչդեռ հայկական մեծ տոմարի տարին բաղկացած էր միայն 365 օրերից, որի պատճառով էլ 4 տարին մեկ շարժվում էր մի օրով և 1084-ին տարվա սկիզբն արդեն հասել էր փետրվարի վերջին։

Փոքր տոմարով որևէ թվական պարզելու համար պետք է տրված թվականին դումարել 1084, և կստացվի քրիստոնեական թվականը։ Եղիշեի հիշած ՆԽԸ—448+1084=1532, կամ հայկական ՉՁԱ (981)+551=1532։

31 Անդ, էջ 166բ, 167ա։

Պարզվում է նաև, որ Եղիշեի խոսքը առավել կոնկրետ հասցե ունի. վերաբերում է Գանձասարի տերերին, այսինքն՝ Ներքին Խաչենի իշխաններին։ Սրանց հոգևոր կենտրոնների մասին գրված երկար խոսքից (ունին աթոռ մեծ և հրաշալի... Գրիգորիսի և են ասա պարծանք մերոյ ազգիս... աչն սուրբ Առքստակիսի և գլուխն սրբոյն Յովհաննու») պարզվում է, որ գրիչը նկատի ունի Գանձասարը, քանի որ Արցախ-Խաչենի տարածքում միայն Գանձասարն է Հովհաննես Մկրտչի անվան և, ըստ ավանդության, այնտեղ պահվում էին մասունքներ ինչպես Հովհաննես Մկրտչից, այնպես էլ Լուսավորչի թոռ Գրիգորիսից, Արիստակիսից և այլ սրբերից[32]։

Եվ այսքանից բացի, Եղիշեն իր ձեռագրի մեջ թողած ծածկագիր առաջին պատառիկով հաղորդում է մի ամենաստույգ տեղեկություն, որին չենք կարող չհավատալ։ Նա գրել է. «Թողութիւն արարէք ինձ՝ Եղիշայ կրաւնաւորի. և ես մոլորեցայ ի երկրէն իմ, որ յայժմ Խաչեն կոչի։ Եւ յիշեցէք զմեծ պապն իմ, զՃալալ Դաւլէն, որ Ճալալեցի կոչի յազգն մեր»[33]։

«Ջալալեցի-Ճալալեցի», հավանաբար Հասան-Ջալալյան կամ Ջալալյան տոհմանվան ժողովրդական ձևն է։ Նույն ժամանակնե-

32 «Արցախ», էջ 175։

Հովհաննես Մկրտչի գլուխը որպես սուրբ մասունք Գանձասարում պահվելու մասին ավանդություններ շատ կան։ Նրանցից մեկն էլ պատմում է, թե այդ մասունքն առաջ տարել էին Կոստանդնուպոլիս, «իսկ ազգն ֆռանգաց կամէին խլել և տանել ի Ֆռանգիստան. և իշխանն փախուց ի Վրաստան։ Իսկ վերջին ժամանակն՝ էՃ (700=1251) թվականին Ջալալ-Դովլանն խլեց եղբօրէն իւրմէ և բերեալ ի Գանձակա կողմն ի Խաչեն, Դանձասար անուն հռչակաւոր վանք շինեաց և անուանեաց Գանձասար, (որ) այժմուս յաթոռ է Աղուանից» (Նարայր եպ. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Հակոբեանց, հատ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 282)։

Ճիշտ է, այստեղ Գանձասարի կառուցման թվականն աղավաղված է, սակայն դա չի կարող խանգարել, որպեսզի ընդունենք Հովհաննես Մկրտչի մասունքի առթիվ ավանդության տարածված լինելը։

Գրիգորիսի դիակը թաղված է Ամարասում (Փաւստոս, էջ 23—24, Խորենացի, էջ 260)։ V դ. վերջում Վաչագան Բարեպաշտը նրա մասունքները բաժանում է Արցախի և Ուտիքի թեմերին (Կաղանկատուացի, էջ 89—90)։ Ինչ վերաբերում է Արիստակես սրբի մասունքներին, ապա դրանց առթիվ ևս առկա են ավանդություններ։ Օրինակ, Հովհան Որոտնեցին՝ հակաքաղկեդոնական պայքարի եռանդուն մասնակից և նշանավոր վարդապետ-մեկնաբան, ցանկանում էր ամենայն հայոց կաթողիկոսության աթոռը Սսից փոխադրել «յԱղուանս, որ ճշմարիտ... և սուրբ աթոռն Գրիգորիսի», և միաժամանակ հայտնում է, թե «սրբոյն Ռստակիսի աչն առ մեզ է և Գեղարդն սուրբ և այլ բազում սրբութիւն» (Մատ. ձեռ. № 4669, էջ 199բ—200բ, հմմտ. ԺԵ, Ա, էջ XXXIV)։

33 Ձեռ. № 6644, էջ 163ա։

բում ստեղծված մի ձեռագրի հիշատակարանում տոհմը հենց այդպես էլ կոչված է՝ «Ճալալեցւոց»[34]։

Ուրեմն, Եղիշեն շառավիղն է այն Ջալալ Դավլայի, որի անունից իրենց տոհմը կոչվում է Ջալալյանք (Ջալալեցի)։

Եվ, վերջապես, գրիչը տալիս է նաև իր հարազատների անունները. հայրն է Մալիք-սուլտան, մայրը՝ Սուլտան-խաթուն, քույրերը՝ Շահում աղա, Թաճում աղա, եղբայրները՝ Աղայպակ (Աղաբեկ), Աղայպաստ (Աղպաստ) և Սետիպակ (Սեյտիբեկ)։

Ովքե՞ր էին այս անունների տերերը։

Անկասկած Եղիշե աբեղան, մինչև այս հիշատակարանը գրելը, երկար է ապրել Թոխատում, որովհետև անունների գրության մեջ երևում է արևմտահայերենի և առհասարակ Թոխատի միջավայրի ազդեցությունը։ Խաչենում «սուլտան» պատվանուն չկար, «մելիքն» էլ «մալիք» չէին դարձնում։ Ուրեմն, «Մալիք սուլտան» խաչենավարի կլինի «Մելիք իշխան»[35]։ Իսկ այս շրջանի Ներքին Խաչենի իշխանական տան պայազատների մեջ Մելիք անունը պատկանում էր Հատիր Մելիքին, որը, ինչպես վերը տեսանք, Գանձասարի ինքնագիր արձանագրության մեջ ներկայանում էր հենց միայն Մելիք անունով. «Մելիքս՝ որդի Սայտունին, թոռն մեծին Աղպաստու»։ Մեր այս տեսակետի օգտին է խոսում նաև Մելիքի (Մալիք սուլտան) որդիներից մեկի Սետիպակ անունը, որ Սեյտիի (կոչված նաև Սայտուն) տարբերակն է. «Սետի-պակ»՝ «Սեյտի-բեկ»։ Գիտենք, որ Հատիր-Մելիքի հայրն էր Սայտունը, և Հատիր Մելիքն իր որդիներից մեկին պիտի կոչեր հոր անունով։Եղիշե աբեղայի Աղայպաստ (Աղբաստ) անունը ևս առնչվում էր Հատիր-Մելիքի գերդաստանին. դա էլ Սայտունի հոր և Հատիր-Մելիքի պապի անունն էր։

Այս փաստերից չի կարելի չեզրակացնել, որ Եղիշեն Հատիր-Մելիքի որդին է, կուսակրոնության տրված, և ահա իր «շատայշրջիկ» կյանքում Թոխատ (Եվդոկիա) է հասել ու 1532 թ. գրել մի հետաքրքիր ձեռագիր՝ իր մեծարժեք հիշատակարաններով հանդերձ։

Ծածկագրի հետագայի ընթերցողը նրա տակ գրի է առել իր ընթերցվածքը սխալներով. «զմէհչպապն» փխ. «զմեծ պապն», «զՃալալղաւէն» փխ. «զՃալալ Դաւլէն»։

34 Մեսրովբ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երընջակայ, Տփխիս, 1904, էջ 146։

35 Ի դեպ հիշատակարանում Եղիշեն մի տեղ էլ հորն իսկապես կոչում է «Մելիք» (տե՛ս ձեռագրի էջ 132ա)։

Մեր եզրակացությանը չի հակասում այն հանգամանքը, որ Եղիշեն իր եղբայրների անունները տալիս չի հիշում Սարգիս կաթողիկոսին։ Շատ հնարավոր է, որ նա Խաչենից դուրս եկած լիներ, երբ Սարգիսը դեռ չէր ստացել իր հոգևորական անունը։ Ըստ այսմ տարօրինակ չի լինի, եթե մտածենք, որ թվարկված երեք եղբայրներից (Աղաբեկ, Աղբաստ, Սեյտիբեկ) մեկն էլ հետագայում ստացած լիներ Սարգիս հոգևորական անունը և 1540-ական թվականներին բաղմեր Աղվանից կաթողիկոսության աթոռին։

Հատիր-Մելիք՝ որդի Սայտունի և Սարգիս կաթողիկոս՝ որդի Հատիր-Մելիքի.— Վերը տեսանք, որ Սայտունի որդի Վելիջանը՝ Ներքին Խաչենի իշխանն էր, Գանձասարում արձանագրություն էր քանդակել իր և եղբայրների անունից՝ առանց վերջիններիս անունները տալու։ Գտանք նաև այդ եղբայրներից մեկի անունը՝ Մելիք, որ 1499-ին արձանագրել էր իր ընծաները Գանձասարին։ Առայժմ մյուսների (կամ մյուսի) անունները չգիտենք։ Սակայն պարզված ենք համարում մի հարց. որ «Մելիք»-ը Վելիջանի եղբոր լրիվ անունը չէ, լրիվը Հատիր-Մելիք է, կրկնակ անուն, որպիսին սովորական էին Խաչենի կողմերում։ Ճիշտ է, նա «Մելիք» է կոչված իր իսկ արձանագրության մեջ, ուր պետք է, որ քանդակվեր անվան լրիվ ձևը։ Սակայն դա ևս զարմանալի չէ, որովհետև նրա հայտնի նախնի Հասան-Ջալալ Դավլան ևս իրեն երբեմն հենց սեփական արձանագրության մեջ կոչում էր միայն Հասան («Ես Հասան որդի Վախտանկայ և Խորիշահի»)[36], կամ միայն Ջալալ Դաւլա («Ես Ջալալ Դաւլաս, որդի Վախտանգայ»)[37]։ Կամ Հասան Ջալալի միակ արու զավակի անունն էր Իվանե Աթաբակ, սակայն արձանագրությունների և մատենագրական տեղեկությունների մեջ հիմնականում Աթաբակ անվամբ է կոչված։ Այնպես որ տարօրինակ չպետք է թվա, երբ Հատիր-Մելիքը սեփական արձանագրության մեջ ներկայացել է որպես «Մելիքս՝ որդի Սայտունին»։

Հատիր-Մելիքն ապրել է իր եղբայր Վելիջանի իշխանության օրերում, հավանաբար, առանց բաժին ունենալու իշխանությունից։ Նրա որդի Սարգիսն էր, որ տեր դարձավ Աղվանից կաթողիկոսական գավազանին և այն պահեց երկար տարիներ։ Սարգիս կաթողիկոսի գահակալության առաջին տարիների մասին տեղեկություններ չունենք։ Նրա սեփական առաջին արձանագրությունը 1546 թվականից է և պատմում է իր նվիրատվությունները Գանձասարին.

36 Շահխաթունեանց, Բ, էջ 377։

37 Անդ, էջ 373, «Արցախ», էջ 174։

«Թուին ՉՂԵ կամաւն այ ես Սարգիս կաթողիկոս որդի Հատիր-Մելիքին, թոռն մեծին Սայտունին, գնեցի զհայրենիքն ի Կասրայ Ջ (6) ստակն. մինակ տանն Դ (4) ստակ ու կեան, Առուտանայ Բ (2) ստակն, Կուռալանայ Դ (4) ստակն, ավի սբ ուխտս Գանձասարայ»[38]։

Սարգիս կաթողիկոսի անվան հետ կապված է մի շատ ավելի կարևոր գործ՝ Գանձասարի վանքի վերանորոգումը։ Այդ առթիվ նա ինքն է թողել անթվական մի փոքր արձանագրություն. «Նորոգեցաւ... ձեռամբ Սարգիս կաթողիկոսին Աղուանից, որ է յաղգէն Ջալալ Դօլին»[39]։

Գանձասարի վանքի նորոգման ժամանակը մոտավորապես պարզվում է հենց Գանձասարի վանքում գրված մի Ավետարանի հիշատակարանով, որի գրիչ Հայրապետը հայտնում է, թե «դառն և ի նեղ ժամանակիս, [յորժամ] վասն մահուն ուրացան մայրն զորդիս իւրեանց»[40], այսպիսի մի ժամանակ («ի թուականութեան հայ տոմարիս Ռ»—1551) Աղվանից հայրապետ Սարգիսը, «ետ նորոգել ի մեծայհանդէս եկեղեցիս Գանձասար»[41]։

Մակար Բարխուտարյանցը, առանց աղբյուր նշելու, Սարգիս կաթողիկոսի մահվան տարի է համարում 1555 թվականը[42]։ Այս թվականը հաստատվում է Ջրաբերդի Երից-մանկաց վանքում գրված մի Ավետարանի հիշատակարանով, որը, ի միջի այլոց, նշում է, թե «Թվիս ՌԴ (1555) նկարեցաւ և կազմեցաւ Ավետարանս ի նոր գիւղի Ջալալեցւոց և յայսմ ամի Սարգիս կաթողիկոսն փոխեցաւ ի Քրիստոս ի մեհեկի ԺԹ (19) աւուրն»[43]։

Մեհրաբ-բեկը և իր ժառանգները.— Վելիջանի մասին, 1507 թ. մնացած արձանագրությունից հետո, տեղեկություն չունենք։ Առաջին հայացքից կթվա՝ հայտնի էլ չէ, թե իշխանական աթոռի վրա նրան անմիջապես ով է հաջորդել։ Դարի կեսերին վերաբերող նյութերի մեջ իշխան է հիշվում մի Մեհրաբ-բեկ (կոչված նաև Մեհ-

38 Հ. Օրբելի, էջ 9, Շահխաթունեանց, Բ, էջ 373—374, Ջալալեանց, Ա, էջ 187 (աղավաղումներով), «Արցախ», էջ 177։

39 «Գանձասար», № 49։

40 Մատենադարանի ձեռ. № 6513, էջ 280բ։

41 Անդ, էջ 280բ—281ա։

42 Մ. վ. Բարխուտարյանց, Պատմութիւն Աղվանից, Բ, էջ 21։

43 Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երընջակայ, էջ 146։

Այս թվականի (1555) մեհեկի 19-ը համապատասխանել է մայիսի 27-ին (շարժական տոմարով)։

բանբեկ ու Մեյրամբեկ), որը Մակար եպիսկոպոսի գծած տոհմաբանության մեջ համարվում է Հատիր-Մելիքի որդին և հաջորդը[44]։ Սակայն սա թյուրիմացություն է, որովհետև Մակար վարդապետը ոչ մի աղբյուր չունի, որ հաստատի, թե Մեհրաբ-բեկը Հատիր-Մելիքի որդին է եղել, կամ թեկուզ հաստատի, որ Հատիր-Մելիքը ներքին Խաչենում իշխանության գլուխ է կանգնել երբևէ։

Մակար վարդապետը Վելիջանի իշխանությանը հաջորդած ժամանակների համար, դարձյալ ենթադրաբար, իշխան է հիշում ոմն Բաղդասար-բեկի[45], որն, իբր թե, իշխել է 1520 թ. մինչև նույն դարի 60-ականները[46]։

Աղբյուրներում, սակայն, այսպիսի միջարկության տեղ չկա։ Վելիջանից հետո իշխանությունը վարում է Մեհրաբ-բեկը, որի մասին հենց Մակար եպիսկոպոսի արտագրած մի հիշատակարանը խոսում է 1560 թ. առումով. «Արդ գրեցաւ տառս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարուեստ և փծուն գրչի Յովհաննէս աբեղայիս... ի դուռն սուրբ աթոռոյս Յակոբայ վանիցս... ի երկիրս Խաչէն ի գիւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի... և իշխանավոր տեղոյս Մեհրապ-պէկին աշխարհակալ շահ Դահմանին, ի թվիս հայոց ՌԹ» (1560)[47]։

Մեհրաբ-բեկի հետ հիշատակվող Գրիգորիս կաթողիկոսը նրա որդին է եղել։ Մեծառանից Ս. Հակոբա վանքում 1569 թ. ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում գրված է. «Փառք... որ արժանի արար զանարժան գրիչս Յոհաննէս... հասանել ի վերջին գիծ սրբոյ Աւետարանիս ի թուաբերութեան հայկազեան տումարիս ՌԺԸ (1569) ի սուրբ և ի գերահռչակ ուխտիս, որ կոչի Յակոբայ վանք... ի երկիրս Խաչեան, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսին՝ որդի Մեհրապ-պէկին»[48]։

Իսկ եթե Գրիգորիսը Մեհրաբ-բեկի որդին էր և արդեն կաթողիկոսական գահին նստած էր դեռևս 1560-ին, ապա նրա հայր Մեհրաբ-բեկն այդ ժամանակ բավական տարիք առած մարդ պետք է լիներ, մինչև այդ՝ իշխանությունը վարած գոնե մի 25—30 տարի, այսինքն՝ Վելիջանից անմիջապես հետո։ Հետևապես Բաղդասար-բեկի հնարավի իշխանության համար (որն, իբր թե, իշխանությունը վարել է 1520—1561 թթ.) այլևս տեղ չէր մնա, մանավանդ, երբ գիտենք, որ Բաղդասարը հետագա սերունդներից է՝ թյուրիմացաբար իր ժամանակից առաջ հիշված Մակար վարդապետի կողմից։ Բաղդասար-բեկը Մեհրաբ-բեկի որդին է՝ ըստ Մեհրաբ-բեկի ավագ որդի Ջալալի հիշատակարանի[49], որին կանդրադառնանք իր տեղում։ Ուրեմն, նա չէր կարող Խաչենի իշխանությունը վարած լինել հորից առաջ։

Ելնելով այն հանգամանքից, որ Վելիջանին, որպես իշխանության ժառանգորդ, անմիջապես հաջորդել է Մեհրաբ-բեկը՝ առաջինի եղբայր Հատիր-Մելիքի կենդանության օրոք, գտնում ենք, որ տոհմացանկի մեջ Մեհրաբ-բեկին պետք է համարենք Վելիջանի հարազատ որդի։ Սրա համար լրացուցիչ կռվան կարող է համարվել նաև Մեհրաբ-բեկի հարազատ որդի Ջալալ իշխանի պարագան։ Սա ևս հորը հաջորդել է ժառանգական իրավունքով... Ապա և այն հանգամանքը, որ Ջալալի որդիներից մեկը կոչվում էր Վելիջան։ Ինչպես կտեսնենք հետո, Մեհրաբ-բեկի այս ավագ որդի Ջալալը, հետևելով տոհմական ավանդությանը, ավագ որդուն կոչել էր հոր անունով՝ Մեհրաբ-բեկ, մյուսին պապի անունով՝ Վելիջան[50]։

Ուրեմն, անկասկած է, որ Վելիջանին մոտավորապես դարի 10-ական թվականներին հաջորդել է նրա ավագ որդի Մեհրաբ-բեկը, որի իշխանությունն էլ շարունակվել է մինչև 60-ական թվականները։ Հովհաննես աբեղայի՝ Ս. Հակոբա վանքում 1560-ին արտագրած Մաշտոցի հիշատակարանի տեղեկությամբ՝ այդ թվականին «իշխանաւոր տեղոյս» էր Մեհրաբ-բեկը և կաթողիկոս՝ նրա որդի Գրիգորիսը։

Հ. Օրբելու ուսումնասիրած մի խաչքարը, որի արձանագրությունն անթվական է, և գիտնականը ենթադրաբար այն համարել է XII—XIII դարերից ավելի ուշ ժամանակների գործ, իրականում վերաբերում է Մեհրաբ-բեկին։ Խաչքարն այժմ գտնվում է Գանձասարի վանքի գավթում։ Ահա նրա նկարագրությունը՝ ըստ Հ. Օրբելու. «Գավթի հարավ-արևելյան անկյունում արևելյան պատին

44 Մ. վ. Բարխուդարյանց, Պատմութիւն Աղվանից, Ա, էջ 142. «Սայտուն ողդի Պարոն Աղբաստի. Հատիր-Մելիք որդի Սայտունի. Մեհրաբ-որդի Հատիր-Մելիքի» (առանց նշելու այս տոհմաշղթայի աղբյուրները)։

45 Անդ, էջ 142-ում Մեհրաբ-բեկի թոռ համարված Վելիջան-բեկից հետո՝ որպես վերջինի որդի, իսկ 34-րդ էջում՝ Մեհրաբ-բեկից հետո։

46 Մակար վարդապետն այս անվան դիմաց նշում է. «Պաղտասար որդի Մեհրապ բեկին տեառն Խաչենոյ-թվ. ՌԺ (1561)։ Համարյա թե իշխած է 1250-ից» («Պատմութիւն Աղվանից», Բ, էջ 34, ծան. 4)։

47 Մ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք, էջ 177։

48 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի», Բ, «Անտոնեան հավաքածու», Վիեննա, 1971, էջ 51։

49 Մատենադարանի ձեռ. № 5794, էջ 207ա։

50 Անդ։

հենած է մի մեծ խաչքար։ Ցածում կիսակլոր շրջանակի մեջ մարդկային ֆիգուրն է՝ աջ ձեռքին սափոր, դիմացից եկող հեծյալը՝ երկար գավազանով, որի ծայրին փոքրիկ խաչ է երևում։ Խաչից վեր երկու տողով խոշոր տառերով կցագիր արձանագրությունն է, որ ընթերցվում է այսպես. «Կաման այ ես Գրիգորիս կաթողիկոս կանգնեցի զսբ խաչս ի փրկութիւն հաւր իմոյ»։ Ցածում ավելի մանր տառերով, կցագրերով գրված է. «Սուրբ խաչս փրկութիւն պարոն Մեհրապին ի կոչման աւուրն»[51]։

Երևում է, որ Օրբելին ծանոթ չի եղել Գրիգորիս կաթողիկոսին ու նրա հայր Մեհրաբ-բեկին վերաբերող մյուս նյութերին։ Այդ պատճառով էլ երևակայությամբ փորձում է պարզել, թե ինչո՞ւ Մեհրաբը քանդակի մեջ ձեռքին սափոր ունի, դա ի՞նչ կարող է նշանակել և այլն։ Այստեղից էլ նա ենթադրում է, թե Մեհրաբը «միրաբն» է, որ նշանակում է «ջրաբաշխ», «ջրերի վերակացու» (ուրեմն Գրիգոր կաթողիկոսի հայրը ջրաբաշխ է եղել Խաչենում), իբր դրա համար էլ ձեռքին ունի սափոր, որը կապվում է ջրի հետ։ Գիտնականը հնարավոր էր համարում մի այլ բացատրություն. «սափորը կարող է ունենալ մեզ անհայտ ինչ-որ խորհրդանշական իմաստ և անհրաժեշտ է դիտարկել այլ սափորների կապակցության մեջ», որոնք առկա են ուշ շրջանի հայկական գերեզմանաքարերի զարդաքանդակներում[52]։

«Մեհրաբ»—«Միրաբ» բացատրության մասին, ասենք, որ այն թյուրիմացություն է՝ ոչ միայն նրա համար, որ Մեհրաբը Խաչենի իշխանի հատուկ անունն է եղել և ոչ թե զբաղմունքը հատկանշող բառ, այլ որովհետև «Մեհրաբ» անունը առհասարակ կապ չունի «միրաբ»-ի հետ, այն ծագում է «Միհր»—«արեգակ» (արևի աստվածը արևելյան-պարսկական դիցաբանության մեջ) բառից և «Մեհրաբ»-ն էլ մեկնվում է որպես «արևափայլ»[53]։

Սափորը հայոց գերեզմանաքարերի վրա իսկապես խորհրդանշական իմաստ ունի և կապվում է լիության, առատության ու առատաձեռնության հետ։ Այս խաչքարի քանդակի մեջ էլ, պարզ է, խորհրդանշում է Խաչենի տիրոջ հարստությունն ու առատաձեռնությունը մի ժամանակ, երբ ժողովուրդը հեծում էր թուրք ու պարսիկ հարստահարիչների լծի տակ, սովի ու զրկանքների մեջ։

51 *Й. А. Орбели*, Бытовые рельефы, стр. 199.

52 Անդ, էջ 203։

53 Հր. Աճառյան, Հայ. անձ. բառ., Գ, էջ 313։

Անշուշտ Մեհրաբ-բեկի իշխանության օրերում է կատարվել Խաչեն-Ղարաբաղի այն բարբարոսական ասպատակությունը թուրք-օսմանցիների կողմից, որի մասին պահպանվել է հենց թուրք պատմագրի վկայությունը։ Փեչևի-Իբրահիմ թուրք պատմագիրը (XVI դ.) 1533 թ. իր ցեղակիցների՝ Երևանի նահանգում, Նախիջևանում և Ղարաբաղում կատարած ասպատակություններն ու զանազանությունները պատմում է որպես ականատես, դեպքերի մասնակից հեղինակ։ Նա նույնիսկ մի բացառիկ խանդավառությամբ ու հպարտությամբ է պատմում իր հայրենակիցների չարագործությունները։ Ահա թուրք ասպատակիչները մտնում են Երևան քաղաք։ «Նրանք շահի (խոսքը պարսից շահի մասին է, որը Երևանի տիրակալն էր թուրքերի նվաճումից առաջ—Բ. Ու.), նրա որդու և մի շարք անվանի խաների ու սուլթանների հոյակապ և գեղազարդ պալատները, պարտեզներն ու այգիները, հատկապես «Սուլթանական բաղ» անունով հայտնի դրախտանման այգին, բոլորը հրի մատնեցին, այրեցին ու հողին հավասարեցրին»[54]։ Այս և ուրիշ նման «քաջ»ագործություններից հետո թուրքերը «մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով և հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ է Աջեմի (Պարսկաստանի, այսինքն՝ Պարսկաստանին հպատակ—Բ. Ու.) երկրում։ Անսպասելի կերպով երկիրը մի այնպիսի փոշով ծածկվեց, որ մարդը մարդուց չէր կարելի ջոկել, լուսավոր ցերեկը մութ գիշերվա վերածվեց։ Այս գավառի բնակչությունն այնպես էր ցրվել ու ոչնչացվել, որ մարդու հետք անգամ չերևաց։ Սակայն գտնվեցին որոշ տեղերում պահված և քարայրներում թաքցված գանձեր ու զանազան ապրանքներ։ Բանակն անսահման հարստություն ու ավար ձեռք բերեց, իսկ հարստությունների մի մասը, որ տանելու հնարավորություն չկար, կրակ տվին ու այրեցին»[55]։

Այսպիսի դեպքերի համար է, որ ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են։

Այնուհետև թուրք տարեգիրը պատմում է, թե ինչպես իրենց «հաղթական» բանակները շարժվում են դեպի Նախիջևանի դաշտը, ճանապարհին հրի ու սրի մատնում ամեն ինչ։ «4—5 օրվա տարածության վրա գտնվող ճանապարհի բոլոր գյուղերն ու ա-

54 Փեչևի-Իբրահիմ, Թարիխի-Փեչևի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 33։

55 Անդ, էջ 34։

վանները, դաշտերն ու շինություններն այնպես քանդեցին ու ավերեցին, որ շինության ու կենդանության հետք անգամ չմնաց»[56]։

Մեհրաբ-բեկի զավակների մասին կան ինչպես ձեռագրական, այնպես էլ մատենագրական տեղեկություններ։ Այդ զավակներից չորսը հայտնի անձնավորություններ էին։ Ավագ որդի Ջալալը հոր իշխանության ժառանգորդն էր, և նրա մասին պիտի խոսենք առանձին։ Մյուս աշխարհական որդին էր Բաղդասար-բեկը, որը հատուկ ծառայություններ չուներ և հիշվում է Գանձասարի կաթողիկոս դարձած որդու՝ Դավթի կապակցությամբ։ Մյուս երկուսը՝ Գրիգորիսն ու Հովհաննեսը, կուսակրոնության էին տրված և 1560—70-ականներին զբաղեցնում էին Աղվանից կաթողիկոսական աթոռը։ Նրանք անմիջապես չեն հաջորդել իրար։ Ըստ Աղվանից կաթողիկոսների մասին պահպանված ձեռագիր ցանկերի՝ Գրիգորիսի գահակալության առաջին տարին է 1556 թվականը[57]։ Հիշատակարաններում նրա կաթողիկոսությունը հիշվում է 1559-ին[58], 1560-ին[59], 1564-ին[60] և 1569-ին[61]։ Աղբյուրները նշում են նաև, որ նա ուրացել է քրիստոնեությունը («և սա ուրացաւ զՔրիստոս»)։ Մ. Բարխուտարյանցն ուրացության տարի է համարում 1573 թվականը՝ հավանաբար նկատի առնելով Խաչիկ վարդապետի արտագրած կաթողիկոսաշարի տվյալը[62]։

Սակայն մենք ձեռագրական արժանահավատ վկայություն ունենք այն մասին, որ ուրացությունը տեղի է ունեցել 1574 թվականին։ Գրիգոր կաթողիկոսի հետ կատարված այդ արտասովոր երևույթի մասին խոսող աղբյուրների մեծ մասը լռության է մատնում ուրացության պատճառը։ Եվ միայն գրիչ Աբրահամ աբեղան է, որն «ի գեղս, որ կոչի Փարաջանց, ի երկիրս Հաքարու, ի ոստս Դիզափայտու, ի թվին ՌԻԳ» (1574) ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում ցավով արձանագրում է, թե դա տարին էր «կաթողիկոսութեան տանս Աղվանից տէր Գրիգորիսի, որ երեսս Թահեայմազ փաթշահ անկամա տաջկացուց, մեզ մեծ սուք եղաւ անմխիթար»[63]։

Ուրեմն, հայոց եկեղեցու և նրա ծառայողների շահերի պաշտպան համարված պարսկական արքունիքի հարկադրանքով է, որ Գրիգորն ընդունել է մահմեդականություն։

Այս կետից հետո Գրիգորիսի ճակատագրի մասին այլևս տեղեկություն չունենք։

Խաչիկ վարդապետի ցանկի տվյալները հաճախ շատ են խառնակ։ Այնտեղ 1573-ին Գրիգորին հաջորդում է Հովհաննես կաթողիկոսը։ Սակայն վերջինս կաթողիկոս է հիշվում նաև այդ թվականից առաջ։ Գրիչ Աթանասը Ջրաբերդի Եղիշե առաքյալի վանքում Հայսմավուրք է արտագրել «թվականիս հայոց ՌԸ (1559) ամի, ի կաթողիկոսութեան տեառն Յոհանիսի»[64]։ Ճիշտ է, «Յոհանիսի»-ն ջնջված ու նորից գրված է, սակայն դա հիմք չէ անունը կասկածի տակ առնելու համար։ Գուցե Հովհաննեսն ու իր եղբայրն աթոռակիցներ էին և կաթողիկոսությունը վարում էին միասի՞ն։ Առհասարակ 70-ական թվականների կաթողիկոսներին վերաբերող տեղեկությունների մեջ կա մի շփոթ, որը չի հաջողվում պարզել, քանի որ այդ շփոթի մեջ «մեղավոր են» նաև ձեռագիր հիշատակարանները, որոնց չվստահել չենք կարող։ Այսպես. կաթողիկոսաշարում հիշվում է նաև մի տեր Դավիթ, որը, Ջալալ իշխանի հիշատակարանի համաձայն, Ջալալի եղբայր Բաղդասար-բեկի որդին է եղել, իսկ «Ջամբռի» ու Մակար վարդապետի տեղեկություններով էլ՝ գահակալել է միայն մեկ տարի. «Գրիգոր կաթողիկոսը 1573-ին ուրանում է յուր հավատը, որին փոխարինում է տեր Դա-

56 Փեշևի-Իբրահիմ, էջ 34։

57 Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դաղեան, Ա, էջ 89։ Հմմտ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, էջ 21։

58 Տե՛ս Հովհաննես գրչի 1559-ին, Մեծառանից Ս. Հակոբա վանքում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանը՝ Ցուցակ հայերեն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանի, էջ 51։

Գրիգորի կաթողիկոսությունը հետագայում հաստատվել է նաև Պարսից շահի հրովարտակով, սակայն այս մասին՝ հետո։

59 Տե՛ս Հովհաննես աբեղայի (որ երևի նույնն է Հովհաննես գրչի հետ) հիշատակարանը՝ Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 177։

60 Տե՛ս նույն Ս. Հակոբա վանքում 1564-ին Աբեթե վարդապետի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանը՝ Մ. Բարխուտարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 208։

61 Թոփճեան, անդ, էջ 89։ Սիմէօն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 78։

62 Թոփճեան, անդ, էջ 89։ «Տէր Գրիգոր որդի Մեյրամբեկին տեառն Խաչենայ՝ Ռե (1656) թուին, և սա ուրացաւ զՔրիստոս ՌԻԲ (1573)-ին»։

63 Սմբատ Տեր-Ավետիսյան, Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի ամենափրկիչ վանքի, Ա, Վիեննա, 1970, էջ 127։

«Ի ոստս Դիզափայտու» արտահայտությունից երևում է, որ գրչության վայրը Դիզակի գավառում է եղել, քանի որ Դիզափայտ լեռն այժմյան Հադրութի շրջանի հարավում բարձրացած տարն է՝ IV դարից հայտնի իր գագաթին կառուցված Կատարո վանքով։ Փարաջանց գյուղն էլ այժմ մտնում է Լաչինի շրջանի մեջ։

64 Մատենադարանի ձեռ. № 4477, թ. 608բ։

վիթ Թ Առաջաձորցի նույն իսկ թվին. սակայն խաչենցիք մեզ անհայտ պատճառով խեղդում են՝ կախելով Գանձասարի զանգակատնից»,— գրել է Մակար վարդապետը[65]։

Տարօրինակն այն է, որ Գրիգոր ուրացողի ենթադրյալ գահակալության տարիներից մեկում (մինչև 1573-ը) կաթողիկոս է հիշվում նաև մի ոմն Պետրոս, որը չկա վերոհիշյալ ցանկերից ոչ մեկում։ Մխիթար գրիչը Նոր կտակարանն է ընդօրինակել Վերին Ջակամում «ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի ի քսաներորդին (1571)... ի հայրապետութեան տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսի սրբոյ Գանձասարայ»[66]։ Այստեղ տեղ չի կարելի որևէ թյուրիմացություն տեսնել՝ ոչ թվականի և ոչ էլ կաթողիկոսի անվան մեջ։ Սակայն Պետրոսն ինչպե՞ս է հիշվել Գրիգորիսի գահակալության տարում՝ հարց է մնում։ Պակաս զարմանալի չէ նաև Դավթի անվան հիշատակությունը 1584-ին[67], երբ ըստ ցանկերի՝ 1574—1586 թթ. գահակալած է համարվում Մեհրաբ-բեկի որդի Հովհաննես կաթողիկոսը։

Սրանք շփոթություններ են, որոնց պարզելուն կարող էին օգնել վիմագրերը (հատկապես կաթողիկոսարան Գանձասարից)։ Այդպիսիք, դժբախտաբար, բացակայում են XVI դարում, քանի որ, ինչպես արդեն ասվել է, այս ժամանակներում քարի վրա արձանագրվելու արժանի ոչինչ չէր կատարվում՝ «վասն դառն և դժուար ժամանակի»։

Սակայն Հովհաննեսի գահակալությունը, որ, № 4477 ձեռագրի հիշատակարանի համաձայն, սկսվել էր ամենաուշը 1559-ին, տևել է մինչև դարի 70-ական թվականների վերջը։ Համենայն դեպս, մենք ձեռագրական վկայություն ունենք 1557 թվականից. ՌԻԶ (1577)-ին Մեծառանից Ս. Հակոբա վանքի արքեպիսկոպոս Սիմեոնի պատվերով Սաղաթել կրոնավորը մի Ավետարան է ընդորինակում «ի երկիրս Խաչեան, ի հայրապետութեան տեառն Յովաննէս կաթողիկոսի և [յ]աշխարհակալութեան շահ Թահմասնին»[68]։

Ջալալ Գ-ը և իր ժառանգները.— Ջալալը, որին «մեծ իշխան» են կոչում աղբյուրները, իսկ մի հիշատակագիր նույնիսկ թագավոր է համարում, Մեհրաբ-բեկի ավագ որդին էր և Ներքին Խաչենի ազդեցիկ իշխանը XVI դ. վերջում ու XVII-ի սկզբին։ Նրան ու իր ժամանակակիցներին ճակատագրով բաժին էր ընկել հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամենածանրագույն ժամանակներից մեկը։ Օսմանյան ու պարսկական բանակները հերթով նվաճում էին Հայաստանը, կողոպտում ու կոտորում ժողովրդին։ Եվ նրանց վայրագություններին էլ գումարվել էին Կովկասյան լեռնականների պարբերական ասպատակություններն ու ավարառությունները։

Խաչեն-Ղարաբաղը, որ իր բնական դիրքի պատճառով շատ անգամներ էր անմատչելի մնացել Հայաստան ներխուժած բրոնագրավիչների համար, դարի 80-ական թվականներին նվաճվում է թուրք հրոսակների կողմից, ենթարկվում աննախադեպ կողոպուտի ու ավերածության։ Այդ են հաստատում Մեհրաբ-բեկի որդի Ջալալ իշխանի հիշատակարանը և այլ նյութեր։ Հիշատակարանը գրվել է «ի դառն և ի նեղ ժամանակս, որ դիրեցաւ աւսմանլուն ի տեղիս, որ կոչի Խաչէն, թագաւորութեան մեծին Ճալալին և կա-

65 Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Բ, էջ 21։

Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռ»-ում կա «տէր Դաւիթ՝ որ խեղդեցաւ», առանց թվականի։ Խաչիկ վ. Դաղյանի արտագրած ցանկում էլ «ՌԻԲ (1573)-ին տէր Դավիթ» է՝ առանց խեղդելու մասին որևէ խոսքի (տե՛ս Թոփճեան, Ցուցակ, Ա, էջ 69)։

66 Մատենադարանի ձեռ. № 6759, էջ 256բ։

67 Մ. վ. Քեշիշյան, Ցուցակ ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանի, Վիեննա, 1964, էջ 38. մի Ավետարան է ընդօրինակվել «ձեռամբ յոքնամեղ և փձուն գիրչի սուտանուն Արրայհամ ապեղայիս երկիրս Դիզակայ և ի գաւղս Հաղրութ, ի անապատս, որ կոչի Շախախ... ի հայրապետութիւնն Տաւիթ կաթողիկոսին... գառն և դժուար ժամանակիս ի թվականս հայոց ՌԼԳ» (1584)։

68 Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 687։

Լալայանն այս ձեռագրի նկարագրության մեջ սխալմամբ գրչության վայր է համարել «Կապուտկողի Ս. Յակոբի վանք»-ը։ Մինչդեռ հիշատակագիրը պարզ գրել է. «...ի գերհռչակ և անուանի, մեծ ու փառաւոր, սուրբ ուխտիս Յակոբա վանք... ի երկիրս Խաչեան»։ Իսկ Խաչենի Ս. Հակոբա վանքը Մեծառանք գավառի հինավուրց առաջնորդարանն է։

Հիշատակարանի թուցիկ քննությունն իսկ ցույց է տալիս, որ ձեռագրի պատվիրատու Սիմեոն արքեպիսկոպոսը Հասան-Ջալալյան տոհմի պայազատներից է. հիշված են նրա հայր պարոն Ամիրը, մայր Գոհարը, եղբայրները, որոնցից՝ պարոն Պապը և սրա որդի Ուլուն, հանգուցյալ եղբայր աղա Փիրին։ Աղոթքի արժանիների շարքում են նաև Մեհրապը և Շահումը, «որ ի Քրիստոս փոխեալ» (անդ, էջ 687)։ Ըստ երևույթին հիշատակարանը լավ չի ընդօրինակված (գուցե և գրիչն է այսպես շփոթ շարադրել), այդ պատճառով էլ դժվար է կռահել, թե Մեհրապ ու Շահում ամուսինները պատվիրատուի հետ ազգակցական ի՞նչ կապի մեջ են. Մեհրապը նրա եղբա՞յրն է, թե՞ Շահումն է նրա քույրը։

Սակայն գիտենք, որ այստեղ գործ ունենք Ջալալի հայր Մեհրաբ-բեկի և մայր Շահում աղայի հետ (տե՛ս Մատենադարանի ձեռ. № 5794, էջ 207ա)

թողիկոսութեան տեղիս տէր Սիմաւոնին ի սուրբ ուխտիս Գանձասարայ... ի թվիս Հայոց ՌՂԸ» (1589)[69]։

Այս հիշատակարանը գրված է Հասան-Ջալալյանց տոհմական սեփականությունը հանդիսացող այն Ավետարանում, որ ստեղծվել էր XIII դարի սկզբին, Վախտանգ-Տանգիկի ու Խորիշահի պատվերով և միշտ պահվում էր Գանձասարի վանքում։ Ջալալ իշխանը պատմում է, որ այն գերության էին տարել, և «արդ ըստացայ սուրբ Աւետարանս ի գերութենէ»[70]։

Թուրքաց և ղզլբաշների պատերազմների մշտական վայր դարձած Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների վիճակն ավելի վատթարացավ, երբ Օսման-Յուզդեմիր թուրք փաշայի նախաձեռնությամբ թուրք-պարսկական կռիվներին խառնվեցին նաև կովկասյան լեռնականները՝ իբրև թուրքերի օգնականներ։ Սրանք եկան ահավոր խորշակի պես, ասպատակեցին ու կողոպտեցին անդրկուրյան գավառները, ապա անցան Գանձակի նահանգը, մտան Ղարաբաղ, ավար ու ավեր արին մինչև Երասխ գետը։ Այս դեպքերը պատմում են ինչպես Հովհաննիսիկ Ծարեցին, այնպես էլ Իսրայել երեց գրիչը։

Շահ-Աբաս Ա-ը և հայ ժողովրդի մեծ տեղահանությունը.— 70—80-ական թվականների մղձավանջից հետո հայ ժողովրդի ներկայացուցիչները, Անդրկովկասի այլ ժողովուրդների բանախոսների հետ միասին, 90-ականներին դիմում են Պարսից արքունիք՝ հանձին նորընծա շահ-Աբաս Ա-ի (1587—1629) տեսնելով այն միապետին, որն իրենց երկրները կարող էր փրկել օսմանյան բռնապետության անարգ լծից։ Ըստ երևույթին սա միայն դիմողների ցանկության դրսևորումը չէր։ Ինչպես քիչ հետո կտեսնենք, շահն ինքը զինական աջակցություններ էր որոնում իր գլխավոր թշնամուն՝ Թուրքիային վերջնականապես ծնկի բերելու համար։

Առաջին հայացքից անհասկանալի կարող են թվալ հայ ավատատերերի բարյացակամությունը շահ-Աբասի նկատմամբ և այն գրկաբաց ընդունելությունը, որին Պարսից միապետը հետագայում արժանացավ Արևելյան Հայաստանում՝ բնիկ իշխանավորների և նույնիսկ հայ հոգևորականության կողմից։

Օսմանյան թուրքերի բռնություններից ու շահատակություններից անասելի նեղված վրացիների, քրդերի և այլոց հետ միասին, հայ իշխանավորներն ու տանուտերերը, լսելով, որ շահ Աբասը պատերազմի պիտի գա Անդրկովկաս, ընդառաջ են գնում և խնդրում, որ նա իր այդ «փրկարար» երթն արագացնի[71]։ Հայ գրիչների հիշատակարաններում շահ Աբաս Ա-ի մասին (մինչև նրա Հայաստան գալը) խոսվում է անխառն համակրանքով։ Եվ, վերջապես, երբ պարսից զորքերը ճակատամարտ էին տալիս թուրքերի դեմ, հայերն ամեն կերպ օգնում էին առաջիններին։ Այս բոլորը հասկանալի ու տրամաբանական կդառնան, եթե, նախ, նկատի առնենք անելանելի իրադրությունների մեջ երկու շարյաց փոքրագույնն ընտրելու միանգամայն մարդկային սովորությունը։ Եվ ապա՝ երկրորդ ու առավել կարևոր պարագան, որ հանգամանորեն ու լայնահուն քննության է ենթարկել Աշոտ Հովհաննիսյանը։ Խոսքը թուրքական բռնատիրության դեմ XVI դարի վերջում, հիմնականում բանագնացությունների միջոցով, ստեղծված այն «կոալիցիայի» մասին է, որի մեջ ընդգրկված էին Վրաց թագավոր Սիմոնը, Կախեթի թագավոր Ալեքսանդրը, հայ ազատամիտ վաճառականներ ու հոգևորական գործիչներ, Իսպանիայի թագավորը և... Պարսից արքունիքը՝ հանձին շահ Աբաս Ա-ի[72]։ Պարսից նոր տիրակալը, որպես վերին աստիճանի ճարպիկ ու ճկուն քաղաքագետ, խոստումնալից նամակներ էր հղել Անդրկովկասյան իշխանապետներին, որոնք ատելությամբ էին լցված թուրքերի դեմ, և չէր կարող նրանց մեծամեծ երաշխիքներ տված չլինել։ Նա միանգամայն հարմար համարեց օգտվելու նաև ռուս-թուրքական հարաբերությունների լարումից։ Մինչ այդ երկու պետությունների միջև ճակատամարտեր էին տեղի ունեցել, որոնք ավարտվել էին ռուսների օգտին։ Ուստի շահը բարեկամության ու հակաթուրքական միասնական ճակատ հարդարելու առաջարկությամբ դիմեց նաև ռուսական ցարին։ Նման առաջարկություններով նա դիմումներ էր հղել եվրոպական մի շարք երկրների[73]։ Չէր կարող պատահել, որ այս ամենի մասին տեղյակ չլինեին Պարսից մերձավոր հարևան խա-

69 Մատենադարանի ձեռ. № 378, էջ 7ա։

70 Անդ։

71 Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 15. «Վասն զի յոյժ շարաշար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին և հաւատոյ կուռեճութիւն (խրստություն) առնէին և այլ բազում տառապանօք շարչարէին ոչ միայն զազգս Հայոց, այլ և զազգս Վրաց և զմահմետականաց և վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից...»։

72 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 71—81։

73 *И. А. Смирнов*, Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946, էջ 140, 151, 157։ Հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 80, Մ. Զուլալյան, նշվ. աշխ., էջ 35։

չենեցիները։ Առաքել Դավրիժեցին շահ Աբասին ընդառաջ գնացածների շարքում հիշում է, որ «... յաշխարհէն Աղուանից՝ և յազգէն հայոց գնացին Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՈսկանապատ գեղջէ, Օղլան քեշիշն և իւր եղբայր Ղալաբեկին ի Հաթերք գեղջէ, Ջալալ բէկն իւր եղբօր որդւոքն ի Խաչենայ, մէլիք Սուջումն ի Դիզակայ, մելիք Փաշիկն ի Քոչիզ գեղջէ, մէլիք Բարէն ի Բրիտիս գեղջէ, Մելիքսէթ եպիսկոպոսն ի Վերին Ջակամայ ի Մելիքզատա գեղջէ. մելիք Հայկազն ի Քշտաղա երկրէն՝ ի Խանածախ գեղջէ»[74]։ Դիզակի գավառից էլ չորս գյուղ տեղահանվել-գընացել էին, և շահ Աբասը նրանց բնակեցրել էր Սպահան քաղաքում։ «Եւ է պատճառ Դիզակեցւոց... գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն, կուռեճութիւն առնելն և անխնայ սպանանելն զքրիստոնեայսն»,— բացատրում է պատմիչը[75]։

Վերջապես, չպետք է մոռանալ նաև, որ, չնայած բազմադարյան դառը փորձին, հայերը միշտ էլ հակամետ են եղել հավատալու Պարսից հետ բարեկամական հարևանությամբ ապրելու հընարավորությանը։ Նիկ. Մառն իր մի գրքում, որը հայ ժողովրդի պատմական ճակատագրին նվիրված ամենագորովալից արտահայտություններից մեկն է, շատ ճիշտ է բացատրել այս հավատը՝ հիմք ընդունելով երկու կոնկրետ օրինակ, մեկը՝ թուրքաց բարքերից, մյուսը՝ պարսից։ Թուրքերն իրենց տիրապետության տակ գտնվող հայերին թույլ չէին տալիս հոգևոր կենտրոններ կառուցել։ Այնպես է ստացվում, որ Ամիդի հայերը մեծամեծ զոհողությունների գնով թուրք ամիրից թույլտվություն են ստանում և կառուցում մի վանք, որը փառահեղ ու բարձր գմբեթ ուներ՝ զարդարված ամենաշքեղ քանդակներով։ «Այս արքայական գեղեցկությունն էլ գրգռում է մոլեռանդ խաժամուժին։ Եվ նրա պահանջով գալիս է ավելի բարձր իշխանության հրամանը. տաճարի գմբեթը կործանում են ու վանքի բարձրությունը հասցնում քաղաքի բնակելի տների մակարդակին»[76]։ Պատմելով այս դեպքը՝ Նիկ. Մառը հիշում է մեկ ուրիշը և բացականչում. «(Ամիդի) տաճարի շինարարը՝ եպիսկոպոս ու հայտնի բանաստեղծ, կարող էր Հայաստանի պատմությունից հիշեցնել բարբարոսներին՝ մեր ժամանակակից եվրոպացիների համար էլ ինչ-որ չափով ուսանելի մի դեպք։ Շատ

74 Առաքել Դավրիժեցի, էջ 16։

75 Անդ։

76 Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, СПб., 1915, էջ 45։

դարեր առաջ Հայաստանում Պարսից կուսակալը գանգատվել էր իր շահին, թե հայերը Դվինում Սուրբ Գրիգորի տաճարն են կառուցում զորանոցի բերդին շատ մոտիկ, և դա վտանգավոր է։ Պարսից արքան՝ կռապաշտ, սակայն կուլտուրական Իրանի որդին, կարգադրում է. «Քանդել բերդը և տաճարն էլ կառուցել-ավարտել իր իսկ տեղում»[77]։

Ահա հայերն այս անգամ էլ հույս ունեին, թե շահ Աբասը կլինի քաղաքակիրթ Իրանի որդին։

Եվ այսպես. թուրքերի ձեռքից կեղեքված ու հարստահարված, բզկված ու հուսահատ հայությունը, իշխանավորներից մինչև վերջին գեղջուկը, հաճախ գեղովին, հանձին հին ու բազում անգամ փորձված պարսկական բռնատիրության՝ տեսնում էր ահավոր չարիքից փրկվելու ելքը և նրան է դիմում վերջին հույսով, հավատով ու հավատարմությամբ։

Սակայն բռնակալը ոչնչով չէր փոխվել։ Նա հայոց հոժարակամ հպատակությունն ու հավատարմությունը վարձատրեց մի այնպիսի խարդավանքով, այնպիսի դաժանությամբ ու ոճրագործությամբ, որը կարող էր համեմատվել միայն հայոց պատմության ամենամռայլ ժամանակների ծանրագույն արհավիրքների հետ։

1603 թ. սեպտեմբերին շահ Աբասի բանակը շարժվում է Թավրիզի վրա, որ թուրքերի ձեռքում էր գտնվում, գրավում այն, ապա կրնկակոխ հետապնդելով թշնամուն՝ Սոֆյանի դաշտում (Թավրիզից ոչ հեռու) ճակատամարտ տալիս, գլխովին ջարդում թուրքաց զորքերին, հրամանատարին էլ գերում։ Շահը որոշել էր միջոց չտալ թուրքերին, որպեսզի շունչ քաշեն ու հակահարձակման անցնեն։ Ուստի հարձակումը շարունակվում է։ Շահի զորքերը շուտով գրավում են Նախիջևանը։ Ճանապարհին նրանք մտել էին Ջուղա, ուր հայ վաճառական դասը փառահեղ ընդունելությամբ ու ցընծությամբ էր պատվել շահին ու նրա բանակներին։ Հաջորդ կետը Երևանն էր, որը պաշարելուց ու նվաճելուց հետո շահի զորքը փրկվեց Արարատյան դաշտում, Շիրակում, տարածվեց դեպի Սևանի ափերը, Գեղարքունիք և կատարեց այն չարագործությունները, որոնց մասին սարսուռով են պատմում ժամակակիցները[78]։ Պար-

77 Անդ, էջ 45—46։ Հմմտ. Սէրեոս եպիսկոպոս, Պատմութիւն, գլ. Իե, էջ 64—65։

78 Այս դեպքերի հանգամանալից քննությունը՝ տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 238—245, Ա. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 83—87, Մ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը, էջ 47—55 և այլն։

սից ընչաքաղց զինվորները կողոպտում էին հայոց քաղաքներն ու գյուղերը, մարդկանց զրկում սննդի վերջին մնացորդից, խլում ամեն ինչ, որ աչքը կարող է տեսնել։ Չէին փրկվում նույնիսկ նախօրոք թաքցված իրերը, որովհետև բռնագրավիչները մահվան սպառնալիքի տակ դրանք էլ էին հանել տալիս։ Եվ երբ տանելու ոչինչ չէր մնում, գերեվարում էին երեխաներին, լկում աղջիկներին ու հարսերին։ Անգութ ու անողորմ նվաճողների սանձարձակությունները ոչ մի սահման չգիտեին։ Եվ դրան էլ հետևեց շահ Աբասի նոր հրամանը՝ հարձակվել թուրքահպատակ գավառների վրա, բնակչությանը դուրս քշել այդ վայրերից և տանել Պարսկաստան։ Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներ դատարկվեցին, ամայացան, տարագիր բնակչությունը հեղեղվեց Արարատյան դաշտ։ Այստեղ էին հավաքվել նաև շրջակայքից գերեվարվածները։ «Այս գործողությունները հետապնդում էին պարզ նպատակ՝ զրկել թշնամուն երկրի արտադրող ձեռներից և հատկապես երկրագործ բնակչությունից, մյուս կողմից՝ նույն այդ մարդկանցով բազմացնել Իրանի արտադրող ու հարկատու բնակչության քանակը»[79]։

Սակայն հայ ժողովրդին սպասում էր առավել դժոխային մի չարիք։ Եվ այն չուշացավ։ 1605 թ. շահ Աբասի զորքն ստիպված էր նահանջել արդեն թվական գերակշռություն ստացած թուրքերի առաջ։ Պարսից շահը թշնամուն ուժասպառ անելու այլ միջոց չգտավ, քան նրան պարենավորման հնարավորություններից զրկելը։ Այդ պատճառով էլ նահանջելիս ամայացնում էր բնակավայրերը, կողոպտում ամեն ինչ, իսկ ինչ որ հնարավոր չէր տեղափոխել՝ ոչնչացնում էր կամ հրդեհի մատնում, որպեսզի թուրք բռնագրավիչը միայն ավեր ու ամայություն տեսներ իր ճանապարհին։ Հայ բնակչությունը օտարության էր քշվում մի հոծ զանգվածով, որի սկիզբը Երասխին էր հասել, իսկ վերջը փռված էր Արարատյան դաշտում, Նախիջևանի մոտ, Գեղարքունյաց լեռներում ու շրջականերում։ Աշնան ցրտերը վրա էին հասել, ժողովուրդը ցնցոտիակիր ու քաղցած պիտի անցներ Երասխը՝ օտար ափերին նոր տառապանքների ենթարկվելու համար։ Գետանցումը կատարվում էր բռնությամբ, զենքի ու մտրակի տակ։ Շահը «անմարդաբնակ արար միահաղոյն զամենայի և զյուութի աշխարհս Հայոց,— ողբում է Առաքել Դավրիժեցի պատմիչը։— Վասն զի ի քշելն զեր-

79 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 84։

կիրս՝ ոչ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստան, այլ զբազումս։ Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ, և Լոռւոյ, և զՇամզաշիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և գեղօրայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու, և զՍալամաստու, և զԽոյայ, և զՈրմի, և որ ինչ և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզվանու բնանին, և պանդուխտք և զարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զՇաղկունու ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն։ Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱծկէոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու, և զՎանայ՝ աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան. և ընդ սոսա քշեցին և տարան»[80]։

Այս գավառների թվարկումը չափազանցություն չէ, քանի որ հաստատվում է ուրիշ բազմաթիվ աղբյուրներով։ Խիզանցի մի գրիչ ավելորդ է համարում մեկ առ մեկ հիշել տեղանունները։ Նա վկայում է, որ գերեվարությունն արյան հեղեղի պես ընդգրկել է համարյա ամբողջ Արևելյան Հայաստանը։ «Գուռզ պարսիկք արարին մեծ վնաս, զի զամենայն ազգս հայոց, որ էին յԵրևան մինչ ի Թավրէզ, զամենեսեան գերի տարաւ...»[81]։

Այս էր հայ ժողովրդի և հատկապես նրա լավատես իշխանավորների ու հոգևոր առաջնորդների երազած «փրկությունը», հայոց բազմադարյան պատմության մեջ մինչև այդօր կատարված ամենաահավոր բռնագաղթերից մեկը, որ հայտնի է «մեծ սուրկուն» անունով։ Թուրք-պարսկական պատերազմներից հայ ժողովրդին հասած ամենահրեշավոր չարիքն էր դա, որ ասես մոռացնել պետք է տար անցյալ բոլոր արհավիրքները։ «Հին զառամյալ Իրանը, հաղիվ մի փոքր կենդանության ուժ հավաքելով իր թևերի մեջ... վերջին ահեղ հարվածն էր տալիս Հայաստանին, այն երկրին, որի դեմ կռվել, որը ճմլել էր դարերի ընթացքում։ Այս վերջին հարվածը դարձյալ իջնում էր հայ երկրի սրտի վրա, դարձնելով նրան չոր անապատ»[82]։

80 Դաւրիժեցի, էջ 52—53։

81 Մեսրոպ արքեպ. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, էջ 271։

82 Լեո, Հայոց պատմություն, Գ, էջ 250։

Բռնագաղթին, ինչպես Դավրիժեցու թվարկումից է երևում, ենթարկվել էին նաև Գեղամա ծովակի ափերի՝ Գեղամա ու Ծարա գավառների բնակիչները։ Ամեն պարագայի՝ Ներքին Խաչենը ևս դարասկզբին կարկտահար արտի տպավորություն պիտի թողներ։ Հաջորդ տարին (1606) Ջալալ իշխանը Գանձասարում գրում է հիշատակարան՝ ոչ մի բառ չգտնելով իր ժամանակի ցավն արտահայտելու համար և միայն հիշում է իր մեռած ու կենդանի հարազատներին. հորը՝ Մեհրաբ-բեկին, մորը՝ Շահումաղին, հանգուցյալ եղբայրներին՝ Բաղդասար-բեկին, Հովհաննես կաթողիկոսին, Գրիգոր կաթողիկոսին (առանց հիշելու սրա հավատուրացությունը), Բաղդասար-բեկի որդի Դավիթ կաթողիկոսին, հանգուցյալ որդիներին՝ Բայանդուր (Պայայդուր)-բեկին, Մեհրաբ-բեկին, կենդանի որդուն՝ Վելիճան-բեկին («Վե»-ն ջնջված), իր (Ջալալի) կենակից պարոն Բեկումաղին, դստերին՝ Սալվարին, Գիշիխանին, Մահփարիին, Խանումաղին...» ի հայրապետութեան տեառն տէր Յոհաննէս կաթողիկոսի»[83]։

Ջալալ իշխանը լռում է իր երկրի վիճակի մասին։ Ո՛չ մի խոսք իր և դասակիցների խնդրանքով Հայաստան եկած շահ Աբասի մասին։ Նման պարագաներում հիշատակարաններին բնորոշ աստվածառաք մեղանչանքի ո՛չ մի արտահայտություն։ Խորտակված էին պատրանքները։ Նրանց հավատն ու հավատարմությունը վարձատրվել էին նենգապատիր թշնամությամբ։ Ուրեմն, զուր էր ու սուտ այն փրկությունը, որ սպասվում էր օտարներից։ Ամեն մի ժողովուրդ, որ ուզում է ապրել ինքնուրույն ու ազատ, պետք է կարողանա իր բազկով կռել սեփական բախտը և ոչ թե նայի օտարի ձեռքին։

Գանձասարի կաթողիկոսությունը.— Պարզաբանումի կարիք ունեն XV—XVI դարերի Խաչենի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների, ինչպես նաև մի կողմից՝ թուրք ու պարսիկ տիրակալների և մյուս կողմից էլ նույն հոգևոր իշխանության փոխհարաբերությունները։ Գանձասարի կաթողիկոսության վիճակի և հարակից մի շարք հարցեր ցայսօր միայն կողմնակիորեն են դիտվել հետազոտողների կողմից։ Վերն ասացինք, որ XIII դարից սկսած՝ Խաչենի ամենահեղինակավոր հոգևոր կենտրոնի՝ Գանձասարի վանքի առաջնորդությունը Ներքին Խաչենի իշխանական տոհմի ներկայացուցիչների ժառանգական առանձնաշնորհն էր դարձել։ Աղբյուրներում առաջին հավաստի տեղեկությունը վերաբերում է Հասան-Ջալալի եղբայր Իվանեի որդի Հովհաննեսին, որը հավանաբար վանահայրություն է արել երկար տարիներ։ Համենայն դեպս նրա առաջնորդությունը հաստատող տեղեկություններ ունենք 1271 թ. մինչև հաջորդ դարի 10-ական թվականները[84]։ Հասան-Ջալալյան տոհմի կամ Առանշահիկ երկրորդական ճյուղերից սերված տոհմակից հոգևորականների ձեռքում էր գտնվում նաև Ներքին Խաչենի մյուս թեմի (Սուրբ Հակոբա վանքի) առաջնորդությունը։ Եվ չենի մյուս թեմի (Սուրբ Հակոբա վանքի) առաջնորդությունը։ Եվ պատահական չէ, որ XV դարում արդեն երկրամասի կաթողիկոսությունը ևս դառնում է այս տոհմի ժառանգական արտոնությունը։

Հայտնի է, որ Աղվանքի 552 թ. հիմնադրված կաթողիկոսության նստավայրը սկզբից ևեթ եղել է Պարտավը, իսկ ամառանոցը՝ Բերդակուր ամրոցը, որը գտնվում էր Տրտու-Թարթառի աջ ափին, այժմյան Մարտակերտի շրջանի Լյուլասաղ գյուղի թիկունքում։ VII դ. Հովհաննես Բ կաթողիկոսը, Պարտավի արաբ ու մահմեդական բռնակալներից նեղված, կաթողիկոսությունը տեղափոխում է Բերդակուր, ուր այն մնում է մինչև Գանձակի հիմնադրումն ու շենացումը (IX դ.)։ Հետագայում Աղվանքի կաթողիկոսները նստում էին ինչպես Գանձակում, այնպես էլ շրջակա վանքերում՝ Դասնո անապատում, Ուտիքի Միափոր գավառի Խամշի վանքում, վերստին Գանձակում... Այս բոլոր դեպքերում Աղվանքի կաթողիկոսությանը ենթակա էին ինչպես Հայոց արևելից կողմանց (Ուտիք, Արցախ) բոլոր հոգևոր թեմերը, այնպես էլ անդրկուրյան կամ նախկին բուն Աղվանքի (հետագայի Շաքի, Շիրվան, Դերբենդ) հայկական ու աղվանական հոգևոր կենտրոնները։ IX դ. սկսած՝ նրան էին ենթարկվում նաև Գեղարքունիքի և նրանից հարավ-արևելք ընկած տարածքի (Շողվագը և շրջակայքը) թեմերը, քանի որ Խաչենի տեր Սահլ Սմբատյանի նվաճումներից հետո այս տարածքը միշտ էլ մնում էր Խաչենի իշխանության կազմում։ Ս. Հակոբա վանք և Գանձասար փոխադրվելով՝ կաթողիկոսությունը մընում էր հնուց ի վեր իրեն ենթակա թեմերի գլխավորը և, միա-

83 Մատենադարանի ձեռ. № 5794 (ընդօրինակված 1600 թ.), էջ 207ա։

84 Վիմական արձանագրություններում Հովհաննեսը սովորաբար կոչվում է «որդի Իվանէի»։ Իվանե էր նաև Հասան-Ջալալ մեծի միակ որդու իսկական անունը (Իվանե-Աթաբակ)։ Սակայն որովհետև մի արձանագրության մեջ Հովհաննեսն իր հորը հիշում է Իվանե անվամբ և անմիջապես էլ տալիս է հորեղբորորդու Աթաբակ անունը (Հ. Օրբելի, № 39). «Եես Յովհաննէս որդի Իւանէի՝ առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարա, հրամանաւ տեառն Խաչինս Աթաբակին...»), այլևս անհերքելի է դառնում, որ նա Հասան-Ջալալի եղբայր Իվանեի որդին է եղել։

ժամանակ, նվիրապետական տեսակետից նախընթացի պես մի՛շտ ստորադաս ամենայն հայոց կաթողիկոսությանը, որից ձեռնադրվում էին Աղվանքի հոգևոր պետերը՝ սկսած Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսի ժամանակներից։ Քիչ հետո կտեսնենք, որ այս կարգը չէր փոխվել նույնիսկ այն ժամանակ, երբ ամենայն հայոց կաթողիկոսները Դվինից ու մյուս կենտրոնավայրերից հեռացել և նստում էին Սսում։

XIV—XV դդ. Աղվանքի կաթողիկոսական գահին տիրացած Հասան-Ջալալյան հայրապետները վերջնականապես խաչեն էին տեղափոխել գահանիստը և նստում էին ինչպես Ս. Հակոբա վանքում, այնպես էլ Գանձասարում։ XV դ. առաջին կեսում Աղվանից կաթողիկոս Հովհաննեսը («որդի Ջալալին մեծ իշխանի») ոչ միայն գահակալել էր Ս. Հակոբա վանքում, այլև այնտեղ է թաղված, չնայած Գանձասարն է եղել նրա տոհմական ավանդական տապանատունը՝ սկսած այն օրերից, երբ Գանձասարում մի սովորական եկեղեցի կար միայն, և դեռևս չէր կառուցված հետագայի փառահեղ տաճարը[85]։

XV դարի սկզբից արդեն Աղվանքի կաթողիկոսությունը հիմնականում Հասան-Ջալալյան տան զարմիկների ժառանգական արտոնությունն էր։ Ճիշտ է, նկատվում են նաև առանձին բացառություններ, որոնք, սակայն, վերացվում են կարճ ժամանակում, և ամեն անգամ կարճ ընդմիջումից հետո գավազանը վերստին անցնում է կաթողիկոսական տոհմի ներկայացուցչին։

Ուշագրավ է, որ Աղվանքի կաթողիկոսության վրա Հասան-Ջալալյանների ձեռք բերած տոհմական իրավունքը ճանաչվում էր ոչ միայն ամենայն հայոց կաթողիկոսության կողմից, որի ձեռնադրությամբ էր միայն իր աթոռի վրա հաստատված համարվում այստեղի նվիրապետը, այլև հարգվում ու հաստատվում էր եկվոր տիրակալների հրովարտակներով։

1462 թ. օգոստոսի 6-ին կարա-կոյունլու սուլթան Ջհանշահի կին Բեգում-խաթունը հրովարտակով Գանձասարի կաթողիկոս է հաստատում Ջալալ մեծի որդի Հովհաննեսին, միաժամանակ նշելով, որ նորընծա կաթողիկոսը նվիրապետական իր հավակնությունը հիմնավորելու համար արքունիք է ներկայացրել Ջհանշահի հրովարտակը Մատթեոս կաթողիկոսի գահակալությունը հաստատելու մասին, իսկ այս հրովարտակն էլ հրապարակված է եղել՝

85 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 387։

«ի հաստատումն երջանկահիշատակ և երանելի, հանգուցյալ արքա Շեյխ-Ուվեյս Բահադուրի հրամանագրի»[86]։

Հ. Փափազյանն իրավացի է, երբ Բեգում-խաթունի հրովարտակը համարում է եռակի արժեքավոր փաստաթուղթ, քանի որ այն պարունակում է «երեք տարբեր տիրակալների կողմից տարբեր ժամանակներում տրված հրովարտակները»[87]։

Ցավոք, այնտեղ միայն վերապատմվում է Շեյխ-Ուվեյսի հրովարտակի բովանդակությունը, առանց հիշատակելու, թե այն Աղվանից ո՞ր կաթողիկոսին է տրված եղել[88]։ Սակայն վերապատմածի մեջ է մտել ոչ պակաս արժեքավոր մի տեղեկություն՝ հաստատելով, որ Աղվանքի կաթողիկոսը նախապես ձեռնադրվում էր Կիլիկյան Հայքի թագավորի (անկասկած նաև կաթողիկոսի) կողմից և նոր միայն ներկայացվում շահի հաստատմանը։ «Սկսած հին ժամանակներից և համաձայն Սսի թագավորի գրության՝ Աղվանքի բոլոր վայրերի առաջնորդությունն ու ղեկավարությունը պատկանում է Մատթեոս կաթողիկոսին»,— գրված է եղել Ջհանշահի կողմից Մատթեոս կաթողիկոսին տրված հրովարտակում[89]։

86 ՄՊՎՀ, Ա, էջ 45։

Բեգում-խաթունն այս ժամանակ փոխարինում էր ամուսնուն, որը գնացել էր Բաղդադ՝ որդու ապստամբությունը ճնշելու։

87 Անդ, էջ 78։

88 Շեյխ-Ուվեյսը գահակալել է 1356—1374 թթ., իսկ մենք այդ ժամանակի Աղվանից կաթողիկոսի(ների) անունը(ները) չգիտենք։ Եղած միակ շատ թե քիչ վստահելի ցանկում (Հ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Խ. վ. Դաղեանի, Ա, էջ 89) 1323—1406 թթ. ժամանակահատվածը բաց է մնում, և այդ բաց 80-ամյակի համար գրված է. «Այս միջոցս երկու կաթողիկոսք եղեալ. անուանքն Սուքիաս և Պետրոս, չկարացաք զկարգն իմանալ՝ զկնի միմեանց»։ Բացակայում են նաև ձեռագրական ու վիմագրական տեղեկությունները։

89 ՄՊՎՀ, Ա, էջ 45 (ընդգծումը մերն է—Բ. Ու.)։

Հ. Փափազյանը տեղեկացնում է, որ հրովարտակը Կիլիկյան թագավորներին կոչում է «Սսի թագավոր»՝ պահպանելով հայերեն «թագավոր» բառը (անդ, էջ 78)։

Հր. Աճառյանի կարծիքով՝ Մատթեոսը Ջհանշահի կողմից հաստատվելու հրովարտակն ստացել է 1462 թ. և գահակալել մինչև 1473-ը («Հայոց անձ. բառ.», Գ, էջ 227)։ Սակայն, ինչպես վերը տեսանք, 1462-ին Բեգում-խաթունը հրովարտակով կաթողիկոս է հաստատել Ջալալ մեծի որդի Հովհաննեսին, իսկ Ջհանշահի (1437—1467) հրովարտակով Մատթեոսը կաթողիկոս է հաստատվել ավելի վաղ, հավանաբար դարի 30-ական թվականներին, քանի որ 1434 թ. նրա հիշատակարանը կա (ԺԵ, Ա, էջ 439)։

Հ. Փափազյանը վերջերս հրատարակած իր մի ուսումնասիրության մեջ գրում

Ի՞նչ իրավունքներ էին վերապահվում Աղվանքի կաթողիկոսին։ Եթե հավատալու լինենք հրովարտակի խոսքին, այդ իրավունքները շատ-շատ էին մի հպատակ երկրի հոգևոր վեհապետի և նրան ենթակա հոգևորականության համար։ Արքան նախ իր տերության ներկայացուցիչներին է կարգադրում, որպեսզի նրանք Մատթեոսին (այսինքն՝ Աղվանքի կաթողիկոսին) «ճանաչեն որպես այդ վիլայեթում ապրող հայերի առաջնորդին ու ղեկավարին և նրա ձեռքը այս գործում ուժեղ և իրավազոր համարեն, նրան (պատկանող) վայրերում չիջևանեն, նրանց չորքոտանիներն ուլաղ չվերցնեն, նրանից և նրան ենթարկվող հոգևորականներից ջիզյայի և բեյթ-ուլ-մալի պատրվակով ոչինչ չպահանջեն»։ Ինչ վերաբերում է կաթողիկոսի ենթականերին ու հավատացյալներին, ապա սրանց էլ հետևյալ կարգադրությունն է անում. «Աղվանքի, Գանձասարի հայերը թող նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդին ու ղեկավարին և իրենց կրոնի վերաբերյալ նրա ասած խոսքերի և խրատների սահմաններից դուրս չգան, նրան ենթարկվելն անհրաժեշտ համարեն և երբեք նրանից չանջատվեն, ոչ մի արարած նրա գործերին չխառնվի ու չմիջամտի, նրան ենթակա հոգևորականների ու մերձավորների նկատմամբ հանցանք չգործեն, նրանցից ոչինչ չպահանջեն և որևէ ցանկություն ու ակնկալություն չունենան»[90]։

Նկատենք, որ ապագա բոլոր հրովարտակների համար այս հրահանգներն են հիմք հանդիսացել։ Եվ Հովհաննեսը, Մատթեոսին վերաբերող շահական խոսքերը ներկայացնելով Բեգում-խաթունին, խնդրում է նոր հրովարտակ, որը և ստանում է։

Գանձասարի կաթողիկոսության իրավունքները Պարսից տի-

էջ, թե XV դարում Գանձասարում իրար հաջորդել են մի քանի կաթողիկոս Մատթեոսներ, որոնք բոլորն էլ սերված էին Հասան-Ջալալյան տոհմից» (А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972)։ Սակայն, վերոհիշյալից բացի, XV դարում Մատթեոս անունով ուրիշ ոչ մի կաթողիկոս չի աթոռակալել Գանձասարում։ Եթե Փափազյանը հիմք է ընդունում Հր. Աճառյանի Հայոց անձնանունների բառարանը, ապա այնտեղ Մատթեոս Դ-ի գոյությունը թյուրիմացություն է (հ. Դ, էջ 226—227), իսկ իրական Մատթեոս Գ-ը հաջորդել է ոչ թե Կարապետին և նախորդել Աթանասին (անդ, էջ 225), այլ հաջորդել է Հովհաննեսին (հիշված 1426 թ., տե՛ս ԺԵ, Ա, էջ 384) և նախորդել Ջալալ մեծի որդի Հովհաննեսին, որի գահակալության մասին հիշատակություններ կան 1456-ից մինչև 1470-ը՝ մահվան տարին («Արցախ», էջ 187, ԺԵ, Բ, էջ 244, «Բանասէր», 1901, հատ. 3, Բ—Գ, էջ 139)։

90 ՄՊՎՀ, Ա, էջ 46։

տապետության շրջանում.— Վերը նշեցինք, որ պարսից շահերը հարգում ու պաշտպանում էին Հասան-Ջալալյանների տոհմական իրավունքները Գանձասարի կաթողիկոսության հանդեպ։ XVI դարում մի ոմն Մաղաքիա՝ Ամիրի որդի (ծագումն անհայտ), Հատիր-Մելիք Հասան-Ջալալյանի որդի Սարգիս կաթողիկոսի մահից հետո, գնացել էր Պարսից արքունիք և հրովարտակ ստացել իրեն կաթողիկոս հաստատելու մասին։ Շատ չանցած նա նույն արքունիքի կողմից էլ գահազուրկ արվեց, որովհետև արքունիք էր ներկայացել մի նոր Հասան-Ջալալյան հոգևորական՝ Մեհրաբ-բեկի որդի Գրիգորը, իր տոհմական իրավունքի պահանջով։ Սեֆյան Թահմազ շահը 1570 թ. ապրիլի 19-ի հրովարտակով պաշտպանում է Գրիգոր Հասան-Ջալալյանի իրավունքը՝ գրելով. «Ներկայումս վերոհիշյալ Գրիգորը եկավ բարձրագույն դուռը և խնդրարկու եղավ այն մասին, որ սկսած հին ժամանակներից մինչև այժմ այդ վայրերի ու մահալների (իմա՝ Աղվանքի—Բ. Ու.) առաջնորդությունն ու գլխավորությունը նրա պապերին ու նախնիներին են պատկանել և ցույց տվեց նախկին թագավորների կողմից այս առթիվ հրապարակված հրամանագիրը։ Դրա համար էլ նախկին կարգով հիշյալ վայրերի ու մահալների առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք վերոհիշյալ Գրիգոր կաթողիկոսին... Վերոհիշյալ Մաղաքիան թող այսպես որոշված ճանաչի և այսուհետ երբեք ոչ մի դեպքում այդ վայրերի ու մահալների առաջնորդությանն ու գլխավորությանը չմիջամտի և իրեն կաթողիկոսությունից հրաժարեցված համարի...» և այլն[91]։

Հետագայում պարզվում է, որ Մաղաքիան Աղվանքի կաթողիկոսական գահը Պարսից արքունիքից ապօրինի կերպով ստացել է ո՛չ առանց կաշառքի։ «...Նորին սրբություն դրախտաբնակ

91 ՄՊՎՀ, Ա, էջ 65—66։

Հ. Փափազյանը սույն հրովարտակի ծանոթության մեջ, խոսելով Արիստակես կաթողիկոսի մասին (որը Հատիր-Մելիքի եղբայրն է եղել, ուրեմն և Սարգիս կաթողիկոսի հորեղբայրը), գտնում է, որ նա շահից հրովարտակ պիտի ստացած լինի 1516 թ. (անդ, էջ 95)։ Գիտնականն իր այս տեսակետի համար երևի հիմք է ընդունում Խ. վ. Դաղյանի կաթողիկոսաշարը, ըստ որի՝ Արիստակեսը գահակալել է 1516-ին։ Մինչդեռ մենք ձեռագրական հիշատակություն ունենք այն մասին, որ Արիստակեսը կաթողիկոս է եղել դեռևս 1511-ին (տե՛ս Մատ. ձեռ. № 10157, էջ 295բ. «...Աւետարանս գրեցի մերձ առ գեղաքաղաքիս Սոթայ... ի հայրապետութեան տն Ըռստակիսի ի յաթոռն սուրբ Գանձասարայ, թագաւորութեան թախտիս Դայավրեճոյ սուլտան Շահիսմայելայ, որ է թագաւոր խաղաղարար, ի թուականիս հայկազեան սեռի ՉԿ (1511) և հոռոմոց ապրիլ ԻԹ (29), Հայոց արաց ԺԷ» (17)։

արքայի ժամանակ[92] Մաղաքիա անունով մեկը հանձն էր առել (վճարելու) կաթողիկոսական աթոռի համար» հատուկ հարկ, որը հետագայում արքունիքի գործակալները պահանջում էին նաև Գանձասարի օրինական գահակալներից, չնայած վերոհիշյալ հրովարտակների համաձայն՝ կաթողիկոսությունն ազատ էր ամեն տեսակ հարկերից։

Հետաքրքիրն ու զավեշտականն այն է, որ հայ հոգևորականության բարեկամը համարված շահ Աբաս Ա-ը, փոխանակ այս անօրինությունը վերացնելու, կարգադրում է Մաղաքիայի հանձն առած հարկը, որ կուտակվել էր ահա քանի տարի, համարել «թաֆավութ-ե ջիզյա» և գանձել կաթողիկոսությանը ենթակա շրջաններից[93]։

Մաղաքիայի միջադեպից հետո (ինչպես և նրանից առաջ) կաթողիկոսական գահը մնում է հիմնականում Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչներին։ Նախ՝ Մեհրաբ բեկի որդի Գրիգորին, սրա ուրացությունից (1574) հետո՝ իր եղբորորդի Դավթին, որին, չանցած մի տարի, անհայտ մարդիկ սպանում են, ապա աթոռին տիրանում է նույն Մեհրաբ-բեկի որդի Հովհաննեսը[94]։ Հովհաննեսին էլ հաջորդում է նրա եղբորորդի Գրիգորը՝ նույն Հասան-Ջալալյան տոհմից։ Ապա մի այլ Հովհաննես, որը շահից հրովարտակ է ստանում 1606-ին և աթոռակալում երկար ժամանակ։ Աղբյուրներում, իհարկե կարճ ժամանակներով, աթոռը զբաղեցնում են նաև ուրիշները՝ ինչպես այս կաթողիկոսական գերդաստանից, այնպես էլ այլ տոհմերից։ Սակայն հաստատ է, որ կաթողիկոսական գավազանը հիմնականում գտնվել է Հասան-Ջալալյանների ձեռքում։

92 Խոսքը վերաբերում է Սեֆյան շահ Թահմազ Ա-ին (տե՛ս ՄՊՎՀ, Ա, էջ 65)։

93 ՄՊՎՀ, Բ, էջ 87։

«Թաֆավութ-ե ջիզյա» բառացի նշանակում է «ջիզյայի—այլադավանության համար գանձվող հարկի տարբերություն»։ Այսպես էին կոչվում գլխահարկի վրա ժամանակի ընթացքում բարդված գումարները, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին ջիզյայից զատ ու դիտվում որպես առանձին պարտավորություն (ՄՊՎՀ, Ա, էջ 109, հմմտ. ԺԵ, Բ, էջ CXXVII)։

94 1559 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում կաթողիկոս է հիշատակվում Հովհաննեսը (Մատ. ձեռ. № 4477, էջ 608բ), որ անհասկանալի է, քանի որ այս ժամանակ նրա եղբայր Գրիգորն էր աթոռակալը։ Ձեռագրում անունը ջնջված և նորից է գրված, որից կարելի է ենթադրել, թե Գրիգորի ուրացությունից հետո նրա անունը ջնջել են ու տեղը գրել այդ ժամանակի հայրապետի անունը։ Հակառակ դեպքում պետք է մտածել, որ եղբայրները աթոռակիցներ էին կամ փոխարինում էին իրար։

Հ. Փափազյանի կարծիքով՝ 1560—70-ական թվականներին աթոռակալած Գրիգորից հետո կաթողիկոս է եղել նրա եղբորորդի Հովհաննեսը[95]։ Այս թյուրիմացությունը գալիս է պարսկերեն հրովարտակից[96]։ Մինչդեռ, ինչպես նախորդ գլխում ենք ցույց տվել, Գրիգորն ու Հովհաննեսը հարազատ եղբայրներ էին՝ Մեհրաբ-բեկի որդիները, ինչպես որ նշված է նաև Խ. վ. Դադյանի ցանկում։ Հ. Փափազյանը սույն երկուսի արանքում կարճ ժամանակով աթոռակալած Դավթի մասին խոսելիս էլ ենթադրում է, թե նրան «սպանել են հենց Խաչենի Հասան-Ջալալյանները», որովհետև Դավիթը օտար մեկն է եղել՝ բազմած իրենց ժառանգական սեփականությունը հանդիսացող գահի վրա[97]։ Սակայն հայտնի է, որ Դավիթն էլ էր Հասան-Ջալալյան տոհմից. նա թոռն էր Մեհրաբ-բեկի և որդին վերոհիշյալ Գրիգորի ու Հովհաննեսի եղբայր Բաղդասար-բեկի։ Ջալալ իշխանը (Մեհրաբ-բեկի որդին) 1606 թ. գրած իր հիշատակարանում թվարկում է «հանգուցեալ եղբարցն իմոց պարոն Բաղդասար-բեկին, Յոհաննէս կաթողիկոսին, Գրիգոր կաթողիկոսին, Դաւիթ կաթողիկոսին, որ է որդի պարոն Բաղդասար-բէկին»[98]։

Հ. Փափազյանը տ՛չ Հասան-Ջալալյան է համարում նաև Արիստակես Քոլատակցուն, Սիմեոն (Շմաւոն) Շահմասուրեցուն, Քոլատակցի Մելիքսեթին և ենթադրում, որ նրանց ու իսկական Հասան-Ջալալյան կաթողիկոսացուների միջև աթոռակալական կռիվներ են եղել[99]։ Սակայն Շահմասուր և Քոլատակ գյուղերը Հասան-Ջալալյանների իշխանանիստներից էին, և այդ տեղերում նստող իշխանական զարմիկներն էին, որ բազմում էին Գանձասարի աթոռին։ Ինչպես հայտնի է, հետագայում էլ Առաջաձորցի էին կոչում Եսայի կաթողիկոսին, որի Հասան-Ջալալյան տոհմից սերված լինելը չի կարելի կասկածի տակ առնել։

Գանձասարի կաթողիկոսության և ամենայն հայոց հայրապետների փոխհարաբերությունները.— Յայսօր գիտական հանգամա-

95 ՄՊՎՀ, Բ, էջ 154։

96 Անդ, էջ 84։

97 Անդ, էջ 154։

98 Մատենադարանի ձեռ. № 5794, էջ 207ա, նաև՝ «Արցախ», էջ 176. «Այս է հանգիստ Դաւիթ կաթողիկոսի՝ որդի Պաղտասար-բեկին»։

99 ՄՊՎՀ, Բ, էջ 154—155։

Խ. վ. Դադյանի ցանկում Շահմասուրեցի (սխալմամբ գրված Շռեմասուրեցի) Հովհաննեսը գահակալում է մինչև 1633-ը, և սա էլ շահական հրովարտակով համարվում է օրինական հաջորդը Գրիգոր Հասան-Ջալալյանի։

նալից քննության չեն ենթարկվել Աղվանքի (հետագայում՝ Գանձասարի) կաթողիկոսության և ամենայն հայոց հայրապետների փոխհարաբերությունները։

Հայտնի է, որ Աղվանքի կաթողիկոսական աթոռը (որի հարազատ ժառանգն էր և Գանձասարի կաթողիկոսությունը) սկզբից ևեթ առաջացել էր Մեծ Հայքի քաղաքական անկախության կորուստից հետո և հետևանքն էր Պարսկական բռնապետության անջատարար քաղաքականության։ Միասնական հայկական թագավորության պայմաններում նույն հայոց կաթողիկոսությանն էին ենթարկվում ոչ միայն Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգների, այլև բուն Աղվանքի հոգևոր թեմերը։ Արևելյան Հայաստանում Արշակունյաց թագավորության բարձումից հետո բուն Աղվանքից և Ուտիք ու Արցախ հայկական նահանգներից կազմվեց պարսկահպատակ մեկ մարզպանություն («Աղվանք» անունով), որի կազմում գտնվող թեմերը կտրվեցին մայր եկեղեցու գերագույն ղեկավարությունից։ Վերջինիս շրջահայաց նվիրապետները չէին կարող աչք փակել քաքական ու հոգևոր այս մեկուսացման և սպասվող առավել վրտանգավոր վիճակի դեմ։ Նրանք ի մի հավաքեցին Աղվանքի մարզի ներսի բոլոր թեմերը, նրանց արտոնեցին սեփական կաթողիկոսական աթոռ՝ պայմանով միայն, որ այդ աթոռը զբաղեցնողները ձեռնադրվեին ամենայն հայոց կաթողիկոսներից և միշտ ենթարկվեին նրանց։ 552 թ. ստեղծված նոր նվիրապետությունը կոչվում էր կաթողիկոսություն Աղուանից, Լփնաց և Չողա[100], որի մեջ Աղվանքը Հայոց արևելից կողմանքն էր, Լփնիքը՝ բուն Աղվանքի (Կուրի ձախափնյակ) արևմտյան մասը՝ (հետագայի Շաքի-Նուխին ու շրջակաները), իսկ Չողը կամ Չողա աշխարհը՝ նույն բուն Աղվանքի արևելյան մասը, որի մեջ մտնում էր և բուն Չողը (հետագայի Դերբենդը) կամ Մազքթաց աշխարհը և նրանից հարավ ընկած տարածքը, որ հետագայում պիտի կոչվեր Շիրվան։ Նվիրապետական այս ենթակայությունը միշտ էլ գոյություն ուներ, քանի դեռ անդրկուրյան գավառներում կային քրիստոնեական (լուսավորչական) եկեղեցիներ ու թեմեր։

Ինչ վերաբերում է Աղվանից կոչված կաթողիկոսության ու Հայոց մայր եկեղեցու փոխհարաբերություններին, ապա պետք է ասել, որ Աղվանից եկեղեցում, իհարկե, եղել են քաղկեդոնիկ եկեղեցուն միանալու ձգտումներ (առանձին՝ թեմերում), հերձվածա-

100 Կաղանկատուացի, էջ 392։

ման ու կենտրոնախույս տրամադրությունները մեկ-մեկ գլուխ են բարձրացրել։ Սակայն դրանք եղել են նույն եկեղեցու կամ նույն նվիրապետության ներսում տեղ գտած ցավալի միջադեպեր։ Ամեն պարագայի Աղվանից եկեղեցին միշտ էլ հանդիսացել է Հայոց ընդհանուր եկեղեցու մեկ թևը և բոլոր պատմաշրջաններում բաժանել է նրա ճակատագիրը։

Չի կարելի ասել, թե փոխհարաբերությունների մարզում հազվադեպ նկատված սառնության մեջ միշտ էլ մեղավոր են եղել Աղվանից (հետագայում էլ՝ Գանձասարի) կաթողիկոսները։ Շատ է պատահել, որ ավատական կարգին հատուկ «բաժանեմ-տիրեմ» քաղաքականությանը զոհաբերվել են ընդհանուր ազգային շահերը. և զոհաբերողն էլ եկեղեցու տարբեր թեմերի ներկայացուցիչներն են եղել։ Սակայն նման ամեն մի դեպքում բորբոքիչ ու հրահրող ուժը օտար նվաճողն էր։ Հայտնի է, օրինակ, այսպիսի մի դեպք. XVIII դ. հրապարակվել է շահական մի հրովարտակ այն մասին, որ, իբր թե, հին ժամանակներից ի վեր Շամախիի ու Շիրվանի եկեղեցին պատկանելիս է եղել Ուչքիլիսային (Էջմիածին), և ահա Գանձասարի կաթողիկոսությունն ապօրինի կերպով իտանրվում է Շիրվանի ու Շամախիի հայերի հոգևոր գործերին։ Ուստի շահը հրամայում է, որ այնուհետև «ոչ մի արարած և հատկապես Գանձասարի կաթողիկոսը... հիշյալ հայերի գործերին չխառնվի... թողնեն, որ նախկին կարգով Ուչքիլիսայի մարդիկ նրանց կաթողիկոսը լինեն»[101]։

Հետաքրքիրն այն է, որ սրա կողքին մեջտեղ է քաշվել՝ դարձյալ Պարսից արքունիքում սարքված մի այլ հրովարտակ այն մասին, որ իբր, «արզ առնէն Շամախու և Շիրուանու երկիրն թէ՝ մենք ի բնէ Էջմիածնի եմք լեալք վիճակի... Գանձասարու կաթողիկոսքն ի վերայ մեր մի՛ իշխեսցեն»[102]։ Այսքանն էլ քիչ է թվում պառակտիչներին, և նրանք վկայակոչում են նաև մի ուրիշ թուղթ, որով, իբր թե, հաստատվում է, որ «ժողովուրդքն խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից արզ գրին շահ Սէֆուն, թէ ի բնէ մեք Էջմիածնի եմք վիճակք և այժմ կամիմք լինել, Գանձասարու կաթողիկոսն ի վերայ մեր մի՛ իշխեսցէ։ Եւ շահն հրաման հանէ զի Էջմիածնի լիցին հնազանդք»[103]։

Անհասկանալի է, թե, այսօրինակ թղթերի հեղինակների կարծիքով՝ էլ ո՞ւմ վրա էր հաստատված հինավուրց Աղվանից կաթողի-

101 ՄԳՎՀ, Բ, էջ 147։
102 Սիմէոն Երևանցի, Ջամբռ, էջ 213—214։
103 Անդ, էջ 79։

կոսությունը, եթե «ժողովուրդքն Խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից» ի բնե անմիջապես էջմիածնի ենթականերն են եղել։

Այս դեպքից շատ առաջ էլ, XVI դ. սկզբին, համարյա նույն եղանակով Աղվանքի կաթողիկոսի ենթակայությունից դուրս էին բերվել Սահլ Սմբատյանի ժամանակներից նրան ենթակա Գեղարքունիքի մի շարք վանքեր ու եկեղեցիներ։ Պահպանվել է մի վավերաթուղթ՝ գրված 1513 թ.[104], որով Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը Սյունյաց Տաթևի վանքում համախոսում են այն մասին, թե իրենք ծանոթացել են հին վավերագրերին, համոզվել, «որ ճշմարիտ երկիրն մեր Գեղարքունի թէմ և վիճակ է սուրբ առաքելոյն Ըստաթէի, սուրբ առաքելոյն Բարթուղիմէոսի հաստատած մինչև Լուսաւորիչն» (sic!—Բ. Ու) և որոշում են՝ հետագայում ենթարկվել միայն Տաթևին։ Միաժամանակ նրանք ուխտ են անում, «որ ոչ մերմէ, ոչ մեր ընդանեաց, ոչ զաւակաց, ոչ այլոց Գեղարքունեցայց, որ այս բանիս հակառակ չլինին. կամ հետ ի Խաչենեցայց, կամ երկրիս (Խաչենի—Բ. Ու.) եպիսկոպոսացն, կամ հետ կաթողիկոսացն միաբանին, հակառակութիւն անէն հետ յաթոռիս (Տաթևի—Բ. Ու.), սևերես լինին յաստուծոյ և ի մարդկանէ և սուրբ աթոռոյս անիծեալ»[105]։

Հայկարամ Ութմազյանը ժամանակին ուշադրություն էր դարձրել պատմական այս վավերագրին և պարզել, որ Գեղարքունիքի ազատների տեսած հին կոնդակները դրանք Ստեփաննոս Օրբելյանի կազմած հարկացուցակներն են եղել, որոնց համար էլ, ըստ երևույթին, հիմք են ծառայել Սյունյաց եպիսկոպոսարանում պահվող առավել հին գավազանագրեր։ «Տէր Ստեփանոս եպիսկոպոս սուրբ աթոռին Ըստաթէի սուրբ առաքելոցս կազմել տվի զկոնդակս յիշատակն ինձ և ծնողաց իմոց...»,— հիշատակագրել է Օրբելյան պատմիչը[106]։ Գեղարքունիքի տերերը Տաթևի եպիսկոպոսարանում պահված նույն ձեռագրին ծանոթանալով՝ գրել են. «...Ապա գալս մեր յուխտ ի սուրբ աթոռս ՝զկոնդակս տեսաք, մեր բերանով կարդացաք, մեր ականջաւք լսեցաք և կրկին հաստատեցաք այս բանս, որ ճշմարիտ է...»[107]։

Ինչպես Հ. Ութմազյանը, այնպես էլ հետագայում սույն վավերագիրը մի այլ տեսանկյունից քննող Ս. Բարխուդարյանը չեն պատասխանել այն հարցին, թե հիշյալ կոնդակներն ի՞նչ գործառնություն են ունեցել իրականում, հատկապես X—XVI դարերում։ Չնայած Ութմազյանը գտնում էր, որ Օրբելյանի Պատմության մեջ մտած հարկացուցակը (հին կոնդակը կամ գավազանագիրքը) կազմված պետք է լիներ X դարում, «քանի որ Տաթևի վանքը, որպես հողատեր կալվածատեր, իր ամենամեծ ծաղկմանը հասավ այդ դարում և այդ հիման վրա էլ ստեղծեց ավելի բարձր չափեր հարկահանության մեջ»[108]։ Համենայն դեպս Սոդքն ու Գեղամա գավառը, որոնք տեղ են գտել կոնդակի մեջ, նշված ժամանակաշրջանում չէին կարող ենթարկված լինել Տաթևի թեմին, քանի որ, ինչպես վերը՝ Դոփյան տոհմի պատմության քննության ընթացքում, հանգամանորեն ցույց տրվեց, նրանք Վերին Խաչենի կազմում էին գտնվում և անպայման ենթարկվում էին Աղվանից կաթողիկոսությանը։

Սակայն ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ շուրջ վեց դար անընդմեջ Աղվանքի կաթողիկոսության ոլորտում գտնվելուց հետո հանկարծ Գեղարքունիքի մի մասը հեռանում է նրանից՝ միանալով Տաթևի թեմին։ Պարզվում է, որ XVI դ. սկզբին այս գավառի տերերը խզել են իրենց կապերը Վերին Խաչենի տիրակալներից՝ Մազրայում նստող Մելիք-Շահնազարյաններից ու Ծարա իշխողներից, և ահա փորձում էին գավառի եկեղեցին ևս հեռացնել Խաչենի հոգևոր ոլորտից, որպեսզի այլևս ոչ մի կապ չունենան «հետ ի խաչենեցեացն, կամ երկրիս եպիսկոպոսացն, կամ հետ կաթողիկոսացն»[109]։

Գանձասարի կաթողիկոսները ևս այս տեղական ու տեղայնական պառակտիչ գործողությունների մեջ պարտք չէին մնում հարևաններին։ Պահպանվել է Սեֆյան շահ Սեֆիի մի հրովարտակը, որից երևում է, որ «Առանի Խաչենի քրիստոնյաների կաթողիկոսը նեղություն է պատճառում Գուշթասիֆի (Սյունյաց Քաշաթաղի)

---

104 Մատենադարանի ձեռ. № 6271, էջ 6ա, բ,-7ա։ Նույնը՝ ձեռագրական անշնչան տարբերություններով՝ նաև ձեռ, № 1488, էջ 4ա, բ, 2864, էջ 3ա, 4բ, 2924, էջ 3ա, 4ա։ Տպագրված է՝ Շահխաթունեանց, Բ, էջ 257—259, Սմբատեանց, Տեղագիր, էջ 581—582, Ալիշան, Սիսական, էջ 34։

105 Անդ։

106 Մատենադարանի ձեռ. № 6271, էջ 673։ Հմմտ. Հ. Ութմազյան, Սյունիքը IX—X դարերում, Երևան, 1958, էջ 233։ Այս վավերագրերի հետ առնչվող հարցերի քննությունը՝ անդ, էջ 228—238։

107 Ձեռ. № 6271, թ. 6ա, բ։

108 Հ.Ութմազյան, Սյունիքը IX—X դարերում, էջ 231։

109 Այս վավերագրի մեջ հիշատակված անունների, նրանց տոհմաբանության ու իշխանապետական իրավասությունների քննությունը տե՛ս Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի. «Բանբեր Մատենադարանի», № 8, էջ 191—225։

հայերին և բռնությամբ թալիբանե է պահանջում»[110]։ Շահը կարգադրում է, որպեսզի Խաչենի կաթողիկոսն այլևս թալիբանե չպահանջի Քաշաթաղի հավատացյալներից, որովհետև նրանք պետք է շարունակեն ենթարկվել Էջմիածնին[111]։

Հայտնի է նաև մի բողոքագիր, որ գրված է ընդդեմ այս և համանման պառակտողական գործողությունների։ Գրի տակ ստորագրել են «Շամախուց, Շրուանայ, Շաքուայ և առ հասարակ Ալանաց երկրի» բնակիչները՝ ընդդեմ նրանց, «որք կամին զմեզ ցանկապատաւ անել և անջատել և բաժանել ի նախնի և ի բուն աթոռոյն մերոյ, այնպիսին մեք չեմք կամեցօղ... Մեր աթոռն Աղուանից աթոռն է, որ է սուրբն Գանձասար և մեր կաթողիկոսն նորին նստող կաթողիկոսն, որ է այժմս Եսայի կաթողիկոսն»[112]։

Այս ամենի, հատկապես պառակտողական տրամադրությունների մեջ, անշուշտ, միշտ էլ առկա է եղել օտար տիրապետողների, ներկա դեպքում՝ Պարսից շահերի, աջը։ Այդ նրանք էին, որ հպատակներին անընդհատ հրահրում էին իրար դեմ, խափանում ամեն մի քայլ, որ կարող էր տանել դեպի միասնություն, ազգային պետական կամ հոգևոր միածույլ մարմնի ստեղծումը։

Վերը վկայակոչված վավերագրերից պարզ երևում է, թե Պարսից բռնապետները հպատակ Հայաստանում ինչպես վարպետորեն էին վարում իրենց այս քաղաքականությունը։ Ուշագրավ է նաև, որ նրանք իրենց նպատակին հասնելու համար Գանձասարի կաթողիկոսությանը շնորհում էին բավական արտոնյալ վիճակ, նրան ենթակա թեմերն ու եկեղեցիներն ազատում աշխարհիկ բնակչությունից գանձվող բազմատեսակ տուրքերից և հաճախ նույնիսկ խափանում իշխանավորների կամայականությունները։ Այս պատճառով էլ պատահական չէ ինքնակամ նվիրատվությունների այն առատությունը, երբ աշխարհիկ իշխանավորներն իրենց տիրույթներում գտնվող վանքերին նվիրաբերում էին անշարժ ու շարժական գույքեր, անտառներ ու հանդամասեր, ջրաղացներ ու ձիթհանքեր, ճորտ ընտանիքներ ու ամբողջ գյուղեր։ Այս երևույթը նորություն չէր Պարսից բռնակալության օրերում։ Իր սկիզբն առնելով դեռևս

110 ՄՊՎՀ, Բ, էջ 109։

«Թալիբանե»—«թալիբ» արաբ. բառից, որ նշանակում է «պահանջող», «հայցող»։ Թալիբանե—եկեղեցական այն տուրքերն են, որոնք եկեղեցիները պարտավոր էին վճարել կաթողիկոսարանին (տե՛ս ՄՊՎՀ, Բ, էջ 216—217)։

111 Անդ։

112 Թոլենեան, Յուցակ ձեռագրաց Խ. վ. Դաղեան, Բ, էջ 19։

արաբական տիրապետության շրջանում, այն տարածվեց սելջուկ թուրքերի ասպատակությունների ժամանակ և լայն չափեր ընդունեց թաթար-մոնղոլական տիրապետության ներքո։

Հայտնի է, որ հայոց եկեղեցին հնուց ի վեր, վարչական բարձր իրավունքների հետ միասին, ուներ նաև տնտեսական իր անկապտելի հզորությունը։ Այդ հզորության ամենահիմնավոր աղբյուրն ստեղծված էր եկեղեցու գոյության հենց առաջին դարերից. դեռևս Ներսես Պարթևի հրովարտակով եկեղեցիների ու վանքերի սրբազան համարված հողում թաղվելու իրավունք ստացան արքայական ու նախարարական տների ներկայացուցիչները։ Այսպիսի պատվի արժանացողը, թաղվելուց առաջ, իր հոգու պարտքն էր համարում շարժական կամ անշարժ գույքի նվիրաբերումով արտահայտել իր երախտագիտությունը սուրբ ուխտի նկատմամբ։ Իսկ երբ մի վանք դառնում էր որևէ գերդաստանի տոհմական տապանատունը, այս գերդաստանի ժառանգներն արդեն ոչինչ չէին խնայում իրենց տապանատունն առատության ու շքեղության մեջ պահելու համար։ Եվ զարմանալի չէ, օրինակ, երբ Արշակունյաց թագավորական տան Հայր Մարդպետը Ներսես կաթողիկոսին կշտամբում էր, թե երկրի լավագույն հողերը կանանցահանդերձ հոգևորականների ձեռքում են գտնվում[113]։

Մեր քննության ենթակա ժամանակաշրջանում իշխանական տներն ու նրանց ճյուղերն ունեին իրենց տոհմական տապանատուն-վանքերն ու եկեղեցիները, որոնց շարժական ու անշարժ գույքեր նվիրելիս նրանք պարզապես մրցում էին իրար հետ։ Եվ պատահական չէ, որ եկեղեցիներն ու վանքերը հենց այս եղանակով էլ դարձել էին ամենահարուստ հողատերեր, և նրանցից ամենանշանավորներն իրենց ավատական իրավունքներով ետ չէին մնում աշխարհիկ հզորագույն իշխանավորներից։

Ուշ միջնադարյան, հատկապես ետմոնղոլական շրջանի իրողությունները եկան առավել ամրացնելու եկեղեցու հողային իրավունքները։ Այս ժամանակ արդեն աշխարհիկ ավատատերերի կողմից վանքերին արվող նվիրաբերությունները միայն բարեպաշտական տուրք չէին կամ տոհմական տապանատունը շեն պահելու միջոցառում։ Նվիրատվությունը դարձել էր տնտեսությունը եկվոր օտարների կողոպուտից ու կեղեքումից մասամբ զերծ պահելու միջոց։ Իշխանավորը հաջողեցնում էր յուրայինների ձեռքը գցել իր

113 Փաւստոս Բիւզանդ, Դպրութիւն Դ, գլ. ԺԴ։

գավառի հոգևոր իշխանությունը ևս, իր տիրույթների մեծագույն մասը նվիրաբերում էր վանքին, և, այսպիսով, նախ, դրանք փրկում եկվորների տուրքավորումից ու բռնագրավումներից, ապա և տիրանում այլևայլ անձանց կողմից նույն վանքին տրված ընծաներին ու եկամուտներին։

Սակայն վիմագրական նյութի ուշադիր քննությունը մեզ ներկայացնում է նաև մի պատկեր, որի առկայությամբ, ըստ երևույթին, անհրաժեշտ է վանքին տրվող ընծաների մասին դատողություններ անելիս չափազանց զգույշ լինել։ 1471 թ. Պուտաղը, Վախտանգն ու իրենց մյուս եղբայրները (անկասկած Հասան-Ջալալյաններից) միաբանում են Գանձասարի ուխտին և վանքին ընծայում «Փուտուռանց, Կակաշանց ու Ծաղկայվանց Գ ըստակն»[114]։ 1499 թ. քանդակված մի վիմագրում այս նույն անուններին հանդիպում ենք Աղբաստի թոռ ու Սայտունի որդի Մելիքի նվիրատվությունների ցանկում։ Մելիքն արձանագրում է. «Կակաշանց, Փուտուռան(ան)ց, Ծաղկավանց Բ ըստակն գնեցի, տվեցի ի սուրբ ուխտս Գանձասարա»[115]։

Այստեղ, իհարկե, նշված հանդամասերի ստակների մասին է խոսքը, և պետք է ենթադրել, որ նվիրատվությունները կատարվել են մաս-մաս, նախ՝ հիշյալ հողերի Գ (3) մասը, ապա՝ Բ (2)։ Իսկ մենք գիտենք, որ սովորաբար նրանք բաժանված էին լինում 6 մասի (դանգ-ստակ)։

Սակայն 1495 թ. Աթաբակի որդիներ Այտինն ու Խիմշեն Գանձասարին են նվիրում «Աշմանայ տափի հողն»[116], որը դրանից 15 տարի առաջ Վելիջանն ու իր եղբայրներն էին նվիրել վանքին[117]։ Այս նշանակում է՝ Այտինն ու Խիմշեն կամ հողը ետ էին վերցրել, վերստին նվիրել, կամ էլ նրանց տոհմակիցները նախկին նվիրատվությունը ի չիք էին դարձրել, և նրանք ստիպված եղան նորից ձևակերպելու նվիրատվությունը։

Համանման մի այլ փաստ. Աղբուղայի որդի Շահանշեն[118] «Նովերին հողն» ընծայում է Գանձասարի ուխտին։ Նույն «Նովերին հող»-ին հանդիպում ենք և Իսուբի՝ 1495 թ. արձանագրության մեջ. այստեղ ևս այն նվիրաբերվում է «ի սուրբ ուխտս Գանձասարա»[119]։

Այս օրինակներից կարելի է ենթադրել, որ նվիրատվությունները այնքան էլ հաստատ ու անբեկանելի գործարքներ չէին և խախտվում էին նվիրատուի հարազատների կամ ազդեցիկ իշխանավորների կողմից։ Այլապես ավելորդ պիտի լինեին նվերները հանողների ու խախտողների հասցեներին ուղղված զանազան անեծքները, որ այնպես առատությամբ սփռված են մեր վիմագրերում։

Վանական տնտեսություններին վերաբերող այս փաստերը ցույց են տալիս, որ աշխարհիկ իշխանավորներն իրենց ժառանգական սեփականությունը ետ էին խլում նաև սուրբ ուխտերից։ Սակայն չէին խորշում և այդ ուխտերին միաձուլվել, եթե անձնականավատական շահն էր այդ պահանջում։

Հետազոտողները բազմակողմանի քննության են ենթարկել հայ եկեղեցական ու աշխարհիկ իշխանության այս միաձուլման երևույթը, նրա ձևերն ու հետևանքները[120]։ Մենք այստեղ պետք է լրացնենք միայն, որ, ինչքան էլ եկվոր տիրապետողները բռնությամբ ու կեղեքումներով նեղում էին աշխարհիկ իշխանավորներին, հպատակ երկրի ներսում ճանաչելով միայն հոգևոր առաջնորդների գոյությունը, Խաչենի հին իշխանական տան մնացորդներն առավել կենսունակ գտնվեցին և մնացին իրենց երկրամասի վարչական-քաղաքական իշխանության տերերը, հովանավորեցին հայ մշակույթի բազմադարյան ավանդների պահպանումը և, որ շատ կարևոր է, այլևս չունենալով զինական անհրաժեշտ կշիռ, մոխիրների տակ անթեղած կրակների պես վառ պահեցին ազգային ազատության այն կայծերը, որոնցով պետք է բորբոքվեին XVIII դարի ազատագրական շարժումները Ղարաբաղում և հարևան շրջաններում։

Վերին Խաչենի իշխանության երեք ճյուղերը XVI դարում.— Պատմական իրականությանը համապատասխանում է Ծսայի կաթողիկոսի տեղեկությունը Վերին Խաչենի իշխանության ճյուղավորման մասին։ XV դարի երկրորդ կեսում այն իսկապես բաժան-

114 Շահխաթունեանց, Բ, էջ 374, «Արցախ», էջ 178, Հ. Օրբելի, № 27։ Թվարկվածները երևի հանդամասերի անուններ են։

115 Շահխաթունեանց, Բ, էջ 374, «Արցախ», էջ 179, Հ. Օրբելի, № 24։

116 Հ. Օրբելի, № 19։

117 Անդ, № 23։

118 Դժվարանում ենք որոշել տոհմը. գուցե թե Ծարա ճյուղի Աղբուղայի (՞) որդին է, այն Աղբուղայի, որը Հասանի ու Գոնցայի որդին էր և հոր ու երեք եղբայրների հետ միասին նահատակվեց լանկ-թամուրյանների ձեռքով։

119 Շահխաթունեանց, Բ, էջ 375, Հ. Օրբելի, № 31։

120 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 305—315 և հտգ., Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ, Բ, էջ LXII—LXXXIII, Լ. Հ. Բաթայան, նշվ. աշխ., էջ 397—398 և հտգ.։

ված էր երեք ճյուղերի, որոնցից յուրաքանչյուրի հիշողության մեջ վառ էր մնում իր նախնու անունը. Շահանշեն՝ Ուլուբեկանց պապ, Ջհանշեն՝ Ջհանշեցվոց պապ և Աղբուղեն՝ Այտինեցվոց պապ։

Ի՞նչ էին ներկայացնում իրենցից այս ճյուղերը, և որո՞նք էին նրանց բնագավառները։ Այս հարցերին պատասխանում են պատմական արժանահավատ աղբյուրները, և հետազոտողները փորձել են գտնել ճշգրիտ պատասխաններ։ Դժբախտաբար, ցարդ մինչև վերջ պարզ պատկերացում չկա ինչպես ճյուղերի, այնպես էլ նրանց բնագավառների մասին։ Ճիշտ է, Մակար Բարխուտարյանցն ու Կարապետ եպիսկոպոսը, ապա և հետագայի ուսումնասիրողները (Աշոտ Հովհաննիսյան, Սեդրակ Բարխուդարյան) ընդունում են, որ Դոփյան իշխանական տանն են հաջորդել Ծարա մելիքությունը, ինչպես նաև Սոդքի ու Գեղամա տեր Մելիք-Շահնազարյանները։ Սակայն միշտ չէ, որ ծագումնաբանական հարցերը քննելիս նրանք համամիտ են իրար, կամ համերաշխ՝ առկա աղբյուրագիտական տվյալների հետ։ Համենայն դեպս, հնարավոր է մտածել, որ նրանք ընդունում էին, թե երկու այդ մելիքությունները (Ծարա ու Սոդքի) Դոփյանների ժառանգորդներն են, Ջհանշահի և Շահանշահի (կամ սրա թոռ Ուլուբեկի) հետնորդները։

Իսկ ո՞ւր մնացին Աղբուղայի ժառանգները։ Այս առթիվ գոյություն ունեն տարբեր վարկածներ։

Կարապետ եպիսկոպոսն այս ճյուղի նախահայր Այտինին դարձնում էր Գեղամա գավառի տերը։ «Մեր ձեռքի տակ եղած պատմական հիշատակություններից առայժմ այն եզրակացության կարող ենք գալ,— գրել է նա,— որ Այտինը հայրենի կալվածները թափելով (աղատագրելով—Բ. Ու.)՝ Ծարը թողել է Շահանշահի և Ջահանշահի սերունդներին... իսկ յուր ազգին վերցրել Գեղամա ծովակի հովիտը՝ մի քիչ էլ ավելի ընդարձակելով յուր իշխանությունը ծովակի արևմտյան ափի ուղղությամբ...» և այլն[121]։ Սակայն քիչ հետո Կարապետ եպիսկոպոսը մոռացության է տալիս իր այս տեսակետը և առաջ է քաշում մի նոր վարկած՝ Այտինին դարձնում է Հաթերքի տեր, մյուս երկուսին թողնելով Ծարում ու Գեղարքունիքում[122]։

Մակար Բարխուտարյանցի կարծիքով՝ Այտինը հայրենի տիրույթներն աղատագրում է, բայց անցնում Կուրի ձախափնյակը,

121 «Դոփյանք», էջ 103։

122 Անդ, էջ 129։

իշխում Սուլթան-Նուխի և Նիժ ավաններում, այնտեղից էլ փոխադրվում Խաչեն, հիմնադրում Գյուլիստանի մելիքությունը[123]։ Դժվար է մի հատիկ աղբյուրագիտական փաստ գտնել այս տեղաշարժերը և սրանցով պայմանավորված մյուս պատմությունները հաստատելու համար[124]։

Աղբուղայից սերված ճյուղի մասին կարծիք է հայտնել նաև Սեդրակ Բուրխուդարյանը, գրելով. «Կարապետ եպիսկոպոսը... փորձում է հիմնավորել այն տեսակետը, որ Գեղարքունիքի բոլոր վայրերի մելիքները սերում են Մելիք-Շահնազարյաններից, իսկ սրանք էլ իրենց հերթին Դոփյան իշխաններից»։ Ապա գրում է սրանք էլ իրենց հերթին Դոփյան իշխաններից»։ Ապա գրում է սրանք էլ իրենց հերթին Դոփյան իշխաններից»։ Ապա գրում է, որ Կարապետ եպիսկոպոսի կարծիքը հիմնված է «խախուտ նախադրյալների վրա»[125]։

Սակայն, որքան մեզ հայտնի է, Կարապետ եպիսկոպոսը ոչ մի տեղ չի ասել, թե Գեղարքունիքի բոլոր մելիքները, ավելի ճիշտ՝ մելիքությունները, սերվել են Մելիք-Շահնազարյաններից։ Նա կարծում էր միայն, որ բոլոր այդ մելիքությունները տոհմակիցներ են՝ սերված Դոփյան իշխանական տնից։ Այլ բան է, որ նրանց բնագավառները պարզ չէր պատկերացնում։

Սեդրակ Բարխուդարյանը Տաթևում 1513 թ. գրված հայտի փաստաթղթին ստորագրողների ինքնությունները քննելիս, իր հավաքած վիմագրական հարուստ նյութերի հիման վրա, պարզել է, որ «Թանկրիղուլի՝ որդի Մելիք Ղուկասին և թոռն Պուղիկին»՝ ներկայացուցիչն է մի փոքրիկ վարչական միավորի, որի նստավայրն էր Փառականք-Փառկունիս (հետագայում Վերին Քյոլաղռան) գյուղը[126] և իր տիրապետության ներքո ունեցել է այժմյան Սովիգ

իշխանության տիրույթների հարավ-արևմտյան ծայրամասին էին տեր դարձել, իսկ այս մասում իշխանության սահմանների մեջ էր գտնվում Շողվագը՝ ներկայիս Զորագյուղի մոտ։ Այս տարածքից հավաքած վիմական արձանագրություններով Ս. Բարխուդարյանը կազմել է մելիքական տան տոհմաբանությունը, որն ընդգրկում է XV դ. սկզբից մինչև XVI-ի վերջը և ունի հետևյալ պատկերը[128].

Աղբուղա (Պուղիկ)
↓
Մելիք Ղուկաս
↓
Մելիք Թանկրիղուլի (1451, 1532) + Մելիքբեկ + Դավլաթ (կին Ծարա մելիք Միրզաջանի)
↓
Ղասում (1536) + Վելիճան (1536) + Ավանդուկ + Պապաճան (1578)
↓
Ղասումջան + Ադիբեկ (1571)

Վերջերս հրատարակված «Դիվան հայ վիմագրության» Դ հատորի (կազմել է Ս. Բարխուդարյանը) նյութերով պարզվում է, որ իսկապես Աղբուղայից հետո գալիս է մելիք Ղուկասը, ապա Թանկրիղուլին[129], որն էլ ունեցել է Ղուկաս[130], Ղասում, Ավանդուկ և այլ որդիներ։ Այս տոհմաշղթան ձգվում է XV դ. սկզբից մինչև XVI-ի վերջը՝ շուրջ երկու դար։

Ս. Բարխուդարյանը համոզված է, որ սույն մելիքական տունը կոչվել է Աղբուղայան-Պուղիկյան, քանի որ նրանց հայտնի նախնու անունը եղել է Աղբուղա (այստեղից էլ՝ Աղբուղիկ-Պուղիկ)[131]։ Բայց չէ՞ որ Աղբուղա էր նաև Այտին Դոփյանի պապի անունը, որից և գոյացել է նոր ճյուղը։ Իրավացի չե՞նք լինի, եթե մտածենք, որ Այտինը, հայրենի տիրույթները փրկելուց հետո, իսկապես իրեն է վերցրել նրանց հարավ-արևմտյան մասը, ստեղծել

128 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 202։

129 «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 254։

130 Անդ, էջ 255։

131 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 200։

ինքնուրույն վարչական միավոր, որը և իր որդի Աղբուղայի անունից (նա կարող էր որդուն կոչած լինել պապի անունով) կոչվել է Աղբուղայան։ Այսպես ենք մտածում, ամենից առաջ, նկատի առնելով, որ Ծարա և Գեղամա կողմերում նշված ժամանակների առումով Աղբուղայան տոհմանունով ուրիշ իշխող չպետք է լիներ, քան Դոփյան պայազատն էր։ Հզորացող Զհանշահյանների (Ծարեցիների) և Ուլուբեկյանների (Սոդքի տերերի) կողքին նրանց այս տոհմակից Աղբուղայան իշխողները պետք է փորձեին ձեռք բերել որոշակի ինքնուրույնություն։ Եվ դա էլ նրանց կհուշեր խզել կապերը տոհմակիցների հետ։ Իրենց այս նպատակին հասնելու համար նրանք շատ կարևոր միջոց պիտի համարեին նվիրապետական անկախությունը Գանձասարի կաթողիկոսությունից, կամ, ինչպես իրենք են ասում՝ «ի Խաչենեցայց կամ երկրիս (իմա՝ Խաչենի— Բ. Ու.) եպիսկոպոսացն, կամ հետ կաթողիկոսացն...»։

Մեզ այս շատ հավանական ենթադրությանն են մղում երկու հանգամանք.

ա) XV դարում եկվոր ոչ մի իշխանական տան ներկայացուցչի մուտքը Գեղարքունիք կամ Գեղամա գավառ չի արձանագրված, հակառակ դեպքում այդպիսի փաստը մոռացության չէին տա հիշատակագիրներն ու ժամանակագիրները, որոնք այնպես հանգամանորեն ներկայացնում են XV դարի բոլոր անցուդարձերը։

բ) Թանկրիղուլին ու մյուսներն իրենց տոհմին վերաբերող փաստաթղթերում ու արձանագրություններում համառությամբ լռում են իրենց ծագման ու տոհմակունքների մասին, մի բան, որ չէր կատարվի, եթե նրանք սերված լինեին ուրիշ որևէ հայտնի տոհմից կամ առհասարակ ազնվական ակունքից։ Իսկ Դոփյան տոհմակունքը նրանք մոռացության պիտի տային՝ նրա գահերեց օրինական իշխաններից իրենց անկախությունը շեշտելու համար։

Թանկրիղուլու ժառանգները չկարողացան երկար պահպանել իրենց կարծեցյալ անկախությունն ու անջատ վիճակը։ XVI դ. վերջին և XVII -ի սկզբին Դոփյան Ուլուբեկի (Աղբուղայի եղբայր Շահանշահի թոռան) թոռ մելիք-Շահնազար Ա-ը տերն էր դարձել ամբողջ Գեղարքունիքի կամ Գեղամա գավառի[132] և Աղբուղյան զարմիկներից ոչ մեկը չկար, որ գանգատվեր նրա այդ օրինական իշխանության դեմ։

Զհանշահյանք կամ Զհանշեցիք Ծարա նոր ստեղծ իշխանու-

132 Ս. Բարխուդարյանն իր հիշյալ աշխատության մեջ (էջ 192, ծան. 1) գրում է, թե «Շահնազարյաններին ճիշտ կլինի անվանել Սոդքի մելիքներ, որով-

թյան տերեր.— Եսայի կաթողիկոսի՝ վերը հիշված տեղեկության համաձայն՝ Դոփյան Հասանի սերունդներից XIV դ. վերջում առաջացած մանր իշխանություններից մեկն էլ Ջհանշեցիք էին, Հասանի նահատակված (+ 1387) որդի Ջհանշահի սերունդների ըստեղծած իշխանական նոր տունը։ Եսային չի գծում այս իշխանության հիմնական բնագավառը։ Սակայն աղբյուրները նրա կոնկրետ բնագավառ են հիշում Ծարը և հոգևոր կենտրոն՝ Դաղի վանքը։ Կարևոր է, որ Ծարա տերերը մինչև վերջ էլ հիշում էին իրենց ճյուղի նախնու անունը՝ Ջհանշահ, չնայած այնքան էլ պարզ պատկերացում չունեին տոհմաշղթայի բոլոր օղակների մասին։ Օրինակ, XVI դ. վերջին և XVII-ի սկզբին ապրած ու գործած նրանց մի նշանավոր ներկայացուցիչը՝ Հովհաննիսիկ Ծարեցին, այսպես է գծում այդ տոհմաշղթան. «Ես Յոհաննէս վարդապետ՝ որդի Մելքոնին, որդւոյ Միրզաջանին, որդւոյ Ջհանշահի, յորդւոյ Պռոշայ, յորդւոյ Հասանայ, որդւոյ մեծ Շահնշահի, որդւոյ Սարգսի, թոռնեացն Դոփայ, քոյր մեծին Իւանէի և սպասալար Զաքարէի...»[133]։

Չի կարելի չնկատել, որ Հովհաննիսիկ վարդապետի տոհմաշղթայի մեջ են մտել անուններ, որոնք չէին կարող լինել Դոփյան իշխանազունների մեջ։ Այդպիսին են Պռոշը և Սարգիսը։ Առաջինն առհասարակ չկար Դոփյան տանը, երկրորդն էլ նրանց կուսակրոն ներկայացուցչի անունն էր (XIV դ. սկզբին)։ Սակայն կարևորն այն է, որ պարզ է տոհմակունքը՝ Դոփյան տունը, ապա՝ Հասան Գ-ի որդի Ջհանշահից առաջացած նոր ճյուղը, որի հաջորդական սերունդներն էին՝ Ջհանշահը, Միրզաջանը, Մելքոնը։ Մելքոնի զավակներն էին Հովհաննիսիկ Ծարեցին, Թումա քահանան, Միրզաբեկը, Ուլուխանը և ուրիշներ։ Վերջիններս ապրել են XVI դ. վերջում և XVII-ի սկզբին։

Դժբախտաբար, Ջհանշահին անմիջապես վերաբերող տեղեկություններ չունենք, բացի այն հիշատակություններից, որ նրա ժառանգներն են թողել՝ շեշտելով այդ կարևոր նախնու տեղն իրենց տոհմաշղթայի մեջ։ Հայտնի է նույնիսկ կնոջ անունը՝ Մուտամփաշա[134]։ Հավանաբար ապրել և իշխել է XV դ. երկրորդ կեսում։

հետև Գեղարքունի գավառը կազմում էր ներկա Կամոյի և Մարտունու շրջանները... Հետազոտողը մոռանում է, որ մելիք-Շահնազարյանների բնագավառը հիմնականում եղել է Գեղարքունիքը կամ Գեղամա գավառը, և նրանք իրենց հենց այս գավառի տերեր էին կոչում։

133 Սմբատեանց, էջ 628։

134 Մատենադարանի ձեռ. № 2776, էջ 32ա։

XV դ. վերջում և XVI-ի սկզբին Ծարա տերն էր Ջհանշահի որդի Միրզաջանը, որի մասին կան և՛ վիմագրական, և՛ ձեռագրական տեղեկություններ։ Նրա նստավայրն էր Ծարը։ Կինն էր Դավլաթը՝ Գեղամա տեր Ղուկասի դուստրը, որի կանգնեցրած մի խաչարձանի գիրն է.

«Քրիստոս աստուած, նշանս բարեխաւս Դաւլաթին։
Աստուծով ես Դաւլաթս, ի տանէն Գեղամա, դուստր
մելիք Ղուկասին, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան,
որդիքն իմ՝ Տաւիտբէկ, Մելիքպէկ, կանգնեցինք
զխաչս փրկութիւն հոգոյ։ Թվ. ՋՂԸ» (1549)[135]։

Ջհանշահն ունեցել է նաև ուրիշ որդիներ, որոնցից նշանավոր էին Դավիթ երեցը (կինը՝ Շամամ խաթուն) և Հովհաննես վարդապետը։ Դավիթն ունեցել է Թաթեոս, Աբրահամ, Առստամ և Մկրտիչ որդիներ, վերջին երեքը՝ մահացած մինչև 1531 թվականը[136]։

Միրզաջանի որդիներն էին՝ Մելքոն իշխանը (հավանաբար 1549 թ. արձանագրության Մելիքպէկը), Դավիթ հոգևորականը և Յուղուրլուն։ Մելքոնն իշխանությունը վարել է դարի կեսերին, ունեցել (կնոջ անունն էր Փիանդ) շատ որդիներ, որոնցից հայտնի են՝ Հովհաննիսիկ Ծարեցին, Թումա քահանան, Միրզաբեկը, Ուլուխանը, Փարին, Խանսուլթանը և Նազլուխանը[137]։

Ծարեցիների վերջին շրջանի մշակութային նշանավոր գործիչներն էին Հովհաննես անունով երկու հոգևորականներ, որոնց մասին արժե խոսել հանգամանորեն։

Հովհաննես ու Հովհաննիսիկ Ծարեցիները և նրանց ժամանակը.— Հովհաննես անունը չբաժանվեց Ծարա իշխանական տան հոգևորական ժառանգներից։ Այդ անունով կոչված ուրիշ հոգևորականներ կային նաև Հաղբատի Հովհաննես անունով առաջնորդներից հետո։ Սակայն նրանց մասին մենք սոսկ թռուցիկ տեղեկություններ ունենք, ինչպես և նրանց ժամանակի մասին՝ առհասա-

135 «Արցախ», էջ 406 (տողերը խառնված, որի հիման վրա էլ Կարապետ եպիսկոպոսը շփոթել է Գեղամա ու Ծարա տերերի անունները, տե՛ս «Դոփյանք», էջ 107, նաև՝ Աշ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 110)։ Ճիշտ ընդօրինակությունը՝ Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 200, ծան.։

136 Մատենադարանի ձեռ. № 2776, էջ 32ա։

137 Անդ, թ. 254բ։

ռակ։ XVI դարում հայտնի գործիչ էր Հովհաննես Ծարեցի վարդապետը, իսկ XVI-ի վերջին ու XVII-ի սկզբին՝ նրա եղբոր թոռ և նրա աշակերտ Հովհաննեսը, որն ինքն իրեն կոչում էր «Փոքր Յոհաննեսիկ»[138], սակայն պատմության մեջ հայտնի է որպես Հովհաննիսիկ Ծարեցի։

Հովհաննեսն ու Հովհաննիսիկը հետազոտողների կողմից արժանացել են ուշադրության։ Դրա հիմնական պատճառը թերևս երկրորդի հայտնի ժամանակագրությունն է, որը բավական նյութ է տալիս երկուսի ու նրանց տոհմակից ժամանակակիցների մասին։ Այդ ժամանակագրության քննությունն էլ առիթ է դարձել, որպեսզի հանգամանորեն խոսվի Հովհաննիսիկ Ծարեցու և իր ուսուցիչ ու ազգական Հովհաննեսի մասին։

XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցին է առաջին անգամ ուշադրության արժանացրել Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրությունը՝ այն որպես առանձին գլուխ մտցնելով իր Պատմության մեջ[139]։ Ապա Մ. Մսերյանցն այդ ժամանակագրությունը հենց Հովհաննիսիկի ինքնագրից (Մատենադարանի ձեռ. № 2776) հրատարակել է իր «Ճռաքաղ» հանդեսում՝ հետևյալ խորագրով՝ «Յովհաննիսիկ վարդապետի համառօտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան»[140]։

Մսերյանցը Հովհաննիսիկի ժամանակագրության վերջում տրվել էր նաև փոքրիկ մի տեղեկանք նրկի ու նրա հեղինակի մասին։ Այնտեղ նա, ի միջի այլոց, նշում էր, որ տպագրված ժամանակագրությունը չի պատկանում 1583 թ. մահացած Հովհաննես Ծարեցու գրչին, ինչպես կարծել էր Մ. վ. Չամչյանը[141], այլ գրված է նրա կրտսեր ազգական Հովհաննիսիկ վարդապետի ձեռքով[142]։ Սակայն այս միանգամայն իրավացի դիտողությունը չի խանգարել, որպեսզի շատ տարիներ հետո Ղ. Ալիշանը գրի, թե ժամանակագրությունը Հովհաննես Ծարեցունն է, և Հովհաննիսիկը միայն շարունակել է նրա գրածը[143]։

138 Մատենադարանի ձեռ. № 2776, թ. 266ա։

139 Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, էջ 605—619։

140 «Ճռաքաղ», Մոսկվա, 1859, հ. Ա, տետրակ Գ, էջ 69—76, տետրակ Դ, էջ 105—112։

141 Մ. վ. Չամչեան, Պատմութիւն հայոց, Գ, էջ 531։

142 «Ճռաքաղ», 1859, տետրակ Դ, էջ 112—113։

143 Ալիշան, Հայապատում, Ա, էջ 129։

Իր «Սիսական» երգում (էջ 71) Ալիշանը դարձյալ անդրադառնում է այս հարցին, հիշում Հովհաննես Ծարեցուն՝ որպես «ժամանակագրի 1571—1583 ամաց, որոյ գրածն տպագրեալ է ի Պատմագիրս Առաքելի»։

Ժամանակագրության ու նրա հետ առնչվող հարցերի վերջին, հանգամանալից քննությունը պատկանում է Վ. Հակոբյանին։ Հետազոտողն իր կազմած «Մանր ժամանակագրություններ»-ի Բ հատորում տեղավորելով Հովհաննիսիկի ժամանակագրությունը՝ բարեխղճությամբ վեր է լուծում նախորդ բոլոր հետազոտողների կարծիքները, կատարում ձեռագրերի համեմատական քննություն, տպագիր տարբերակին կցած իր ներածական խոսքի ու ծանոթագրությունների մեջ տալիս սպառիչ ու ճշգրիտ պատասխաններ բոլոր այն հարցերին, որոնք ծագել են ու կարող են ծագել ժամանակագրության և նրա հեղինակի առնչությամբ։

Հովհաննիսիկի ժամանակագրության ինքնագիրը պահպանվում է Մատենադարանի № 2776 ձեռագրում։ Բանն այն է, որ այժմյան ձեռագիր մատյանում հիմնականում ամփոփված են նախկին երկու ձեռագիր (մեկը՝ Մ. Գոշի Դատաստանագրքի ընդօրինակությունն իր հիշատակարաններով հանդերձ, մյուսը՝ Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրությունը՝ հեղինակ-գրչի հիշատակարանների հետ) և մի պատառիկ՝ առավել հին մի ձեռագրից, որը, ինչպես առկա նյութն է ցույց տալիս, Դադի վանքի մայր մատյանի կամ քյոթուկի մի մասն է։ Վերջինիս մեջ իրար ետևից արտագրված են Դադի վանքի վիմական մի շարք արձանագրություններ[144]։ Դատելով ձեռագրից և թղթի հնությունից, պետք է ենթադրել, որ այն XII—XIII դդ. արտագրություն է, հիմնական մատյանից պրկված լինելով՝ կցվել է Մ. Գոշի Դատաստանագրքի ձեռագիրը հանդիսացող մատյանին և փրկվել կորստից։

Վ. Հակոբյանն իրավացի է, երբ մատյանի հիշատակագրություններից եզրակացնում է, որ նրա նորոգողը Ալեքսանոս կրոնավորն է։ Սակայն դրանից հետո հիմք չկա ենթադրելու, թե նույն Ալեքսանոսի ձեռացագիրն են ժամակագրությունը, նրան կից հիշատակարանները և Արևելից աշխարհի եպիսկոպոսների նամակը Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսին[145]։

Ալեքսանոսի անունից գրված ոչ մի խոսք չկա ձեռագրում, այլ՝ «Նորոգեցաւ սբ կտակս ձեռամբ յԱլեքսանոս կրօնաւորի», որ կա-

144 Տե՛ս ձեռ. № 2776-ի էջ 271ա—273բ։

Մատենադարանի ձեռագրաց ցուցակում (հատ. Ա, էջ 873) այս արձանագրությունները սխալմամբ համարված են նախագաղափար հիշատակարաններ։

145 Անդ, էջ 264ա—266ա։

ցող էր ասել ձեռագիրը նորոգելու պատվիրատու Հովհաննիսիկը։ Որ ինչպես այս, այնպես էլ մյուս հիշատակարանները (ժամանակագրության հետ աղերսվող)՝ բուն ժամանակագրության հետ միասին՝ Հովհաննիսիկի ձեռքի գործն են, պարզ երևում է այդ հիշատակարաններից։ Ժամանակագրությունը և նրան վերաբերող հիշատակարանները գրված են միևնույն ձեռագրով, որի տերն, անկասկած, Հովհաննիսիկն է։ Ահա այդ հիշատակարաններից մեկը. «Զմեծ վդպտ ՅՀՆս զՋանշեցս կոչեցեալ զստացող գրոցս յիշեցէք ի Քս, ով հանդիպողք, և ած զձեզ յիշէ և թէ կամիք զՓոքր Յոհաննէսիկս վասն այ այլ յիշեցէք ած ողորմեայիւ աղաչեմ»[146]։

Հովհաննիսիկի ձեռքով է գրված նաև ժամանակագրությանը նախորդող մեծ հիշատակարանը. «Արդ ես մեղուցեալ Ծարեցի նուաստ Յովհաննէս վարդապետս, որդի Մելքոնին...», և վերջում՝ «Արդ աղաչեմք զձեզ, որք պատահիք և յօգտիք ինչ ի սմանէ, յիշէք զմեծ վարդապետն Յովհաննէս և զիս՝ զՓոքր Յովհաննիսիկս»[147]։

Ուրեմն, հանձին այս մատյանում տեղավորված 264—273 թերթերի մանր ու պարզ գրերի՝ մեր ձեռքի տակ ունենք Հովհաննիսիկ վարդապետ Ծարեցու ինքնագիրը։

Մատյանի առաջին՝ հիմնական մասը Մ. Գոշի Դատաստանագիրքն է, որի տերը մի ժամանակ եղել է Հովհաննիսիկ Ծարեցու պապի եղբայր Դավիթ երեցը։ Դավիթն այն ձեռք է բերել «ի վաստակաց յուրոց»՝ 1531 թվականին և այդ մասին հիշատակարան է թողել, հականե-հանվանե ներկայացնելով իր հարազատներին՝ ծնողներին, որդիներին ու մյուս «արեան մերձաւորացն»[148]։

Հետագայում (բայց ո՛չ 1531-ին, ինչպես իր ժամանակ, երևի առանց դրան կարևորություն տալու, հաղորդում էր Հովհաննիսիկը)[149] ձեռագիրը, որպես նվեր, Դավթից անցել է Հովհաննես բարբունապետին։ Այս նվիրաբերության հանգամանքները, ինչպես

146 Ձեռ. № 2776, էջ 264բ։

Այս նույն ձեռագրով, հետևապես՝ Փոքր Հովհաննիսիկի ձեռքով է գրված նաև 264ա—266ա էջերի հիշատակագրությունը։

147 Անդ, էջ 266ա, բ։

148 Անդ, թ. 32ա։

Մեր խնդրից դուրս է ձեռագրի նախկին տիրոջ, ավելի ճիշտ՝ պատվիրատուի, գրչի և այլոց ինքնությունը պարզելը։ Նրանց մասին ևս բավական տեղեկություններ կան հիշատակարաններում։

149 Անդ, էջ 266բ, Մժ, Բ, էջ 250։

նաև մի այլ հիշատակարան[150] գրված են ո՛չ Դավթի ձեռացագրով, այլ, ինչպես իրավացիորեն ենթադրում է Վ. Հակոբյանը, ավագ Հովհաննեսի ձեռքով[151]։

Հովհաննեսի վերջին հիշատակարանը գրված է չափածո, սակայն չտողատված։ Տողատվելուց կստացվի.

«ԸզՅոհանէսս Ծարեցի,
Կարմիրս որ սեաւ ես խառնեցի,
Յիշել խնդրեմ զիս ի բարին,
Յիշողք առցջիք հազար զմեկին...»[152]։

«ԸզՅոհանէսս»-ի առաջին լցված վանկը վկայում է, որ Հովհաննեսը տեղյակ է եղել տաղաչափության կանոններին. «Զ»-ից առաջ «Ը» ավելացնելով՝ լիարժեք վանկ է կազմել, որպեսզի առաջին տողակեսն էլ դառնա բարդ յամբ, ինչպիսին է երկրորդ կեսը։ Այս պարագան մեզ թելադրում է մտածել, որ ձեռագրում հիշատակվող «երգ արարող» Հովհաննեսը հենց մեր Հովհաննես Ծարեցին է, որի չափածո մի շարք խոսքերը, երբեմն բավական ընդարձակ, տեղ են գտել ձեռագրի տարբեր էջերում։ Մի տեղ. «Նրուաստ Յոհանիսի արարեալ երգս ոտանաւոր. ի դեկտեմբերի ամսոյն եղև բան խաւսել ընդդեմ երկաբնակացն դավանութի ուղղափառ, ըստ խնդրոյ հոգևոր եղբաւրս մերոյ Ասլանի և այլ քրիստոնէիցս Թաւրիժի զոր սիրով խնդրեալ»[153]։

Մի այլ էջում նույն Հովհաննեսը Թավրիզում իր ասած երգի համար խնդրում է հիշել իրեն[154]։

Հովհաննես Ծարեցին ժամանակի հայ հեղինակավոր վարդապետներից է եղել, գրի ու դպրության սիրահար։ Նրա մասին պահպանված կենսագրական ամենաընդարձակ տեղեկությունը գտնվում է Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության մեջ։ Հովհաննես վարդապետի մահվան առթիվ նրա կրտսեր անվանակիցը հետևյալն է հաղորդում. «Ի սոյն (1583) թվականի եղև վախճանք մեծ և երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհանիսի։ Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանիցն Դա-

150 Ձեռ. № 2776, էջ 258բ։

151 Մժ, Բ, էջ 236։

152 Ձեռ. № 2776, էջ 258բ։

153 Անդ, էջ 223բ։

154 Անդ, էջ 327բ։

դիու տուրբ յառաքելոյն[155], որդի յումեմն ազատի և բարեբարոյի Ջհանշահ կոչեցելոյ, յազգէ Դօփեայ և Հասանայ։ Եւ էր նա աշակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախպատեցոյ, յոյժ սրբասէր և աստուածասէր, հեզ և աղօթող, քարոզող յուղղափառաց և յանդիմանող ըստահակաց, սիրող ուղղութեանց և պատուող տոնախմբութեանց, յոյժ ընթերցասէր և գրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել յիւրն յիշատակ և այլ սպասք և զարդ եկեղեցոյ։ Եւ յալևորեալ լի յաւուրքք հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ի յունվար ամսոյ Ի (20) ի ՌԼԲ (1583) թվականիս մերոյ, որոյ պատուական մարմինն նորա եդեալ կայ ի երկիրն Գեղամայ ի գեղն Վասակաշեն, հուպ տամպարանի վարդապետին Սարգսի։ Յիշատակ նոցա յաւրհնութեամբ եղիցի...» ևն[157]։

Իսկապես, Վասակաշենի Աստվածածին եկեղեցու բեմի առջևում երկուսի գերեզմանաքարերն էլ գտնվել են՝ իրենց արձանագրություններով, մեկի վրա՝ «Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի, Ռ» (1551), մյուսի վրա՝ «Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին ՌԼԲ» (1583)[158]։

Հովհաննես վարդապետի՝ իր հիշատակի համար գրել տված

155 Վ. Հակոբյանը ժամանակագրությանը վերաբերող իր № 25 ծանոթագրության մեջ (ԺՄ, Բ, էջ 253) այս վանքի անվան առթիվ գրել է. «Սա Դագի վանքը չէ, որ գտնվում է Թարթառ գետի ձախ կողմում, Խաթրավանքից բավականին վերև և կոչվում է նաև Խութա կամ Գոթալ վանք (Բարխուդարյանց, Արցախ, էջ 203)։ Ժամանակագրության № 8245 տարբերակում սխալ՝ «Տաթևոյ» ձևով. ստույգը՝ Թադեի վանք, որը գտնվում է պատմական Աղահեճ գավառում (Փոքր Սյունիք)»։

Այս ծանոթագրությունը կարիք ունի ճշգրտման. Մակար եպիսկոպոսի գրքում Դագի կամ Խութա վանքը կոչված է նաև «Գոթալ», սակայն դա տպագրական սխալ է, ուղղելի՝ «Խոթայ» (զարաբաղցիները հենց այսպես էլ կոչում են՝ Խոթավանք)։ Ուրեմն, ժամանակագրության խոսքը վերաբերում է Դագի վանքին և ոչ թե Աղահեճք գավառի Թադեի վանքին, քանի որ Հովհաննեսների բնագավառը Տարն ու Վերին Խաչենի մյուս մասերն էին, իսկ Աղահեճքը գտնվում էր Մեծ Սյունիքի տարածքում։

156 Ղուկաս Հաղբատեցի վարդապետի մասին հանգամանորեն տե՛ս Էլեոնորա Հարությունյան, Ղուկաս Լոռեցին և նրա քարոզգիրքը. «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 213—236։

157 Ձեռ. № 2776, էջ 268բ, ՄԺ, Բ, էջ 244—245։

158 Մ. Սմբատեանց, էջ 603, Սիսական, էջ 71-ում խառնված են ավագ Հովհաննեսն ու Հովհաննիսիկը։ Ջալալեանց, Բ, էջ 119. շփոթն ավելի հեռուն է տարել. «Ի մէջ եկեղեցոյ գոն գերեզման երկուց վարդապետաց Յօհաննիսի Տարեցոյ և Սարգսի, որ արար զՀամառօտ պատմութիւն իւրոյ ժամանակի»։ Թյուրիմացաբար Պատմությունը Հովհաննես վարդապետին է վերագրված «Դիվան հայ վիմագրության»-ի Դ հատորում (տե՛ս էջ 367)։

«բազում գրեանք»-ից քիչ բան է հայտնի։ Հավանաբար նրանք Դադի վանքի սեփականությունն են եղել և արժանացել են վանքի հյուսած ձեռագրատան մնացած մատյանների տխուր բախտին, ենթարկվել են կողոպուտների ու հրկիզումների։ Մի արժեքավոր ձեռագիր, որ այժմ Մատենադարանի սեփականությունն է՝ 6879 թվահամարով, ժամանակին Հովհաննես Տարեցուն է պատկանել, և նրանից ձեռք է բերել Ուլուբեկյան Մելիքբեկը՝ մելիք-Շահնազար Ա-ի եղբայր Ատիբեկի որդին[159]։

Համեմատաբար ավելի շատ տեղեկություններ են պահպանվել կրտսեր Հովհաննեսի կամ Հովհաննիսիկ Տարեցու մասին։ Բավական ինքնակենսագրական նյութ կա նրա ժամանակագրության հետ գրված հիշատակարաններում։ Մի վիմական ինքնագիր արձանագրություն պատմում է նրա շինարարական գործն այն դառն ու դաժան ժամանակում... Եվ այս տեղեկություններից դժվար չէ կազմել Հովհաննիսիկի կյանքի ու գործի ուրվագիծը։

Ծնվել է 1560 թ., Տարա իշխանական տանը՝ Ջհանշահանց գերդաստանում։ Նրա պապի հայրն էր Ջհանշահը՝ Ջհանշահ Ա-ի թոռնորդին։ Կրտսեր Ջհանշահի որդիներն էին՝ Դավիթ երեցը (կինը՝ Շամամ խաթուն), Միրզաջանը և Հովհաննես վարդապետ Տարեցին։ Միրզաջանից ծնվեցին Մելքոնը (կինը՝ Փիանդ) և Յուղուրլուն։ Այս Մելքոնի ու Փիանդի զավակներն էին. ուստրերը՝ Հովհաննիսիկ Տարեցի, Թումա երեց, Միրզաբեկ, Ուլուխան, դստրերը՝ Փարի, Խանսուլթան, Նազլուխան։ Թումայից ծնվել էր Ռստակեսը, որ նվիրվեց եկեղեցուն, Միրզաբեկից՝ Աթանաս և Գրիգոր եպիսկոպոսները[160]։

Հովհաննիսիկի դաստիարակն է եղել նախ և առաջ իր պապի եղբայր Հովհաննես վարդապետը։ Եվ, անկասկած, նա էր, որ եղավ հոգևոր կյանքի լավագույն օրինակ ու խորհրդատու, ապա թե ոչ, Հովհաննիսիկն ստիպված չէր լինի ամբողջ կյանքում երախտագիտությամբ ու հիացմունքով խոսելու իր ավագ տոհմակցի մասին։ «Բազում աշխատանք ունի ի վերա իմ»,— ավագ Հովհաննեսի

159 «Ես Մելիքբէկս գնեցի զսուրբ յԱւետարանս ի Տարեցի Յոհաննէս վարդապետէն ԵՌ (5000) դեկան ի թվականութեանս հայոց ՌԻԹ (1580) ի դառն և ի նեղ ժամանակիս, զի ամենայն կողմանց արհաւիրք է...» (ձեռ. № 6879, էջ 367ա)։

160 Տոհմագրական այս տեղեկությունները կան Հովհաննիսիկ Տարեցու՝ արդեն վկայակոչված հիշատակարանում, իսկ վերջին զույգ եպիսկոպոսների մասին՝ տե՛ս Սմբատեանց, էջ 628 (Հովհաննիսիկի շինարարական արձանագրությունը), նաև՝ «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 369, 371։

մասին շնորհակալությամբ գրել է կրտսերը։ Հովհաննիսիկի մի հիշատակարանը հաղորդում է նաև հետևյալ մանրամասները. «Ես Յոհաննէս անպիտան թափառ և յետնեալս ամենայն բանասիրաց, ի սուրբ ուխտէն Թադէի վանք կոչեցեալ, ի յերկրէն Ծարա, ի տանէն Սիսակայ, յաշակերտ մեծ բաբունապետին Ներսէսի Գնունեցոյն»[161]։ Ուրեմն Թադեի կամ Դադի վանքում ուսուցչապետ է եղել Ներսես Գնունեցին, և Հովհաննիսիկը նրան էլ է աշակերտել։

Կարևոր է նաև, որ Ծարեցի վարդապետը գիտակցում էր իր տոհմի Առանշահիկ ակունքը՝ «ի տանէն Սիսակայ»։

Հովհաննիսիկը մեծ տոհմակցից ժառանգել էր նրա գրասիրությունը և Դադի վանքի մատենադարանն էր հարստացնում՝ ինչպես նոր գրչագրեր ստեղծելով, այնպես էլ հներն ու մաշվածները նորոգելով։ Դեռևս 1588-ին նա հիշատակագրել է իր մի այսպիսի աշխատանքը. «Եւ ես տեսի զՍաղմոսի մեկնիչս և զԵրգ երգոցս հնացեալ բազում ժամանակաց և յոլով թուխտ պակասեալ, յանարժան ձեռովք իմ ծրեցի նօտրիկս և նորոգեցի ի վայելումն յանձին իմոյ և յիշատակ ինձ և կրկնակի ծնողացն իմոյ՝ հօրն իմ Մելքոնին և մօրն իմ Փիանդին...»[162]։

Հովհաննիսիկի գլխավորությամբ նորոգված մյուս ձեռագիրն էլ վերոհիշյալ Դատաստանագրքի մատյանն էր, որի վրա, ըստ երևույթին, ավելի մեծ աշխատանք է թափվել (Ալեքսանոս կրոնավորի աջակցությամբ՝ 1600 թ.), քանի որ նրա հետ կազմվել են նաև Հովհաննիսիկի ժամանակագրությունն ու Դադի վանքի քյոթուկի պատառիկը։

Կրտսեր Հովհաննեսի կատարած մյուս կարևոր աշխատանքը Դեղամա գավառում կառուցած Աստվածածին եկեղեցին է, միջոցառում, որ XVII դ. սկզբին, ավերածությունների ու պարբերական կեղեքումների պայմաններում, կապված պիտի լիներ մեծ զոհաբերության հետ։ Եկեղեցու շինարարությանը վերաբերող երկու արձանագրություն է պահպանվել, մեկը՝ միայն Հովհաննիսիկի անունից՝ այն մասին, թե «Ի թվ. ՌԿԷ (1618), ի թագաւորութեան Աբաս-շահին, պարոնութեան խան Սուլթանին, ի կաթողիկոսութեան Աղուանից տէր Յովհաննիսի... ես Յովհաննէս վարդապետ շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և կրկնակի ծնողաց իմոց»[163]։

161 Ձեռ. № 1121, էջ 271ա, բ։

162 Անդ։

163 «Սիսական», էջ 73, «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 369։

«Կրկնակի (երկու) ծնողաց իմոց»՝ Հովհաննիսիկ Ծարեցու սիրած խոսքն է, որ կա նաև նրա հիշատակարաններում։ Կարապետ եպիսկոպոսը հենց այս խոսքից էլ ենթադրում էր, որ արձանագրությունը Հովհաննիսիկ Ծարեցու ինքնագիրն է, և նա է եկեղեցու կառուցողը[164]։ Հետազոտողի ենթադրությունը հաստատվում է եկեղեցու շինարարությանը վերաբերող մյուս արձանագրությամբ, որի մեջ շինող Հովհաննեսը ներկայանում է նաև հայրանվամբ և տոհմաբանական ուրիշ տվյալներով. «...Ես Յովհաննէս վարդապետ՝ որդի Մելքոնին որդւոյ Միրզաջանին... (սրանից հետո խառնում է)... հանդերձ հարազատ եղբաւրորդւովք իմովք Աթանաս եպիսկոպոսիւ և Գրիգոր եպիսկոպոսիւ, յոյժ ջանիւ և մեծ յուսով և բազում փափագանաւք շինեցաք զՍուրբ Աստուածածինս բարեխաւս և փրկութիւն հոգւոց մերոց և ծնողաց իմոց՝ Մելքոնին և Փիանդին և բազմերախտ ուսուցանողին իմոյ Յովհաննէս բաբունապետին...»[165]։

Շինարարությանը մասնակցել են նաև նրա եղբորորդիներ Աթանաս և Գրիգոր եպիսկոպոսները։ Հիշենք, որ, ըստ Հովհաննիսիկի՝ քննության առնված հիշատակարանի, նա ունեցել է մի հոգևորական եղբայր Թումա անունով (որի որդին էր Ռստակես երեցը), մի եղբայր Ուլուխան անունով (որ կարճ է ապրել), և մի այլ եղբայր Միրզա [բեկ] անունով։ Կարելի է ենթադրել, որ Աթանասն ու Գրիգորը վերջինիս զավակներն են եղել։

Այս ամենը, սակայն, Հովհաննիսիկ Ծարեցուն բնութագրում են միայն որպես ժամանակի եռանդուն ու գրասեր հոգևոր գործչի և ոչ ավելին։ Նրան իր ժամանակակիցների ու հետագա սերունդների աչքում բարձրացնողը այն ժամանակագրությունն է, որի մասին խոսք եղավ վերը։ Դա գրական-պատմագիտական անպաճույճ մի ստեղծագործություն է, որն առանց ավելորդ ոճական զարդարանքի, կենդանի ու ճշմարիտ գույներով ներկայացնում է Հյուսիս-արևելյան Հայաստանի՝ շուրջ երեսուն տարվա անցուդարձները։ Ժամանակագրությունն սկսվում է 1572 թվականից, երբ հեղինակը 12 տարեկան էր և կարող էր ոչ միայն տեսնել դեպքերը, հիշել ու քննել նրանց մանրամասները, այլև գրի առնել,— և չընդմիջվելով՝ շարունակվում է մինչև 1600 թվականը։ Չի բացառված,

164 «Դոփյանք», էջ 80։

165 «Սիսական», էջ 74, «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 371։

որ Հովհաննիսիկը 1600-ին՝ ժամանակագրությունը հյուսելիս, ձեռքի տակ ունեցած լիներ սեփական գրառումներ նախընթաց քսանութ տարիների անցուդարձերի մասին։

Այս ժամանակագրության մեջ արժանահավատ մանրամասնություններով պատմվում են ժամանակի այնպիսի կարևոր դեպքերը, ինչպես թուրք զորավար Մուստաֆա Լալա-փաշայի 1578 թ. ավերիչ արշավանքն Անդրկովկասում, այս արշավանքին հաջորդած սովն ու մահտարաժամները, նույն դարի 80—90-ական թվականներին վրաց ժողովրդի մղած հերոսական պայքարն օտար բռնակալների դեմ, պարսից Խուդաբանդա շահի, ապա և շահ-Աբասի քաղաքականությունը Հայաստանի հարցում և Պարսից մրցակցությունը Օսմանյան թուրքերի հետ՝ Անդրկովկասին տիրելու համար։

Հիրավի ժամանակագրության ամենաուժեղ հատվածը սովի նկարագրությունն է։ Այստեղ տարեգրի լեզուն առավելագույնս ճկուն է ու պերճախոս։ Նկարագրությունն այնքան է կոնկրետ ու տեսանելի, որ ընթերցողը վերապրում է թուրք ջարդարարների գալ-գնալուց հետո երկրում տիրական դարձած մղձավանջի ամբողջ ահավորությունը։ Թուրքերը չբավարարվեցին 1578 թ. անաբողջ գազրույն ասպատակությամբ, երբ կործանել էին գյուղերն ու քաղաքները,վանքերի քարերը տարել, որպեսզի բերդեր կանգնեցնեն, երբ բնակչության մեծ մասը սրի էր քաշված կամ գերեվարված, իսկ մնացյալը՝ քաղցի ու զրկանքի մեջ. «երանի՜ տային մեռելոցն և ո՜չ այս կենդանեացս»։ Թուրք արյունարբու զորապետներից մեկը՝ Օսման Յուզդեմիրը, մի քանի տարի անց ժողովում է կովկասյան ավարառու լեռնականներին, անցնում «այս կոյս Կուր գետոյն... Եւ ինքեանք սփռեալ ընդ դաշտս և ընդ լերինս՝ զԳանձայ և զԲարտայ, զՋարաբերդ և զԽաչենք, զՎարանդայ և զԴիզակ, ի Ջարեքի կոչեցեալ գետոյն մինչև ի գետն Յերասխ ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին և զանհաճոյսն սրով սպանին և զկնի Դ (4) և Ե (5) աւուրց դարձան ի տեղի իւրեանց»[166]։ Ուրեմն, ավարառությունն ու կոտորածը կատարվել են հիմնականում հին Հայոց արևելից կողմանց տարածքի վրա՝ Գանձակից մինչև Երասխ գետը, և այս անգամ արյան մղձավանջից դուրս են մնացել միայն Տարից արևմուտք ընկած գավառները։

Պատմիչի վկայությամբ՝ հենց նույն՝ 1578 թ. «ընդ երկուց

166 Մժ, Բ, էջ 242։

պատժոյս՝ մահուն և սրոյն, եղև ահագին և անասելի սով սաստիկ». այնքան դժնդակ, որ մարդիկ սնունդ հայթայթելիս այլևս չէին տարբերվում գազաններից։ Իրենց մեջ դեռևս ուժ ունեցողները, ավերված բնակավայրերից տարագիր, ուտում էին՝ ինչ պատահեր, երբեմն էլ հարձակվում էին անպաշտպան անասունների վրա, միսը հում-հում ուտում։ «Իսկ անզօրքն ի նոցանէ ի կոյսս յաղբից անասնոց և ձիոց յորոնեալ գտանէին հատս գարոյ և ուտէին. այլ և ոչ գիտելով սրբոյ և անսրբոյ ի հերուն հետէ և ի վաղ ժամանակէ ի փողոցի յանկեալ ոսկերք վեր առեալ ի քարի եդեալ և քարիւ փոշի առնէին և ի բերանն իւրեանց արկանէին և մռընչէին. այլ և հնացեալ փոկ կաշէ և մաշեալ տրբեխ, ի բեկտոր ինչ խեցոյ ի յեփոցի եդեալ և առեալ ուտէին։ Վա՜յ տեսողութեանս, եղբարք։ Եւ իբրև եղեւ գարունն, սփռեցան յաղքատքն ի յերեսս դաշտաց, սևացեալ մարմնով, որպէս զերամակս յայծեաց և իբրև զչոլորիրս հօտից, ուտելով զբանջարս վայրի և զխոտս կանաչ և ոչ յագենային, քանզի կոչեցեալ էր յերկիր սով և զօրութիւն հացի բեկեալ ըստ մարգարէին։ Մանաւանդ յուռուցեալ ի գլխոցն մեռանէին՝ յոմանք ի տեղի յարօտիցն, որ ոչ կարէին դառնալ և յոմանք եկեալ ի գեղամիջի, ի տակս յորմոց և յանկիւնս տանց աւերուածոց մեռանէին։ Եւ թէ լիներ ոք երկիւղած յԱստուծոյ, առեալ ի դիակացն Թ (9) և Ժ (10) և այլ յաւելի ի վիհ ինչ կամ ի հոր արկեալ, հողն ի վերայ փըլուցեալ ծածկէր և թէ ոչ՝ մնայր անթաղ»[167]։ Տարածվում են լուրեր, թե այս կամ այն գյուղում քաղցից խելագար մարդիկ իրար միս են կերել։ Անթաղ դիակներ ուտելով՝ վայրենացել էին շները. «Վա՜յ ինձ՝ պատժապարտիս,— այս սարսափները նկարագրելուց հետո բացականչում է տարեգիրը,— զի մահուամբ և սրով և սովոյ կոտորեալ մարդկան մարմնոց գազանք այնքան կերեալ, մինչ զի տնասուն շունք վայրենացեալ՝ յարտաքոյ շինի զկենդանի մարդիք որսային։ Եւ գայլք ի ճանապարհի ևս և շինամիջի ի տուն մտեալ զմարդիք ի ննջման յարտաքս քարշէին և ուտէին...»[168]։

Այս բոլորը հավաստի ճշմարտություն են, քանի որ նույն դրժոխային տեսարաններն արտացոլված ենք գտնում նաև ուրիշ աղբյուրներում[169]։

Կողմնակի հիշատակարաններից նույնիսկ իմանում ենք այս

167 Մժ, Բ, էջ 243։

168 Մժ, Բ, էջ 244։

169 Տե՛ս Իսրայել երեցի հիշատակարանը՝ Մատենադարանի ձեռ. № 4173, էջ 95ա, Ալիշան, Այրարատ, էջ 300—301 ևն.։

աննախադեպ չարիքի տեսողությունը, որ, երևի, ընդարձակվել էր մահտարաժամի ու սրածությունների պատճառով։ Հիշատակագիրն ազնխարշ խոսքով կոծում է բոլոր նրանց, որոնք «այսմ Գ (3) տարիս մեռան՝ թէ ի սովոյ, թէ ի ցրտոյ, թէ սրոյ, թէ ի տարաժամ մահուանէ, որք պատուհասակոծ մահուամբ փոխեցան յաստեացս»[170]։

Հիշատակարանը գրվել է 1580 թ., Գեղամա գավառի կենտրոնում՝ Մեծ Մազրայում։ Հետևաբար, նրա արժանահավատ վկայությամբ՝ հիշյալ աղետը, սկսված լինելով Մուստաֆա Լալա-փաշայի 1578 թ. արշավանքով, տևել է մինչև 1580-ը ներառյալ՝ երեք տարի։

Կան լրացուցիչ տեղեկություններ այն մասին, որ պարսկա-օսմանյան պատերազմներն ու Հայաստանի ավերածությունը շարունակվել են նաև հետագա տարիներին, հատկապես 80-ական թվականներին։ Գեղամա գավառի երկրորդական տերերից մեկը, Գավառում (այժմ՝ Կամո) 1591-ին խաչքար է կանգնեցրել՝ հիշելով, որ «ի փոխում ղուզիլպաշին Դարվիժ ուսմանլիվին, որ Գաւառս ավիրեցաւ թվին ՌԼԱ (1582)»[171]։ Իսկ Դավիթ եպիսկոպոսը Գեղամա գավառից Բասեն փախչելուց հետո 1587 թ. պատմում է, որ Ֆարհատ փաշան Ստամբուլից եկել էր մեծ զորքով, նվաճել Երևանը։ Երևանի նախկին տեր Մահմետ խանը «լուաւ... զգալն փաշային... եհան երկիրն ամէն անողորմաբար և տարաւ հետ իւրն։ Ազգ այլազգեաց և քրիստոնէից էաք ի մէջ նոցա որպէս զգառինս ի մէջ գայլոց, յորժամ հասուցին յերկիրն Գեղամայ, սկսան թալանել և կողոպտել։ Բազումք փախան անդի և դարձան յետս և այլքն քշեցին մինչև Գանջայ...»[172]։

Հովհաննիսիկ Ծարեցու հաղորդած տեղեկությունները միանգամայն վստահելի են և ամեն անգամ հաստատվում են ինչպես ժամանակի հայ, այնպես էլ օտար աղբյուրներով։ Հեղինակը պատմել է միայն իր տեսածների կամ էլ լսած և ստուգածների մասին։ Իսկ այն, ինչ ստուգելու հնարավորություն չի ունեցել՝ հաղորդում է, անմիջապես ավելացնում, թե՝ «ոչ գիտեմ զյոճն գրել, վասն անտես լինելոյն մեր ի տեղեացն»[173]։

170 «Դոփյանք», էջ 197։

171 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 211, «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 63։

172 Սմբատ Տեր-Ավետիսյան, Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Ա, էջ 137։

173 Մժ, Բ, էջ 242։

Այս ամենին էլ եթե գումարենք հեղինակի խոսքի պատկերավորությունը, կտեսնենք, որ հանձին Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության՝ ունենք XVI դարի գրական ու պատմագիտական մի բարձրարժեք աշխատություն։

Հովհաննիսիկ Ծարեցու մահվան թվականը հայտնի չէ։ Վ. Հակոբյանը ենթադրում է, թե նա վախճանվել է 1621 թ. հետո, որովհետև այդ թվականը կրող մի կալվածագրում վկայողների շարքում իր կնիքն է դրել և «Յովհաննէս վարդապետ Ծայրեցին»[174]։ Իրավացի է հետազոտողը. Հովհաննիսիկ վարդապետը մահացել է 1621-ից հետո, սակայն, մեր կարծիքով՝ ոչ ուշ, քան 1623-ը, որովհետև այս թվականին նրան պատկանող (Մատենադարանի ձեռ. № 2776) ձեռագրի տիրոջ իրավունքով հանդես է գալիս իր եղբայր Թովմաս (Թումա երեց) վարդապետը[175], մի բան, որ չէր կարող լինել Հովհաննիսիկի կենդանությամբ։

Ուրեմն, Հովհաննիսիկ Ծարեցին մահացել է 1622 կամ 1623 թ.։

* * *

Առկա մատենագրական ու վիմագրական նյութերի հիման վրա կազմել ենք Ծարա տերերի տոհմացանկի՝ շուրջ երկու դարի հատվածը՝ սկսած 1400 թ. մինչև Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակները՝ XVII դարի սկիզբը։ Ավելորդ է ասել, որ տոհմացանկի այս հատվածում տեղավորել ենք բացառապես Ծարեցիներին, քանի որ XV դարի սկզբից Ծարն արդեն ինքնուրույն վարչական միավոր էր ներկայացնում և, ամենայն հավանականությամբ, նրա տերերը գերագահություն ունեին Վերին Խաչենի մյուս վարչական միավորումների վրա, մի հանգամանք, որ վերացավ մելիք-Շահնազար Ա-ի օրոք, որը շահ Աբաս Ա-ի հովանավորությամբ դարձավ ոչ միայն Վերին Խաչենի, այլև շրջակա գավառների հայ տերերի գահերեցը։

Մելիք-Շահնազարյան տոհմը.— Ծսայի կաթողիկոսի հաղորդած տոհմաբանական տեղեկության համաձայն՝ Շահանշահի թոռ

174 Մժ, Բ, էջ 238—239։ Հմմտ. Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Խ. վ. Դաղեան, Բ, էջ 24։

175 Ձեռ. № 2776, թ. 32բ. «Եւ յառաւել յիշեցէք զՔովմաս վարդապետս, որ եղբօրորդի վերոյ ծրեալ (երևի՝ ծրեալ.—Բ. Ու.) բաբունապետին Յոհանէսի... Գրեցաւ թվիս ՌՀԲ (1623), որ մեր խեղճ ազգաւքս էից շատ քոտորվեցան ի ձեռաց... անօրէն մահմատականաց ի երկրիս Գեղամա» (իրականում Թումա-Թովմա վարդապետը եղել է Հովհաննես բաբունապետի եղբոր թոռը և Հովհաննիսիկ Ծարեցու եղբայրը (տե՛ս ձեռ. 2776, էջ 266ա)։

Ուլուբեկից է սերվել Վերին Խաչենի մելիքական տոհմերից մեկը։ Հենց սկզբից ասենք, որ սա Մելիք-Շահնազարյանների նշանավոր տոհմն էր, որն էլ հետագայում իր հերթին պետք է ճյուղավորվեր՝ կարևոր դեր խաղալով XVII—XVIII դդ. Հյուսիս-արևելյան Հայաստանի կյանքում։

Մելիք-Շահնազարյան տոհմի քաղաքական պատմության հարցերը շատ են զբաղեցրել հետազոտողներին։ Նրանցով զբաղվել են նաև իրենք՝ Մելիք-Շահնազարյանները, մանավանդ XVIII դ. վերջում և XIX դ. առաջին կեսում, երբ տարբեր վայրերում դատեր էին վարում իրենց տոհմական իրավունքները վերականգնելու համար։ Սակայն դեռևս չեն պարզված մելիքության և նրա ճյուղերի տոհմաբանական հարցերը։ Եվ պատճառը, մեր կարծիքով, այն է, որ հետազոտողներից շատերը, աղբյուրագիտական տեղեկություններին հավասար չափով ուշադրության են առել նաև ժողովրդական ավանդությունները և հիշյալ տոհմի զարմիկների երևակայության մարզին վերաբերող ետնաստեղծ պատմությունները[176]։

Գեղարքունիքի ու Ծարա մելիքական տների տոհմաբանության ու բնագավառների հարցերը քննության է ենթարկել նաև Աշ. Հովհաննիսյանը։ Հետազոտողը ցույց է տվել, որ ակնհայտ թյուրիմացություններ կան ինչպես Կարապետ եպիսկոպոսի, այնպես էլ նրանից առաջ Ղևոնդ Ալիշանի կողմից կազմված Գեղամա ու Ծարա մելիքությունների տոհմաբանությունների մեջ։ Հետազոտողն աղբյուրների քննությամբ հաստատել է, որ ԺԶ—ԺԷ դարերի ընթացքում Գեղամա և Ծարա գավառներում մելիքական մի տուն չէր իշխում, այլ մի քանի տներ։ «Դրանցից մեկի՝ Մելիք-Շահնազարյանների իշխանության կենտրոնը Մեծ Մազրան էր, մյուսինը՝ Մելիք-Ուլուբեկյաններինը՝ Ծարը և Զոդը»[177]։ Համաձայնելով գիտնականի հետ այն հարցում, որ Վերին Խաչենի Դոփյան իշխանության տարածքը XVI—XVII դարերում զբաղված էր մի քանի մանր իշխանությունների կողմից, պիտի ավելացնենք, որ Զոդը (Սոդք)

176 Վերջին տեսակի ստեղծագործություններից է Մատենադարանի 7429 թվահամարի տակ պահպանվող «Վասն ծագման Մելիք-Շահնազարյան տոհմին» ձեռագիրը, ինչպես նաև փոքր տիրաժով հրապարակված այն ժողովածուն փաստաթղթերի, պաշտոնական և այլ գրություններ, որ, սկսած Լեոյից, հետազոտողներն օգտագործում են իբրև «Дело Шахназаровых» (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. III, էջ 501 ևն.)։

177 Աշ. Հովհաննիսյան, Գեղամա և Ծարա մելիքների տոհմը. «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921—1922, էջ 112։

և Մեծ Մազրան տարբեր իշխանությունների կենտրոններ չէին, և Մելիք-Շահնազարյաններն էին այդ կողմերի տերերը, Ուլուբեկյաններն էլ հենց իրենք՝ Մելիք-Շահնազարյաններն էին և ոչ թե Ծարա տերերը, որոնք իրականում Դոփյան Ջհանշահից սերված տոհմն էին ներկայացնում[178]։

Որ Մելիք-Շահնազարյան տոհմը սերված էր Դոփյան Ուլուբեկից, այդ գիտակցում էին նաև իրենք Մելիք-Շահնազարյանները։ Օրինակ, XVII դ. սկզբին Ոսկանապատցի Վարդան քահանան Մելիքբեկի որդի պարոնտեր Գրիգոր եպիսկոպոսի արյունակից նախորդներին է հիշում, և նրանց մեջ էր Ուլուբեկը (կինը՝ Ղուլաղա), որը նրա պապն է համարված[179]։ Մենք գիտենք, որ Գրիգոր եպիսկոպոսի անմիջական պապի անունը եղել է Միրզաջան (երբեմն կոչված Միրզա)[180]։ Նշանակում է՝ այստեղ պապ է ճանաչվում տոհմաճյուղի ակունք հանդիսացող նախնին։ Ուշագրավ է նաև, որ հետագայում Մելիք-Շահնազարյանների գերդաստաններում է գործածական եղել Ուլուբեկ անունը[181]։

Զմտնելով Մելիք-Շահնազարյան ճյուղի տոհմաբանական այլևայլ մանրամասների մեջ, ասենք, որ նրանց անմիջական նախնին է համարվել մի Աբով կամ Աստվածաբով, որն, իբր, պետք է ապրած լիներ XVI դ. առաջին կեսում[182]։

Այս թյուրիմացության համար աղբյուր է հանդիսացել Մաքենյաց վանքից ընդօրինակված անթվական մի արձանագրություն,

178 Աշ. Հովհաննիսյանն իր այս կարծիքը կրկնում է մի քանի անգամ. «Նույն (XVI դ.—Բ. Ու.) դարի կեսերին հիշվող Դոփյան Շահանշահի ժառանգ մելիք Ուլուբեկը, ըստ Բարխուտարյանցի չհերքված վկայության (թե՞ կարծիքի—Բ. Ու.) իշխում էր Ծար և Զոդ գավառների վրա» (նշվ. աշխ., էջ 110)։ Ճիշտն ասած, Մակար եպիսկոպոսն ինքն է իր իսկ կարծիքը հերքել՝ մի տեղ Ուլուբեկին մելիք կարգելով Ծար ու Սոդք գավառների վրա («Պատմություն Աղվանից», Ա, էջ 213), մի այլ տեղ էլ՝ «Գեղարքունյաց և Ծար գավառների վրա», կենտրոնն էլ՝ Մեծ Մազրա ավանը («Պատմություն Աղվանից», Բ, էջ 25)։ Չի կարելի կասկածել, որ Բարխուտարյանցն այնքան էլ պարզ չէր պատկերացնում հիշյալ իշխանական տոհմաճյուղերն ու նրանց բնագավառները, որքան էլ համոզկեր տոնով լիներ գրած իր կարծիքը։

179 «Բանբեր Հայաստանի գիտ. ինստիտուտի», Ա և Բ գիրք, էջ 112։

180 Ջալալեանց, Բ, էջ 121, Սմբատեանց, էջ 567, «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 80, 125։

181 Ուլուբեկ էր կոչվում, օրինակ, Մելիքբեկի թոռ մելիք-Բալասանբեկի որդիներից մեկը։

182 «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 291։

որի մեջ Մելիք Մելիքբեկը հանդես է գալիս որպես «որդի մեծի պարոն Ածապօին, իշխող տանս Գեղամա»[183]։

Անմիջապես ասենք, որ մելիք-Շահնազար Ա-ի հայր և XVI դ. առաջին կեսում Գեղամա գավառում իշխած Մելիքբեկի հոր անունը եղել է ոչ թե Աբով կամ Աստվածաբով, այլ Միրզաջան կամ Միրզա[184]։ Իսկ «Մելիքբեկ՝ որդի Աստուածապովի» հետագայի իշխողներից է, հետևաբար, ինչպես Մելիքբեկին, այնպես էլ նրա հայր Աբով-Աստվածաբովին վերաբերող հիշատակությունները պիտի փնտրել հետագա ժամանակներին վերաբերող աղբյուրներում։ Դրա համար բանալի կարող է ծառայել Կարապետ եպիսկոպոսի գրքի հավելվածում հրապարակված մի հիշատակարան, որի լուսանցքում գրված է եղել. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոն Շահնազարին զնորաբողբոջ թոռունքն՝ զպարոն Ղարայգողն, զպարոն Ածապովն (այսինքն՝ Աստուածապովն—Բ. Ու.), ազիզ, սիրելի, խելոք զպարոն Մանուչարն...»[185]։

Մելիք-Շահնազարի Աստուածապով անունով թոռան մասին խոսում է նաև 1606 թ. գրված այն մեծ հիշատակարանը, որի մեջ ներկայացվում էր մելիք-Շահնազար Ա-ի կյանքը և շահ-Աբասի գալուստը Սոդք։ Այնտեղ հիշատակագիրը խնդրում է հիշել «Մելիք-Շահնազարի թոռանցն՝ պարոն Աստուածապովին, Մանուչարին, Ղարագաւզին»։ Անշուշտ այս Աբովին կամ Աստվածաբովին է վերաբերում նաև Պարսից շահի ֆարմանի մի ակնարկը. «...Մելիք Ասապովն՝ մելիք Քյամալի որդի նահանգին Մազրայի, հայտնեալ էր նորին բարձրութեան իշխանաց իշխանին Երևանայ, թե նեալ էր նորին բարձրութեան իշխանաց իշխանին Երևանայ, թե Ղանղուլեղդարայն անվանեալ գյուղն ի հիշեալ նահանգին իր գընեալ և տիրապետեալ կալվածքն է...»[186]։

Այս վավերաթուղթը գրվել է 1684 թ.[187]։

Մելիք-Շահնազար Ա-ի թոռ (Քամալ-բեկի որդի) Աստվածա-

183 Սմբատեանց, էջ 571, Ջալալեանց, Բ, էջ 118, Շահխաթունեանց, Բ, էջ 252—253 (բոլորն էլ վրիպակներով)։ Ճիշտն արտագրել է Ս. Բարխուդարյանը («Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 291)։

184 «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 80, 125։

185 «Դոփյանք», էջ 191։

186 Սմբատեանց, էջ 791, հմմտ. Լեո, Հայոց պատմություն, հատ. III, էջ 499, ծան. 5։

187 Անդ, էջ 788—789։

Մելիք-Շահնազարյան տոհմի մասին պահպանված վիմագրերն այստեղ նշված թվականների հետ համերաշխ չեն, սակայն բոլոր դեպքերում միշտ էլ խոսքը վերաբերում է XVII դարին։

թովին վերաբերող հիշատակություններ կան միայն XVII դ. առաջին կեսից[188]։

Հիշված բոլոր աղբյուրներում Աստվածաբովը որդին է Քամալ-բեկի։ Իսկ այլ աղբյուրներից հայտնի է, որ Քամալ-բեկը մելիք-Շահնազար Ա-ի որդին է եղել և Պարսից շահ Սեֆու ֆարմանով՝ Սոդքի իշխանության գլուխ է անցել ավագ եղբայր Յավրի-բեկի մահից հետո՝ 1641 թ.[189]։

Այսքանից պետք է եզրակացնել, որ հետազոտողների կողմից թյուրիմացաբար մելիք-Շահնազար Ա-ի պապ համարված Աստվածաբովը կամ մելիք-Աբովը իրականում մելիք-Շահնազար Ա-ի թոռն է եղել և Սոդքում իշխել է XVII դարի կեսին։ Այստեղից սկսած արդեն հավաստի է Մեսրովբ Սմբատյանցի գծած տոհմաբանությունը. «Յետ մելիք Ասապովին (Աստուածաբովին—Բ. Ու.) յաջորդէ իշխանութիւն մելիքութեան գաւառին Գեղարքունւոյ Մելիք-բէգն երկրորդն, ապա Շահնազարն երկրորդ... յետ նորա Մելիք-բէգն երրորդ՝ որդի երկրորդ Շահնազարի...»[190]։

Ուրեմն, XVI դ. սկզբին Գեղամա գավառի և Սոդքի տերն է եղել Միրզաջան իշխան Ուլուբեկյանը, որի մասին միայն կցկտուր վիմագրական տեղեկություններ կան։ 1502 թ. (ՋՄԱ) խաչ են կանգնեցրել Մելիքսեթ եպիսկոպոսի համար՝ նշելով, որ նա է՝ «որդի Միրզին՝ Գեղարքունւոյ իշխանին»[191]։ Նույն Մելիքսեթը 1522 թ. (ՋՀԱ) ինքն է խաչ կանգնեցրել՝ ներկայանալով որպես «որդի պարոն Միրզաջանին, եղբար պարոն Մելիքբեկին»[192]։

Հայտնի չէ Միրզաջանի մահվան տարին։ Սակայն եթե 1522 թ. արձանագրության մեջ որդին է հիշվում որպես պարոն, և հիշողն էլ եղբայրն է՝ գավառի հոգևոր առաջնորդը, կնշանակի՝ Մելիքբեկն էր իշխանության գլուխ կանգնած։

Միրզաջանը որդիներ շատ է ունեցել։ Նրանց մասին կան ինչպես ձեռագիր, այնպես էլ վիմագրական բազմաթիվ տեղեկություններ։ Նրանցից հայտնի են Տրունի հոգևորականը, որի մահարձանի գիրն է. «Այս է հանգիստ Տրունի, որ էր որդի պարոն Միրզայճա-

188 Սմբատեանց, էջ 620։ «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 339։ «Նաչս քարեխաչ պարոն մէլիք Մէլիքբեկին՝ որդի պարոն մելիք Ածապովին, թոռ պարոն Քամալպէկին»։

189 Սմբատեանց, էջ 792։

190 Անդ։

191 Ջալալեանց, Բ, էջ 121, Սմբատեանց, էջ 567։

192 «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 80։

նին, եղբար պարոն Մելիքպէկին, փոխեցաւ ի Քս նորին ՋՂ (1541) թվին»[193], Աղաբեկը՝ Գրիգորիս եպիսկոպոսի հորեղբայր[194], Մելիքսեթ եպիսկոպոսը, որի կյանքի ու գործի մասին պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ, Մելիքբեկ իշխանը և էլի մի քանի հոգևորական ու աշխարհիկ իշխանազուններ։

Մելիքբեկը XVI դարի կեսերին է իշխանավարել, քանի որ 1580 թ. նրա որդի մելիք-Շահնազար Ա-ն իշխանաց իշխան էր, և սխալվում են այն գիտնականները, որոնք կարծում են, թե Մելիքբեկն ապրել և իշխանությունը վարել է մինչև XVI դ. վերջը։ Հավանաբար, թյուրիմացության աղբյուր են դարձել Պարսից շահ Թահմազի 1588 թ. գրած մի հրովարտակը, որով վավերացվել է Մելիքբեկի իշխանությունը «ի նահանգի ծովակին Գեօգչայի»[195] և մի արձանագրություն, որը պատմում է, թե «թվին ՌՃԻԷ (1678) ...պարոն մելիք-Շահնազարս, Մայիլպէկս, Տաթլուպէկս, Միրզապէկս, Մելքումպէկս, մայր մեր Խանում աղէս կանգնեցաք զխաչս բարեխաւս հօրն մերոյ մէլիք Մէլիքպէկին»[196]։

Արձանագրության ընդօրինակողները, չվստահելով քանդակող գրչին, թվականից ջնջել են Ճ (100)-ը, և դարձրել 1578 թվական, որը, իբր, պետք է վերաբերեր Միրզաջանի որդի Մելիքբեկին։ Մինչդեռ բավական է ստուգել Մելիք-բեկի կնոջ անունը, որ Խաթունաղա է եղել[197], իսկ այստեղ Խանումաղա է, ապա նայել մելիք-Շահնազարին վերաբերող հիշատակարանները, որոնցում այս արձանագրության մեջ հանդես եկող եղբայրներից ոչ մեկի անունը չկա, որպեսզի հասկանալի դառնա, որ հիշյալ արձանագրությունը վերաբերում է ոչ թե մելիք-Շահնազար Ա-ին, այլ նրա թոռնորդի Շահնազարին ու սրա հայր Մելիքբեկին, հետևապես և չի կարելի արձանագրության թվականը համարել սխալ։

Մելիքբեկի շուրջն ստեղծված թյուրիմացություններից է նաև նրա և 1580 թ. մի հիշատակարանում հիշվող Մելիքբեկի նույնացումը[198]։ Մինչդեռ այս Մելիքբեկը, որ Հովհաննես Ծարեցուց գրված Ավետարանում է թողել իր հիշատակարանը, ոչ թե իշխանն է, այլ նրա թոռը՝ վաղամեռ Ատիբեկի որդի Մելիքբեկը[199]։

Այսպիսով, պարզվում է, որ Ուլուբեկյան Միրզաջանի որդի Մելիքբեկը մահացել է մինչև 1580 թվականը, և այս ժամանակից արդեն երկրամասի իշխանն է եղել նրա որդի մելիք-Շահնազարը։

Մելիք-Շահնազար Ա.— Սողքի և Գեղամա այս նշանավոր տիրակալի իշխանապետության սկիզբը եղել է ավելի վաղ, քան վերը նշված 1580 թվականն է։ Նրա իշխանության մասին հիշատակություն ունենք 1575-ից։ Ահա այդ թվականը պարունակող հիշատակարանը. «Արդ ի թվականին ՌԻԴ (1575) վասն ծովացեալ մեղաց մերոց եղև աստուածասաստ բարկութիւն. զի սով էր, մահ էր, սրածութիւն և հարկապահանջութիւն ամենայն տեղիս և արհաւիրք։ Այսպիսի ամի գովելի մելիք-Շահնազարն և բարի ամուսին Ֆախրի ջահանն, որ իբրև զմայր և զմայր այցելուն մեզ կերակրաւք և ըմպելովք։ Դարձեալ յիշեցէք զպարոնաց պարոնն և զիշխանաց իշխանն մելիք-Շահնազարն և զմայր իւր զպարոն Մելիքբէկն և զմայր իւր պարոն զխաթունաղէն (արտագրված՝ զխաթունաշէն), և զկողակից իւր զպարոն Ֆախրի ջահանն, զսիրասուն որդիքն իւր զՀախնազար բէկն, զՅիսայ բէկն, զԴիլանչի բէկն, զՔամալ բէկն, զԱւրի բէկն (արտագրված՝ զԱղրի բէկն— Բ. Ու.) և զնիազ բէկն և զդուստրն իւր Խաթունաղէն և զթոռն նազադին... և փոխեցեալ որդին առ Քրիստոս զպարոն տէր Յովհաննէսն, և Շիրին բաջին, Ջաւահիրն...»[200]։

Աղբյուրների վկայությամբ՝ մելիք-Շահնազարը վայելել է Պարսից արքունիքի հովանավորությունը, իսկ օսմանցիների ասպատակություններից նա կարողանում էր գավառը փրկել շնորհիվ իր ճկուն քաղաքականության։ Հիրավի, Շահնազարի այս քաղաքականությանը պիտի վերագրել, որ լեկզիների՝ վերը հիշված անողորմ ավարառությունններից ու կոտորածներից ևս փրկվեց նրա

Այս և նախորդ արձանագրությունների թվականների մեջ, հավանաբար, թյուրիմացություն կա, քանի որ 1522 թ. կենդանի Մելիքսեթի հիշատակին 1502 թվ չէին կարող խաչքար կանգնեցրած լինել։

193 «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 338։

194 Սմբատեանց, էջ 625։

195 Սմբատեանց, էջ 784։

196 Ջալալեանց, Բ, էջ 111, Սմբատեանց, էջ 610, «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 339։

197 Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 2680, էջ 282բ, 283ա, նաև՝ մելիք-Շահնազար Ա-ի 1606-ին գրած մեծ հիշատակարանը, որի մասին խոսք կլինի քիչ հետո։

198 Մատենադարանի ձեռ. № 6879։

Աշ. Հովհաննիսյանը նշված աշխ. մեջ հանդես եկող Մելիքբեկին ու Գեղարքունվո տեր Մելիքբեկին նույնացնում էր (տե՛ս նրա հիշված աշխատությունը)։

199 Տե՛ս «Բանբեր Հայ. գիտ. ինստ-ի», գիրք Ա և Բ, էջ 113։

200 Սմբատեանց, էջ 809։

Խաչիկ վրդ. Դաղյանի ձեռագրաց ցուցակում ևս 1581-ին գրված մի հիշատակարանում գրիչը հիշում է «յիշխանութեան տեղոյս («ի երկիրս Գեղամայ, և ի գիւղս, որ կոչի Մազրա») պարոն Շահնազարին» (Թոփճեան, Բ, էջ 32)։

տիրությիր։ Եվ, այսուամենայնիվ, նա չկարողացավ արյան ու ավերի անծայր ծովում իր գավառը զերծ պահել ավերածություններից։ 1603 թ., երբ պարսից զորքերը ետ էին քաշվել Հյուսիս-արևելյան Հայաստանից, թուրք ասպատակիչները փորձեցին պարսից ոխը հանել Դեղամա հայությունից։ Եվ «յորժամ եղև դարուն, այս բարեմիտ և իմաստուն իշխանս պարոն մելիք-Շահնազարս, իմացաւ զոխս սրտից օտար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մտցուք յամուրս, զի մի՛ լիցուք կոխան այլազգացս», և ինքն գնաց ի Ծար և Տպէլ։ Եւ որք զհետ նորա գնացին, զերծան ի սրոյ և ի գերութենէ այլազգաց։ Եւ յետ սակաւ աւուրց ելին զօրքն Գանջայու ի վերայ Գեղամայ երկրիս, զոմանս կոտորեցին, և զոմանս գերեցուցին Գ(3) անգամ, թողին մեծ սուք և կսկիծ մեղ ամենեցուն...»[201]։

Այս դրությունը շատ կարճ է տևում։ Շուտով մելիք-Շահնազարը վերադառնում է Սոդք և այնպես բարեկարգում իր տիրությունները, որ մի երկու տարի հետո գրիչները դարձյալ փառաբանում են Գեղամա ու Սոդից գավառների համեմատաբար ապահով վիճակը, մելիք-Շահնազարի ու նրա հարազատների երախտիքները երկրամասի հոգևոր կյանքի զարգացման գործում։

Մելիք-Շահնազար Ա-ի մասին պահպանվել է մի կարևոր վավերագիր ևս, որը պատմում է ջալալիների ասպատակությունները, ավերածություններն ու անլուր չարագործությունները, ապա նրանց մուտքը Գեղամա երկիր, ուր և թուրք ասպատակիչները լուրջ դիմադրության են հանդիպում մելիք-Շահնազարի ու նրա որդի Օրիբեկի (այլ աղբյուրներում՝ Յավրիբեկ) կողմից։ Հիշատակագիրը հետևյալ մանրամասնություններն է հաղորդում այդ կապակցությամբ. «Դարձեալ զօրքն տաճկաց որ ի Այրարատ, կամեցան գիշերագնաց լինել և յաւարի առնուլ զերկիրն Գեղամայ և կոտորել զորդիքն մելիք-Շահնազարին, զոր իմացեալ ծերն Շահնազար առաքեաց զորդին իւր զԱւրիբէկն... զօրօք ի վերայ նոցա, և կոտորեաց զնոսա մեծաւ քաջութեամբ. և տարեալ զգլուխս նոցա, եդ առաջի Պարսից արքային, յորմէ ուրախացաւ արքայն և ետ նմա իշխանութիւն՝ տիրել ի վերայ գաւառին իւրոյ։ Իսկ տաճկաց կրկին գրոհ տուեալ՝ գնացին ի վերայ Գեղամայ, յորմէ ոչ զանգիտեալ քրիստոնէից ետուն պատերազմ ընդ նոսա, բայց յաղթեցան և փախեան վասն ծովացեալ մեղաց մերոց։ Եւ մտին տաճիկքն ի երկիրն, բազում անմեղաց արիւն հեղին։ Եւ ո՞վ կարէ պատմել զչա[բի]ք, զոր նոքա գործեցին. ի յողն կանանց դնէին ծանր շալակ և յոչ տանել՝ ջլատէին և սպանէին»[202]։

Ձեռագիրը, ճիշտ է, XVII դարից է, սակայն, հավանաբար, գրված է մելիք-Շահնազարից հետո, և բացառված չէ, որ ջալալիների զլուխները տանելու կապակցությամբ մելիքական տիտղոսներ ստանալու հանգամանքը հիշատակագրի ստեղծագործական երևակայության արդյունքը լինի։ Ամեն պարագայի՝ ջալալիների դեմ խիզախ մարտ տալու և երկրորդ՝ անհաջող պաշտպանության հանգամանքներին չենք կարող չհավատալ, երբ Ա. Դավրիժեցին ևս խոսում է նույն իրողությունների մասին։

Մելիք-Շահնազարը մահացել է 1606 թ., շահ-Աբաս Ա-ի կազմակերպած հայակործան մեծ բռնագաղթից անմիջապես հետո։

Մելիք-Շահնազարի մահվան թվականը հաստատող հիմնական փաստն է նրա գերեզմանաքարի արձանագրությունը. «Այս է հանգիստ պարոն մելիք-Շահնազարին, որ էր սա տէր և իշխան երկրիս Գեղամայ, մեծաշուք և աստուածասէր իշխան էր սա։ Բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս թագաւորութեամբ շահ Աբասին թվին ՌՇԵ» (1606)[203]։

Այս տվյալը հաստատվում է նաև նույն 1606-ին մելիք-Շահնազարի մասին գրված մեծ հիշատակարանով, որի գրիչը նրան հիշում է որպես հանգուցյալի։

Կարապետ եպիսկոպոսն այս տարեթվի մասին երկար քննություններ կատարելով՝ հիմնականում հենված վերոհիշյալ արձանագրության մի սխալ արտագրության վրա[204], ենթադրում էր, թե մելիք-Շահնազարը մահացած պիտի լինի 1608-ին։ Հնարավոր է, որ հետազոտողին թյուրիմացության մեջ գցած լինի Առաքել Դավրիժեցու Պատմության հետևյալ ընդարձակ տեղեկությունը. «Եւ ելեալ շահն ի Թիֆլիսու գնաց ի գաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահաբասն իջևանեցաւ ի տան մե-

202 Մատենադարան, ձեռ. № 519, էջ 76բ—77ա։ Հմմտ. Առաքել Դաւրիժեցի, էջ 83—84, Մժ, Ա, էջ 184—185։

203 Ջալալեանց, Բ, էջ 111, «Սիսական», էջ 72, «Վիմական տարեգիր», էջ 181 ևն.։ «Դիվան հայ վիմագրության», Դ, էջ 342-ում՝ «թվին ՌՇԷ» (1608), որ սխալ է։

204 «Գեղարքունի», էջ 610. Մեսրովպ Սմբատյանցը ևս նշանակում է 1606 թ., սակայն տառային համազորը՝ ՌՇԷ, որ պետք է լիներ 1608։

201 Տե՛ս Սմբատ Տեր-Ավետիսյան, Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի, էջ 67—68։

լիք-Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն։ Եւ էր մելիք-Շահնազարս յազգէն հայոց և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին որպես վայելէ թագաւորի և էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի թագաւորին։ Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացուցեալ խիլայեաց և պարգևեաց նմա զիշխանութիւն մելիքութեան գաւառին և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա և եղբարց նորա։ Եւ հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա, զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան»[205]։

Խոսքը վերաբերում է շահ Աբասի 1606 թ. կատարած ռազմերթին, որը մանրամասն նկարագրված է Դավրիժեցու պատմության «Յաղագս առման քաղաքացն Գանջայոյ և Շամախւոյ» գլխում (ՌԾԵ—1606)[206]։ Շահ Աբասն առնում է նաև Թիֆլիսը, դաշն կնքում վրաց հետ, ապա գալիս Գեղամա երկիր, ընդունում այստեղի իշխանավորի շքեղ հյուրընկալությունը։

Դավրիժեցու պատմելով՝ մելիք-Շահնազարն էր հյուրընկալողը։ Մինչդեռ սա թյուրիմացություն է, որովհետև մեր ձեռքի տակ է տեղացի, անկասկած նաև ականատես հիշատակագրողի վկայությունը, որի համաձայն՝ շահ-Աբասին հյուրընկալողները Շահնազարի որդիներն էին՝ Յավրի-բեկը, Քամալ-բեկը և մյուսները։ «Եւ շահ Աբասը դարձեալ եկն ի երկիրն Գեղամայ,— պատմում է Դավիթ եպիսկոպոսը,— իջաւ ի Մազրա գեղս, և գնաց ի տունն պարոն մելիք-Շահնազարին։ Ապաղ շահն նստաւ գիշեր մի իւր մեծամեծ նախարարաւքն և արար խրախութիւն մեծ հետ պարոն մելիք-Շահնազարի որդոցն՝ Եաւրի-բէկին և Քամալ-բէկին և եղբարցն ամենեցուն, քահանայիւք և ազգականաւք հետն կերան և արբին։ Եւ շնորհեաց պարգևս և խիլաս տանն ամենեցուն՝ մեծի և փոքու...»[207]։

Պարզ է, որ հյուրընկալությանն ու կերուխումին մելիք Շահնազարը չկար, թե չէ, հիշատակարողը նրան թողած՝ որդիների անունը չէր տա։ Սրանից բացի էլ, Դավիթ եպիսկոպոսը 1606 թ. այս դեպքը նկարագրելիս շատ կոնկրետ հիշում է նաև մելիք-Շահնազարի մահվան տարին ու օրը. «յիշեցէք ի սբ աղօթս ձեր իշխանաց իշխան պարոն մելիք-Շահնազարն, որ այսմ ամի աւուրս Վարդաւառին[208] փոխեցաւ առ Քրիստոս...»[209]։

Ըստ երևույթին՝ Ա. Դավրիժեցին օգտվել է վկայակոչված հիշիտակարանից, սակայն ուշադրություն չի դարձրել այս մանրամասնությունների վրա, որոնք կարևոր էին մելիք-Շահնազարի մահվան թվականը պարզելու տեսակետից։

Հիշատակարանի ու Դավրիժեցու տեղեկությունների մեջ մի բան աներկբա է. շահ Աբասը թանկագին նվերներով պատվել է մելիք-Շահնազարի որդիներին, գավառի մելիքական իշխանության ժառանգական իրավունք տվել նրանց՝ այդ առթիվ գրելով «հաստատուն նոմոս» (հրովարտակ) և այն վավերացնելով արքայական կնիքով։ Բացառված չէ, որ Գեղամա (Սոդքի ու Գեղարքունիքի արևելյան մասի) երկրից բացի, շահն ուրիշ դաստակերտներ ու գյուղեր ևս նվիրած լիներ Շահնազարի որդիներին։

XVI դ. վերջում և XVII-ի սկզբում մելիք-Շահնազարի նախորդների ու հետնորդների մասին խոսող աղբյուրներն այդ գերդաստանը ներկայացնում են որպես նահապետական մի վիթխարի կազմակերպություն, որի ավագները գավառի ինքնիշխան տերերն էին, մյուս տղամարդիկ՝ բեկեր, որ նշանակում է, թե նրանք գլխավորում էին միայն իշխանության գործերը։ Կային նաև հոգևոր բազմաթիվ գործիչներ, որոնց ձեռքում էլ գտնվում էր գավառի եկեղեցու տնօրինությունը։

Հիշատակարանների ու վիմական արձանագրությունների հարուստ տվյալներից կազմել ենք Սոդքի այս իշխանական տան ճյուղագրությունը՝ սկսած Ուլուբեկից, որը բաժանվեց Դոփյան տնից, մինչև մելիք-Շահնազար Ա-ի զավակներն ու թոռները։

* * *

Մելիք-Շահնազարն իր տոհմաճյուղի այն ամենանշանավոր ներկայացուցիչն էր, որի անունով էլ հետագայում սկսեց կոչվել ամբողջ ճյուղը, թերևս նաև նրա մի նոր ոստը Կարկառ գետի հովտում՝ Վարանդայի Մելիք-Շահնազարյանք։ Փաստորեն մելիք-Շահնազար Ա-ի ժամանակից սկսած Սոդքում և առհասարակ Հայաստանի տարբեր նահանգերում ու գավառներում գործում էր այն

205 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, էջ 96—97։
206 Անդ, էջ 93։
207 Տե՛ս Սմբատ Տեր-Ավետիսյան, Յուցակ..., էջ 67—68։

208 Այսինքն՝ հուլիսի 27-ին։
209 Տե՛ս նույն հիշատակարանը։

նորորակ վարչակարգը, որ պատմությանը հայտնի է մելիքություն անունով։

Մեզ մնում է Գեղամա (Սոդքի) Մելիք-Շահնազարյան մելիքության հիմնադրության առիթով շոշափել նաև երկու հարց՝ ա) այս գավառի Մելիք-Շահնազարյան տոհմի իշխանության սահմանները, բ) առհասարակ մելիքական վարչակարգի հիմնադրությունը Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգներում։

Տեսանք, որ Մելիքբեկի ու նրա որդի մելիք-Շահնազար մեծի նստավայրն է եղել Սոդքի Մեծ-Մազրա ավանը[210]։ Իսկ ո՞ր սահմանների մեջ էին ընդգրկված նրանց տիրույթները։ Հետազոտողներն այս հարցին տարբեր պատասխաններ են տվել։ Կարապետ եպիսկոպոսը, որ գրել է այս տոհմաճյուղի պատմությունը, նատառնում է նրանց բնագավառները, կարծելով, թե այս ճյուղի տիրապետությունը տարածվում էր ինչպես Սոդքի, այնպես էլ ամբողջ Ծարի ու Գեղամա կամ Գեղարքունի գավառի վրա[211]։

Աշոտ Հովհաննիսյանը, նկատելով այս շփոթը, գտնում էր, որ Կարապետ եպիսկոպոսը սխալ կարծիք ունի Մելիք-Շահնազարյանների «բնագավառների մասին, որովհետև հիմնվում է Գեղամա և Ծարա մելիքների տոհմագրական սխալ տեսության վրա»[212]։

Կարապետ եպիսկոպոսի այս տոհմաբանական սխալի մասին արդեն խոսվել է։ Աշ. Հովհաննիսյանն, իր հերթին քննելով հիշատակարանների ու վիմագրական նյութերի ընձեռած տվյալները Մելիք-Շահնազարյանների բնագավառի մասին, կատարել է հետևյալ ընդհանրացումները. «...Մելիք-Շահնազարյանների իշխանության բնագավառը սահմանագծվում էր Սևանա լճի հարավ-արևմտյան (պիտի լինի՝ արևելյան—Բ. Ու.) անկյունը կազմող ափերով, ընդգրկելով հին Հայաստանի Սոթք գավառի խոշորագույն մասը...»[213]։ «Թվում է, սակայն, թե Մելիք-Շահնազարյանները տոհմային կալվածներ պիտի ունենային նաև Սևանա լճի հարավ-արևմտյան անկյունում»[214]։ Նույն առնչությամբ խոսելիս գիտնականը ենթադրել է նաև, որ մելիք-Շահնազար Ա-ը և նրա անմիջական նախորդները տիրում էին «Ծարա շրջանում, ինչպես նաև Սոթքի արևելյան մասերում...»[215]։

Լեոն Մելիք-Շահնազարյաններին ճանաչում էր միայն որպես Գեղարքունի գավառի տերերի[216]։

Սկզբից ևեթ ասենք, որ Ծարը Մելիք-Շահնազարյանների տիրապետության տակ դնելը թյուրիմացություն է, քանի որ, ինչպես տեսանք, այն Ջհանշեի հետնորդներինն էր, և սրանք որդոց որդի մնացին իրենց գավառի անփոփոխ տերերը։ Ինչ վերաբերում է Սոդքին ու Գեղամա կամ Գեղարքունի գավառներին, ապա այստեղ ևս Մելիք-Շահնազարյանների ճյուղը միահեծան տեր չէր։ Դեռ ավելին. նրանց իշխանությունը չէր տարածվում ամբողջ Գեղարքունիքի վրա, որը բռնում էր Սևանա լճի հարավային ափը։ Գեղարքունի գավառում, XVI դարի սկզբին և հետագայում, ինչպես վերը տեսանք, իշխում էր Դոփյան Աղբուղայից սերված մի փոքրիկ իշխանություն։ Բայց Տաթևի վանքում 1513 թ. կազմված վավերագրից պարզվում է, որ Աղբուղայաններին հարևանություն էին անում նաև ուրիշ աննշան մելիքություններ[217]։

Մելիք-Շահնազարյան ճյուղի բուն բնագավառը Սոդքն էր (Մազրա իշխանանիստն իր շրջակայքով) և Գեղարքունիքի միայն մի մասը։ Ճիշտ է, այս ճյուղի իշխանների ու մելիքների տիրույթները հիշելիս աղբյուրները սիրում են Մելիք-Շահնազարյաններին տեր համարել Գեղամա երկրի, սակայն սա ավելի շատ փառաբանության տուրք է և արտահայտությունն այն հանգամանքի, որ «Գեղամա երկիր» և «Գեղարքունիք» ասելով հաճախ հասկացվում էր Սևանի ավազանը առհասարակ և ոչ թե վարչական որևէ կոնկրետ միավոր[218]։ Համոզվելու համար, որ Մելիք-Շահնազարյանների բնագավառի մեջ, Սոդքից բացի, ընդգրկված էր Գեղամա գավառի միայն հարավ-արևելյան մասը, նայենք մի փաստա-

210 Տե՛ս մելիք-Շահնազար Ա-ի մեծ հիշատակարանը Թոփճեան, Յուցակ..., Բ, էջ 32։ «Դոփյանք», էջ 102 և հտգ., Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 112։

211 «Դոփյանք», էջ 1(9, 112, 116 և հտգ.։

212 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 105։

213 Անդ, էջ 109։

214 Անդ։

215 Անդ, էջ 110։

216 Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 714, 715, 748։

217 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 194—225։

218 Աշխարհագրական այս հասկացությունները ստույգ արտահայտություն չեն գտել նաև Առաքել Դավրիժեցու մոտ։ Պատմիչն ասում է. «Ելեալ շահն ի Թիֆլիսոյ գնաց ի գաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահաբասն իջևանեցաւ ի տան մելիք Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն» («Պատմութիւն», էջ 96)։ Այնպես է ստացվում, թե Մազրան Գեղամա գավառի մեջ է եղել, երբ իրականում այն Սոդքի կենտրոնն էր։

թուղթ՝ ներկայացված սույն տոհմաճյուղի պայազատ Միր Դավիթ-խան Մելիք-Շահնազարյանցի կողմից՝ իր նախնիների տոհմա-կան ժառանգությունը վերականգնելու նպատակով։ Այդ փաստա-թղթի համաձայն՝ Մելիք-Շահնազարին ու նրա ժառանգներին էին պատկանում Սևանա լճի հարավ-արևելյան ափերը, ավելի կոնկ-րետ՝ «ի գիւղէն Դրախտիկայ որ Թոխլիջայ անուանի (հյուսիսային ափին.—Բ. Ու.) մինչև ի գիւղն Մազրայ. և անտի մինչև ի Կոթ, որ Ադիեաման կոչի...»[219]։

Կոթը կամ Ադիամանը ներկայիս Մարտունու շրջանի Գետա-շեն գյուղն է, որից հարավ-արևմուտք տեղադրվում է Շողվագ ա-վանն իր հայտնի վանքով։ Իսկ մենք գիտենք, որ Շողվագը Դոփ-յաններին է պատկանել, նրանցից առաջ էլ՝ իրենց նախնիներին՝ սկսած Սահլ Սմբատյանից։ Եթե Սևանա լճի հարավային ափի կողմից Մելիք-Շահնազարյանների տիրույթների սահմանն էր Կոթ-Ադիամանը, նշանակում է՝ նրանք ձեռքից տվել էին նախնյաց ժառանգության մի մասը՝ Կոթից մինչև Շողվագ, գուցե նաև ավե-լին, և այս կորցրածի տերերն էին Աղբուղայանները։ Հետևապես՝ ստույգ կարելի է ասել, որ Մելիք-Շահնազարյանների իշխանու-թյունը տարածվում էր ամբողջ Սոդքի, ինչպես նաև Սևանա լճի հարավ-արևելյան ափի (Գեղարքունի գավառի արևելյան մասը) և հյուսիս-արևելյան ափի վրա։

Մելիքության կարգը.— «Մելիքություն» հասկացությունը և նրա հետ առնչվող այլ հարցեր բազմիցս քննության են առնվել հետազոտողների կողմից։ Դեռ Բաֆֆին էր իրավամբ գրում, թե Հյուսիս-արևելյան Հայաստանում հին նախարարական տների մը-նացորդները վերջին դարերում ջանում էին իրենց մեջ պահպանել հայ նախարարական հաստատության բեկորները և «երբեք չեն կորցրել իրանց ինքնավարության իրավունքները»[220]։

Հայ նախարարական տների այդ ժառանգներն իրենց կոչում էին մելիքներ։ «Մելիք» արաբական բառ է, որ նշանակում է իշ-խող, տիրակալ, նաև թագավոր[221]։

Այս տիտղոսը հայոց մեջ երևան է գալիս XVI դարի սկզբից, սակայն տարբերակված ձևով տիրական է դառնում XVI-ի վերջում և XVII-ի սկզբում։ Երևույթը բացատրվում է պարսկական տիրա-

219 «Գեղարքունի», էջ 793։

220 Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 166։

221 Հր. Աճառյանը սերված է համարում «mlk» «տիրել», «իշխել», ընդհանուր սեմական արմատից» (Հայ. արմատ. բառ., Դ, էջ 951)։

պետության հանգամանքով։ Պարսից «շահերի հաստատած կարգն էր, որ Ղարաբաղի հայ իշխանությունները ճանաչեն Պարսկաս-տանի բարձր վեհապետական իրավունքները և հաստատվեն շա-հերի կողմից, անվանվելով մելիք, իհարկե, ոչ թե այս բառի հին և իսկական իմաստով (թագավոր), այլ իբրև գավառական մաս-նավոր կառավարիչներ»[222]։ Սակայն աղբյուրները ցույց են տա-լիս, որ մելիքական իրավունքն սկզբնապես հաստատուն ու ան-փոփոխ մի երևույթ չէր, այլ փոփոխվում էր այս կամ այն շահի կողմից, ենթարկվելով նրա կամքին ու հայկական աշխարհի նը-կատմամբ ունեցած վերաբերմունքին։

«Շահական հրովարտակներով այսպես էր պատկերանում մե-լիքների անձնավորության մեջ կենտրոնացած հայ ազգային իշ-խանությունը. մելիքը տեր էր, տիրապետող, այն էլ ինքնագլուխ ու միահեծան, ոչ ոք իրավունք չուներ ընկերանալ նրա իշխանությա-նը։ Ամենքը պիտի հնազանդվեին մելիքին, կատարեին նրա հրա-մանները, որովհետև մելիքը բարձր իշխանության կողմից նշա-նակված իշխանավոր էր։ Իր կողմից մելիքը պարտավոր էր լինել արդարադատ, պիտի հոգ տաներ իր երկրի բարօրության մա-սին...»[223]։ Մելիքն ուներ զորք պահելու իրավունք, և այդ զորքի հրամանատարները հարյուրապետներ (յուզբաշիներ) էին կոչվում։

Ճիշտն ասած, համանման դերով էին հայտնի նաև նախորդ շրջանի հայ իշխանները քննության առած նահանգում։ Հիմա նո-րությունը հիմնականում այն էր, որ մելիքը պարտավոր էր կանո-նավոր կերպով հարկ վճարել շահին, և մեկ էլ՝ որ մելիքի իրա-վունքները պետք է վավերացվեին նույն այդ շահի կողմից։

Արդ, ե՞րբ է հիմնադրվել մելիքական իրավունքը կամ վար-չակարգը։ Ի՞նչ տվյալներ կան այս առթիվ։

Ֆ. Պողոսյանը Խամսայի մելիքների իրավունքների ու պար-տականությունների քննությանը նվիրված իր մի ուշագրավ հոդ-վածում այն միտքն է հայտնում, թե աղբյուրների տվյալների հա-մաձայն՝ XV դարում արդեն Ղարաբաղի իշխանները կոչվել են մելիքներ, իսկ իշխանությունները՝ մելիքություններ[224]։

Աղբյուրագիտական ի՞նչ տվյալներով է փաստարկվում այս տեսակետը։ Պողոսյանը, ի հաստատումն իր կարծիքի, էջատա-

222 Լեո, նշվ. աշխ., էջ 499։

223 Անդ, էջ 501—502։

224 Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականություն-ները. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, էջ 197։

կում հղում է՝ Մատենադարանի «Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 197»[225], Մ. Բարխուտարյանցի «Պատմություն Աղվանից»-ի հատ. II, էջ 213 և Հ. Փափազյանի հրատարակած պարսկերեն վավերագրերի ժողովածուի (1956 թ., պրակ 1) էջ 45։

Կարելի կլիներ համաձայնել հետազոտողի հետ, եթե նրա վկայակոչած աղբյուրների տվյալները հիմք տային նման վճռական տեսակետի համար։ Մինչդեռ Պողոսյանի վկայակոչած աղբյուրներից առաջինի խոսքը վերաբերում է XV դարին, սակայն ոչ մելիքության որևէ կոնկրետ փաստի, երկրորդը Մ. Բարխուտարյանցի անձնական տեսակետն է, որը չի հաստատված աղբյուրագիտական նյութերով[226], իսկ երրորդը պարունակում է Ջհանշահի կին Բեգում խաթունի 1462 թ. հրովարտակը Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսին իր պաշտոնում հաստատելու մասին[227]։ Ճիշտ է, Բեգում խաթունի հրովարտակում խոսքն ուղղված է ամիրներին, հաքիմներին, դարուղաներին, մելիքներին, քյադխուդաներին, արբաբներին և այլոց[228], սակայն այս դեռ չի նշանակում, թե այն ժամանակվա Ղարաբաղում կային ամիրներ ու մելիքներ, պաշտոնյաներ, որոնց անուններն իսկ հուշում են վարչական կոնկրետ հարաբերությունների գոյությունն։

Ֆ. Պողոսյանն իր կարծիքի օգտին մեջ է բերում նաև ձեռագիր մի տեղեկություն[229], որն իսկապես հաղորդում է, թե Ղարաբաղի մելիքները տեղի նախկին իշխաններն էին («մելիք, որ է իշխան»)։ Սակայն սա ևս չի վերաբերում XV դարին, որովհետև բուն ձեռագիրը Հովհաննես Օձնեցու պատմությունն է, և հեղինակն իր աղբյուրն է համարում Միք. Չամչյանի պատմությունը[230], որտեղ իրականում խոսքը գնում է Նադիր-շահի ժամանակների մասին՝ հետևյալ կապակցությամբ. «...ցիրուցան եղին Հայք ի սեփհական աշխարհէ իւրեանց, սնանկացան ի փարթամութեանց, նուազեցան ազգաւ, և իսպառ աղքատացաւ Հայաստան ի ճարտարաց, ի վաճառականաց, յուսմանց և ի գիտութեանց, և աւաղելին ամենեցուն՝ ի պերճաշուք նախարարաց ևս. միայն մնացին երևելի անուամբ ի մեջ ազգիս ի կոչմանս Մեծին Հայոց երեք տոհմականք ի նախարարաց հայոց, որոց պարսիկք ի ժամանակս Նատր շահի որոշեալ՝ անուանս եդին. առաջին՝ քալանթար, որ է ազգապետ կամ իշխապետ, երկրորդն՝ մելիք, որ է իշխան, երրորդն՝ իւզբաշի, որ է արիւրապետ և ստորին իշխան»[231]։

Ուրեմն, ըստ այս ձեռագրի տեղեկության՝ Նադիր-շահի օրոք (XVIII դ. առաջին կեսին) էր, որ պարսիկները որոշեցին հայ իշխաններին կոչել մելիքներ։

Սա ևս թյուրիմացություն է, որովհետև պատմությանը հայտնի է, որ «մելիք» տիտղոսը, ինչպես ասվեց, հայոց մեջ գործ էր ածվում XVI դարի սկզբից։ Սակայն երկար ժամանակ այն չէր արմատավորվում, որովհետև բացակայում էր օրինականացված փաստը. մեզ չի հասել և ոչ մի հրովարտակ, որ նվիրված լինի մելիքական իրավունքին՝ նախքան մելիք-Շահնազար Ա-ի հայր Մելիքբեկին մելիք հաստատելու շահական ֆարմանը՝ XVI դ. կեսից։

Մելիքության (այս բառի նեղ՝ «գավառապետ» իմաստով) իրավունքը գոյացել է պարսկա-օսմանյան պատերազմների վերջին շրջանում, պարսկական տիրապետության հաստատումով։ Ծարա իշխանական տան պատմությունը ցույց է տալիս, որ XVI դարի երկրորդ կեսում հայ ավատական այդ խոշոր ու ազդեցիկ տունը բաժան-բաժան էր եղել։ Ջհանշահի օրոք էր, որ իշխանությունը մանրատվեց, նույն տան յուրաքանչյուր ներկայացուցիչ իրեն կապեց մի փոքրիկ գավառի հետ և մեկուսացավ հարազատներից։ Պարսից արքունիքը խրախուսում էր այս տրոհումը և հենց ինքն էլ տրոհվողներին տալիս էր տեղական իշխանավորի արտոնություններ։ Նրան ձեռնտու էր մանրացված, չբռունցքվող հպատակ երկիրը, երբ ամեն մի գավառապետ իր հարևանի թշնամին էր և կարոտ օտար գերագույն տիրապետողի հովանավորության։ Այս-

---

225 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 197։ Սա Բեգում խաթունի հայտնի հրովարտակի ռուսերեն թարգմանությունն է, որտեղ «ամիրաներ»-ը դարձել է «խաներ»։

226 Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, Ա, էջ 213. հեղինակը Ջահան-շահին է վերագրում Ղարաբաղի մելիքությունների ստեղծման պատիվը, սակայն աղբյուր չի նշում։

227 Հ. Փափազյան, ՄՊվ, պրակ Ա, էջ 45։

228 Անդ։

229 Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքները, էջ 198։

230 Մատենադարանի ձեռ. № 4331, էջ 52, ձախ լուսանցքում նշված է Չամչյանի անունը։ Նույն այս տեղեկությունը Չամչյանից են քաղել նաև Ա. Երիցյանը (տե՛ս Մատենադարան, Ա. Երիցյանի դիվան, թղթ. 157, վավ. 1, թ. 8, էջ 1։ Այս թղթապանակում մեծադիր մի տետր է, 38 էջ՝ նվիրված Գանձասարի կաթողիկոսության պատմությանը) և Կարապետ եպիսկոպոսը (տե՛ս «Դոփյանք», էջ 167—168)։ Հմմտ. Ֆ. Պողոսյան, նշվ. հոդվածը, էջ 198, ծան. 4։

231 Ձեռ. № 4331, էջ 52 (ընդգծումը մերն է—Բ. Ու.)։ Ա. Երիցյանի դիվանի նշվ. վավ., թ. 8, էջ 1, «Դոփյանք», էջ 167—168։

պիսի երկրի վրա տիրելն անվտանգ էր ու հեշտ։ Եվ այս հանգամանքը նորություն էլ չէր. դեռ պարսիկները, V դարում, վերացնելով հայկական միասնական թագավորությունը, խրախուսում էին նախարարական տների անջատողական ձգտումները։ Արաբները նույն Հայաստան երկրում քանի՞-քանի՞ մանրիկ թագավորությունների ստեղծմանն օժանդակեցին՝ կանխելով ու խափանելով իսկական միացյալ թագավորության գոյացումը։

Ջհանշահը երկատեց նույնիսկ հայոց միասնական կաթողիկոսությունը՝ էջմիածնի կողքին հավակնոտ մի նվիրապետություն ստեղծելով նաև Աղթամարում։

Ջհանշահի ու նրա հետնորդների քաղաքականության շնորհիվ ստեղծված գավառական իշխանապետներն իրենց կոչում էին տարբեր ձևով՝ մելիք, իշխան, պարոն և այլն։

Վերը ցույց տրված մելիքական իրավունքի մասին հաստատուն և աներկբայելի տեղեկություններ ունենք արդեն XVI դարի վերջից և XVII-ի սկզբից՝ կապված Շահ-Աբաս Ա-ի անվան հետ։ Եվ իրավացի են այն հետազոտողները, որոնց կարծիքով՝ մելիքական վարչակարգն «ավելի կանոնավոր ձև ստացավ շահ Աբաս Մեծի օրերից»[232]։ Շահ-Աբասի հրովարտակներն էին, որ օրինականացրին հայ մելիքների իրավունքներն ու պարտականությունները[233]։ Պարսից երկրի տերը հպատակ ժողովուրդների մեջ առանձնակի ուշադրության էր արժանացնում հայերին՝ բարձր գնահատելով նրանց գործնական արժանիքները։ Այդ էր պատճառը, որ Պարսկաստանի ներսում առևտուրն ու արհեստները ծաղկեցնելու նպատակով Հայաստանի տարբեր նահանգների հարյուր հազարավոր հայերին բռնագաղթի ենթարկեց, ամայացնելով Արևելյան Հայաստանի բազմաթիվ գավառներ։

Շահ-Աբասը վկա էր եղել օսմանյան ճակատամարտերի մասնակից հայկական զորքերի խիզախությանը և համոզված էր, որ հայերը քաջ կռվողներ են և հարկ եղած դեպքում կարող են իրեն օգնել ամենուր։ Այդ էր պատճառը, որ խորամանկ քաղաքագետը Խաչենի, Գեղամա ու Հարևան մելիքներին իրավունք էր տալիս ու խրախուսում պահելու կանոնավոր զորք, որով նրանք պետք է

232 Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 166։

233 Մելիքների իրավունքների ու պարտականությունների մասին՝ տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 499—512, Ֆ. Պողոսյան, նշված հոդվածը, էջ 198—208։

պաշտպանեին գավառները և հարկ եղած դեպքում դառնային մասնակիցը Պարսից կողմից մղվելիք արշավանքների։

Շահ-Աբասը գիտեր նաև մելիքներին իրարից հեռու պահելու, նրանց միաձուլման հնարավորությունները խեղդելու քաղաքականությունը։ Առանձին-առանձին հովանավորում էր նրանց, «դաստիարակում» մրցակիցներ և ոչ դաշնակիցներ։ Երբեմն մելիք էր կարգում ոչ ազնվական անցյալի տեր մեկին՝ նվաճելով նրա համակրանքը և քաջ գիտակցելով, որ հարևան իշխանազունը չի դաշնակցի նրա հետ։ Զաքարիա Սարկավագը պատմում է, թե ինչպես 1606-ին Թիֆլիսից դառնալիս շահը Կայանո ձորում ծպտված ուզում էր ծանոթանալ իր հպատակների վիճակին և գտնաց Միափոր գյուղի հովիվ Աթայի տունը, զրուցեց նրա կնոջ հետ։ Հետո էլ իր մոտ կանչեց Աթային ու կնոջը. «Հրամայեց նոտարին գրել նոմոս, որ է բազամ մելիքութեան, և եդ նոցա յորդւոց յորդիս լինել մելիք այնմ գաւառի...»[234]։

Այսպիսով, Հյուսիս-արևելյան Հայաստանը թևակոխում էր իր պատմության մի նոր, ոչ պակաս հետաքրքիր շրջանը, որը գիտական առանձին ուսումնասիրության նյութ է։

234 Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. Ա, էջ 25—26։

ՑԱՆԿԵՐ*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբազա Վ. Ա. 65
Աբաղա՝ մոնղոլ խան 228, 237—239, 291, 289
Աբաջուր երեց 218
Աբաս՝ թագավոր Կարսի 89, 91, 99
Աբաս Կյուրիկյան՝ թագավոր Լոռու 141, 168, 209
Աբաս՝ որդի Սմբատ Խոստովանողի 66
Աբեղյան Մ. 26, 99—100, 102, 241—242
Աբգարյան Գ. 165
Աբեթե վարդապետ՝ գրիչ Ս. Հակոբա վանքի 360
Աբիխ Հ. 247
Աբով-Աստվածաբով՝ թոռ մելիք-Շահ-նազար Ա-ի 405—406
Աբովյան Խ. 12, 14
Աբրահամ (ավանդական) 119
Աբրահամ աբեղա՝ գրիչ Փարաջանց գյուղից 361
Աբրահամյան Ա. Գ. 26, 100, 350
Աբրահամ՝ որդի Դավիթ երեցի 391
Աբրայհամ աբեղա Հաղբուքի Շախկախի անապատից 362
Աբու-Բաքր՝ թամուրյան զորապետ 294
Աբու Խանիֆա ադ-Դինավարի 71
Աբուլ-Ֆարաջ Գրիգոր 9
Աբու Սայիդ՝ իլխան 289—290
Աբուքան՝ նվիրատու 301
Ագաթանգեղոս 36, 42
Աղիբեկ՝ որդի Պապաճանի 388
Ադոնց Նիկ. 36, 63—64, 66, 68, 70, 74, 78, 84, 90, 93, 99, 109, 125—126, 233
Ազարիա՝ շինող եկեղեցու 272
Ազիզբեկյաններ 340
Ազրեվարդ (Դոփյան) 331
Աթաբակ-Իվանե՝ որդի Հասան-Ջալալի 176, 180, 204, 206—209, 211, 217—219, 226—227, 240, 298, 300, 302—303, 317, 354, 371
Աթաբակ Բ՝ որդի Ջալալ Բ-ի 306—307
Աթաբակ Գ՝ որդի Ջալալ Գ-ի 313—314, 330
Աթա՝ Միափոր գյուղից 421
Աթանաս գրիչ Եղիշե առաքյալի վանքի 361
Աթանաս եպս. Դադի վանքի՝ թոռնորդի Հասանի և Դոփի 243, 263
Աթանաս եպս. Դադի վանքի՝ որդի Հասան Բ-ի 331, 344
Աթանաս եպս.՝ որդի Թումա երեցի 397, 399
Աթանաս կաթողիկոս Աղվանից 374
Ալեքսանդր թագավոր Կախեթի 365
Ալեքսանոս՝ կրոնավոր Դադի վանքի 393, 397
Ալթուն՝ որդի Վահրամ Բ Դոփյանի 332—334
Ալիզադե Ա. Ա. 29, 180
Ալիշան Ղ. վ. 8—9, 11, 25—26, 36, 39, 49, 72, 74, 96, 100, 110, 114, 123, 146, 151, 153, 173, 189, 198, 220, 224—225, 228, 241—242, 250, 253,

* Ցանկերը կազմել են Ա. Հ. Շաղգամյանը և Կ. Հ. Ղահրամանյանը։

258, 299, 316, 319, 321, 372, 380, 392, 400, 404
Ալ-Մուքադդասի 267
Ալպոյաճյան Ա. 26, 66, 325, 335
Ալփ-Արսլան 112
Ակինյան Ն. 8, 26, 99, 287
Ահմադ 348
Աղաբեկ՝ հորեղբայր Գրիգորիս եպս.-ի, Սոգքից 408
Աղաբեկ՝ որդի Հատիր-Մելիքի 351, 353—354
Աղայպակ տե՛ս Աղաբեկ՝ որդի Հատիր-Մելիքի
Աղայպասն տե՛ս Աղբաստ՝ որդի Հատիր-Մելիքի
Աղավնունի Մկրտիչ եպս. 35
Աղբաստ՝ որդի Հատիր-Մելիքի 351, 353—354
Աղբաստ՝ որդի Ջալալ Գ-ի 307, 310, 312, 314, 353, 356, 384
Աղբուղայանք 388—389, 415—416
Աղբուղա՝ որդի Հասան Գ Դոփյանի 309, 328, 329, 332—334, 384, 386—389
Աղբուղա՝ որդի Հասան Դ Դոփյանի 384, 415
Աղբուղա՝ որդի Վահրամ Զաքարյանի 186, 194, 231
Ազեկ՝ որդի Ջալալ Գ-ի 307, 309
Աճառյան Հր. 29, 66, 69, 79, 138, 140, 154, 158, 167, 172—173, 197, 209—210, 217—218, 220, 224, 264, 271, 275, 313, 348, 358, 373—374, 416
Ամիր՝ հայր Մաղաքիա կաթողիկոսի 375
Ամիր-Հասան՝ որդի Ջալալ Գ-ի 307, 309
Ամիր-Հասան Պռոշյան 242—243
Ամիր Հուսեյն 348
Ամիր ոմն (Հասան-Ջալալյան) 363
Այտին 298
Այտինեցիք, Այտինյաններ 334, 386
Այտին՝ որդի Աթաբակ Գ-ի 313—314, 384
Այտին՝ որդի Տուրսունի, թոռ Ծարա տեր Աղբուղայի 309, 314, 332—334, 336, 386, 388
Անանիա Մոկացի կաթողիկոս 81—84, 91, 99, 102
Աշոտ Երկաթ 102, 104—106
Աշոտ՝ որդի Ամիր-Հասան Պռոշյանի 243
Աշոտ՝ որդի Սմբատ Բագրատունի Խոստովանողի 66, 73, 75, 78—80, 88, 126, 133
Աշոտ՝ Սյունյաց իշխանազուն 107
Ասլուլի՝ որդի Գրիգոր-Համամի 77, 82
Ապուսեթ՝ որդի Ատրներսեհի, թոռ Սահակի 74, 82
Առանշահիկներ 55—56, 58—62, 64—66, 68—69, 77, 82, 84, 86—88, 95—96, 101, 109, 123, 130, 148, 178, 213, 288, 326, 351, 371, 398, 421—422
Առան՝ որդի Սիսակի, «ի տոհմէն Հայկայ» 31, 52—53, 56—59, 86
Առաքել Դավրիժեցի 365—369, 392, 411—412, 415
Առաքելյան Բ. Ն. 21, 29, 265, 268
Առաքելյան Վ. Դ. 68, 101
Առըստակես գրիչ 350
Առըստակես, Արիստակես (սուրբ) 351—352
Առմիհր Առանշահիկ 61, 66—68, 70
Առստամ՝ որդի Դավիթ երեցի 391
Ասիլ տե՛ս Ռամեկ
Ասլան ոմն 395
Ասլան շահ 122
Ասողիկ 44, 48, 79, 84, 89, 91—92, 99
Աստվածատուր խոջա 350
Ասփա՝ կին Գրիգոր Դոփյանի 154, 229, 241, 263—264, 316—319, 320—321, 325, 333
Ավագ՝ եպս. Դադի վանքի, Խաթրավանքի և Գետամիջի Աստվածածնի 327, 331—332, 343—345
Ավազյան 189
Ավագ՝ որդի աթաբեկ Իվանեի 128, 134, 185, 187, 190, 192, 194, 197—200, 229, 231
Ավանդուկ՝ որդի Թանկրիղովիի 388
Ավան Քոչիզցի 348
Ավդալբեգյան Թ. Հ. 265, 287
Ատիբեկ՝ եղբայր մելիք-Շահնազար Ա-ի 397, 409
Ատրներսեհ Ա՝ որդի Սահլի 62, 64, 68—69, 71, 73—75, 82
Ատրներսեհ Բ՝ թագավոր Վրաց 78, 91
Ատրներսեհ Բ՝ որդի Համամ-Գրիգորի 75, 78, 81—84, 101—102, 108
Ատրներսեհ՝ թոռ Սահակ-Սևադայի 101
Ատրներսեհ Կույր Բագրատունի 70
Ատրներսեհ Սյունի, ճիշտը՝ Ատրներսեհ Ա՝ որդի Սահլի
Արենդա Ա. Կ. 281
Արզու-խաթուն՝ կին Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի 145—149, 199, 235, 243, 246, 260, 271
Արիստակես կաթողիկոս Աղվանից՝ որդի Սայտունի 313, 375, 377
Արիստակես կաթողիկոս ամենայն հայոց 311
Արծրունիներ 68
Արղութին՝ որդի Զազայի 305, 307, 314
Արշակունիներ 38, 287, 383
Արղուն՝ մոնղոլ հարկահավաք 40, 191, 195—196, 203—205, 207, 217—219, 221, 238, 275—276, 330
Արուզ-խաթուն՝ առաջին կին Տարսայիճ Օրբելյանի 226—227
Արուզ-խաթուն՝ կին Հասան Մամիկոնյանի 272

Բաբայան Լ. Հ. 24, 161, 192, 198, 214, 265, 277, 281, 287, 299, 385
Բաբան, Բաբեկ 67, 71, 73
Բագարատ Գ թագավոր Վրաց 41, 93—94
Բագարատ Դ թագավոր Վրաց 94—95
Բագարատ թագավոր Աբխազաց 92
Բագրատ Բագրատունի՝ որդի Աշոտի 73
Բագրատունիներ հայոց 65, 68, 70, 72, 78, 88—89, 92, 100, 103, 124—126, 132, 141,351
Բագրատունիներ վրաց 126, 129
Բաթու խան 190—192, 196—197, 202—276
Բալազորի 44
Բալասանբեկ՝ որդի Մելիքբեկ Ուլուբեկյանի 405
Բակ Առանշահիկ՝ իշխան Արցախի 59
Բազդասարբեկ՝ որդի Հատիր-Մելիքի 356—357, 360—361, 370, 377
Բաղդասար միտրապոլիտ Հասան-Ջալալյանց 51—52, 55—60, 81—82, 84,
Բայանդուր, Պայայտուր 370
Բաշու-Ղուրչի՝ մոնղոլ զորապետ 193—195, 230, 232
Բասիլ եպս. 164
Բարե՝ մելիք Բրիտիս գյուղից 366
Բարթիկյան Հր. Մ. 50, 165
Բարխուդարյան Ս. Գ. 24, 28, 49, 63—64, 72, 74, 76—78, 96, 108—109, 140, 142, 152, 158—159, 208, 224, 227, 243, 271, 311, 381, 386—389, 391, 406, 415
Բարխուտարյանց Մ. վ. 11, 15—18, 31—33, 35, 42, 52—53, 63, 108, 115, 136, 147, 153—154, 159, 217, 232, 235, 242, 263—264, 301, 308—309, 318, 327, 344, 346, 355—357, 360, 362, 386, 396, 402, 405, 418
Բար Հեբրայոս տե՛ս Աբուլ-Ֆարաջ Գրիգոր
Բարտոլդ Վ. Վ. 65
Բարսեղ՝ որդի Աբաջուր երեցի 218
Բեգում-խաթուն՝ կին սուլթան Ջհանշահի 372—374, 418
Բեկնազարյանց Ապրես 53
Բեկում աղա՝ կին Ջալալ Դ-ի 370
Բեկում փաշա 348
Բերձենիշվիլի Ն. Ա. 127
Բիչար Դոփյան՝ որդի Վարդանի 323—326
Բորա-նոյին 173, 188—189, 207, 219
Բրոսսե Մ. 24, 93, 129, 174, 212
Բուլխեյր Խալիլ Ֆախր էդ-դինլու 348
Բուղա՝ արաբ զորապետ 63, 70—71, 195—196
Բուղա՝ մոնղոլ հարկահավաք 238
Բուսաիտ տե՛ս Աբու Սայիդ
Բուրդիկ Մարեշրեցի 96
Բուրթել Օրբելյան՝ որդի Լիպարիտի 325

Գագիկ Բագրատունի 89, 92—94
Գագիկ՝ թոռ Եսայի Աբու-Մուսեի 63—64
Գագիկ Սասանյան 52
Գալստյան Ա. Գ. 195, 207
Գան Կ. 42, 269
Գարեգին Ա. կաթողիկոս տե՛ս Հովսեփյան Գարեգին
Գեորգե՝ որդի Թամար թագուհու 260
Գեորգի՝ ամուսին Թամար թագուհու 131, 169
Գեորգի՝ թագավորազն Վրաց, որդի Դավթի, թոռ Լաշայի 207
Գեորգի Լաշա՝ թագավոր Վրաց, 40, 181, 183, 207
Գեորգի Պայծառ՝ թագավոր Վրաց 40
Գեորգ, Գերգ՝ որդի Հասանի և Դոփի 160, 169, 325
Գերգ՝ որդի Հայրապետի, Նվիրատու 301
Գեռաքարեցիներ 26, 85, 123, 383
Գիշխան՝ դուստր Ջալալ Դ-ի 370
Գոհար՝ մայր Ամիրի 363
Գոնցա՝ թագուհի Վրաց, կին Լաշայի 207
Գոնցա՝ կին Հասան Գ Դոփյանի 328, 333—334, 384
Գորդևսկի Վ. 193
Գրեն Ա. Ն. 65
Գրիգոր Ա՝ որդի Հասանի և Դոփի 43, 134, 154—156, 160, 169, 190, 194, 198, 226, 229—235, 241, 262, 264, 325, 346
Գրիգոր Անավարզեցի կաթողիկոս 241
Գրիգոր Ապիրատյան 111, 137
Գրիգոր Ատրներսեհյան, Գրիգոր-Համամ 45, 47, 66, 73—79, 81—88, 90, 100—101, 108—110, 138, 213
Գրիգոր Բ Դոփյան՝ թոռնորդի Հասանի և Դոփի 48, 215, 226, 229, 239—240, 263, 315—323, 325—327, 333
Գրիգոր Գեռաքարեցի՝ առաջնորդ Խաղավանքի 303
Գրիգոր(իս) եպս. Գանձասարի 138
Գրիգոր(իս) եպս. Դադի վանքի՝ Եղբայր Հասան Կրոնավորյալի 145, 149—150, 156
Գրիգոր եպս. Ծարա 241
Գրիգոր եպս.՝ որդի Թումա երեցի 397, 399
Գրիգոր(իս) եպս.՝ որդի Հասանի և Դոփի 160, 162, 164, 166, 168—169, 229, 252—255, 271, 375
Գրիգոր եպս.՝ որդի Մելիքբեկ Ուլուբեկյանի 405
Գրիգոր եպս. Սանահնի 261
Գրիգորիս եպս.՝ որդի Վասակ Նահատակի 151—152, 197, 202—203, 243, 286
Գրիգոր թագավորազն Բաղաց Կապանի 53, 137
Գրիգորիս՝ թոռ Գրիգոր Լուսավորչի 351—352, 371
Գրիգոր՝ թոռ Գրիգոր-Համամի 83—84, 89, 91—92, 98, 101, 103
Գրիգոր՝ թոռ Գրիգոր Մագիստրոսի 111
Գրիգոր(իս) կաթողիկոս Աղվանից՝ որդի Մեհրաբբեկի 346, 356, 358, 360—362, 370, 375—377
Գրիգորիկ՝ Սյունյաց իշխան, հայր Հասանի 110—111, 117
Գրիգոր կաթողիկոս Հասան-Ջալալյան 331, 344
Գրիգոր Լուսավորիչ 177, 220, 287, 352, 371
Գրիգոր Սերենց Խլաթեցի 304, 327—328
Գրիգոր կառուցող եկեղեցու 272
Գրիգոր Հեչուբ Խաչենեցի 85, 187, 197—201
Գրիգոր Հեչուբ՝ որդի Հասանի, Հոռոմոսի վանքի տեր 197
Գրիգոր հոգևորական՝ որդի Սակռի 158, 160, 271
Գրիգոր Մագիստրոս 111
Գրիգոր նկարիչ 317
Գրիգոր՝ որդի Հասան Գ Դոփյանի 328, 332—333, 343
Գրիգոր՝ որդի Հասան Կրոնավորյալի 145, 150, 154, 157, 169, 210, 233
Գրիգոր՝ որդի Սահակ-Սևադայի 106
Գրիգոր՝ որդի Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի 147—148, 150, 199
Գրիգոր՝ որդի Վահրամ Դոփյանի 329—330, 333—334, 344
Գրիգոր Պատմիչ 8, 40, 183—184, 187, 194, 202, 233, 237, 248, 269
Գրիգոր Սուփան 71—72
Գրիգոր՝ տեր Խոխանաբերդի (XII դ. I կես) 120—121
Գրիգոր Տղա Խաչենեցի տե՛ս Գրիգոր Հեչուբ Խաչենեցի
Գրիգոր Տղա կաթողիկոս 164—167, 170, 252
Գրիգոր Տուտեորդի 167—168, 170, 247, 250, 252—254
Գրիգորյան Գր. 96
Գույուկ՝ մոնղոլ մեծ խան 195—196
Գուրբուղա՝ թուրք բռնավոր 121
Գուրգեն Արևելից իշխան 83
Գուրգեն՝ որդի Աշոտ Ողորմածի 106
Գուրգեն Վրաց իշխանաց իշխան 84
Գևորգ Բ կաթողիկոս (Դառնեցի) 77, 80
Գևորգ եպս. Հաղբատի 261

Դադյան Խ. վ. 12, 18—19, 35, 43, 51, 73, 151, 159, 220, 308—309, 313, 360—362, 373, 375, 377, 382, 403, 409
Դահման շահ 356
Դավիթ Անհողին 93—95
Դավիթ գրիչ Գանձասարի 313
Դավիթ եպս. Ծարեցի 402, 412
Դավիթ երեց՝ որդի Ջհանշահ Ծարեցու 391, 394—395, 397
Դավիթ թագավոր Վրաց (X դ.) 91, 189
Դավիթ թագավոր Վրաց՝ Լաշայի որդին 207, 220, 226—227, 235
Դավիթ Ծարեցի 192, 202, 277, 280, 283—288
Դավիթ կաթողիկոս Աղվանից՝ որդի Բաղդասարբեկի 360—362, 370, 376
Դավիթ Մագիստրոս 84, 90
Դավիթ ոմն 155
Դավիթ հոգևորական՝ որդի Միրզաջանի (Ծար) 391
Դավիթ՝ որդի Վասակի (Վարագա վանքից) 172, 274
Դավիթ՝ որդի Սահակ Սևադայի 101
Դավիթ՝ որդի Տփղիսի ամիրա Քրդի 146, 235
Դավիթ վարդապետ Հաղբատի 164
Դավիթ Քոբայրեցի 252
Դավլաթ՝ դուստր Ղուկասի 388, 391
Դավլիանիձե Լ. 8
Դարա՝ սելջուկ իշխանավոր 120
Դեմետրե թագավոր Վրաց 226
Դեսում Ա 83, 120, 201
Դեսում Բ (թոռ Ա-ի) 197, 202
Դեսումյաններ 85, 123
Դիլանչիբեկ՝ որդի Մելիք-Շահնազար Ա-ի 469
Դիլ Շ. 178
Դինար՝ կին Իշխանակ թագավորի, դուստր Վրաց իշխանաց իշխան Գուրգենի 84
Դլենյաններ 85, 123
Դոլադա-նոյին 185
Դոնդուա Վ. Վ. 127
Դովլաթյար 348
Դոփ (Դաւփ, Դօփ), 12, 51, 141, 148, 150, 152, 154—157, 159—160, 162, 166, 168—169, 190, 198, 215, 219, 229, 231, 233—235, 242, 252, 255, 263, 271, 300, 317, 325—326, 346, 390, 396
Դոփյաններ, Դոփյան տոհմ 12, 27, 29, 35, 47, 49, 144, 152, 157, 161, 168, 229, 241, 298—300, 304, 312, 314, 316—317 321, 323—326, 328—330, 336—337, 340, 342—343, 381, 387, 389, 404, 413

Ելիկում՝ որդի Տարսայիճ Օրբելյանի և Արուզ խաթունի 226
Ելտկուզ՝ սելջուկ ամիրա 138
Եղիա՝ առաջնորդ Գանձասարի 307—308, 310
Եպիշե 36, 59—60
Եղիշե աբեղա (Հասան Ջալալյան) 350, 352—353
Եսայի Աբու-Մուսե՝ տեր Դիզակի, Առանշահիկ 62—64, 83—84

Զազա՝ Հասան-Ջալալյան իշխանազուն 305—307, 309, 314, 330
Զախոդեր Բ. Ն. 113
Զարեհ իշխանազուն ոմն 209
Զարբհանալյան Գար. 34, 253
Զարմիհր՝ Առանշահիկ իշխանազուն տե՛ս Սամիհր Առանշահիկ
Զաքարե ամիրսպասալար 128, 132, 134, 141, 147, 154—157, 160, 162, 165—169, 173, 183, 187, 207, 224, 230—231, 251—252, 254—255, 257—259, 260—261, 390
Զաքարե՝ ազգական Զաքարե ամիրսպասալարի 131, 216
Զաքարե՝ եղբայր Հասան--Ջալալի 85, 144, 168, 173—176, 187
Զաքարե՝ որդի Շահանշեի, թոռ Զաքարե ամիրսպասալարի 128, 208
Զաքարե՝ որդի Վահրամ Զաքարյանի 216
Զաքարիա եպս. ոմն 331, 344
Զաքարիա Սարկավագ 421
Զաքարյաններ 27, 64, 124, 127, 130—134, 156, 161, 189, 191—192, 201, 216, 233, 269
Զուլալյան Մ. 265, 340, 342—343, 365, 367
Զուլու-խաթուն ոմն 223

Էլամ (ավանդ.) 119
Էլեգան՝ եղբայր Զազայի 305
Էլեգում՝ եղբայր Զազայի 305
Էլիկում Օրբելյան 151, 187, 325
Էլինախ (Դոփյա՞ն) 331
Էլտկուզ 122
Էնգելս Ֆր. 283

Ըրդիշ 117

Թագուհի՝ ավանդության հերոսուհի 191
Թագուհի՝ կին Հասան մեծի, դուստր Բաղաց թագավորի 85, 137, 139
Թագուհի՝ կին Ումեկի, Ճարի մայրը 221, 225
Թադեոս (Դոփյա՞ն) 331
Թադեոս՝ որդի Դավիթ երեցի 391
Թահմազ-շահ 340, 361—362, 375, 408
Թահմասպ Ա 349, 376
Թաղիադին՝ որդի Կյուրիկե Բագրատունու 233
Թաղիադյանց Մ. սարկավագ 13—14, 196
Թաճեր՝ կին Սեադա Հաթերքեցու 151
Թաճեր՝ մայր Աշոտի, կին Ամիր-Հասան Պռոշյանի 243
Թաճում աղա՝ դուստր Հատիր-Մելիքի 351
Թամար՝ թագուհի Վրաց. 129, 131, 153, 161, 183, 216, 254, 260
Թամթա՝ կարծեցյալ դուստր Սարգիս Զաքարյանի 173
Թամուրյաններ 293
Թանկրիզուլի՝ որդի Մելիք Ղուկասի 387—389
Թիզենհաուզեն Վ. Գ. 40
Թոխթամիշ խան 304, 327
Թողթան՝ կին Բիշար Դոփյանի 325
Թովմա Արծրունի 31, 63, 70—72, 84
Թովմա գրիչ Սյունեցի 295, 306
Թովմա Մեծոփեցի 41, 43, 295, 330
Թորա աղա 191, 275
Թորամանյան Թ. 178
Թորոս՝ գրիչ ու ծաղկող 143
Թոփճյան Հ. 12, 19, 35, 51, 268, 321, 326, 334, 360, 362, 373, 382, 403, 409, 414
Թութակյանք՝ թուրքմեն ցեղ 121
Թուման (Թովմա)՝ որդի Մելքոնի 391, 397, 399, 403
Թումանյան Հովհ. 14
Թումա քահանա՝ եղբայր Հովհաննիսիկ Ծարեցու 390

Իբն ալ-Ասիր 9, 73, 183, 186
Իբն-Հաուկալ 78
Իգնատիոս վարդապետ Հաղբատի 164
Իշխանակ՝ որդի Ատրներսեհի, թագավոր Հերեթ-Կամբեհանի 75, 78, 81—84, 108
Իշխան՝ «որդի Քրդին», Հոռոմոսի տեր 197—198
Իսա իբն-Յուսուֆ տե՛ս Եսայի Աբու-Մուսե
Իսահակ վարդապետ՝ մեկնաբան 80
Իսրայել երեց գրիչ 400
Իսմայել (ավանդ.) 119
Իսրայել Օրի 422
Իսֆանդիար 348
Իսուր՝ նվիրատու 385
Իվանե-Աթաբակ՝ որդի Հասան-Ջալալի տե՛ս Աթաբակ-Իվանե
Իվանե Զաքարյան՝ աթաբեգ և ամիրսպասալար 128—129, 132, 134, 138, 141, 147—148, 153—155, 157, 160—162, 167—169, 173, 182—183, 185, 187, 190, 197—200, 215—217, 226, 230, 251—252, 274, 257—260, 390
Իվանե՝ որդի Ջալալ Բ-ի 302
Իվանե՝ որդի Սարգսի (ազգական ամիրսպասալարների) 131
Իվանե՝ որդի Վախտանգ-Տանգիկի 85, 144, 168, 174—176, 183, 218, 302, 371
Իվանե Օրբելյան 325

Լալայան Ե. 90, 324, 363
Լանկ-Թամուր 41, 292—294, 304, 328, 330, 332, 337
Լեո 16, 27, 62, 98, 120, 265, 341, 367—369, 387, 404, 406, 415, 420
Լիպարիտ Օրբելյան՝ որդի Իվանեի 325
Լևոն Ա՝ Կիլիկիայի հայ թագավոր 165, 220, 248
Լևոնյան Գ. 189

Խաթուն աղա՝ դուստր մելիք-Շահնազար Ա-ի 409
Խաթուն աղա՝ մայր մելիք-Շահնազար Ա-ի 408—409
Խաթուն՝ դուստր Հասան մեծի (Խոխանաբերդի տիրոջ) 137, 139
Խալաթյան Բ. 88
Խաղբակյաններ 85—86, 122—123, 174, 303, 341, 422
Խաթուն՝ դուստր Հասան Դեսոմյանի 201—202
Խաղբակ՝ տոհմակից խոխանաբերդցիների 174, 182
Խանզադա 348
Խանում աղա՝ դուստր Ջալալ Դ-ի 370
Խանում աղա՝ կին Մելիքբեկի՝ Աստվածարովի որդու 408
Խանսուլթան ոմն 398
Խանսուլթան՝ դուստր Ծարեցի Մելքոնի 391, 397
Խաչատուր Կեչառնցի 241—242, 298—299
Խաչատուր՝ վարդապետ Հաղարծնի 164
Խաչիկյան Լ. Ս. 10, 180, 191, 243, 265, 275, 277—278, 280, 285, 287, 293—294, 308, 311, 319, 323—325, 328, 330, 333, 385
Խաչիկ վարդապետ տե՛ս Դաղյան Խաչիկ վարդապետ
Խիմշի՝ որդի Աթաբակ Գ-ի 313—314, 384
Խոխանաբերդցիներ (Ներքին Խաչենի տերերը) 26, 156—157, 250—251
Խոշաք՝ դուստր Գոնցայի 207
Խոշ՝ Դոփի ժառանգուհիներից, դուստր Վահրամի 321—322
Խոյդան՝ որդի Հասան Կրոնավորյալի 145, 148, 150, 210, 300
Խոնձա տե՛ս Գոնցա՝ կին Հասան Գ Դոփյանի
Խոստրովիկ Նահատակ 119, 138—139
Խոսրով՝ թագավոր Հայոց 42
Խոսրով՝ թագավոր Պարսից, որդի Որմզդի 58
Խոսրով՝ նախարար Գարդմանից (Ուտիքի) 59
Խորիշահ՝ դուստր Գրիգոր Դոփյանի և Ասփայի 321—323
Խորիշահ՝ դուստր Մարզպան Մամիկոնյանի, կին Քուրդ Վաչուտյանի 235, 328
Խորիշահ՝ դուստր Վարդան Դոփյանի, կին Զեսար Օրբելյանի 325—326
Խորիշահ՝ թոռնուհի Քուրդ Վաչուտյանի 323
Խորիշահ՝ կին Վախտանգ Տանգիկի, մայր Հասան-Ջալալի 85, 136, 138, 141—144, 146, 155, 168, 173, 175—176, 243, 364
Խուդաբանդա շահ 400
Խումլուբեկ՝ որդի Խոյդանի 300

Խուհտուղտի 116
Խուրս՝ նախարար Գարդմանից (Ուտիքի) 59

Ծարեցիներ 148, 152, 157, 159, 161, 241—242, 249, 320, 333, 403

Կակաբաձե Ս. Կ. 129
Կատա 97, 137
Կատա՝ դուստր Գրիգոր Աշոտյանի ու Շահանդուխտի (դստեր Իշխան-Սևադայի) 107
Կարա-Յուսուֆ՝ կարա-կոյունլու ցեղի առաջնորդ 294—295, 307
Կարապետ եպիսկոպոս 5, 12, 27, 154—155, 160—161, 240—242, 297, 300, 311, 313, 315, 317, 321, 326—327, 330—331, 336, 386—387, 391, 399, 404, 406, 411, 414, 419
Կարապետ կաթողիկոս Աղվանից 374
Կիրակոս Գանձակեցի 8, 11, 30, 35, 40, 58, 114—117, 130—131, 134—135, 144, 148, 150, 166—167, 170, 174, 176, 181, 183—185, 187, 190—199, 201—204, 207—208, 214, 217, 219—221, 228, 231, 233—235, 243, 248, 251, 253, 255—256, 259—260, 262, 269, 275—276, 279, 283—288, 299
Կիրակոս Երզնկացի՝ գրիչ-հիշատակագիր 323
Կիրակոս Թավրիզեցի՝ մանրանկարիչ 324
Կիրակոսյան Գ. 29, 240, 300—306, 343—345
Կյուրիկե Գ. 209—210, 233
Կյուրիկե՝ թագավոր Աղվանից (Բագրատունի) 93—95, 145
Կյուրիկյաններ 210—211
Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոս 170, 217, 275, 278, 285
Կոստանդին Բ. Կատուկեցի կաթողիկոս 393
Կոստանդին Սիրանածին 50
Կոստանդ՝ հոգևորական, նվիրատու 302
Կոստանյանց Կ. 37, 79, 167, 316
Կորյուն 59—60
Կորիճ տե՛ս Ներսեհ՝ նախարար Գարդմանից
Կրիմսկի Ա. Ե. 54, 75—76

Հաթերքցիներ 148—149, 156, 250, 333
Հախնազարբեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի 409
Հակոբ գրիչ Հաղբատի 258
Հակոբյան Թադ. Խ. 36, 46, 110—111, 267
Հակոբյան Պ. Հ. 12, 14
Հակոբյան Ս. Ե. 265
Հակոբյան Վ. Ա. 8, 222, 393, 395—396, 403
Համազասպ Անեցի՝ եպս. Հաղբատի 262, 286
Համազասպ՝ որդի Դոփյան Խորիշահի 323
Համամ Արևելցի տե՛ս Գրիգոր-Համամ Ատրներսեհյան
Համամ Բարեպաշտ տե՛ս Գրիգոր-Համամ Ատրներսեհյան
Համամ, «որ և Յովհաննէս վարդապետ Բագրատունի» 77—80
Համբարյան Հ. 56, 216
Համդալլահ Ղազվինի 9, 41
Հայկ՝ հայոց ավանդական նախահայր 56, 58, 68, 86
Հայկազ՝ մելիք Քշտաղի 366
Հայրապետ գրիչ Գանձասարի 355
Հայրապետ հայր Գերգա 301
Հայրապետ Սեպաստացի գրիչ 350
Հայր Մարդպետ 383
Հաշիմյաններ՝ արաբական հարստություն Դերբենդում 109
Հասան Ա՝ տեր Ծարա, ամուսին Դոփի 51, 141, 148, 152, 154—159, 162, 166, 168, 190, 198, 215, 229—230, 233, 235, 251—252, 254, 271, 325, 396
Հասան Բ՝ թոռ Դոփի 48, 152, 215, 219, 226, 234—235, 239—243, 263—264, 298, 300, 304, 315—317, 325—326
Հասան Գ Դոփյան (XIV դ.) 327—329, 332—336
Հասան Գեռաքարեցի՝ թագավոր Բաղաց Կապանի 137
Հասան Դ՝ որդի Հասան Գ Դոփյանի 328, 332—333, 384, 390
Հասան Դոփյան՝ որդի Բիչարի 325
Հասան իբն-Ալի տե՛ս Նիզամ ալ-Մուլք
Հասան՝ կին Տողանի 121
Հասան Կրոնավորյալ՝ տեր Հաթերքի 117, 132, 138, 140, 145—147, 149, 156—157, 169, 202, 210, 233, 271, 286.
Հասան՝ հայր Հոռոմոսի տեր Հեչուր Գրիգորի 198
Հասան մեծ՝ հայր Վախտանգ-Տանգիկի 85, 136—141, 174—175
Հասան՝ որդի Գրիգորիկի (Սյունիք) 110—111, 117
Հասան՝ որդի Դեսումի 83, 120—121, 202
Հասան՝ որդի Խորիշահի և Քրդի 235
Հասան-Ջալալ-Դոլա 19—22, 26, 85—86, 134, 136, 140—141, 144, 158, 168, 171—176, 179—180, 183, 188—197, 199—215, 217, 219—221, 223, 226—227, 229, 232, 240, 243, 248, 268, 276, 280, 282, 296, 298—300, 302—304, 316, 330, 352—355, 371
Հասան-Ջալալյաններ (Հասան-Ջալալյան իշխ. տոհմ) 14, 29, 32, 52, 86, 152, 156, 189, 296, 298—300, 302—303, 314, 316—317, 344, 350, 353, 363, 372, 374—376, 384, 422
Հասան՝ որդի Ջհանշահի 334, 344
Հասան՝ որդի Վախտանգի, թոռ Սմբատի, թոռնորդի Հասան Կրոնավորյալի 151
Հասան՝ որդի Վախտանգի (Հաթերքի իշխանաց իշխանի) 147, 150, 199
Հասան՝ որդի Վահրամ Բ Դոփյանի 333—334, 343
Հասան՝ որդի Քուրդ Մամիկոնյանի 272
Հասան՝ որդի Ուզի 232
Հատիր-Մելիք 312, 351, 353—357, 375, 384
Հարությունյան Բ. 104
Հարությունյան Է. 396
Հարությունյան Վ. Մ. 256
Հացունի Վարդան 99
Հեթում Ա 96
Հեթում Բ. 96, 170, 194, 204, 220, 233
Հեթումյաններ 96
Հեչուր՝ հայր Սմբատի և Մուշեղի 201, 213
Հյուբշման Հ. 24
Հովակիմ Լազրիչ (Լազարյան) 349
Հովհաննես՝ առաջնորդ Գանձասարի, եղբորորդի Հասան-Ջալալի 176, 218, 301—302, 371
Հովհաննես Ա եպս., եղբայր Դոփի ամուսին Հասանի 155—156, 159—160, 162, 164—165, 167—168, 234, 249, 251—262
Հովհաննես աբեղա՝ գրիչ Ս. Հակոբա վանքի 356, 360
Հովհաննես Բ կաթողիկոս Աղվանից 371
Հովհաննես Բ եպս.՝ որդի Հասանի և Դոփի 160, 234, 251, 260—264, 325
Հովհաննես Գ եպս.՝ որդի Գրիգորի, թոռ Դոփի 234, 262—263, 321, 323—324
Հովհաննես գրիչ Խանձթեցի 346
Հովհաննես գրիչ ոմն 289—290
Հովհաննես գրիչ Տաթևի 294
Հովհաննես Դ եպս.՝ թոռ Հասանի և Դոփի 223—224, 248, 263
Հովհաննես՝ եկեղեցական 241
Հովհաննես եպս. Մշեցի 14
Հովհաննես Երզնկացի 221—225, 248, 262
Հովհաննես Ծարեցի 334, 391—395, 397, 399, 403, 409
Հովհաննես՝ որդի Ջալալ Գ-ի, կաթ. Աղվանից 307—309, 362, 370, 372—374
Հովհաննես կաթողիկոս՝ որդի Մեհրաբեկի 360—362, 370, 376—377, 397, 418
Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի 64, 78—79, 81—83, 88, 101—106
Հովհաննես Ղարբերդցի 350
Հովհաննես Ղրիմեցի 12—14, 160, 167, 252—255, 259
Հովհաննես՝ միտրոպոլիտ Սյունյաց 46
Հովհաննես Մկրտիչ 351—352

Հովհաննես՝ շինող եկեղեցու 272
Հովհաննես՝ որդի Իշխան-Սևադայի 101
Հովհաննես՝ որդի Խորիշահ Դոփյանի ու Ջեսարի 326
Հովհաննես՝ որդի մելիք-Շահնազար Ա-ի 409
Հովհաննես՝ որդի Սահլի, տեր Խաչենի 73—74, 82, 282
Հովհաննես Սարկավագ Իմաստասեր 26, 100, 351
Հովհաննես Վանական տե՛ս Վանական Վարդապետ
Հովհաննես քահանա և պարոն Դոփյան 317, 331, 345—346
Հովհաննես Քոչիզցի 348
Հովհաննես Օձնեցի 418
Հովհաննիսիկ Ծարեցի 42, 340, 364, 390—394, 397, 400, 403
Հովհան՝ որդի Ումեկի 220
Հովհան Որոտնեցի 352
Հովհաննիսյան Ա. Գ. 28, 129, 243, 287, 291—292, 323—324, 326, 340, 343—345, 347, 365, 367—368, 385—386, 391, 404—405, 409, 414
Հովհաննիսյան Կ. Լ. 256—257
Հովհաննիսյան Միք. 26
Հովսեփ՝ հայր Եսայի Աբու-Մուսեի 63
Հովսեփյան Գարեգին 10, 23—24, 26, 59, 80, 125, 127—129, 133, 136, 142—143, 146, 155, 174, 184, 186, 197—198, 217, 222—228, 230—231, 233, 240—243, 247, 250, 253, 255—256, 258, 261—262, 268, 282, 299, 303, 317—319, 321, 323
Հովսեփ ոմն 259
Հուլավյաններ 239
Հուլավու խան՝ մոնղոլ տիրակալ 40, 207—208, 217, 236—237, 289
Հուսեյնով Ռ. 112

Ղազան խան 241, 277
Ղալաբեկի (Հաթերքեցի) 366
Ղասում՝ որդի Թանկրիղուլիի 388
Ղասումջան՝ որդի Պապաճանի 388
Ղատաղա-նոյին 185
Ղարա-Գրիգոր տե՛ս Գրիգոր Ա՝ որդի Հասանի և Դոփի
Ղարագյոզ՝ թոռ մելիք-Շահնազար Ա-ի 406
Ղափանցյան Գր. 43—44
Ղաֆադարյան Կ. Գ. 160, 167—169, 201, 252—262, 272—273
Ղիաթադին տե՛ս Ղիյաս-էդդին քայ-Խոսրով
Ղիյաս-էդդին քայ-Խոսրով 193—194, 232
Ղուլաղա՝ կին Ուլուբեկի 405
Ղուկաս Հախպատեցի 396
Ղուկաս՝ հայր Թանկրիղուլիի 387—388, 391
Ղուռումշի՝ իլխանության կուսակալ 289—290, 324

Ճար՝ որդի Ումեկի 219—221, 225
Ճար՝ հայր Ումեկի 220, 222

Մալխասյանց Ստ. 37, 158, 180, 218, 222, 271, 348
Մալիք սուլթան տե՛ս Հատիր-Մելիք
Մահան՝ կին Վարդան Դոփյանի 325—326
Մահփարի՝ դուստր Ջալալ Բ-ի 370
Մակար վարդապետ տե՛ս Բարխուտարյանց Մ. վ.
Մաղաքիա աբեղա, տե՛ս Գրիգոր Պատմիչ
Մաղաքիա՝ Ամիրի որդի, կաթողիկոս Աղվանից 375—376
Մամա՝ դուստր Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի 150, 271
Մամա խաթուն՝ դուստր Հասան-Ջալալի, կին Ումեկի 189, 219—222, 224
Մամա՝ կին Հասան Կրոնավորյալի, դուստրը Կյուրիկե Բագրատունու 145, 210
Մահմետ՝ Երևանի խան 402
Մամիկոնյաններ Դսեղի 67, 168, 321, 323
Մամիկոնյան Վահան՝ մարզպան 39
Մամլուքներ 236
Մամքան՝ դուստր Տարսայիճի և Մինայի 229
Մամքան՝ կին Գրիգոր Ա Դոփյանի 325
Մամքան՝ կին Դոփի, թոռ Հասան Բ-ի 239, 241—243, 315—316
Մամքան՝ կին Հասան մեծի, Խոխանաբերդի տիրոջ 85
Մամքան՝ կին Հասան-Ջալալի 175—176, 180, 204, 206, 208—211, 218—219, 268, 302
Մայիլբեկ՝ թոռ Աստվածաբովի 408
Մանանդյան Հ. 9, 28, 94, 115, 125, 128, 138, 161, 181, 184, 190—191, 197—198, 200, 207, 224, 233, 236, 265, 267—268, 270, 341—342
Մանգու խան 191, 205, 236, 275
Մանուել աբեղա՝ եղբայր Ավագ եպիսկոպոսի 327, 331, 343—344
Մանուել՝ Վրաց թագավոր Դավթի եղբայրը 226
Մանուել վարդապետ ոմն 349
Մանուչար՝ թոռ մելիք Շահնազար Ա-ի 406
Մառ Ն. Յա. 20, 44, 75, 94, 243, 366
Մասուդի 78, 81, 84
Մասուդ՝ Մելիքշահի թոռնորդի 115, 122
Մատթեոս Ա կաթողիկոս Աղվանից 313, 372—374
Մատթեոս Գ կաթողիկոս Աղվանից 374
Մատթեոս Մոնոզոն՝ Գանձասարի վարդապետ 294—295, 304—306, 309, 314
Մատթեոս Ջուղայեցի 292
Մատթեոս Ուռհայեցի 43, 94, 113
Մատթեոս վարդապետ՝ Տաթևի գրիչ 294
Մարիամ տիկին Սյունյաց՝ դուստր Աշոտ Բագրատունու 48—49
Մարկոս վարդապետ 197, 202
Մարիամ՝ դուստր Կյուրիկե Գ թագավորի 209
Մարինա՝ քույր Հասան-Ջալալի 85, 174—176
Մարծպան Մամիկոնյան՝ տեր Դսեղի 235, 323
Մարկվարտ Յ. 24
Մելիք տե՛ս Հատիր-Մելիք
Մելիքբեկ՝ որդի Ատիբեկի 397
Մելիքբեկ Բ՝ որդի Աստվածաբովի 406—407
Մելիքբեկ՝ որդի Ուլուբեկյան Բալասանբեկի 405
Մելիքբեկ՝ որդի մելիք Ղուկասի 388
Մելիքբեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի, եղբայր Ատիբեկի 409
Մելիքբեկ Գ՝ որդի մելիք Շահնազար Բ-ի 407
Մելիքբեկ՝ Ա՝ որդի Միրզաջանի 391, 405—407, 409, 414, 419
Մելիքսեթ-բեկ Լ. 40, 84, 92, 94—95, 108, 216
Մելիքթիշվիլի Գ. Ա. 127
Մելիքսեթ եպս.՝ որդի Միրզաջանի 407—408
Մելիքսեթ՝ եպս. Վերին Ջակամի 366
Մելիքսեթ կաթողիկոս Աղվանից Քոլատակցի 377
Մելիք շահ 109, 111—113, 115
Մելիք-Շահնազարյաններ 12, 27, 337, 381, 386—387, 404—405, 413—415
Մելիք Վանի 196
Մելիք-Օհանջանյան Կ. Ա. 30, 202
Մելիք-Ուլուբեկյաններ 404—405
Մելքոն՝ որդի Ծարա տեր Միրզաջանի 390—391, 397—399
Մելքումբեկ՝ թոռ Աստվածաբովի 408
Մեհրաբբեկ՝ որդի Ջալալ Դ-ի 370
Մեհրաբբեկ՝ որդի Վելիջանի 346, 355—359, 362—363, 370, 375—377
Մեհրաբ՝ որդի Արղութինի, թոռ Ջազայի 307, 314
Մեյրամբեկ, Մեհրանբեկ տե՛ս Մեհրաբբեկ՝ որդի Վելիջանի
Մեջլիս՝ որդի Ջալալ Դ-ի 305, 307, 309, 314
Մեսրոպ Մագիստրոս տե՛ս Տեր-Մովսիսյան Մեսրոպ Մագիստրոս
Մեսրոպ Մաշտոց 59
Միրան շահ 330
Միհրանյաններ, Միհրական տոհմ 55, 58, 61—62, 65, 68—70, 86
Միհրան Սասանյան 52
Միկլուխո-Մակլայ Ն. Դ. 214

Մինա խաթուն՝ դուստր Հասան-Ջալալի 189, 219, 225—229, 316—317
Մինա՝ կին Աբուքանի 301
Մինա՝ կին Գերգի 301
Մինաս՝ Կիլիկիայից եկած եպս. 167
Մինորսկի Վ. Ֆ. 24, 54, 65—66, 109
Միսայել եպս. 34
Միր Դավիթ խան Մելիք-Շահնազարյանց 416
Միրզաբեկ՝ որդի Աստվածաբովի 408
Միրզաբեկ՝ որդի Ծարա տեր Մելքոնի 390—391, 397, 399
Միրզաբեկ՝ որդի Տուրսունի, թոռ Պաստամի 308—310
Միրզաջան՝ որդի Ծարա տեր Ջհանշահի 388, 390—391, 397, 399, 406—409
Միրզաջան Ուլուբեկյան 405
Միքայել Ասորի 9, 67, 71, 183
Մխիթար Այրիվանեցի 8, 78—80, 116, 130, 207, 237
Մխիթար Գոշ 8, 9, 30, 50, 83, 114—115, 117—122, 130, 134, 136, 139—140, 146—147, 164—167, 198, 200—201, 235, 248, 252, 253, 393—394
Մխիթարյան միաբանություն 8
Մխիթար վարդապետ Խոտակերտա 164
Մկդեմ Պոռշյան 130
Մկրտիչ՝ որդի Դավիթ երեցի 391
Մկրտումյան Հ. 8
Մնացականյան Աս. 29, 38, 55, 66—67, 79, 84, 103, 189
Մոլար-Նոյին 185
Մովսես Դասխուրանցի 8, 15, 32, 39, 52, 58, 60, 63, 65, 79, 88—89, 101—102
Մովսես իշխան Ուտիքի 64, 83, 104
Մովսես Խորենացի 11, 31, 51, 56—57, 59—60, 119, 352
Մովսես կաթողիկոս Աղվանից 99
Մովսես Կաղանկատվացի 8, 30, 32, 37, 39, 45, 51, 55, 58—63, 65, 67, 69, 71, 74—76, 78, 81, 84, 88, 90, 96, 101—104, 116, 120, 191, 267, 274, 352
Մովսեսյան Ղ. 95, 210
Մովսես՝ որդի Աբու-Մուսեի 63—64, 83
Մսերյանց Մ. 392
Մուավիա տե՛ս Հովհաննես՝ որդի Սահլի
Մուհամմեդ Ա՝ Մելիքշահի թոռը 115
Մուհամմեդ Խուդաբանդա շահ 340
Մունաջջիմ-բաշի 94, 109
Մուշեղ թագավոր Կարսի 84, 89, 91
Մուշեղ՝ որդի Հեչուբի 201
Մուշեղ՝ որդի Սմբատ Բագրատունի Խոստովանողի 66
Մուստաֆա փաշա (օսման.) 340, 400, 402
Մուտամփաշա՝ կին Ջհանշահ Ծարեցու 390
Մուրադյան Պ. Մ. 40—41

Յակոբսոն Ա. Լ. 178
Յավրիրեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի 407, 409—410, 412
Յիսաբեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի 409

Յուզբաշյան Կ. Ն. 21
Յուղուրլու՝ որդի Ծարա տեր Միրզաջանի 391, 397
Յուշկով Ս. Վ. 61

,Նադիր շահ 419
Նազադի՝ թոռ մելիք Շահնազար Ա-ի 409
Նազար Ոսկանապատցի 366
Նազլուխան՝ դուստր Ծարա տեր Մելքոնի 391, 397
Նանա՝ դուստր Սարգիս ամիրսպասալարի 141, 155, 168
Նանա՝ կին Հասան Կրոնավորյալի, թոռ Վախտանգի 151
Նասր-Դավլա՝ եղբայր Հասան-Ջալալի 85, 141, 168, 175—176
Նավռուզ՝ որդի Արղուն բռնավորի 242, 330
Նաֆասկուլի Թուշմալ խալիլ-Ֆախր-էդ-դինլու 349
Ներսեհ՝ նախարար Գարդմանից 64
Ներսեհ Փիլիպյան (Միհրանյան) 65
Ներսես առաջնորդ Դանձասարի 138, 310—313
Ներսես արքեպս. Աշտարակեցի 13—14
Ներսես Գնունեցի 397
Ներսես եպս. Ամարասի 219, 300—301
Ներսես Լամբրոնացի 164, 170
Ներսես կաթողիկոս Աղվանից 177, 206
Ներսես Պարթև կաթողիկոս 383
Նիազբեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի 409
Նիզամ ալ-Մուլք 113
Նորադին ոմն 271—272
Նրշիս՝ դուստր Սարգիս ամիրսպասալարի 141, 168

Շադդադյաններ տե՛ս Փադլունյաններ
Շալուե՝ որդի Սարգսի, ամիրսպասալարների ազգակից 131
Շահ Աբաս Ա 364—368, 370, 376, 398, 400, 403, 406, 411—412, 415, 420—421
Շահանդուխտ Ա՝ դուստր Սահակ-Սևադայի 97, 99, 103—107
Շահանդուխտ Բ՝ դուստր Իշխան-Սևադայի, կին Գրիգոր Աշոտյանի 107—108, 110, 112, 326
Շահանշե 298
Շահանշե՝ որդի Աղբուղայի 384
Շահանշե՝ որդի Մեհրապի, թոռ Արղուքինի 307, 314
Շահանշե՝ որդի Հասան Դ Դոփյանի 332—333, 345, 389—390, 403, 405
Շահանշե՝ որդի Զաքարե ամիրսպասալարի 128, 185, 187, 194, 207—208, 231, 258
Շահինյան Աբր. 77
Շահ Իսմայիլ 375
Շահխաթունյանց Հովհ. եպս. 12—13, 37, 48, 49, 132, 151, 157, 180, 202, 239, 264, 301, 305, 310, 312—313, 319, 322, 344, 354—355, 379, 384—385, 406
Շահնազար Ա՝ մելիք Սոդքի 389, 397, 403, 406—414, 419
Շահնազար Բ՝ թոռ Աստվածաբովի 407—408
Շահ Սեֆի 381
Շահումաղա՝ դուստր Հատիր-Մելիքի 351
Շահումաղա՝ կին Մեհրաբեկի 363, 370
Շամամ խաթուն՝ կին Դավիթ երեցի 391, 397
Շանշի-Շահանշե՝ որդի Հասան Դ Դոփյանի 328—329, 332—334, 386
Շապուհ՝ թագավոր Արևելյան Հայաստանի, պարսիկ 59
Շապուհ՝ որդի Սմբատ Բագրատունի Խոստովանողի 66
Շարափադին 205—206
Շարդեն՝ ճանապարհորդ 335
Շեյխ Համզա 348
Շեյխ Ուվեյս Բահադուր 373
Շիրին բաջի՝ դուստր մելիք Շահնազար Ա-ի 409
Շմիդտ Ռ. Գ. 19
Շրվան, Շիրվան՝ որդի Հասան Դ Դոփյանի 328, 330, 333—334
Շուշան՝ զրույցի հերոսուհի 189
Շուշանիկ ոմն 209
Շուշե՝ ենթադրյալ դուստր Սարգիս ամիրսպասալարի 155
Շուշիկ՝ կին Հաթերքի տեր Վախտանգի 149

Ոսկյան Հ. 11, 26, 100, 147, 255, 272, 308
Ովանես քահանա գրիչ 347

Զախր-շահ 120
Զաղաղա-Նոյին 185
Զաղաթայաններ 236
Զաղաթայ՝ մոնղոլ խան 41
Զամչյան Միք. վ. 25, 96, 109, 155, 286, 339, 392, 418
Զարմաղան-Նոյին 185, 187—188, 195, 199, 207, 219
Զեսար Օրբելյան 321
Զինգիզ-խան 41, 182, 236, 276
Զորան (զորապետ) 289—290
Զոլի 116—117

Պախոմով Ե. Ս. 94, 342
Պահլավունիներ 220
Պապաճան՝ որդի Թանկրիդուլի 388
Պապաք՝ որդի Վասակ Խաղբակյանի 130, 182, 242
Պապ ոմն (Հասան-Ջալալյաններից) 363
Պաստամ՝ որդի Ջալալ Գ-ի 308—309, 311
Պատկանյան Ք. 40
Պատրիկ Քարոյան՝ Առանշահիկ իշխանազուն 61
Պարթև 42
Պեկի՝ որդի Վահրամ Դոփյանի 332—334
Պետրոս առաքյալ 48—49
Պետրոս՝ հայր Սարգսի 301
Պետրոս ոմն (կաթողիկոս Աղվանից) 362, 373
Պետրոս շինող եկեղեցու 262
Պետրոս վարդապետ Հաղբատի 164
Պետրուշևսկի Ի. Պ. 29, 54, 27, 275
Պիչար տե՛ս Բիչար
Պողարյան Նորայր եպս. 352
Պողոսյան Ս. 96, 134, 265, 273, 287
Պողոսյան Ֆր. 417—420
Պոռշ Դոփյան ոմն 329—330, 343—344, 390
Պոռշ Խաղբակյան՝ որդի Վասակի 130, 233
Պոռշյաններ տե՛ս Խաղբակյաններ
Պտղոմեոս 38
Պուղիկյանք տե՛ս Աղբուղայան
Պուղի, Պուղիկ՝ հայր մելիք-Ղուկասի 387—388
Պուտաղ Նվիրատու 310, 384

Ջալալ Ա տե՛ս Հասան-Ջալալ-Դոլա
Ջալալ Բ՝ թոռ Հասան-Ջալալի, որդի Աթաբակ—Իվանեի 300—304
Ջալալ Գ՝ թոռնթոռ Հասան-Ջալալի 208, 305—308, 310—311, 314, 363, 373—374
Ջալալ Դ՝ որդի Մեհրաբբեկի 357, 360—361, 364, 366, 370, 372, 377
Ջալալդավլե՝ որդի Ջազայի 305, 307
Ջալալ-էդդին 135, 171
Ջալալ, Լուսավորչի տոհմից 220
Ջալալյանց Ս. արքեպս. 9, 11—16, 18, 32, 49, 51—52, 59—60, 74, 141—142, 151—152, 157, 160, 168, 174, 208, 212, 218, 227, 239, 241, 247, 252—254, 271—272, 301, 310, 312—313, 318—319, 322, 328, 355, 396, 405—408, 411
Ջալալ՝ որդի Տարսայիճ Օրբելյանի 229—230
Ջանփոլադյան Հ. 198—199
Ջաջուռ՝ որդի Խաղբակի 174
Ջավահիր՝ դուստր մելիք Շահնազար Ա-ի 409
Ջիվանշիր տեր Գարդմանից, Միհրանյան 61—62
Ջհանշահ սուլթան 372—373, 418—420
Ջհանշեցիք-Ջհանշայաններ 334, 337, 386, 389—390, 397
Ջհանշի-Ջհանշահ՝ որդի Հաւան Գ Դոփյանի 328—329, 332—334, 386, 390—391, 396—397, 405, 415
Ջվանշեր տեր Շաքեռ 72
Ջուլյաններ 236

Ռաշիդ-էդդին 280—291
Ռյոսլեր Է. 18
Ռշտունի Վ. 265
Ռովադի՝ թուրքմեն բռնավոր 121
Ռուբեն՝ Հայկական Կիլիկիայի իշխանապետ 146
Ռստակես երեց՝ որդի Թոմա Տարեցու 397, 399
Ռուզուքան՝ դուստր Էլիկում Օրբելյանի 151
Ռուզուքան՝ դուստր Հասան-Ջալալի 173, 188, 189, 207, 219
Ռուզուդան՝ թագուհի Վրաց 152, 183, 185
Ռուսուքան՝ դուստր Կյուրիկե Գ թագավորի 209

Սադ 348
Սադոն՝ որդի Տփղիսի ամիրա քրդի 146, 235
Սադուն կամ Սասուն՝ հայր Տարսայիճ Օրբելյանի առաջին կին Արուզ խաթունի՝ 237
Սալվար՝ դուստր Ջալալ Դ-ի 370
Սակառ՝ եղբայր Տարա տեր Հասան Ա-ի 155, 159—160
Սակառյաններ Խոխանաբերդի 158
Սակառյաններ Տարի 156
Սակառ՝ պապ Հաթերքեցի Վասակ Նահատակի 157, 210
Սակառ-Վախտանգ՝ հայր Տարա տեր Հասան Ա-ի 156, 158
Սակառ՝ որդի Վախտանգի 36, 271
Սահակադուխտ՝ կին Սարգիս ամիրսպասալարի 148
Սահակ Պարթև 287—288
Սահակ-Սևադա՝ որդի Գրիգոր-Համամի 81—82, 90, 98—106, 110—138
Սահլ Սմբատյան, Սահլ որդի Սմբատի, Սահլ իբն-Սնբատ (Սունբատ, Շանբատ), Սահակ որդի Սմբատի 19, 37, 45, 52—53, 62, 64, 66—71, 73, 75, 78, 82, 162, 371, 379
Սաղաթել կրոնավոր՝ գրիչ Ս. Հակոբա վանքի 362
Սամուել Անեցի 42, 68, 96, 113, 116, 224, 290
Սայտի՝ Տարա իշխանազուն 48
Սայտուն՝ որդի Աղբաստի, թոռ Ջալալ Գ-ի 298, 310—312, 314, 353—356, 384
Սառա՝ ավանդական Աբրահամի կինը 119
Սասանյաններ 65, 68
Սասնա Հանդաբերդեցի 218
Սասնա Ձեռնավոր 243
Սարգիս՝ աղգական ամիրսպասալարների 131, 216
Սարգիս Ա Սևանցի կաթողիկոս 46—48
Սարգիս եկեղեցական 241
Սարգիս եպս. Դոփյան՝ որդի Գրիգոր Բ-ի 320—323, 326—327, 331, 344
Սարգիս եպս.՝ որդի Խորիշահ Դոփյանի 326
Սարգիս եպս. Ս. Հակոբա վանքի 200
Սարգիս Ջաքարյան ամիրսպասալար 124, 128, 132, 141—142, 148, 153, 157, 161—162, 169, 173, 216, 251, 254, 326
Սարգիս կաթողիկոս Աղվանից՝ որդի Հատիր-Մելիքի 354—355, 375
Սարգիս հայր Շալուե Ջաքարյանի 131
Սարգիս ոմն՝ նվիրատու 303
Սարգիս ոմն՝ նվիրատու 217
Սարգիս՝ որդի Հասան Գ Դոփյանի 328, 333
Սարգիս՝ որդի Պետրոսի, նվիրատու 301
Սարգիս վարդապետ ոմն 396
Սարթախ՝ մոնղոլ խան 192, 196—197, 204, 206, 276
Սամվելյան Խ. 265
Սաֆարյան Ս. 257
Սարուխանբեկ Ոսկանապատցի 366
Սաֆրաստյան Ա. 359
Սեբեոս եպիսկոպոս 367
Սեմ (ավանդական) 119
Սեյտիբեկ, Սայտուն՝ որդի Հատիր-Մելիքի 351, 353—354
Սեյտի, Սայտուն՝ որդի Շահանշե Դոփյանի 328—330, 332—334, 343—345
Սենեքերիմ Ա, «որ եւ Յովհաննէս» 83—84, 89—92, 98, 102—103, 108—109
Սենեքերիմ Բ՝ իշխանաց իշխան Խաչենի 97, 99
Սենեքերիմ՝ որդի Գրիգորի 83—84
Սենեքերիմ՝ որդի Իշխան-Սևադայի, թագավոր Բաղաց-Կապանի 108—113, 117, 137, 233, 326
Սենեքերիմ՝ որդի Հասան Դեսումյանի 201—202
Սետիպակ տե՛ս Սեյտիբեկ՝ որդի Հատիր-Մելիքի
Սիմավոն կաթողիկոս Աղվանից 364, 377
Սիմեոն արքեպս. Ս. Հակոբա վանքի 362—363
Սիմեոն կաթողիկոս Երևանցի 49, 360, 362, 379
Սիմոն թագավոր Վրաց 365
Սիսակ 51, 56
Սմբատ Բագրատունի Խոստովանող 52, 66
Սմբատ Բուրթելյանց 305

Սմբատ՝ եղբայր Խոխանաբերդի տեր Գրիգորի 120, 201
Սմբատ՝ եղբայր Հասան Կրոնավորյալի 149—150
Սմբատ՝ եղբայր Հասան մեծի, հայր Գրիգոր Հեչուրի 85, 174, 198—201
Սմբատ՝ եղբայր Հոռոմոսի տեր Հեչուրի 197
Սմբատ թագավորազն Բաղաց-Կապանի 54, 104—107, 137
Սմբատ՝ հայր Սահլի 52—53, 68, 70, 82
Սմբատյանց Մ. արքեպս. 35—37, 49, 74, 239, 327, 353, 355, 369, 389—390, 396—397, 405—409, 411
Սմբատ՝ որդի Սյունյաց իշխան Աշոտի 107
Սմբատ՝ որդի Բահրամ Գուրի, Սասանյան 68
Սմբատ՝ որդի Գրիգոր-Համամի 76—77, 81—83
Սմբատ՝ որդի Հասան Կրոնավորյալի 145, 148, 150—151, 210
Սմբատ՝ որդի Հեչուրի 201, 213
Սմբատ՝ որդի Սմբատ Բագրատունու 66, 78—79
Սմբատ՝ որդի Փիրհամզայի, նվիրատու 310—311
Սմբատ տեր Մեծառանից 83
Սմբատ Քարոյան-Առանշահիկ 68
Սմբատ Օրբելյան՝ եղբայր Տարսայիճի 205, 227—229
Սմբատ Օրբելյան՝ որդի Լիպարիտի 325
Սմիրնով Ի. Ա. 365
Սողոմոն եպս. Ս. Հակոբա վանքի 73
Սողոմոն Մարեշրեցի 96
Սոփի՝ դուստր Մովսեսի, թոռ Նսայի Աբու-Մուսեի 63—64
Ս. Շ. 247
Սպրամ՝ Միհրանյան իշխանադուստր, կին Սահլի որդի Ատրներսեհի 62, 69
Ստեփաննոս Բ կաթողիկոս Աղվանից 97, 145
Ստեփաննոս Գ կաթողիկոս Աղվանից 138, 239, 241
Ստեփաննոս եպս., ժամանակագիր 184, 219, 240
Ստեփաննոս եպս. Սյունեցի 168
Ստեփաննոս Կոն նախարար Գարդմանից 64
Ստեփաննոս՝ որդի Ումեկի 220
Ստեփաննոս՝ որդի Միհրանյան Վարազ-Տրդատի 65
Ստեփաննոս Օրբելյան 8, 11, 24, 26, 37, 40, 46, 48, 54, 64, 72, 83, 97, 103—104, 106—111, 113—115, 130, 137, 147, 151, 154—155, 168, 170, 173, 179, 205, 225—229, 233—234, 238—239, 271, 275, 316—317, 330, 379—381
Ստրաբոն 38
Սրվանձտյան Գ. 339
Սուլտան-խաթուն՝ կին Հատիր-Մելիքի 351, 353
Սուջում՝ Դիզակի մելիք 366
Սուքիասյան Գ. 96
Սուքիաս ոմն՝ կաթողիկոս Աղվանից 373
Սև Աբով 387
Սևադա Դեսումյան՝ որդի Հասանի, թոռ Սենեքերիմի 201—202
Սևադա-Իշխան՝ թոռ Սահակ-Սևադայի 101, 107, 109, 137
Սևադա իշխանազուն Հաթերքի, որդի Սմբատի 150—151
Սևադա Նահատակ՝ որդի Գրիգոր Ա Դոփյանի 197, 233—234
Սևադա՝ որդի Բաղաց-Կապանի թագավոր Սենեքերիմի 137
Սևադա՝ որդի Սմբատի և Շահանդուխտի 107
Սևինճ-բեկ 205—206

Վախախ՝ Դոփյանների հարս 325
Վախախ՝ դուստր Վարդան Դոփյանի 325
Վախտանգ իշխանազուն՝ որդի Սմբատի, թոռ Հասան Կրոնավորյալի 150
Վախտանգ՝ հայր Հասան Կրոնավորյալի 145, 149, 157, 271
Վախտանգ մեծ՝ թոռ Վախտանգ-Սակառի 85, 155—156, 158—159, 201
Վախտանգ Նվիրատու 310, 384
Վախտանգյաններ Խոխանաբերդի 85
Վախտանգյաններ Հաթերքի 85
Վախտանգ՝ որդի Սմբատի 173, 199
Վախտանգ՝ որդի Ումեկի 221, 223, 225
Վախտանգ-Սակառ՝ որդի Գրիգորի, թոռ Փիլիպեի 85, 136, 138—139, 156
Վախտանգ-Տանգիկ՝ հայր Հասան-Ջալալի 26, 85, 132, 136, 138, 140, 144, 146, 158, 168, 172—173, 175, 176, 180, 183, 217, 311, 364
Վախտանգ իշխանաց իշխան՝ որդի Հասան Կրոնավորյալի 138, 140, 145—148, 150—151, 154, 156—157, 161, 189—190, 198—199, 210, 216, 235, 243, 254, 259, 333
Վահրամ՝ եղբայր Հասան Կրոնավորյալի 149, 156
Վահրամ Զաքարյան՝ Գագա տեր 134, 182—183, 185, 187, 194, 216, 231, 282
Վահրամ՝ թոռ Գագա տեր Վահրամի 216
Վահրամ Մամիկոնյան (Դեղից) 322
Վահրամ՝ որդի Գրիգորի, թոռնթոռ Դոփի 333
Վահրամ՝ որդի Հմսան Գ Դոփյանի 326—330, 332, 334
Վաղարշակ՝ Մեծ Հայքի միացյալ թագավորության ավանդական կարգավորիչ 31, 56
Վանական Վարդապետ, Հովհաննես Վանական 8, 177, 187, 192, 202, 243, 250, 285, 288
Վանենի՝ դուստր Ջաջուռի, թոռ Խաղբակի 174, 184
Վաշաղիան տե՛ս Վաչագան՝ որդի Մովսեսի
Վաչագան Բարեպաշտ 39, 60, 61, 75, 109, 213, 271, 352
Վաչագան՝ որդի Մովսեսի, թոռ Նսայի Աբու-Մուսեի 63—64, 83
Վաչագան Պատրիկյան, Առանշահիկ 62
Վաչագան Քաջ, Արշակունի 60
Վաչուտյաններ Արագածոտնի 259, 323, 341
Վաչե թագավոր Աղվանից 273
Վաչե Մամիկոնյան՝ տեր Դսեղի 235
Վասակ՝ եղբայր Բաղաց-Կապանի թագավոր Սմբատի 105, 107
Վասակ թագավոր Բաղաց-Կապանի 46
Վասակ Խաղբակյան 130
Վասակ՝ հայր Դավթի 272, 274
Վասակ Նահատակ՝ որդի Հասան Կրոնավորյալի 145, 147—148, 150, 152, 157, 202, 210, 286
Վասակ՝ որդի Գրիգոր-Համամի 81—83
Վասակ՝ որդի Սմբատի ու Շահանդուխտի 107
Վասակ Պահլավունի 111
Վասակ պատրոնիկ ոմն 209
Վարազ-Տրդատ Միհրանյան 65
Վարազ-Քուրդակյան Առանշահիկ 61
Վարդանանք 39
Վարդան Արևելցի տե՛ս Վարդան Վարդապետ
Վարդան Դոփյան՝ որդի Վախախի 325—326
Վարդան հոգևորական՝ որդի Ջալալ Գ-ի 307, 309
Վարդան Մամիկոնյան 323
Վարդան «Յոժար որդի»՝ եպս. Գանձասարի 286
Վարդան՝ սխալմամբ 216
Վարդան՝ որդի Խորիշահ Դոփյանի և Ջեսարի 326
Վարդան Վարդապետ 8, 32, 37, 40, 64, 67, 79, 84—85, 92—95, 100, 106, 111, 113, 130, 138, 143, 148, 158, 162, 165, 170, 173—176, 181—182, 184, 186—187, 189—190, 202, 207—208, 211, 215, 223, 233, 237, 248, 250, 262, 275, 286
Վարդան՝ Ս. Հակոբա վանքի եպս. 151
Վարդան վարդապետ Հաղբատի 164
Վարդան վրդ. Ս. Հակոբա վանքի 200
Վարդան քահանա գրիչ Ոսկանապատցի 405
Վարդան Քաջ, Միհրանյան 69
Վեգեն Դոփյան՝ որդի Վարդանի 323—325

Վելիչան՝ որդի Թանկրիղուլիի 388
Վելիչանբեկ՝ որդի Ջալալ Դ-ի 370
Վելիչան՝ որդի Սայտունի, թոռ Աղբաստի 311—312, 354—357
Վրդանես Դոփյան տե՛ս Վեղեն Դոփյան

Տաթլուբեկ՝ թոռ Աստվածաբովի 408
Տաշյան Հ. վ. 191
Տավիտբեկ որդի Միրզաջանի 391
Տարսայիճ Օրբելյան 189, 225—229, 238—239, 241, 263, 316—317, 319—320
Տեր-Ավետիսյան Ս. 361, 402, 410, 412
Տեր-Ղևոնդյան Ա. 94, 109
Տեր-Մկրտչյան Գ. 119
Տեր-Մկրտչյան Կ. տե՛ս Կարապետ եպիսկոպոս
Տեր-Մինասյան Ե. 285
Տեր-Միքելյան Ա. 68
Տեր-Մովսիսյան Մեսրոպ մագիստրոս 74, 121, 145, 151—152, 202, 239, 242, 246, 254, 259, 261, 272, 294, 315, 322, 328—329
Տիրածայր ոմն 213
Տիրացու գրիչ 317
Տիրի ոմն 326
Տողան՝ սելջուկ տիրակալ 120—121
Տողուս-խաթուն՝ կին Հուլավուի 207, 219
Տրեհեր Կ. Վ. 54
Տրունի (Տերուն) հոգևորական՝ որդի Միրզաջանի 407
Տուրսուն՝ որդի Ծարա տեր Աղբուղայի 309, 329—330, 343—344
Տուրսուն՝ որդի Պաստամի, թոռ Ջալալ Դ-ի 308—310

Ռաֆֆի 16, 51—53, 81, 85, 120, 387, 416

Ուզ՝ հայր Հասանի 232
Ուզբեկ՝ Մոնղոլ խան 41
Ուզուն Հասան խան 311
Ութմազյան Հ. 47, 380—381
Ուլուխան՝ որդի Ծարա տեր Մելքոնի 390—391, 397, 399
Ուլուբաբյան Բ. 18, 23, 36, 38—40, 44, 55—57, 60—61, 145—146, 149, 216, 243, 246, 262, 274, 282
Ուլուբեկ 298
Ուլուբեկանք, Ուլուբեկյաններ 334, 337, 386, 389
Ուլուբեկ՝ թոռնորդի Հասան Դ. Դոփյանի, որդի Սեյտիի 333, 389, 404, 405, 413
Ուլուբեկ՝ որդի Բալասանբեկի 405
Ուլուբեկ՝ որդի Մեչլիսի, թոռ Ջալալ Գ-ի 305, 307, 309, 314
Ուլուխան՝ մոնղոլ բռնավոր 40
Ուլու ոմն (Հասան-Ջալալյան) 363
Ուհան եկեղեցական 241
Ումեկ՝ վաճառական, Հասան-Ջալալի փեսան 219—225
Ունայր՝ թագավոր բուն Աղվանքի, Արշակունի 60
Ուստիանե (Դոփյա՞ն) 331
Ուքանանք 259

Փաղուն՝ Գանձակի ամիրա 92, 95, 110
Փաղլունյաններ 64, 85, 94—96, 109, 111—112, 282
Փախրադին 117
Փախրադուլա՝ որդի Տարսայիճի 226
Փաշիկ՝ մելիք Քոչիզի 366
Փավստոս Բուզանդ 38, 56—57, 60, 352, 383
Փարի՝ դուստր Մելքոնի 391, 397
Փափազյան Հ. 9, 265, 335—336, 341, 348, 373—375, 377, 418
Փեչևի Իբրահիմ 359—360
Փիանդ՝ կին Ծարա տեր Մելքոնի 391, 397—399
Փիլիպե Թագավորազն՝ որդի Գրիգորի 85, 92
Փիլիպե՝ որդի Իշխան-Սևադայի 101—102
Փիրի ոմն (Հասան-Ջալալյան) 363
Փիրհամզա՝ նվիրատու 310—311
Փիրղալեմյան Ղ. 306, 330
Փղիպե՝ եղբա՞յր Գրիգոր-Համամի 76
Փոնձե, վրիպակ տե՛ս Գոնցա՝ կին Հասան Գ Դոփյանի

Քամալբեկ՝ որդի մելիք Շահնազար Ա-ի 406, 407, 409, 412
Քարիմադին՝ որդի Ումեկի 223, 225
Քեշիշյան Մ. վ. 362
Քետուրա (ավանդական) 119
Քյուրտյան Հ. 26, 66, 324, 326
Քուրդ Մամիկոնյան 272
Քուրդ՝ որդի Խորիշահ Դոփյանի 326
Քուրդ Վաչուտյան 235, 242, 323
Քուրտ՝ տեր Կայենի, Տփղիսի ամիրա 146, 148, 235, 252

Օլատան՝ որդի Բիչար Դոփյանի 325
Օղլան-քեշիշ Հաթերքեցի 366
Օմար խալիֆ 335
Օմար՝ որդի Միրան շահի 330
Օշին՝ իշխան Հայկական Կիլիկիայի 96
Օշին Բ. 96, 220
Օրբելի Հ. Ա. 19—23, 26, 52—54, 136, 139—140, 142—143, 145, 149—150, 172, 175, 183, 195, 205, 208—209, 211—213, 217—220, 247, 268, 301, 306—313, 355, 357—358, 371, 384
Օրբելյաններ 168, 225, 319—320, 324
Օրիբեկ տե՛ս Յավրիբեկ
Օրմանյան Մ. արքեպս. 167—168, 198, 287
Օսման-Յուզդեմիր 364, 400
Ֆախրիջահան՝ կին մելիք Շահնազար Ա-ի 409
Ֆաղանի Աշեղ Դիվանլու 349
Ֆարհատ փաշա 402

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ*

Աբխազիա 93, 207, 214
Ադախա 116
Ադամխան 161
Ադիաման տե՛ս Կոթ
Ադրբեջանական ՍՍՀ 7, 90, 114
Աթլ գետ տե՛ս Վոլգա
Ալադաղ, Ալատաղ 40, 236
Ալայազ տե՛ս Եղեգիս
Ալաշկերտ 369
Ալեքսանդրապոլ տե՛ս Լենինական
Ալհարակ լիճ 114
Ախնջի՝ վտակ Տավուշի 33
Ածկե 369
Ականա՝ ավան Վերին Խաչենում 48, 153 190—191, 202—203, 214—215, 234, 240, 298, 300, 315, 320, 333, 345
Ակուռին 157
Աղահեջք գավառ Սյունիքի 46, 396
Աղավնո գետ Սյունիքում 35, 46
Աղբակ 369
Աղդամ ք. Ադրբ. ՍՍՀ-ում 78, 215
Աղդամի շրջան Ադրբ. ՍՍՀ-ում 7, 76—77
Աղթամարի վանք 178—420
Աղկալա գ. 267—268
Աղստև գետ 33
Աղվեն 274
Աղուե 145
Ամասիա 340, 346
Ամարաս ավան 31, 71, 352
Ամարասի վանք 177, 215, 219, 301
Ամարասի վիճակ 308
Ամենափրկիչ եկեղեցի Սանահնի 252
Ամենափրկիչ վանք Նոր-Ջուղայի 361, 402, 410
Ամիդ ք. 366
Ամու-Դարյա գետ 236
Այրարատյան նահանգ 40, 86, 131, 146
Անբերդ 131—132
Անդրկովկաս 112, 124, 135, 184, 191, 205, 235—236, 270, 293, 304, 340—342, 347, 359, 365, 400
Անի 20, 89, 92, 94, 125, 131—132, 178, 185, 217, 255, 303
Աշմանա հողամաս 312—313, 384
Ապարան 213, 369
Ապարիսական դաշտ 33
Աչեմ տե՛ս Պարսկաստան
Առաջաձոր գ. Մարտակերտի շրջանում 19, 307—309, 376
Առաջավոր Ասիա 236
Առուտանա (հանդամա՞ս) 355
Ասիա 98
Ասորիք 232
Աստղաբլուր 32, 191
Աստվածածին եկեղ. Վասակաշենի 396
Աստրախան 203
Ավարայրի դաշտ 59, 304
Ատրպատական 71, 89, 117, 130, 180, 183
Արագածոտն գավառ 235, 242, 323
Արարատյան դաշտ 241, 367—368
Արարատյան լեռներ 131
Արաքս գետ տե՛ս Երասխ գետ
Արդախ (վայր) 74, 83
Արիտ 110
Արճեշ 369
Արմաշ 268
Արտից գավառ 37
Արփա, Առփա գ. (Վայոց ձորում) 168, 271
Արևելյան Անդրկովկաս 25, 29
Արքուվիք 46
Արևյաց տուն, Արևիք գավառ 46

Բագավան 236
Բախերի Մատաղիս (մատաղ այգի) 159
Բաղաղա քաղաք 293—294
Բաղաց-Կապան, Բաղք 26, 54, 91, 96—97, 99, 104, 107—112, 117, 137, 180, 209—210, 233, 326
Բաղասական 39, 44, 57
Բաղդադ 63, 66, 70, 232
Բայլական 132—133, 181, 215—216, 282
Բանանց գյուղ (Քարհատի շրջանում) 319
Բասեն գավառ 40, 369, 402
Բարգուշատ 86, 225, 228
Բարտա տե՛ս Պարտավ
Բեղամեջ դաշտ 181
Բերդա-Բարդա տե՛ս Պարտավ
Բերդակուր 116, 370
Բերդաձոր գավառ 31, 34, 36, 267
Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցի 19, 35, 159, 213
Բերդկունք ավան 267—268
Բերկրի 369
Բյուզանդիա 71, 112, 163, 165, 169, 342
Բջնի ք. 131—132, 228, 324, 328
Բրիտիս գ. (Վարանդայում) 366
Բուլխար երկիր 73

Գագ բերդ 127, 131, 134, 187, 201, 216
Գանձա տե՛ս Գանձակ
Գանձակ 8, 34, 36, 40, 64, 85, 89, 90—91, 94—97, 109, 111—118, 122, 133, 137, 146, 162, 182, 184, 215—216, 282, 352, 370, 400, 402, 410, 412
Գանձակի նահանգ 208, 319, 364
Գանձասար 13—14, 23, 74, 78, 83, 85, 123, 134—135, 139—141, 144, 152, 174—178, 192, 196, 267
Գանձասարի վանք 11—12, 21—22, 51, 117, 120, 179, 180, 208, 210—211, 217—219, 222, 245, 247, 286, 288, 294, 295, 298—299, 301—302, 304—305, 307—313, 352—355, 357, 360, 362, 364, 370—373, 375—379, 381—382, 384—385, 389, 418
Գառնի 86
Գառնու ձոր 369
Գավառ 402
Գարդման բերդ 131, 182, 189
Գարդման ք. 115, 189
Գարդմանք գավառ 58—59, 61—62, 81—82, 86, 90, 100—101, 134
Գեղամարակ 37
Գեղամա բարձրավանդակ 293
Գեղամա գավառ 37, 45, 71—72, 85, 337, 370, 381, 386, 389—391, 396, 402—403, 406, 409—414, 420
Գեղամա ծով տե՛ս Սևանա լիճ
Գեղամա վանք 48
Գեղամյան լեռներ 33, 368
Գեղարքունիք գավառ 28, 37, 46, 74, 104, 130—131, 134, 161—162, 181, 190, 216, 284, 289, 311, 367, 371, 380—381, 386, 389—390, 404, 413—416
Գեղարքունյաց ծով տե՛ս Սևանա լիճ
Գեղարդավանք 151
Գեռաքար բերդամրոց 23
Գետաբակ 36, 185
Գետամիջի Ս. Աստվածածին վանք Մարում 297, 306
Գետաշեն 258
Գետաշեն գ. Մարտունու շրջանում (Հայկ. ՍՍՀ) 416
Գետիկ տե՛ս Գոշավանք
Գլխո վանք 32—33
«Գյավուր-արխ» (Մուխանք գավառում) 269
Գյոյչա ծովակ տե՛ս Սևանա լիճ

* «Հայաստան», «Հայոց արևելից կողմանք», «Աղվանք», «Աղվանից կողմանք», «Արցախ», «Ուտիք», «Խաչեն», «Խաչենի իշխանություն», «Ղարաբաղ», «Ղարաբաղի մելիքություններ» տեղանուններն ու հասկացությունները չեն ընդգրկված սույն ցանկում, որովհետև նրանք հիշատակվում են գրքի համարյա բոլոր էջերում։

Գյոյ-գյոլ տե՛ս ԱլՀարակ լիճ
Գյուլիստան գավառ 32, 387
Գոզանդ (բերդ) 132
Գոլաշտյան բերդ 147, 202
Գոմեր 106
Գոշա վանք 11, 116, 146, 150, 164, 167, 199—200, 221, 225, 253
Գորոզ բերդ 31, 62—64, 84
Գտչա վանք 177
Գտիշ բերդ 31, 63—64, 83, 177

Դադի վանք 11—12, 21, 34, 74, 85, 117, 132, 136, 145—146, 148—152, 157, 161, 169, 177, 199, 202, 210, 228, 232, 242—243, 245—248, 251, 254, 260, 263—264, 271, 286, 288, 297, 322—323, 327, 331, 343—344, 390, 393, 396—398
Դադի վանքի Ս. Նշան կաթողիկե 260
Դալիդաղ սար 46
Դաղձանա՞ց թե՞ Դեղձանաց գյուղ (Ծարփուզու) 324
Դայավրեճ տե՛ս Թավրիզ
Դաշքենդ գյուղ Գեղարքունիքում 239—240
Դառն կամ Դառան դաշտ 40, 236
Դասնո անապատ Դանձակի նահանգում 371
Դարբանդ տե՛ս Դերբենդ
Դարբանդի դուռ տե՛ս Դերբենդի դուռ
Դարպասներ տե՛ս Խոխանաբերդ
Դեդ բերդ 190
Դեղձանավանք (Վերին Խաչենում) 324
Դեշտ-ի Խազար տե՛ս Խազարական դաշտ
Դերբենդի դուռ 41, 181—182
Դերբենդի նահանգ 39, 108—109, 340, 370, 378
Դերբենդ ք. 17, 28—29, 57, 238
Դիադին 236
Դիզակի գավառ 31—32, 62—64, 83, 361—362, 366, 400
Դիզափայտ լեռ 31, 35, 177, 361
Դիվախոռ լեռ 120
Դող գյուղ (ԼՂԻՄ-ի Հադրութի շրջանում) 31, 62
Դորպատ 189
Դսեղ 168, 235, 323
Դվին 94—95, 109, 131, 225, 228, 267—268, 367, 372
Դրախտիկ գ. (Սևանի հյուսիսային ափին) 416

Եղնանստի (Հանդամա՞ս) 159
Եղեգիս 224—225, 322
Եղեգնաձոր 369
Եղիշե առաքյալի վանք Ջրաբերդի 232, 361
Երանոս գ. 161
Երասխ գետ 17, 32, 35, 38, 46, 57, 71, 269, 363, 368, 400
Երգեվանք բերդ 131
Երզնկա 194, 224, 232
Երիշատ 46
Երիցմանկանց վանք Ջրաբերդի 355
Երնջակ գավառ 46
Երուսաղեմ 144, 170, 245, 294
Երևան 328, 367, 369, 402
Երևանի Մաշտոցի անվան Մատենադարան տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան
Երևանի նահանգ 347, 359
Եվդոկիա 349—350, 353

Զանգան ք. (Ատրպատականում) 117
Զարիշատ 362
Զեյթուն 342—343
Զմմառի Ս. Աստվածածին վանք 8, 356, 360
«Զորաց տաճար» եկեղեցի 224—322

Էլամ 119
Էջմիածին 13, 19, 178, 379—380, 382, 420
Էրզրում 183

Թալիշ գ. ԼՂԻՄ-ի Մարդակերտի շրջանում 32
Թաղավարդ գ. (Լեռն. Ղար. Մարտունու շրջանում) 267
Թանահատի վանք (Սյունիքում) 237
Թավասպարան 39
Թավրեզ տե՛ս Թավրիզ
Թավրիզ 132, 206, 211, 341, 349, 367, 369, 375, 395, 402
Թարգմանչաց վանք Բանանց գյուղի մոտ 319
Թիֆլիս տե՛ս Տփղիս
Թշեկրա այգի 159
Թոխատ տե՛ս Եվդոկիա
Թոխլիջան տե՛ս Դրախտիկ գ.
Թովուզ գետակ տե՛ս Տավուշ գետակ
Թրղի՝ Թարթառ գետի վտակ 32, 120, 214
Թուրքիա, Օսմանյան Թուրքիա 338, 347, 364

Իթիլ գետ տե՛ս Վոլգա
Իթիլ ք. 203
Իշևանի շրջան 33
Իսթիսու 35
Իսպանիա 365
Իրան 41, 346—347, 367—369

Լաղարյան ճեմարան Մոսկվայի 349
Լաչինի շրջան 7, 45, 361
Լենինական 155, 232
Լյուլյառազ գ. 116, 371
Լոռե ք. 185, 187, 255
Լոռի 220, 343, 369
Լփինք, Լփնաց աշխարհ 39, 57
Լևոնաբերդ 34

Խաղավանք տե՛ս Խաթրավանք
Խաղազ գ. Վարանդայում 348—349 տիրք) 371
Խազարական դաշտ 61
Խաթրավանք 12, 21, 34—36, 85, 141, 156—157, 159—160, 168, 191, 202, 217, 229, 230—231, 234, 242, 245, 247—248, 251, 254, 261, 263—264, 297, 303, 316—318, 320, 322—323, 327, 331, 343—344, 396
Խաթունաշեն եկեղեցի Հաղբատում 201
Խաղխաղ ք. 42
Խամշի վանք Միափոր գավառում (Ուտիք) 371
Խանածախ գ. (Քշաթաղ գավառում) 366
Խանլարի շրջան 114
Խանձ գ. (Ստեփանակերտի շրջանում) 345, 356
Խանչալ-խաչ սրբավայր 21, 213
Խաչենաձոր 311
Խաչերս խոռ (լեռ) 46
Խաչենաբերդ 145
Խաչենագետ 19, 31, 40, 74, 135—136
Խաչխութ 21
Խարաբի ջաղաց 272
Խլաթ 132
Խնձորաբակ (գյո՞ղ) 156
Խնուս 369
Խոզինակ (Հանդամա՞ս) 150
Խոզինեկուց այգի 151
Խոխանաբերդ 45, 85, 120—121, 123, 130, 132, 134—137, 140, 144, 146, 180, 196, 201, 211, 250
Խոյ 369
Խոյախան բերդ տե՛ս Խոխանաբերդ
Խոյտա երկիր 73
Խոռակերտի վանք 164
Խորանաշատ 285
Խորասան 184, 238
Խվարեզմ 183
Խութա վանք տե՛ս Դադի վանք
Խումիթ կամ Ջերմառուց վանք 322
Խունան դաշտ 182

Ծակ-խաչ (Հողամաս) 307
Ծաղկավանց (Ծաղկայվանց) Հողամաս 312, 384
Ծաղկունու ձոր 369
«Ծառաքար կամ լավ ևս Ծիրանաքար» 196
Ծառուտիձոր 322
Ծավ գետակ 111
Ծավդք տե՛ս Սոդք
Ծարա մելիքություն 6
Ծար ավան 35, 51, 71, 83, 158, 190,

240, 280, 283—284, 288, 299, 315—316, 328, 410
Ծար գավառ 27—28, 31, 34, 36—37, 49—51, 62, 73, 85, 123, 130, 134, 144, 148, 152—153, 160—162, 168, 212, 214—215, 249, 263, 292, 304, 321—324, 327, 331, 334, 337, 346, 370, 386, 389—391, 396, 397, 400, 403—404, 415, 419
Ծղուկ գավառ 110
Ծմակահող գ. 21, 176
Ծովատեղ (հանդամաս) 239, 315
Ծովինար գ. (Գեղարքունիքում) 387

Կաթողիկոսի քար 115—116
Կախեթ, Կախեթիա 93—94
Կալաբենդ տե՛ս Փառիսոս
Կածարեթ բերդ 131
Կակաչանց (հանդամաս) 312, 384
Կաղանկատույք գ. 267
Կամբեճան տե՛ս Հերեթ-Կամբեճան
Կամո ք. 402
Կամոյի շրջան 390
Կայեն բերդ 185, 216, 258
Կայեն գավառ (Ուտիքում) 33, 146, 148, 161, 235, 286, 421
Կայենո բերդ (Հաղբատի և Սանահնի միջև) 258
Կայծո-ծառ լեռ 120—121
Կայծոն 161, 216
Կաչաղակաբերդ 19, 75, 78, 136, 145—187
Կապադովկիա 134, 190
Կապատկացոց տե՛ս Կապադովկիա
Կասպիանե տե՛ս Փայտակարան
Կասպից ծով 203
Կատարո վանք 177, 361
Կարա-Կորում 204—205, 302
Կարապետանց քար 45
Կարին ք. 132, 134, 190, 193, 220, 231—232
Կարին գավառ 369
Կարկառ գավառ 215—216, 268
Կարկառ գետ 31, 122, 214—215, 413
Կարկառ ք. 190, 203, 214—215, 268

Կարմիր վանք Վաղուհասի 159, 271
Կարմնջատափ 151
Կարս 99, 131, 185, 224, 369
Կեչառիսի վանք 135, 167, 176, 268
Կեսարիա 134, 193—194, 232
Կիլիկիա 146, 163—167, 170, 233, 372
Կիլիկյան Հայք տե՛ս Հայկական Կիլիկիա
Կիչան գ. 19
Կղարշք 125
Կյուղիկիա տե՛ս Կիլիկիա
Կոթ գ. (Սևանի հար. ափին) 416
Կողթ գավառ 35
Կոշաձորի այգին Սանահնի մոտ 254
Կոշիկ անապատ 21, 23
Կոստանդնուպոլիս 352
Կովկաս 13, 61, 126, 236, 274—275
Կովկասյան լ-շղթա 71, 103
Կովսական գավառ 110—111
Կոզաբակ 46
Կոմնեի հող (հողամաս) 308, 311
Կուռալանա (հանդամաս) 355
Կուրակ գետակ 32, 34
Կուր գետ 38—40, 44, 56—57, 61, 71—72, 75, 78, 90, 182, 212, 293, 386, 400

Հաբանդ գավառ Արցախի տե՛ս Մյուս Հաբանդ
Հադահերա լեռ 115
Հադրութ ավան 362
Հադրութի շրջան 31, 62, 282, 361
Հաթերք գ., ավան 11, 45, 48, 85, 117, 123, 130, 132, 136, 140, 145—146, 148—149, 152—154, 156—157, 161, 190—191, 198, 202, 210, 212, 215, 233, 235, 250, 268, 271, 286, 300—301, 306, 321, 333, 337, 366, 384
Հալալաշեն 272
Հաղարծնի վանք 74, 145, 164
Հաղբատավանք տե՛ս Հաղբատ
Հաղբատ 13—14, 148, 160, 163—164, 166—169, 176, 178, 201, 209, 211, 217, 224, 229, 234, 246, 249—250, 253—259, 261—262, 264, 286, 303, 321, 331, 334, 391
Հաղբատի Ս. Գրիգոր եկեղեցի 252
Հաղբատի Ս. Նշան եկեղեցի 255, 260
Համադոն ջաղաց 272
Համա 238
Համզաշիման 369
Համս 238
Հայկական Կիլիկիա 49, 96, 194—195, 244, 248, 372
Հանդաբերդ 35, 48, 69, 123, 145, 153, 215, 234, 240, 284, 300, 315, 320, 333, 345
Հանկաբակ 197
Հավապտուկ վանք 21—23, 184
Հավքախաղաց (Հավախաղաց) բերդ տե՛ս Կաչաղակաբերդ
Հարավ գ. 122
Հարու ամրոց 122
Հաքարի գետ տե՛ս Աղավնո գետ
Հաքարու եկեղեցի (Աղավնո գետի ավազանը) 361
Հերեթ-Կամբեճան 75, 78, 81—82, 84, 93, 103
Հերհեր գ. Լեռ. Ղար. Մարտունու շրջանում 348
Հերքան բերդ 120—121
Հյուսիսային Կովկաս 269
Հնարակերտ 17, 38, 182
Հնդկաստան 236
Հոռոմոսի վանք 197
Հով (հողամաս) 225
Հովհաննավանք 235
Հռիփսիմեի վանք (Էջմիածին) 178
Հռոմ 170
Հռոմկլա 163, 170, 231

Ձեռատիվանք 110
Ձորագյուղ 48—49, 388
Ձորագետ գավառ 82, 90, 93—95, 100—101, 104—105, 253

Ղազախի շրջան 33
Ղազվին 207—208
Ղալադարասի տե՛ս Բերդաձոր
Ղամազանց (գյո՛ւղ) 272
Ղանդուլեղդարա գ. Սոդքում 406
Ղարաբաղյան լեռնաշղթա 34, 89, 115
Ղարադաղ 236
Ղրխբուլաղ 369
Ղուլտանոսի կտուր (հանդամաս) 305, 309

Ճահուկ 46
Ճարտար գ. 247
Ճաքի, Ճաքեցանց երկիր (հանդամաս) 158—159, 271
Ճռանց (գյո՛ւղ) 180

Մազրայի գավառ 406
Մազքթաց աշխարհ 38, 57, 37[illegible]
Մակարավանք 246
Մակուի գավառ 369
Մահկանաբերդ 146, 148, 235
Մաղավուզ գ. 19
Մայդանի Ս. Գևորգ եկեղեցի (Տփղիսում) 224—225
Մայիսյան գ. 155, 232
Մայրաքաղաք վանք Վաղուհասի 157—245
Մանազկերտ 224, 369
Մանանայք (հանդամաս) 150
Մաշտոցի անվան Մատենադարան 9, 11
Մատրասա գ. Շիրվանում 293
Մարաղա գ. 23
Մարանդ բերդ 132
Մարգարտա այգի 319
Մարեջուր, «Մայրեաց ջուրք» 96
Մարտակերտ ավան 196
Մարտակերտի դաշտ 31
Մարտակերտի շրջան 7, 23, 34, 44—45, 116, 159, 282, 30[illegible] 370
Մարտունի (ԼՂԻՄ-ի) 71
Մարտունի (Հայկ. ՍՍՀ) 48
Մարտունու շրջան (ԼՂԻՄ-ի) 7, 31, 45, 215, 282
Մարտունու շրջան (Հայկ. ՍՍՀ) 36 387, 390, 416
Մաքենյաց (Մաքենոց, Մաքենացոց) վանք (անապատ) 48, 405
Մելիքզատա գ. (Վերին Զակամում) 366

Մեծառանից Ս. Հակոբա վանք 19, 21, 73, 135, 144, 151, 200—201, 213, 217, 302, 308—309, 356—357, 360, 362—363, 371—372
Մեծառանք գավառ 30—31, 71, 74, 215, 363
Մեծիրանք տե՛ս Մեծառանք
Մեծկողմանք տե՛ս Մեծկվենք
Մեծկվենք գավառ 31—34, 191, 232, 303, 324
Մեծ Մազրա 45, 74—75, 78, 371, 402, 404—405, 409, 412—416
Մեծ Սյունիք 30—31, 37, 72—73, 108
Մեհմանա գ. Խաչենում 267
Մեղրենի (գյո՞ւղ) 200
Միափոր գավառ 370
Միափոր գ. 421
Միջագետք 232
Միջերկրական ծով 236
Միջին Ասիա 269
Մյուս Հաբանդ գավառ 30—31, 214
Մոնղոլիա 204—205, 302
Մշտաքախթեն բերդ 110
Մռավ սար 32, 34, 116, 267
Մսրը (Եգիպտոս) 238
Մուխանք գավառ 17, 40, 87, 131, 181, 194, 232, 269, 328
Մուխանք դաշտ 17, 31, 131, 84—185, 236
Մուղանի դաշտ տե՛ս Մուխանք դաշտ
Մուռտեղ 180
Մուֆարղին (Տիգրանակերտ) 198, 233

Նախիջևան, Նախիջևան, Նախճավան գավառ 46, 122, 359
Նախիջևան ք. 329, 367—369
Նորաշինիկ 110
Նորավանք Ամաղուի 168, 229, 319
Նոր Բայազետ 324
Նոր-Գետիկ վանք տե՛ս Գոշավանք
Նուխի 70, 78

Շախկախի անապատ (Հադրութի մոտ) 362
Շահմասուր գ. Խաչենի 377
Շահումյանի շրջան 7, 34, 45
Շաղուագ, Շողուագ, Շաղվաք տե՛ս Շողվագ
Շամ 238
Շամախի ք. 412
Շամախիի նահանգ 379, 382
Շամշադինի շրջան 33, 36
Շամքոր գետ 33—34, 89—90
Շամքոր ք. 93—94, 115—116, 131, 133, 181, 185, 216
Շատենց (այգետեղ) 319
Շարապխանե 369
Շաքե Մեծ Սյունիքում 71—72
Շաքի ք. 132
Շաքիի նահանգ 28—29, 39, 63, 72, 74, 78, 84, 108, 340, 370, 378, 382
Շիկաքար բերդ 71
Շինաձոր 150
Շիրակ 111, 126, 367
Շիրակվան 369
Շիրվանի նահանգ 39, 78, 109, 132, 293, 340, 370, 378—379, 382
Շողվագ ավան 35, 37, 47—49, 78, 92, 153, 161—162, 215, 234, 240, 315—316, 320, 333, 345, 371, 388, 416
Շոշի բերդ, Շուշի բերդաքաղաք 348
Շոշու գ. 308, 347—348
Շուշվա շրջան 7

Ողջագետ 111
Ոսկանապատ գ. Գանձակի նահանգում 366
Ոսկե Հորդա 211, 236, 304, 327
Որդվատ 46
Որմի 369
Որոտնավանք տե՛ս Վաղադնի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանք

Չարաբերդ տե՛ս Ջրաբերդ
Չարեք 115, 185, 216
Չարեք գետ 400
Չարեքտար գ. 271, 301
Չարեքտարի վանք 271—272
«Չեչաձորի բերդ» (հանդամա՞ս) 150
Չղախյան հովիտ 33
Չման-Կատուկ ավան 194, 232
Չոլբեկանց (հողամա՞ս) 315
Չողա աշխարհ, նահանգ 378
Չողա դուռ տե՛ս Դերբենդի դուռ
Չող ք. 57
Չուխուր-Սադի տե՛ս Երևանի նահանգ

Պատարա գ. 136
Պարիս գ. 121
Պարսկաստան 39, 61, 116—117, 119, 184, 236, 269, 338, 340, 359, 368—369, 417, 420
Պարտավ 57, 77—78, 121, 131—133, 181, 267, 282, 370, 400
Պելական տե՛ս Բայլական

Ջալալեցվոց գ. Ներքին Խաչենում 355
Ջաղացաձոր 46
Ջաջուռանց (հողամաս) 239, 315
Ջարհի այգի 230
Ջերմուկ (Մար գավառում) 35, 45
Ջերմուկ ք. 34
Ջիվանշիր գավառ 36
Ջղին գ. 324
Ջղոնա անապատ (Մարում) 323—324
Ջոթաց այգին Մարում 254
Ջոլբեկանց (հողամաս) 239
Ջրաբերդ 32, 120, 136, 190, 203, 214, 232, 400
Ջրվշտիկ տե՛ս Եղիշե առաքյալի վանք Ջրաբերդում
Ջոկտ-խաչ սրբավայր 21
Ջուղա 46, 367

Ռմբի խոռ (Ռմբասար) 46
Ռմբոստյան գավառ 37
Ռմբոստյան լեռնաշղթա 34, 36
Ռուսաստան 421

Սալմաստ 369
Սամառա (արաբ. խալիֆայության հին մայրաքաղաքը) 329
Սանահին 14, 160, 162—163, 168—169, 247, 249, 251—255, 261—262, 272
Սանահին վանք տե՛ս Սանահին
Ս. Անդրեի վանք 286
Ս. Աստվածածին եկեղեցի Դաշքենտ գյուղի (Գեղարքունիքում) 239—240, 398
Ս. Աստվածածին վանք Լեղանի 308
Ս. Աստվածածին եկեղեցի Մարում 245, 263, 311, 322—324, 327, 331, 343—345
Ս. Աստվածածին եկեղեցի Սանահնի 254
Սասուն 342—343
Սարուտանց հող Վերին Խաչենում 243
Ս. Գրիգոր տաճար Դվինի 367
Սեբաստիա 193—194, 232
Սելիմի կարավանատուն (Սյունիքում) 325—326
Սիս 352
Սիսական ավան 268
Սիսական նահանգ 25, 107
Սիսիանի շրջան 110
Ս. Հակոբա վանք տե՛ս Մեծառանից Ս. Հակոբա վանք
Ս. Կարապետի վանք Երնջակի 353, 355
Ս. Կարապետի վանք Սյունիքի 107
Սյունիք 5, 23, 34—36, 49, 53—54, 66, 86, 96, 103—104, 110, 114, 117, 131, 147, 167, 202, 210, 212, 224—226, 228, 237—238, 296, 304, 328, 380, 396, 421
Սոդք ավան 267—268, 320, 375, 405
Սոդից մելիքություն 6
Սոդք գավառ 36—37, 47—49, 59, 74—75, 92, 153, 190, 215, 234, 240, 315, 337, 381, 386, 389, 404—405, 407, 410, 413—414
Սոթք տե՛ս Սոդք
Սոֆյանի դաշտ (Թավրիզի մոտ) 367
Սոֆուլու գ. 76
Սպահան 366
Սպեր 125
Ս. Սարգիս մատուռ Մարում 240, 263
Ստամբուլ 263, 402
Ստեփանակերտ 76
Ստեփանակերտի շրջան 7, 31, 45, 71, 122
Սևանա լիճ 7, 34—36, 45, 48—49, 78,

131, 161, 187, 215, 267, 315—316, 320, 333, 345, 367, 369—370, 407, 414—415

Վալի-աղի գ. 48—49
Վահանավանք 96—97
Վահրամագեղ 272
Վաղադնի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանք 106
Վաղուհաս գ. 34—36, 45, 85, 121, 156—157, 159, 161, 217, 245, 254, 227
Վաճառ ավան 21, 172, 176, 180, 268
Վայկունիք գավառ 31, 34, 37, 215
Վայոց ձոր 23, 34, 36, 46, 89, 114, 130—131, 168
Վան 369
Վանանդ գավառ 46
Վանաց-վան 48
Վանե-վան 48
Վանի Հայկավանք եկեղեցի 330
Վարագա Ս. Նշան վանք 272—274
Վարանդա (Վարբնթա) գավառ 347—348, 400, 413
Վարդանաշատ 185
Վարդանաբերանց (հանդամաս) 305, 309
Վարդենիս գ. տե՛ս Վասակաշեն
Վարդենիսի շրջան 36
Վարնգաթաղ Վարդանաթաղ (հանդամաս) 218, 302
Վասակաշեն (գյուղ) 327, 396
Վասուրանց հող 200
Վեդի գետ 220, 322
Վեդիի շրջան 324
Վերին Զակամ 362, 366
Վիեննա 210
Վիրք 93, 183, 214
Վոլգա գետ 181, 203
Վրաստան 53, 125, 129, 181, 183, 191, 280, 305, 324, 328, 340, 352

Տաթևի վանք 28, 74, 110, 145, 227, 294, 380—381, 387, 415
Տայք 125
Տանձաձոր 310
Տանձեաց վայր 116
Տանձկուր[տ] (հանդամաս) 272
Տաշիր-Զորագետ 64, 81, 131
Տավուշ գավառ 34, 201
Տավուշ գետակ 33
Տավուշ բերդ 131
Տարոն 66
Տերունական բերդ 131, 201
Տիգրանակերտ Արցախի 77
Տիղբոն 44
Տիվրիկ 194, 232
«Տնկին երկիր» (հողամաս) 218
Տնջրհող 19
Տոհակ, աղավաղ անուն 68
Տպել (բերդ) 410
Տրտու գետ տե՛ս Թարթառ գ.
Տփղիս 19, 43, 146, 148, 181, 183, 207, 219, 220, 224—225, 235, 328, 340, 411—412, 415, 421
Տումի գ. 31, 62

Ուշքիլիսա տե՛ս Էջմիածին
Ուռնագոմ (հանդամաս) 254
Ուրծաձոր 369

Փայտակարան նահանգ 43—44
Փառականք, Փառկունիս 387
Փառիսոս գավառ 28—29, 31, 33—34, 63, 72—73, 81, 85, 89, 90—92, 95, 97—101, 108—109, 114, 134, 162
Փառիսոս ք. 33, 82, 84, 90, 137
Փատգոս երկիր 73
Փատլանայի այգի 271
Փարաչանց դ. (Լաչինի շրջանում) 361
Փարիզ 178
Փոսա նահանգ տե՛ս Սրևանի նահանգ
Փորակն 46
Փուտուռանուց, Փուտուռանանց 312, 384
Փոքր Սյունիք 71

Քառասնից վանք 160
Քավս 33
Քարագլուխ գ. 71
Քարահունջ գ. (Լեռն. Ղար. Մարտունու շրջանում) 348
Քարավազի կամուրջ 46
Քարհերձ բերդ 115, 131
Քելբաջարի շրջան 7, 45
Քթիշ տե՛ս Գտիշ
Քիրս լեռ 31, 34
Քյոլադոան տե՛ս Փառականք
Քյուրակ տե՛ս Կուրակ
Քոլատակ գ. 19, 135—136, 377
Քոչիզ գ. Վարանդայում 349, 366
Քշտաղ, Քշաթաղ գավառ 366, 381—382
Քուրդի-վանք 216
Քուստ-ի Փառնես տե՛ս Փառիսոս գավառ

Օրթաքիլիսա տե՛ս Մայիսյան

Ֆռանգիստան 392

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ակնարկ օգտագործված սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության 7
Պատմա-աշխարհագրական ակնարկ 30
Խաչենի իշխանության տոհմականները 50

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽԱՉԵՆԸ X—XII ԴԱՐԵՐՈՒՄ

Փառիսոսի թագավորությունը 89
X դ. սկզբի Խաչենի իշխանության տոհմացանկի մի հարցի շուրջը։ Սահակ Սևադայի իշխանության և Բագրատունյաց թագավորության փոխհարաբերությունը։ Սևադայի ժառանգները 100
Խաչենը սելջուկ թուրքերի տիրապետության շրջանում 112

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱՔԱՐՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԸ ԵՎ ԽԱՉԵՆԸ։ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆ

Ներքին Խաչենի տերերը XII դ. երկրորդ կեսին և XIII-ի սկզբներին . . 135
Հաթերքի տերերը XII—XIII դարերում և Վերին Խաչենի կամ Նարա Դոփյան ճյուղի սկզբնավորման հանգամանքները 144
Դոփյան իշխանության ակունքի հարցը 153
Զաքարե ամիրսպասալարի եկեղեցական նորամուծության փորձը և Հասանի ու Դոփի որդի Գրիգորի ընդվզումը նրա դեմ։ Բյուզանդական եկեղեցու նոր ոտնձգությունները 162

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ՝ «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՎ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ»

ԽԱՉԵՆԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼՄԻ ՏԱԿ

Մշակութային և շինարարական գործի վերելքը Հասան-Ջալալի օրերում . 176
Ներքին Խաչենի նվաճումը թաթար-մոնղոլների կողմից 180
Խաչենի իշխանության ճյուղերի և Զաքարյան իշխանության փոխհարաբերության հարցը 189
Հասան-Ջալալի և մոնղոլ տիրակալների փոխհարաբերությունները . 192
Իշխանուհի Մամքանը 209
Հասան-Ջալալի տիտղոսը և տիրապետության սահմանները . . . 211
Հասան-Ջալալի ժառանգները XIII դ. երկրորդ կեսում 217
Դոփյան իշխանական տունը թաթար-մոնղոլների տիրապետության ներքո 229
Խաչենի մշակութային կյանքը XIII դարում։ Մշակույթի ականավոր գործիչները 244

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԽԱՉԵՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արցախ-Խաչենի տնտեսության նկարագիրը 266
Աշխատավոր գյուղացիության վիճակը 270
Ժողովրդական զանգվածների դժգոհությունները 277
Դավիթ Ծարեցի «Մոլորեցուցիչ» 283

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԱՉԵՆԸ XIV—XV ԴԱՐԵՐՈՒՄ

Ներքին Խաչենի տեր Հասան-Ջալալյանները XIV—XV դարերում . . 296
Օտար բռնակալների նոր ասպատակությունները 304
Դոփյան իշխանությունը XIV—XV դարերում 314

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՊԱՐՍԿԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԽԱՉԵՆԸ

Հյուսիս-արևելյան Հայաստանի աշխարհիկ իշխանությունների վիճակը 341
Դիտողություններ XVI դարի Խաչենի քաղաքական ու սոցիալ-տնտեսական վիճակի մասին 346
Ներքին Խաչենի իշխանությունը ըստ մի ուշագրավ հիշատակարանի . 349
Հատիր-Մելիք՝ որդի Սայտունի և Սարգիս կաթողիկոս՝ որդի Հատիր-Մելիքի 354
Մեհրաբ-բեկը և իր ժառանգները 355
Ջալալ Գ-ը և իր ժառանգները 3
Շահ-Աբաս Ա-ը և հայ ժողովրդի մեծ տեղահանությունը . . . 364
Գանձասարի կաթողիկոսությունը 370
Գանձասարի կաթողիկոսության իրավունքները Պարսից տիրապետության շրջանում 374
Գանձասարի կաթողիկոսության և ամենայն հայոց հայրապետների փոխհարաբերությունները 377

Վերին Խաչենի իշխանության երեք ճյուղերը XVI դ. 385
Ջհանշահյանք կամ Ջհանշեցիք Մարա նորաստեղծ իշխանության տերեր . 389
Հովհաննես ու Հովհաննիսիկ Մարեցիները և նրանց ժամանակը . . 391
Մելիք-Շահնազարյան տոհմը 403
Մելիք-Շահնազար Ա 409
Մելիքության կարգը 416
Ցանկեր 423
Տոհմացանկերի աղյուսակներ . . . . . .

ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ
БАГРАТ АРШАКОВИЧ УЛУБАБЯН

ԽԱՉԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ X—XVI ԴԱՐԵՐՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Հրատարակչական խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՖ 06056 Պատվեր 205 Հրատ. 4192 Տպաքանակ 3000
Հանձնված է շարվածքի 17.I. 1975 թ., ստորագրված է տպագրության 9.X. 1975 թ.,
տպագրական 28,5 մամուլ+1 ներդիր, հրատ. 25,85 մամուլ, պայման, 28,75 մամուլ,
թուղթ № 1, 60×90 1/16: Գինը՝ 2 ռ. 30 կ.:
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24գ.
Издательство АН Арм. ССР, Ереван, 19, Барекамутян, 24 г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան, Երևան, Բարեկամության 24